

Երեք հրացանակիրներ

Հեղինակի նախաբան

որտեղ հավաստվում է, որ այս վեպի հերոսների մեջ, որ մենք պատիվ ենք ունենալու պատմելու մեր ընթերցողներին, չկա ոչ մի առասպելական բան. թեպետև նրանց անունները վերջանում են «ոս»-ով և «իս»-ով:

Մոտավորապես մեկ տարի առաջ. երբ արքայական գրադարանում որոնումներով էի զբաղված Լյուդովիկոս XIV-ի[1] պատմության համար, պատահաբար ձեռքս ընկան «Պ-րն դ'Արտանյանի հուշերը», որոնք տպագրվել են Ամստերդամում, Պիեր Ռուժի մոտ, ինչպես և այն ժամանակվա երկերի մեծ մասը, երբ հեղինակները ցանկանում էին ճշմարտությունն ասել այնպես, որ այնուհետև շատ թե քիչ երկար ժամանակով Բաստիլ չուղարկվեն: Վերնագիրն ինձ հրապուրեց, ես այդ հուշագրությունները տուն տարա, իհարկե, գրադարանի պահապանի թույլտվությամբ, և ազահորեն վրա ընկա կարդալու:

Ես մտադիր չեմ այստեղ մանրամասնորեն վերլուծել այդ հետաքրքրական երկը, այլ միայն նրան ծանոթանալու խորհուրդ եմ տալիս իմ այն ընթերցողներին, որոնք գիտեն գնահատել անցյալի պատկերները: Նրանք այդ հուշագրություններում կգտնեն վարպետի ձեռքով ուրվագծված դիմանկարներ, և թեպետ այդ հպանցիկ ուրվանկարները շատ դեպքում արված են զորանոցի դռներին ու պանդոկի պատերին, այնուամենայնիվ ընթերցողները դրանց մեջ կճանաչեն Լյուդովիկոս XIII-ի[2], Աննա Ավստրիացու[3], Ռիշելիեի[4], Մազարինիի[5] և այդ ժամանակների շատ ու շատ պալատականների պատկերները, նույնքան ճշմարտացի, որքան և պ-րն Անկետիլի[6] պատմության մեջ:

Մակայն, ինչպես հայտնի է, գրողի քմահաճ միտքը երբեմն հուզում է հենց այն, ինչ որ չեն նկատում ընթերցողների լայն շրջանները: Հիանալով հուշագրությունների արդեն իսկ այստեղ նշված կողմերով, ինչպես, անտարակույս, ուրիշներն էլ կհիանային, այնուամենայնիվ մեզ ավելի շատ զարմացրեց այն, ինչի վրա մեզնից առաջ հավանորեն ոչ ոք ամենափոքր չափով անգամ ուշադրություն չի դարձրել:

Դ'Արտանյանը պատմում է, որ երբ ինքն առաջին անգամ ներկայացավ արքայական հրացանակիրների կապիտան պրն դը Տրեյլին, նրա ընդունարանում

հանդիպեց երեք երիտասարդի, որոնք ծառայում էին այն նույն փառապանծ գնդում, ուր ինքն էլ ձգտում էր պատիվ ունենալ նշանակվելու, և որ այդ երիտասարդներին կոչում էին Աթոս, Պորտոս և Արամիս:

Խոստովանում ենք, որ մեր ականջին խորթ այս անունները մեզ զարմացրին, և մենք իսկույն մտածեցինք, որ դրանք սոսկ կեղծանուններ են, որոնց տակ դ'Արտանյանը թաքցրել է գուցե և նշանավոր անուններ, եթե միայն այդ անունները կրողները հենց իրենք չեն ընտրել դրանք իրենց համար այն օրը, երբ քմահաճույքից կամ սրտնեղությունից և կամ թե չքավորությունից դրդված՝ հագել են հրացանակրի հասարակ թիկնոցը:

Այդ պահից սկսած մենք հանգիստ չունեինք և աշխատում էինք այն ժամանակների աշխատություններում գեթ մի որևէ հետք գտնել այդ արտասովոր անուն-ների վերաբերյալ, որոնք մեր մեջ մեծ հետաքրքրություն էին հարուցել:

Հենց միայն այդ նպատակով մեր կարդացած գրքերի ցուցակը մի ամբողջ գլուխ կկազմեր, որը թերևս շատ խրատական, բայց հազիվ թե հետաքրքրական կլիներ մեր ընթերցողներին: Ուստի և մենք նրանց կասենք, որ հենց այն թույլին, երբ այդքան երկար ու ապարդյուն ջանքեր թափելուց վհատված մենք արդեն որոշել էինք վերջ տալ մեր որոնումներին, վերջապես, հետևելով մեր բարեկամ և նշանավոր գիտնական Պոլեն Պարիսի խորհուրդներին, գտանք մի ձեռագիր, որ կրում էր 4772 կամ 4773 համարը, ճշգրիտ չեմ հիշում, և վերնագրված էր՝ «Կոմս դը Լա Ֆերի հիշողությունները մի շարք անցքերի մասին, որոնք տեղի են ունեցել Ֆրանսիայում Լյուդովիկոս XIII-ի թագավորության վերջերին և Լյուդովիկոս XIV-ի թագավորության սկզբներին»:

Կարելի է պատկերացնել, թե որքան մեծ եղավ մեր ուրախությունը, երբ թերթերով այդ ձեռագրերը, որ մեր վերջին հույսն էր, քսաներորդ էջում հայտնաբերեցինք Աթոսի անունը. քսանյոթերորդ էջում՝ Պորտոսի անունը, իսկ երեսունմեկերորդում՝ Արամիսի անունը:

Միանգամայն անհայտ այդ ձեռագրի գյուտը այնպիսի մի դարաշրջանում, երբ պատմական գիտությունը զարգացման այնքան բարձր աստիճանի է հասել, մեզ հրաշք թվաց: Եվ մենք շտապեցինք թույլտվություն խնդրել տպագրելու այն, որպեսզի երբևիցե այդ ուրիշի բեռով ներկայանանք Արձանագրությունների և Գեղեցիկ

Դպրության Ակադեմիան, եթե մեզ չհաջողվի, որ շատ հավանական է, մեր սեփական բեռով ընդունվել ֆրանսիական Ակադեմիայում: Այդ թույլտվությունը, մեր պարտքն ենք համարում ասել այս, սիրալիր կերպով տրվեց մեզ, որ և մենք նշում ենք այստեղ, որպեսզի հրապարակորեն մերկացնենք այն չարակամների սուտը, որոնք պնդում են, թե իբր մենք ապրում ենք այնպիսի կառավարության իշխանության ներքո, որն այնքան էլ բարեհաճ չէ գրականագետների նկատմամբ:

Այժմ մենք մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում այդ թանկարժեք ձեռագրի առաջին մասը, հարմար վերնագիր դնելով նրան և, հասկանալի է, եթե այս առաջին մասը ունենա իր արժանի հաջողությունը, որին մենք չենք կասկածում, պարտավորվում ենք անհապաղ հրապարակել նաև երկրորդ մասը: Իսկ առայժմ, քանի որ կնքահայրը երկրորդ հայր է հանդիսանում, մենք ընթերցողին խնդրում ենք ոչ թե ի դեմս կոմս դը Լա Ֆերի, այլ ի դեմս մեզ տեսնել իր բավականության կամ ձանձրության ակունքը:

Հավաստելով այս ամենը, մենք անցնում ենք մեր պատմությանը:

Առաջին մաս

I. Պարոն հայր դ'Արտանյանի երեք ընծան

1625 թ. ապրիլ ամսի առաջին երկուշաբթի օրը Մենզ քաղաքի ամբողջ բնակչությունը,— այն փոքրիկ քաղաքի, որտեղ մի ժամանակ ծնվել է «Վեպ վարդի մասին»[7] պոեմի հեղինակը,— հուզված էր երևում այնպես, ասես հուզենոտները[8] պատրաստվում էին այդ քաղաքը երկրորդ Լա-Ռոշելը[9] դարձնելու: Քաղաքացիներից ոմանք, տեսնելով Գլիսավոր փողոցի կողմը վազող կանանց և լսելով երեխաների ճիչերը, որ գալիս էին տների շենքից, շտապ հագնում էին գրահները, զինվում՝ որը հրացանով, որը գեղարդով, որպեսզի իրենց ավելի խրոխտ տեսք տան, և վազում էին դեպի «Ազատ Ջրաղացական» հյուրանոցը: Այդ հյուրանոցի առաջ հավաքվել էր հետաքրքրասերների մի աղմկոտ, հոծ բազմություն, որը բռնաբար անհանգստացրել էր:

Այն ժամանակների համար այդպիսի հուզումները սովորական բան էին, և քիչ էր պատահում, որ որևէ քաղաքի տարեգրության մեջ գրի չառնվեր այդպիսի մի դեպք: Անվանի պարոնները կովում էին իրար դեմ. թագավորը կովում էր կարդինալի[10] դեմ, իսպանացիք կովում էին թագավորի դեմ: Սակայն, բացի այդ պայքարից,— որ մերթ խուլ էր լինում, մերթ ակնհայտ, մերթ գաղտնի, մերթ բացահայտ,— կային նաև

և՛ աղքատներ, և՛ հուզենոտներ, շրջմուլիկներ ու սպասավորներ, որոնք կովում էին բոլորի դեմ: Քաղաքացիները զինվում էին գողերի, թափառաշրջիկների, սպասավորների, երբեմն՝ տիրակալ ազնվականների դեմ, մերթընդմերթ էլ թագավորի դեմ, բայց կարդինալի կամ իսպանացիների դեմ՝ երբեք: Հենց այդ արմատացած սովորության պատճառով էլ վերը հիշատակած 1625 թ. ապրիլ ամսի առաջին երկուշաբթի օրը, քաղաքացիները աղմուկ լսելով և չտեսնելով ո՛չ դեղնակարմիր նշաններ, ո՛չ դուքս Ռիշելիեի սպասավորների լիվրենները[11], նետվեցին դեպի «Ազատ Ջրաղացպան» հյուրանոցը:

Եվ միայն այնտեղ բոլորի համար պարզ դարձավ իրարանցման պատճառը:

Մի երիտասարդ... Կաշխատենք ուրվագծել նրա պատկերը, պատկերացրեք Դոն Կիխոտին՝ տասնութ տարեկան հասակում, Դոն Կիխոտին՝ առանց գրահի, առանց լանջակալի ու ծնկակալների, բրոյա բաճկոնով, որի կապույտ գույնը շեկի ու երկնակապտավուն գույնի միջև եղած երանգ է ստացել: Երկարավուն թուխ դեմք. ցցուն այտոսկրերը խորամանկության նշան են, ծնոտի մկանները՝ խիստ զարգացած — անժխտելի մի նշան, որով իսկույն կարելի է ճանաչել գասկոնացուն[12] անգամ, եթե նրա գլխին բերետ չլինի,— այնինչ երիտասարդի գլխին բերետ կար՝ զարդարված փետրանման մի բանով, հայացքը պայծառ էր ու խելացի, քիթը՝ փոքր-ինչ կեռ, բայց նուրբ գծազրությամբ: Հասակը խիստ բարձր էր պատանու համար և անբավարար՝ հասուն տղամարդու համար... Անփորձ մարդը կարող էր նրան ֆերմերի ճամփորդող որդու տեղ դնել, եթե չլիներ կաշվե սուսերակալից կախված երկար սուսերը, որը տիրոջ ոտքին էր խփվում, երբ նա ոտքով էր գնում, և ձիու բաշն էր խռիվ տալիս, երբ ձիով էր գնում:

Քանզի մեր երիտասարդը մի ձի էլ ուներ, և այն էլ այնպիսի երևելի ձի, որ բոլորի աչքը կպել էր: Դա մի բեարնական[13] նալած ձի էր՝ տասներկու գուցե և տասնչորս տարեկան, դեղնաշիկավուն մազաթափ պոչով և ուռած կոճերով: Այդ ձին թեպետև վախից պինչը ծնկներից էլ ցած էր իջեցրել, որով հեծվորին ազատել էր սանձը քաշելու անհրաժեշտությունից, այնուամենայնիվ ընդունակ էր օրական ութ լյո[14] ճանապարհ անցնել: Ձիու այս բոլոր հատկությունները, դժբախտաբար, այնքան էին նսեմացել նրա անձոռնի տեսքից ու տարօրինակ գույնից, որ այն տարիներին, երբ բոլորը հասկանում էին ձիու լավն ու վատը, վերոհիշյալ բեարնական ձիու երևալը Մենդում, ուր նա ոտք էր դրել քառորդ ժամ առաջ Բոժանսի

դարպասով, այնպիսի անբարենպաստ տպավորություն էր գործել, որ ստվեր էր գցել նույնիսկ ձիավորի վրա:

Այս բանի գիտակցությունն այնքան խիստ էր դիպել երիտասարդ դ'Արտանյանի սրտին (այդպես էին կոչում այս նոր Դոն Կիխոտին, որ բազմել էր նոր Ռոսի-նանտի վրա), որ նա չէր էլ փորձում թաքցնել, թե ինքը, ինչպիսի լավ ձիավար էլ լինի, որքա՛ն ծիծաղելի պիտի երևա այդպիսի ձիու վրա: Իզուր չէր, որ նա չկարողացավ զսպել ծանր հառաչանքը, երբ ստանում էր այդ ընծան դ'Արտանյան հորից: Նա գիտեր, որ այդպիսի ձիու գինը ամենաշատը քսան լիվր[15] է: Բայց դրա փոխարեն չի կարելի ժխտել, որ այդ ձին տալու ժամանակ ասված խոսքերն անգին էին:

— Զավակս,— ասաց գասկոնցի ազնվականը բեարնական այն մաքուր առողանությամբ, որից Հենրիխ IV-ը[16] մինչև իր կյանքի վերջն էլ չկարողացավ ազատվել:— Զավակս, այս ձին լույս աշխարհ է եկել ձեր հոր տանը ահա արդեն տասներեք տարի սրանից առաջ և այդ բոլոր տարիներին ապրել է ձեր հոր տանը, մի բան, որ ձեզ պետք է լավ տրամադրի դեպի ինքը: Չծախեք այս ձին ոչ մի դեպքում, թողեք, որ պատվով ու հանգիստ շունչը փչի ձերությունից: Եվ եթե դուք առիթ ունենաք նրանով արշավանքի դուրս գալու, խնայեցեք նրան, ինչպես կխնայեիք ձերունի ծառային: Արքունիքում,— շարունակեց դ'Արտանյան-հայրը,— այն դեպքում, եթե ընդունվեք այնտեղ, որին, ի դեպ, ձեզ իրավունք է տալիս ձեր տոհմի հնությունը, ձեզ համար և ձեր մերձավորների համար պատվով պահեցեք ձեր ազնվական անունը, որ ավելի քան հինգ հարյուր տարի արժանապատվությամբ կրել են ձեր նախնիները: «Մերձավոր» ասելով ես նկատի ունեմ ձեր հարազատներին ու մտերիմներին: Չհնազանդվեք ոչ ոքի, բացի թագավորից ու կարդինալից: Միայն արիությամբ, լսո՞ւմ եք դուք, միմիայն արիությամբ մեր օրերում ազնվականը կարող է ճանապարհ հարթել իր համար: Ով երերաց թեկուզ մի ակնթարթ, կարող է փախցնել առիթը, որ հենց այդ ակնթարթին տվել է նրան ճակատագիրը: Դուք երիտասարդ եք և պարտավոր եք քաջ լինել երկու պատճառով. առաջին պատճառն այն է, որ դուք իմ զավակն եք: Չվախենաք պատահականություններից և արկածներ որոնեցեք: Ես սուսերին տիրապետելու հնարավորություն եմ տվել ձեզ: Դուք երկաթե մկաններ ունեք և պողպատե ձեռքեր: Ամեն առիթով կռվի մեջ մտեք. ավելի հաճախ մենամարտի բռնվեցեք, մանավանդ որ մենամարտն արգելված է, հատկապես հարկավոր է կրկնակի արիություն ունենալ մենամարտելու համար: Ես, զավակս, կարող եմ ձեզ տալ ընդամենը տասնհինգ էքյու[17], ձին և այն խորհուրդները, որ հենց

նոր դուք լսեցիք այստեղ: Ձեր մայրը դրան կավելացնի մի ինչ-որ սպեղանի պատրաստելու նյութերի ցուցակ, որ նա ստացել է մի գնչուհուց. այդ սպեղանին հրաշագործ ուժ ունի և բուժում է ամեն տեսակ վերք, բացի սրտի վերքից: Օգտվեցեք այս ամենից և ապրեցեք երկար ու երջանիկ... Ինձ մնում է էլի միայն մեկ բան ավելացնել, այն է՝ օրինակ ցույց տալ ձեզ. ո՛չ ինձ, որովհետև ես երբեք արքունիքում չեմ եղել և որպես կամավոր մասնակցել եմ միայն հավատի համար մղած կռիվներին: Ես նկատի ունեմ պարոն դը Տրևիլիս[18], որը մի ժամանակ իմ հարևանն է եղել: Մանուկ հասակում նա պատիվ է ունեցել խաղալու մեր թագավոր Լյուդովիկոս XIII-ի հետ— աստված պահի նրան: Պատահում էր, որ նրանց խաղերը կռվի էին փոխվում, և այդ կռիվների մեջ միշտ չէ, որ գերակշռությունը թագավորի կողմն էր լինում: Բռունցքի հարվածները, որ ստանում էր թագավորը, նրան ստիպում էին ավելի շատ հարգանք և բարեկամական զգացմունքներ տաժել դեպի պարոն դը Տրևիլի: Հետագայում, երբ առաջին անգամ Փարիզ գնաց, պարոն դը Տրևիլը այլ անձանց հետ կռվել է հինգ անգամ հանգուցյալ թագավորի մահից հետո և մինչև փոքրահասակի չափահաս դառնալը, չհաշված պատերազմներն ու արշավանքները՝ յոթ անգամ, իսկ չափահաս դառնալու օրից և մինչև մեր օրերը՝ հարյուր անգամ: Եվ իզուր չէ, որ չնայած հրովարտակներին, հրամաններին ու որոշումներին, նա հիմա հրացանակիրների, այսինքն՝ արքայական լեգեոնի կապիտանն է, որին շատ բարձր է դասում թագավորը, և որից քաշվում է կարդինալը: Իսկ կարդինալը, ինչպես բոլորին հայտնի է, քիչ բան կա, որից վախենա: Բացի դրանից, պարոն դը Տրևիլը ստանում է տարեկան տասը հազար էքյո: Հետևապես, նա շատ մեծ իշխան է: Նա ևս սկսել է այնպես, ինչպես դուք: Ներկայացեք նրան այս նամակով, հետևեցեք նրա օրինակին և արեք այնպես, ինչպես նա է արել:

Այս ասելուց հետո պարոն դ'Արտանյան-հայրը որդուն տվեց իր սեփական սուսերը, քնքշորեն համբուրեց նրա երկու այտերը և օրհնեց:

Հոր սենյակից դուրս գալիս պատանին տեսավ իր մորը, որ սպասում էր նրան, ձեռքին բռնած հռչակավոր սպեղանու նյութերի ցուցակը, այն սպեղանու, որը, դատելով ըստ հոր տված խորհուրդների, որ հիշատակեցինք վերը, նա հաճախ պիտի գործածեր: Հրաժեշտն այստեղ ավելի երկար տևեց և ավելի սրտառուչ էր, քան հոր հետ, և այդ ոչ թե նրա համար, որ հայրը չէր սի-բում իր որդուն, որը նրա միակ զավակն էր, այլ նրա համար, որ պարոն դ'Արտանյանը տղամարդ էր և տղամարդուն անվայել կհամարեր ազատություն տալ իր զգացմունքին, մինչդեռ տիկին դ'Արտանյանը կին էր և մայր: Նա դառնազին լաց եղավ և, պետք է խոստովանել, որ

դ'Արտանյան կրտսերը, ինչքան էլ աշխատում էր ապագա հրացանակրին վայել զսպվածություն պահել, այնուամենայնիվ զգացմունքները գերակշռեցին, որ պատիվ է բերում նրան, և նա էլ շատ արցունք թափեց, որ միայն կիսով չափ կարողացավ թաքցնել, այն էլ մեծ դժվարությամբ:

Նույն օրը պատանին ճանապարհ ընկավ՝ տանելով հայրական երեք ընծաները, որոնք, ինչպես արդեն ասացինք, բաղկացած էին տասնհինգ էքյուից, ձիուց և պարոն դը Տրևիլին ուղղված նամակից: Խորհուրդները, հասկանալի է, հաշվի մեջ չեն:

Այսպիսի խրատներ ստացած լինելով՝ դ'Արտանյանը թե՛ մարմնով, թե՛ հոգով ճիշտ ու ճիշտ նման էր Սերվանտեսի հերոսին, որի հետ մենք այնքան հաջող համեմատեցինք նրան, երբ պատմողի մեր պարտականությունը մեզ ստիպեց ուրվագծել նրա պատկերը: Դոն Կիխոտին հողմադացները թվում էին հսկաներ, իսկ ոչխարների հոտը՝ մի ամբողջ բանակ: Դ'Արտանյանը յուրաքանչյուր ժպիտ ընդունում էր որպես վիրավորանք, իսկ յուրաքանչյուր հայացք՝ որպես մարտակոչ: Դրա համար էլ նա Տարբից մինչև Մենգ բռունցքը չթուլացրեց և օրական առնվազն տասն անգամ ձեռքը զգում էր իր սուսերի դաստակին: Այնուամենայնիվ նրա բռունցքը ոչ ոքի ծնոտը չփշրեց, իսկ սուսերը դուրս չեկավ իր պատյանից: Ճիշտ է, չարաբաստիկ ձիու տեսքը շատ անգամ ժպիտ առաջացրեց անցորդների դեմքին, բայց որովհետև ձիու կողերին էր խփվում ահռելի չափի մի սուսեր, իսկ ավելի վերև փայլատակում էին այնպիսի աչքեր, որոնք այրվում էին ոչ այնքան հպարտությամբ, որքան ցասումով, դրա համար էլ անցորդները խեղդում էին իրենց ծիծաղը, իսկ երբ ուրախությունը հաղթում էր զգուշությանը, աշխատում էին ժպտալ դեմքի մեկ կեսով, ինչպես հնադարյան դիմակներ: Այսպես դ'Արտանյանը պահպանելով իր վեհ կեցվածքը և բորբոքման ամբողջ պաշարը՝ հասավ չարաբաստիկ Մենգ քաղաքը:

Բայց այնտեղ, հենց «Ազատ Ջրաղացյան»-ի դարպասի առաջ իջնելով ձիուց՝ առանց հյուրանոցի տիրոջ, ծառաների կամ ձիապանի օգնության, որոնք կբռնեին եկվորի ասպանդակը, դ'Արտանյանը երկրորդ հարկի բաց լուսամուտում նկատեց բարձրահասակ ու պատկառատես մի ազնվականի: Ուռած ու անհրապույր դեմքով այդ ազնվականը ինչ-որ բան էր ասում իր երկու ուղեկիցներին, որոնք, թվում էր, հարգանքով լսում էին նրան:

Դ՛Արտանյանը սովորականի նման իսկույն ենթադրեց, թե խոսքը իրեն է վերաբերում, և լսողությունը լարեց: Այս անգամ նա չէր սխալվել կամ սխալվել էր միայն մասամբ, խոսքը վերաբերում էր ոչ թե նրանք այլ նրա ձիուն: Անծանոթը, ըստ երևույթին, թվում էր ձիու բոլոր արժանիքները, իսկ որովհետև ունկնդիրները, ինչպես արդեն ասացի, ազնվականին վերաբերվում էին խիստ հարգանքով, ապա նրա ամեն մի խոսքի վրա քրքջում էին: Նկատի ունենալով, որ նույնիսկ մի թեթև ժպիտը բավական էր մեր հերոսին համբերությունից դուրս բերելու համար, հեշտ է պատկերացնել, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ նրա վրա ուրախության այդ բուռն արտահայտությունը:

Դ՛Արտանյանն ամենից առաջ ցանկացավ ուշադիր զննել այն անպատկառի դեմքը, որը համարձակվել էր ծաղրել իրեն: Նա հպարտ հայացքը բևեռեց անծանոթի դեմքին և տեսավ, որ նա մոտ քառասուն տարեկան մի մարդ է, սև, խորաթափանց աչքերով, սպիտակ երեսով, խոշոր քթով, շատ խնամքով խուզած սև բեղերով: Նա հագել էր մանուշակագույն կամզոլ[19] ու շավար, նույն գույնի քուղերով, առանց որևէ նախշի, եթե չհաշվենք սովորական կտրվածքները, որոնց միջով երևում էր ներքնաշապիկը: Ե՛վ շավարը, և՛ կամզոլը թեպետև նոր էին, բայց խիստ ճրթված, ինչպես երկար ժամանակ սնդուկում մնացած ճանապարհորդական իրեր:

Դ՛Արտանյանն այս ամենը որսաց ամենանուրբ դիտողի արագությամբ, գուցե թե ենթարկվելով այն նախազգացմանը, որը նրան ասում էր, թե այդ մարդը մեծ դեր է խաղալու նրա կյանքում:

Այսպես ուրեմն, այն նույն վայրկյանին, երբ դ՛Արտանյանը իր հայացքը բևեռեց մանուշակագույն կամ գոլավոր մարդու վրա, վերջինս բեարնական ձիու հասցեին բաց թողեց իր ամենասուր ու ամենախորիմաստ դիտողություններից մեկը: Նրա ունկնդիրները քրքիջով բռնվեցին, և խոսողի դեմքով, ակնհայտորեն հակառակ սովորականի, անցավ ժպիտի նման մի բան: Այս անգամ տարակուսանք լինել չէր կարող, դ՛Արտանյանին իսկական վիրավորանք էր հասցված:

Այս գիտակցությամբ տոգորված՝ նա բերետն ավելի խոր քաշեց աչքերին և աշխատելով ընդօրինակել պալատական շարժումները, որ նա նկատել էր Գասկոնում նշանավոր ճանապարհորդների մոտ, մի ձեռքը սուսերի դաստակին դնելով և մյուսը կողին կանթելով՝ մի քայլ արեց դեպի առաջ: Դժբախտաբար զայրույթը վայրկյան առ վայրկյան ավելի ու ավելի էր կուրացնում պատանուն, և վերջիվերջո նա հպարտ ու մեծամիտ ֆրագների փոխարեն, որոնցով ուզում էր օժտել իր մարտակոչը, ի վիճակի

եղավ արտասանելու միայն մի քանի կոպիտ խոսք՝ միաժամանակ անելով կատաղի շարժումներ:

— Է՛յ պարո՛ն,— գոռաց նա:— Դո՛ւք, որ թաքնվում եք այդ փեղկի հետևում: Այո՛, դուք: Բարի եղեք ասելու, ինչի՞ վրա եք ծիծաղում, և մենք էլ ձեզ հետ կծիծաղենք:

Անվանի ճամփորդը իր հայացքը դանդաղորեն ձիուց փոխադրեց ձիավորի վրա: Կարծես նա միանգամից չհասկացավ, որ հենց իրեն են ուղղված այդքան տարօրինակ կշտամբանքները: Հետո, երբ նրա մեջ այլևս կասկած մնալ չէր կարող, հոնքերը թեթևակի կիտվեցին, և նա բավական երկար լռությունից հետո պատասխանեց այնպիսի մի տոնով, որ լի էր հեգնանքով ու ամբարտավանությամբ:

— Ես ձեզ հետ չեմ խոսում, ողորմած պարոն:

— Բայց ես ձեզ հետ եմ խոսում,— գոչեց պատանին՝ լկտիության ու նրբության, հարգանքի ու արհամար-հանքի այդ խառնուրդից վրդովված:

Անձանոթը էլի մի քանի ակնթարթ աչքը չէր հեռացնում դ'Արտանյանից, ապա լուսամուտից ետ քաշվելով, դանդաղորեն դուրս եկավ հյուրանոցի դռնից և կանգ առավ պատանուց մի երկու քայլ հեռու, ուղիղ նրա ձիու դիմաց: Նրա հանդարտությունը և դեմքի ծաղրական արտահայտությունն ավելի ուժեղացրին իր գրուցակիցների ուրախությունը, որոնք մնացել էին լուսամուտի մոտ կանգնած:

Դ'Արտանյանը նրա մոտենալու ժամանակ իր սուսերը մի ամբողջ ֆուտ[20] դուրս էր քաշել պատյանից:

— Այս ձին իսկապես որ դեղնավուն է, կամ ավելի ճիշտ՝ մի ժամանակ այդպիսին է եղել,— ասաց անձանոթը՝ դառնալով իր ունկնդիրներին, որոնք կանգնած էին լուսամուտի մոտ, և ասես չնկատելով դ'Արտանյանի գրգռվածությունը, չնայած որ երիտասարդ գասկոնացին կանգնած էր նրա և նրա գրուցակիցների միջև:— Այս գույնը, որ խիստ տարածված է բուսական աշխարհում, մինչև այժմ ձիերի մոտ հազվադեպ է երևացել:

— Ձիու վրա ծիծաղում է նա, ով չի՛ համարձակվում ծիծաղել նրա տիրոջ վրա,— կատաղաբար գոռաց դը Տրեհիլին ընդօրինակողը:

— Ես, պարոնս, հազվադեպ եմ ծիծաղում,— ասաց անձանոթը: — Դուք այդ կարող էիք նկատել իմ դեմքի արտահայտությունից: Բայց ես հույս ունեմ, որ ինձ իրավունք կվերապահեմ ծիծաղելու այն ժամանակ, երբ կցանկանամ:

— Իսկ ես,— գոչեց դ'Արտանյանը,— ձեզ չե՛մ թույլ տա ծիծաղել, երբ ես այդ չեմ ցանկանում:

— Իսկապե՞ս, պարոն,— հարցրեց անձանոթը ավելի ևս հանգիստ տոնով:— Ինչ կա որ, դա միանգամայն արդարացի բան է:— Եվ կրունկների վրա շուտ գալով՝ նա ուղղվեց դեպի հյուրանոցի դարպասը, որի տակ դ'Արտանյանը դեռ մոտենալիս նկատել էր մի թամբած ձի:

Բայց դ'Արտանյանն այնպիսի տղա չէր, որ բաց թողներ այն մարդուն, որը հանդգնություն էր ունեցել ծիծաղելու իր վրա: Նա իր սուսերն ամբողջովին հանեց պատյանից և նետվեց վիրավորողի վրա՝ հետևից գոռալով.

— Ե՛տ դարձեք, ե՛տ դարձեք, պարոն, որպեսզի ես ստիպված չլինեմ թիկունքից խփել ձեզ:

— Խփել ի՞նձ,— գոչեց անձանոթը՝ կրունկների վրա շեշտակի շուտ գալով և պատանուն նայելով նույնքան զարմանքով, որքան և արհամարհանքով:— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում, սիրելիս: Դուք երևի ցնդե՛լ եք:

Եվ ապա կիսաձայն, ասես ինքն իրեն խոսելով՝ նա ավելացրեց.

— Ա՛յ քեզ բա՛ն: Եվ ի՛նչ գլուտ է սա նորին մեծության համար, որն ամենուրեք քաջեր է որոնում իր հրացանակիրների շարքերը լրացնելու:

Նա դեռ խոսքը չէր վերջացրել, երբ դ'Արտանյանը այնպիսի մի կատաղի հարձակում գործեց, որ եթե անձանոթը ժամանակին ետ չցատկեր, այդ կատակը վերջինը կլիներ նրա կյանքում: Անձանոթը հասկացավ, որ գործը լուրջ բնույթ է ստանում, դուրս քաշեց սուսերը, գլուխ տվեց հակառակորդին և իսկապես պատրաստվեց պաշտպանության: Բայց հենց այդ նույն վայրկյանին նրա երկու զրուցակիցները պանդոկապետի ուղեկցությամբ մահակներով, բահերով ու

կրակխառնիչներով զինված՝ հարձակվեցին դ'Արտանյանի վրա, կարկուտի պես հարվածներ տեղալով նրա գլխին: Այս անակնկալ հարձակումը խիստ փոխեց մենամարտի ընթացքը, և դ'Արտանյանի հակառակորդը, օգտվելով այն ակնթարթից, երբ դ'Արտանյանը շուռ եկավ կրծքով դիմավորելու իր վրա տեղացող հարվածների տարափը, նույնպիսի հանգստությամբ նորից սուսերը պատյանի մեջ խրեց: Գործող անձից, որպիսին անձանոթը քիչ մնաց որ դառնար բորբոքվող տեսարանում, դարձավ վկա,— մի դեր, որ նա կատարում էր իր համար սովորա-կան անվրդովությամբ:

— Գրողը տանի այս գասկոնացիներին,— այնուամե-նայնիվ մրմնջաց նա,— հապա մի նստեցրեք դրան այդ նարնջագույն ձիու վրա և թող կորչի այստեղից:

— Ո՛չ ավելի շուտ, քան ես կսպանեմ քեզ, վախկո՛տ,— գոռաց դ'Արտանյանը երեսը իր երեք հակառակորդների կողմը դարձրած և ուժի ներածին չափով ետ տալով նրանց հարվածները, որոնք շարունակում էին կարկուտի պես տեղալ նրա գլխին:

— Գասկոնական պարծենկոտությո՛ւն,— մրթմրթաց անձանոթը:— Երդվում եմ պատվովս, այդ գասկոնացիք անուղղելի են: Ի՛նչ արած, մի լավ ջարդեցեք դրան, քանի որ այդպես է ուզում: Երբ կկշտանա, ինքը կասի:

Բայց անձանոթը դեռ չգիտեր, թե ինչպիսի համառ պտուղի հետ գործ ունի: Դ'Արտանյանը այնպիսին չէր, որ գթություն խնդրեր: Դրա համար էլ կռիվը էլի մի քանի վայրկյան շարունակվեց: Սակայն, վերջապես, երիտասարդ գասկոնացին ուժասպառ լինելով ձեռքից վայր գցեց սուսերը, որը կոտրվել էր մահակի հարվածից: Հետևյալ հարվածը նրա ճակատը պատռեց, և նա վայր ընկավ արնաշաղախ, համարյա գիտակցությունը կորցրած:

Հենց այդ ժամանակ էր, որ ժողովուրդը բոլոր կողմերից վազում էր դեպքի վայրը: Հյուրանոցի տերը ավելորդ խոսակցություններից ազատվելու համար իր ծառաների օգնությամբ վիրավորին տարավ խոհանոց, որտեղ նրան որոշ օգնություն ցույց տրվեց:

Մինչդեռ անձանոթը, վերադառնալով իր տեղը՝ լուսամուտի մոտ, անսքող տհաճությամբ նայում էր ամբոխին, որն, ըստ երևույթին, իր ներկայությամբ չափազանց գրգռում էր նրան:

— Է՛ ինչպէս է այն դիվահարը,— բացվող դռան ձայնի վրա շուռ գալով հարցրեց նա՝ դիմելով պանդոկապետին, որը եկել էր նրա որպիսությունը հարցնելու:

— Ձերդ պայծառափայլությունը ողջ և առո՞ղջ է,— հարցրեց պանդոկապետը:

— Ողջ եմ, սիրելի պանդոկապետ: Բայց ես կուզենայի իմանալ՝ ինչպէ՞ս է մեր երիտասարդը:

— Հիմա արդեն լավ է,— պատասխանեց պանդոկապետը:— Նա բոլորովին կորցրել էր գիտակցությունը:

— Իսկապէ՞ս,— նորից հարցրեց անծանոթը:

— Բայց դրանից առաջ նա իր վերջին ուժերը հավաքելով՝ ձեզ էր կանչում, գոռգոռում էր և բավարարություն պահանջում:

— Դա իսկական դև է,— ասաց անծանոթը:

— Օ՛, ոչ, ձերդ պայծառափայլություն,— առարկեց պանդոկապետը՝ արհամարհանքով շրթունքները ծոմոնելով:— Երբ նա ուշաթափված էր, մենք խուզարկեցինք նրան: Նրա կապոցի մեջ կար միայն մեկ շապիկ, իսկ քսակում՝ տասներկու էքյու: Բայց, չնայած դրան, նա ուշաթափվելիս շարունակ կրկնում էր, որ եթե այս պատմությունը Փարիզում պատահեր, դուք տեղն ու տեղը կզոջայիք, իսկ այսպէս՝ դուք հետո պիտի զոջաք:

— Դե, այդ դեպքում երևի նա զգեստափոխված արքայազն է,— սառն պատասխանեց անծանոթը:

— Ես հարկ համարեցի նախազգուշացնել ձեզ, ձերդ պայծառափայլություն,— վրա բերեց պանդոկապանը,— որ դուք զգույշ լինեք:

— Ցասումի պահին նա ոչ ոքի անուն չտվե՞ց:

— Ինչպե՛ս չէ: Նա թփթփացնում էր իր գրպանին ու կրկնում. «Տեսնենք ինչ կասի պարոն դը Տրևիլը, երբ իմանա, որ վիրավորել են իր հովանավորության տակ գտնվող մարդուն»:

— Պարոն դը Տրևի՞լ,— զգուշավոր տոնով շարունակեց անձանոթը:— Գրպանին էր թփթփացնում, պարոն դը Տրևիլի անո՞ւնն էր տալիս... Է՛, ինչպե՞ս, հարգարժան պանդոկապետ: Կարծում եմ, որ քանի դեռ երիտասարդը ուշաթափված էր, դուք չզլացաք զննել նաև այդ գրպանը: Ի՞նչ կար այն տեղ:

— Նամակ՝ հասցեագրված հրացանակիրների կապիտան պարոն դը Տրևիլին:

— Մի՞ թե:

— Ճիշտ այդպես, ինչպես պատիվ ունեցա զեկուցելու ձերդ պայծառափայլությանը:

Պանդոկապետը, որ առանձին խորաթափանցություն չուներ, չնկատեց, թե այս խոսքերն ասելիս ինչպիսի արտահայտություն ստացավ անձանոթի դեմքը: Ետ քաշվելով լուսամուտից, որի զոզին հենվել էր մինչ այդ, անձանոթը մտահոգված՝ հոնքերը կիտեց:

— Դե՛, — թոցրեց նա ատամների արանքից:— Մի՞ թե Տրևիլն այդ գասկոնացուն ուղարկել է ինձ սպանելու: Ախր շատ շահել է նա: Բայց սուսերի հարվածը սուսերի հարված է, ինչպիսի հասակ էլ որ ունենա հարվածողը: Իսկ տղան ավելի քիչ վտանգ է ներշնչում: Պատահում է, որ փոքրիկ խոչընդոտը կարող է խանգարել մեծ նպատակին հասնել գործին:

Անձանոթը մի պահ մտորեց:

— Լսեցեք, պանդոկապետ,— ասաց նա վերջապես:— Կարո՞ղ եք ազատել ինձ այդ խելացնորից: Խիղճս թույլ չի տալիս, որ ես սպանեմ նրան, այնինչ...— Նրա դեմքին զծագրվեց պաղ դաժանություն:— Այնինչ նա խանգարում է ինձ: Որտե՞ղ է հիմա:

— Իմ կնոջ սենյակում, երկրորդ հարկում: Նրա վերքերն են փաթաթում:

— Իրերն ու պայուսակը մո՞տն են: Նա կամզուրը չի՞ հանել:

— Կամզուրն էլ, պայուսակն էլ մնացել են ցածում, խոհանոցում: Բայց քանի որ այդ խելացնոր ջահելը խանգարում է ձեզ...

— Իհարկե խանգարում է: Նա ձեր հյուրանոցում իրարանցում է ստեղծում, որն անհանգստացնում է կարգին մարդկանց... Գնացե՛ք ձեր սենյակը, պատրաստեցե՛ք իմ հաշիվը և նախազգուշացրե՛ք իմ ծառային:

— Ինչպե՛ս: Ձերդ պայծառափայլությունն արդեն հեռանո՞ւմ է մեզնից:

— Այդ ձեզ առաջ էլ հայտնի էր: Չե՞՞ որ ես ձեզ հրամայել էի թամբել իմ ձին: Մի՞ թե իմ կարգադրությունը կատարված չէ:

— Կատարված է: Ձերդ պայծառափայլությունը կարող է համոզվել. ձին թամբած է և կանգնած դարպասի մոտ:

— Լավ, ուրեմն արե՛ք ինչպես ասացի:

«Ա՛յ քեզ բան,— մտածեց պանդոկապետը:— Չլինի՞ թե սա վախեցավ այն տղայից»:

Սակայն անձանոթի հրամայական հայացքը կանգ-նեցրեց նրա մտքերի հոսքը: Նա հաճոյակատար գլուխ տվեց և դուրս գնաց:

«Միայն թե այդ սրիկան չտեսներ միլեդիին[21],— մտքում շարունակեց անձանոթը:— Նա շուտով պետք է ան-ցնի այստեղից: Նույնիսկ ուշանում է: Ավելի լավ կլինի ես ձիով ընդառաջ գնամ նրան... Ա՛խ, եթե ես իմանայի ինչ է գրված դր Տրևիլին ուղղված այդ նամակում...»: Եվ անձանոթը, շարունակելով ինքն իրեն մրմնջալ, ուղղվեց դեպի խոհանոց:

Մինչ այդ պանդոկապետը, չկասկածելով, որ հենց երիտասարդի ներկայությունն է անձանոթին ստիպում հեռանալ հյուրանոցից, բարձրացավ իր կնոջ սենյակը: Դ՛Արտանյանն արդեն բոլորովին ուշքի էր եկել: Ակնարկելով, որ

նստիկանությունը կարող է նրա օձիքից կաշել, որովհետև նա կովի է բռնվել նշանավոր ազնվականի հետ,— իսկ որ անձանոթը նշանավոր ազնվական է՝ դրան պանդոկապետը չէր կասկածում,— նա աշխատում էր դ'Արտանյանին համոզել, որ, չնայած իր թուլությանը, ոտքի էլնի ու ճանապարհ ընկնի: Դ'Արտանյանը դեռևս կիսաշշմած վիճակում, առանց կամգուլի, գլուխը սրբիչով փաթաթած՝ վեր կացավ և պանդոկապետի հորդորանքով կամաց-կամաց սկսեց ցած իջնել սանդուղքով: Բայց խոհանոցի շեմքին ոտք դնելով և պատահաբար մի հայացք գցելով լուսամուտին, առաջին մարդը, որին նա տեսավ, իրեն վիրավորող անձանոթն էր, որը նորմանդական երկու խոշոր ձի լծած ճամփորդական մի կառեթի ոտնակին կանգնած հանգիստ զրույց էր անում ինչ-որ մեկի հետ:

Նրա զրուցակիցը, որի գլուխը երևում էր կառեթի լուսամուտի շրջանակից, քսան-քսաներկու տարեկան մի դեռատի կին էր: Մենք արդեն ասել ենք, թե դ'Արտանյանը ինչպիսի արագությամբ էր ընկալում մարդու դեմքի բոլոր առանձնահատկությունները: Նա տեսավ, որ այդ կինը ջահել է ու գեղեցիկ: Եվ այդ գեղեցկությունն առավել էս զարմացրեց նրան այն պատճառով, որ դա բոլորովին արտասովոր բան էր հարավային Ֆրանսիայում, որտեղ մինչ այդ ապրել էր դ'Արտանյանը: Դա մի գունատ, շիկահեր կին էր՝ երկար խոպոպներով, որոնք իջնում էին մինչև ուսերը, կապուտակ թախծագործով աչքերով, վարդագույն շրթունքներով և ալաբաստրի պես սպիտակ թևերով: Նա ինչ-որ բանի մասին աշխուժորեն խոսում էր անձանոթի հետ:

— Ուրեմն բարձր սրբազնությունը[22] ինձ հրամայում է ...— ասաց տիկինը:

— ... անհապաղ վերադառնալ Անգլիա և այնտեղից իսկույն տեղեկություն ուղարկել, եթե դուքսը Լոնդոնից դուրս գա:

— Իսկ մյուս կարգադրությունն է՞րը...

— Դուք դրանք կգտնեք այս տուփի մեջ, որը բաց կանեք միայն Լա-Մանշի այն կողմում:

— Հիանալի է: Է՛, իսկ դո՞ւք ինչ եք մտադիր անելու:

— Ես վերադառնում եմ Փարիզ:

— Առանց այդ հանդուգն տղային խրատ տալո՞ւ:

Անձանոթն ուզում էր պատասխան տալ, բայց դեռ բերանն էլ չբացած՝
դ'Արտանյանը, որ լսել էր այդ ամբողջ խոսակցությունը, երևաց շեմքում:

— Այդ հանդուգն տղան ինքը խրատ կտա ում որ հարկավոր է,— գոռաց նա:—
Եվ հուսով եմ, որ ում այդ տղան ուզում է խրատ տալ, այս անգամ չի թաքնվի նրանից:

— Չի թաքնվի՞,— հարցրեց անձանոթը հոնքերը խոժոռելով:

— Ես ենթադրում եմ, որ տիկնոջ աչքի առաջ դուք սիրտ չէք անի փախչել:

— Հիշեցե՛ք...— գոչեց միլեդին, տեսնելով, որ անձանոթը ձեռքը զցում է իր
սուսերի դաստակին,— հիշեցե՛ք, որ ամենափոքր հապաղումը կարող է ամբողջ
գործը կործանել:

— Դուք իրավացի եք,— շտապ ասաց անձանոթը:— Գնացեք ձեր
ճանապարհով, ես էլ կգնամ իմ ճանապարհով:

Եվ տիկնոջը գլուխ տալով՝ նա թռավ ձիու վրա, իսկ կառերի կառապանը
մտրակը շրիկացրեց իր ձիերի մեջքին: Եվ անձանոթն ու նրա զրուցակիցը ամբողջ
թափով սլացան հակառակ ուղղություններով:

— Իսկ հաշի՛վը, հաշիվը ո՞վ պիտի վճարի,— գոռաց պանդոկապետը, որի
վերաբերմունքը հյուրի նկատմամբ փոխվեց խորն արհամարհանքի, երբ տեսավ, թե
ինչպես է նա հեռանում առանց հաշիվը փակելու:

— Վճարի՛ր, անբա՞ն,— առանց կանգ առնելու գոռաց ձիավորն իր ծառային,
որը պանդոկապետի ոտքերի տակ շարտեց մի քանի արծաթե դրամ և սլացավ իր
տիրոջ հետևից:

— Վախկո՛տ, սրիկա՛: Ինքնակո՛չ ազնվական,— գոռաց դ'Արտանյանը՝ իր
հերթին վազելով ծառայի հետևից:

Սակայն պատանին դեռ շատ թույլ էր և չէր կարող տանել այդպիսի ցնցումը: Դեռ մի տասը քայլ էլ չվազեց՝ ականջները զնգացին, գլուխը պտույտ եկավ, աչքերին արյունոտ մշուշ պատեց, և նա շրմփոցով ընկավ փողոցի մեջտեղում՝ շարունակելով գոռալ.— Վախկո՛տ, վախկո՛տ, վախկո՛տ:

— Իսկապես ողորմելի վախկոտ,— ասաց պանդոկապե-տը՝ մոտենալով դ'Արտանյանին և աշխատելով շողոքորթությամբ արժանանալ խեղճ պատանու վստահությանը ու խաբել նրան, ինչպես առակում արագիլն է խաբում խիտունջին:

— Այո, սարսափելի վախկոտն է,— շնչաց դ'Արտանյանը:— Բայց թե այն կինն ի՞նչ գեղեցիկն էր:

— Ի՞նչ կին,— հարցրեց պանդոկապետը:

— Միլեդին,— շնչաց դ'Արտանյանը և երկրորդ անգամ ուշաթափվեց:

— Ի՛նչ արած,— ասաց պանդոկապետը:— Երկուսին ես ձեռքից բաց թողիք, բայց կարող եմ համոզված լինել, որ սա մի քանի օր կմնա: Տասնմեկ էքյու ոնց էլ լինի կվաստակեմ:

Մենք գիտենք, որ տասնմեկ էքյուն այն ամենն էր, ինչ մնացել էր դ'Արտանյանի քսակում:

Պանդոկապետը հույս ուներ, որ իր հյուրը տասնմեկ օր հիվանդ կլինի և օրական մեկ էքյու կվճարի, բայց նա իր հյուրին չէր ճանաչում: Հետևյալ օրը դ'Արտանյանը վեր կացավ առավոտվա ժամը հինգին, ինքնուրույն իջավ խոհանոց, խնդրեց իր համար ճարել ինչ-որ դեղանյութեր, որոնց ճշգրիտ ցուցակը մեզ չի հասել, այդ թվում՝ գինի, յուղ, խնկունի և, մոր տված ցուցակը ձեռքին բռնած, պատրաստեց սպեղանին, որը քսեց իր բազմաթիվ վերքերին, ինքը փոխելով վիրակապերը՝ ոչ մի բժիշկ չթողնելով իր մոտ: Երևի սպեղանու բուժիչ հատկության շնորհիվ, կամ գուցե բժիշկների բացակայության պատճառով, նույն երեկոյան արդեն դ'Արտանյանը ոտքի ելավ, իսկ հաջորդ օրն արդեն բոլորովին առողջ էր:

Բայց երբ ուզում էր վճարել յուղի, խնկունու և գինու համար,— միակ բաները, որ այդ օրը պահանջել էր պատանին, որը ամենախիստ դիետա էր պահում, մինչդեռ

իր շեկ ձին, ինչպես պնդում էր պանդոկապետը, երեք անգամ ավելի էր կերել, քան կարելի էր ենթադրել հաշվի առնելով նրա հասակը,— դ'Արտանյանը իր գրպանում գտավ միայն տրորված թավշյա քսակը, որի մեջ պահված էր տասնմեկ էքյուն: Պարոն դը Տրևիլին հասցեագրված նամակը չքացել էր:

Սկզբում պատանին նամակը փնտրում էր խնամքով ու համբերությամբ: Մի քսան անգամ շուռ տվեց շավարի ու ժիլետի գրպանները, նորից ու նորից տնտղեց իր ճանապարհորդական պայուսակը: Բայց վերջնականապես համոզվելով, որ նամակը չքացել է, նա այնպիսի կատաղության մեջ ընկավ, որ քիչ մնաց նորից գինու և բուրավետ յուղի կարեք զգացվեր, որովհետև, տեսնելով, թե ինչպես բորբոքվեց երիտասարդ հյուրը, որը սպառնում էր քարուքանդ անել այդ ամբողջ հաստատությունը, եթե իր նամակը չգտնեն, պանդոկապետը զինվեց մահակով, կինը ցախավելով, իսկ ծառաները այն նույն մահակներով, որոնք արդեն երկու օր առաջ գործի էին դրել:

— Նամակը, հանձնարարական նամակը,— գոռում էր դ'Արտանյանը:— Տվե՛ք ինձ իմ նամակը, գրողի բաժիննե՛ր: Թե չէ ես ձեզ շամփուրի վրա կխորովեմ աքարի նման:

Դժբախտաբար որոշ հանգամանք պատանուն խանգարեց իրականացնել իր սպառնալիքը: Ինչպես արդեն մենք պատմել ենք, նրա սուսերը երկու կտոր էր եղել դեռ առաջին ընդհարման ժամանակ, որի մասին նա բոլորովին մոռացել էր արդեն: Դրա համար էլ սուսերը հանելու փորձ անելով նա տեսավ, որ զինված է միայն մի քանի մատնաչափ երկարությամբ կտորով, որ պանդոկապետը խնամքով խրել էր պատյանի մեջ, թաքցնելով շեղբի մյուս կեսը, հուսալով, թե կարող է նրանից շամփուր պատրաստել:

Այս հանգամանքը երևի չէր կանգնեցնի մեր դյուրաբորբոք պատանուն, եթե պանդոկապետն ինքն էլ վերջապես չհամոզվեր, որ իր հյուրի պահանջն իրավացի է:

— Բայց, իսկապես, ո՞ւր կորավ այդ նամակը,— ասաց նա՝ մահակն իջեցնելով:

— Այո, որտե՞ղ է նամակը,— գոռաց դ'Արտանյանը:— Առաջին՝ նախազգուշացնում եմ ձեզ, այդ նամակը պարոն դը Տրևիլինն է և պետք է գտնվի: Իսկ եթե չգտնվի, պարոն դը Տրևիլը կստիպի գտնել այն, հավատացե՛ք:

Այս սպառնալիքը վերջնականապես վախեցրեց պանդոկապետին: Թագավորից և պարոն կարդինալից հետո դը Տրեիլի անունը, թերևս, ամենից ավելի հաճախ էին հիշատակում ոչ միայն զինվորականները, այլև քաղաքացիները: Ճիշտ է, կար նաև «Հայր Ժոզեֆը[23]»... Բայց նրա անունն արտասանվում էր ոչ այլ կերպ, քան՝ շշուկով, այնքան մեծ էր երկյուղը այդ «տափակ բարեկրոնից»՝ կարդինալ Ռիշելիեի բարեկամից:

Նետելով մահակը, մի նշանով կնոջը հրամայելով նետել ցախավելը, իսկ ծառաներին՝ մահակները, պանդոկապետն ինքը խելացի օրինակ տվեց և սկսեց նամակը որոնել:

— Մի՞ թե այդ ծրարի մեջ արժեքավոր բաներ կային,— հարցրեց նա ապարդյուն որոնումներից հետո:

— Իհա՞րկե,— գոչեց գասկոնացին, որն այդ նամակի վրա էր դրել հույսը, թե նրա օգնությամբ իր համար ճանապարհի բաց կանի դեպի արքունիք:— Նրա մեջ էր իմ ամբողջ կարողությունը:

— Իսպանական բոնե՞ր[24],— անհանգստացած հարցրեց պանդոկապետը:

— Բոներ՝ նորին մեծության անձնական գանձարա-նից փող ստանալու համար,— պատասխանեց դ'Արտանյանը, որը հույս ունենալով, թե այդ նամակի օգնությամբ թագավորական ծառայության կմտնի, գտավ, որ իրավունք ունի առանց ստած լինելու այդպիսի բարձրագույն պատասխան տալ:

— Գրո՞ղը տանի,— գոչեց պանդոկապետը բոլորովին հուսահատված:

— Բայց կարևորն այդ չէ,— շարունակեց դ'Արտանյանը գասկոնացուն հատուկ ինքնավստահությամբ,— կարևորն այդ չէ, և փողը դատարկ բան է: Ինքը՝ նամակը, ահա միակ բանը, որ նշանակություն ունի: Ես կգերադասեի կորցնել հազար պիստոլ[25], քան այդ նամակը:

Նույն հաջողությամբ նա կարող էր ասել «քսան հազար պիստոլ», բայց պատանեկան համեստությունը զսպեց նրան:

Հանկարծ լույսի ճառագայթի պես մի բան փայլեց պանդոկապետի գլխում:

— Նամակն ամենևին էլ կորած չէ,— ասաց նա:

— Ի՞նչ,— գոչեց դ'Արտանյանը:

— Ո՛չ: Այն հափշտակել էն ձեզնից:

— Բայց ո՞վ է հափշտակել:

— Երեկվա անձանոթ ազնվականը: Նա իջավ խոհանոց, որտեղ գտնվում էր ձեր կամզոլը: Նա այնտեղ մենակ մնաց: Գրագ կգամ, որ այդ նրա արածն է:

— Դուք այդպե՞ս էք կարծում,— թերահավատությամբ ասաց դ'Արտանյանը:

Չէ՞ որ նրան բոլորից ավելի լավ էր հայտնի, որ այդ նամակը կարող էր նշանակություն ունենալ միայն իր համար, և չէր պատկերացնում, որ որևէ մեկը հրապուրվեր նրանով: Կասկած չկար, որ հյուրանոցում եղած հաճախորդներից կամ ծառաներից ոչ մեկը չէր կարող որևէ օգուտ քաղել այդ նամակից:

— Ուրեմն դուք ասացիք, որ կասկածում եք այն լկտի ազնվականի՞ն,— նորից հարցրեց դ'Արտանյանը:

— Ես ձեզ ասում եմ, որ համոզված եմ դրանում,— պնդեց պանդոկապետը,— երբ ես նրան ասացի, որ ձերո՞ւ ողորմածության հովանավորը պարոն դը Տրևիլն է, և որ դուք նույնիսկ նամակ ունեք այդ պատվարժան ազնվականին, նա պարզապես անհանգստացավ, ինձ հարցրեց, թե որտե՞ղ է այդ նամակը և իսկույն իջավ խոհանոց, որտեղ, ինչպես հայտնի էր նրան, գտնվում էր ձեր կամզոլը:

— Ուրեմն հափշտակողը նա՛ է,— գոչեց դ'Արտանյանը:— Ես կգանգատվեմ պարոն դը Տրևիլին, իսկ պարոն դը Տրևիլը՝ կգանգատվի թագավորին:

Ապա հպարտորեն գրպանից հանելով երկու էքյու՝ մեկնեց պանդոկապետին, որը, գլխարկը հանելով, ճանապարհ դրեց նրան մինչև դարպասը: Այդտեղ

դ'Արտանյանը հեծավ իր դեղնաշիկավուն ձին, որն առանց հետագա արկածների նրան հասցրեց մինչև Փարիզի Սենտ Անտուանի դարպասները: Այստեղ նա ձին ծախեց երեք էքյուով — միանգամայն հարմար գին, եթե հաշվի առնենք, որ նրա տերը հիմնավորապես հալից գցել էր ձիուն մինչև ճանապարհորդության վերջը: Դրա համար էլ գնորդը, որին դ'Արտանյանը զիջեց իր ձին վերոհիշյալ գումարով, երիտասարդին ակնարկեց, որ այդպիսի չլսված գնի ինքը համաձայնեց միայն նրա համար, որ հրապուրվել էր ձիու արտասովոր գույնով:

Այսպես ուրեմն, դ'Արտանյանը Փարիզ մտավ ոտքով տոպրակը թնի տակ դրած և փողոցներում թափառեց այնքան ժամանակ, մինչև որ հաջողվեց մի սենյակ վարձել իր աղքատիկ միջոցներով: Այդ սենյակը ձեռնահարկի նման մի բան էր և գտնվում էր Լյուքսեմբուրգի[26] մոտ, Գերեզմանափորների փողոցում:

Կանխավճար տալով՝ դ'Արտանյանն իսկույն տեղավորվեց իր սենյակում և օրվա զգալի մասը գործով էր զբաղված, իր կամզոլին ու շալվարին կարում էր տրեզ, որը մայրը պոկել էր պարոն դ'Արտանյան-հոր համարյա բոլորովին նոր կամզոլից և գաղտուկ տվել որդուն: Հետո նա գնաց Գետափնյա փողոց և իր սուսերի համար մի նոր շեղբ շինել տվեց: Դրանից հետո նա գնաց Լուվր և առաջին իսկ հանդիպած հրացանակրին հարցրեց, թե որտեղ է գտնվում պարոն դը Տրևիլի տունը: Պարզվեց, որ այդ տունը գտնվում է Հին Աղավնատուն փողոցում, այսինքն՝ բոլորովին մոտիկ այն փողոցին, որտեղ բնակություն էր հաստատել դ'Արտանյանը, մի հանգամանք, որ նա մեկնաբանեց որպես հաջողության նախանշան:

Ապա՝ Մենգում ունեցած իր վարքագծից գոհ, չգղջալով անցյալի համար, հավատալով ներկային և լիակատար հույսեր ունենալով ապագայի նկատմամբ՝ նա պառկեց ու քնեց դյուցազնի քնով:

Որպես իսկական գավառացի՝ նա քնեց մինչև առավոտյան ինը և արթնանալով ճանապարհ ընկավ արժանափառ պարոն դը Տրևիլի տուն՝ թագավորության մեջ երրորդ դեմքի մոտ, ինչպես դատում էր դ'Արտանյան-հայրը:

II. Պարոն դը Տրևիլի ընդունարանը

Պարոն դը Տրուավիլը, որի անունը դեռևս շարունակում են կրել նրա ազգականները Գասկոնում, կամ դը Տրևիլը, ինչպես նա վերջիվերջո սկսեց կոչել իրեն Փարիզում, իր ուղին, իրոք որ, սկսել էր այնպես, ինչպես դ'Արտանյանը, այսինքն՝

գրպանում չունենալով ոչ մի սու[27], սակայն ունենալով հանդգնության, սրամտության ու հնարագիտության այն պաշարը, որի շնորհիվ նույնիսկ ամենաչքավոր գասկոնացի ազնվականը հաճախ իրականացնում էր հոր ամենահամարձակ երազանքները և ավելի շատ բանի էր հասնում, քան պերիգորյան կամ բերիյան ամենահարուստ ազնվականը, որը հենվում էր իր ժառանգած իսկական բարիքների վրա: Նրա հանդուգն համարձակությունը, նրա է՛լ ավելի հանդուգն հաջողակությունը, այնպիսի ժամանակներում, երբ սուսերի հարվածները կարկուտի պես էին տեղում, նրան բարձրացրին պալատական հաջողություն կոչվող սանդուղքի գագաթը, որով նա վերև թռավ երեքական աստիճան քայլելով:

Նա թագավորի մանկության ընկերն էր, իսկ թագավորը, ինչպես բոլորին հայտնի է, շատ էր հարգում իր հոր՝ Հենրիխ IV-ի հիշատակը: Պարոն դը Տրևիլի հայրը Լեգայի[28] դեմ մղած պատերազմներում այնպես նվիրված էր ծառայել թագավորին, որ կանխիկ փող չլինելու պատճառով,— իսկ կանխիկ փողն ամբողջ կյանքում պակասում էր բեարնացուն, որն իր բոլոր պարտքերը վճարում էր սրախոսություններով, միակ բանը, որ նա կարիք չէր ունենում պարտք վերցնելու,— որ, ինչպես արդեն ասացինք, կանխիկ փող չլինելու պատճառով, թագավորը Փարիզը գրավելուց հետո դը Տրևիլի հորը թույլատրեց իր զինանշանի մեջ մտցնել առյուծ՝ ծիրանագույն դաշտում, այսպիսի նշանաբանով՝ *fidelis et fortis*[29]: Դա մեծ պատիվ էր, սակայն՝ նվազ շահավետ: Եվ մեծ Հենրիխի պանծալի զինակիցը մեռնելիս իր որդուն ժառանգություն թողեց միայն իր սուսերը և նշանաբանը: Այդ ժառանգության և իր անբիծ անվան շնորհիվ պարոն դը Տրևիլն ընդունվեց երիտասարդ արքայորդու արքունիքում, որտեղ նա այնպիսի քաջությամբ էր ծառայում իր սուսերով և այնքան հավատարիմ էր իր նշանաբանին, որ Լյուդովիկոս XIII-ը, թագավորության լավագույն սուսերամարտիկներից մեկը, սովորաբար ասում էր, որ եթե իր բարեկամներից որևէ մեկը մենամարտելու լիներ, ինքը նրան խորհուրդ կտար որպես մարտավկա հրավիրել առաջինը իրեն, իսկ երկրորդը՝ պարոն դը Տրևիլին, որին գուցե և կարելի էր նախապատվություն տալ:

Լյուդովիկոս XIII-ը իսկապես կապված էր դը Տրևիլի հետ. ճիշտ է, դա թագավորական կապվածություն էր, էգոիստական, բայց և այնպես կապվածություն էր: Բանն այն է, որ այդ դժվարին ժամանակներում բարձրաստիճան մարդիկ ընդհանրապես ձգտում էին իրենց շրջապատել այնպիսի մարդկանցով, ինչպիսին էր դը Տրևիլը: Շատ կգտնվեին այնպիսի մարդիկ, որոնք կարող էին իրենց նշանաբանը համարել «ուժեղ» բառը, դը Տրևիլների զինանշանի մակագրության երկրորդ մասը,

բայց ազնվականներից քչերը կարող էին հավակնություն ունենալ կրելու «հավատարիմ» մակդիրը, որ կազմում էր այդ մակագրության առաջին մասը: Տրևիլն այդ իրավունքն ուներ: Նա մեկն էր այն հազվագյուտ մարդկանցից, որոնք կարողանում են ենթարկվել կուրորեն ու առանց դատողությունների, ինչպես հավատարիմ շները, աչքի ընկնելով խելամտությամբ և մեծ ճարտարությամբ: Աչքերը նրան ծառայում էին նրա համար, որ որսան, թե թագավորը չի գայրանում որևէ մեկի վրա, իսկ ձեռքը նրա համար, որ խփի մեղավորին, մի որևէ Բեմի կամ Մորևերի, Պուլտրո դե Մերեի կամ Վիտրիի[30]: Տրևիլին մինչև այժմ միայն առիթն էր պակասում, որպեսզի ցույց տա իրեն, բայց նա սպասում էր դրան, որպեսզի առիթը լինելուն պես ճանկի մազերից: Իգուր չէր, որ Լյուդովիկոս XIII-ը դը Տրևիլին նշանակել էր իր հրացանակիրների կապիտան, որոնք նրա համար նույն դերն էին խաղում, ինչ թիկնապահական խումբը[31] Հենրիխ III-ի համար և շոտլանդական գվարդիան[32]՝ Լյուդովիկոս XI-ի համար: Այդ տեսակետից կարդինալն իր հերթին չէր զիջում թագավորին: Տեսնելով, թե ընտրյալների ինչպիսի ահեղ կոհորտայով է շրջապատել իրեն Լյուդովիկոս XIII-ը, Ֆրանսիայի այդ երկրորդ, կամ ավելի ճիշտ՝ առաջին տիրակալը ևս ցանկացավ ունենալ իր գվարդիան: Ուստի նա էլ ձեռք բերեց իր սեփական հրացանակիրներին, ինչպես Լյուդովիկոս XIII-ն էր ձեռք բերել իր հրացանակիրներին, և կարելի էր տեսնել, թե այդ երկու մրցակից տիրակալներն ինչպես էին Ֆրանսիայի բոլոր մարզերում, նույնիսկ օտար պետություններում իրենց համար հավաքագրում մարդիկ, որոնք հոչակված լինեն իրենց ռազմական քաջագործություններով: Հաճախ էր պատահում, որ երեկոները Ռիշելիեն և Լյուդովիկոս XIII-ը շախմատի տախտակի մոտ վիճեն իրենց զինվորների արժանիքների մասին: Նրանցից յուրաքանչյուրը պարծենում էր իր զինվորների կեցվածքով ու համարձակությամբ և խոսքով դատապարտելով ընդհարումներն ու մենամարտերը՝ գաղտնաբար իրենց թիկնապահներին կոիվների էին դրդում: Իրենց հրացանակիրների հաղթանակը կամ պարտությունը անասելի ուրախություն կամ իսկական վիշտ էր պատճառում նրանց: Համենայնդեպս իր հուշերում այդպես է պատմում այն մարդը, որ մասնակիցն է եղել մեծ թվով այդպիսի հաղթանակների և մի քանի պարտության:

Տրևիլը կռահել էր իր տիրակալի թույլ կողմը և հենց դրանով արժանացել էր թագավորի անփոփոխ ու երկարատև բարյացակամությանը, այն թագավորի, որը մշտական բարեկամության համբավ չուներ: Այն հոխորտալից տեսքը, որով նա իր հրացանակիրներին շքերթով անց էր կացնում կարդինալ Արման դյու Պլեսի Ռիշելիեի առջևով, այնպիսի գայրույթ էր պատճառում նորին սրբազնությանը, որ նրա բեղերը

բիզ-բիզ էին կանգնում: Տրևիլը ամենայն նրբությամբ էր տիրապետում այն ժամանակների պատերազմի արվեստին, երբ մարդ ստիպված էր ապրել կամ ի հաշիվ իր թշնամու, կամ ի հաշիվ իր հայրենակիցների, նրա զինվորները կազմում էին սանձարձակների մի լեգեոն և ենթարկվում էին միմիայն նրան:

Թագավորի, կամ ավելի ճիշտ՝ պարոն դը Տրևիլի անփույթ հագնված, փոքր-ինչ խմած, չանգոռոտված հրացանակիրները շրջում էին պանդոկներում, խրախճավայրերում ու զբոսարաններում, գոռգոռում էին՝ բեղերը ոլորելով ու սուսերները շրխկացնելով՝ մեծ բավականությամբ կովի հրահրելով կարդինալի թիկնապահներին, երբ վերջիններս հանդիպում էին նրանց ճանապարհին: Հետո հազար ու մի կծու խոսքերով դուրս էին քաշում սուսերները: Պատահում էր՝ նրանց սպանում էին, և նրանք ընկնում էին, համոզված լինելով, որ իրենց համար լաց կլինեն և իրենց վրեժը կառնեն, բայց ավելի հաճախ պատահում էր, որ նրանք էին սպանում, համոզված լինելով, որ դրա համար իրենց բանտում չեն փտեցնի, պարոն դը Տրևիլը, հասկանալի է, կփրկի իրենց: Այդ մարդիկ հազար բերան գովաբանում էին պ-րն դը Տրևիլին, որին աստվածացնում էին, և թեպետ բոլորն էլ կատաղի տաք գլուխներ էին, բայց դողում էին նրա առաջ, ինչպես դպրոցականը ուսուցչի առաջ, հնազանդվում էին նրան առաջին իսկ խոսքից և պատրաստ էին մեռնելու, որպեսզի իրենց վրայից մաքրեն նրա թեկուզ ամենաչնչին կշտամբանքը:

Պ-րն դը Տրևիլը սկզբում այդ հզոր լծակն օգտագործում էր թագավորի ու նրան նվիրված մարդկանց օգտին, հետագայում՝ իր և իր բարեկամների օգտին: Ի դեպ, այն ժամանակվա հուշագրություններից ոչ մեկից - իսկ այդ ժամանակից այնքան շատ հուշագրություններ են մնացել - չի երևում, որ թեկուզ թշնամիները - իսկ նա քիչ թշնամիներ չի ունեցեք ինչպես գրչին տիրապետողների, այնպես էլ սուսերին տիրապետողների մեջ - չի երևում, ասացինք, որ թեկուզ թշնամիները մեղադրեին այդ արժանավոր մարդուն, թե իբր նա որևէ հատուցում է ստացել այն օգնության համար, որ ցույց են տվել նրա հավատարիմ զինվորները: Խարդավանքներ սարքելու ընդունակություն ունենալով, ոչ պակաս, քան ամենահմուտ խարդավանը, նա միշտ մնում էր որպես ազնիվ մարդ: Դեռ ավելին. չնայած հոգնեցուցիչ արշավանքներին, զինվորական կյանքի բոլոր ծանրություններին՝ նա ուրախ արկածների մոլի սիրահար էր, կանանց ամենանուրբ հաճոյացող, որ ուզածը ժամանակ կարողանում էր պարծենալ ընտիր մադրիգալներով[33]: Կանանց նկատմամբ տարած նրա հաղթանակների մասին այնքան բամբասանք էր շրջում, որքան քսան տարի դրանից առաջ Բաստմպիերի[34] սիրային գործերի մասին, իսկ դա մի բան նշանակում էր:

Հրացանակիրների կապիտանը առաջացնում էր հիացմունք, վախ ու սեր, ուրիշ խոսքով՝ նա հասել էր բախտի ու հաջողության գագաթնակետին:

Լյուդովիկոս XIV-ը կլանել էր իր արքունիքի բոլոր մանր համաստեղությունները՝ խավարացնելով նրանց իր կուրացուցիչ փայլով, մինչդեռ նրա հայրը՝ pluribus impar[35] արևը, իր սիրեցյալներից յուրաքանչյուրին, իր մերձավորներից յուրաքանչյուրին հնարավորություն էր տալիս շողալու սեփական փայլով: Բացի թագավորի ու կարդինալի առավոտյան ընդունելությունից՝ Փարիզում տեղի էին ունենում երկու հարյուրից ավելի այդպիսի «առավոտյան ընդունելություններ», որոնք հատուկ ուշադրություն էին վայելում: Դրանց մեջ դը Տրևիլի առավոտյան ընդունելությունը ամենից ավելի մեծ թվով այցելուներ էր հավաքում:

Հին Ադամաստուն փողոցում գտնվող նրա առանձնատան բակը ճամբարի էր նմանվում՝ ամառը առավոտյան դեռ ժամը վեցից և ձմեռը՝ ժամը ութից: Մի հիսուն կամ վաթսուն մարդ հրացանակիրներ, որոնք, ըստ երևույթին, ժամանակ առ ժամանակ փոխարինում էին իրար, որպեսզի այդ պատկառելի թիվը ամեննին չպակասի, շարունակ շրջում էին բակում մինչև ատամները զինված և ամեն ինչի պատրաստ: Սանդուղքով, որն այնպիսի լայնություն ուներ, որ ժամանակակից շինարարը նրա զբաղեցրած տեղում մի ամբողջ տուն կշիներ, շարունակ վեր ու վար էին անում այցելուներ, որոնք այս կամ այն ողորմածության էին սպասում, գավառներից եկած ազնվականներ, որոնք փափագում էին հրացանակիր դառնալ, գույնզգույն ոսկեկար լիվրեններով սպասավորներ, որոնք այստեղ էին գալիս իրենց տերերի պատվերներով: Ընդունարանում, պատերի երկարությամբ շարված երկար նստարաններին, նստած էին լինում ընտրյալները, այսինքն նրանք, ում այդտեղ էր հրավիրել ինքը՝ դը Տրևիլը: Առավոտից մինչև երեկո ընդունարանում անասելի դժժոց էր լինում, մինչդեռ դը Տրևիլը իր կաբինետում, որը կից էր այդ սենյակին, ընդունում էր հյուրերին, լսում նրանց գանգատները, հրամաններ էր տալիս և, ինչպես թագավորը Լուվրում իր պատշգամբից, կարող էր լուսամուտին մոտենալով դիտել իր մարդկանց ու նրանց սպառազինությունը:

Այն օրը, երբ դ'Արտանյանն առաջին անգամ այստեղ եկավ, հավաքվածների թիվը շատ մեծ երևաց, մանավանդ գավառացու աչքին: Գավառացին, ճիշտ է, գասկոնացի էր, և նրա հայրենակիցներն այն ժամանակներում այնպիսի մարդկանց համբավ ունեին, որոնց դժվար էր որևէ բանով շփոթեցնել: Անցնելով ամրակուռ

դարպասից, որը ծածկված էր քառակուսի գլխիկներ ունեցող երկար գամերով, այցելուն ընկավ սպառազինված մարդկանց բազմության մեջ: Այդ մարդիկ այս ու այն կողմ էին գնում բակում, ձայն էին տալիս իրար, մերթ կռիվներ էին սարքում իրար հետ, մերթ՝ խաղեր: Մարդկային այդ փոթորկահույզ ալիքների միջով ճանապարհ բանալու համար հարկավոր էր լինել սպա, ազնվական կամ սիրունատես կին:

Մեր պատանին սրտի թրթիռով ճանապարհ էր բացում իր համար այդ հրմշտոցի ու ճիւղտոցի միջով, նիհար ոտքերին սեղմելով իր չափից ավելի երկար սուսերը, ձեռքը չպոկելով լայնեզր գլխարկի եզրից և ժպտալով գավառացու խղճուկ ժպիտով, որով աշխատում էր թաքցնել իր շփոթմունքը: Այցելուների այս կամ այն խմբից անցնելով՝ նա թեթևացած հոգոց էր քաշում, բայց որոշակի զգում էր, որ ներկաները նայում են իր հետևից, և դ'Արտանյանը, որը մինչ այդ բավական լավ կարծիք ուներ իր անձի մասին, առաջին անգամ իր կյանքում իրեն զգաց խղճուկ ու ծիծաղելի:

Սանդուղքի մոտ դրությունն ավելի դժվարին դարձավ: Մտորին աստիճանների վրա չորս հրացանակիր ինչ-որ ուրախ խաղով էին զբաղված, իսկ հարթակի վրա նրանց ընկերներից մի տասը-տասներկու հոգի սպասում էին իրենց հերթին, որպեսզի մասնակցեն խաղին: Չորս հրացանակիրներից մեկը, որ մյուսներից մի աստիճան վերև էր կանգնած, սուսերը հանած՝ խանգարում կամ աշխատում էր խանգարել մյուսներին՝ բարձրանալու սանդուղքով վեր: Այս երեքը սուսերները ճարակորեն խաղացնելով հարձակվում էին նրա վրա:

Սկզբում դ'Արտանյանը այդ սուսերները անվնաս մարգասուսերների տեղ դրեց, կարծելով, թե նրանց սայրերը բթացրած են: Բայց շուտով խաղի մասնակիցների երեսների մի քանի չանգովածքից հասկացավ, որ նրանց ծայրերը ամենայն ինամքով սրված էին: Ամեն մի նոր չանգովածքի ժամանակ ոչ միայն հանդիսատեսները, այլև հենց վնասվողները բռնկում էին քրքիջով:

Հրացանակիրը, որն այդ բռպեին վերևի աստիճանի վրա էր, հիանալի պաշտպանվում էր իր հակառակորդներից: Նրանց շուրջը ամբոխ էր հավաքվել: Խաղի պայմանն այն էր, որ առաջին իսկ չանգովածքի դեպքում վիրավորը դուրս է գալիս խաղից ու նրա տեսակցության հերթը անցնում է հաղթողին: Ընդամենը մի հինգ բռպեի ընթացքում երեք հոգու դիպել էր սուսերը. մեկի ձեռքն էր չանգովել, մյուսի՝ կզակը, երրորդի՝ ականջը, ըստ որում՝ աստիճանները պաշտպանողին ոչ մի անգամ

սուսեր չէր դիպել: Այդպիսի ճարպկությունը, ըստ պայմանի, պարզևատրվում էր երեք հերթ առաջ քաշելով:

Որքան էլ դժվար էր զարմացնել մեր երիտասարդ ճանապարհորդին, ավելի ճիշտ՝ ստիպել նրան ցույց տալ, որ զարմացած է, այնուամենայնիվ այս խաղը զարմացրեց նրան: Նրա հայրենիքում, այն կողմերում, որտեղ սովորաբար մարդու արյունն այնքան հեշտությամբ էր գլուխը խփում, մենամարտի հրավիրելու համար, այնուամենայնիվ, մի որևէ առիթ էր պահանջվում: Չորս խաղընկերների գասկոնադան[36] ամենաարտասովորը թվաց նրան այն ամենից, ինչ երբևիցե նա առիթ էր ունեցել լսելու նույնիսկ բուն Գասկոնում: Նրան թվում էր, թե ինքն ընկել է հռչակավոր հսկաների աշխարհը, որտեղ ընկել էր Գուլիվերը և որտեղ այնքան երկյուղ էր կրել: Այնինչ մինչև իր նպատակակետը դեռ հեռու էր. դեռ մնում էին վերին հարթակը և ընդունարանը:

Հարթակում արդեն չէին կռվում. այնտեղ բամբասում էին կանանցից, իսկ ընդունարանում՝ թագավորի արքունիքից: Հարթակում դ'Արտանյանը կարմրատակեց, ընդունարանում դողդողաց: Նրա աշխույժ ու համարձակ երևակայությունը, որ Գասկոնում նրան վտանգավոր էր դարձրել ջահել սպասուհիների համար, հաճախ էլ նրանց ջահել տիրուհիների համար, երբեք, նույնիսկ ջերմի գառանցանքի մեջ, չէր կարող նրա առաջ պատկերել թեկուզ կեսը այն սիրային հրապուրանքի և նույնիսկ մի քառորդը այն սիրային սխրագործությունների, որոնք այստեղ խոսակցության նյութ էին հանդիսանում և առանձին սրություն էին ստանում այն մեծադորդ անուններից ու ամենագաղտնի մանրամասնություններից, որ բերվում էին այդ խոսակցությունների ժամանակ: Բայց եթե հարթակում հարված տրվեց նրա պարկեշտությանը, ապա ընդունարանում սասանվեց նրա հարգանքը կարդինալի նկատմամբ: Այստեղ դ'Արտանյանը մեծ զարմանքով լսեց, թե ինչպես են քննադատում այն քաղաքագետին, որն ամբողջ Եվրոպային ստիպում էր դողալ: Այստեղ հարձակումների էր ենթարկվում նաև կարդինալի անձնական կյանքը, թեև, ինչպես դ'Արտանյանին հայտնի էր, այդ կյանքի մեջ թափանցելու ամենաչնչին վարձի համար այնքան շատ հզոր ու անվանի ազնվականներ էին տուժել: Այդ մեծ մարդը, որին այնքան խորապես հարգում էր պ-րն դ'Արտանյան-հայրը, այստեղ ծաղրի առարկա էր դարձել պ-րն դը Տրնիլի հրացանակիրների համար: Նրանք ծաղրում էին կարդինալի ծուռ ոտքերը, կուզիկ մեջքը: Ինչ-որ մեկը երգեր էր երգում նրա սիրուհու՝ մադամ դ'Էգիլիոնի մասին և նրա ազգականուհու՝ տիկին դը Կոմբալեի[37] մասին, իսկ ուրիշները ծաղրում էին կարդինալի մանկլավիկներին ու թիկնապահներին: Եվ

այս ամենն այնպիսի բաներ էին, որ դ'Արտանյանին թվում էին աներևակայելի և օտարոտի:

Բայց եթե կարդինալի հասցեին ուղղված այդ կծու էպիգրամներին պատահաբար խառնվում էր թագավորի անունը, թվում էր, թե ինչ-որ մեկի անտեսանելի ձեռքը վայրկենապես փակում էր այդ բոլոր ծիծաղկոտ բերանները: Խոսողները շփոթմունքով ետ էին նայում, ասես վախենալով, թե իրենց ձայնը պատի միջով կթափանցի պ-րն դը Տրևիլի կաբինետը: Բայց համարյա նույն պահին հարևանցիորեն նետված մի ակնարկ նորից խոսակցությունը փոխում էր նորին սրբազնության հասցեին, ձայները նորից բարձր էին հնչում, և մեծ կարդինալի արարքներից ոչ մեկը ստվերի մեջ չէր մնում:

«Այս բոլոր մարդկանց,— սուկումով մտածեց դ'Արտանյանը,— անպայման Բաստիլ[38] կնետեն և կկախեն: Եվ ինձ էլ սրանց հետ. ինձ հանցակից կհամարեն, քանի որ ես ականջ եմ դրել ու լսել սրանց խոսքերը: Ի՛նչ կասեր իմ հայրը, որն այնպես համառորեն ներշնչում էր ինձ հարգել կարդինալին, եթե իմանար, որ ես այսպիսի ազատամիտ մարդկանց մեջ եմ գտնվում»:

Դրա համար էլ, ինչպես հեշտ է կռահել, դ'Արտանյանը սիրտ չէր անում խառնվել խոսակցությանը: Բայց նայում էր աչքերը չռած և լսում էր ազահորեն, լարելով իր բոլոր հինգ զգայարանները, միայն թե ոչ մի բան բաց չթողնի: Չնայած հոր խորհուրդների նկատմամբ ունեցած ամբողջ հարգանքին, նա, հետևելով իր մղումներին ու ճաշակին, ավելի շուտ հակված էր հավանություն տալու, քան թե դատապարտելու այն, ինչ տեղի էր ունենում իր շուրջը:

Սակայն, նկատի ունենալով, որ նա բոլորովին օտար էր դը Տրևիլին նվիրված մարդկանց բազմության մեջ, և նրան առաջին անգամ էին տեսնում այստեղ, մոտեցան նրան՝ իմանալու, թե ինչի համար է եկել: Դ'Արտանյանը համեստորեն տվեց իր անունը և ասելով, որ ինքը պ-րն դը Տրևիլի հայրենակիցն է, հարցումով իրեն մոտեցած ծառային պատվիրեց պ-րն Տրևիլին խնդրեք, որ մի քանի բուպեով ունկնդրության ընդունի իրեն: Ծառան հովանավորական տոնով խոստացավ իր ժամանակին հաղորդել նրա խնդիրը:

Առաջին շփոթմունքից փոքր-ինչ ուշքի գալով՝ այժմ դ'Արտանյանը կարող էր ազատ ժամանակ ուշի-ուշով դիտել շրջապատողների հագուստն ու դեմքերը:

Ամենաաշխույժ խմբերից մեկի կենտրոնն էր բարձրահասակ մի հրացանակիր՝ մեծամիտ մարդու դեմքով և արտասովոր հագուստով, որն իր վրա էր գրավում ընդհանուրի ուշադրությունը: Նա հագին ուներ ոչ թե համազգեստ, որը կրելը, ի դեպ, պարտադիր չէր համարվում այն ժամանակներում, - ժամանակներ, երբ ազատություն քիչ կար, բայց անկախություն՝ շատ, - այլ հագին ուներ բաց երկնագույն, բավական խունացած ու մաշված կամզոլ, որի վրայից կապված էր մի շքեղ լանջագոտի, որը ոսկեկար էր և շողշողում էր, ինչպես պարզ կեսօրին՝ արևի ճառագայթները ջրի մեջ: Այլ թավիշե երկար թիկնոցը շքեղորեն կախ էր ընկել նրա ուսերից, միայն առջևի կողմում թույլ տալով տեսնել կուրացուցիչ լանջագոտին, որից կախված էր մի ահագին սուսեր:

Այս հրացանակիրը հենց նոր էր ազատվել պահակային հերթապահությունից, գանգատվում էր, թե մրսել է և դիտմամբ հագում էր: Ահա հենց դրա համար էլ նա ստիպված էր եղել թիկնոցը գցել ուսերին, ինչպես բացատրում էր ինքը՝ անփութորեն նետելով բառերը և բեղը ոլորելով, մինչդեռ շրջապատողները, և ամենից ավելի դ'Արտանյանը, աղմուկով հիանում էին ոսկեկար լանջագոտիով:

— Ի՞նչ կարող ես անել, — ասում էր հրացանակիրը: — Սա մոդա է դառնում: Շռայլություն է, ես ինքս էլ գիտեմ, բայց մոդա է: Ասենք՝ վերջիվերջո հարկավոր է մի որևէ բանի վրա ծախսել հայրական փողերը:

— Ա՛խ, Պորտոս, — գոչեց ներկաներից մեկը, — մի՛ ջանա մեզ համոզել, թե այդ գոտին դու հայրական փողով ես ձեռք բերել: Արդյոք այդ քեզ չի՞ ընծայել այն քողավոր տիկինը, որի հետ ես քեզ տեսա կիրակի օրը Սենտ-Օնորեի դարպասի մոտ:

— Ո՛չ, երդվում եմ պատվովս և ազնվականի խոսք եմ տալիս, որ ես այս գոտին գնել եմ իմ սեփական փողով, — պատասխանեց նա, որին Պորտոս էին կոչում:

— Այո, — ասաց հրացանակիրներից մեկը, — գնել ես ճիշտ այնպես, ինչպես ես, ահա, այս նոր քսակը, այն նույն փողերով, որ իմ սիրուհին դրել էր իմ հին քսակի մեջ:

— Դե իսկապես, ոչ, — առարկեց Պորտոսը, — և ես կարող եմ վկայել, որ այս լանջագոտուն վճարել եմ տասներկու պիստոլ:

Հիացական բացականչություններն ուժեղացան, բայց կասկածը չփարատվեց:

— Ճիշտ չե՞մ ասում, Արամիս,— հարցրեց Պորտոսը՝ դառնալով մի ուրիշ հրացանակրի:

Այս հրացանակիրը կատարյալ հակապատկերն էր Պորտոսի, որը դիմեց նրան՝ Արամիս կոչելով: Սա քսաներկու-քսաներեք տարեկան մի երիտասարդ էր՝ դեմքի միամիտ ու փոքր-ինչ անուշիկ արտահայտությամբ, սև-սև աչքերով և կարմրավուն այտերով, որոնք աշնան դեղձի պես ծածկված էին թավշանման աղվամագով: Բարակ բեղերը անբասիր ուղիղ գիծ էին քաշում վերին շրթունքի վրա: Թվում էր, թե նա խուսափում է ձեռքերը ցած գցել, վախենալով, թե մկանները կարող են ուռչել: Մերթ ընդ մերթ շոշափում էր ականջների բլթակները, որպեսզի պահպանի նրանց քնքուշ գույնն ու թափանցիկությունը: Խոսում էր քիչ, դանդաղ, հաճախակի խոնարհվելով, ծիծաղում էր անաղմուկ, բաց անելով գեղեցիկ ատամները, որոնք, ինչպես և իր ամբողջ արտաքինը, ըստ երևույթին, հոգատարությամբ խնամում էր նա: Ընկերոջ հարցին նա դրական պատասխան տվեց գլխի շարժումով:

Նրա այդ դրական պատասխանը, ըստ երևույթին, փարատեց բոլոր կասկածները հրաշալի գոտու վերաբերյալ: Այդ գոտիով շարունակեցին հիանալ, բայց դադարեցին խոսել նրա մասին, և խոսակցությունն աստիճանաբար անցավ ուրիշ թեմայի:

— Ինչ կարծիք ունեք դուք պարոն դը Շալեի[39] ախոռապետի պատմածի մասին,— հարցրեց մի ուրիշ հրացանակիր՝ չդիմելով առանձին որևէ մեկին, այլ միանգամից բոլոր ներկա եղողներին:

— Իսկ ի՞նչ է պատմում նա,— հպարտ-հպարտ հարցրեց Պորտոսը:

— Նա պատմում է, որ Բրյուսելում հանդիպել է Ռոշֆորին, կարդինալի այդ ամենանվիրված ծառային: Նա կապուցինի[40] հագուստով է եղել և օգտվելով այդպիսի դիմակահանդեսից՝ այդ անիծյալ Ռոշֆորը խաբել է պարոն դը Լեգին ինչպես ամենավերջին ապուշին:

— Ինչպես ամենավերջին ապուշի՞ն,— կրկնեց Պորտոսը:— Բայց ճշմարի՞տ է արդյոք:

— Ես այս լսել եմ Արամիսից,— ասաց հրացանակիրը:

— Իսկապէ՞ս:

— Ախր ձեզ այդ քաջ հայտնի է, Պորտո՛ւս,— ասաց Արամիսը: — Ես այդ երեկ եմ պատմել ձեզ: Չարժե անդրադառնալ դրան:

— Չարժե անդրադառնա՛լ,— գոչեց Պորտոսը:— Դուք այդպէ՞ս եք կարծում: Չարժե անդրադառնալ: Գրողը տանի: Ինչ արագ եք վճիռ ընդունում դուք: Ինչպէ՛ս: Կարդինալը հետապնդում է ազնվականին, դավաճանի, ավագակի, արքայականի օգնությամբ նրանից նամակներ է հափշտակում և, օգտվելով միևնույն լրտեսից, այդ նամակների հիման վրա կարողանում է մահապատիժ տալ Շալէին՝ այն անհեթեթ պատճառաբանությամբ, թե իբր Շալէն ուզում էր թագավորին սպանել և Օռլեանի դքսին[41] ամուսնացնել թագուհու հետ: Ոչ ոք չէր կարող գտնել այդ հանելուկի բանալին, դուք, ի գոհունակություն բոլորի, երեկ հաղորդում եք մեզ այդ, և երբ մենք դեռ չենք կարողացել ուշքի գալ, այսօր հայտարարում եք՝ «չարժե անդրադառնալ դրան»:

— Է՛հ, ի՛նչ կա որ, անդրադառնանք դրան, եթե դուք այդպէս եք ցանկանում,— համբերատարությամբ համաձայնեց Արամիսը:

— Ես լինեի պարոն դը Շալէի ախոռապետը,— գոչեց Պորտոսը,— ես դաս կտայի այդ Ռոշֆորին:

— Իսկ ձեզ դաս կտար Կարմիր Դուքսը[42],— հանգիստ պատասխանեց Արամիսը:

— Կարմիր Դո՛ւքս: Կեցցե՛ս, կեցցե՛ս: Կարմիր Դո՛ւքս,— գոռաց Պորտոսը ծափ զարկելով և գլխով դրական նշան անելով:— Կարմիր դո՛ւքս՝ հիանալի է: Ես կաշխատեմ տարածել այդ սրախոսությունը, հանգիստ եղեք: Ա՛յ թե ինչ սրամիտն է այս Արամիսը: Ափսոս, որ դուք հնարավորություն չեք ունեցել հետևելու ձեր կոչմանը, սիրելիս: Ի՛նչ հիանալի արբատ կստացվեր ձեզնից:

— Օ՛, սա միայն ժամանակավոր հետաձգում է,— ասաց Արամիսը:— Կգա ժամանակ, որ ես, այնուամենայնիվ, աբբատ կդառնամ: Դուք հո գիտեք, Պորտոս, որ ես այս բանը նախազգայով՝ շարունակում եմ աստվածաբանություն ուսումնասիրել:

— Սա կհասնի իր նպատակին,— ասաց Պորտոսը:— Վաղ թե ուշ, բայց՝ կհասնի:

— Ավելի հավանական է՝ շուտ,— պատասխանեց Արամիսը:

— Նա սպասում է միայն մի բանի, որպեսզի նորից զգեստավորվի այն կապայով, որ կախված է նրա պահարա-նում, հրացանակրի հագուստի ետևում,— գոչեց հրացանակիրներից մեկը:

— Էլ ինչի՞ է սպասում,— հարցրեց մի ուրիշը:

— Սպասում է, որ թագուհին ժառանգ պարզևի երկրին:

— Կարիք չկա կատակներ անելու դրա մասին, պարոննե՛ր,— ասաց Պորտոսը:— Թագուհին, փառք աստծո, այն հասակումն է, որ այդ հնարավոր է:

— Ասում են՝ լորդ Բեկինգհեմը[43] Ֆրանսիայում է,— ասաց Արամիսը այնպիսի խորամանկ ժպիտով, որն այդ ասես թե անմեղ խոսքերին ինչ-որ երկիմաստ տվեց:

— Արամի՛ս, բարեկամս, այս անգամ դուք իրավացի չեք,— ընդհատեց նրան Պորտոսը,— և սրախոսելու ձեր սերը ձեզ ստիպում է որոշ սահմանից անցնել: Եթե պարն դը Տրնիլը լսեր ձեզ, դուք լավ օրի չէիք հասնի այդպիսի խոսքերի համար:

— Չլինի՞ ուզում եք դասեր տալ ինձ, Պորտոս,— հարցրեց Արամիսը, որի հեզ հայացքի մեջ անսպասելիորեն կայծակ շողաց:

— Բարեկամս,— պատասխանեց Պորտոսը,— եղեք հրացանակիր կամ աբբատ, բայց ո՛չ միաժամանակ և՛ մեկը, և՛ մյուսը: Հիշեցե՛ք, օրերս Աթոսը ձեզ ասաց, դուք ուտում եք բոլոր կերամաններից... Ո՛չ, ո՛չ, խնդրում եմ, չվիճենք: Ավելորդ է Ձեզ լավ հայտնի է այն պայմանը, որ կնքվել է ձեր, Աթոսի և իմ միջև: Չէ որ դուք լինում եք

տիկին դը Բուա-Տրասի մոտ, որ տիկին դը Շերյոզի[44] ազգականն է, և, ինչպես ասում են, վայելում էք այդ տիկնոջ մեծ ողորմածությունը: Օ՛, տեր իմ աստված, կարիք չկա, որ դուք խոստովանեք ձեր երջանկությունը, ոչ ոք ձեզնից խոստովանություն չի պահանջում. ո՞ւմ հայտնի չէ ձեր համեստությունը: Բայց քանի որ դուք, գրողը տանի ձեզ, լռելու ընդունակություն ունեք, մի մոռացեք այդ ընդունակությունը, երբ խոսքը վերաբերում է նորին մեծություն թագուհուն: Թող ով կուզի և ինչ կուզի՝ շատախոսի թագավորի ու կարդինալի մասին: Բայց թագուհին սրբություն է, և եթե խոսքը նրան է վերաբերում, ապա թող միմիայն լավ խոսք ասեն:

— Պորտոս, դուք ինքնասիրահարված եք ինչպես Նարկիսոսը[45], այս լավ իմացեք,— ասաց Արամիսը:— Ձեզ հո հայտնի է, որ ես խրատներ չեմ սիրում և պատրաստ եմ խրատ լսելու միմիայն Աթոսից: Իսկ ինչ վերաբերում է ձեզ, սիրելիս, ապա ձեր չափից դուրս շքեղ գոտին առանձին վստահություն չի ներշնչում դեպի ձեր ազնիվ զգացմունքները: Ես արբատ կդառնամ, եթե այդ հարկավոր համարեմ: Առայժմ ես հրացանակիր եմ և, որպես այդպիսին, ասում եմ այն ամենը, ինչ անցնում է մտքովս: Այժմ, ահա, իմ մտքովն անցավ ասել ձեզ, որ դուք ինձ ձանձրացրիք:

— Արամի՛ս:

— Պորտո՛ս:

— Պարոնա՛յք, պարոնա՛յք,— լսվեց բոլոր կողմերից:

— Պարոն դը Տրևիլն սպասում է պարոն դ'Արտանյանին,— ընդհատեց նրանց սպասավորը՝ լայն բանալով կաբինետի դուռը:

Քանի դեռ ասվում էին այս խոսքերը, կաբինետի դուռը բաց էր մնում, և բոլորը միանգամից լռեցին: Եվ այդ լռության մեջ երիտասարդ գասկոնացին ընդունարանի լայնությամբ անցավ ու մտավ հրացանակիրների կապիտանի կաբինետը, սրտանց ուրախանալով, որ ժամանակին խույս տվեց այս տարօրինակ վեճին մասնակցելուց:

III. Ունկնդրություն

Պարոն դը Տրևիլը շատ վատ տրամադրության մեջ էր, բայց և այնպես հարգանքով ընդունեց երիտասարդին, որը համարյա մինչև գետին գլուխ տվեց նրան և ժպիտը դեմքին լսեց նրա ողջույնը: Պատանու բեարնական առոգանությունը պարոն

դը Տրևիլին հիշեցրեց իր երիտասարդությունն ու հայրենի վայրերը, մի հիշողություն, որն ընդունակ է ամեն հասակում ուրախացնելու մարդուն: Բայց և իսկույն մոտեցավ ընդունարանի դռանը և ձեռքը վեր բարձրացնելով, որ կարծես նշան էր, թե դ'Արտանյանից թույլտվություն է խնդրում նախ վերջացնել մյուսների հետ, իսկ հետո արդեն զրույց սկսել նրա հետ, նա երեք անգամ ձայն տվեց՝ ամեն անգամ ձայնն ավելի բարձրացնելով այնպես, որ նրա այդ ձայնի մեջ հնչեց հրամայականից մինչև ցատումի հասնող հնչերանգի ամբողջ գամման:

— Աթո՛ւ, Պորտո՛ւ, Արամի՛ւ:

Երկու հրացանակիրներն էլ, որոնց հետ մենք արդեն ծանոթացել ենք և որոնց պատկանում էին վերջին երկու անունները, իսկույն անջատվեցին ընկերներից և մտան կաբինետ, որի դուռը, հենց որ շեմքն անցան, իսկույն փակվեց նրանց հետևից: Հրացանակիրների կեցվածքը, թեև նրանք այնքան էլ հանգիստ չէին, իր անբռնազբոսիկությամբ, որ լի էր միաժամանակ և՛ արժանապատվությամբ, և՛ հնազանդությամբ, հիացմունք առաջացրեց դ'Արտանյանի մեջ, որն այդ մարդկանց համարում էր կիսաստվածներ, իսկ նրանց պետին՝ ամպրոպաբեր Յուպիտեր, որը պատրաստ էր շանթ ու կայծակ տեղալու:

Երբ երկու հրացանակիրները ներս մտան, և դուռը նրանց ետևից փակվեց, երբ ընդունարանում կրկին ուժեղացավ խոսակցությունների աղմուկը, որոնց համար հավանորեն նոր սնունդ էր հանդիսացել հրացանակիրներին կանչելը, երբ, վերջապես, պ-րն Տրևիլը հոնքերը խոժոռած երեք թե չորս անգամ լուռ քայլեց կաբինետի երկարությամբ Պորտոսի ու Արամիսի կողքով, որոնք լուռ կանգնել էին ձգված, ասես ստուգատեսի, դը Տրևիլը հանկարծ կանգ առավ նրանց դիմաց և ոտից գլուխ մի ցատումնալից հայացք գցելով նրանց վրա ասաց.

— Հայտնի՞ է արդյոք ձեզ, պարոններ՛ր, թե ինչ ասաց ինձ թագավորը, այն էլ ոչ վաղուց քան երեկ երեկոյան: Հայտնի՞ է արդյոք ձեզ այդ:

— Ո՛չ, կարճ լռությունից հետո պատասխանեցին երկու հրացանակիրները:—
Ոչ, տեր, մեզ ոչինչ հայտնի չէ:

— Բայց մենք հույս ունենք, որ դուք մեզ պատիվ կանեք հաղորդելու այդ,—
ավելացրեց Արամիսը վերին աստիճանի հարգալից և գեղանիորեն գլուխ
խոնարհելով:

— Նա ինձ ասաց, որ այսուհետև իր համար հրացանա-կիրներ պիտի ընտրի
պարոն կարդինալի գվարդիականներից:

— Պարոն կարդինալի գվարդիականների՞ց: Ինչպե՞ս թե,— գոչեց Պորտոսը:

— Նա եկել է այն եզրակացության, որ իր թթված գինուն հարկավոր է լավ գինի
ավելացնել:

Երկու հրացանակիրներն էլ մինչև ականջները կարմրեցին: Դ՛Արտանյանը
չգիտեր ուր չքվի և պատրաստ էր գետնի տակն անցնելու:

— Այո՛, այո՛,— շարունակեց պ-րն դը Տրևիլը ավելի ու ավելի տաքանալով:—
Եվ նորին մեծությունը միանգամայն իրավացի է, որովհետև, պատվովս եմ երդվում,
պարոնայք հրացանակիրները ողորմելի դեր են խաղում արքունիքում: Երեկ
երեկոյան պարոն կարդինալը շախմատ խաղալիս ցավակցական տոնով, որը շատ
դիպավ իմ սրտին, սկսեց պատմել, թե այդ անիծյալ հրացանակիրները, այդ թոկից
փախածները— նա այս խոսքերն ասաց մի առանձին ծաղրով, որն ինձ ավելի քիչ դուր
եկավ — այդ կովարարները,— ավելացրեց նա՝ ինձ նայելով իր վայրի կատվի
աչքերով,— թույլատրված ժամից ավելի երկար են մնացել Ֆերուն փո-դոցի մի
պանդոկում: Շրջայցի ժամանակ նրա գվար-դիականները,— թվում էր, թե հիմա նա
կքրքջա իմ երեսին,— ստիպված են եղել ձերբակալել այդ գիշերային հանգիստը
խանգարողներին: Գրող ու ցա՛վ: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է նշանակում այդ:
Ձերբակա-լել հրացանակիրների՛ն: Դուք եղել եք այդ խմբում, այո՛, դո՛ւք, մի՛ ժխտեք,
ձեզ ճանաչել են, և կարդինալը տվեց ձեր անունները: Ե՛ս եմ մեղավոր, ես ի՛նքս եմ
մեղավոր. չե՞ որ ես եմ մարդիկ ընտրում ինձ համար: Ա՛յ, թեկուզ հենց դուք, Արամի՛ս,
ինչո՞ւ դուք ինձնից հրացանակրի կամգոլ խնդրեցիք, երբ ձեզ կապան ավելի է սագում:
Կամ դուք, Պորտոս, ձեզ այդպիսի փառավոր ոսկեկար լանջագոտին հարկավոր է
երևի նրանից ծոցտե սուսեր կախելո՞ւ համար: Իսկ Աթոսը... Ես Աթոսին չեմ տեսնում:
Որտե՞ղ է նա:

— Տեր իմ,— թախիծով պատասխանեց Արամիսը,— նա հիվանդ է, շատ է հիվանդ:

— Հիվանդ է: Շատ է հիվանդ, ասում եք: Իսկ ի՞նչ է նրա հիվանդությունը:

— Երկյուղ կա, թե ծաղիկ հիվանդություն է, տեր իմ,— ասաց Պորտոսը՝ ցանկանալով ինքն էլ մի խոսք ասած լինել:— Եվ դա շատ ցավալի բան է. այդ հիվանդությունը կարող է այլանդակել նրա դեմքը:

— Ծաղի՞կ: Ա՛յ թե հետաքրքիր բան եք պատմում դուք, Պորտոս: Նրա տարիքին ծաղի՞կ ընկնել: Ո՛չ, ո՛չ... Նա երևի վիրավորված է կամ՝ սպանված... Ա՛խ, եթե ես կարողանայի իմանալ... Գրո՛ղ ու ցա՛վ: Պարոնայք հրացանակիրներ, ես չեմ ամուսնացել, որ իմ մարդիկ թափառելիս են եղել կասկածելի տեղերում, կռիվներ են սարքել փողոցներում և սուսերը գործի են դրել մուշ անկյուններում: Ես վերջիվերջո չեմ ամուսնացել, որ իմ մարդիկ ծաղրի առարկա են եղել պարոն կարդինալի գվարդիականների համար: Այդ գվարդիականները հանգիստ տղաներ են, կարգին, ճարպիկ: Նրանց ձեռքակալելու հարկ չկա, բացի այդ, նրանք չեն էլ թույլ տա ձեռքակալել իրենց: Ես դրանում համոզված եմ: Նրանք կգերադասեին տեղն ու տեղը մեռնել, քան թեկուզ մեկ քայլ նահանջել: Փրկվել, փախչել, ծլկել դրան ընդունակ են միայն թագավորի հրա-ցանակիրները:

Պորտոսը և Արամիսը դողում էին ցասումից: Նրանք պատրաստ էին խեղդելու պ-րն դը Տրեխիին, եթե հոգու խորքում չզգային, որ իրենց նկատմամբ ջերմ սերն է միայն նրան ստիպում այդպես խոսել: Նրանք կրունկներով թխկացնում էին գորգին, արյունոտելու չափ կծում էին շրթունքները և ամբողջ ուժով սեղմում իրենց սուսերների դաստակները:

Ընդունարանում լսել էին, որ կանչում են Աթոսին, Պորտոսին ու Արամիսին և պ-րն դը Տրեխիի ձայնից հասկացել էին, որ նա խիստ զայրացած է: Հետաքրքրությամբ բորբոքված մարդկանց մի տասը գլուխ սեղմվեց դռանը, ցանկանալով ոչ մի բառ չփախցնել, և երեսները սփրթնում էին ցասումից, մինչդեռ դռան անցքին սեղմված ականջները բաց չէին թողնում ոչ մի ձայն, իսկ շրթունքները մեկը մյուսի հետևից կրկնում էին կապիտանի վիրավորական խոսքերը և դարձնում բոլոր ներկաների սեփականությունը: Մի ակնթարթում ամբողջ տունը, կաբինետի դռնից մինչև շքամուտքը, վերածվեց քլթքլթացող կաթսայի:

— Ա՛յ թե ինչ: Թագավորի հրացանակիրները կարդինալի գվարդիականներին թույլ են տալիս ձերբա-կալե՛լ իրենց,— շարունակում էր պ-րն դը Տրևիլը՝ հոգու խորքում ո՛չ պակաս զայրացած, քան իր զինվորները, շեշտելով բառերը և դաշույնի հարվածի պես խրելով իր ունկնդիրների կուրծքը:— Ա՛յ թե ինչ: Կարդինալի վեց գվարդիականները ձերբակալում են նորին մեծության վեց հրացանակիրների՛ն: Գրո՛ղ ու ցա՛վ: Ես մի որոշում եմ ընդունել. այստեղից ուղիղ գնում եմ Լուվր և հրաժարական եմ տալիս, հրաժարվում եմ թագավորի հրացանակիրների կապիտանի կոչումից և խնդրում՝ նշանակել ինձ կարդինալի գվար-դիականների լեյտենանտ: Իսկ եթե ինձ մերժեն,— գրո՛ղ ու ցա՛վ,— ես աբբատ կդառնամ:

Այս խոսքերն ասելիս պատի հետևից լավող քրթմն-ջոցը մրրիկ դարձավ: Ամենուրեք լավում էին նզովք ու հայհոյանքներ: Օդը լցվեց այնպիսի աղաղակներով, ինչպես՝ «Գրող ու ցավ», «Աստվածն ու իր բոլոր հրեշտակները», «Մահ ու տարտարոս»: Դ՛Արտանյանը հայացքով որոնում էր, թե չկա մի վարագույր, որի հետևում կարողանար թաքնվել, և սեղանի տակ խցկվելու անհաղթահարելի ցանկություն էր զգում:

— Ճիշտ որ, պարոն կապիտան,— գոչեց Պորտոսը՝ այլևս չկարողանալով զսպել իրեն:— Իսկապես, մենք վեց հոգի էինք վեցի դեմ, բայց մեզ վրա հարձակվեցին գաղտագողի, և նախքան մենք կկարողանայինք մեր սուսերները մերկացնել, մեզնից երկուսն ընկան անշնչացած, իսկ Աթոսը այնպես ծանր վիրավորվեց, որ շատ քիչ էր տարբերվում մեռածներից: Երկու անգամ նա փորձեց վեր կենալ և երկու անգամ էլ փովեց գետնին: Բայց և այնպես մենք անձնատուր չեղանք: Ո՛չ: Մեզ գոռով քարշ տվեցին: Ճանապարհին մենք թաքնվեցինք: Ինչ վերաբերում է Աթոսին, ապա նրան մեռած էին. համարում և թողեցին, որ հանգիստ պառկի կովի դաշտում, ենթադրելով, թե կարիք չկա զբաղվել նրանով: Ահա թե ինչպես եղավ բանը: Գրողը տանի, կապիտան: Ամեն կռիվ հո չի կարելի շահել: Պոմպեոս մեծը տանուլ տվեց Ֆարսալի ճակատամարտը, իսկ Ֆրանցիսկ I թագավորը, որը, ինչպես լսել եմ, մի բան արժեր, տանուլ տվեց Պավիի[46] ճակատամարտը:

— Ես էլ պատիվ ունեմ զեկուցելու,— ասաց Արամիսը,— որ հարձակվողներից մեկին ես սրախողխող արի իր սեփական սուսերով, որովհետև իմ սուսերը առաջին իսկ հարձակման ժամանակ կոտրվեց: Սպանեցի կամ վիրավորեցի, ինչպես ձեզ հաճելի է, տե՛ր:

— Ես այդ չգիտեի,— ասաց պ-րն դը Տրևիլը փոքր-ինչ մեղմացած:— Պարոն կարդինալը, ինչպես տեսնում եմ, որոշ բան չափազանցել է:

— Բայց աղաչում եմ ձեզ, տեր,— շարունակեց Արամիսը, տեսնելով, որ դը Տրևիլը մեղմացել է, և արդեն սիրտ անելով դիմել նրան խնդիրքով,— աղաչում եմ ձեզ, տեր, ոչ ոքի չասեք, որ Աթոսը վիրավորվել է: Նա խիստ կհուսահատվի, եթե այդ բանը հայտնի դառնա թագավորին: Բայց որովհետև վերքը շատ ծանր է,— ուսը ծակելով սուսերի ծայրը հասել է կրծքին,— կարելի է երկյուղ կրել...

Այդ բոլորին վարագույրի եզրը բարձրացավ, և շենքում երևաց մի հրացանակիր՝ ազնիվ ու գեղեցիկ դեմքով, բայց մեռածի պես գունատ:

— Աթո՛սը,— գոչեցին երկու հրացանակիրները:

— Աթո՛սը,— նրանց հետևից կրկնեց դը Տրևիլը:

— Դուք կանչել եք ինձ, պարոն կապիտան,— ասաց Աթոսը՝ դառնալով դը Տրևիլին: Նրա ձայնը հնչում էր թույլ, բայց բոլորովին հանգիստ:— Դուք կանչել եք ինձ, ինչպես հաղորդեցին ընկերներս, և ահա ես շտապեցի ներկայանալ: Սպասում եմ ձեր հրամանին, տեր իմ:

Այս ասելով, անբասիր հագնված և միշտ զգաստ հրացանակիրը հաստատուն քայլերով մտավ կաբինետ: Դը Տրևիլը այդպիսի արհուրդունից մինչև հոգու խորքը զգացված՝ նետվեց նրա մոտ:

— Ես հենց նոր ասում էի այս պարոններին,— ասաց դը Տրևիլը,— որ իմ հրացանակիրներին արգելում եմ առանց անհրաժեշտության կյանքը վտանգի ենթարկել: Քաջ մարդիկ թանկ են թագավորի համար, իսկ թագավորին հայտնի է, որ հրացանակիրներն ամենաքաջ մարզիկն են աշխարհում: Ձեր ձեռքը, Աթո՛ս:

Եվ չսպասելով, որ ներս մտնողը պատասխան տա բարեկամական զգացմունքների այդ արտահայտությանը՝ դը Տրևիլը բռնեց Աթոսի աջ ձեռքը, ամբողջ ուժով սեղմեց, չնկատելով, որ Աթոսը, չնայած իր կամքի ուժին՝ ցնցվեց ցավից և ավելի սփրթնեց, թեև այդ անհնարին էր թվում: Դուռը կիսաբաց էր մնացել: Բոլորին

զարմացրել էր Աթոսի երևալը, որի վերքի մասին, չնայած այդ ամբողջ գործը շրջապատող գաղտնիքին, մեծամասնությանն արդեն հայտնի էր: Կապիտանի վերջին բառերը ընդունվեցին գոհունակության աղմուկով, և երկու թե երեք գլուխ հիացմունքի պոռթկումով ներս խցկվեցին վարագույրներից: Դը Տրևիլը, պետք է ենթադրել, չէր զլանա խիստ նկատողությունով կշտամբել ընդունված կարգի այդ խախտման համար, բայց նա հան-կարծ զգաց, թե ինչպես Աթոսի ձեռքը ջղայնորեն ցնցվեց իր ձեռքի մեջ, և հայացքը դարձնելով հրացանակրի վրա՝ տեսավ, որ նա պատրաստ է ուշաթափ լինելու: Նույն ակնթարթում Աթոսը, որ բոլոր ուժերը ժողովել էր, որպեսզի ցավը հաղթահարի, և այնուամենայնիվ չէր կարողացել, շրխկոցով հատակին ընկավ մեռածի նման:

— Բժշկին կանչե՛ք,— գոռաց պ-րն դը Տրևիլը,— իմ բժշկին կամ թագավորի, ամենալավին: Բժշկին կան-չե՛ք, թե չէ, գրողը տանի, իմ քաջ Աթոսը կմեռնի:

Դը Տրևիլի աղաղակի վրա ընդունարանում հավաքվածները բոլորը լցվեցին կաբինետ, որի դուռը նա մոռացել էր փակել: Իրարանցում սկսվեց վիրավորի շուրջը: Սակայն բոլոր ջանքերը իզուր կլինեին, եթե բժիշկը հենց այդ պահին տանը չլիներ: Ամբոխը դեսուդեն հրելով նա մոտեցավ Աթոսին, որը դեռ պառկած էր ուշաթափ, և որովհետև աղմուկն ու իրարանցումը խանգարում էին նրան, ամենից առաջ խստորեն պահանջեց հիվանդին փոխադրել հարևան սենյակը: Պ-րն դը Տրևիլն շտապ բաց արեց դուռը և ինքն առաջ անցավ՝ ճանապարհ ցույց տալով Պորտոսին ու Արամիսին, որոնք ձեռքերի վրա դուրս տարան իրենց ընկերոջը: Նրանց հետևից գնաց բժիշկը, իսկ բժշկի հետևից դուռը փակվեց:

Եվ այդ ժամանակ պ-րն դը Տրևիլի կաբինետը, որ միշտ ներս մտնողներին սարսափ էր ազդում, մի ակնթարթում դարձավ ընդունարանի մի բաժանմունքը: Բոլորը շատախոսում էին, գոռգոռում, առանց ձայնն իջեցնելու անեծքներ էին տեղում և թունդ արտահայտություններից չվախենալով՝ գրողի ծոցն էին ուղարկում կարդինալին էլ, նրա գվարդիականներին էլ:

Քիչ անց՝ Պորտոսը և Արամիսը վերադարձան: Վիրավորի մոտ մնացին միայն դը Տրևիլը և բժիշկը:

Վերջապես վերադարձավ նաև պ-րն դը Տրևիլը: Վիրավորը, նրա ասելով, ուշքի էր եկել: Բժիշկը գտնում էր, որ հիվանդի վիճակը չպետք է երկյուղ ներշնչի իր բարեկամներին, որովհետև թուլությունը միայն շատ արյուն կորցնելու հետևանք է:

Ապա պ-րն դը Տրևիլը ձեռքով նշան արեց, և բոլորը հեռացան, բացառությամբ դ'Արտանյանի, որը գասկոնացուն հատուկ համառությամբ մնացել էր իր տեղում՝ չմոռանալով, որ իր համար ունկնդրություն է նշանակված:

Երբ բոլորը դուրս եկան և դուռը ծածկվեց, դը Տրևիլը շրջվեց և կանգնեց երիտասարդին դեմ առ դեմ: Տեղի ունեցած դեպքերն ընդհատել էին նրա մտքի թելը: Նա հարց տվեց, թե ի՞նչ է ուզում իրենից այդ համառ այցելուն: Դ'Արտանյանը իր անունը տվեց, որով միանգամից դը Տրևիլի հիշողության մեջ վերականգնեց և՛ անցյալը, և՛ ներկան:

— Ներեցեք, սիրելի հայրենակից,— ասաց նա ժպտալով:— Ես բոլորովին մոռացել էի ձեզ: Ի՞նչ էք ուզում: Կապիտանը՝ նույնն է, թե մի ընտանիքի հայր, միայն թե ավելի շատ մարդկանց համար է պատասխանատու, քան սովորական հայրը: Զինվորները մեծահասակ երեխաներ են, բայց որովհետև ես պահանջում եմ, որ թագավորի և մանավանդ պարոն կարդինալի կարգադրությունները կատարվեն...

Դ'Արտանյանը չկարողացավ ժպիտը թաքցնել: Այդ ժպիտը պ-րն Տրևիլին ցույց տվեց, որ իր առջև ամենևին էլ հիմարի մեկը չի կանգնած, և անմիջապես գործի անցավ:

— Ես շատ էի սիրում ձեր հորը,— ասաց նա:— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել նրա որդուն: Շո՛ւտ ասացեք: Ինձ ժամանակ քիչ է մնացել:

— Տեր իմ,— դ'Արտանյանը,— Տարբից Փարիզ գնալու ժամանակ ես հույս ունեի, ի հիշատակ այն բարեկամության, որը դուք չեք մոռացել, ձեզնից հրացանակրի թիկնոց խնդրել: Բայց այն ամենից հետո, ինչ տեսա այստեղ այս երկու ժամվա ընթացքում, հասկացա, որ դա այնքան մեծ ողորմածություն կլիներ, որին, ես վախենում եմ, թե արժանի չեմ լինի:

— Այդ իսկապես ողորմածություն է, երիտասարդ,— պատասխանեց դը Տրևիլը:— Բայց ձեզ համար դա գուցե և այնքան անմատչելի չէ, ինչպես կարծում էք,

կամ ձևացնում էք, թե կարծում եք: Ի դեպ, նորին մեծության կարգադրություններից մեկը նախատեսում է նման դեպք, և ես, դժբախտաբար, ստիպված եմ հաղորդել ձեզ, որ ոչ ոքի հրացանակիր չեն ընդունում, քանի դեռ նա ստուգված չէ մի քանի ճակատամարտերում, որևէ փայլուն սխրագործություն չի կատարել կամ երկու տարի չի ծառայել մի ուրիշ ավելի համեստ գն-դում, քան մերն է:

Դ'Արտանյանը լուռ գլուխ տվեց: Այն պահից, երբ իմացավ, թե որքան դժվար է հասնել ցանկացածին, նա ավելի շատ էր փափագում հրացանակրի համազգեստ հագնել:

— Սակայն...— շարունակեց դը Տրևիլը իր հայրենակցի վրա հառելով այնպիսի խորաթափանց հայացք, ասես ուզում էր թափանցել նրա սրտի խորքերը,— սակայն դրդված այն հարգանքից, որ տածում եմ դեպի ձեր հայրը, իմ հին բարեկամը, ինչպես արդեն ձեզ ասացի, ես, երիտասարդ, այնուամենայնիվ ուզում եմ մի որևէ բան անել ձեզ համար: Մեր բեարնյան պատանիները հազվադեպ են հարուստ լինում, և ես չեմ կարծում, թե դրությունը խիստ փոխված լինի այն ժամանակներից ի վեր, երբ ես հեռացել եմ հայրենի վայրերից: Կարծում եմ, որ ձեզ հետ բերած դրամը դժվար թե բավականացնի ձեր ապրուստին:

Դ'Արտանյանը հպարտորեն ուղղվեց, իր այդ տեսքով հասկացնելով, որ ինքը ոչ ոքից ողորմություն չի խնդրում:

— Լավ, լավ, երիտասարդ,— շարունակեց դը Տրևիլը: — Այդ ձևերն ինձ ծանոթ են: Ես Փարիզ եկա գրպանումս ունենալով չորս էքյու և մենամարտի կիրավիրեի ամեն մեկին, ով համարձակվեր ասել, թե ես ի վիճակի չեմ Լուվրը^[47] գնելու:

Դ'Արտանյանն ավելի բարձրացրեց գլուխը: Ձին վաճառած լինելու շնորհիվ նա իր կարիերան սկսում էր չորս էքյուով ավելի, քան սկզբնական շրջանում ունեցել էր դը Տրևիլը:

— Այդպես ուրեմն,— շարունակեց կապիտանը,— ձեզ հարկավոր է պահել ձեր բերածը, որքան էլ մեծ գումար լինի այն: Բայց ձեզ հարկավոր է նաև կատարելագործվել զենքին տիրապետելու արվեստին, դա անհրաժեշտ է ազնվականին: Ես հենց այսօր նամակ կգրեմ Թագավորական ակադեմիայի պետին, և վաղվանից նա կընդունի ձեզ առանց որևէ վարձ պահանջելու: Չհրաժարվեք դրանից:

Մեր ջահել ազնվականները, նույնիսկ ամենանշանավորներն ու հարուստները, հաճախ ապարդյուն ջանքեր են թափում այնտեղ ընդունվելու համար: Դուք կսովորեք ձիավարություն, սուսերամարտ, պարեր: Օգտակար ծանոթություններ կհաստատեք, իսկ երբեմն-երբեմն կգաք ինձ մոտ՝ զեկուցելու, թե ինչպես են ընթանում ձեր գործերը և ինչով կարող եմ օգնել ձեզ:

Որքան էլ խորթ էին դ'Արտանյանի համար պալատական խորամանկությունները, այնուամենայնիվ նա զգաց այն սառնությունը, որ գալիս էր այդ ընդունելությունից:

— Ավա՛ դ,— բացականչեց նա:— Ես տեսնում եմ, թե այժմ որքան է ինձ անհրաժեշտ այն հանձնարարական նամակը, որ տվել էր հայրս:

— Իսկապես,— պատասխանեց դը Տրևիլը,— ես զարմանում եմ, որ դուք այդքան երկար ճանապարհ եք եկել առանց այն միակ կախարդական բանալու, որն այնքան անհրաժեշտ է բեարնացուն:

— Նամակ ունեի ես, տեր իմ, և, փառք Աստծու, գրված էր՝ ինչպես հարկն է,— բացականչեց դ'Արտանյանը:— Բայց այդ նամակը նենգաբար գողացան ինձնից:

Եվ նա պատմեց այն ամենը, ինչ տեղի էր ունեցել Մենգում, ամենայն մանրամասնությամբ նկարագրեց անձանոթ ազնվականին, և նրա խոսքի մեջ զգացվում էր ջերմություն ու անկեղծություն, որոնք հիացնում էին դը Տրևիլին:

— Տարօրինակ պատմություն,— մտախոհ ասաց հրացա-նակիրների կապիտանը:— Դուք, ուրեմն, բարձրաձայն տվեցի՞ք իմ անունը:

— Այո, իհարկե: Ես այդքան անզգույշ եղա: Բայց ի՞նչ կասեք. այնպիսի անուն, ինչպիսին ձերն է, ճա-նապարհին պետք է ինձ վահան ծառայեր: Ինքներդ դատեցեք, թե որքան հաճախ եմ ես պաշտպանվել նրանով:

Շողոքորթությունն այն օրերին ընդունված բան էր, և դը Տրևիլն էլ զգայուն էր գովաբանության նկատմամբ, ինչպես ամեն մի թագավոր կամ կարդինալ: Ուստի նա չկարողացավ զսպել գոհունակություն արտահայտող ժպիտը, սակայն այդ ժպիտը շուտով մարեց:

— Ասացեք ինձ,— սկսեց նա՝ ինքը վերադառնալով Մենգում տեղի ունեցածին,— ասացեք, արդյոք այդ ազնվական մի թեթև սպի չունե՞ր քունքի վրա:

— Աչք, ինչպես գնդակի հետք:

— Դա պատկառելի տեսքով մի տղամարդ էր:

— Այո:

— Բարձրահասա՞կ:

— Այո:

— Գունա՞տ, մուգ մազերո՞վ:

— Այո, այո: Ճիշտ այդպես: Որտեղի՞ց էք ճանաչում դուք այդ մարդուն, տեր իմ: Ա՛խ, եթե ես երբևիցե գտնեմ նրան... Բայց երդվում եմ ձեզ, որ կգտնեմ նրան, թեկուզ դժոխքում...

— Նա մի կնո՞ջ էր սպասում,— ընդհատեց նրան դը Տրևիլը:

— Նա գնաց, համենայնդեպս, միայն մեկ րոպե խոսելով այն կնոջ հետ, որին սպասում էր:

— Դուք չգիտե՞ք ինչի մասին էին խոսում նրանք:

— Նա մի արկղիկ տվեց այդ կնոջը, ասաց, որ այդ արկղում նա կգտնի իր կարգադրությունները, և առաջարկեց արկղիկը բաց անել միայն Լոնդոնում:

— Այդ կինն անգլուհի՞ էր:

— Այդ մարդը նրան միլեդի էր կոչում:

— Նա է,— շնչաց դը Տրևիլը:— Այդ նա է: Իսկ ես կար-ծում էի, թե նա դեռ Բրյուսելումն է:

— Օ՛, տեր իմ,— գոչեց դ'Արտանյանը,— ասացեք ինձ, ո՞վ է նա և որտեղացի, և ես այլևս ոչինչ չեմ խնդրի ձեզնից, նույնիսկ հրացանակիր նշանակել: Որովհետև ամենից առաջ ես պետք է հաշիվ մաքրեմ նրա հետ:

— Տերը փրկի ձեզ դրանից, երիտասարդ,— գոչեց դը Տրևիլը:— Եթե դուք փողոցում հանդիպեք նրան, շտապեցեք անցնել մյուս կողմը: Չգարկվեք այդ ժայռին, դուք կփշրվեք ինչպես ապակի:

— Բայց և այնպես,— ասաց դ'Արտանյանը,— եթե միայն ես նրան հանդիպեմ...

— Առայժմ, համենայնդեպս, խորհուրդ չեմ տալիս որոնել նրան,— ասաց դը Տրևիլը:

Հանկարծ դը Տրևիլը մի տարօրինակ կասկածով համակված լռեց:

Այն կրքոտ ատելությունը, որ պատանին արտահայտում էր որպես թե հոր նամակը իրենից հափշտակած մարդու նկատմամբ... Ո՞վ գիտե, արդյոք այդ ատելության տակ որևէ նենգ միտք չի՞ թաքնված: Արդյոք նորին սրբազնությունը չի ուղարկել այս երիտասարդին: Արդյոք սա իրեն ծուղակի մեջ գցելու նպատակով չի եկել: Այո մարդը, որն իրեն անվանում է դ'Արտանյան, արդյոք լրտես չէ՞ք որին ուզում են իր տունը մտցնել, որպեսզի իր վստահությունը նվաճի, իսկ հետո կործանի իրեն, ինչպես պատահել է ուրիշների հետ: Դը Տրևիլն առաջվանից ավելի ուշադիր նայեց դ'Արտանյանին: Խելք, խորամանկություն և առերևույթ համեստություն արտահայտող այդ աշխույժ դեմքը այնքան էլ չհանգստացրեց նրան:

«Ճիշտ է, ես գիտեմ, որ սա գասկոնացի է,— մտածեց դը Տրևիլը:— Սակայն սա իր ընդունակությունները նույնպիսի հաջողությամբ կարող է գործադրել կարդինալի օգտին, ինչպես և իմ օգտին: Փորձենք սրան...»:

— Բարեկամս,— ասաց նա դանդաղորեն,— իմ բարեկամի որդու առաջ— որովհետև ես ճշմարիտ եմ ընդունում այն ամբողջ պատմությունը, որ վերաբերում է ձեր նամակին— իմ բարեկամի որդու առաջ ես ուզում եմ քավել այն սատնությունը, որ

դուք իսկույն զգացիք իմ ընդունելության մեջ, և ձեր առջև բաց կանեմ մեր քաղաքականության գաղտնիքը: Թագավորը և կարդինալը ամենալավ բարեկամներ են: Առերևույթ բախումները նրանց միջև միայն հիմարներին խաբելու համար են: Ես չեմ թողնի, որ իմ հայրենակիցը, նման մի գեղեցիկ, հիանալի երիտասարդ, որ ստեղծված է հաջողության համար, զոհ դառնա այդ խաղերին և անախորժ դրության մեջ ընկնի, ինչպես շատերը, որոնք դրանով իրենց գլուխն են կոտրել: Հիշեցեք, որ ես նվիրված եմ այդ երկու ամենագոր մարդկանց, և որ իմ յուրաքանչյուր քայլը նպատակ ունի ծառայել թագավորին և պարոն կարդինալին, ամենաականավոր մտքերից մեկին, որպիսիք երբևէ ստեղծել է Ֆրանսիան: Այնուհետև, երիտասարդ, նկատի ունեցեք այս, և եթե ընտանեկան կամ բարեկամական կապերի պատճառով և կամ կրքերի ձայնին ենթարկվելով դուք թշնամական զգացմունքներ եք տածում կարդինալի նկատմամբ, նման այն զգացմունքներին, որոնք երբեմն երևան են գալիս ազնվականներից ոմանց մեջ, ապա ուրեմն եկեք հրաժեշտ տանք իրար: Ես օգնության կգամ ձեզ բոլոր հանգամանքներում, բայց չեմ ցանկանա, որ մերձենաք ինձ: Հուսով եմ, համենայնդեպս, որ իմ այս անկեղծությունը ձեզ իմ բարեկամը կդարձնի, որովհետև դուք միակ երիտասարդն եք, որի հետ ես երբևիցե խոսել եմ այսպես:

«Եթե այս աղվեսին կարդինալն է ուղարկել ինձ մոտ,— ինքն իրեն մտածում էր դը Տրևիլը,— ապա իմանալով, թե ինչպես եմ ասում ես իրեն, հավանորեն իր լրտեսին ներշնչած կլինի, որ իմ վստահությունը նվաճելու լավագույնը միջոցը կլինի այն, որ ամեն տեսակ բաներ դուրս տա իր մասին: Եվ, իհարկե, չնայած իմ հավաստիացումներին, այս խորամանկը հիմա կսկսի ինձ համոզել, թե զզվանք է տածում դեպի նորին սրբազնությունը»:

Սակայն ամեն ինչ տեղի ունեցավ բոլորովին այլ կերպ, քան սպասում էր դը Տրևիլը: Դ'Արտանյանը պատասխանեց միանգամայն անկեղծորեն:

— Տեր իմ,— ասաց նա պարզորեն:— Ես Փարիզ եմ եկել հենց այդպիսի մտադրություններով: Հայրս ինձ խորհուրդ է տվել ոչ ոքի չենթարկվել, բացի թագավորից, պարոն կարդինալից և ձեզնից, որոնց նա համարում է Ֆրանսիայի առաջին մարդիկ:

Դ'Արտանյանը, ինչպես կարելի է նկատել, դը Տրևիլի անունը միացրեց առաջին երկու անուններին: Սակայն այդ ավելացումը, նրա կարծիքով, չէր կարող գործը փչացնել:

— Դրա համար էլ,— շարունակեց նա,— ես խորապես հարգում եմ պարոն կարդինալին և խոնարհվում եմ նրա գործողությունների առաջ... Ավելի լավ ինձ համար, եթե դուք, ինչպես հաճեցիք ասել, միանգամայն անկեղծ եք ինձ հետ: Նշանակում է՝ դուք ինձ պատիվ արիք՝ նկատելով մեր հայացքների նմանությունը: Բայց եթե դուք որոշ անվստահությամբ եք վերաբերվել ինձ,— իսկ այդ միանգամայն բնական կլինեք,— այդ դեպքում, հասկանալի է, ես այս խոսքերով ինձ կործանում եմ ձեր աչքում: Բայց միևնույն է, դուք կգնահատեք իմ անկեղծությունը, իսկ ձեր բարի կարծիքն իմ մասին՝ աշխարհում ամենաթանկ բանն է ինձ համար:

Դը Տրևիլը զարմացած էր: Այդ խորաթափանցությունը, այդ անկեղծությունը հիացմունք էին առաջացնում, բայց և այնպես լիովին չէին փարատում կասկածները: Որքան ավելի էր արտահայտվում այդ երիտասարդի գերազանցությունը ուրիշ երիտասարդների համեմատությամբ, այնքան ավելի էին մեծանում նրանից զգուշանալու հիմքերը, եթե դը Տրևիլը սխալվում էր նրա նկատմամբ:

— Դուք ազնիվ մարդ եք,— ասաց նա սեղմելով դ'Ար-տանյանի ձեռքը,— սակայն այժմ ես կարող եմ ձեզ համար անել միայն այն, ինչ առաջարկեցի: Իմ տան դռները միշտ բաց կլինեն ձեր առաջ: Հետագայում հնարավորություն ունենալով գալու ինձ մոտ ուզած ժամանակ, հետևապես և որսալու բարեպատեհ առիթը, դուք հավանորեն կհասնեք նրան, ինչին ձգտում եք:

— Այլ խոսքով ասած, տեր իմ,— խոսեց դ'Արտանյանը,— դուք սպասում եք, որ ես ցույց տամ, թե արժանի եմ այդ պատվին: Դե՛, ի՛նչ կա որ,— ավելացրեց նա գասկոնացուն հատուկ անբռնազբոսիկությամբ,— դուք երկար սպասելու հարկ չեք ունենա:

Եվ նա գլուխ տալով պատրաստվեց հեռանալ, ասես մնացածն արդեն միայն իրեն էր վերաբերում:

— Բայց սպասեցեք,— ասաց դը Տրևիլը կանգնեցնելով նրան: — Ես ձեզ խոստացա նամակ տալ ակադեմիայի պետի անունով: Թե՞ դուք այնքան հպարտ եք, երիտասարդ, որ չեք կամենա այդպիսի նամակ ընդունել ինձնից:

— Ոչ, տեր իմ,— պատասխանեց դ'Արտանյանը:— Եվ ես խոստանում եմ ձեզ, որ այդ նամակին նույն բախտը չի վիճակվի, ինչ իմ հոր նամակին: Ես այն կպահեմ այնպիսի խնամքով, որ, երդվում եմ, կհասնի տիրոջը, և վա՛յ նրան, ով կփորձի հափշտակել այն ինձնից:

Այս պարծենկոտությունը դը Տրևիլի շուրթերին ժպիտ առաջացրեց: Երիտասարդին թողնելով լուսամուտախորշում, որտեղ նրանք զրուցում էին, նա նստեց սեղանի մոտ, որպեսզի գրի խոստացած նամակը: Դ'Արտանյանն այդ ժամանակ ոչ մի զբաղմունք չունենալով ապակուն ինչոր մարշ էր թկթկացնում ու նայում հրացանակիրներին, որոնք իրար հետևից հեռանում էին տնից, և հայացքով ուղեկցում էր նրանց մինչև փողոցի դարպասը:

Պ-րն դը Տրևիլը, ավարտելով նամակը, կնքեց այն, վեր կացավ և ուղղվեց դեպի երիտասարդը, որպեսզի ծրարը նրան տա: Բայց հենց նույն վայրկյանին դը Տրևիլը զարմանքով տեսավ, թե ինչպես պատանին հանկարծ ցնցվեց և զայրույթից բռնկվելով՝ կաբինետից դուրս նետվեց՝ ցատումնալից աղաղակելով.

— Ո՛չ, գրողը տանի, այս անգամ դու իմ ձեռքից դուրս չե՛ս պրծնի:

— Ո՞վ, ո՞վ,— հարցրեց դը Տրևիլը:

— Նա, նա՛, հափշտակիչը,— վազելիս պատասխանեց դ'Արտանյանը:— Ա՛խ, սրիկա՛,— և այս ասելով նա չքացավ դռան ետևում:

— Խելագա՛ր է,— մրթմրթաց դը Տրևիլը:— Եթե միայն...— դանդաղորեն ավելացրեց նա,— դա խաղ չէր, որպեսզի փախչի, քանի որ հասկացավ, որ խորամանկությունը չհաջողվեց:

IV. Աթոսի ուսը, Պորտոսի լանջագոտին և Արամիսի թաշկինակը

Դ'Արտանյանը կատաղածի պես մի երեք ոստյունով սլացավ ընդունարանի միջով և դուրս նետվեց սանդուղքի հարթակը, որով ուզում էր ամբողջ թափով ցած վազել, բայց հանկարծ դիպավ մի հրացանակրի, որը պ-րն դը Տրևիլի տնից դուրս էր գալիս կողքի դռով: Հրացանակիրը ճչաց կամ ավելի ճիշտ՝ ոռնաց ցավից:

— Ներեցեք ինձ,— ասաց դ'Արտանյանը՝ մտադիր լինելով շարունակել իր ճամփան — ներեցեք ինձ, բայց ես շտապում եմ:

Դեռ նա չէր իջել հաջորդ հարթակը, երբ մի երկաթե ձեռք բռնեց նրա լանջագոտին և տեղն ու տեղը կանգնեցրեց:

— Դուք շտապո՞ւմ եք,— գոչեց հրացանակիրը մեռյալի պես սփրթնած,— և այդ պատրվակով մարդկանց վրա եք ընկնում, ասում եք «ներեցեք» և դրանով էլ հարցն սպառված եք համարում: Ամենին էլ այդպես չէ, երիտասարդ: Չլինի՞ կարծում եք, որ եթե այսօր պարոն դը Տրևիլը խիստ խոսեց մեզ հետ, ապա դա ձեզ իրավունք է տալիս բանի տեղ չդնել մեզ: Մխավում եք, երիտասարդ: Դուք պարոն Տրևիլը չե՞ք:

— Հավատացեք ինձ,— պատասխանեց դ'Արտանյանը ճանաչելով Աթոսին, որը վիրակապվելուց հետո վերադառնում էր տուն,— հավատացեք ինձ, դա ես պատահաբար արի, և պատահաբար անելով ասացի. «Ներեցեք ինձ»: Իմ կարծիքով այդ բավական է: Եվ հիմա ես կրկնում եմ, ու թերևս դա ավելորդ էլ է, որ ես շտապում եմ, շատ եմ շտապում: Ուստի խնդրում եմ ձեզ բաց թողեք ինձ, մի՛ ուշացրեք:

— Պարո՞ն,— ասաց Աթոսը՝ բաց թողնելով դ'Արտանյանի լանջագոտին,— դուք անտաշ մարդ եք: Իսկույն երևում է, որ հեռվից եք եկել:

Դ'Արտանյանն արդեն մի երեք աստիճան ցած էր իջել, բայց Աթոսի խոսքերը նրան ստիպեցին կանգ առնել:

— Գրողը տանի, պարոն,— գոչեց նա:— Թեպետև ես հեռվից եմ եկել, բայց դուք չէ, որ ինձ կարգին վարվեցողություն պիտի սովորեցնեք, նախազգուշացնում եմ ձեզ:

— Ո՛վ գիտի,— ասաց Աթոսը:

— Ա՛խ, եթե ես այսպես շտապելիս չլինեի,— գոչեց դ'Արտանյանը,— և եթե ես վազելիս չլինեի մի մարդու հետևից...

— Դե ուրեմն, պարոն Աճապարող, դուք ինձ կգտնեք առանց իմ հետևից վազելու, լսու՞մ եք:

— Բայց որտե՞ղ, չէի՞ք բարեհաճի ասել:

— Դե՜ռ վանքի մոտ:

— Ո՞ր ժամին:

— Տասներկուսին մոտ:

— Տասներկուսին մո՞տ: Լավ, կլինեմ այնտեղ:

— Աշխատեցե՞ք ինձ սպասել չտալ: Տասներկուսից քառորդ անց ես հենց ճամփին կթոցնեմ ձեր ականջները:

— Լավ,— գոչեց դ’Արտանյանը:— Ես կներկայանամ տասներկուսին տասս պակաս:

Եվ դիվահարի պես սկսեց վազել, դեռևս հուսալով, թե կհասնի այն անձանոթի հետևից, որն առանձնապես շատ հեռու գնացած լինել չէր կարող, որովհետև քայ-լում էր դանդաղ:

Բայց դարպասի մոտ նա տեսավ Պորտոսին, որը զրուցում էր ժամապահի հետ: Երկու զրուցակիցների միջև մնում էր մի ազատ տարածություն, որով կարող էր անցնել մեկ մարդ: Դ’Արտանյանին թվաց, թե այդ տարածությունը բավական է, և առաջ նետվեց՝ հուսալով անցնել նրանց միջով: Սակայն դ’Արտանյանը հաշվի չէր առել քամին: Այն վայրկյանին, երբ նա պատրաստվում էր զրուցակիցների արանքով ցատկելու, քամին փքեց Պորտոսի երկար թիկնոցը, և դ’Արտանյանը խճճվեց նրա ծալքերի մեջ: Պորտոսը, ըստ երևույթին, ծանրակշիռ պատճառներ ուներ չբաժանվելու իր հագուստի այդ կարևոր մասից, և փոխանակ ձեռքից բաց թողնելու փեշը, որ բռնել էր, նա քաշեց այն իր կողմը, այնպես, որ դ’Արտանյանը համառ Պորտոսի հանցանքով մի ինչ-որ պտուտաշարժում կա-տարելով բոլորովին փաթաթվեց թիկնոցի թավիշի մեջ:

Լսելով այն նզովքները, որ տեղում էր հրացանակիրը, դ’Արտանյանը կույրի պես շոշափում էր ծալքերը՝ ճգնելով դուրս պրծնել թիկնոցի տակից: Նա ամենից ավելի երկյուղ էր կրում, թե որևէ կերպ կարող է վնաս պատճառել շքեղ լանջագոտուն,

որի մասին մենք արդեն պատմել ենք: Սակայն վախժիտելով աչքերը բանալով՝ նա տեսավ, որ իր քիթը դեմ է առել Պորտոսի մեջքին, ուղիղ երկու թիակների միջև, այլ խոսքով ասած՝ հենց լանջագոտուն:

Ավա՛ղ, ինչպես շատ բան այս աշխարհում, որ միայն դրսից է փայլում, այնպես էլ Պորտոսի ոսկեկար լանջագոտին փայլում էր միայն առջևի կողմից, իսկ հետևի կողմից պատրաստված էր հասարակ գոմեշի կաշվից: Պորտոսը, որպես իսկական պարծենկոտ, հնարավորություն չունենալով ամբողջովին ոսկեկար լանջագոտի ձեռք բերել, ձեռք էր բերել մի լանջագոտի, որը գոնե առջևի կողմից ոսկեկար էր: Այս տեղից էլ նրա հնարավոր մրսածությունը և թիկնոց կրելու ան-հրաժեշտությունը:

— Սատանա՛, — գոռում էր Պորտոսը՝ անասելի ջանքեր գործադրելով, որպեսզի ազատվի դ'Արտանյանից, որը պրպտում էր նրա թիկունքում:— Խելագարվե՛լ էք դուք, ի՞նչ էք մարդկանց վրա ընկնում:

— Ներեցեք, — խոսեց դ'Արտանյանը՝ դուրս նայելով հսկայի արմունկի տակից:— Բայց ես շատ եմ շտապում: Ես շտապում եմ մի մարդու հետևից հասնելու...

— Դուք, ի՛նչ է, ձեր աչքերը տա՞նք մոռանում, երբ վազում եք մեկի հետևից, — գոռում էր Պորտոսը:

— Ո՛չ, — նեղացած ասաց դ'Արտանյանը:— Ոչ, և իմ աչքերը ինձ հնարավորություն են տալիս նույնիսկ տեսնելու այն, ինչ ուրիշները չեն տեսնում:

Հասկացա՞վ արդյոք Պորտոսը, թե՞ չհասկացավ, սակայն նա լիակատար ազատություն տվեց իր ցասումին:

— Պարտ՛ն, — մռնչաց նա:— Նախագգուշացնում եմ ձեզ. եթե դուք վիրավորեք հրացանակիրներին, ձեր բանը քոթակով կվերջանա:

— Քոթակով, — հարցրեց դ'Արտանյանը:— Խիստ չի՞ ասված:

— Ասել է մի մարդ, որ սովոր է նայելու իր թշնամիների երեսին:

— Բա՛ն ասացիք: Ինձ շատ լավ հայտնի է, որ դուք ձեր թիկունքը ոչ ոքի ցույց չեք տա:

Եվ պատանին իր սրամիտ կատակից հիացած՝ առաջ շարժվեց՝ քրքրջալով ամբողջ կոկորդով:

Պորտոսը կատաղի ցասումով մի շարժում արեց, մտադիր լինելով հարձակվել իրեն վիրավորողի վրա:

— Հետո, հետո,— ձայն տվեց դ'Արտանյանը:— Երբ ձեզ վրա թիկնոց չի լինի:

— Նշանակում է՝ ժամը մեկին, Լյուքսեմբուրգյան պալատի ետևում:

— Հրաշալի, ժամը մեկին,— պատասխանեց դ'Արտանյանը շրջվելով փողոցի անկյունը: Սակայն ոչ այն փողոցով, որով նա վազեց, ոչ էլ այն փողոցով, որն այժմ նրա հայացքի առաջ էր, ոչ մի շունչ չէր երևում: Որքան էլ դանդաղ էր քայլում անձանոթը, այնուամենայնիվ նա կարողացել էր անհայտանալ կամ մտնել տներից մեկը: Դ'Արտանյանը բոլոր հանդիպողներին հարցուփորձ էր անում նրա մասին, իջավ գետանցը, վերադարձավ Սենի և Ալ Խաչի փողոցներով: Ոչինչ չկար, ուղղակի ոչինչ: Այնուամենայնիվ այս վազվզոցը նրան օգուտ տվեց, որքան նրա ճակատը քրտնում էր, այնքան սիրտը պաղում էր:

Նա խորասուզվեց անցյալի իրադարձությունների մեջ: Դրանք շատ էին և բոլորն էլ անբարենպաստ: Ընդամենը առավոտվա ժամը տասնմեկն էր, բայց այդ առավոտ արդեն նա զրկվել էր դը Տրնիլի շնորհից, քանի որ դը Տրնիլը չէր կարող սանձարձակություն չհամարել դ'Արտանյանի անակնկալ հեռացումը: Բացի այդ՝ նա իր վզին էր փաթաթել երկու մենամարտ այնպիսի մարդկանց հետ, որոնցից յուրաքանչյուրը կարող էր երեք դ'Արտանյան սպանել, մի խոսքով՝ երկու հրացանակիրների հետ, այսինքն՝ այնպիսի էակների, որոնց նկատմամբ ինքն այնպիսի երկյուղածություն էր զգում, որ սրտի խորքում նրանց բոլոր մարդկանցից բարձր էր դասում:

Դրությունն անուրախ էր: Համոզված լինելով, որ Աթոսն իրեն կսպանի, նա, միանգամայն հասկանալի է, այնքան էլ չէր անհանգստանում Պորտոսի հետ մենամարտելու մասին: Այնուամենայնիվ, որովհետև հույսը ամենավերջին բանն է, որ

մարում է մարդու հոգում, նա սկսեց հուսալ, որ թեկուզ և սոսկալի վերքեր կստանա, բայց և այնպես ողջ կմնա, և այս դեպքում, հուսալով, որ ապագայում էլ ապրելու է, արդեն նախատում էր իրեն իր սխալների համար:

«Ի՛նչ անխելք, անտաշն եմ ես: Այն խեղճ ու քաջ Աթոսը հենց մեջքից էր վիրավորված, իսկ ես ոչխարի պես հենց մեջքին խփեցի գլխով: Միայն զարմանալ կարելի է, որ հենց տեղն ու տեղը չսպանեց ինձ. նա իրավունք ուներ այդպես անելու: Երևի զարհուրելի ցավ պատճառեցի ես նրան: Ինչ վերաբերում է Պորտոսին, օ՛, ինչ վերաբերում է Պորտոսին, աստված վկա, դա մի զվարճալի բան է...»:

Եվ երիտասարդը, չնայած իր մռայլ մտքերին, չկարողացավ ծիծաղը զսպել, բայց միաժամանակ իր շուրջն էր նայում, թե արդյոք որևէ մեկին վիրավորական չի՞ թվա միայնակ մարդու այդ պատճառագուրկ ծիծաղը:

«Ինչ վերաբերում է Պորտոսին, ապա զվարճալի բան է: Բայց և այնպես ես հիմար եմ: Մի՞ թե կարելի է այդպես մարդկանց վրա ընկնել,— մի մտածե՛ք,— և նայել նրանց թիկնոցի տակը՝ տեսնելու այն, ինչ որ չկա այնտեղ: Նա կներեր ինձ, իհարկե, կներեր, եթե ես նրա օձիքից չկաշեի այն անհիծյալ լանջագոտու պատմությունով: Ճիշտ է, ես միայն ակնարկ արի, բայց ինչպիսի՛ ճարպիկ ակնարկ: Ա՛խ, գրողի տարած գասկո-նացի եմ ես. նույնիսկ դժոխքում, կրակի վրա էլ ես կսրախոսեմ: Միրելի բարեկամս, դ՛Արտանյան,— շարունակեց նա՝ միանգամայն հասկանալի սիրալիրությամբ դիմելով ինքն իրեն,— եթե դու ողջ մնաս, որ բավական անհավանական բան է, պետք է այսուհետև օրինակելի, խելամիտ լինես: Այսուհետև բոլորը պետք է հիանան քեզանով և մատով ցույց տան քեզ: Քաղաքավարի և սի-րալիր լինելը չի նշանակում վախկոտ լինել, նայիր թեկուզ Արամիսին: Արամիսը ինքը հեզությունն է, քաղաքավարության մարմնացումը: Բայց մի՞ թե որևէ մեկի մտքով կանցնի Արամիսին վախկոտ անվանել: Իհարկե ոչ: Եվ այսուհետև ես ամեն բանում պետք է նրանից օրինակ վերցնեմ: Ախ, ահա հենց ինքը»:

Դ՛Արտանյանը շարունակելով իր հետ խոսել հասել էր դ՛Էգիլիոնի առանձնատանը և այնտեղ էլ տեսավ Արամիսին, որը հենց ուղիղ տան առաջ կանգնած զրուցում էր կարդինալի երկու զվարդիականների հետ: Արամիսն էլ իր հերթին նկատեց դ՛Արտանյանին: Նա չէր մոռացել, որ այս առավոտ պ-րն դը Տրևիլը այդ պատանու ներկայությամբ այդքան խիստ հանդիմանություն էր արել: Այդ մարդը, որն հնարավորություն էր ունեցել լսելու, թե ինչպիսի նախատիներն են տեղում

հրացանակիրների վրա, Արամիսին հաճելի մարդ չէր և նա այնպես ձևացրեց, թե նրան չի նկատում: Այնինչ դ'Արտանյանը, տարված պարկեշտության ու բարեկրթության օրինակ դառնալու իր պլաններով, մոտեցավ երիտասարդներին և ամենասիրալիք ժպիտը դեմքին, նրբին շարժումներ անելով ողջունեց նրանց: Արամիսը թեթևակի գլուխ տվեց, բայց առանց ժպիտի: Եվ այդ բոլորին երեքն էլ խոսակցությունն ընդհատեցին:

Դ'Արտանյանն այնքան հիմար չէր, որ չնկատեր իր ավելորդ լինելը: Բայց դեռ բավականաչափ հմուտ չէր բարձր հասարակության վարվեցողությանը, որպեսզի մի էլք գտներ այն անհարմար դրությունից, որի մեջ ընկնում է մարդ, երբ մոտենում է իրեն քիչ ծանոթ մարդկանց և խառնվում մի խոսակցության, որն իրեն չի վերաբերում: Նա հենց մի հարմար միջոց էր որոնում, որպեսզի առանց իր արժանապատվությունը վնասելու հեռանա այնտեղից, երբ հանկարծ նկատեց, որ Արամիսը մի թաշկինակ գցեց և, երևի ցրվածության պատճառով, ոտքը դրեց նրա վրա: Դ'Արտանյանին թվաց, թե անհարմար վիճակից դուրս գալու առիթ է գտել: Նա կռացավ և ամենասիրալիք ձևով թաշկինակը դուրս քաշեց հրացանակրի ոտքի տակից, որքան էլ նա ամուր էր սեղմել այն:

— Ահա ձեր թաշկինակը, պարոն,— ասաց նա ամենապարկեշտ ձևով,— դուք երևի կափսոսայիք, եթե կորցնեիք այն:

Թաշկինակն, իրոք, շքեղորեն ասեղնագործված էր և նրա մի անկյունում երևում էին թագ ու զինանիշ: Արամիսն ամբողջովին կարմրատակեց և ավելի շուտ թոցրեց թաշկինակը գասկոնացու ձեռքից, քան թե վերցրեց:

— Այդպես, այդպես,— բացականչեց գվարդիականներից մեկը,— այժմ մեր ծածկամիտ Արամիսն այլևս չի փորձի մեզ հավատացնել, թե ինքը վատ հարաբերությունների մեջ է տիկին դը Բուա-Տրասիի հետ, քանի որ այդ երիտասարդ տիկինն այնքան սիրալիք է եղել, որ սրան է տվել իր թաշկինակը: Արամիսը դ'Արտանյանի վրա գցեց այնպիսի մի հայացք, որը մարդուն պարզ հասկացնում է, թե նա ինքն իր համար մի մահացու թշնամի վաստակեց, բայց և իսկույն անցավ իր սովորական քաղցրավուն տոնին:

— Մխավվում եք, պարոնայք,— ասաց նա:— Այս թաշկինակն ամեննին էլ ինձ չի պատկանում, և ես չգիտեմ, թե ինչու այս պարոնի խելքին փչեց հատկապես ինձ

տալ այն և ոչ թե ձեզնից որևէ մեկին: Ասածիս լավագույն ապացույց կարող է ծառայել այն, որ իմ թաշկինակը գրպանումս է:

Այս ասելով, նա գրպանից հանեց իր սեփական թաշկինակը, որը նույնպես շատ գեղեցիկ էր, կարված նուրբ բատիստից,— իսկ բատիստն այն տարիներին շատ թանկ էր,— սակայն առանց որևէ ասեղնագործության ու զինանիշի, միայն անկյունում՝ տիրոջ անվան սկզբնատառը:

Այս անգամ դ'Արտանյանը լուռ մնաց. նա հասկացավ իր սխալը: Սակայն Արամիսի ընկերները չուզեցին հավատալ, չնայած նրա բոլոր հավաստիացումներին: Նրանցից մեկը շինծու լրջությամբ դարձավ հրացանակրին:

— Եթե քանն այդպես է, ինչպես դու ես ասում, սի-րեյի Արամիս,— ասաց նա,— ես ստիպված պիտի լինեմ պա-հանջել քեզանից այդ թաշկինակը: Ինչպես քեզ հայտնի է, Բուլա-Տրասիին իմ մերձավոր բարեկամն է, և ես չեմ ցանկանում, որ որևէ մեկը պարծենա նրա կնոջը պատկանող իրերով:

— Դու այնպես չես խնդրում այդ, ինչպես պետք է,— պատասխանեց Արամիսը:— Եվ ընդունելով քո պահանջի իրավացիությունը, այնուամենայնիվ, ես կմերժեմ այն, նկատի ունենալով պահանջելու ձևը:

— Իսկապես,— վարանելով ասաց դ'Արտանյանը,— ես չտեսա, որ թաշկինակը պարոն Արամիսի գրպանից ըն-կավ: Պարոն Արամիսը ոտքը դրեց նրա վրա, և ես էլ կար-ծեցի, թե թաշկինակը նրան է պատկանում:

— Եվ սխալվել էք,— սառն արտասանեց Արամիսը, ասես չնկատելով, որ դ'Արտանյանը ցանկանում է մեղմել իր մեղքը:

— Ի դեպ,— շարունակեց Արամիսը՝ դառնալով այն գվարդիականին, որը մեջ էր բերել իր մտերմությունը Բուլա-Տրասիի հետ:— Ես հիշեցի, թանկագինս, որ կոմս Բուլա-Տրասիի հետ ես ավելի պակաս քնքուշ բարեկամությամբ չեմ կապված, քան դու, նրա մերձավոր բա-րեկամդ, այնպես որ... թաշկինակը նույնպիսի հաջողությամբ կարող էր ընկնել քո գրպանից, ինչպես իմից:

— Ո՛չ, երդվում եմ պատվովս,— գոչեց գվարդիականը:

— Դու պատվովդ կերդվես, իսկ ես կերաշխավորեմ ազնիվ խոսքով, և մեզնից մեկը ակներևաբար ստախոս կլինի: Գիտե՞ս ինչ, Մոնտարան, արի, ավելի լավ է կիսենք այն:

— Թաշկինա՞ կը:

— Այո:

— Հրաշալի է,— բացականչեցին գվարդիական երկու ընկերները:— Սողոմոնի դատաստան[48]: Արամիս, դու իսկապես որ մարմնացած իմաստություն ես:

Երիտասարդները քրքջացին, և ամբողջ գործը, ինչ-պես պարզ է ամեն մեկին, սրանով էլ վերջացավ: Մի քանի բռպեից խոսակցությունն ընդհատվեց, և զրուցակիցները սրտագին իրար ձեռք սեղմելով բաժանվեցին: Գվարդիականները մի կողմ գնացին, Արամիսը՝ մյուս:

«Ահա այս ազնիվ մարդու հետ հաշտվելու հարմար ժամանակ»,— մտածեց դ'Արտանյանը, որն այս խոսակցության ամբողջ ընթացքում մի կողմ էր կանգնած: Եվ բարի մղումին ենթարկվելով նա շտապեց հասնելու հրացանակրի հետևից, որը գնում էր այլևս առանց ուշադրություն դարձնելու դ'Արտանյանի վրա: — Պարո՛ն,— ձայն տվեց դ'Արտանյանը հրացանակրի հետևից հասնելով,— հուսով եմ, որ դուք կներեք ինձ:

— Ողորմած տեր,— ընդհատեց նրան Արամիսը,— թույլ տվեք ասել ձեզ, որ այս գործում դուք վարվեցիք այնպես, ինչպես վայել չէր ազնիվ մարդուն:

— Ինչպե՞ս, ողորմած տեր,— գոչեց դ'Արտանյանը:— Դուք կարող եք ենթադրել, որ...

— Ես ենթադրում եմ, պարոն, որ դուք հիմար մարդ չեք, և ձեզ, թեպետև դուք Գասկոնից եք եկել, պետք է հայտնի լինի, որ առանց պատճառի թաշկինակի վրա ոտք չեն դնում: Փարիզը, զրոյը տանի, բատիստի թաշկինակներով չի սալահատակված:

— Պարոն, դուք իզուր եք ջանում ստորացնել ինձ,— գոչեց դ'Արտանյանը, որի կովարար բնավորությունը սկսում էր հաղթել խաղաղ մտադրություններին:— Ես, իսկապես, Գասկոնից եմ եկել, և քանի որ ձեզ հայտնի է, կարիք չկա հիշեցնել, որ գասկոնացիներն այնքան էլ համբերատար մարդիկ չեն: Այնպես որ, մի անգամ ներողություն խնդրելով թեկուզ իրենց արած հիմարության համար, նրանք համոզված են լինում, որ պետք եղածից կրկնակի ավել հիմարություն գործեցին:

— Պարո՛ն, ես այս ամեննին էլ ձեզ հետ կովի բռնվելու ցանկությամբ չասացի: Ես, փառք աստծո, մի ինչ-որ կովարար չեմ, և որպես հրացանակիր ծառայում եմ միայն ժամանակավորապես: Կովի եմ բռնվում միայն, երբ ստիպված եմ լինում, և միշտ էլ մեծ տհաճությամբ: Բայց այս անգամ կատակ բան չէ. այստեղ խոսքը վերաբերում է մի տիկնոջ, որին դուք անվանարկեցիք:

— Մե՛նք անվանարկեցինք,— գոչեց դ'Արտանյանը:

— Ինչո՞ւ դուք ինձ տվեցիք այդ թաշկինակը:

— Ինչպե՞ս վայր գցեցիք այդ թաշկինակը:

— Ես արդեն ասել եմ, պարոն, և կրկնում եմ, որ այդ թաշկինակն իմ գրպանից չի ընկել:

— Ուրեմն, պարոն, դուք երկու անգամ սուտ խոսեցիք, որովհետև ես ինքս տեսա, թե ինչպես այն ընկավ հենց ձեր գրպանից:

— Ա՛խ, ա՛յ թե ինչպես եք համարձակվում խոսել, պարոն գասկոնացի... Ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչպես պետք է պահեք ձեզ:

— Իսկ ես ձեզ ետ կուղարկեմ պատարագ մատուցելու, պարոն արքատ: Դուրս քաշեցեք ձեր սուսերը, խնդրեմ, և հենց այս րոպեին:

— Ո՛չ, ո՛չ, սիրելի բարեկամս, համենայն դեպս ո՛չ այստեղ: Չե՞ք տեսնում, որ մենք դ'Էգիլիոնների տան դիմացն ենք գտնվում, որը լի է կարդինալի կամակատարներով: Ո՞վ կվստահեցնի ինձ, որ հենց նորին սրբազնությունը չի հանձնարարել ձեզ իրեն տանել իմ գլուխը: Իսկ գիտե՞ք, ես ծիծաղելի չափով թանկ եմ

գնահատում իմ գլուխը: Ինձ թվում է, որ այն բավական լավ է նստած իմ ուսերին: Ուստիև ես, հանգիստ եղեք, համաձայն եմ սպանելու ձեզ, բայց սպանելու անաղմուկ, մի ծածուկ տեղ, որտեղ դուք չեք կարող որևէ մեկի մոտ պարծենալ ձեր մահով:

— Թող այդպես լինի: Միայն թե շատ էլ ինքնավստահ մի՛ լինեք և ձեզ հետ վերցրեք ձեր թաշկինակը. ձեզ է պատկանում այն թե ոչ, բայց կարող է պետք գալ ձեզ:

— Դուք, պարոն, գասկոնացի՞ եք,— հեզնանքով հարցրեց Արամիսը:

— Այո՛: Եվ գասկոնացիք սովորաբար մենամարտը չեն հետաձգում զգուշանալու նկատառումներով:

— Զգուշավորությունը, պարոն, հրացանակրի համար ավելորդ հատկություն է, այդ ես գիտեմ, բայց անհրաժեշտ է եկեղեցու սպասավորին: Եվ որովհետև ես միայն ժամանակավորապես եմ հրացանակիր, ուստի գերադասում եմ զգուշավոր լինել: Ժամը երկուսին ես պատիվ կունենամ հանդիպելու ձեզ պարոն դը Տրևիլի տանը: Այնտեղ ես ձեզ կասեմ հարմար տեղը մենամարտի համար:

Երիտասարդները գլուխ տվին իրար, ապա Արամիսը գնաց այն փողոցով, որը տանում էր դեպի Լյուքսեմբուրգյան պալատ, իսկ դ՛Արտանյանը տեսնելով, որ բավական ուշ է, քայլեց Դեշո վանքի կողմը:

«Ի՞նչ կարող ես անել,— խորհրդածում էր նա ինքն իրեն:— Ոչինչ չի կարելի ուղղել: Միակ միևնույնությունն այն է, որ եթե սպանվեմ, ապա կսպանվեմ հրացանակրի ձեռքով»:

V. Թագավորական հրացանակիրները և պարոն կարդինալի գվարդիականները

Դ՛Արտանյանը Փարիզում ոչ մի ծանոթ չուներ: Դրա համար էլ նա Աթոսի հետ մենամարտելու գնաց առանց մարտավկայի, որոշելով բավարարվել հակառակորդի մարտավկաներով: Ի դեպ, նա նախապես հաստատ որոշել էր ամեն տեսակ թույլատրելի ձևերով ներողություն խնդրել քաջ հրացանակրից, իհարկե, չդրսևորելով ոչ մի թուլություն: Այս բանը նա որոշել էր՝ երկյուղելով այն ծանր հետևանքներից, որ կարող էր ունենալ այսպիսի մենամարտը, երբ ավյունով լի երիտասարդ մարդը կովի է բռնվում վիրավորված և թուլացած հակառակորդի հետ: Եթե ինքը պարտվի, հակառակորդը կրկնակի ցնծության մեջ կլինի, իսկ եթե ինքը հաղթող դուրս դա, իրեն

կմեղադրեն ուխտադրության մեջ, կասեն, որ իր հաջողությունը շատ հեշտությամբ է ձեռք բերվել:

Ի դեպ, կամ մենք վատ ենք նկարագրել մեր արկածախնդիր երիտասարդի բնավորությունը, կամ թե ընթերցողն արդեն պետք է նկատած լինի, որ դ'Արտանյանն այնքան էլ սովորական մարդ չէր: Ուստի և, թեպետ ինքն իրեն շարունակ կրկնում էր, որ իր կործանումն անխուսափելի է, բայց և այնպես չէր կարողանում անտրտունջ հնազանդվել մահվան անխուսափելիությանը, ինչպես այդ կաներ մեկ ուրիշը, նվազ համարձակ և ավելի նվազ հանգիստ մարդ: Նա խորհում էր այն մարդկանց բնավորության տարբերությունների մասին, ում հետ որ պիտի կռվեր, և աստիճանաբար դրությունն ավելի ու ավելի պարզ էր դառնում նրա համար, նա հույս ուներ, որ ներողություն խնդրելով կնվաճի Աթոսի բարեկամությունը, որի խիստ դեմքը և ազնվատես կեցվածքը լավագույն տպավորությունն էին թողել իր վրա: Նա իրեն հանգստացնում էր այն հույսով, թե Պորտոսին կվախեցնի լանջագոտու պատմությունով, որ եթե ինքը տեղն ու տեղը չսպանվի, կարող է պատմել բոլորին, իսկ այդպիսի պատմությունը, մանավանդ եթե համապատասխան ձևով արվի, չի կարող Պորտոսին ծիծաղի առարկա չդարձնել ընկերների ու բարեկամների աչքում: Իսկ ինչ վերաբերում է խորամանկ Արամիսին, ապա նա դ'Արտանյանին առանձնապես վախ չէր ներշնչում: Եթե նույնիսկ ենթադրենք, որ հերթը նրան էլ հասնի, ապա դ'Արտանյանը հաստատ որոշել էր նրա հախիցը գալ կամ թե, ինչպես Կեսարն էր խորհուրդ տալիս վարվել Պոմպեոսի զինվորների հետ, երեսին մի հարված տալով՝ աղճատել նրա գեղեցկությունը, որով Արամիսն այնպես ակներևորեն հպարտանում էր:

Բացի դրանից, դ'Արտանյանի մեջ ապրում էր մի անսասան վճռականություն՝ հիմնված իր հոր խոր-հուրդների վրա, որոնց էությունը հետևյալն էր, «Չհնազանդվել ոչ ոքի, բացի թագավորից, կարդինալից և պարոն դը Տրևիլից»: Ահա թե ինչու դ'Արտանյանը ոչ թե քայլում, այլ թռչում էր դեպի Դեշո վանքը: Դա մի լքված շինություն էր՝ ջարդված լուսամուտներով, շրջապատված ամայի դաշտով, որն անհրաժեշտության դեպքում ծառայում էր նույն նպատակին, ինչ Պրե-օ-Կ-լերը.[49] այնտեղ սովորաբար կռվում էին այն մարդիկ, ովքեր ժամանակ կորցնել չէին կարող:

Երբ դ'Արտանյանը մոտենում էր վանքի մոտ գտնվող ամայի դաշտին, կեսօրվա ժամը խփեց: Աթոսը նրան սպասել էր ընդամենը հինգ րոպե, հետևապես

դ'Արտանյանն անբասիր ճշտապահ էր եղել և մենամարտի օրենքների ամենախիստ դատավորն էլ առիթ չէր ունենա կշտամբելու նրան:

Աթոսը, որին վերքն ավելի ծանր ցավ էր պատճառում, թեև դը Տրևիլի բժիշկը նոր է փաթաթել այն, մի քարի նստած՝ հակառակորդին էր սպասում, ինչպես միշտ՝ հանգիստ ու արժանապատվությամբ լի: Տեսնելով դ'Արտանյանին՝ նա հարգալից վեր կացավ և մի քանի քայլ արեց դեպի նա: Դ'Արտանյանն էլ իր հերթին մոտեցավ հակառակորդին, գլխարկը ձեռքում բռնած այնպես, որ նրա փետուրը քարշ էր գալիս գետնին:

— Պարոն,— ասաց Աթոսը,— ես մարդ եմ ուղարկել երկու ընկերներիս հետևից, որոնք մի մարտավկաները կլինեն: Բայց այդ ընկերներս դեռ չեն եկել: Ես զարմանում եմ, որ ուշացել են. նրանք այդպիսի սովորություն չունեն:

— Ես մարտավկաներ չունեմ,— ասաց դ'Արտանյանը:— Ես հենց երեկ եմ Փարիզ եկել և այստեղ ոչ մի ծանոթ չունեմ՝ բացի պարոն դը Տրևիլից, որին ներկայանալ խորհուրդ է տվել իմ հայրը, որը մի ժամանակ պատիվ է ունեցել պարոն դը Տրևիլի ընկերը լինելու:

Աթոսը մի պահ մտքի մեջ ընկավ:

— Դուք ծանոթ եք միայն պարոն դը Տրևիլի՞ հետ,— հարցրեց նա:

— Այո՛, պարոն, ես միայն նրա հետ եմ ծանոթ:

— Ա՛յ քեզ պատմություն,— խոսեց Աթոսը՝ դիմելով ավելի շատ ինքն իրեն, քան թե զրուցակցին:— Ա՛յ քեզ պատմություն: Բայց եթե ես ձեզ սպանեմ, երեխաներ լափողի համբավ կհանեմ:

— Ամեննին էլ այդպես չէ, պարոն,— առարկեց դ'Արտանյանը՝ գլուխ տալով այնպիսի մի ձևով, որը զուրկ չէր արժանապատվությունից:— Ամեննին էլ այդպես չէ, քանի որ դուք պատիվ եք անում կռվելու ինձ հետ, չնայելով ձեր վերքին, որը անտարակույս, տանջում է ձեզ:

— Իսկապէս՝ շատ է տանջում: Եվ դուք, պետք է խոստովանեմ, անասելի ցավ պատճառեցիք ինձ: Բայց ես սուսերս կբռնեմ ձախ ձեռքով, ինչպէս միշտ անում եմ նման դեպքերում: Չկարծեք, թե այդպիսով ձեր դրությունը կթեթևանա, ես երկու ձեռքով էլ ազատորեն գործում եմ: Դա նույնիսկ որոշ անհարմարություն կստեղծի ձեզ համար: Ձախիկը շատ է նեղում հակառակորդին, եթե վերջինս պատրաստված չէ դրան: Ցա-վում եմ, որ նախապէս ձեզ տեղյակ չեմ պահել այս հանգամանքին:

— Դուք, պարոն,— խոսեց դ'Արտանյանը,— անչափ սիրա-լիր եք, և ես խորապէս երախտապարտ եմ ձեզ:

— Ես, իսկապէս, հուզված եմ ձեր խոսքերից,— ասաց Աթոսը նրբին հարգանքով:— Ավելի լավ է խոսենք մի ուրիշ բանի մասին, եթե դուք դեմ չեք: Ա՛խ, անիծված, ինչպէս ցավ պատճառեցիք դուք ինձ... Ուսս այրվում է ուղղակի:

— Եթե դուք ինձ թույլ տայիք... — վարանելով մրմն-ջաց դ'Արտանյանը:

— Ի՞նչ թույլ տայի, պարոն:

— Ես վերքեր բուժելու հրաշագործ սպեղանի ունեմ: Այդ սպեղանին մայրս է տվել ինձ, և ես այն ար-դեն փորձել եմ ինձ վրա:

— Եվ ի՞նչ:

— Այն, որ ամենաշատը մի երեք օրում դուք առողջացած կլինեք, ես համոզված եմ դրան, իսկ այդ երեք օրն անցնելուց հետո, երբ դուք ապաքինված կլինեք, պարոն, ես մեծ պատիվ կհամարեմ ինձ իմ սուսերը խաչաձևելու ձերի հետ:

Դ'Արտանյանն այս խոսքերն ասաց այնպիսի պարզությամբ, որը պատիվ էր բերում նրա պարկեշտությանը և միաժամանակ առիթ չէր տալիս կասկածելու նրա անվեհերությանը:

— Երդվում եմ աստծով, պարոն,— պատասխանեց Աթոսը,— այդ առաջարկությունն իմ սրտովն է, ոչ այն պատճառով, որ ես համաձայն եմ դրան, այլ՝ որ մի ամբողջ մղոնի վրա դրանից ազնվականի ազնվություն է բուրում: Այդպէս էին խոսում ու գործում Կարլոս Մեծի[50] ժամանակների զինվորները, որոնց օրինակին

պետք է հետևի ամեն մի ասպետ: Բայց մենք, դժբախտաբար, մեծ կայսեր ժամանակներում չենք ապրում: Մենք ապրում ենք հարգարժան պարոն կարդինալի օրոք, և երեք օրվա ընթացքում, որքան էլ մենք խնամքով թաքցնելու լինենք մեր գաղտնիքը, հայտնի կդառնա, որ մենք պատրաստվում ենք մենամարտելու, և մեզ կխանգարեն իրականացնելու մեր մտադրությունը: Այո, բայց այս պորտաբույծները, ինչպես տեսնում եմ, բոլորովին կորել են:

— Եթե դուք շտապում եք, պարոն,— ասաց դ'Արտանյա-նը նույնպիսի պարզությամբ, ինչպես մի բույե առաջ առաջարկել էր նրան երեք օրով հետաձգելու մենամարտը,— եթե դուք շտապում եք և եթե ձեզ հաճելի է անհապաղ վերջ իմ կյանքին, խնդրում եմ ձեզ, մի՛ քաշվեք:

— Ձեր այդ խոսքերը նույնպես իմ սրտովն են,— ասաց Աթոսը սիրալիր գուլի տալով դ'Արտանյանին:— Դրանք խելոք և, անտարակույս, ազնիվ մարդու խոսքեր են: Ես, պարոն, շատ եմ սիրում ձեզ նման մարդկանց և տեսնում եմ, որ եթե մենք միմյանց չսպանենք, հետագայում ինձ համար շատ հաճելի է լինելու զրուցել ձեզ հետ: Սպասենք իմ բարեկամներին, խնդրում եմ ձեզ. ես չեմ շտապում, և այդպես ավելի հարմար կլինի: Ախ, ահա, կարծեմ նրանցից մեկը գալիս է:

Իսկապես, այդ բույեին Վոժիրար փողոցի ծայրում երևաց Պորտոսի վիթխարի կերպարանքը:

— Ինչպե՛ս,— գոչեց դ'Արտանյանը:— Ձեր առաջին մարտավկան պարոն Պորտո՞սն է:

— Այո: Այն ինչ-որ հաճելի՞ չէ ձեզ:

— Ո՛չ, ո՛չ:

— Ահա և երկրորդը:

Դ'Արտանյանը շուտ եկավ այն կողմը, ուր ցույց տվեց Աթոսը, և ճանաչեց Արամիսին:

— Ինչպե՛ս,— գոչեց նա այնպիսի տոնով, որ ավելի մեծ զարմանք էր արտահայտում, քան առաջին անգամ:— Ձեր երկրորդ մարտավկան էլ պարոն Արամի՞սն է:

— Իհարկե: Մի՞ թե՛ ձեզ հայտնի չէ, որ մեզ երբեք իրարից անջատ չեն տեսնում և որ, ինչպես հրացանա-կիրները, այնպես էլ գվարդիականները, պալատում և քաղաքում մեզ կոչում են Աթոս, Պորտոս, Արամիս, կամ՝ երեք անբաժաններ: Ի դեպ, որովհետև դուք եկել եք Դաքսից թե՛ Պո...

— Տարբից,— ուղղեց դ՛Արտանյանը:

— ...ձեզ ներելի է չիմանալ այս մանրամասնությունները:

— Ազնիվ խոսք,— ասաց դ՛Արտանյանը,— ձեր մականունները, ողորմած պարոններ, շատ հաջող են և ինձ հետ պատահած այս պատմությունը, եթե միայն տարածվելու լինի, ապացույց կձառայի, որ ձեր բարեկամությունը հիմնված է ձեր բնավորությունների ոչ թե տարբերության, այլ նմանության վրա:

Այդ ժամանակ Պորտոսը ավելի մոտենալով՝ ձեռքի շարժումով ողջունեց Աթոսին, ապա շուռ գալով, զար-մանքից քարացած մնաց, հենց որ ճանաչեց դ՛Արտանյանին:

Ի միջի այլոց հիշատակենք, որ Պորտոսն այդ ժա-մանակ արդեն փոխել էր իր լանջագոտին և թիկնոցը վրան չէր առել:

— Այդպե-ե-ե՛ս,— ծոր տվեց նա:— Այս ի՞նչ է նշանակում:

— Ես մենամարտում եմ այս պարոնի հետ,— ասաց Աթոսը՝ ձեռքով ցույց տալով դ՛Արտանյանին և միևնույն ժամանակ ասես ողջունելով Պորտոսին:

— Բայց ե՛ս էլ հենց սրա հետ եմ մենամարտելու,— ասաց Պորտոսը:

— Միայն ժամը մեկին,— հանգստացնող տոնով ասաց դ՛Արտանյանը:

— Բայց ե՛ս էլ հենց սրա հետ եմ մենամարտելու,— իր հերթին հայտարարեց Արամիսը՝ նրան մոտենալով:

— Միայն ժամը երկուսին,— նույնպես հանգիստ ասաց դ՛Արտանյանը:

— Բայց դու ի՞նչ առիթով ես մենամարտելու, Աթոս,— հարցրեց Արամիսը:

— Իսկապես՝ դժվարանում եմ պատասխանել,— ասաց Աթոսը:— Նա իմ ուսին հրելով խիստ ցավեցրեց: Իսկ դո՞ւ, Պորտոս:

— Իսկ ես մենամարտում եմ հենց նրա համար, որ մե-նամարտում եմ,— կարմրատակելով պատասխանեց Պորտոսը:

Աթոսը, որի աչքից ոչ մի բան վրիպել չէր կարող, նկատեց գասկոնացու շուրթերի վրայով սահող մի նուրբ ժպիտ:

— Մենք վիճեցինք հագուստի պատճառով,— ասաց դ՛Արտանյանը:

— Իսկ դո՞ւ, Արամիս:

— Ես մենամարտում եմ աստվածաբանական մի հարցում անհամաձայնության համար,— ասաց Արամիսը՝ դ՛Արտանյանին նշան անելով, որ նա թաքցնի մենամարտի իսկական պատճառը:

Աթոսը նկատեց, որ գասկոնացու շուրթերով նորից մի ժպիտ սահեց:

— Մի՞ թե,— նորից հարցրեց Աթոսը:

— Այո, Ավգուստինոս Երանելու[51] մի տեղի վերաբերյալ մեր կարծիքները բաժանվեցին:

«Սա, անկասկած, խելացի տղա է»,— մտածեց Աթոսը:

— Իսկ այժմ, ողորմած պարոններ,— ասաց դ՛Արտանյանը,— քանի որ դուք բոլորդ հավաքվել եք այստեղ, թույլ տվեք ինձ ներողություն խնդրել ձեզնից:

«Ներողություն» բառի վրա Աթոսի դեմքը մոայլվեց, Պորտոսի շրթունքների վրայով արհամարհական մի ժպիտ սահեց, իսկ Արամիսը բացասաբար շարժեց գլուխը:

— Դուք ինձ չհասկացաք, պարոններ,— ասաց դ'Արտանյանը գլուխը բարձրացնելով: Այդ բոպեին արևի ճառագայթն ընկնելով նրա գլխին՝ ստվեր էր գցել նրա նուրբ ու համարձակ դիմագծերին:— Ես ձեզնից ներողություն խնդրեցի այն դեպքի հասար, եթե ես հնարավորություն չեմ ունենա երեքիդ էլ գոհացում տալու: Չէ՞ որ պարոն Աթոսը առաջինը իրավունք ունի սպանելու ինձ, և այդ կարող է ինձ զրկել հնարավորությունից՝ իմ պատվի պարտքը հատուցելու ձեզ, պարոն Պորտոս: Իսկ այն պարտավորությունը, որ տվել եմ ձեզ, պարոն Արամիս, համարյա թե ոչինչ է դառնում: Իսկ հիմա, ողորմած պարոններ, նորից կրկնում եմ, խնդրում եմ ներեք ինձ, բայց միայն սրա համար... Չսկսե՞նք արդյոք:

Այս ասելով՝ երիտասարդ գասկոնացին համարձակորեն դուրս քաշեց սուները:

Արյունը գլուխն էր խփել: Այդ բոպեին նա պատրաստ էր իր սուները մերկացնելու թագավորության բոլոր հրացանակիրների դեմ, ինչպես այժմ մերկացրել էր Աթոսի, Պորտոսի և Արամիսի դեմ:

Ժամը տասներկուսից անց էր քառորդ: Արեգակը կանգնած էր զենիթում, և մենամարտի համար ընտրված վայրը ողողված էր նրա կիզիչ ճառագայթներով:

— Շոգ է,— ասաց Աթոսը իր հերթին մերկացնելով սուները:— Այնինչ կամզոլս հանել չեմ կարող. զգում եմ, որ վերքիցս արյուն է ծորում և վախենում եմ իմ հակառակորդին շփոթեցնել արյան տեսքից, որն ինքը չի թափել:

— Այո, պարոն,— պատասխանեց դ'Արտանյանը:— Ե՛ս թափած լինեմ այդ արյունը, թե մեկ ուրիշը, կարող եմ ձեզ հավատացնել, որ ձեզ պես մի քաջ ազնվականի արյունը տեսնելը ինձ միշտ էլ ցավ կպատճառի: Ես էլ կմենամարտեմ առանց կամզոլս հանելու, ինչպես դուք:

— Հրաշալի՛ է,— գոչեց Պորտոսը,— բայց բավական է սիրալիրություններ անել: Մի՛ մոռացեք, որ մենք մեր հերթին ենք սպասում:

— Խոսեցեք ձեր անունից, Պորտոս, երբ այդպիսի անհեթեթություններ եք ասում,— ընդհատեց նրան Արամիսը:— Ինչ վերաբերում է ինձ, ապա իմ կարծիքով այս երկու պարոնների բոլոր ասածները միանգամայն վայել են ազնվականին:

— Պատրաստ եմ ծառայելու ձեզ, պարոն,— ասաց Աթոսը իր տեղում կանգնելով:

— Ես ձեր խոսքին էի միայն սպասում,— պատասխանեց դ'Արտանյանը՝ սուսերը խաչաձևելով նրա հետ:

Բայց դեռ չէին զրնգացել նրանց սուսերները իրար դիպչելով, երբ կարդինալի գվարդիականների մի ջոկատ պարոն դը Շյուսակի հրամանատարությամբ եր-կաց վանքի պատի անկյունից:

— Կարդինալի գվարդիականնե՛րը,— միաբերան գոչեցին Պորտոսն ու Արամիսը:— Սրերը պատյա՛նը, պարոննե՛ր, սրերը պատյա՛նը:

Սակայն արդեն ուշ էր: Հակառակորդները բռնվել էին այնպիսի մի դիրքով, որ նրանց մտադրության նկատմամբ ոչ մի կասկած չէր կարող լիներ:

— Է՛յ,— գոչեց դը Շյուսակը՝ մի քայլ անելով նրանց կողմը և ձեռքի նշանով իր ստորադրյալներին հրամայելով հետևել իր օրինակին:— Է՛, հրացանակիրնե՛ր, դուք հավաքվել եք այստեղ մենամարտելու՞: Իսկ հրովարտակները մոռացե՛լ եք:

— Դուք չափազանց սիրալիր եք, պարոնայք գվարդիա-կաններ,— ասաց Աթոսը սրտնեղած, որովհետև դը Շյուսակը երկու օր առաջ տեղի ունեցած հարձակման մասնակից էր եղել:— Եթե մենք ձեզ հանդիպեինք մենամարտելու պահին, կարող եմ հավատացնել, որ մենք ձեզ չէինք խանգարի: Ազատ թողեք մեզ և դուք առանց մի ջանք գործադրելու լիակատար բավականություն կստանաք:

— Ողորմած պարոննե՛ր,— ասաց դը Շյուսակը,— ես մեծ ափսոսանքով ստիպված եմ հայտարարելու ձեզ, որ այդ անհնարին է: Մեզ համար՝ ամենից առաջ պարտքն է: Սրերը պատյանները դրեք և հետևեցեք մեզ:

— Ողորմած պարոն,— ասաց Արամիսը՝ տնագ անելով դը ժյուսակին,— մենք մեծագույն բավականությամբ կհամաձայնեինք ձեր սիրալիք առաջարկությանը, եթե այդ մեզնից լիներ կախված: Սակայն, դժբախտաբար, այդ անհնարին է, պարոն դը Տրեհիլը մեզ արգելել է անել այդ: Գնացեք ձեր ճանապարհով, և այդ ամենալավն է, որ մնում է անել ձեզ:

Ծաղրը կատաղեցրեց դը ժյուսակին:

— Եթե դուք չենթարկվեք,— գոչեց նա,— մենք կգրոհենք ձեզ վրա:

— Նրանք հինգ հոգի են,— կիսաձայն ասաց Պորտոսը,— իսկ մենք՝ միայն երեք: Մենք նորից պարտություն կկրենք կամ թե ստիպված կլինենք հենց այստեղ մեռնել, որովհետև, հայտարարում եմ ձեզ, պարտված տեսքով ես կապիտանի աչքին երևալ չեմ կարող:

Աթոսը, Պորտոսը և Արամիսը նույն վայրկյանին մոտեցան իրար, իսկ դը ժյուսակը շարում էր իր զինվորներին:

Այդ մեկ րոպեն բավական էր դ'Արտանյանին. նա վճիռ ընդունեց: Դա այն դեպքերից մեկն էր, որը վճռում է մարդու բախտը: Նա պետք է ընտրություն աներ թագավորի և կարդինալի միջև, և մեկ անգամ ընտրություն անելով՝ պետք է միշտ իր ընտրյալի կողմը պահեր: Կռվի մեջ մտնել նշանակում էր չենթարկվել օրենքին, նշանակում էր կյանքը վտանգի տակ դնել, նշանակում էր դառնալ մինիստրի թշնամին, որն ավելի հզոր էր, քան ինքը՝ թագավորը: Այս ամենը երիտասարդը հասկացավ մի ակնթարթում: Եվ ի պատիվ նրա՝ մենք պետք է ասենք, որ ոչ մի վայրկյան նա չտատանվեց:

— Պարոննե՛ր,— ասաց նա դառնալով Աթոսին ու նրա ընկերներին:— Թույլ տվեց ինձ ուղղել ձեզ: Դուք ասացիք, որ երեք հոգի եք: Բայց ինձ թվում է, որ մենք չորս հոգի ենք:

— Բայց դուք հրացանակիր չեք,— առարկեց Պորտոսը:

— Այդ ճշմարիտ է,— համաձայնեց դ'Արտանյանը:— Իմ հագին հրացանակրի համազգեստ չկա, բայց հոգով ես հրացանակիր եմ: Իմ սիրտը հրացանակրի սիրտ է, ես այդ զգում եմ և գործում եմ որպես հրացանակիր:

— Հեռու քաշվեցե՛ք, երիտասա՛րդ,— գոռաց դը Շյուսակը, որը երևի դ'Արտանյանի շարժումներից ու դեմ-քի արտահայտությունից հասկացել էր նրա մտադրությունը:— Դուք կարող եք հեռանալ: Մենք չենք առարկում: Փրկեցեք ձեր կաշին: Շտապեցե՛ք:

Դ'Արտանյանը տեղից չշարժվեց:

— Դուք իսկապես որ հիանալի տղա եք,— ասաց Աթոսը՝ նրա ձեռքը սեղմելով:

— Շո՛ւտ, շո՛ւտ, վճռեցե՛ք,— ձայն տվեց դը Շյուսակը:

— Շո՛ւտ,— ասացին Պորտոսն ու Արամիսը,— հարկավոր է մի որևէ բան ձեռնարկել:

— Այս երիտասարդը լի է մեծահոգությամբ,— ասաց Աթոսը:

Բայց երեքին էլ անհանգստացնում էր դ'Արտանյանի ջահելությունը և անփորձությունը:

— Մենք երեք հոգի կլինենք, որոնցից մեկը վիրավոր է, և դրան ավելացրած մի պատանի, համարյա երեխա, այնինչ կասեն, թե մենք չորս հոգի ենք եղել:

— Այո, բայց նահանջե՛լն էլ,— գոչեց Պորտոսը:

— Այդ անկարելի է,— ասաց Աթոսը:

Դ'Արտանյանը հասկացավ նրանց անվճռականության պատճառը:

— Ողորմած պարոննե՛ր,— ասաց նա,— վարձեցեք ինձ, և ես պատվովս եմ երդվում, որ չեմ հեռանա այստեղից, եթե մենք պարտվելու լինենք:

— Ի՞նչ է ձեր անունը, քաջ տղա,— հարցրեց Աթոսը:

— Դ'Արտանյան, պարոն:

— Ուրեմն՝ Աթո՛ւ, Պորտո՛ւ, Արամի՛ւ, դ'Արտանյան, առա՛ջ,— գոչեց Աթոսը:

— Դե, ի՞նչ կասեք, պարոնայք,— հարցրեց դը ժյուսակը:— Կբարեհաճե՞ք վճիռ ընդունել վերջապես:

— Ամեն ինչ վճոված է, պարո՛ն,— պատասխանեց Աթոսը:

— Իսկ ո՞րն է վճիռը,— հարցրեց դը ժյուսակը:

— Մենք պատիվ կունենանք գրոհելու ձեզ վրա,— ասաց Արամիսը մի ձեռքով զլխարկը քարձրացնելով, մյուսով սուսերը մերկացնելով:

— Ա՛յ թե ինչ, դուք դիմադրո՞ւմ եք,— գոչեց դը ժյուսակը:

— Գրող ու ցա՛վ: Ձեզ այդ զարմացնո՞ւմ է:

Եվ բոլոր ինը կովոդներն էլ կատաղորեն հարձակվեցին իրար վրա, ի դեպ, չնոռանալով գործողության որոշ կարգ սահմանել:

Աթոսը կովում էր ումն Կայուզակի հետ, որը կարդինալի սիրելին էր, Պորտոսին բաժին էր ընկել Բիկարան, իսկ Արամիսը դեմ առ դեմ էր կանգնել երկու հակառակորդների հետ:

Ինչ վերաբերում է դ'Արտանյանին, ապա նրա հակառակորդն էր ինքը՝ դը ժյուսակը:

Երիտասարդ գասկոնացու սիրտն այնպես ուժեղ էր խփում, որ պատրաստ էր կուրծքը ճեղքելու: Սակայն աստված էլ տեսնում էր ո՛չ վախից,— նա վախի նշույլ անգամ չէր զգում,— այլ հուզմունքից: Նա կովում էր կատաղած վագրի պես, սլանում էր իր հակառակորդի շուրջը, հագար անգամ փոխում էր տակտիկան ու տեղը: Դը ժյուսակը, ինչպես ասում էին այն ժամանակ, «սուսերի վարպետ» էր, այն էլ

բազմափորձ: Այնուամենայնիվ նա մեծագույն դժվարությամբ էր պաշտպանվում իր ճկուն ու ճարպիկ հակառակորդից, որն ամեն բույե, անտեսելով ընդունված կանոնները, հարձակվում էր միաժամանակ բոլոր կողմերեց, միևնույն ժամանակ ետ վանելով հարվածները, որպես մի մարդ, որը խնամքով պաշտպանում է իր կաշին:

Այդ պայքարը վերջիվերջո դը ժյուսակին համբերությունից հանեց: Կատաղելով այն բանից, որ ինքը չի կարողանում հաշիվ տեսնել մի հակառակորդի հետ, որին պատանի էր համարում, նա տաքացավ և սկսեց իրար հետևից սխալներ գործել: Դ՛Արտանյանը, որը մեծ փորձ չուներ, բայց տեսությունը լավ էր հիշում, կրկնապատկեց իր շարժումների արագությունը: Ժյուսակը որոշելով վերջ տալ նրան՝ մի կտրուկ հարձակում գործեց, ցանկանալով մի զարհուրելի հարված հասցնել հակառակորդին: Սակայն դ՛Արտանյանը ճարպկորեն ետ վանեց հարվածը և այն պահին, երբ դը ժյուսակն ուղղվում էր, գասկոնացին օձի պես դուրս պրծավ նրա ձեռքի տակից և սուրը խրեց նրա կուրծքը: Դը ժյուսակը տապալվեց գետին:

Հակառակորդից ազատվելով՝ դ՛Արտանյանը մի արագ ու տագնապալի հայացք զգեց կովի դաշտի վրա:

Արամիսն արդեն կարողացել էր հաշիվ մաքրել իր հակառակորդներից մեկի հետ, բայց երկրորդը խիստ նեղում էր նրան: Այնուամենայնիվ Արամիսի դրությունը բարենպաստ էր, նա դեռ կարող էր պաշտպանվել:

Բիկարան և Պորտոսը ճարպկորեն էին գործածում սուսերը: Պորտոսն արդեն վիրավորված էր թիակից, Բիկարան՝ ազդրից: Ոչ մեկի, ոչ մյուսի վերքը մահացու չէին, և նրանք երկուսն էլ ավելի մեծ կատաղությամբ էին շարունակում փայլել սուսերամարտության արվեստի մեջ:

Աթոսը, որ երկրորդ վերքն էր ստացել Կայուզակից, վայրկյան առ վայրկյան ավելի էր գունատվում, բայց ոչ մի քայլ չէր նահանջում: Նա միայն սուսերը փոխադրել էր մյուս ձեռքը և կռվում էր ձախ ձեռքով:

Դ՛Արտանյանը, համաձայն այն ժամանակներում ընդունված մենամարտի կանոնների, իրավունք ուներ կռվողներից մեկին օգնելու: Կանգ առնելով վարանմունքի մեջ և չիմանալով, թե ում է ավելի հարկավոր իր օգնությունը՝ նա հանկարծ որսաց Աթոսի հայացքը: Այդ հայացքը տանջալից պերճախոս էր: Աթոսը ավելի շուտ

կմեռներ, քան թե օգնության կկանչեր: Սակայն նայել նա կարող էր և հայացքով կարող էր օգնություն խնդրել: Դ՛Արտանյանը հասկացավ այդ և առաջ նետվելով՝ կողքից հարձակվեց Կայուզակի վրա:

— Այս կո՛ղմը, պարոն գվարդիական, ես կսպանեմ ձեզ:

Կայուզակը շուտ եկավ: Օգնությունը ժամանակին էր հասել: Աթոսը, որին մինչև այդ պահում էր միայն իր չտեսնված արիությունը, իջավ մեկ ծնկի վրա:

— Նզո՛վք,— գոչեց նա:— Չսպանե՛ք դրան, երիտասարդ: Ես դեռ պետք է հին հաշիվ մաքրեմ դրա հետ, երբ կապաքինվեմ և առողջ կլինեմ: Զինաթափ արեք դրան, ձեռքից դուրս գցեք սուսերը: Ահա այդպես: Հիանալի՛ է, հիանալի՛:

Այս բացականչությունը Աթոսի կրծքից դուրս թռավ այն պահին, երբ նա տեսավ, թե ինչպես Կայուզակի սուսերը մի քսան քայլ հեռու նետվեց: Դ՛Արտանյանը և Կայուզակը միաժամանակ վազեցին նրա հետևից, մեկը՝ իր սուսերը ետ վերցնելու, մյուսը՝ նրան տիրելու համար: Դ՛Արտանյանը, որ ավելի արագավազ էր, առաջինը տեղ հասավ և ոտքը դրեց շեղքի վրա:

Կայուզակը նետվեց այն գվարդիականի մոտ, որին սպանել էր Արամիսը, ճանկեց նրա մարտասուսերը և ետ վազեց դեպի դ՛Արտանյանը, սակայն ճանապարհին ընկավ Աթոսի վրա, որն այդ կարճ ժամանակամիջոցում կարողացել էր շունչ առնել: Վախենալով, թե դ՛Արտանյանը կսպանի իր թշնամուն՝ Աթոսը ցանկանում էր վերսկսել կռիվը:

Դ՛Արտանյանը հասկացավ, որ խանգարել Աթոսին՝ կնշանակել վիրավորել նրան: Եվ իրոք, մի քանի վայրկյանից Կայուզակն ընկավ. Աթոսի սուսերը խրվել էր նրա կոկորդը:

Նույն այդ պահին Արամիսը սուսերի ծայրը դեմ տվեց իր տապալված հակառակորդի կրծքին՝ ստիպելով նրան իրեն պարտված ճանաչել: Մնում էին Պորտոսը և Բիկարան: Պորտոսը կատակաբանում էր. հարցնելով Բիկարային, թե նրա կարծիքով ժամը քանի՞ սը կլինի, և շնորհավորելով, որ նրա եղբայրը Նավարյան գնդում վաշտ է ստացել: Սակայն նրա այս բոլոր ծաղրանքները ոչ մի օգուտ չէին

բերում: Բիկարան մեկն էր այն երկաթյա մարդկանցից, որոնք ընկնում են միայն սպանված:

Մինչդեռ արդեն ժամանակն էր վերջացնելու: Կարող է պահակախումբ գալ և ձերբակալել մենամարտի բոլոր մասնակիցներին՝ առողջներին ու վիրավորներին, ռոյալիստներին ու կարդինալիստներին: Աթոսը, Արամիսը և դ'Արտանյանը շրջապատեցին Բիկարային՝ առաջարկելով նրան անձնատուր լինել: Մեն-մենակ բոլորի դեմ, ազդրից էլ վիրավորված լինելով՝ Բիկարան, այնուամենայնիվ, մերժեց: Սակայն ժյուսակը, որ բարձրացել էր արմունկների վրա, ձայն տվեց նրան, որ անձնատուր լինի: Բիկարան գասկոնացի էր, ինչպես դ'Արտանյանը: Նա ժյուսակի առաջարկությանը խուլ մնաց և միայն ծիծաղեց: Շարունակելով կռ-վել նա երկու հարձակումների միջև ընկած կարճ ժամանակամիջոցում սուսերի ծայրով մի կետ ցույց տվեց գետնի վրա:

— Այստե՛ղ,— ասաց նա՝ նմանեցնելով Աստվածաշնչի խոսքերին,— այստե՛ղ կմեռնի Բիկարան, մեկը նրանցից, որք ընդ նմա:

— Բայց նրանք չորս հոգի են քո դեմ, իսկ դու մեն-մենակ: Անձնատուր եղիր, հրամայում եմ քեզ:

— Քանի որ դու հրամայում ես, այլ բան է,— ասաց Բիկարան: — Դու իմ բրիգադիրն ես, և ես պարտավոր եմ հնազանդվել:

Եվ անակնկալ ետ ցատկելով՝ նա երկու կտոր արեց իր սուսերը, որպեսզի հակառակորդին չհանձնի: Սուսերի կտորները վանքի պարսպի վրայով դուրս նետելով՝ նա ձեռքերը կրծքին խաչեց՝ սուլելով կարդինալական ինչ-որ երգ:

Արիությունը միշտ հարզանք է հարուցում, եթե նույնիսկ դա թշնամու արիությունն է: Հրացանակիրները իրենց սուսերով պատիվ տվին համարձակ գվարդիականին, ապա սուսերը խրեցին պատյանները: Դ'Արտանյանը հետևեց նրանց օրինակին, ապա Բիկարայի՝ ոտքերի վրա մնացած միակ գվարդիականի օգնությամբ նա վանքի գավիթը տարավ ժյուսակին, Կայուզակին և Արամիսի հակառակորդներից նրան, որը միայն վիրավորված էր: Չորրորդ գվարդիականը, ինչպես ասացինք, սպանված էր: Ապա մուտքի մոտի զանգերը քաշելով և հինգ սուսերներից չորսն իրենց հետ վերցրած՝ նրանք ուրախությունից շշմած շարժվեցին դեպի պ-րն դը Տրևիլի տուն:

Նրանք քայլում էին թև-թևի տված, զբաղեցնելով փողոցի ամբողջ լայնքը, զրուցելով իրենց հանդիպող հրացանակիրների հետ, այնպես որ, վերջիվերջո դա նմանվեց մի հաղթական երթի: Դ՛Արտանյանը զմայլանքի մեջ էր: Նա քայլում էր Աթոսի ու Պորտոսի մեջտեղով՝ սիրալիբ գրկած նրանց:

— Եթե ես դեռ հրացանակիր էլ չեմ,— ասաց նա դը Տրևիլի տան շենքում՝ դառնալով իր նոր բարեկամներին,— համենայնդեպս կարող եմ արդեն ինձ համարել հրացանակիրների աշակերտ, ճիշտ չե՞:

VI. Նորին մեծություն Լյուդովիկոս XIII թագավորը

Այս պատմությունը մեծ աղմուկ հանեց: Պ-րն դը Տրևիլը առերևույթ նախատում էր իր հրացանակիրներին, իսկ գաղտուկ շնորհավորում էր նրանց: Սակայն ժամանակ կորցնել չէր կարելի հարկավոր էր անհապաղ նախազգուշացնել թագավորին, և պ-րն դը Տրևիլն շտապեց Լուվր: Բայց արդեն ուշ էր. թագավորը կարդինալի հետ միասին փակվել էր: Դը Տրևիլին ասացին, որ թագավորը զբաղված է և այժմ ոչ ոքի ընդունել չի կարող: Տրևիլը ներկայացավ երեկոյան, այն ժամին, երբ թագավորը թուղթ էր խաղում: Թագավորը հաղթել էր, և որովհետև նորին մեծությունը այժի էր ընկնում խիստ ժլատությամբ, ապա այս դեպքում հիանալի տրամադրության մեջ էր:

— Հապա մի մոտեցեք տեսնեմ, պարոն կապիտան,— կանչեց նա՝ դեռ հեռվից նկատելով դը Տրևիլին:— Մոտեցեք, որպեսզի ես կարողանամ մի լավ նախատել ձեզ: Հայտնի՞ է ձեզ արդյոք, որ նորին սրբազնությունը ներկայացել է ինձ գանգատվելու ձեր հրացանակիրներից և այնպես էր հուզվել, որ նույնիսկ անկողին է ընկել: Այս ի՞նչ բան է, ինչ-որ թոկից փախած սատանաներ են ձեր հրացանակիրները:

— Ոչ, ձերդ մեծություն,— պատասխանեց դը Տրևիլը, առաջին իսկ խոսքերից հասկանալով, թե ինչ ընթացք է ստանում գործը:— Ոչ, ճիշտ և ճիշտ հակառակը. նրանք ամենաբարի արարածներն են, հեզ գառնուկի պես, որոնք, վստահեցնում եմ ձեզ, ձգտում են միայն մեկ բանի, որ իրենց սուսերները պատյաններից դուրս գան միայն ձերդ մեծությանը ծառայելու համար: Բայց ի՞նչ կարող ես անել. պարոն կարդինալի գվարդիականներն ամենուրեք նրանց օձիքից են կաշում, և խեղճ երիտասարդները ստիպված են լինում պաշտպան-վել, թեկուզ հենց հանուն իրենց գնդի պատվի:

— Լսեցե՛ք, պարոն դը Տրևիլ,— գոչեց թագավորը:— Լսեցե՛ք, կարելի է կարծել, թե խոսքը վերաբերում է ինչ-որ վանական եղբայրության: Իսկապես, իմ թանկագին կապիտան, իմ մեջ ցանկություն է առաջանում զրկել ձեզ կապիտանական աստիճանից և շնորհել այն օրիորդ դը Շեմրոյին[52], որին ես խոստացել եմ վանքի մայրապետ կարգել: Բայց չկարծեք, թե ես հենց խոսքով կհավատամ ձեզ: Ինձ, պարոն դը Տրևիլ, անվանում են Լյուդովիկոս Արդարադատ և ահա հիմա մենք կտեսնենք...

— Հենց նրա համար, որ ես հույս եմ դնում այդ ար-դարադատության վրա, համբերությամբ և լիակատար հանգստությամբ կսպասեմ ձերդ մեծության վճռին:

— Սպասեցեք, սպասեցեք,— ասաց թագավորը:— Ես չեմ ստիպի երկար սպասել:

Այդ ժամանակ խաղի մեջ բախտն սկսեց դավաճանել թագավորին. նա սկսել էր տանուլ տալ և դեմ չէր լինի,— թող ներվի մեզ այսպիսի արտահայտությունը,— դուրս պրծնելու խաղից: Մի քանի րոպեից թագավորը ոտքի ելավ և գրպանը դնելով առջևում դարսված փողերը, որ համարյա ամբողջը տարել էր, ասաց.

— Լը Վիվիլ, գրավեցեք իմ տեղը: Ես պետք է խոսեմ պարոն դը Տրևիլի հետ մի կարևոր գործի մասին: Ա՛խ, այո, այստեղ ես մի ութսուն լուի[53] ունեի, դրեք մի այդքան, որ տարվողները չտուժեն: Ամենից առաջ արդարություն:

Ապա նա դարձավ դը Տրևիլին:

— Այսպես ուրեմն, պարոն,— խոսեց նա դը Տրևիլի հետ ուղղվելով դեպի լուսամուտներից մեկը,— դուք պնդում եք, որ նորին սրբազնության գվարդիականներն են վեճ սկսել ձեր հրացանակիրների հետ:

— Այո, ձերդ մեծություն, ինչպես և միշտ:

— Ինչպե՞ս է տեղի ունեցել այդ ամենը, պատմեցեք: Հավանորեն ձեզ հայտնի է, իմ թանկագին կապիտան, որ դատավորը պետք է երկու կողմերին էլ լսի:

— Տե՛ր իմ աստված: Այդ ամենը տեղի է ունեցել միանգամայն հասարակ ձևով: Իմ երեք լավագույն զինվորները,— նրանց անունները լավ հայտնի են ձերո՞ւմ մեծությանը, որը շատ անգամ է առիթ ունեցել գնահատելու, նրանց հավատարմությունը, իսկ նրանք, կարող եմ հավատացնել, ձերո՞ւմ մեծություն, ամբողջ հոգով նվիրված են իրենց ծառայությանը,— այսպես ուրեմն, իմ երեք զինվորները՝ Աթոսը, Պորտոսը և Արամիսը պատրաստվում են զբոսանքի գնալու մի երիտասարդ գասկոնացու հետ, որին հենց այսօր առավոտյան ես հանձնել էի նրանց ուշադրությանը: Նրանք, եթե չեմ սխալվում, մտադիր են եղել գնալ Սեն Ժերմեն, և հանդիպման վայր են նշանակել Դեշո վանքի մոտի դաշտը: Հանկարծ, որտեղից որտեղ, լույս է ընկնում պարոն դը Ժյուսակը՝ պարոն Կայուզակի, Բիկարայի և էլի երկու գվարդիականների ուղեկցությամբ: Այս պարոններն այդպիսի մեծ խմբով այստեղ են գալիս, ըստ երևույթին, հրովարտակը խախտելու մտադրությամբ:

— Այդպե՛ս, այդպե՛ս, ես միայն հիմա եմ հասկա-նում,— ասաց թագավորը:— Նրանք իրե՛նք են մտադիր եղել մենամարտել այդտեղ:

— Ես նրանց չեմ մեղադրում, ձերո՞ւմ մեծություն, սակայն ձերո՞ւմ մեծությունն ինքը կարող է դատել, ի՞նչ նպատակով հինգ հոգի զինված կգնան այնպիսի մի ամայի տեղ, ինչպիսին է կարմելիտների վանքի շրջակայքը:

— Դուք իրավացի եք, Տրևիլ, իրավացի եք:

— Սակայն տեսնելով իմ հրացանակիրներին՝ նրանք իրենց մտադրությունը փոխում են, և անձնական թշնամությունը տեղի է տալիս գնդերի միջև եղած թշնամանքին: Ձերո՞ւմ մեծությանը հո հայտնի է, որ հրացանակիրները, որոնք նվիրված են թագավորին և միմիայն թագավորին, վաղեմի թշնամի են գվարդիականներին, որոնք նվիրված են պարոն կարդինալին:

— Այո, Տրևիլ, այո,— տխրությամբ ասաց թագավորը:— Շատ ցավալի բան է Ֆրանսիայում տեսնել այդ բաժա-նումը երկու բանակների: Շատ ցավալի բան է, որ թագավորությունը երկու գլուխ ունի: Բայց այդ ամենի վերջը կգա, Տրևիլ, այդ ամենը կվերջանա... Եվ այդպես, դուք ասում եք, որ գվարդիականները կո՞ի՞վ են սկսել հրացանակիրների հետ:

— Ես ասում եմ, որ հավանորեն հենց այդպես է եղել: Սակայն երաշխավորել չեմ կարող: Ձեզ հայտնի է, թե որքան դժվար է ճշմարտությունը պարզել: Դրա համար պետք է ունենալ այն արտասովոր խորաթափանցությունը, որի շնորհիվ Լյուդովիկոս XIII-ը կոչվել է Լյուդովիկոս Արդարադատ:

— Դուք իրավացի եք, Տրևիլ: Բայց ձեր հրացանակիրները մենակ չեն եղել, նրանց հետ եղել է մի պատանի, համարյա երեխա:

— Այո, ձերդ մեծություն, և մեկն էլ վիրավորված է եղել, այնպես որ թագավորական երեք հրացանակիրները, որոնցից մեկն էլ վիրավորված է եղել, և նրանց հետ մի երեխա, կարողացել են դիմադրել պարոն կարդինալի հինգ ամենահռչակված գվարդիականներին և նույնիսկ նրանցից չորսին ցած են գցել:

— Բայց դա հո հաղթանակ է,— գոչեց թագավորը շողալով:— Կատարյալ հաղթանակ:

— Այո, ձերդ մեծություն, նույնքան կատարյալ, որքան Սեի[54] մոտ:

— Չորս մա՞րդ, ասացիք, որոնցից մեկը վիրավորված և մեկը համարյա երեխա՞:

— Հազիվ թե նրան կարելի է նույնիսկ երիտասարդ անվանել: Բայց այդ ընդհարման ժամանակ նա իրեն այնպես լավ է պահել, որ ես համարձակվում եմ նրա համար երաշխավոր լինել ձերդ մեծության առաջ:

— Ինչպե՞ս է նրա անունը:

— Դ՛Արտանյան, ձերդ մեծություն: Դա իմ ամենահին բարեկամներից մեկի որդին է: Որդին է մի մարդու, որը ձերդ մեծության հոր հետ մասնակցել է պատերազմին որպես կամավոր:

— Եվ ասում եք այդ պատանին լա՞վ է պահել իրեն: Ավելի մանրամասն պատմեցեք ինձ, Տրևիլ, դուք հո գի-տեք, որ ես սիրում եմ պատմություններ լսել կռիվների, ու ճակատամարտերի մասին:

Եվ Լյուդովիկոս XIII թագավորը, հպարտորեն ետ ընկնելով, բեղը ոլորեց:

— Ձերդ մեծություն,— շարունակեց դը Տրևիլը,— պարոն դ'Արտանյանը, որն համարյա դեռ փոքրիկ տղա է, պատիվ չունենալով հրացանակիր լինելու, հագած է եղել քաղաքացու հագուստ: Պարոն կարդինալի գվարդիականները, նկատի առնելով նրա խիստ ջահելությունը և մանավանդ այն, որ նա գնդին չի պատկանում, նրան առաջարկել են հեռանալ, քանի դեռ իրենք հարձակում չեն գործել:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, Տրևիլ,— ընդհատեց նրան թագավորը,— ուրեմն առաջինը նրանք են հարձակվել:

— Միանգամայն ճիշտ է, ձերդ մեծություն, այդ կասկածից դուրս է: Եվ այսպես, նրանք դ'Արտանյանին առաջարկել են հեռանալ, սակայն նա պատասխանել է, որ ինքը հոգով հրացանակիր է և ամբողջովին նվիրված ձերդ մեծությանը, հետևապես, մնում է պարոնայք հրա-ցանակիրների հետ:

— Հիանալի՛ պատանի,— շնչաց թագավորը:

— Նա իսկապես մնացել է հրացանակիրների հետ, և ձերդ մեծությունը հիանալի զինվոր է ձեռք բերել, որովհետև հենց նա է, որ իր սուսերով պարոն դը Շյուսակին հասցրել է այն զարհուրելի հարվածը, որն այդպիսի զայրույթ է պատճառել կարդինալին:

— Այդ նա՞ է վիրավորել Շյուսակին,— գոչեց թագավորը:— Նա՞, այդ տղա՞ն: Անկարելի բան է, Տրևիլ՛:

— Ամեն ինչ տեղի է ունեցել այնպես, ինչպես ես պատիվ ունեցա զեկուցելու ձեզ:

— Շյուսակը ամբողջ Ֆրանսիայում ամենալավ սուսերամարտիկներից մեկն է:

— Ի՛նչ կա որ, ձերդ մեծություն: Նա դեմ է առել մի հակառակորդի, որը գերազանցում է իրեն:

— Ես ուզում եմ տեսնել այդ պատանուն, Տրևիլ, ես ուզում եմ տեսնել նրան և եթե կարելի է նրա համար որևէ բան անել, ապա մենք կգրադվենք դրանով:

— Ձերդ մեծությունը ե՞րբ կբարեհաճի ընդունել նրան:

— Վաղը կեսօրին, Տրևիլ՝:

— Նրան մենա՞կ բերեմ:

— Ո՛չ, չորսին էլ միասին բեր: Ես ուզում եմ նրանց բոլորին շնորհակալություն հայտնել միաժամանակ: Նվիրված մարդիկ հաճախ չեն հանդիպում, Տրևիլ, և նվիրվածությունը արժանի է պարգևատրման:

— Կեսօրին, ձերդ մեծություն, մենք կլինենք Լուվրում:

— Փոքր մուտքից, Տրևիլ, փոքր մուտքից: Կարիք չկա, որ կարդինալն իմանա...

— Լսում եմ, ձերդ մեծություն:

— Դուք հասկանում եք, Տրևիլ. հրովարտակը, այ-նուամենայնիվ, հրովարտակ է: Չէ՞ որ, վերջիվերջո, արգելված է մենամարտել:

— Բայց այս ընդհարումը, ձերդ մեծություն, բոլորովին դուրս է գալիս սովորական մենամարտի շրջանակից: Սա ընդհարում է, և դրա լավագույն ապացույցն այն է, որ կարդինալի գվարդիականները եղել են հինգ հոգի իմ երեք հրացանակիրների և պարոն դ'Արտանյանի դեմ:

— Ճշմարիտ է,— ասաց թագավորը:— Բայց և այնպես, Տրևիլ, եկեք փոքր մուտքից:

Տրևիլը ժպտաց: Նա հասել էր այն բանին, որ այդ երեխան վրդովվել էր իր ուսուցչի դեմ, և այդ արդեն շատ բան էր: Նա հարգալից խոնարհվեց թագավորի առաջ և նրա թույլտվությունը խնդրելով՝ հեռացավ:

Նույն երեկոյան բոլոր հրացանակիրներն էլ տեղյակ դարձան այն պատվին, որին արժանանալու էին իրենք: Վաղուց ճանաչելով թագավորին՝ նրանք այնքան էլ շատ հուզված չէին: Բայց դ'Արտանյանը գասկոնացու իր երևակայությամբ այդ բանի մեջ տեսնում էր իր ապագա հաջողությունների նախանշանը և ամբողջ գիշեր ամենավարդագոյն պատկերներ էր երևակայում: Առավոտյան ժամը ութին նա արդեն Աթոսի մոտ էր:

Դ'Արտանյանը հրացանակրին գտավ արդեն հագնված և դուրս գալու պատրաստ: Քանի որ ընդունելությունը թագավորի մոտ նշանակված էր կեսօրին, նա Պորտոսի և Արամիսի հետ պայմանավորվել էր գնալ Լյուքսեմբուրգյան ախոռի մոտ գտնվող պանդոկը և այնտեղ գնդակ խաղալ: Աթոսը դ'Արտանյանին հրավիրեց իր հետ գնալ այնտեղ, և սա համաձայնեց, թեպետ և այդ խաղին ծանոթ չէր: Ընդամենը դեռ առավոտվա ժամը իննին մոտ էր, և նա չգիտեր, թե մինչև տասներկուսը ինչպես անցկացնի ժամանակը:

Պորտոսն ու Արամիսն արդեն այնտեղ էին և զվար-ճության համար գնդակ էին նետում իրար: Աթոսը, որ բոլոր մարմնական վարժություններում աչքի էր ընկնում մեծ ճարպկությամբ, դ'Արտանյանի հետ կանգնեց հրապարակի մյուս կողմում և նրանց առաջարկեց սկսել: Սակայն առաջին իսկ շարժումին, թեև ձախ ձեռքով էր խաղում, նա հասկացավ, որ իր վերքը դեռ խիստ թարմ է այդպիսի վարժությունների համար: Այսպիսով՝ դ'Արտանյանը մենակ մնաց, և որովհետև նա նախազգուշացրել էր, որ դեռ խիստ անփորձ է բոլոր կանոններով խաղալու համար, ուստի երկու հրացանակիրները շարունակում էին միայն գնդակ նետել իրար՝ առանց շահած միավորները հաշվելու: Գնդակներից մեկը, որ նետվել էր Պորտոսի զորեղ ձեռքով, այնպես թռավ, որ քիչ մնաց պիտի դիպչեր դ'Արտանյանի երեսին, և պատանին մտածեց, որ եթե գնդակը մոտով չանցներ, այլ երեսին դիպչեր, ընդունելությունը, հավանորեն, չէր կարող տեղի ունենալ, որովհետև ինքն ի վիճակի չէր լինի պալատ ներկայանալու: Բայց չէ՞ որ, ինչպես պատկերացնում էր նա իր գասկոնացու երևակայությամբ, այդ ընդունելությունից էր կախված իր ապագան: Նա հարգալից գլուխ տվեց Պորտոսին ու Արամիսին և ասաց, որ խաղը կշարունակի, երբ ընդունակ կլինի իր ուժերով չափվելու նրանց հետ: Այս ասելով նա հեռացավ պարանից և տեղ գրավեց հանդիսականների մեջ:

Ի դժբախտություն դ'Արտանյանի՝ հանդիսականների մեջ կար նորին սրբազնության զվարդիականներից մեկը: Կատաղած լինելով այն պարտությունից, որ

հենց նախորդ օրը կրել էին նրա ընկերները, այս գվարդիականը երդվել էր ընկերների վրեժն առնել: Դեպքը նրան հարմար թվաց:

— Ջարմանալի չէ՞,— ասաց նա՝ դառնալով իր հարևանին,— որ այս պատանին վախեցավ գնդակից: Սա երևի հրացանակիրների աշակերտն է:

Դ'Արտանյանը շուտ եկավ այնպիսի թափով, ասես օձը խայթեց նրան և խոժոռ նայեց այն գվարդիականին, որն այս հանդուգն խոսքերն ասաց:

— Ի՞նչ կա,— շարունակեց գվարդիականը՝ ծաղրաբար ոլորելով բեղը:— Նայեցեք ինձ որքան կուզեք, սիրելիս, ես ասացի այն, ինչ որ ասացի:

— Իսկ քանի որ ձեր ասածը շատ պարզ է և բացատրություններ չի պահանջում,— պատասխանեց դ'Արտանյանը,— ես խնդրում եմ ձեզ հետևել ինձ:

— Այսինքն ե՞րբ,— հարցրեց գվարդիականը նույն ծաղրական տոնով:

— Հենց այս րոպեին, խնդրում եմ ձեզ:

— Ձեզ, հուսով եմ, հայտնի է, թե ով եմ ես:

— Դա ինձ ամենևին հայտնի չէ, և բացի այդ, ինձ համար միևնույն է:

— Իզո՞ւր: Կարող է պատահել, որ եթե իմ անունն իմանայիք, այդպես չչտապեիք:

— Ի՞նչ է ձեր անունը:

— Բերնաժու, ձեզ ծառա:

— Այդպես ուրեմն, պարոն Բերնաժու,— հանգիստ պատասխանեց դ'Արտանյանը,— ես ձեզ կսպասեմ մուտքի մոտ:

— Գնացեք, պարո՛ն: Ես գալիս եմ ձեր հետևից:

— Ավելորդ շտապողականություն մի ցուցաբերեք, պարո՛ն, որպեսզի ոչ ոք չնկատի, որ մենք միասին դուրս եկանք: Այն գործի համար, որով մենք պետք է զբաղվենք, մեզ ավելորդ վկաներ պետք չեն:

— Լավ,— համաձայնեց գվարդիականը, զարմացած՝ որ իր անունը պետք եղած տպավորությունը չգործեց:

Բերնաժուի անունը, իրոք որ, հայտնի էր բոլորին, թերևս, բացառությամբ միայն դ'Արտանյանի: Որովհետև դա անունն էր մի մարդու, որը մասնակից էր լինում համարյա բոլոր կռիվներին ու ընդհարումներին, որոնք չնայած թագավորի ու կարդինալի հրամաններին, տեղի էին ունենում ամեն օր:

Պորտոսը և Արամիսն այնքան էին տարվել խաղով, Աթոսն էլ այնպես ուշադիր էր նայում նրանց, որ ոչ մեկը նույնիսկ չնկատեց էլ երիտասարդի դուրս գնալը, որը, ինչպես խոստացել էր կարդինալի գվարդիականին, կանգ առավ շեմքում: Մի քանի րոպեից գվարդիա-կանը հետևեց նրան: Դ'Արտանյանը շտապում էր, վախենալով, թե կուշանա թագավորի ընդունելությանը, որ նշանակված էր կեսօրին: Շուրջը նայելով՝ նա տեսավ, որ փողոցը դատարկ է:

— Ազնիվ խոսք,— ասաց նա դառնալով իր հակառակորդին,— թեպետև դուք կոչվում եք Բերնաժու, բայց ձեր բախտը բանեց. դուք հանդիպել եք միայն աշակերտ-հրացանակրի: Ասենք՝ մի՛ անհանգստանաք, ես կանեմ՝ ինչ որ կարող եմ: Պաշտպանվեցե՛ք:

— Ինձ թվում է,— ասաց գվարդիականը, որին դ'Արտանյանը մարտի էր կանչում,— ինձ թվում է, որ անհաջող տեղ է ընտրված: Մեզ համար ավելի հարմար կլիներ Սեն Ժերմենի աբբատության այն կողմը մի որևէ տեղ, կամ Պրե-օ-Կլերում:

— Ձեր ասածը միանգամայն խելամիտ է,— պատասխանեց դ'Արտանյանը:— Բայց, դժբախտաբար, ես ժամանակ քիչ ունեմ: Ուղիղ տասներկուսին ես տեսակցություն ունեմ նշանակված: Ուստի պաշտպանվեցե՛ք, պարո ն, պաշտպանվեցե՛ք:

Բերնաժուն այնպիսի մարդ չէր, որ հարկ լիներ կրկնել նրան այդ մարտահրավերը: Նույն վայրկյանին սուսերը շողաց նրա ձեռքում, և նա նետվեց

հակառակորդի վրա, որին, նկատի առնելով նրա ջանքերը, հույս ունենալով փախցնելով փախցնել:

Սակայն դ'Արտանյանը նախորդ օրն արդեն լավ դպրոց էր անցել: Դեռևս ամբողջ մարմնով դողալով հաղթանակի գիտակցությունից, այրվելով սպասվող ողորմածությունից, նա լի էր ոչ մի քայլ չնահանջելու վճռականությամբ: Սուսերները զրնգոցով խաչաձևվեցին: Դ'Արտանյանը պինդ էր դիմանում, և հակառակորդը ստիպված եղավ քայլ նահանջել: Օգտվելով այն բանից, որ այդ շարժումն անելիս Բերնաժուի սուսերը մի փոքր թեքվեց, դ'Արտանյանը իր սուսերն ազատելով առաջ նետվեց և սայրը խփեց հակառակորդի ուսին: Ապա իսկույն սուսերը վեր բարձրացնելով մի քայլ ետ ցատկեց: Սակայն Բերնաժուն ձայն տվեց նրան, թե այդ դատարկ բան է, և համարձակորեն առաջ նետվելով՝ ինքը դիպավ դ'Արտանյանի սուսերի սայրին: Այնուամենայնիվ, որովհետև նա չէր ընկել և իրեն պարտված չէր համարում, այլ միայն նահանջում էր պարոն դը Լա Տրեմուլի[55] առանձնատան կողմը, որտեղ ծառայում էր նրա ազգականներից մեկը, ապա դ'Արտանյանը, չիմանալով, թե որքան վտանգավոր է վերջին վերքը, որ ինքը հասցրեց հակառակորդին, համառորեն նեղում էր նրան և հավանաբար վերջ կտար նրա կյանքին: Սակայն փողոցի աղմուկը լսվեց այն շենքի ներսում, որտեղ գնդակ էին խաղում: Գվարդիականի ընկերներից երկուսը, որոնք նկատել էին, թե իրենց ընկերն ինչպես մի քանի խոսք փոխանակեց դ'Արտանյանի հետ, ապա դուրս գնաց նրա հետևից, սուսերները դուրս քաշելով փողոց նետվեցին և հարձակվեցին հաղթողի վրա: Բայց հենց այդ նույն ակնթարթին Աթոսը, Պորտոսը և Արամիսը նույնպես երևացին շենքում և հարձակվելով երկու գվարդիականների, որոնք գրոհել էին նրանց երիտասարդ ընկերոջը, ստիպեցին երեսներն իրենց կողմը դարձնել: Այս պահին Բերնաժուն ընկավ, և գվարդիականները տեսնելով, որ երկու-սով չորսի դեմ մնացին, աղաղակ բարձրացրին:

— Օգնեց՛ք, դը Լա Տրեմուլի՛ մարդիկ:

Այս կանչի վրա դը Լա Տրեմուլի տանից դուրս թափվեցին բոլորը, ովքեր կային այնտեղ և հարձակվեցին չորս հրացանակիրների վրա:

Բայց այդ ժամանակ հրացանակիրներն էլ իրենց հերթին մարտակոչ արին՝ «Հրացանակիրնե՛ր, օգնությա՛ն հասեք»:

Այդ կոչին միշտ արձագանքում էին: Բոլորը գի-տեին, որ հրացանակիրները նորին սրբազնության թշնամիներն են, և հենց այդ թշնամության համար էլ նրանք սեր էին վայելում: Ուստի մյուս գնդերի գվարդիականները, որոնք չէին ծառայում Կարմիր Դուքսին, ինչպես անվանել էր նրան Արամիսը, այսպիսի ընդհարումների ժամանակ թագավորի հրացանակիրների կողմն էին բռնում: Հենց այդ պահին մոտիկից անցնում էին պարոն Դեզեսարի գնդի երեք գվարդիականներ, և նրանցից երկուսը նետվեցին օգնելու չորս ընկերներին, իսկ երրորդը վազեց դեպի դը Տրևիլի տուն՝ բղավելով.

— Օգնությո՛ւն, հրացանակիրնե՛ր, օգնությո՛ւն:

Ինչպես միշտ, պ-րն դը Տրևիլի տան բակը լիքն էր նրա գնդի զինվորներով, որոնք նետվեցին օգնելու իրենց ընկերներին: Ստացվեց մի ընդհանուր գոտեմարտ, բայց գերակշռությունը հրացանակիրների կողմն էր: Կարդինալի գվարդիականները և դը Լա Տրեմուլի մարդիկ նահանջեցին դեպի տան բակը և հագիվ կարողացան դարպասը փակել իրենց հետևից, որպեսզի հակառակորդը չներխուժի իրենց հետ: Վիրավորված Բերնաժուն ծանր վիճակում մինչ այդ արդեն տուն էր փոխադրվել:

Հրացանակիրների ու նրանց դաշնակիցների միջև ծագած գժտությունը ծայրաստիճան լարվել էր, և արդեն հարց էր ծագում, թե պետք չէ՞ արդյոք վառել դը Լա Տրեմուլի տունը, որպես վրեժխնդրություն այն բանի, որ նրա մարդիկ համարձակվել են հարձակվել թագավորի հրացանակիրների վրա: Ինչ-որ մեկի արած այս առաջարկությունը ցնծությամբ ընդունվեց, սա-կայն, բարեբախտաբար, ժամը տասնմեկը խփեց: Դ՛Արտանյանն ու նրա ընկերները հիշեցին ընդունելության մասին և վախենալով, թե այդպիսի մի հիանալի բան առանց իրենց մասնակցության կանեն, աշխատում էին հանգստացնել այդ տաքգլուխներին: Այնուամենայնիվ մի քանի քար նետվեց դարպասի վրա: Սակայն դարպասն ամուր էր: Այդ բանը մի փոքր պաղեցրեց ամբոխին: Բացի դրանից. պարագլուխներն արդեն բաժանվել էին ամբոխից և ուղղվել դեպի դը Տրևիլի տուն, որտեղ դը Տրևիլն արդեն դեպքին իրազեկ՝ սպասում էր նրանց:

— Շո՛ւտ դեպի Լո՛ւվր,— ասաց նա:— Դեպի Լո՛ւվր, առանց մի բուպե կորցնելու, և աշխատեցեք տեսնվել թագավորի հետ ավելի շուտ, քան կարդինալը կկարողանա նախազգուշացնել նրան: Մենք այս գործը նրան կներկայացնենք որպես երեկվա դեպքի շարունակություն, և երկուսն էլ մեկի տեղ կանցնեն:

Պարոն դը Տրևիլը չորս ընկերների ուղեկցությամբ շտապեց Լուվր: Բայց այնտեղ, ի մեծ զարմանս հրացանակիրների կապիտանի, նրան հաղորդեցին, որ թագավորը գնացել էր Սեն Ժերմենի անտառը՝ եղջերուի որսի: Պարոն դը Տրևիլը ստիպեց երկու անգամ կրկնել այդ նորությունը և ամեն անգամ ավելի շատ էր մռայլվում:

— Նորին մեծությունը երե՞կ էր որոշել որսի գնալ,— հարցրեց նա:

— Ոչ, ձերդ գերազանցություն,— պատասխանեց սենեկապետը:— Այսօր առավոտյան գլխավոր որսապետը նրան զեկուցեց, որ գիշերը նրա համար մի եղջերու են շուրջկալել: Թագավորը սկզբում ասաց, որ չի գնա, հետո, չկարողանալով հրաժարվել այդպիսի բավականությունից, ճաշից հետո գնաց:

— Մեկնելուց առաջ թագավորը տեսակցե՞ց կարդինալի հետ,— հարցրեց պարոն դը Տրևիլը:

— Ամենայն հավանականությամբ՝ այո,— պատասխանեց սենեկապետը:— Այսօր առավոտյան ես մուտքի մոտ տեսա նորին սրբազնության կառերը՝ ձիերը լծած: Ես հարցրի, թե ո՞ր է ուզում գնալ նա, ինձ պատասխանեցին՝ Սեն Ժերմեն:

— Մեզնից առաջ են ընկել,— ասաց դը Տրևիլը:— Այսօր երեկոյան, պարոններ, ես կտեսնեմ թագավորին: Իսկ ինչ վերաբերում է ձեզ, խորհուրդ եմ տալիս չերևալ նրա աչքին:

Սա խելացի խորհուրդ էր, իսկ գլխավորը՝ բխում էր թագավորին այնքան լավ ճանաչող մարդուց, այնպես որ չորս ընկերները նույնիսկ չփորձեցին վիճել նրա հետ: Պարոն դը Տրևիլը նրանց առաջարկեց ցրվել տները և հետագա տեղեկություններ սպասել իրենից:

Տուն վերադառնալով՝ դը Տրևիլը մտածեց, որ հարկավոր է շտապել և առաջինը գանգատ տալ: Նա իր ծառաներից մեկին ուղարկեց պ-րն դը Լա Տրեմուլի մոտ, տալով մի նամակ, որով խնդրում էր նրան իր տանից վռնդել այն գվարդիականին, որը կարդինալի ծառայության մեջ է, և հանդիմանություն անել իր մարդկանց, որ համարձակվել են հարձակվել հրացանակիրների վրա: Պ-րն դը Լա Տրեմուլը, արդեն իսկ նախազգուշացված լինելով իր ախտապետի կողմից, որը, ինչպես հայտնի է,

Բերնաժուի ազգականն էր, պատասխանեց, որ ո՛չ պ-րն դը Տրևիլը և ոչ էլ նրա հրացանակիրները պիտի գանգատվեն, այլ ընդհակառակն, պետք է որ հենց ինքը գանգատվեր, որովհետև հրացանակիրներն են գրոհել իր ծառաների վրա և նույնիսկ ցանկացել են վառել իր տունը: Վեճը այս երկու ազնվականների միջև կարող էր երկար շարունակվել և, իհարկե, նրանցից ամեն մեկը իր ասածը կպնդեր, սակայն դը Տրևիլը գտավ մի ելք, որը պետք է ամեն ինչ պարզեր: Նա որոշեց անձամբ գնալ պ-րն դը Լա Տրեմուլի մոտ:

Հասնելով պ-րն դը Լա Տրեմուլի տուն՝ նա հրամայեց զեկուցել իր գալու մասին:

Ազնվականները հարգալից ողջունեցին իրար: Թեպետև ընկերական կապերով կապված չէին, բայց և այնպես նրանք փոխադարձաբար հարգում էին իրար: Երկուսն էլ պատվասեր և մեծ հոգու տեր մարդիկ էին: Եվ որովհետև դը Լա Տրեմուլը բողոքական լինելով հազվադեպ էր արքունիք գնում և ոչ մի կուսակցության չէր պատկանում, ուստի սովորաբար մարդկանց հետ իր փոխհարաբերություններում կանխակալ կարծիք չէր մտցնում: Այս անգամ դը Տրևիլը թեպետև հարգանքով ընդունվեց, սակայն ավելի սառը, քան միշտ:

— Պարոն,— խոսեց հրացանակիրների կապիտանը:— Մենք երկուսս էլ մեզ վիրավորված ենք զգում, և ես եկել եմ ձեզ մոտ, որպեսզի միասին պարզենք գործի բոլոր հանգամանքները:

— Սիրով,— պատասխանեց դը Լա Տրեմուլը:— Բայց նախազգուշացնում եմ ձեզ, որ ես քաջատեղյակ եմ, ամբողջ մեղքը ձեր հրացանակիրների վրա է ընկնում:

— Դուք, պարոն, շատ խոհեմ ու արդարամիտ մարդ եք և չեք հրաժարվի այն առաջարկությունից, որով եկել եմ ես ձեզ մոտ:

— Խնդրեմ, պարոն, ես լսում եմ ձեզ:

— Ինչպե՞ս է զգում իրեն պարոն Բերնաժուն, ձեր ախոռապանի ազգականը:

— Շատ վատ, պարոն: Բացի թիակի վերքից, որը ոչ մի վտանգ չի ներկայացնում, նրան տրվել է նաև երկրորդ հարվածը, որը դիպել է թոքին: Բժիշկը համարյա հույս չունի, թե նա կապաքինվի:

Վիրավորի գիտակցությունը տե՞ղն է:

— Այո, լիովին:

— Նա կարո՞ղ է խոսել:

— Դժվարությամբ, բայց խոսում է:

— Դե ուրեմն, պարոն, գնանք նրա մոտ և աստծու անունով, որի առաջ գուցե թե նրան վիճակված է շուտով կանգնել, երդվել տանք՝ ասելու ճշմարտությունը: Թող նա ինքը դատավոր լինի իր սեփական գործին, պարոն, և ես կհավատամ ամենին, ինչ որ նա կասի:

Պ-րն դը Լա Տրեմուլը մի պահ մտածեց, բայց գտնելով, որ դրանից ավելի խելացի առաջարկություն անել դժվար է, իսկույն համաձայնեց: Նրանք երկուսն էլ իջան այն սենյակը, որտեղ պառկած էր վիրավորը: Տեսնելով այդ անվանի պարոններին, որոնք եկել էին իրեն այցելության, հիվանդը փորձեց մահճակալից բարձրանալ, բայց այնքան թույլ էր, որ իր գործադրած ջանքերից ուժասպառ եղած՝ նորից վայր ընկավ՝ համարյա գիտակցությունը կորցրած:

Պ-րն դը Լա Տրեմուլը մոտեցավ նրան, քթին հպեց ինչ-որ աղանման փռշի, որը և նրան ուշքի բերեց: Այն ժամանակ պ-րն դը Տրեմուլը չցանկանալով, որ իրեն մեղադրեն հիվանդի վրա ճնշում գործադրելու մեջ, դը Լա Տրեմուլին առաջարկեց, որ ինքը հարցեր տա վիրավորին: Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես ենթադրում էր պ-րն դը Տրեմուլը: Կյանքի ու մահվան միջև գտնվելով՝ Բերնաժուն չկարողացավ ճշմարտությունը թաքցնել: Եվ նա պատմեց ամեն ինչ այնպես, ինչպես իրոք եղել էր:

Դը Տրեմուլը հենց միայն դրան էր սպասում: Նա Բերնաժուին շուտափույթ ապաքինում ցանկացավ, հրաժեշտ տվեց դը Լա Տրեմուլին, վերադարձավ իր տուն և իսկույն մարդ ուղարկեց չորս ընկերների մոտ՝ ասելու, որ սպասում է նրանց ճաշին:

Պ-րն դը Տրեմուլի մոտ ընտիր հասարակություն էր հավաքվել, ի դեպ՝ բոլորը կարդինալի հակառակորդներ: Ուստի հասկանալի է, որ ամբողջ ճաշի ընթացքում խոսակցությունը պտտվում էր նորին սրբազնության գվարդիականների երկու անգամ

կրած պարտության շուրջը: Եվ որովհետև դ՛Արտանյանը երկու կռիվներում էլ հերոս էր եղել, ապա հենց նրա վրա էին տեղում բոլոր գովասանքները, իսկ Աթոսը, Պորտոսը և Արամիսը ուրախ էին այդ գովասանքները նրան զիջելու ոչ միայն որպես լավ ընկերներ, այլև որպես մարդիկ, որոնց այնքան հաճախ էին գովաբանել, որ այս անգամ նրանք կարող էին հրաժարվել իրենց բաժնից:

Ժամը վեցին մոտ դը Տրևիլը հայտարարեց, որ ժամանակն է Լուվր գնալու, որովհետև ընդունելության համար նշանակված ժամն անցել էր, նա արդեն փոքր մուտքով անցնելու թույլտվություն չի ստացել, այլ իր չորս ուղեկիցների հետ տեղ գրավեց ընդունարանում: Թագավորը դեռ որսից չէր վերադարձել: Արդեն մոտ կես ժամ էր, ինչ մեր երիտասարդ բարեկամները սպասում էին, մեկ էլ հանկարծ բոլոր դռները բացվեցին, և ազդարարվեց նորին մեծության ժամանումը: Դ՛Արտանյանը դողում էր: Հաջորդ րոպեները, ըստ երևույթին, պետք է վճռեին նրա հետագա բախտը: Շունչը պահած նա հայացքը հառել էր այն դռանը, որով պետք է ներս մտնեք թագավորը:

Լյուդովիկոս XIII-ը երևաց շեմքում: Նա իր ուղեկիցներից առաջ էր ընկել: Հագին բոլորովին փոշոտված որսորդական հագուստ էր և բոտֆորտներ[56]: Ձեռքին մի մտրակ ուներ: Առաջին իսկ հայացքից դ՛Արտանյանը հասկացավ, որ փոթորիկն անխուսափելի է:

Որքան էլ ակնհայտ էր, որ թագավորի տրամադրությունը լավ չէ, այնուամենայնիվ բոլոր պալատականները շարվեցին նրա ճանապարհի երկարությամբ. թագավորական ընդունարաններում գերադասում են ցատումնալից հայացքի տակ ընկնել, քան ամենևին չարժանանալ հայացքի: Դրա համար էլ երեք հրացանակիրներն առանց տատանվելու առաջ քայլեցին, այնինչ դ՛Արտանյանը, ընդհակառակն, աշխատում էր թաքնվել նրանց թիկունքներում: Եվ թեպետ թագավորը Աթոսին, Պորտոսին ու Արամիսին դեմքով ճանաչում էր, այնուամենայնիվ անցավ նրանց մոտով, նույնիսկ չնայելով, ոչ մի խոսք չասելով, ասես երբեք նրանց չէր տեսել: Ինչ վերաբերում է դը Տրևիլին, երբ թագավորի հայացքը կանգ առավ նրա վրա, նա այնպիսի ամրությամբ դիմացավ այդ հայացքին, որ թագավորն ակամա իր հայացքը հեռացրեց: Դրանից հետո նորին մեծությունը ինչ-որ անհասկանալի հնչյուններ արտասանելով անցավ իր սենյակները:

— Գործերը վատ են,— ժպտալով ասաց Աթոսը:— Այս անգամ էլ մենք օրդենի ասպետ չենք դառնա:

— Սպասեցեք այստեղ մի տասը րոպե,— ասաց պ-րն Տրևիլը:— Եվ եթե այդ ժամանակամիջոցում ես չգամ, գնացեք իմ տուն. այլևս սպասելն անօգուտ կլինի:

Չորս ընկերները սպասեցին տասը րոպե, տասնհինգ րոպե, քսան րոպե: Տեսնելով, որ դը Տրևիլը չի երևում, նրանք հեռացան շատ անհանգստացած:

Մինչ այդ պարոն դը Տրևիլը համարձակորեն մտավ թագավորի կաբինետը և նորին մեծությանը գտավ շատ վատ տրամադրության մեջ: Թագավորը բազկաթոռին նստած՝ մտրակի կոթով թխկթխկացնում էր բոտֆորտին: Դը Տրևիլը առանց շփոթվելու հանգիստ հարցրեց նրա առողջությունը: — Վատ է, պարոն, ես վատ եմ զգում ինձ,— պատասխանեց թագավորը:— Տխուր եմ:

Դա իսկապես Լյուդովիկոս XIII-ի ամենաձանր հիվանդություններից մեկն էր: Պատահում էր՝ նա իր մերձավորներից որևէ մեկին մոտեցնում էր լուսամուտին և ասում. «Տխուր եմ, պարոն: Եկեք միասին տխրենք»:

— Ինչպե՛ս,— գոչեց դը Տրևիլը:— Ձերդ մեծությունը տխո՞ւր է: Մի՞ թե այս օր որսը զվարճություն չպատճառեց ձեզ:

— Զվարճությո՛ւն, ինչպե՛ս չէ,— փնթփնթաց թագավորը:— Ամեն ինչ այլասերվում է, հոգիս է վկա: Էլ չգիտեմ, ո՞րսն է, որ այլևս հետք չի թողնում թե շներն են հոտառությունը կորցրել: Մենք հալածում ենք մի մեծ եղջերու, վեց ժամ հետապնդում ենք նրան, և ահա, երբ արդեն համարյա հասել ենք, և Սեն Սիմոնը[57] բարձրացնում է եղջուրը, որ հաղթանակի փողը փչի. հանկարծ ամբողջ ոհմակը մի կողմ է շրջվում և նետվում ինչ-որ մի տարեկան հորթուկի վրա: Ա՛յ, կտեսնեք, ես ստիպված կլինեմ հրաժարվել որսին հետապնդելուց, ինչպես արդեն հրաժարվել եմ բազեով որս անելուց: Ախ, պարոն դը Տրևիլ, ես դժբախտաբար թագավոր եմ: Ինձ մնացել էր միայն մեկ ճախրաբազե, այն էլ երեք օր առաջ սատկեց:

— Իսկապես, ձերդ մեծություն, ես հասկանում եմ ձեր հուսահատությունը: Մեծ դժբախտություն է: Բայց կարծեմ ձեզ էլի բավական շատ բազեներ, ցիներ և այլ որսաթռչուններ են մնացել:

— Եվ չկա մեկը, որ նրանց վարժեցնի: Բազեպանները վերջանում են: Միայն ես եմ, որ դեռ տիրապետում եմ բազեով որս անելու արվեստին: Ինձնից հետո ամեն ինչ վերջացած կլինի: Կսկսեն որս անել թակարդների, ծուղակների ու որոգայթների օգնությամբ: Գոնե եթե ես կարողանայի աշակերտներ պատրաստել: Բայց ո՛չ, պարոն կարդինալը ոչ մի բռպե հանգիստ չի տա-լիս, շարունակ Իսպանիայի մասին է խոսում, Ավստրիայի մասին է խոսում, Անգլիայի մասին է խոսում: Հա՛, ի դեպ, կարդինալի մասին, պարոն դը Տրևիլ, ես ձեզնից դժգոհ եմ:

Դը Տրևիլը հենց դրան էր սպասում: Նա վաղուց էր ճանաչում թագավորին և հասկանում էր, որ նրա բոլոր գանգատները սուսկ նախաբան են, գրգռող միջոցի պես մի բան, որից նա վճռականություն է քաղում: Միայն հիմա նա կսկսի ասել այն, ինչի մասին պատրաստվում էր խոսել:

— Բայց ինչո՞վ եմ ես դժբախտություն ունեցել մեղանչելու ձերդ մեծության առաջ,— հարցրեց դը Տրևիլը՝ մեծագույն զարմանք արտահայտելով դեմքին:

— Այդպե՞ս եք կատարում դուք ձեր պարտականու-թյունները, պարոն,— շարունակեց թագավորը՝ խուսափելով դը Տրևիլի խոսքին ուղղակի պատասխան տալուց:— Թե՞ նրա համար եմ ես ձեզ հրացանակիրների կապիտան նշանակել, որ ձեր ստորադրյալները մարդկանց կոտորեն, որ ոտքի հանեն մի ամբողջ թաղամաս և փորձեն վառել ամբողջ Փարիզը: Եվ դուք ոչ մի ծպտուն չեք հանում դրա մասին: Ասենք՝ երևի ես իզուր եմ կշտամբում ձեզ,— շարունակեց թագավորը:— Երևի մեղավորներն արդեն կալանքի տակ են, և դուք ներկայացել եք զեկուցելու ինձ, որ նրանց պատիժ է տրված:

— Ոչ, ձերդ մեծություն,— հանգիստ պատասխանեց դը Տրևիլը,— ես եկել եմ ձեզնից դատաստան խնդրելու:

— Բայց ո՞ւմ նկատմամբ,— գոչեց թագավորը:

— Զրպարտիչների,— ասաց դը Տրևիլը:

— Ա՛յ քեզ նորություն,— բացականչեց թագավորը:— Չլինի՞ դուք կփորձեք ժխտել, որ ձեր երեք նգովյալ հրացանակիրները, այդ Աթոսը, Պորտոսը և Արամիսը

այն բեարնացի քաջի հետ միասին հարձակվել են խեղճ Բերնաժուի վրա և այնպես ջարդել, որ հիմա նա երևի մոտ է վերջին շունչը փչելուն: Չլինի՞ կփորձեք ժխտել, որ դրանից հետո նրանք շրջապատել են դուքս դը Լա Տրեմուլի տունը և ցանկացել վառել այն, ասենք, պատերազմի օրերին այդ այնքան էլ վատ չէր լինի, որովհետև այդ տունը իսկական հուզենոտների բույն է, բայց խաղաղ ժամանակ դա կարող էր չափազանց վատ օրինակ ծառայել ուրիշներին: Դե ասացեք տես-նեմ, չլինի՞ ուզում եք ժխտել այս ամենը:

— Եվ ո՞վ է պատմել ձերդ մեծությանը այդ հեքիա-թը,— էլի նույնպես գուսպ ասաց դը Տրեմուլը:

— Ո՞վ է պատմել, ասում եք, պարո՛ն: Էլ ո՞վ պիտի պատմի, եթե ոչ նա, ով արթուն է, երբ ես քնած եմ, ով աշխատում է, երբ ես զվարճանում եմ, ով կառավարում է բոլոր գործերը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս, Ֆրանսիայում ու Եվրոպայում:

— Նորին մեծությունը ամենայն հավանականությամբ նկատի ունի տեր աստծուն,— ասաց դը Տրեմուլը:— Որովհետև, իմ կարծիքով, միայն աստված կարող է այդքան բարձր կանգնած լինել ձերդ մեծությունից:

— Ո՛չ, պարո՛ն, ես նկատի ունեմ թագավորության հենարանին, իմ միակ ծառային, միակ բարեկամին՝ պարոն կարդինալին:

— Պարոն կարդինալը դեռ նորին վեհափառություն չէ:

— Ի՞նչ եք ուզում ասել, պարո՛ն:

— Այն, որ անսխալական է միմիայն պապը, և որ այդ անսխալականությունը կարդինալների վրա չի՛ տարածվում:

— Դուք ուզում եք ասել, որ նա խաբո՞ւմ է ինձ, որ նա դավաճանում է: Հետևապես դուք մեղադրո՞ւմ եք նրան: Դե, պարզ ասացեք, ընդունեցեք, որ դուք մեղադրում եք նրան:

— Ոչ, ձերդ մեծություն: Բայց ես ասում եմ, որ հենց նա ինքը խաբված է: Ես ասում եմ, որ նրան սուտ տեղեկություններ են հաղորդել: Ես ասում եմ, որ նա շտապել է մեղադրել ձերդ մեծության հրացանակիրներին, որոնց նկատմամբ նա արդարացի չէ, և որ նա տեղեկություններ է քաղել վատ աղբյուրներից:

— Մեղադրանքը գալիս է հենց իրենից՝ դուքսից, պարոն դը Լա Տրեմուլից:

— Ես կարող էի պատասխանել, ձերդ մեծություն, որ դուքսը այս գործը խիստ մոտ է ընդունում իր սրտին, ուստի չի կարելի հույս դնել նրա անաչառության վրա: Բայց ես հեռու եմ այս մտքից, ձերդ մեծություն: Ես դուքսին ճանաչում եմ որպես ազնիվ ու անաչառ մարդու և պատրաստ եմ հիմնվելու նրա խոսքերի վրա, միայն թե մեկ պայմանով:

— Ի՞նչ պայման:

— Ես կուզեի, որ ձերդ մեծությունը նրան իր մոտ կանչեր և հարցաքններ նրան: Միայն թե հարցաքններիք դուք ինքներդ, երես առ երես, առանց վկաների, և որ ես ձերդ մեծության կողմից ընդունվեմ դուքսի գնալուց անմիջապես հետո:

— Ա՛յ թե ինչ,— գոչեց թագավորը:— Եվ դուք լիովին կհիմնվեք նրա վրա, ինչ որ կասի պարոն դը Լա Տրեմուլը:

— Այո, ձերդ մեծություն:

— Եվ դուք կենթարկվե՞ք նրա վճռին:

— Այո:

— Եվ կհամաձայնե՞ք ամեն մի հատուցման, որ նա կպահանջի:

— Այո, ձերդ մեծություն:

— Լա Շենե՛,— գոչեց թագավորը:— Լա Շենե՛:

Ներս մտավ Լյուդովիկոս XIII-ի ավագ սենեկապետը, որ շարունակ հերթապահում էր դռան մոտ:

— Լա Շենե՛, — ասաց թագավորը, — թող հենց այս րոպեին գնան պարոն դը Լա Տրեմուլին կանչելու: Ինձ հարկավոր է հենց այս երեկո խոսել նրա հետ:

— Ձերդ մեծությունը կբարեհաճի՞ խոսք տալ ինձ, որ դը Լա Տրեմուլից հետո ոչ ոքի չեք ընդունի մինչև ինձ ընդունելը՝ հարցրեց դը Տրեմուլը:

— Ոչ ոքի, — պատասխանեց թագավորը:

— Այդ դեպքում, ձերդ մեծություն, ցտեսություն մինչև վաղը:

— Մինչև վաղը, պարոն:

— Ո՞ր ժամին կհրամայի ձերդ մեծությունը:

— Որ ժամին կամենաք:

— Բայց ես վախենում եմ, թե շատ շուտ կներկայանամ և կարթնացնեմ ձերդ մեծությանը:

— Արթնացնել ի՞նձ: Բայց մի՞ թե ես քնում եմ: Ես այլևս չեմ քնում, պարոն: Երբեմն ննջում եմ միայն, ահա ամբողջը: Եկեք այնքան վաղ, որքան կուզեք, թեկուզ ժամը յոթին: Բայց զգուշացե՛ք, եթե ձեր հրացանակիրները մեղավոր են:

— Եթե իմ հրացանակիրները մեղավոր լինեն, ապա մեղավորները կհանձնվեն ձերդ մեծության ձեռքը, և դուք կբարեհաճեք վարվել նրանց հետ այնպես, ինչպես հարկ կհամարեք: Էլի որևէ ցանկություն ունի՞ ձերդ մեծությունը: Ես լսում եմ: Պատրաստ եմ հնազանդվելու:

— Ո՛չ, պարոն, ո՛չ: Իզուր չէ, որ ինձ կոչում են Լյուդովիկոս Արդարադատ: Մինչև վաղը, պարոն, մինչև վաղը:

— Աստված պահապան ձերդ մեծությանը:

Որքան էլ վատ էր քնում թագավորը, այդ գիշեր պարոն դը Տրևիլն ավելի վատ քնեց: Դեռ երեկոյան նա մարդ էր ուղարկել երեք հրացանակիրներին ու նրանց ընկերոջն ասելու, որ նրանք առավոտյան ուղիղ վեցն անց կեսին իր մոտ լինեն: Նա չորսին էլ իր հետ տարավ պալատ, ոչ մի բան չխոստանալով ու ոչ մի բանի չերաշխավորելով և նրանցից չթաքցրեց, որ նրանց բախտը, ինչպես և իր սեփական բախտը, մազից է կախված:

Փոքր մուտքից ներս մտնելով, նա հրացանակիրներին պատվիրեց սպասել: Եթե թագավորը դեռ զայրացած է նրանց վրա, կարող են աննկատելի հեռանալ, իսկ եթե թագավորը համաձայնի ընդունել նրանց, ուրեմն կկանչեն:

Թագավորի անձնական ընդունարանում դը Տրևիլը տեսավ Լա Շենեին, որը հաղորդեց, թե երեկ երեկոյան դուքս դը Լա Տրեմուլին տանը գտնել չի հաջողվել, որ երբ նա վերադարձել է, արքունիք ներկայանալու համար խիստ ուշ է եղել, և որ դուքսը հենց նոր է ժամա-նել և այդ պահին գտնվում է թագավորի մոտ:

Այս վերջին, հանգամանքը պ-րն Տրևիլի սրտովն էր: Այժմ նա կարող էր վստահ լինել, որ դը Լա Տրեմուլի գնալուց հետո և մինչ իր ընդունելությունը թագավորի վրա ուրիշ ոչ մի կողմնակի ազդեցություն չի կարող լինել:

Իսկապես, մի տասը բուպե չանցած՝ դուռը լայն բացվեց, և դը Տրևիլը տեսավ դը Լա Տրեմուլին, որը դուքս էր գալիս կաբինետից: Դուքսը ուղղվեց նրա մոտ:

— Պարոն դը Տրևիլ,— ասաց նա:— Նորին մեծությունը կանչել էր ինձ, որպեսզի իմանա իմ տան մոտ տեղի ունեցած դեպքի բոլոր մանրամասնությունները: Ես նրան ասացի ճշմարտությունը, այսինքն՝ ընդունեցի, որ մեղավոր են եղել իմ մարդիկ, և որ ես պատրաստ եմ ներողություն խնդրելու ձեզնից: Քանի որ հանդիպել եմ ձեզ, թույլ տվեք հենց այժմ անել այդ և խնդրում եմ ինձ միշտ համարել ձեր բարեկամների շարքում:

— Պարոն դուքս,— ասաց դը Տրևիլը,— ես այնքան խորապես համոզված էի ձեր բարձր ազնվությամբ, որ չցանկացա այլ բարեխոս ունենալ թագավորի առաջ, քան դուք: Տեսնում եմ, որ ես չեմ սխալվել և շնորհակալ եմ ձեզնից նրա համար, որ

Ֆրանսիայում դեռ մնացել են այնպիսի մարդիկ, որոնց մասին առանց սխալվելու կարելի է ասել այն, ինչ ես ասացի ձեր մասին:

— Հիանալի՛ է, հիանալի՛,— գոչեց թագավորը, որը դռան մոտ կանգնած լսում էր այս խոսակցությունը:— Միայն թե ասացեք դրան, Տրևիլ, քանի որ նա իրեն ձեր բարեկամն է կոչում, ասացեք, որ ես էլ կկամենայի նրա բարեկամների շարքում լինել, բայց նա անուշադիր է դեպի ինձ: Ահա արդեն շուտով երեք տարի կլինի, ինչ ես չեմ տեսել նրան, և հիմա էլ տեսա միայն կանչելուց հետո: Ասացեք նրան այս ամենը իմ անունից, ասացեք, որովհետև սրանք այնպիսի բաներ են, որոնք թագավորը ինքը ասել չի կարող:

— Շնորհակալ եմ, ձերդ մեծություն, շատ շնորհակալ եմ: Բայց ես կուզենայի հավաստիացնել ձերդ մեծությանը,— այս, իհարկե, պարոն դը Տրևիլին չի վերաբերում,— ես կուզենայի հավաստիացնել ձերդ մեծությանը, որ ձերդ մեծությանն ամենից ավելի նվիրված մարդիկ նրանք չեն, ում որ ձերդ մեծությունը տեսնում է օրվա բոլոր ժամերին:

— Նշանակում է դուք լսեցի՞ք, թե ինչ ասացի ես, դուքս: Դե, ավելի լավ, ավելի լավ,— ասաց թագավորը մի քայլ անելով դեպի առաջ:— Ա՛, այդ դո՞ւք եք, Տրևիլ, որտե՞ղ են ձեր հրացանակիրները: Չէ որ դեռ երեք օր առաջ ես ձեզ խնդրել եմ բերել նրանց ինձ մոտ: Ինչո՞ւ դուք չեք արել այդ:

— Նրանք ներքևումն են, ձերդ մեծություն, և ձեր թույլտվությամբ Լա Շենեն կկանչի նրանց:

— Այո՛, այո՛, թող հենց այս րոպեին ներկայանան նրանք: Շուտով ժամը ութը կլինի, իսկ իննին ես սպասում եմ մեկին: Կարող եք գնալ, դուքս, և անպայման հաճախակի եղեք արքունիքում: Ներս եկեք, Տրևիլ:

Դուքսը գլուխ տվեց և գնաց դեպի ելքը: Այն պա-հին, երբ նա բաց էր անում դուռը, սանդուղքի վերին հարթակում երևացին երեք հրացանակիրները և դ'Արտանյանը: Նրանց առաջնորդում էր Լա Շենեն:

— Մոտ եկե՛ք, քաջե՛ր, մոտ եկե՛ք,— ասաց թագավորը:— Եկեք, որ ես նախատեմ ձեզ:

Հրացանակիրները խոնարհ գլուխ տալով մոտեցան: Դ՛Արտանյանը գալիս էր նրանց հետևից:

— Գրողը տանի: Այդ ինչպե՞ս եք դուք չորս հոգով երկու օրվա ընթացքում կարդինալի յոթ գվարդիականներին դուրս բերել շարքից,— շարունակեց Լյուդովիկոս XIII-ը:— Այդ շատ է, խիստ շատ: Եթե այդպես շարունակվի, երեք շաբաթից հետո նորին սրբազնությունը ստիպված կլինի փոխել իր ամբողջ վաշտի կազմը: Իսկ ես ստիպված կլինեմ ամենայն խստու-թյամբ կիրառել հրովարտակները: Մեկը լինեք, դեռ էլի ոչինչ, ես չեմ առարկում: Բայց յոթին՝ երկու օրում, կրկնում եմ՝ այդ շատ է, խիստ շատ:

— Հենց դրա համար էլ, ինչպես ձերդ մեծությունը կարող է տեսնել, նրանք շփոթված են, զոջումով լի և խնդրում են ներել իրենց:

— Շփոթվա՛ծ են և զոջումով լի՛: Հը՛մ,— թերահավատորեն խոսեց թագավորը:— Ես չեմ հավատում սրանց խորամանկ սֆաթներին: Մանավանդ, ա՛յ, նրա, որ գասկոնացու դեմք ունի: Հապա մի մոտեցե՛ք ինձ, պարո՛նս:

Դ՛Արտանյանը հասկանալով, որ այդ խոսքերն իրեն են վերաբերում, ամենակոտորված տեսքով մոտեցավ:

— Սա՞՛ է: Հապա ինչե՞ր էիք պատմում ինչ-որ երիտասարդի մասին: Սա հո երեխա է, կատարյալ երեխա: Եվ սա՞՛ է այդպիսի սոսկալի հարված հասցրել ժյուսակին:

— Եվ սուսերի երկու հիանալի հարված Բերնաժուին:

— Իսկապե՞ս:

— Չհաշված այն,— մեջ մտավ Աթոսը,— որ եթե նա ինձ չփրկեր Կայուզակի ձեռքից, ես պատիվ չէի ունենա այս բոպեին իմ ամենախոնարհ հարզանաց հավաստիքը մատուցելու ձերդ մեծությանը:

— Նշանակում է՝ սա իսկական դև է, ձեր այս ջահել բեարնացին, գրո՛ղ ու ցավ, ինչպես կասեր իմ հանգուցյալ հայրը: Այդպիսի գործերի մեջ դժվար չէ մի քանի կամզոլ մաշել և սուսերը կոտրել: Իսկ գասկոնացիք կարծեմ աղքատ են առաջվա պես, չէ՞:

— Պետք է խոստովանեմ, ձերդ մեծություն,— ասաց դը Տրևիլը,— որ նրանց լեռներում առայժմ ոսկու հանքեր չեն գտնվել, թեև պետք է որ աստված այդպիսի մի հրաշք ստեղծեր նրանց համար՝ որպես վարձատրություն այն ջերմ պաշտպանության, որ ցույց տվին նրանք ձեր հանգուցյալ հորը՝ գահի համար մղած պայքարում:

— Դրանից հետևում է, որ գասկոնացիք ի՛նձ էլ թագավոր են դարձրել, չէ՞, Տրևիլ, քանի որ ես իմ հոր որդին եմ: Ի՛նչ կա որ, բարի հաջողություն, այդ իմ սրտովն է: Լա Շենե՛, գնացեք և փնտրեցեք իմ բոլոր գրպաններում, մի քառասուն պիստոլ չի՞ ճարվի արդյոք, և եթե ճարվի, բերեք այստեղ: Իսկ մինչ այդ, երիտասարդ, ձեռքդ դրեք ձեր սրտին և պատմեցեք, ինչպես տեղի ունեցավ այդ ամենը:

Դ՛Արտանյանը նախորդ օրվա դեպքը պատմեց ամենայն մանրամասնությամբ, ինչպես ինքը, չկարողանալով քնել ուրախությունից, որ պիտի տեսնի նորին մեծությանը, ընդունելությունից երեք ժամ առաջ եկավ իր ընկերների մոտ, ինչպես նրանք միասին գնացին պանդոկ, և ինչպես Բերնաժուն, նկատելով, որ ինքը վախենում է, թե գնդակը երեսին կդիպչի, սկսեց ծաղ-րել իրեն և այդ ծաղրի համար քիչ մնաց կյանքը պիտի տար, իսկ պարոն դը Լա Տրեմուլը, որ այս գործում ոչ մի մեղք չունեք, քիչ մնաց տնից զրկվեք:

— Այդպես, ամեն ինչ ճիշտ այնպես, ինչպես դուք-սը պատմեց: Խե՛ղճ կարդինալ: Երկու օրում յոթ մարդ, այն էլ իր ամենասիրելիներին: Բայց այժմ արդեն բավական է, պարոններ, լսո՛ւմ եք: Բավակա՛ն է: Դուք Ֆերու փողոցի վրեժը առաք, դեռ մի բան էլ ավելի: Կարող եք դրանով բավարարված լինել:

— Եթե ձերդ մեծությունը բավարարված է, ապա մենք էլ բավարարված ենք,— ասաց դը Տրևիլը:

— Այո, ես բավարարված եմ,— ասաց թագավորը և Լա Շենեի ձեռքից մի բուռ ոսկի վերցնելով՝ դրեց այն դ'Արտանյանի ձեռքում:— Եվ ահա,— ավելացրեց նա,— ապացույց, որ ես գոհ եմ:

Այն ժամանակներում հպարտության հասկացողությունը, որն այնքան տարածված է մեր օրերում, դեռ մոդա չէր: Ազնվականը թագավորի ձեռքից փող էր ստանում և իրեն ամեննին ստորացած չէր զգում: Ուստի և դ'Արտանյանը, առանց քաշվելու, ստացած քառասուն պիստոլը գրպանը դրեց և նույնիսկ ամենախոնարհ շնորհակալություն հայտնեց նորին մեծությանը:

— Ուրեմն, հիանալի է,— ասաց թագավորը պատի ժամացույցին նայելով,— հիանալի: Այժմ արդեն ութն անց կես է, դուք կարող եք գնալ: Ես ասացի, որ իննին սպասում եմ մեկին: Շնորհակալ եմ ձեզնից նվիրվածության համար, պարոննե՛ր: Ես այսուհետև էլ կարող եմ հույս դնել ձեզ վրա, չէ՞:

— Ձերդ մեծություն,— միաբերան գոչեցին չորս ընկերները:— Մենք մեզ կտոր-կտոր անել կտանք մեր թագավորի համար:

— Լավ, լավ: Բայց ավելի լավ է ողջ մնացեք: Այդպես ինձ համար ավելի լավ ու ավելի օգտակար կլինի: Տրևիլ,— ավելացրեց թագավորը կիսաձայն, երբ երիտասարդները դուրս էին գնում:— Քանի որ դուք գնդում ազատ տեղ չունեք և, բացի այդ, մենք որոշել ենք գնդում ոչ ոքի չընդունել առանց ստուգման, այդ պատանուն տեղավորեցեք ձեր փեսայի՝ պարոն Դեզեսարի գվարդիական վաշտում: Ա՛խ, գրողը տանի: Ես արդեն նախապես ուրախանում եմ, երևակայելով, թե պարոն կարդինալն ինչպես պիտի ծոմո՞ի իր դեմքը: Նա կատա-դության կհասնի, բայց ի՛նձ ինչ: Ես արդար եմ վարվել:

Եվ թագավորը սիրալիր շարժումով արձակեց դը Տրևիլին, որն ուղղվեց իր հրացանակիրների մոտ: Նա հրացանակիրներին գտավ դ'Արտանյանի ստացած քառասուն պիստոլը բաժանելիս:

Կարդինալը, ինչպես և նախատեսել էր թագավորը, իսկապես կատաղության հասավ և մի ամբողջ շաբաթ շախմատ խաղալու չէր գնում: Բայց դա թագավորին չէր խանգարում հանդիպելիս ողջունել նրան ամենաթովիչ ժպիտով և ամենանուրբ ձայնով հարցնել.

— Ինչպե՞ս են, պարոն կարդինալ, ձեր հավատարիմ թիկնապահները, այն իսեղճ Բերնաժուն և Ժյուսակը:

VII. Հրացանակիրներն իրենց տանը

Երբ Լուվրից դուրս գալուց հետո դ'Արտանյանը իր ընկերներին հարցրեց, թե ինչպես ավելի լավ կլինի ծախսել քառասուն պիստոլից իրեն ընկած բաժինը, Աթոսը խորհուրդ տվեց մի լավ ճաշ պատվիրել «Սոճենու Կոնգոմ» ճաշարանում, Պորտոսը՝ մի ծառա վարձել, իսկ Արամիսը՝ մի կարգին սիրուհի ճարել:

Ճաշկերույթը տեղի ունեցավ նույն օրը, և մատուցում էր նոր ծառան: Ճաշը պատվիրել էր Աթոսը, իսկ սպասավորին գտել էր Պորտոսը: Դա մի պիկարոզացի էր, որին պանծալի հրացանակիրը վարձել էր այդ նույն օրը, այդ նույն ճաշկերույթի առթիվ: Պորտոսը նրան տեսել էր Լա Տուրնել կամրջի վրա, որտեղ Պլանշեն, ինչպես կոչում էին ծառային, թքում էր ջրի մեջ և հետաքրքրությամբ դիտում, թե ինչպես է ջուրը շրջաններ կազմում: Պորտոսը պնդում էր, որ այդպիսի զբաղմունքը ցույց է տալիս մարդու դիտողական հակումն ու խոհականությունը, և առանց հետագա տեղեկությունների ստանալու նրան տարավ իր հետ: Պլանշենին դուր էր գալիս այդ ազնվականի պատկառելի տեսքը, որի մոտ նա ենթադրում էր, թե ծառայության է մտնում, և նա մի փոքր հիասթափվեց, երբ տեսավ, որ այդ տեղն զբաղեցնում է իր նման մեկը Մուշկետոն անունով: Պորտոսը նրան բացատրեց, որ իր տերը թեպետև շքեղ կյանք է վարում, սակայն միայն մեկ ծառայի կարիք ունի, և Պլանշեն ստիպված պիտի լինի ծառայության մտնել դ'Արտանյանի մոտ: Սակայն, սպասավորելով այն խնջույքին, որ տալիս էր իր տերը, և տեսնելով, թե ինչպես սա հաշիվը վճարելիս գրպանից մի բուռ ոսկի դրամներ հանեց, Պլանշեն մտածեց, որ իր բախտն ապահովված է և գոհունակություն հայտնեց երկնքին, որ այդպիսի կրեզի[58] մոտ է ընկել: Այդ նույն համոզմունքը նրա մեջ մնաց, մինչև որ վերջացավ ճաշկերույթը, որի մնացորդներով նա վարձատրեց իր երկար սպասումը: Սակայն երեկոյան, երբ նա իր տիրոջ անկողինն էր փռում, շքեղ երազանքը հողս ցնդեց. ամբողջ բնակարանում, որ բաղկացած էր ննջարանից ու նախասենյակից, կար միայն մեկ անկողին: Պլանշեն քնելու պահեց նախասենյակում, մի վերմակի վրա, որ նա վերցրել էր դ'Արտանյանի մահճակալից, և այդ օրվանից դ'Արտանյանը ստիպված եղավ յուր գնալ առանց վերմակի:

Աթոսը նույնպես ուներ մի ծառա, որին հատուկ դաստիարակություն էր տվել: Նրա անունն էր Գրիմո: Հարգարժան պարոնը — մենք, իհարկե, նկատի ունենք Աթոսին,— շատ լռակյաց մարդ էր: Ահա արդեն հինգ թե վեց տարի նա ապրում էր որպես Պորտոսի ու Արամիսի ամենամտերիմ ընկերը: Այդ ժամանակամիջոցում ընկերները նրա դեմքին ժպիտ շատ անգամ էին տեսել, բայց ծիծաղը երբեք չէին լսել: Նրա խոսքերը հակիրճ էին և արտահայտիչ, նա միշտ ասում էր այն, ինչ ցանկանում էր ասել, ուրիշ ոչինչ. ոչ մի պշրանք, երանգ ու զարդարանք: Նա խոսում էր միմիայն էականի մասին, առանց մանրամասնությունները շոշափելու:

Թեև Աթոսը երեսուն տարեկանից ավելի չէր և հիանալի մարմին ու հոգի ուներ, բայց ոչ ոք չէր լսել, թե նա սիրուհի ունի: Երբեք նա կանանց մասին չէր խոսում, բայց ուրիշներին էլ չէր խանգարում խոսել այդ թեմայի մասին, թեև հեշտ էր նկատել, որ այդպիսի խոսակցությունը, որին երբեմն միայն նա մի դառն բառ էր ավելացնում կամ մի մոայլ դիտողություն, չափ ազանց տհաճ էր նրան: Նրա զսպվածությունը, ինքնամփոփությունը, սակավախոսությունը համարյա ծերունի էին դարձնում նրան: Դրա համար էլ, հարկ չհամարելով փոխել իր սովորությունները, նա Գրիմոյին վարժեցրել էր կատարել իր պահանջները. Գրիմոն հասկանում ու ենթարկվում էր նրա ամեն մի հասարակ նշանին կամ շրթունքների աննշմարելի շարժումին: Աթոսը նրա հետ խոսում էր միայն ամենաարտակարգ հանգամանքներում:

Պատահում էր, Գրիմոն, որը վախենում էր իր տիրոջից ինչպես կրակից, թեպետև ջերմորեն կապված էր նրան և խոնարհվում էր նրա խելքի առաջ, պատահում էր՝ կարծում էր, թե հասկացել է տիրոջ ցանկությունը և վազում էր կատարելու, բայց ճիշտ և ճիշտ Աթոսի ցանկացածի հակառակն էր կատարում: Այն ժամանակ Աթոսը թոթվում էր ուսերը և առանց ամենափոքր զայրույթի ծեծում էր Գրիմոյին: Այդպիսի օրերին նա մի քիչ ավելի գրուցասեր էր լինում:

Պորտոսը, ինչպես արդեն իմացանք, Աթոսի ճիշտ և ճիշտ հակապատկերն էր. նա ոչ միայն շատ էր խոսում, այլև խոսում էր բարձր ձայնով: Ի դեպ, պետք է արդարացի լինել ասելու, որ նրա համար միևնույն էր՝ լսո՞ւմ են իրեն, թե ոչ: Նա խոսում էր իր սեփական բավականության և ինքն իրեն լսելու բավականության համար: Նա խոսում էր վճռականապես ամեն բանի մասին, բացառությամբ գիտությունների, պատճառ բերելով այն խոր զգվանքը, որն, իր ասելով, մանկությունից ներշնչել էին գիտնականները: Նրա տեսքը այնքան վեհ չէր, որքան Աթոսինը, և Աթոսի գերազանցության գիտակցումը նրանց ծանոթության սկզբնական

շրջանում հաճախ գրգռում էր Պորտոսին: Դրա համար էլ նա բոլոր ջանքերը գործադրում էր, որպեսզի նրան գերազանցի թեկուզ իր հագուստի շքեղությամբ: Սակայն բավական էր, որ Աթոսը իր հասարակ հրացանակրի թիկնոցը վրան, գլուխը ետ գցած՝ թեկուզ մեկ քայլ աներ, իսկույն գրավում էր իր արժանի տեղը՝ ետին պլան մղելով շքեղագարդ Պորտոսին:

Պորտոսը իրեն մխիթարելու համար պ-րն դը Տրևիլի ընդունարանը և Լուվրի պահակատունը լցնում էր բարձրաձայն պատմություններով՝ կանանց շրջանում ունեցած իր հաջողություններով՝ մի բան, որ Աթոսը երբեք չէր անում: Վերջին ժամանակներս հայտնի դատավորների կանանցից անցնելով նշանավոր զինվորականների կանանց, աստիճանավորների կանանցից՝ իշխանուհիներին, նա սկսել էր ակնարկներ անել ինչ-որ օտարերկրացի իշխանուհու մասին, որը, որպես թե, հրապուրվել էր իրենով:

Հին առածն ասում է՝ ծառան էլ իր տիրոջն է քաջել: Դրա համար էլ Աթոսի ծառայից անցնենք Պորտոսի ծառային, այսինքն՝ Գրիմոյից Մուշկետոնին:

Մուշկետոնը նորմանդացի էր, որի Բոնիֆացիոս[59] խաղաղ անունը իր տերը փոխարինել էր անհամեմատ հնչեղ Մուշկետոն անունով: Նա Պորտոսի մոտ ծառայության էր մտել մի պայման դնելով, որ իրեն պետք է կերակրեն և հագցնեն, բայց կերակրեն ու հագցնեն շքեղորեն: Բացի դրանից նա խնդրել էր օրական երկու ժամ ազատ թողնել իրեն՝ զբաղվելու իր արհեստով, որ պետք է ծածկեր նրա մնացած պահանջները: Պորտոսը համաձայնել էր այդ պայմաններին, դրանք հենց իսկ և իսկ նրա սրտովն էին: Նա Մուշկետոնի համար կամզոլներ էր պատվիրում, որոնք կարվում էին հենց Պորտոսի հին հագուստից և պահեստային թիկնոցներից: Մի ինչ-որ դերձակի ճարպկության շնորհիվ, որը ձևափոխում ու շրջում էր Պորտոսի հնամաշ շորերը, և որի կինը ակներևաբար ձգտում էր Պորտոսին ետ պահել արիստոկրատական սովորություններից, Մուշկետոնը, իր տիրոջն ուղեկցելիս, շատ վայելուչ տեսք էր ունենում:

Ինչ վերաբերում է Արամիսին,— որի բնավորությունը կարծեմ մենք բավական լավ նկարագրել ենք, թեև նրա, ինչպես և իր ընկերների բնավորության զարգացմանը մենք հետագայում էլ կհետևենք,— ապա նրա սպասավորի անունն էր Բազեն:

Նկատի ունենալով, որ Արամիսը հույս ուներ երբևէ հոգևորականի կոչում ստանալ, ապա նրա ծառան, ինչպես վայել է հոգևորականի ծառային, միշտ սև շոր էր հագնում: Դա երեսունհինգ-քառասուն տարեկան մի բերիացի էր՝ կարճահասակ, հաստլիկ ու հանդարտ: Ազատ ժամանակը, որ տրամադրում էր նրան իր տերը, նա նվիրում էր հոգևոր գրքերի ընթերցանությանը և անհրաժեշտության դեպքում կարողանում էր հիանալի ճաշ պատրաստել, որը բաղկացած էր լինում ընդամենը մի քանի տեսակից, բայց շատ հիանալի տեսակներից: Մնացած բաներում նա կույր էր, խուլ ու համր, և նրա հավատարմությունը կարող էր դիմանալ ամեն մի փորձության:

Այժմ, թեկուզ և մակերեսորեն ծանոթանալով և՛ տերերի, և՛ իրենց ծառաների հետ, անցնենք նրանցից յուրաքանչյուրի բնակարանին: Աթոսը ապրում էր Ֆերու փողոցում, Լյուքսեմբուրգից մի երկու քայլի վրա: Նա զբաղեցնում էր հաճելի կահավորված երկու փոքրիկ սենյակ, որ տվել էր նրան տան տիրուհին՝ դեռ ոչ պառավ և դեռ շատ գեղեցիկ մի կին, որն ապարդյուն քնքուշ հայացքներ էր զգում Աթոսի վրա: Այդ համեստ բնակարանի պատերին տեղ-տեղ երևում էին երբեմնի շքեղության առանձին մնացորդներ, օրինակի շքեղորեն զարդարված և, անտարակույս, դեռ Ֆրանցիսկ I-ի ժամանակներից մնացած սուսեր, որի հենց միայն կոթը զարդարված լինելով թանկագին քարերով, պետք է որ երկու հարյուր պիստոլից պակաս չարժենար: Սակայն Աթոսը նույնիսկ ամենաձանր ընկերներին ոչ մի կերպ չէր համաձայնում ո՛չ ծախել, ո՛չ էլ գրավ դնել այն: Երկար ժամանակ այդ սուսերը Պորտոսի բաղձանքի առարկան էր: Նա պատրաստ էր իր կյանքից տասը տարի տալ, միայն թե իրավունք ունենար տիրելու այդ սուսերին:

Մի անգամ, երբ տեսակցության էր պատրաստվում մի ինչ-որ դքսուհու հետ, նա փորձեց այդ սուսերը փոխարինաբար վերցնել Աթոսից: Աթոսը լուռ ու մունջ շուռ տվեց բոլոր գրպանները, հավաքեց ամենը, ինչ արժեքավոր բան որ ուներ՝ քսակներ, ճարմանդներ, ոսկե շղթաներ, և բոլորը առաջարկեց Պորտոսին: Իսկ ինչ վերաբերում է սուսերին, ասաց նա, սուսերը գամված է պատին և այնտեղից կիջնի միայն այն ժամանակ, երբ նրա տերը կհեռանա այս բնակարանից: Բացի սուսերից, ուշադրություն էր գրավում նաև Հենրիխ III-ի ժամանակների մի նշանավոր ազնվականի դիմանկար. այդ ազնվականը հագնված էր չափազանց շքեղ և կրծքին ուներ Մուրբ Հոգու շքանշան: Նկարը որոշ նմանություն ուներ Աթոսի հետ, ինչ-որ ընդհանուր տոհմային գծեր, որոնք ցույց էին տալիս, որ անվանի ազնվականը, թագավորական շքանշանների այդ ասպետը Աթոսի նախնին է:

Եվ ի լրումն այս ամենի՝ բուխարու վերին ելուստին դրված էր մի արկղիկ, ակնագործական մի սքանչելի աշխատանք, որ զարդարված էր նույն զինանշանով, ինչ որ սուսերն ու դիմանկարը և իր նրբին շքեղությամբ խիստ աչքի էր ընկնում շրջապատի իրերի մեջ: Այդ արկղիկի բանալին Աթոսը միշտ իր գրպանում էր պահում: Բայց մի անգամ նա այդ արկղիկը բաց արեց Պորտոսի ներկայությամբ, և Պորտոսը կարող էր համոզվել, որ արկղիկի մեջ միայն նամակներ են ու թղթեր: Պետք էր ենթադրել, որ դրանք սիրային նամակներ էին և ընտանեկան արխիվ:

Պորտոսը մի մեծ և արտաքուստ շքեղ բնակարան էր զբաղեցնում Հին Աղավնատուն փողոցում: Ամեն անգամ ընկերներից որևէ մեկի հետ իր լուսամուտների մոտով անցնելիս, որոնցից մեկի առաջ միշտ կանգնած էր լինում Մուշկետոնը տոնական լիվրեով, Պորտոսը գլուխը բարձրացնում էր և ձեռքով դեպի վեր ցույց տալով ասում, «Ահա իմ կացարանը»: Սակայն երբեք նրան տանը գտնել չէր հաջողվում, երբեք և ոչ ոքի նա չէր հրավիրում իր հետ վերև բարձրանալ, ոչ ոք չէր կարող պատկերացնել, թե իրոք հարստություններ կան թաքնված այդ շքեղ արտաքինի հետևը: Ինչ վերաբերում է Արամիսին, ապա նա ապրում էր մի փոքրիկ բնակարանում, որ բաղկացած էր հյուրա-սենյակից, սեղանատնից և ննջարանից: Ննջարանը, ինչպես և մյուս բոլոր սենյակները, գտնվում էր առաջին հարկում, նայում էր դեպի մի ստվերախիտ ու թարմ պարտեզ, որի թանձր կանաչը նրան անմատչելի էր դարձնում հետաքրքրվող այքերի համար:

Իսկ թե ինչպես էր տեղավորվել դ'Արտանյանը, մեզ արդեն հայտնի է, և մենք կարողացել ենք ծանոթանալ նրա սպասավոր Պլանշեի հետ:

Դ'Արտանյանը իր բնավորությամբ շատ հետաքրքրասեր էր, ինչպես, ի դեպ, ինտրիգների շնորհիք ունեցող մարդկանց մեծ մասը: Նա լարում էր իր բոլոր ուժերը, որպեսզի իմանա, իրոք ովքեր են Աթոսը, Պորտոսը և Արամիսը: Որովհետև նրանք բոլորն էլ այդ անունների տակ թաքցնում էին իրենց ազնվականական անունները, և մանավանդ Աթոսը, որին մի ամբողջ մղոն հեռավորությունից կարելի է ճանաչել, որ իսկական ազնվական է: Նա դիմում էր Պորտոսին, հուսալով տեղեկություններ ստանալ Աթոսի և Արամիսի մասին և Արամիսին՝ որպեսզի իմանա ով է Պորտոսը:

Պորտոսը, դժբախտաբար, իր լռակյաց ընկերոջ մասին գիտեր միայն այն, ինչ հայտնի էր ըստ լուրերի: Ասում էին, որ նա մեծ վիշտ է կրել, որի պատճառը եղել է սերը, և որպես թե ինչ-որ մեկի ստոր դավաճանությունը թունավորել է այդ

պատվարժան մարդու կյանքը: Սակայն այդ դավաճանության հանգամանքների մասին ոչ ոք ոչինչ չգիտեր:

Ինչ վերաբերում է Պորտոսին, ապա բացառությամբ նրա իսկական անվան, որը, ինչպես և մյուս երկու ընկերների անունները, հայտնի էր միմիայն պարոն դը Տրևիլին, նրա կյանքի մասին դժվար չէր ամեն ինչ իմանալ: Լինելով սնափառ և շաղակրատ՝ նա ամբողջովին երևում էր ինչպես բյուրեղ, և նրա մասին մոլորության մեջ ընկնել կարելի էր միայն այն դեպքում, եթե մարդ հավատար նրա բոլոր պոռոտախոսություններին:

Բայց Արամիսը, թեպետ և կարող էր թվալ, թե ոչ մի գաղտնիք չունի, ամբողջովին պարուրված էր խորհրդավորությամբ: Ժլատորեն պատասխանելով ուրիշներին վերաբերող հարցերին՝ նա խնամքով լռության էր մատնում իրեն վերաբերող հարցերը: Մի անդամ, երբ երկար հարցուփորձից հետո դ'Արտանյանը Արամիսից իմացավ այն լուրերի մասին, որոնք ասում էին, թե իբր նրանց ընկեր Պորտոսը հաղթանակի է հասել ինչ-որ մի դքսուհու նկատմամբ, նա փորձեց թափանցել իր զրուցակցի սիրային արկածների գաղտնիքի մեջ:

— Լավ, իսկ դուք, իմ սիրելի բարեկամ,— ասաց նա,— որ այդպես հիանալի պատմում եք, թե ուրիշներն ինչպիսի կապեր ունեն բարոնուհիների, կոմսուհիների ու դքսուհիների հետ, իսկ դուք ինքնե՞րդ...

— Ներեցեք,— ընդհատեց նրան Արամիսը:— Ես այս բաների մասին խոսում եմ միայն այն պատճառով, որ Պորտոսը ինքն էլ շատ է խոսում սրանց մասին, և մեկ էլ այն պատճառով, որ նա ինքն իմ ներկայությամբ բարձրաձայն պատմում էր այս հետաքրքիր պատմությունները: Բայց, հավատացեք ինձ, սիրելի դ'Արտանյան, որ եթե այս պատմություններն ինձ հայտնի դառնային ուրիշ աղբյուրից, կամ եթե նա այդ ամենն ինձ վստահաճ լիներ որպես գաղտնիք, ինձնից ավելի հա-մեստ հոգևորական չէր ճարվի:

— Ես դրան չեմ կասկածում,— ասաց դ'Արտանյանը,— բայց այնպես ինձ թվում է, որ ձեզ էլ լավ ծանոթ են ինչ-որ զինանշաններ, որի մասին վկայում է ինչ-որ ասեղնագործ թաշկինակ, որին ես պարտական եմ ձեզ հետ ծանոթ լինելու պատիվը:

Այս անգամ Արամիսը չբարկացավ, բայց ամենահա-մեստ տեսք ընդունելով սիրալիք պատասխանեց:

— Մի՛ մոռացեք, բարեկամս, որ ես պատրաստվում եմ հոգևոր կոչում ընդունելու, ուստի և ինձ խորթ են աշխարհիկ զվարճությունները: Ձեր տեսած թաշկինակը ինձ չէր ընծայված, այլ միայն թողնված էր ինձ մոտ իմ բարեկամներից մեկի մոռացկոտության պատճառով: Ես ստիպված էի թաքցնել այն, որպեսզի չանվանարկեմ նրանց, տղամարդուն և այն կնոջը, որին սիրում է նա... Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես սիրուհի չունեմ և ունենալ չեմ ուզում, այս բանում հետևելով Աթոսի իմաստուն օրինակին, որը նույնպես, ինչպես և ես, սրտի դիցուհի չունի:

— Բայց, գրողը տանի, դուք հո աբբատ չե՛ք, քանի որ հրացանակիր եք:

— Հրացանակիր եմ միայն ժամանակավորապես, սիրելիս, ինչպես կարդին այն է ասում՝ ակամա հրացանակիր: Բայց հոգուս խորքում ես եկեղեցու սպասավոր եմ, հավատացեք ինձ: Աթոսը և Պորտոսը ինձ այս գործի մեջ են քաշել, որպեսզի մի որևէ բանով զբաղված լինեմ: Հենց այն ժամանակ, երբ ես պետք է ձեռնադրվեի, ինձ մի մեծ անախորժություն պատահեց... Ասենք՝ սա ձեզ չի կարող հետաքրքրել, և ես խլում եմ ձեր թանկագին ժամանակը:

— Ամենևին ոչ, այդ ամենը ինձ շատ է հետաքրք-րում,— գոչեց դ'Արտանյանը:— Եվ այժմ ես բացարձականապես անելիք չունեմ:

— Այո, բայց իմ աղոթելու ժամանակն է,— ասաց Արա-միսը,— հետո պետք է գնամ ոտանավորներ հորինելու, որի համար խնդրել է ինձ տիկին դ'Էզիլիոնը: Դրանից հետո պիտի գնամ Սենտ-Օնորե փողոցը, որպեսզի տիկին դը Շերյոզի համար կարմիր շպար գնեմ: Ինքներդ էլ տեսնում եք, թանկագինս, որ եթե դուք շտապելու տեղ չունեք, ապա ես խիստ շտապում եմ:

Եվ Արամիսը ձեռքը սիրալիք մեկնեց իր երիտա-սարդ ընկերոջը ու հրաժեշտ տվեց նրան:

Որքան էլ ջանում էր դ'Արտանյանը, նրան այլևս չհաջողվեց որևէ բան իմանալ իր նոր ընկերների մասին: Նա որոշեց իրոք հավատալ նրան, ինչ պատմում էին

նրանց անցյալի մասին, հուսալով, որ ապագան իրեն կհարստացնի ավելի մանրամասն և ավելի արժանահավատ տեղեկություններով: Առայժմ Աթոսը նրան պատկերվում էր որպես Աքիլլես, Պորտոսը՝ Այաքս, իսկ Արամիսը՝ Հովսեփ[60]:

Ընդհանուր առմամբ երիտասարդներն ապրում էին ուրախ: Աթոսը խաղում էր և միշտ անհաջող: Բայց երբեք իր ընկերներից ոչ մի սու պարտք չէր վերցնում, թեև իր քսակը միշտ բաց էր նրանց համար: Եվ եթե խաղում էր ազնիվ խոսքի վրա, ապա հենց հետևյալ առավոտյան ժամը վեցին մարդ էր ուղարկում արթնացնելու իր պարտատիրոջը, որպեսզի նրան հանձնի պարտքը:

Պորտոսը սակավ էր խաղում: Այն օրերին, երբ նա հաղթում էր, հանդուգն էր լինում և հիանալի տրամադրության մեջ: Իսկ եթե պարտվում էր, ապա մի քանի օրով անհետ կորչում էր, որից հետո գալիս էր գունատ ու երկարած դեմքով, բայց՝ գրպանում փող:

Արամիսը երբեք չէր խաղում: Նա ամենավատ հրացանակիրը և ամենատխուր հյուրն էր սեղանի մոտ: Միշտ այնպես էր լինում, որ նա կարիք էր ունենում գնալ պարապելու: Պատահում էր՝ խնջույքի ամենաթեժ պահին, երբ բոլորը գինուց տաքացած զրուցելով մտածում էին էլի երկու-երեք ժամ նստել, Արամիսը ժամացույցին նայելով ոտքի էր կանգնում և սիրալիր ժպիտը շուրթերին՝ հրաժեշտ էր տալիս ներկաներին՝ շտապելով, ինչպես ինքն էր ասում, գնալ տեսնելու իրեն ընդունելություն նշանակած գիտնական աստվածաբանին: Մի ուրիշ անգամ նա տուն էր շտապում, որպեսզի աշխատի իր դիսերտացիայի վրա և ընկերներին խնդրում էր չգրադեցնել իրեն:

Այդպիսի դեպքերում Աթոսը ժպտում էր իր թովիչ ժպիտով, որն այնքան սազում էր նրա ազնիվ դեմքին, իսկ Պորտոսը խմում էր և երդվում, որ Արամիսից լավագույն դեպքում մի գյուղական քահանա կստացվի:

Պլանշեն՝ դ'Արտանյանի ծառան, արժանապատվությամբ ընդունեց իրեն բաժին ընկած հաջողություն-նր: Նա օրական երեսուն սու էր ստանում և մի ամբողջ ամիս տուն էր վերադառնում թռչունի պես ուրախ, ուշադիր ու սիրալիր էր դեպի իր տերը: Երբ Գերեզմանափորների փողոցի բնակարանի գլխին սկսեցին ամպեր կուտակվել, այլ խոսքով՝ երբ Լյուդովիկոս XIII թագավորի քառասուն պիստոլները հավվեցին համարյա առանց մնացորդի, Պլանշեն սկսեց գանգատներ տեղալ, որոնք

Աթոսը համարում էր զգվելի, Պոքոտոսը՝ անվայել, իսկ Արամիսը՝ պարզապես ծիծաղելի: Աթոսը դ՛Արտանյանին խորհուրդ տվեց վռնդել այդ սրիկային, Պոքոտոսը առաջարկում էր նախապես ծեծել նրան, իսկ Արամիսն ասաց, որ ծառայի տերը ուղղակի ոչ մի բան չպետք է լսի, բացի շողոքորթություններից:

— Ձեզ բռնորդի դեշտ է խոսել,— ասաց դ՛Արտանյա-նը,— ձեզ համար, Աթոս, քանի որ դուք լուռ ու մունջ ապրում եք Գրիմոյի հետ՝ արգելելով նրան խոսել, ուստի և երբեք մի վատ խոսք չեք լսում, ձեզ համար, Պոքոտոս, քանի որ դուք շքեղ կյանք եք վարում և ձեր Մուշկետոնին աստվածություն եք թվում. վերջապես ձեզ համար, Արամիս, քանի որ շարունակ տարված եք աստվածաբանական պարապմունքներով և դրանով իսկ կարողանում եք մեծագույն հարգանք ներշնչել ձեր ծառա Բազենին, այդ համեստ ու բարեպաշտ մարդուն: Բայց ես, հող չունենալով ոտքիս տակ, գուրկ լինելով միջոցներից, չլինելով ոչ հրացանակիր, ո՛չ էլ նույ-նիսկ գվարդիական, ես ինչպե՞ս սեր, վախ կամ հարգանք ներշնչեմ իմ Պլանշեին:

— Դա կարևոր հարց է,— պատասխանեցին երեք ընկեր-ները:— Դա ներքին, ընտանեկան գործ է: Ծառաներին, ինչպես և կանանց, պետք է կարողանալ հենց սկզբից դնել այնտեղ, որտեղ ուզում ես տեսնել նրանց: Խոր-հեցեք այս մասին:

Դ՛Արտանյանը խորհելով որոշեց համենայնդեպս ծեծել Պլանշեին, և այդ բանն արեց այնպիսի բարեխղճությամբ, ինչպիսին նրա ամեն մի գործն էր: Ինչպես հարկն է ծեծելուց հետո նա Պլանշեին արգելեց տանից հեռանալ ու ծառայությունը թողնել առանց իր թույլտվության:

— Նկատի ունեցիր,— ավելացրեց դ՛Արտանյանը,— որ ապագան ինձ չի խաբի: Կգան լավ ժամանակներ: Եվ քո բախտը կկարգավորվի, եթե դու մնաս ինձ մոտ: Իսկ ես խիստ բարի տեր եմ և չեմ թույլ տա քեզ կործանել բախտդ, չեմ համաձայնի բաց թողնել քեզ, ինչպես խնդրում ես դու:

Գործողության այս եղանակը հրացանակիրներին խոր հարգանք ներշնչեց դեպի դ՛Արտանյանի դիվանագիտական ընդունակությունները: Պլանշեն նույնպես հիացմունքով համակվեց և այլևս հեռանալու մասին ծպտուն չէր հանում:

Երիտասարդները հետզհետե սկսեցին ապրել ընդհանուր կյանքով: Դ՛Արտանյանը չունենալով իր սեփական սովորությունները, որովհետև առաջին

անգամ գավառից եկել ու սուզվել էր իր համար միանգամայն նոր մի աշխարհ, յուրացրեց իր բարեկամների սովորությունները:

Ձմեռը վեր էին կենում ժամը ութին, ամառը՝ վեցին և գնում էին պ-րն դը Տրևիլի մոտ՝ նշանաբանն իմանալու և նորություններ որսալու: Դ'Արտանյանը, թեպետև հրացանակիր չէր, սրտառույ բարեխղճությամբ էր ծառայում: Նա շարունակ պահակախմբումն էր լինում, որովհետև միշտ ուղեկցում էր իր ընկերներից նրան, ով այդ օրը պահակության էր գնում: Հրացանակիրների գորանոցում նրան ճանաչում էին, և բոլորը լավ ընկեր էին համարում: Պարոն դը Տրևիլը, որ նրան գնահատել էր առաջին իսկ հայացքից և անկեղծորեն բարեհաճ էր նրա նկատմամբ, ամեն անգամ թագավորի առաջ գովում էր նրան:

Երեք հրացանակիրներն էլ շատ էին սիրում իրենց երիտասարդ ընկերոջը: Այդ չորս մարդկանց իրար հետ կապող բարեկամությունը և օրական մի քանի անգամ՝ մերթ որևէ մենամարտի առթիվ, մերթ գործով, մերթ որևէ զվարճության համար իրար տեսնելու մշտական պահանջը նրանց ստիպում էր ամբողջ օրերով վազվզել միմյանց հետևից: Այդ անբաժան ընկերներին միշտ կարելի էր տեսնել իրար որոնելիս՝ Լյուքսեմբուրգից մինչև Սեն Սյուլպիս հրապարակը կամ Հին Աղավնատուն փողոցից մինչև Լյուքսեմբուրգ:

Մինչ այդ դը Տրևիլի տված խոստումներն աստիճանաբար իրականանում էին: Մի գեղեցիկ օր թագավորը ասպետ Դեզեսարին հրամայեց դ'Արտանյանին ընդունել իր զվարդիական վաշտում, որպես կադետ: Դ'Արտանյանը հոգոց հանելով հազավ զվարդիական մունդիրը. նա պատրաստ էր տասը տարի տալու իր կյանքից, միայն թե իրավունք ունենար փոխարինել այն հրացանակրի թիկնոցով: Բայց պարոն դը Տրևիլը խոստացել էր այդ ողորմածությունը նրան անել ո՛չ շուտ քան երկու տարվա փորձից հետո, սակայն, ի դեպ, այդ ժամկետը կարող էր կրճատվել, եթե դ'Արտանյանը առիթ ունենար ծառայություն մատուցելու թագավորին կամ մեկ այլ եղանակով առանձնապես աչքի ընկներ: Այս խոստումը ստանալով՝ դ'Արտանյանը հեռացավ և հենց հաջորդ օրը սկսեց իր ծառայությունը:

Այժմ Աթոսի, Պորտոսի ու Արամիսի հերթը հասավ՝ պահակության գնալու դ'Արտանյանի հետ, երբ նա պահակության մեջ էր լինում: Այսպիսով այն օրը, երբ դ'Արտանյանը ծառայության մտավ, պ-րն Դեզեսարի վաշտը իր շարքերն ընդունեց ոչ թե մեկ, այլ չորս մարդ:

VIII. Պալատական ինտրիգ

Մինչ այդ Լյուդովիկոս XIII թագավորի քառասուն պիստոլները,— ինչպես ամեն բան այս լույս աշխարհում, որն ունի սկիզբ,— հասան իրենց վախճանին: Եվ այդ ժամանակից չորս ընկերների համար դժվար օրեր սկսվեցին: Սկզբում Աթոսը բոլորին պահում էր իր միջոցներով: Հետո նրան փոխարինեց Պորտոսը և շնորհիվ իր անհայտացումներից մեկի, որին բոլորն արդեն վարժվել էին, նա էլի մի երկու շաբաթ կարողացավ բավարարել բոլորի կենսական պահանջները: Վերջապես հասավ և Արամիսի հերթը, որին, նրա խոսքերով, հաջողվել էր իր աստվածաբանական գրքերի վաճառքով մի քանի պիստոլ ձեռք բերել:

Հետո, ինչպես լինում էր միշտ, ստիպված եղան դիմելու պ-րն դը Տրևիլի օգնությանը, որը նրանց հասանելիքի հաշվին մի քիչ ավանս տվեց: Սակայն այդ փողով չէին կարող ապրել երեք հրացանակիրները, որոնք արդեն բավական շատ չվճարված պարտքեր ունեին, և գվարդիականը, որը դեռ ոչ մի պարտք չուներ: Վերջ ի վերջո, երբ պարզ դարձավ, որ շուտով արդեն ամենաանհրաժեշտ բաների պակասություն են զգալու, նրանք մեծ դժվարությամբ ճարեցին ութ թե տասը պիստոլ, որոնք Պորտոսը վերցրեց ու գնաց խաղալու: Բայց այդ օրը Պորտոսի բախտը չէր բերում, նա բոլոր փողերը տանուլ տվեց և դեռ մի քսանհինգ պիստոլ էլ ավել տարվեց՝ ազնիվ խոսքի վրա խաղալով:

Եվ այն ժամանակ միջոցների սղությունը փոխվեց իսկական կարիքի: Կարելի էր տեսնել, թե ինչպես քաղցած հրացանակիրներն իրենց ծառաների հետ շրջում էին փողոցներում ու պահականոցներում, հուսալով, թե բարեկամներից որևէ մեկը իրենց ճաշի կհրավիրի: Որովհետև, ինչպես ասում էր Արամիսը, բարենպաստ օրերին հարկավոր էր աջ ու ձախ ճաշեր շաղ տալ, որպեսզի նեղ օրերին գեթ երբեմն հնձեն այն:

Աթոսը հրավեր ստացավ չորս անգամ և ամեն անգամ իր հետ տանում էր նաև իր ընկերներին ու նրանց ծառաներին: Պորտոսը հրավեր ստացավ վեց անգամ և իր ընկերներին էլ հնարավորություն տվեց օգտվելու դրանից: Արամիսը հրավիրվեց ութ անգամ: Այս մարդը, ինչպես արդեն կարելի էր նկատել, աղմուկ քիչ էր հանում, բայց գործ շատ էր անում:

Ինչ վերաբերում է դ՛Արտանյանին, որը մայրաքաղաքում դեռ ամեննին ծանոթ չունեք, ապա նրան միայն մեկ անգամ հաջողվեց շոկոլադով նախաճաշել գասկոնացի մի քահանայի մոտ և մեկ անգամ էլ ճաշի հրավեր ստանալ գվարդիական կոռնետի մոտ: Նա իր ամբողջ բանակը տարավ և՛ քահանայի մոտ, որի երկու ամսվա պաշարը ոչնչացրին նրանք, և՛ կոռնետի մոտ, որը չտեսնված առատաձեռնություն ցուցաբերեց: Սակայն, ինչպես ասում էր Պլանշեն՝ «Ինչքան էլ ուտես, միայն մեկ անգամ կուտես»:

Դ՛Արտանյանը ճնշվում էր, որ կարողացել է միայն մեկ ու կես ճաշ ճարել,— քահանայի մոտ կերած նախաճաշը կարող էր կես ճաշի տեղ բռնել,— ի հատուցումն այն խնջույքների, որ տրամադրել էին Աթոսը, Պորտոսը և Արամիսը: Նրան թվում էր, թե ինքը բեռ է դառնում մյուսների վրա, պատանեկան պարզամտությամբ մոռանալով, որ ինքը մի ամբողջ ամիս կերակրել է ամբողջ խմբին: Նրա սուր միտքը գործել սկսեց, նա հանգեց այն եզրակացության, որ չորս երիտասարդ, համարձակ, հնարագետ ու վճռական մարդկանց դաշինքը պետք է այլ նպատակ հետապնդի, քան զբոսանքները կիսահարբած վիճակում, սրախոսությամբ զբաղվելը և ուրիշ շատ թե քիչ սրամիտ արարքները:

Եվ իրոք, չորս այնպիսի մարդիկ, ինչպիսին նրանք էին, չորս մարզիկ, որոնք պատրաստ էին միմյանց համար զոհաբերելու ամեն ինչ սկսած քսակից մինչև կյանքը, որոնք միշտ աջակցում էին միմյանց ու երբեք չէին նահանջում, միասին կամ զատ-զատ կատարում էին միասնաբար ընդունած ամեն մի որոշում, չորս բռունցք, որոնք միասին կամ զատ-զատ սպառնում էին ամեն մի թշնամու, անխուսափելիորեն պետք է բացարձակորեն կամ գաղտնաբար, ուղղակի կամ զարտուղի ճանապարհով, խորամանկությամբ թե ուժով ճանապարհ բաց անեին իրենց համար դեպի նշված նպատակը, որքան էլ հեռու լինեք այն կամ որքան էլ ամուր պաշտպանված լինեք: Դ՛Արտանյանին զարմացնում էր միայն այն, որ իր ընկերները վաղուց չեն հանգել այս մտքին:

Նա խորհում էր սրա մասին և նույնիսկ շատ հիմնավորապես, որոնելով ուղիներ, որոնցով պետք է ընթանար քառակի մեծացած այդ արտասովոր ուժը, որի օգնությամբ— նա ամեննին չէր կասկածում— կարելի կլինեք, ասես Արքիմեդի լծակի վրա հենվելով, շուռ տալ աշխարհը, մեկ էլ հանկարծ լսվեց դռան զգուշավոր թակոց: Դ՛Արտանյանը Պլանշեին արթնացրեց և հրամայեց դուռը բաց անել:

«Պլանշեին արթնացրեց» խոսքերից թող ընթերցողը հետևություն չանի, թե արդեն գիշեր էր իջել, կամ դեռ լույսը չէր բացվել: Ամեննին: Ցերեկվա ժամը չորսը նոր էր խփել: Երկու ժամ առաջ Պլանշեն եկել էր իր տիրոջ մոտ և ճաշ խնդրել, բայց դ'Արտանյանը նրան պատասխանել էր մի առածով՝ «Քնելը ճաշելուն հավասար բան է»: Եվ Պլանշեն ճաշելու փոխարեն քնել էր:

Պլանշեն ներս հրավիրեց համեստ հագնված մի մարդու, որն ըստ երևույթին քաղաքի բնակիչ էր:

Պլանշեն շատ էր ուզում հետճաշյա անուշեղենի փոխարեն իմանալ, թե ինչի մասին են խոսելու, բայց այցելուն դ'Արտանյանին հայտնեց, որ ինքը խոսելու է մի կարևոր գաղտնի գործի մասին:

Դ'Արտանյանը Պլանշեին դուրս ուղարկեց և այցելուին խնդրեց նստել: Լռություն տիրեց: Տանտերը և հյուրը նայում էին իրար, ասես ցանկանալով նախապես կարծիք կազմել միմյանց մասին: Վերջապես դ'Արտանյանը գլուխ տվեց, ցույց տալով, որ պատրաստ է լսելու:

— Ինձ ասել են, որ պարոն դ'Արտանյանը քաջարի երի-տասարդ է,— խոսեց այցելուն:— Եվ այդ համբավը, որին նա լիովին արժանի է, ինձ դրդեց նրան վստահել իմ գաղտնիքը:

— Խոսեցե՛ք, պարոն, խոսեցե՛ք,— ասաց դ'Արտանյանը հոտ առնելով, որ այս գործը ինչ-որ օգուտ է խոստանում:

Այցելուն նորից մի պահ լռեց, ապա շարունակեց.

— Իմ կինը, պարոն, ծառայում է թագուհու մոտ որպես հանդերձապահուհի: Գեղեցիկ և խելացի կին է նա: Ինձ նրա հետ ամուսնացրել են ահա արդեն երեք տարի առաջ: Թեև օժիտն այնքան էլ մեծ չէր. բայց պարոն դր Լա Պորտը՝ թագուհու գլխավոր սենեկապետը, նրա կնքահայրն է և հովանավորը...

— Հետո՞, պարոն, հետո՞,— շտապեցրեց նրան դ'Ար-տանյանը: Հետո,— ասաց այցելուն,— հետո այն, որ իմ կնոջը հափշտակել են երեկ առավոտյան՝ հանդերձարանից դուրս գալու ժամանակ:

— Իսկ ո՞վ է հափշտակել ձեր կնոջը:

— Ես, իհարկե, հաստատ բան ասել չեմ կարող, բայց կասկածում եմ մի մարդու:

— Իսկ ո՞ւմ եք կասկածում:

— Մի մարդու, որը վաղուց արդեն հետապնդում է նրան:

— Գրո՞ղը տանի:

— Սակայն, համարձակվում եմ ասել, պարոն, ինձ թվում է, որ այս գործում խառն է ո՛չ այնքան սերը, որքան քաղաքականությունը:

— Ոչ այնքան սերը, որքան քաղաքականություն՝ նրա, — մտախոհ կրկնեց դ'Արտանյանը: — Ուրեմն ի՞նչ եք ենթադրում դուք:

— Չգիտեմ, կարո՞ղ եմ ասել ձեզ, թե ինչ եմ ենթադրում...

— Պարոն, նկատի ունեցեք, որ ես ձեզ ոչ մի բան չեմ հարցրել: Դուք ինքներդ եք եկել ինձ մոտ: Դուք ինքներդ ասացիք, որ ուզում եք ձեր գաղտնիքը վստահել ինձ: Արեք այնպես, ինչպես ձեզ հաճելի է: Դուք դեռ կարող եք հեռանալ առանց որևէ բան ասած լինելու ինձ:

— Ոչ, պարոն, ոչ: Դուք ինձ ազնիվ երիտասարդ եք թվում, և ես վստահում եմ ձեզ: Ինձ թվում է, որ այստեղ պատճառը ոչ թե իմ կնոջ անձնական սիրային գործերն են, այլ մի ուրիշ կնոջ սիրային գործեր, մի կին, որը շատ ավելի բարձր է կանգնած իմ կնոջից:

— Այդպե՛ս տիկին դը Բուա Տրասիի սիրային գործերը չեն դրանք, — ասաց դ'Արտանյանը՝ ցանկանալով իր այցելուին ցույց տալ, թե ինքը քաջատեղյակ է արքունիքի կյանքին:

— Ավելի բարձր, պարոն, շատ ավելի բարձր:

— Տիկին դ'Էգիլիոնի՞ :

— Ավելի բարձր:

— Տիկին դը Շերյոզի՞ :

— Ավելի բարձր, շատ ավելի բարձր:

— Դե հո՞ չի կարող լինել ինքը...

— Այո՛, պարոն, ճիշտ այդպես,— հազիվ լսելի սարսափով շշնջաց այցելուն:

— Ո՞ւմ հետ:

— Էլ ո՞ւմ հետ պիտի լինի, եթե ոչ դքսի...

— Դքսի՞ ...

— Այո, պարոն,— ավելի ցածր ձայնով թոթովեց հյուրը:

— Բայց այդ ամենը որտեղի՞ց է ձեզ հայտնի:

— Ախ... որտեղի՞ց է հայտնի:

— Այո, որտեղի՞ց: Լիակատար վստահություն... թե չէ... դուք ինքներդ հասկանում եք:

— Ես այդ իմացել եմ իմ կնոջից, պարոն, իմ սեփական կնոջից:

— Իսկ նա՞ որտեղից գիտե...

— Պարոն դը Լա Պորտից: Ես հո ձեզ ասացի, որ իմ կինը պարոն դը Լա Պորտի՝ թագուհու վստահելի մարդու սանն է: Եվ ահա, պարոն դը Լա Պորտը իմ կնոջը տեղավորել է նորին մեծություն թագուհու մոտ, որպեսզի մեր խեղճ թագուհին իր

կողքին ունենա գեթ մեկը, որին կարող է վստահել, մեր խեղճ թագուհին, որին լքել է թագավորը, հալածում է կարդինալը և դավաճանում են բոլորը:

— Այդպե՛ս, այդպե՛ս, դրությունը պարզ է դառնում:

— Իմ կինը, պարոն, սրանից չորս օր առաջ եկել էր ինձ մոտ. ծառայության մտնելիս նրա պայմաններից մեկն այն է եղել, որ շաբաթական երկու անգամ թույլտվություն ունենա այցելելու ինձ: Ինչպես արդեն պատիվ ունեցա պարզաբանելու ձեզ, իմ կինը ինձ շատ է սիրում, և ահա եկել էր ինձ մոտ և որպես գաղտնիք ինձ ասաց, որ թագուհին այժմ մեծ անհանգստության մեջ է:

— Իսկապե՞ս:

— Այո: Պարոն կարդինալը, ըստ կնոջս ասածի, այժմ ավելի շատ է հալածում ու ճնշում թագուհուն, քան որևէ ժամանակ: Նա չի կարողանում թագուհուն ներել սարաբանդի[61] պատմությունը: Ձեզ հո հայտնի՞ է սարաբանդի պատմությունը:

— Իհարկե: Կարո՞ղ է պատահել, որ ես չիմանամ,— պատասխանեց դ'Արտանյանը, որն իրոք ոչինչ չգիտեր, բայց ուզում էր ցույց տալ, թե իրեն ամեն ինչ հայտ-նի է:

— Այնպես որ հիմա արդեն դա ատելություն չի, այլ վրեժխնդրություն:

— Մի՞ թե:

— Եվ թագուհին ենթադրում է...

— Ի՞նչ է ենթադրում թագուհին:

— Ենթադրում է, որ իր անունից նամակ է ուղարկված դուքս Բեկինգհեմին:

— Թագուհո՞ւ անունից:

— Այո, որպեսզի նրան Փարիզ բերեն, իսկ երբ կգա Փարիզ, մի որևէ որոգայթի մեջ գցեն:

— Գրո՛ղը տանի... Բայց ձեր կիներ, պարոնս, ի՞նչ կապ ունի ձեր կիներ այդ ամենի հետ:

— Բոլորին հայտնի է նրա նվիրվածությունը թագուհուն: Կամ ուզում են նրան հեռացնել իր տիրուհուց, կամ ահաբեկել ու կորզել նորին մեծություն թագուհու գաղտնիքները, կամ թե փողով հրապուրել նրան և լրտես դարձնել:

— Հնարավոր է,— ասաց դ'Արտանյանը:— Բայց ձեզ հայտնի՞ է, ով է հափշտակել նրան:

— Ես արդեն ասացի ձեզ, ինձ թվում է, որ ես նրան գիտեմ:

— Անո՛ւնը:

— Անունը չգիտեմ: Գիտեմ միայն, որ նա կարդինալի սիրելին է և շան նման նվիրված է նրան:

— Բայց երբևիցե դուք տեսե՞լ էք նրան:

— Այո, մի անգամ կինս ցույց է տվել:

— Չունի՞ այնպիսի նշաններ, որոնցով կարելի լինի ճանաչել նրան:

— Օ՛, ինչպես չէ: Դա պատկառելի տեսքով մի պարոն է, մազերը՝ սև, դեմքը՝ թուխ, հայացքը՝ խորաթափանց, ատամները սպիտակ: Իսկ քունքին մի սպի ունի:

— Քունքին սպի՛ — գոչեց դ'Արտանյանը:— Ատամները սպիտա՛կ, հայացքը խորաթափա՛նց, ինքը թուխ, մազերը սև, տեսքը պատկառելի՛: Այդ հո նա՛ է, Մենգի անձանոթը:

— Մենգի անձանո՞թը, ասում եք:

— Այո՛, այո՛, բայց դա գործի հետ կապ չունի: Այ-սինքն ես սխալվեցի. դա գործը շատ է պարզեցնում: Եթե ձեր թշնամին միաժամանակ և իմ թշնամին է, ես վրեժ կառնեմ երկուսիս համար էլ, ահա բոլորը: Բայց որտե՞ղ գտնեմ ես այդ մարդուն:

— Այդ ես չգիտեմ:

— Դուք ոչ մի տեղեկություն չունե՞ք, թե որտեղ է ապրում նա:

— Ոչ մի: Մի անգամ, երբ ես կնոջս ուղեկցում էի Լուվր, այդ մարդը Լուվրից էր գալիս հենց այն պա-հին, երբ կինս պիտի ներս մտներ, և ահա այդտեղ կինս ցույց տվեց նրան:

— Մատանա՛: Մատանա՛,— մրմնջաց դ'Արտանյանը:— Այդ ամենը շատ անորոշ բան է: Իսկ ո՞վ է ձեզ հայտնել ձեր կնոջը հափշտակելու մասին:

— Պարոն դր Լա Պորտը:

— Որևէ մանրամասնություն հաղորդե՞լ է նա ձեզ:

— Մանրամասնությունները նրան հայտնի չէին:

— Իսկ դուք ուրիշ աղբյուրներից ոչինչ չե՞ք իմացել:

— Որոշ բան իմացել եմ... ես ստացել եմ մի...

— Ի՞նչ եք ստացել:

— Չեմ իմանում... գուցե թե սա շատ անզգույշ քայլ կլինի իմ կողմից...

— Դուք նորից վերադառնում եք նույն բանին: Սակայն պետք է ձեզ ասեմ, որ այժմ արդեն մի քիչ ուշ է նահանջելու համար:

— Դե ես չեմ էլ նահանջում, գրողը տանի,— բացականչեց հյուրը՝ փորձելով այս նզովքի միջոցով արիություն տալ իրեն:— Երդվում եմ Բոնասիեի պատվով...

— Ձեր անունը Բոնասիե՞ է:

— Այո, դա իմ ազգանունն է:

— Եվ այդպես, դուք ասացիք՝ «Երդվում եմ Բոնասիեի պատվով»... ներեցեք, որ ես ընդհատում եմ ձեզ: Բայց ինձ թվաց, որ ես արդեն ինչ-որ մի տեղ լսել եմ ձեր անունը:

— Հնարավոր է, պարոն: Ես այս տան տերն եմ:

— Ա՛խ, ա՛յ թե ի՛նչ,— գոչեց դ՛Արտանյանը՝ մի փոքր բարձրանալով ու գլուխ տալով:— Դուք այս տան տե՞րն եք:

— Այո, պարոն, այո: Եվ որովհետև արդեն երեք ամիս է, ինչ դուք ապրում եք իմ տանը և երևի բազմապիսի կարևոր գործերի պատճառով մոռացել եք բնակարանի վարձը վճարել, իսկ ես ոչ մի անգամ չեմ անհանգստաց-րել ձեզ, ուստի ինձ թվում է, որ դուք նկատի կունենաք իմ պարկեշտությունը...

— Դե ինչպե՛ս չէ, ինչպե՛ս չէ, պարոն Բոնասիե,— ասաց դ՛Արտանյանը:— Հավատացեք, որ շատ շնորհակալ եմ ձեր այդպիսի վերաբերմունքից և իմ պարտքը կհամարեմ, եթե որևէ բանով կարողանամ օգտակար լինել ձեզ:

— Ես հավատում եմ ձեզ, հավատում եմ, պարոն: Ես հենց այդ էլ ուզում էի ասել ձեզ, երդվում եմ Բոնասիեի պատվով, ես լիովին վստահում եմ ձեզ:

— Այդ դեպքում շարունակեցեք և ամեն ինչ ասացեք մինչև վերջ:

Այցելուն գրպանից հանեց մի թուղթ և մեկնեց դ՛Արտանյանին:

— Նամա՛կ,— բացականչեց երիտասարդը:

— Որ ստացել եմ այսօր առավոտյան:

Դ՛Արտանյանը նամակը բացեց և, որովհետև աղջամուղջն արդեն իջնում էր, մոտեցավ լուսամուտին: Հյուրը հետևեց նրան:

«Չորոնէք ձեր կնոջը,— կարդաց դ'Արտանյանը:— Ձեր կնոջը կվերադարձնեն ձեզ, երբ այլևս նրա կարիքը չի զգացվի: Եթէ նրան որոնելու որևէ քայլ անեք՝ կորած եք»:

— Այ, սա, համենայնդեպս, պարզ է,— ասաց դ'Արտանյանը:— Բայց, վերջիվերջո, սա միայն սպառնալիք է:

— Այո, բայց այդ սպառնալիքը ինձ սարսափեցնում է: Ախր, ես, պարոն, զինվորական մարդ չեմ և Բաստիլից վախենում եմ:

— Հը՛մ: Դե ես ինքս էլ Բաստիլը ավելի չեմ սիրում, քան դուք: Ա՛յ, ուրիշ բան է, եթէ խոսքը վերաբերեր սուսերը գործի դնելուն:

— Իսկ ես, պարոն, այնքա՛ն մեծ հույս էի դրել ձեզ վրա:

— Մի՞ թե:

— Ձեզ միշտ տեսնելով այն հիանալի հրացանակիր-ների շրջանում և իմանալով, որ դրանք պարոն դը Տրեիլի հրացանակիրներն են, հետևապէս՝ կարդինալի թշնամիներն են, ես մտածում էի, որ դուք և ձեր ընկերները, պաշտպան կանգնելով մեր խեղճ թագուհուն, միաժամանակ ուրախ կլինեք մի չար խաղ խաղալու նորին սրբազնության գլխին:

— Հասկանալի է:

— Եվ էլի, ես մտածում էի, թե քանի որ դուք ինձ երեք ամսվա բնակարանի վարձ եք պարտք, և ես ոչ մի անգամ դրա մասին ձեզ չեմ հիշեցրել...

— Այո՛, այո՛, դուք արդեն բերիք այդ փաստարկը, և ես համոզիչ եմ համարում այն:

— Մտածելով՝ նաև սրանից հետո էլ ձեզ չհիշեցնել բնակարանի վարձի մասին, որքան ժամանակ էլ դուք պատիվ անեք ինձ ապրելու իմ տանը...

— Հիանալի է:

— Ես մտադիր եմ, բացի այդ, մի հիսուն պիստոլ առաջարկել ձեզ, եթե, հակառակ հավանականության, այժմ դուք որևէ չափով դրամի պակասություն ունեք...

— Սքանչելի է: Բայց, նշանակում է, դուք հարո՞ւստ մարդ եք, պարոն Բոնասիե:

— Ես, ավելի ճիշտն ասած, ապահովված մարդ եմ: Զբաղվելով արդուզարդի առևտրով՝ ես կուտակել եմ մի փոքրիկ կապիտալ, որը տարեկան երկու հազար էքյու է բերում: Բացի դրանից, մի որոշ գումար եմ ներդրել նշանավոր ծովագնաց Ժան Մոկեի[62] վերջին ուղևորության գործում: Այնպես որ, դուք ինքներդ էլ հասկանում եք, պարոն... Բայց այն ի՞նչ բան է,— հանկարծ գոչեց պ-րն Բոնասիեն:

— Ի՞նչ է,— հարցրեց դ'Արտանյանը:

— Այնտեղ, այնտեղ...

— Որտե՞ղ:

— Փողոցում, ձեր լուսամուտի դիմաց, շքամուտքում: Մարդ է՝ թիկնոցի մեջ փաթաթված:

— Այդ նա է,— միաժամանակ բացականչեցին դ'Արտանյանն ու Բոնասիեն՝ ճանաչելով յուրաքանչյուրը իր թշնամուն:

— Ա՛, այս անգամ,— բացականչեց դ'Արտանյանը,— այս անգամ նա իմ ձեռքից չի՛ պրծնի:

Եվ սուսերը վեր թոցնելով՝ նա դուրս նետվեց սենյակից:

Սանդուղքի վրա նա դեմ առավ Աթոսին ու Պորտոսին, որոնք գալիս էին նրա մոտ: Երկու ընկերները ետ-ետ քաշվեցին, և դ'Արտանյանը նրանց արանքով դուրս թռավ նետի պես:

— Այդ ո՞ր ես վագում,— ձայն տվին նրա հետևից երկու հրացանակիրները:

— Մենզի անձանո՛թը,— ի պատասխան գոչեց դ'Արտանյանը և անհետացավ:

Դ'Արտանյանը շատ անգամ էր պատմել ընկերներին անձանոթի հետ իր հանդիպման մասին, ինչպես և այն չքնաղ ճանապարհորդ կնոջ մասին, որին այդ մարդը ինչ-որ կարևոր հանձնարարություն էր վստահել:

Աթոսը գտնում էր, որ դ'Արտանյանը հոր նամակը կորցրել է իրարանցման մեջ: Ազնվականը նրա կարծիքով,— իսկ դ'Արտանյանի նկարագրությունից նա եկել էր այն եզրակացության, որ անձանոթն անպայման ազնվական է,— ազնվականը չէր կարող ընդունակ լինել այնպիսի ստորության, ինչպիսին նամակ հափշտակելն է:

Պորտոսը հակված էր այդ գործում տեսնելու պարզապես սիրային տեսակցություն, որ նշանակել էր տիկինը ասպետին կամ ասպետը տիկնոջը, տեսակցություն, որին իրենց ներկայությամբ խանգարել են դ'Արտանյանը և իր դեղին ձին:

Իսկ Արամիսը ասում էր, որ այդ պատմությունը պարուրված է մի ինչ-որ գաղտնիքով և ավելի լավ է այդպիսի բաները հասկանալու փորձ չանել:

Դրա համար էլ դ'Արտանյանի բերանից դուրս թռած բառերից նրանք իսկույն հասկացան, թե խոսքն ում է վերաբերում: Մտածելով, որ դ'Արտանյանը անձանոթի հետևից հասնելով կամ նրան կորցնելով վերջիվերջո ստուն կվերադառնա, նրանք շարունակեցին սանդուղքով վեր բարձրանալ:

Երբ նրանք ներս մտան, դ'Արտանյանի սենյակը դատարկ էր, տանտերը երկյուղելով ընդհարման հետևանքներից, որ պիտի տեղի ունենար իր բնակչի ու անձանոթի միջև և հենվելով դ'Արտանյանի բնավորության այն գծերի վրա, որոնք ինքը հիշատակեց, մտածել էր, որ ավելի խոհեմ կլինի փախչել այդտեղից:

X. Դ'Արտանյանի բնավորությունը

Կես ժամ անց, ինչպես նախատեսել էին Աթոսն ու Պորտոսը, դ'Արտանյանը ստուն վերադարձավ: Այս անգամ էլ նա ձեռքից բաց էր թողել անձանոթին, որն ասես թաքնվում էր կախարդանքով: Դ'Արտանյանը սուսերը ձեռքին վազվզեց մերձակա

բոլոր փողոցներում, բայց չգտավ ոչ մի բան, որը նրան հիշեցներ իր որոնած մարդուն: Վերջիվերջո նա եկավ այն մտքին, ինչից որ գուցե և պետք էր սկսել. նա բախեց այն դուռը, որին հենված էր անձանոթը: Սակայն իզուր էր նա տասը-տասներկու անգամ իրար հետևից մուրճով հարվածում դռանը, ոչ ոք նրան չպատասխանեց: Հարևանները, որոնք աղմուկից անհանգստացած դուրս էին եկել իրենց տների շեմքը կամ նայում էին լուսամուտներից, հավատացնում էին, որ այդ շենքը, որի դռներն ամուր փակված են, ահա արդեն վեց ամիս է, ինչ անբնակ է: Մինչ դ'Արտանյանը վազվզում էր փողոցներում և դռները բախում, Արամիսը արդեն եկել, միացել էր իր ընկերներին, այնպես որ դ'Արտանյանը տուն վերադառնալով այնտեղ գտավ ամբողջ խումբը լրիվ կազմով:

— Է՞, ինչպե՞ս,— միաբերան հարցրին երեք հրացանակիրները նայելով դ'Արտանյանին, որը ներս մտավ ամբողջովին քրտնմխած, զայրույթից ծոմոված դեմքով:

— Ինչպե՛ս պիտի լինի,— գոչեց պատանին՝ գլխարկը նետելով մահճակալի վրա:— Այդ մարդը պետք է որ իսկական դև լինի. նա չքացավ ինչպես տեսիլք, ինչպես ուրվական:

— Դուք հավատո՞ւմ եք ուրվականներին,— հարցրեց Աթոսը Պորտոսին:

— Ես հավատում եմ միայն նրան, ինչ տեսել եմ, և որովհետև երբեք ուրվական չեմ տեսել, ուստի և չեմ հավատում նրանց:

— Աստվածաշո՛ւնչը,— գոչեց Արամիսը,— մեզ պատվիրում է հավատալ դրան. Սամվելի սովերը երևացել է Սավուդին[63], և դա հավատի դոգմա է, որն ես անհնարին եմ համարում կասկածի տակ առնել:

— Ինչ էլ որ լինի, մարդ է դա թե դև, մարմնական էակ է թե սովեր, ցնորք է թե իրականություն, բայց և այնպես այդ մարդը ծնված է ինձ կործանելու համար: Նրա փախուստն ինձ ստիպեց ձեռքից բաց թողնել մի գործ, որով կարելի էր մի քանի հարյուր պիստոլ վաստակել, գուցե և ավելի:

— Ի՞նչ միջոցով,— միաբերան բացականչեցին Պորտոսն ու Արամիսը:

Աթոսը, ինչպես միշտ, ավելորդ խոսքերից խուսափելով՝ միայն հարցական հայացքով նայեց դ'Արտանյանին:

— Պլանշե՛,— ասաց դ'Արտանյանը՝ դառնալով իր ծառային, որը դուռը կիսաբաց անելով գլուխը ներս էր խցկել ճեղքից, հուսալով խոսակցության գեթ պատահիկներ որսալ,— իջե՛ք ցած, այս տանտիրոջ պարոն Բոնասիեի մոտ և խնդրեցե՛ք ուղարկել մեզ կես դյուծին Բոժանսի գինի: Ես այդ գինին մյուս բոլոր տեսակներ-ից գերադասում եմ:

— Ա՛յ քեզ բան,— գոչեց Պորտոսը:— Դուք, ինչպես երևում է, անսահմանափակ վարկ ունե՛ք ձեր տանտիրոջ մոտ:

— Այո,— պատասխանեց դ'Արտանյանը:— Այս օրվանից: Եվ հանգիստ եղե՛ք, եթե նրա գինին վատն եղավ, մենք Պլանշեին կուղարկենք ուրիշը բերելու:

— Հարկավոր է գործից շահել, բայց ո՛չ չարաշահել,— խրատական տոնով նկատեց Արամիսը:

— Ես միշտ ասել եմ, որ դ'Արտանյանը մեր չորսի մեջ ամենախելացին է,— ասաց Աթոսը և արտասանելով այս խոսքերը, որոնց դ'Արտանյանը պատասխանեց գլուխ խոնարհելով, խորասուզվեց իր համար սովորական լռության մեջ:

— Բայց և այնպես, ի՞նչ է պատահել,— հարցրեց Պորտոսը:

— Դե, հաղորդակից արե՛ք մեզ այդ գաղտնիքին, թանկագին բարեկամ,— վրա բերեց Արամիսը:— Եթե միայն այդ պատմությանը խառը չէ որևէ տիկնոջ պատիվը, իսկ եթե այդպես է, ավելի լավ է ձեզ պահե՛ք ձեր գաղտնիքը:

— Հանգիստ եղե՛ք,— ասաց դ'Արտանյանը:— Ոչ ոքի պատիվը չի տուժի նրանից, ինչ որ պիտի հաղորդեմ ձեզ:

Ապա նա ամենայն մանրամասնությամբ ընկերներին պատմեց իր խոսակցությունը տանտիրոջ հետ, ավելացնելով, որ այդ հարգարժան քաղաքացու կնոջը փախց-նողը հենց այն անձանոթն է, որի հետ ինքն ընդհարում է ունեցել «Ազատ Ջրաղացպան» հյուրանոցում:

— Վատ գործ չէ,— ասաց Աթոսը՝ բանիմաց մարդու տեսքով կուլ տալով գինին և գլխի շարժումով հաստատելով, որ գինին լավն է:— Այդ բարի մարդուց կարելի կլինի մի հիսուն, վաթսուն պիստոլ կորզել: Մնում է միայն մտածել արժե՞ արդյոք վաթսուն պիստոլի համար վտանգի ենթարկել չորս գլուխ:

— Մի՛ մոռացեք,— բացականչեց դ'Արտանյանը,— որ այստեղ խոսքը վերաբերում է մի կնոջ, մի կնոջ, որին հափշտակել են, որն, անտարակույս, սպառնալիքների է ենթարկվում, գուցե տանջանքների, և այդ ամենը միայն նրա համար, որ հավատարիմ է եղել իր տիրուհուն:

— Զգույշ, դ'Արտանյան, զգույշ,— ասաց Արամիսը,— դուք, իմ կարծիքով, չափից ավելի մոտ եք ընդունում ձեր սրտին տիկին Բոնասիեի բախտը: Կինը ստեղծված է մեր կործանման համար, և նա է մեր բոլոր փորձանքների ակունքը:

Արամիսի այս խոսքերի վրա Աթոսը շրթունքը կծեց և հոնքերը կիտեց:

— Ես անհանգիստ եմ ոչ թե տիկին Բոնասիեի,— բացականչեց դ'Արտանյանը,— այլ թագուհու համար, որին լքել է թագավորը, հալածում է կարդինալը և որը տեսնում է, թե ինչպես իրար հետևից ընկնում են իրեն նվիրված բոլոր մարդկանց գլուխները:

— Ինչո՞ւ թագուհին սիրում է նրանց, ում մենք ամենից ավելի շատ ենք ատում՝ իսպանացիներին և անգլիացիներին:

— Իսպանիան նրա հայրենիքն է,— պատասխանեց դ'Արտանյանը,— և միանգամայն բնական է, որ նա սիրում է իսպանացիներին, իր հայրենիքի զավակներին: Ինչ վերաբերում է ձեր երկրորդ կշտամբանքին, ապա նա, ինչպես ինձ ասել են, սիրում է ոչ թե անգլիացիներին, այլ մեկ անգլիացու:

— Պետք է խոստովանեմ,— նկատեց Աթոսը,— այդ անգլիացին արժանի է սիրո: Ես երբեք նրանից ավելի ազնիվ արտաքինով մարդ չեմ տեսել:

— Էլ չեմ խոսում այն մասին,— ավելացրեց Պորտոսը,— որ այդ մարդը հազնվում է այնպես, ինչպես ոչ ոք: Ես Լուվրումն էի, երբ նա շաղ էր տալիս իր

մարգարիտները և, աստված վկա, ես էլ վերցրի երկու մարգարիտ, որոնք հետո ծախեցի հատը տասը պիստոլով: Իսկ դու, Արամիս, ճանաչո՞ւմ ես նրան:

— Այնքան լավ, որքան և դուք, պարոնայք: Ես մեկն էի նրանցից, ովքեր պահեցին նրան Ամիենի այգում, ուր տարել էր ինձ պարոն դը Պյուտանժը՝ թագուհու ախոռապետը: Այն տարիներին ես դեռ սեմինարիայում էի: Այդ պատմությունը, ինչպես ինձ թվաց, վիրավորական էր թագավորի համար:

— Եվ, այնուամենայնիվ,—ասաց դ'Արտանյանը,— եթե ես իմանայի, թե որտեղ է դուքս Բեկինգհեմը, պատրաստ կլինեի բռնել նրա ձեռքից և տանել թագուհու մոտ, թեկուզ հենց ի հեճուկս կարդինայի: Չէ՞ որ մեր ամենադաժան թշնամին կարդինալն է, և եթե մենք առիթ ունենայինք նա գլխին որևէ չար խաղ խաղալու, ես պատրաստ կլինեի նույնիսկ գլուխս վտանգի ենթարկելու:

— Եվ արդուզարդի վաճառականը, դ'Արտանյան, ձեզ ասաց, թե թագուհին երկյուղ է կրում, որ Բեկինգհեմին այստեղ են կանչել կեղծ նամակո՞վ,— հարցրեց Աթոսը:

— Թագուհին դրանից է վախենում:

— Սպասեք...— ասաց Արամիսը:

— Ի՞նչ կա,— հարցրեց Պորտոսը:

— Ոչինչ, շարունակեցեք: Ես աշխատում եմ մտաբերել որոշ հանգամանքներ:

— Եվ հիմա ես համոզված եմ,— շարունակեց դ'Արտանյանը,— համոզված եմ որ այդ կնոջ հափշտակությունը կապված է այն դեպքերի հետ, որոնց մասին մենք խոսում էինք կամ գուցե և դուքս Բեկինգհեմի Փարիզ ժամանելու հետ:

— Այս գասկոնացին արտակարգ խելամիտ է,— հիացմունքով գոչեց Պորտոսը:

— Ես շատ եմ սիրում լսել սրան,— ասաց Աթոսը:— Ինձ դուր է գալիս նրա առոգանությունը:

— Լսեցեք, ողորմած պարոններ,— խոսեց Արամիսը:

— Լսենք Արամիսին,— ասացին ընկերները:

— Երեկ ես գտնվում էի մի ամայի թաղամասում, մի գիտնական աստվածաբանի մոտ, որի հետ ես երբեմն խորհրդակցում եմ, երբ այդ պահանջում են իմ գիտա-կան աշխատությունները...

Աթոսը ժպտաց:

— Նա ապրում է մի հեռավոր թաղամասում,— շարունակեց Արամիսը,— իր հակումներին ու զբաղմունքին համապատասխան: Եվ ահա այն պահին, երբ ես դուրս էի գալիս նրա տնից...

Այստեղ Արամիսը կանգ առավ:

— Հետո՞, հետո՞ ինչ: Այն պահին, երբ դուք դուրս էիք գալիս նրա տնից...

Արամիսը ասես ջանք գործադրեց, ինչպես մի մարդ, որը չափից ավելի ստելով՝ դեմ է առնում ինչ-որ անակնկալ խոչընդոտի: Սակայն ունկնդիրներն աչքերը հառել էին նրան, բոլորը լարված սպասում էին պատմության շարունակությանը, և նահանջելն այլևս ուշ կլիներ:

— Այդ աստվածաբանն ունի մի, ազգականուհի,— շարունակեց Արամիսը:

— Ա՛յ թե ինչ: Նա ազգականուհի ունի,— ընդհատեց նրան Պորտոսը:

— Շատ հարգարժան մի տիկին,— պարզաբանեց Արամիսը:

Երեք ընկերները ծիծաղեցին:

— Եթե դուք ծիծաղում եք և կասկածում եք իմ խոսքերին,— ասաց Արամիսը,— սրանից ավելի ոչինչ չեք իմանա:

— Մենք հավատում ենք մահմեդականի պես և համր ենք ինչպես դիակառքը,—
ասաց Աթոսը:

— Դե ուրեմն շարունակում եմ,— նորից խոսեց Արամիսը:— Այդ
ազգականուհին երբեմն-երբեմն այցելում է իր քեռուն: Երեկ նա պատահաբար
այնտեղ էր ինձ հետ միասին, և ես ստիպված էի ուղեկցել նրան մինչև կառեթ:

— Ա՛խ, ա՛յ թե ինչ: Նա, աստվածաբանի այդ ազգականուհին, կառե՞թ ունի,—
նորից ընդհատեց Պորտոսը, որի գլխավոր թերությունն այն էր, որ չէր կարողանում
լեզուն իրեն պահել:— Սքանչելի ծանոթություն է, բարեկամս:

— Պորտոս,— ասաց Արամիսը,— ես արդեն մի անգամ ասել եմ ձեզ. դուք
բավարար չափով համեստ չեք, և այդ վնասում է ձեզ կանանց աչքում:

— Պարոններ, պարոններ,— գոչեց դ'Արտանյանը, հասկանալով ամբողջ գործի
աստառը,— գործը լուրջ գործ է: Աշխատենք կատակի չտալ, եթե այդ հնարավոր է:
Շարունակեցեք, Արամիս, շարունակեցեք:

— Հանկարծ մի ինչ-որ բարձրահասակ մարդ, սև մազերով, ազնվականի
շարժումներով, որ հիշեցնում էր ձեր անձանոթին, դ'Արտանյան...

— Գուցե դա հենց նա ինքն էր,— վրա բերեց դ'Արտանյանը:

— Հինգ թե վեց մարդու ուղեկցությամբ, որոնք հետևում էին նրան մի տասը
քայլ հեռավորությամբ, մոտեցավ ինձ և ասաց. «Պարոն դուքս», ապա շարունակեց. «և
դուք, տիրուհի», արդեն դառնալով տիկնոջը, որը հենվել էր իմ թևին...

— Աստվածաբանի ազգականուհո՞ւն:

— Դե լռեցե՛ք, Պորտո՛ս,— գոռաց նրա վրա Աթոսը:— Դուք անտանելի եք:

— «Բարեհաճեցեք նստել կառեթ և չփորձեք դիմադրություն ցույց տալ կամ
ամենափոքր աղմուկ անգամ բարձրացնել»,— այսպես ասաց այդ մարդը:

— Նա ձեզ Բեկլինգհեմի տե՛ղն է դրել,— գոչեց դ'Արտանյանը:

— Ես էլ այդպես եմ կարծում,— պատասխանեց Արամիսը:

— Իսկ տիկնոջը՞,— հարցրեց Պորտոսը:

— Նրան թագուհու տեղն է դրել,— ասաց դ'Արտանյանը:

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց Արամիսը:

— Այս գասկոնացին իսկական սատանա է,— բացականչեց Աթոսը:— Ոչ մի բան սրա աչքից չի վրիպում:

— Իսկապես որ,— ասաց Պորտոսը,— Արամիսը իր հասակով ու քայլվածքով հիշեցնում է գեղեցիկ դքսին: Բայց ինձ թվում է, որ հրացանակիրների հագուստը...

— Ես վրաս երկար թիկնոց ունեի,— ասաց Արամիսը:

— Հուլիս ամսի՞ն,— գոչեց Պորտոսը:— Մի՞ թե քո գիտնականը վախենում է, թե քեզ կճանաչեն:

— Ես ընդունում եմ, որ կառուցվածքը կարող էր խաբել լրտեսին, բայց դեմքը...

— Իմ գլխին լայնեզր գլխարկ կար,— բացատրեց Արամիսը:

— Օ՛, Աստված իմ,— գոչեց Պորտոսը,— ինչպիսի նախազգուշություններ՝ աստվածաբանություն ուսումնասիրելու համար:

— Պարոններ՛ր, պարոններ՛ր,— ընդհատեց նրանց դ'Արտանյանը,— եկեք ժամանակ չկորցնենք կատակների վրա: Ցրվենք զանազան կողմեր և սկսենք արդուզարդի վաճառականի կնոջ որոնումները. դա է ամբողջ ինտրիգի բանալին:

— Այդպիսի ստոր կոչումի տեր մի կի՛ն: Մի՞ թե դուք այդպես էք կարծում, դ'Արտանյան,— հարցրեց Պորտոսը՝ արհամարհանքով դուրս ցցելով ստորին շրթունքը:

— Նա դը Լա Պորտի, թագուհու հավատարիմ մարդու, սանուհին է: Մի՞թե ես այդ չասացի ձեզ, պարոններ: Բացի այդ, հնարավոր է, որ այս անգամ նորին մեծություն թագուհուն հարմար է եղել աջակցություն որոնել այդքան ցածրերում: Բարձր մարդկանց գլուխը հեռվից էլ երևում է, կարդինալը լավ տեսողություն ունի:

— Լավ, ի՛նչ կա որ,— ասաց Պորտոսը,— համաձայնության եկեք արդուզարդի վաճառականի հետ և այն էլ լավ գնով:

— Այդ հարկավոր չէ,— ասաց դ'Արտանյանը:— Ինձ թվում է, որ եթե նույնիսկ նա չվճարի, ուրիշները մեզ լավ կվարձատրեն:

Այդ բոլորին սանդուղքի վրա լավեցին շտապ քայ-լեր, դուռը շրխկոցով բացվեց, և դժբախտ վաճառականը ներս ընկավ սենյակ:

— Պարոննե՛ր,— գոռաց նա:— Ի սեր բոլոր սրբերի՝ փրկեցե՛ք ինձ: Ցածում չորս զինվոր կան, եկել են ինձ ձերբակալելու: Փրկեցե՛ք, փրկեցե՛ք ինձ:

Պորտոսը և Արամիսը վեր կացան իրենց տեղերից:

— Մի բոլակ,— գոչեց դ'Արտանյանը՝ նշան անելով նրանց, որ նորից պատյանը խրեն կիսով չափ դուրս քաշած սուսերները:

— Այստեղ քաջություն հարկավոր չէ, այլ զգուշություն:

— Դե հո չենք կարող թույլ տալ...— առարկեց Պորտոսը:

— Թողե՛ք, որ դ'Արտանյանն անի այնպես, ինչպես ինքն է ուզում,— ասաց Աթոսը:— Կրկնում եմ, նա մեր բոլորից ավելի խելացի է: Ես, համենայնդեպս, հայտարարում եմ, որ ենթարկվում եմ նրան: Վարվիր ինչպես կամենում ես, դ'Արտանյան:

Այդ պահին չորս զինվորներ երևացին նախասենյակի շեմքում: Սակայն, տեսնելով սուսերավոր չորս հրացանակիրներին, նրանք կանգ առան, սիրտ չանելով առաջ շարժվել:

— Ներս էկէք, պարոններ, ներս էկէք,— ձայն տվեց նրանց դ'Արտանյանը:— Այստեղ դուք իմ տանն եք, իսկ մենք բոլորս թագավորի և պարոն կարդինալի հավատարիմ ծառաներն ենք:

— Այդ դեպքում, ողորմած պարոններ, դուք արգելք չե՞ք հանդիսանա կատարելու մեզ տված հրամանը,— հարցրեց նրանցից մեկը, որն, ըստ երևույթին, ջոկատի պետն էր:

— Ընդհակառակն, պարոններ, մենք նույնիսկ պատրաստ ենք օգնելու ձեզ, եթե անհրաժեշտ լինի:

— Այս ինչե՞ր է ասում,— մրթմրթաց Պորտոսը:

— Հիմար ես դու,— շշնջաց Աթոսը:— Լռի՛ր:

— Բայց չէ որ դուք ինձ խոստացաք...— հազիվ լսելի ձայնով մրմնջաց դժբախտ վաճառականը:

— Մենք ձեզ օգնել կարող ենք միայն այն դեպքում, եթե ազատ մնանք,— արագ շշնջաց նրա ականջին դ'Արտանյանը:— Իսկ եթե փորձենք ձեզ պաշտպան կանգնել, մեզ էլ ձեզ հետ միասին կձերբակալեն:

— Բայց ինձ թվում է...

— Խնդրեմ, պարոններ, խնդրեմ,— բարձր ասաց դ'Արտանյանը: — Ես ոչ մի հիմք չունեմ այս մարդուն պաշտպանելու: Առաջին անգամ այսօր եմ տեսել սրան, և այն էլ ինչպիսի՞ հանգամանքներում, ինքը կպատմի ձեզ, նա եկել էր ինձնից բնակարանի վարձը պահանջելու: Ճիշտ չե՞մ ասում, պարոն Բոնասիե: Պատասխանեցեք:

— Ճիշտ և ճիշտ,— թոթովեց վաճառականը:— Բայց պարոն հրացանակիրը չասաց որ...

— Ոչ մի խոսք իմ մասին, ոչ մի խոսք իմ ընկերների մասին և մանավանդ ոչ մի խոսք թագուհու մասին, թե չէ՝ դուք կկործանեք բոլորին,— շշնջաց դ'Արտանյանը,

ապա բարձրաձայն ավելացրեց.— Գործի անցեք, պարոններ, գործի անցեք: Վերցրեք այս մարդուն:

Եվ դ'Արտանյանը զինվորների կողմը հրեց կատա-րելապես շշմած վաճառականին:

— Դուք բռի մարդ եք, թանկագինս: Գալիս եք փող պահանջելու, այն էլ ինձնից, հրացանակրի՛ց: Բա՛նտ: Կրկնում եմ, պարոննե՛ր, բանտ տարեք սրան և որքան կարելի է երկար պահեցեք փակի տակ, մինչև որ ես կարողանամ փող հավաքել վճարելու համար:

Զինվորները, շնորհակալության խոսքեր շաղ տալով, տարան իրենց գոհին:

Նրանք արդեն սկսել էին սանդուղքից իջնել, երբ հանկարծ դ'Արտանյանը թփթփացրեց նրանց պետի ուսին:

— Չիմե՞մ ես ձեր կենացը, դուք էլ իմը,— առաջարկեց նա՝ երկու բաժակ լցնելով Բոժանսի զինիով, որ ստացել էր պարոն Բոնասիեից:

— Խիստ մեծ պատիվ է ինձ համար,— մրմնջաց զինվորների պետը:— Շատ շնորհակալ եմ:

— Դե ուրեմն՝ ձեր կենացը, պարոն... Ի՞նչ է ձեր անունը:

— Բուարենար:

— Պարոն Բուարենա՛ր:

— Ձեր կենացը, ողորմած տեր: Ի՞նչ է ձեր հարգելի անունը, թույլ տվեք հարցնել:

— Դ'Արտանյան:

— Ձեր կենացը, պարոն դ'Արտանյան:

— Իսկ գլխավորը՝ այ թե ում կենացը,— գոչեց դ'Արտանյանը՝ ասես խանդավառված.— Թագավորի՛ կենացը, կարդինալի՛ կենացը:

Եթե գինին վատը լիներ, զինվորների պետը գուցե կասկածեր դ'Արտանյանի անկեղծությանը, բայց գինին լավն էր, և նա հավատաց:

— Այս ի՞նչ գարշելի բան արիք դուք,— ասաց Պորտոսը, երբ պետը գնաց իր ստորադրյալների հետևից, և չորս ընկերները մենակ մնացին:— Մի՞ թե ամոթ չէ: Չորս հրացանակիրները թույլատրում են ձերբակալել մի թշվառ մարդու, որը վազեվազ եկել, նրանց օգնությանն է դիմել: Ազնվականը խմում է խուզարկուի հետ:

— Պորտո՛ս,— նկատեց Արամիսը:— Աթոսն արդեն ասաց քեզ, որ դու հիմար ես, և ես ստիպված եմ համաձայնել նրա հետ: Դ'Արտանյա՛ն, դու մեծ մարդ ես, և երբ կգրավես պարոն դը Տրևիլի տեղը, ես քեզ կխնդրեմ հովանավորել ինձ և օգնել վանահայր դառնալու:

— Ոչինչ չեմ հասկանում,— գոչեց Պորտոսը:— Դուք հավանությո՞ւն եք տալիս դ'Արտանյանի արարքին:

— Այն էլ ինչպե՛ս, գրողը տանի,— ասաց Արամիսը:— Ոչ միայն հավանությունն եմ տալիս, այլև նույնիսկ շնորհավորում եմ նրան:

— Իսկ հիմա, պարոննե՛ր,— ասաց դ'Արտանյանը՝ նույնիսկ չփորձելով իր վարմունքը բացատրել Պորտոսին,— մեկը բոլորի համար և բոլորը՝ մեկի, այսուհետև սա է մեր նշանաբանը, ճիշտ չէ՞:

— Բայց...— ուզեց սկսել Պորտոսը:

— Մեկնիր ձեռքդ և երդվի՛ր,— միաձայն գոչեցին Արամիսն ու Աթոսը: Նրանց օրինակից վարակվելով, այնուամենայնիվ էլի ինչ-որ բան փնթփնթալով քթի տակ, Պորտոսը ձեռքը մեկնեց, և չորսն էլ միասին խմբովին կրկնեցին դ'Արտանյանի թելադրած խոսքերը:

— Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի:

— Հիանալի՛ է: Այժմ թող յուրաքանչյուրդ տուն գնա,— ասաց դ’Արտանյանը, ասես ամբողջ կյանքում հենց միայն հրամաններ էր տվել:— Եվ զգույշ եղեք, որովհետև այս բուպեից մենք պայքարի մեջ ենք մտել կարդինալի դեմ:

X. Թակարդ տասնյոթերորդ դարում

Թակարդը ամեննին էլ մեր օրերի գյուտ չէ: Հենց որ հասարակությունը կազմավորվեց ու ոստիկանություն հնարեց, ոստիկանությունն էլ թակարդ հնարեց: Նկատի ունենալով, որ մեր ընթերցողները դեռևս չեն վարժվել Փարիզի ոստիկանության յուրահատուկ լեզվին, և մենք ավելի քան տասնհինգ տարվա մեր դրական աշխատանքի ընթացքում առաջին անգամն ենք այս արտահայտությունը գործածում այդ բանին հարմարեցրած, կաշխատենք պարզաբանել, թե խոսքն ինչի մասին է: Երբ որևէ տան մեջ, միևնույն է թե ինչպիսի, հանցանքի մեջ կասկածելի մարդ են ձերբակալում, այդ ձերբակալությունը գաղտնի է պահվում: Առաջին սենյակում դարան են սարքում՝ բաղկացած չորս կամ հինգ ոստիկանից, դուռը բաց են անում բոլորի առաջ, ով էլ բախելու լինի, ապա փակում են այն և եկվորին ձերբակալում: Այսպիսով, երկու-երեք օր չանցած՝ այդ տան բոլոր մշտական հաճախորդները փակի տակ են լինում:

Ահա թե ինչ բան է թակարդը:

Պ-րն Բոնասսիեի բնակարանում հենց այդպիսի թակարդ լարեցին, և բոլորին, ով գալիս էր այդտեղ, պարոն կարդինալի մարդիկ բռնում էին ու հարցաքննում: Որովհետև դ’Արտանյանի զբաղեցրած սենյակը, որ գտնվում էր երկրորդ հարկում, առանձին մուտք ուներ, ուստի նրա հյուրերը ոչ մի անախորժության չէին ենթարկվում:

Ասենք՝ նրա մոտ գալիս էին միայն նրա երեք ընկերները: Երեքն էլ զբաղված էին որոնումներով, յուրաքանչյուրն իր ուզած ձևով, սակայն դեռևս ոչինչ չէին գտել, ոչ մի բան չէին հայտնաբերել: Աթոսը նույնիսկ սիրտ արավ մի քանի հարց տալ պ-րն դը Տրևիլին, որը, նկատի ունենալով պանծալի հրացանակրի սովորական սակավախոսությունը, խիստ զարմացրեց նրա կապիտանին: Մակայն դը Տրևիլը ոչինչ չգիտեր, բացի նրանից, որ այն օրը, երբ ինքը վերջին անգամ տեսել էր կարդինալին, թագավորին ու թագուհուն, կարդինալը նրան թվացել էր մտահոգ, թագավորն ասես ինչ-որ բանից անհանգստացած էր, իսկ թագուհու չքնաղ աչքերն ասում էին, որ նա

կամ անքուն է մնացել, կամ լաց է եղել: Վերջին հանգամանքը նրան չէր զարմացրել. թագուհին իր ամուսնությունից հետո հաճախ էր անքուն մնում և շատ էր լաց լինում:

Պ-րն դը Տրևիլը համենայն դեպս Աթոսին հիշեցրեց, որ նա պետք է անձնվիրաբար ծառայի թագավորին և մանավանդ թագուհուն, խնդրելով, որ իր այդ ցանկությունը նա հաղորդի նաև իր ընկերներին:

Ինչ վերաբերում է դ'Արտանյանին, նա նստել էր իր տանը: Իր սենյակը նա դարձրել էր դիտակետ: Լուսամուտից տեսնում էր բոլորին, ովքեր գալիս էին և ընկնում որոգայթը: Հետո մի փոքր տեղ հատակը քանդեց, այնպես, որ ներքևի հարկից, որտեղ հարցաքննությունն էր տեղի ունենում, նրան բաժանում էր միայն առաստաղի բարակ շերտը:

Այսպիսով նա հնարավորություն ստացավ լսելու ամեն բան, ինչ որ խոսում էին խուզարկուներն ու մեղադրյալները: Հարցաքննությունները, որից առաջ ձեռքակալվածներին խնամքով խուզարկում էին, համարյա միշտ հանգում էին հետևյալին:

«Արդյոք տիկին Բոնասիեն չի հանձնարարել ձեզ որևէ բան հանձնել իր ամուսնուն կամ մի ուրիշ անձի»:

«Արդյոք պարոն Բոնասիեն չի հանձնարարել ձեզ որևէ բան հանձնել իր կնոջը կամ մի ուրիշ անձի»:

«Արդյոք բերանացի որևէ գաղտնիք չեն հայտնել ձեզ նրանք»:

«Եթե սրանց մի որևէ բան հայտնի լիներ,— մտածեց դ'Արտանյանը,— այսպիսի բաներ չէին հարցնի: Այժմ մի հարց. ի՞նչ են ուզում իմանալ նրանք: Երևի ուզում են իմանալ արդյոք Բեկինգհեմը Փարիզո՞ւմն է և տեսակցություն ունեցե՞լ է թագուհու հետ կամ առաջիկայում տեսակցություն ունենալու է»:

Դ'Արտանյանը կառչեց այս ենթադրությունից, որը, դատելով ըստ բոլոր հանգամանքների, զուրկ չէր հավանականությունից: Իսկ առայժմ թակարդը գործում էր անընդհատ, և դ'Արտանյանի ուշադրությունը չէր թուլանում:

Թշվառ Բոնասիեի ձերբակալության հաջորդ օրը, երեկոյան, երբ Աթոսը գնացել էր պ-րն դը Տրեիլի մոտ ու ժամը ինը նոր էր խփել, իսկ Պլանշեն, որը դեռ անկողին չէր գցել, արդեն ուզում էր ձեռնամուխ լինել այդ գործին, մեկը փողոցի մուտքի դուռը բախեց: Դուռը միանգամից բացվեց, ապա իսկույն փակվեց, ինչ-որ մեկն ընկավ թակարդը:

Դ'Արտանյանը նետվեց այնտեղ, որտեղ հատակը քանդված էր, երեսի վրա պառկեց և ամբողջովին լսո-դություն դարձավ:

Շուտով ճիչեր լսվեցին, ապա՝ տնքոցներ, որոնք, ըստ երևույթին, աշխատում էին խլացնել: Հարցաքննության մասին խոսք անգամ չկար:

«Գրողը տանի,— մտածեց դ'Արտանյանը: — Ինձ թվում է, որ դա կին է, նրան խուզարկում են, նա էլ դիմադրում է... Նրանք ուժ են գործադրում... Սրիկանե՛ր...»:

Դ'Արտանյանը ստիպված եղավ լարել բոլոր ուժերը, որպեսզի չմիջամտի այնտեղ ներքևում կատարվող դեպքերին:

— Դե ասում եմ չէ, պարոննե՛ր, որ ես այս տան տի-րուհին եմ, ասում եմ ձեզ, որ ես տիկին Բոնասիեն եմ, ծառայում եմ թագուհու մոտ,— գոռում էր դժբախտ կինը:

— Տիկին Բոնասիե՛, — շնչաց դ'Արտանյանը: — Մի՞ թե իմ բախտը բերեց, ու ես գտել եմ այն, ինչ որոնում են բոլորը:

— Մենք էլ հենց ձեզ էինք սպասում,— պատասխանում էին նրան:

Ձայնն ավելի ու ավելի խուլ էր դառնում: Ինչ-որ աղմկոտ իրարանցում սկսվեց: Կինը դիմադրում էր այնպես, ինչպես մի կին կարող է դիմադրել չորս սողամարդու:

— Բա՛ց թողեք ինձ... բա՛ց թողեք...— դեռևս հնչում էր կնոջ ձայնը: Դրանք վերջին հասկանալի բառերն էին:

— Նրանք փակում են նրա բերանը, հիմա դուրս կտանեն,— գոչեց դ'Արտանյանը՝ վեր ցատկելով ասես զսպանակի վրա: — Սուսե՛րս... Ասենք՝ սուսերս մոտս է... Պլանշե՛:

— Ի՞նչ կհրամայեք:

— Վազիր Աթոսի, Պորտոսի ու Արամիսի հետևից: Երեքից մեկն ու մեկին երևի կգտնես, կամ գուցե երեքն էլ արդեն տուն են վերադարձել: Ասա, որ զենքը վերցնեն, ասա, որ շտապեն, այստեղ վազեն: Ա՛խ, հիշեցի. Աթոսը պարոն դը Տրևիլի մոտ է:

— Բայց այդ ո՞ր, ո՞ւր եք գնում դուք, տեր իմ:

— Ես ցած կիջնեմ լուսամուտով,— գոչեց դ՛Արտանյանը:— Այսպես ավելի արագ կլինի: Իսկ դու քանդած պարկետը տեղը դիր, հատակը մաքրիր, դուրս արի դռնով և վազիր այնտեղ, ուր հրամայեցի:

— Օ՛, տեր իմ, տեր իմ, դուք կջարդվեք,— գոչեց Պլանշեն:

— Լռի՛ր, է՛շ,— գոռաց դ՛Արտանյանը:

Եվ լուսամուտագոգից կախվելով՝ նա ցած թռավ երկրորդ հարկից, որը բարեբախտաբար շատ բարձր չէր. նա նույնիսկ ջարդվածք չստացավ:

Եվ իսկույն մուտքի դռանը մոտենալով՝ նա կամացուկ բախեց. ինքն իրեն շշնջալով.

— Հիմա ես էլ մկան թակարդը կընկնեմ, և վա՛յ այն կատուներին, որոնք կհամարձակվեն ձեռք տալ այսպի-սի մկանը...

Հենց որ մուրձիկը զարկվեց դռանը, ներսում աղ-մուկն իսկույն դադարեց: Քայլեր լսվեցին, դուռը բացվեց, և դ՛Արտանյանը սուսերը մերկացնելով ներխուժեց պարոն Բոնասիեի բնակարանը, որի դուռն, ըստ երևույթին, զսպանակ ունենալով՝ ինքն իրեն ծածկվեց նրա ետևից:

Եվ այն ժամանակ այդ չարաբաստիկ տան մյուս բնակիչները, ինչպես և մոտակա հարևանները լսեցին կատաղի ճիչեր, թփթփոց, սուսերների զնգոց և այսուայն կողմ քաշքշվող իրերի դղրիդ: Քիչ անց՝ բոլոր նրանք, ովքեր աղմուկից անհանգստացած գլուխները դուրս էին հանել լուսամուտներից, որպեսզի տեսնեն ինչ

է պատահել, կարող էին տեսնել, թե ինչպէս նորից դուռը բացվեց և սև հագուստով չորս մարդ ոչ թե դուրս եկան, այլ խրտնած ագռավների երամի պէս դուրս թռան այդ տնից, հատակին ու սեղանների անկյուններին թողնելով իրենց թևերից պոկված փետուրները, այլ խոսքով ասած՝ հագուստի ծվենները և թիկնոցների պատառները:

Պետք է ասել, որ դ'Արտանյանը հաղթանակի հասավ առանց մեծ դժվարության, որովհետև խուզարկուներից միայն մեկն էր զինված, այն էլ պաշտպանվում էր միայն ձևի համար: Մյուսները, ճիշտ է, ուզում էին ուշաթափ անել երիտասարդին՝ նրա վրա նետելով աթոռներ, տաբուրետներ և նույնիսկ ծաղկամաններ: Սակայն գասկոնացու սուսերի պատճառած մի քանի չանգովածքը սարսափ տարածեց նրանց վրա: Տասը բոպէն բավական եղավ նրանց լիակատար պարտության մատնելու համար, և դ'Արտանյանը կռվի դաշտի տերն ու տիրակալնր դարձավ:

Հարևանները, որոնք լուսամուտները բաց էին արել այն սառնարյունությամբ, որ հատուկ էր մշտական ապստամբությունների ու զինված ընդհարումների այդ ժամանակների փարիզեցիներին, սև շորերով այն չորս մարդկանց փախուստից հետո իսկույն փակեցին իրենց լուսամուտները: Հոտառությունը նրանց թելադրում էր, որ առայժմ ամեն ինչ վերջացած է:

Բացի դրանից արդեն բավական ուշ էր, իսկ այն ժամանակ, ինչպէս և հիմա, Լյուքսեմբուրգի պալատի մեր-ձակա թաղամասերում վաղ էին պառկում քնելու: Մենակ մնալով տիկին Բոնասիէի հետ, դ'Արտանյանը շրջվեց նրա կողմը: Խեղճ կինը համարյա անզգա պառ-կած էր բազկաթոռին: Դ'Արտանյանը մի արագ հայացք գցեց նրա վրա:

Դա քսանհինգ-քսանվեց տարեկան մի չքնաղ կին էր՝ թուխ մազերով, երկնագույն աչքերով, փոքր-ինչ վեր տնկված քթիկով, սքանչելի ատամներով: Նրա մարմարի նման ճերմակ մաշկը ծիածանաքարի պէս վարդագույն փայլ ուներ: Սակայն սրանով էլ վերջանում էին այն գծերը, որոնցով նրան կարելի էր բարձր դասի տիկնոջ տեղ դնել: Ձեռքերը ճերմակ էին, բայց՝ կոպտավուն: Ոտքերը ևս բարձր ծագումը չէին ցույց տալիս: Ի բարեբախտություն դ'Արտանյանի՝ այսպիսի մանրամասնությունները նա դեռ բանի տեղ չէր դնում:

Ջննելով տիկին Բոնասիէին և, ինչպէս արդէն ասացինք, հայացքը բնեռելով նրա ոտքերի վրա՝ հանկարծ նկատեց հատակին ընկած մի բատիստե թաշկինակ, որը իր սովորության համաձայն վերցրեց գետնից: Թաշկինակի անկյունում նկատեց մի զինանիշ, որը նա մի անգամ տեսել էր այն թաշկինակի վրա, որի պատճառով ինքն ու Արամիսը քիչ մնաց միմյանց կոկորդ կտրեին:

Հենց այդ ժամանակից դ'Արտանյանն անվստահություն ուներ զինանշանով թաշկինակների նկատմամբ: Դրա համար էլ առանց մի բան ասելու վերցրած թաշկինակը դրեց տիկին Բոնասիէի գրպանը: Այդ պահին դեռատի կինը ուշքի էր եկել: Աչքերը բացելով և սարսափած շուրջը նայելով, նա տեսավ, որ բնակարանը դատարկ է և ինքը մենակ է մնացել իր փրկչի հետ: Նա իսկույն ձեռքը մեկնեց դ'Արտանյանին ու ժպտաց: Տիկին Բոնասիէի ժպիտը լի էր թովչանքով:

— Ա՛խ, պարոն,— խոսեց նա:— Դուք փրկեցիք ինձ: Թույլ տվեք շնորհակալություն հայտնել ձեզ:

— Տիկին,— պատասխանեց դ'Արտանյանը,— ես արեցի միայն այն, ինչ կաներ ամեն մի ազնվական, եթե իմ տեղը լիներ: Ուստի և դուք ամենևին պարտավոր չեք շնորհակալություն հայտնել ինձ:

— Օ՛, ո՛չ, ո՛չ, և ես հույս ունեմ ապացուցել ձեզ, որ գիտեմ շնորհակալ լինել: Բայց ի՞նչ էին ուզում ինձնից այդ մարդիկ, որոնց ես սկզբում գողերի տեղ էի դրել, և ինչո՞ւ այստեղ չէ պարոն Բոնասիէն:

— Այդ մարդիկ, տիկին, շատ ու շատ ավելի վտանգա-վոր էին գողերից: Դրանք պարոն կարդինալի մարդիկ են: Ինչ վերաբերում է ձեր ամուսնուն՝ պարոն Բոնասիէին, ապա նա այստեղ չէ, որովհետև երեկ նրան ձերբակալեցին և տարան Բաստիլ:

— Իմ ամուսինը Բաստիլո՞ւմ է,— գոչեց տիկին Բոնասիէն:— Օ՛, աստված իմ, աստված իմ: Ի՞նչ կարող է արա ծ լինել նա, իմ խեղճ ամուսինը: Ախր նա ինքը անմեղությունն է:

Եվ դեռատի կնոջ դեռևս վախեցած դեմքի վրայով ժպիտի նման մի բան սահեց:

— Ինչ է արել նա՞, տիկին,— ասաց դ'Արտանյանը:— Ինձ թվում է՝ նրա միակ հանցանքն այն է, որ նա միաժա-մանակ և՛ բախտ, և՛ դժբախտություն ունի ձեր ամուսինը լինելու:

— Բայց, նշանակում է, ձեզ հայտնի է, պարոն...

— Ինձ հայտնի է, որ ձեզ փախցրել էին:

— Բայց ո՞վ, ո՞վ: Այդ հայտնի՞ է ձեզ: Օ՛, եթե դուք այդ գիտեք, ասացեք ինձ:

— Քառասուն թե քառասունհինգ տարեկան մի մարդ սև մազերով, թուխ դեմքով, ձախ քունքին՝ սպի...

— Ճիշտ է, ճիշտ: Իսկ անո՞ւնը:

— Անո՞ւնը... հենց այդ է, որ չգիտեմ:

— Իսկ իմ ամ ուսինը գիտե՞ր, որ ինձ փախցրել են:

— Այդ բանը նա իմացել էր այն նամակից, որը գրել էր հենց ձեզ փախցնողը:

— Իսկ նա հասկանո՞ւմ էր այդ հափշտակության պատճառը,— շփոթվելով հարցրեց տիկին Բոնասին:

— Նա, ինձ թվում էք ենթադրում էր, որ այս գործում քաղաքականությունն է խառը:

— Սկզբում ես կասկածում էի դրան, բայց հիմա ինքս էլ այդ կարծիքին եմ: Ուրեմն ոչ մի բռպե ինձ չէ՞ր կասկածում իմ այդ բարի պարոն Բոնասին:

— Օ՛, ո՛չ մի բռպե: Նա այնպե՛ս էր պարծենում ձեր ողջախոհությամբ և ձեր սիրով:

Ժպիտը նորից սահեց այդ սիրունիկ դեռատի կնոջ վարդագույն շուրթերով:

— Բայց ձեզ ինչպե՞ս հաջողվեց փախչել,— շարունակեց հարցուփորձ անել դ'Արտանյանը:

— Ես օգտվեցի պահից, երբ մենակ էի մնացել, և որովհետև այսօր առավոտյան ինձ հայտնի էր դարձել ինձ փախցնելու պատճառը, դրա համար էլ սավանների օգնությամբ լուսամուտից ցած իջա: Կարծում էի, թե ամուսինս տանը կլինի ու վազեցի այստեղ:

— Որպեսզի նրա մոտ պաշտպանություն՞ ւն գտնեք:

— Օ՛, ո՛չ: Իմ խեղճ, իմ սիրելի ամուսինը... Ես գիտեի, որ նա ընդունակ չէ ինձ պաշտպանելու: Բայց որովհետև նա կարող էր մի այլ միջոցով մեզ օգնել, ես ուզում էի նախազգուշացնել նրան:

— Ինչի՞ մասին:

— Ոչ, դա արդեն իմ գաղտնիքը չէ, դրա համար էլ չեմ կարող ասել ձեզ:

— Ի դեպ,— ասաց դ'Արտանյանը,— ներեցեք, տիկին, որ թեպետև ես գվարդիական եմ, բայց և այնպես ստիպված եմ ձեզ զգուշանալու կոչ անել, ինձ թվում է, թե սա հարմար տեղ չէ որևէ գաղտնիք վստահելու համար: Խուզարկուները, որոնց ես վճռեցի, կարող են վերադառնալ ավելի մեծ ուժերով: Եթե նրանք մեզ այստեղ գտնեն, մենք կորած ենք: Ճիշտ է, ես մարդ եմ ուղարկել իմ երեք ընկերներիս տեղեկացնելու, բայց ո՛վ գիտե, տանը կլինե՞ն նրանք:

— Այո, այո, դուք իրավացի եք,— վախեցած բացականչեց Բոնասին:— Շուտ փախչենք այստեղից, թաքնվենք:

Այս ասելով նա դ'Արտանյանին թևանցուկ արեց և հրեց դեպի դուռը:

— Բայց ո՞ւր փախչել,— գոչեց դ'Արտանյանը:— Որտե՞ղ թաքնվել:

— Ամենից առաջ՝ հեռու այս տնից: Հետո կտեսնենք:

Նրանք դուրս եկան տնից և նույնիսկ դուռն առանց ծածկելու վազեցին Գերեզմանափորների փողոցով, շուտ եկան դեպի Թագավորական ձորը և կանգ առան միայն Սեն Սյուլպիս հրապարակի մոտ:

— Հիմա ի՞նչ անենք,— հարցրեց դ'Արտանյանը:— Ո՞ր տանեմ ձեզ:

— Ճիշտն ասած՝ չգիտեմ ինչ պատասխանեմ ձեզ,— ասաց տիկին Բոնասիեն:— Ես ուզում էի իմ ամուսնու միջոցով կանչել պարոն դը Լա Պորտին և նրանից իմանալ, թե վերջին երեք օրն ինչ է կատարվել Լուվրում, և ինձ համար վտանգավոր չէ՞ր լինի այնտեղ երևալ:

— Բայց ես ինքս էլ կարող եմ գնալ ու կանչեց պարոն դը Լա Պորտին,— ասաց դ'Արտանյանը:

— Իհարկե, բայց ցավն այն է, որ պարոն Բոնասիեին Լուվրում ճանաչում են և նրան ներս կթողնեն: Իսկ ձեզ չեն ճանաչում և դուռը ձեր առաջ փակ կլինի:

— Դատարկ բան է,— առարկեց դ'Արտանյանը:— Լուվրի մուտքերից որևէ մեկի մոտ երևի կգտնվի ձեզ նվիրված մի դռնապան, որը նշանաբանը լսելով...

Տիկին Բոնասիեն ակնդետ նայեց երիտասարդին:

— Իսկ եթե ես ձեզ նշանաբանն ասեմ,— շշնջաց նա,— դուք կմոռանա՞ք այն օգտագործելուն պես:

— Ազնիվ խոսք, ազնվականի խոսք,— ասաց դ'Արտանյանը՝ կասկածի տեղ չթողնելով:

— Լավ: Հավատում եմ ձեզ: Դուք հիանալի երիտասարդ եք երևում: Եվ, թերևս, ձեր նվիրվածությունից է կախված ձեր ապագան:

— Ես խոստումներ չեմ պահանջում և ազնվորեն կանեմ ամեն բան, ինչ ուժերս կներեն, որպեսզի ծառայեմ թագավորին և հաճելի լինեմ թագուհուն,— ասաց դ'Արտանյանը:— Օգտագործեցեք ինձ որպես բարեկամի:

— Բայց ինձ որտե՞ղ կթաքցնեք այդ ժամանակամիջոցում:

— Չունե՞ք դուք այնպիսի մի մարդ, որի մոտ գար պարոն դը Լա Պորտը ձեզ տեսնելու համար:

— Ոչ, ես չեմ ուզում որևէ մեկին տեղյակ դարձնել այս գործին:

— Սպասեցեք,— ասաց դ'Արտանյանը:— Մենք հենց Աթոսի տան կողքին ենք: Այո, ճիշտ որ:

— Ո՞վ է Աթոսը:

— Իմ ընկերներից մեկը:

— Բայց եթե նա տանն է և ինձ տեսնի՞:

— Նա տանը չի, և ձեզ նրա բնակարանում տեղավորելուց հետո բանալին կտանեմ ինձ հետ:

— Իսկ եթե նա վերադառնա՞:

— Չի վերադառնա: Ծայրահեղ դեպքում նրան կասեմ, որ ես մի կին եմ բերել, և այդ կինը գտնվում է իր բնակարանում:

— Բայց դա կարող է շատ խիստ խայտառակել ինձ, հասկանո՞ւմ եք:

— Ձեր ի՛նչ գործն է: Ոչ ոք այնտեղ ձեզ չի ճանաչում: Բացի այդ, մենք այնպիսի դրության մեջ ենք, որ կարող ենք այդպիսի բաները հաշվի չառնել:

— Լավ, գնանք ձեր ընկերոջ մոտ: Որտե՞ղ է ապրում նա:

— Ֆերու փողոցում, այստեղից երկու քայլի վրա:

— Գնանք:

Եվ նրանք առաջ վազեցին: Աթոսը, ինչպես նախատեսել էր դ'Արտանյանը, տանը չէր: Դ'Արտանյանը վերց-րեց բանալին, որ նրան, որպես Աթոռի ընկերոջը, միշտ տալիս էին առանց առարկելու, սանդուղքով վեր բարձրացավ և տիկին Բոնասիեին ներս տարավ այն փոքրիկ բնակարանը, որն արդեն նկարագրել ենք:

— Տեղավորվեցեք ինչպես ձեր տանը,— ասաց նա:— Սպասեք. դուռը ներսից փակեք և ոչ ոքի բաց չանեք, և բաց կանեք միայն այն դեպքում, եթե կբախեն երեք անգամ, ահա այսպես:— Եվ նա բախեց երեք անգամ. երկուսը՝ իրար հետևից և բավական ուժեղ, իսկ երրորդը՝ փոքր-ինչ ընդմիջումով և ավելի թույլ:

— Լավ,— ասաց տիկին Բոնասիեն:— Այժմ իմ հերթն է ձեզ խրատներ տալու:

— Լսում եմ ձեզ:

— Գնացեք Լուվր և բախեցեք դեպի Էշել փողոց բացվող դուռը: Խնդրեցեք ժերմենին:

— Լավ, իսկ հետո՞:

— Նա կհարցնի՝ ինչ էք ուզում: Եվ պատասխանի փո-խարեն դուք կասեք երկու բառ «Տուր և Բոյուսել»: Այն ժամանակ նա կկատարի ձեր հրամանը:

— Իսկ ի՞նչ պիտի հրամայեմ ես նրան:

— Կանչել պարոն դը Լա Պորտին՝ թագուհու սենեկապետին:

— Իսկ երբ նա կկանչի նրան, և պարոն դը Լա Պորտը դուրս կգա:

— Դուք նրան կուղարկեք ինձ մոտ:

— Հիանալի է: Բայց որտե՞ղ և ե՞րբ ես ձեզ կտեսնեմ նորից:

— Իսկ դուք շա՞տ եք ուզում նորից հանդիպել ինձ:

— Իհա՛րկե:

— Այդ դեպքում թողեք, որ ես հոգամ դրա մասին և հանգիստ եղեք:

— Ես հավատում եմ ձեր խոսքին:

— Կարող եք հավատալ:

Դ՛Արտանյանը գլուխ խոնարհեց տիկին Բոնասիեն, նրա վրա զգելով ամենասաստիկ սիրահարվածի մի հայացք, որով միայն կարելի էր ընդգրկել նրա ողջ փոքրիկ կառուցվածքը, և երբ սանդուղքով ցած էր իջնում, լսեց, թե ինչպես դուռը իր հետևից ծածկվեց և բանալին փականքի մեջ երկու անգամ պտտվեց: Դ՛Արտանյանը իսկույն վազեց մինչև Լուվր: Մոտենալով Էշել փողոցի կողմից՝ նա լսեց, թե ինչպես խփեց ժամը տասը: Մեր այս նկարագրած բոլոր դեպքերը տեղի ունեցան ընդամենը մի կես ժամվա ընթացքում:

Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես ասել էր տիկին Բոնասիեն: Նշանաբանը լսելով Ժերմենը գլուխ խոնարհեց: Դեռ տասը րոպե չանցած՝ Լա Պորտն արդեն դռնապանի սենյակումն էր: Դ՛Արտանյանը մի երկու խոսքով պատմեց նրան ամեն բան, ինչ տեղի էր ունեցել և հայտնեց, թե որտեղ է գտնվում տիկին Բոնասիեն: Բայց երկու քայլ էլ չարած՝ հանկարծ ետ դարձավ:

— Երիտասարդ,— ասաց նա՝ դառնալով դ՛Արտանյանին:— Թույլ տվեք ձեզ մի խորհուրդ տալ:

— Ի՞նչ խորհուրդ:

— Այն, ինչ տեղի է ունեցել, կարող է ձեզ անախորժություններ պատճառել:

— Դուք կարծո՞ւմ եք:

— Այո: Դուք չունե՞ք այնպիսի մի ընկեր, որի ժամացույցը ետ է մնում:

— Հետո՞ ինչ:

— Այցելեցեք ձեր այդ ընկերոջը, որպեսզի հետո նա կարողանա ասել, որ ինն անց կեսից դուք եղել եք նրա մոտ: Իրավաբաններն այդ կոչում են ավիբի:

Դ'Արտանյանը գտավ, որ դա խելամիտ խորհուրդ է և որքան ուժ ունեւր վազեց պ-րն դը Տրևիլի մոտ: Սակայն դեռ ընդունարան չմտած, որտեղ սովորականի պես մեծ բազմություն կար, նա խնդրեց իրեն թույլ տալ կաբինետ մտնել: Որովհետև դ'Արտանյանը հաճախ էր լինում այստեղ, նրա խնդիրքն իսկույն կատարեցին, և սպասավորը գնաց պ-րն դը Տրևիլին գեկուցելու, որ նրա երիտասարդ հայրենակիցը, ցանկանալով ինչ-որ կարևոր բան հաղորդել, խնդրում է ընդունել իրեն: Մի հինգ րոպե անց՝ պ-րն դը Տրևիլը մտավ կաբինետ: Նա հարցրեց դ'Արտանյանին, թե ինչն՞ վ կարող է օգտակար լինել նրան և ինչն՞ վ է պարտական նրա այցելության համար այդ ուշ ժամին:

— Ներեցեք, տեր իմ,— ասաց դ'Արտանյանը, որն օգտվելով կաբինետում մենակ մնացած րոպեներից, արդեն ժամացույցը երեք քառորդ ժամով ետ էր գցել,— ես կարծում էի, որ իննից քսանհինգ րոպե անցը դեռ այնքան էլ ուշ չէ ձեզ ներկայանալու համար:

— Իննից քսանհինգ րոպե ա՞նց,— գոչեց պ-րն դը Տրևիլը՝ շուտ գալով դեպի պատի ժամացույցը:— Չի կարող պատահել:

— Նայեցեք ինքներդ,— ասաց դ'Արտանյանը,— և կհամոզվեք:

— Այո, ճիշտ որ,— ասաց դը Տրևիլը:— Ես կարծում էի, թե արդեն ուշ է: Բայց ի՞նչ է հարկավոր ձեզ:

Այն ժամանակ դ'Արտանյանը երկար ու բարակ պատմություն սկսեց թագուհու մասին: Նա հաղորդեց իր անհանգստությունը նրա վիճակի մասին, հայտնեց, թե ինքը տեղեկություններ է ստացել կարդինալի մտադրությունների մասին, որոնք ուղղված են Բեկինգհեմի դեմ, և նրա խոսքը այնպես համոզված էր ու հանգիստ, որ դը Տրևիլը չէր կարող չհավատալ նրան, մանավանդ որ ինքն էլ, ինչպես արդեն ասել ենք, որոշ նոր բաներ էր նկատել կարդինալի, թագավորի ու թագուհու հարաբերությունների մեջ:

Երբ ժամը տասը խփեց, դ'Արտանյանը հրաժեշտ տվեց պ-րն դը Տրևիլին, որը շնորհակալություն հայտնելով հաղորդած տեղեկությունների համար և խորհուրդ տալով միշտ հավատով ու նվիրված ծառայել թագավորին ու թագուհուն, վերադարձավ ընդունարան:

Մանդուղքով իջնելիս դ'Արտանյանը հանկարծ հիշեց, որ իր ձեռնափայտը մոռացել է: Ուստի արագ ետ բարձրացավ, մտավ կաբինետ և իսկույն ժամացույցի սլաքները նորից առաջ քաշեց, որպեսզի հետևյալ առավոտյան ոչ ոք չկարողանա նկատել, որ ժամացույցը ետ է մնացել: Այժմ հավատացած լինելով, որ ինքն ունի մի վկա, որը կարող է հաստատել իր այլբին, նա հանգիստ ցած իջավ և դուրս եկավ փողոց:

XI. Ինտրիգը սկիզբ է առնում

Պ-րն Տրևիլի տնից դուրս գալով դ'Արտանյանը՝ մտքերի մեջ տուն վերադառնալու համար ընտրեց ամենաերկար ճանապարհը:

Բայց ինչի՞ մասին էր մտածում երիտասարդ գասկոնացին, որն այդքան շեղվել էր իր ճանապարհից և աստղերին նայելով մերթ ժպտում էր, մերթ հառաչում:

Նա մտածում էր տիկին Բոնասիեի մասին: Աշակերտ-հրացանակրին այդ դեռատի կինը համարյա թե սիրուհու իդեալ էր թվում: Սիրունիկ, խորհրդավորություններով լեցուն, լավատեղյակ արքունիքի համարյա բոլոր գաղտնիքներին, որը նրա չքնաղ դիմագծերին մտահոգության մի առանձին կնիք էր դնում, այդ կինը այնքան էլ անտարբեր չէր թվում, մի բան, որ կնոջն անասելի հմայք է տալիս անփորձ սիրեկանի աչքում: Բացի դրանից, դ'Արտանյանը նրան խլել էր այն դևերի ձեռքից, որոնք ուզում էին խուզարկել, գուցե խոշտանգել նրան, և այդ անմոռանալի ծառայությունը նրանց միջև առաջացրել էր երախտագիտության զգացմունք, որն այնպես հեշտությամբ փոխվում է մի ավելի քնքուշ զգացմունքի:

Դ'Արտանյանն արդեն պատկերացնում էր, — որքա՞ն արագ են թռչում երազանքները երևակայության թևերով, — պատկերացնում էր՝ ինչպես է իրեն մոտենում դեռատի կնոջ ուղարկած մարդը, տալիս է մի երկտող առաջիկա տեսակցության մասին և բացի դրանից՝ նաև մի ոսկե շղթա կամ ադամանդակուռ մի մատանի: Մենք արդեն ասել ենք, որ այն ժամանակներում երիտասարդները առանց քաշվելու ընծաներ էին վերցնում իրենց թագավորից: Սրան ավելացնենք, որ այնքան

Էլ խստապահանջ բարոյականություն չունեցող այդ ժամանակներում երիտասարդները չափազանց մեծ հպարտություն չէին ցուցաբերում նաև իրենց սիրուհիների նկատմամբ: Նրանց սիրուհիները համարյա միշտ թանկարժեք հիշատակներ ու ընծաներ էին տալիս իրենց սիրելեաններին, ասես ջանալով նրանց անհաստատ զգացմունքներն ամրացնել իրենց ընծաների անխախտ ամրությամբ:

Այն ժամանակներում մարդիկ իրենց համար ճանապարհ էին հարթում կանանց օգնությամբ և դրանից չէին ամաչում: Նրանք, ովքեր միայն գեղեցիկ էին, ընծայում էին իրենց գեղեցկությունը, և երևի այստեղից է առաջացել այն առածը, որ ասում է. «Ամենաջքնադ աղջիկը կարող է տալ միայն այն, ինչ չունի»: Հարուստները տալիս էին իրենց դրամի մի մասը, և կարելի է հիշատակել արկածներով հարուստ այն ժամանակաշրջանի շատ ու շատ հերոսներ, որոնց համար անհասանելի կլինեին թե՛ պաշտոնները և թե՛ մարտադաշտի հաղթանակները, եթե չլինեին շատ թե քիչ լիքը լցված այն քսակները, որ իրենց տիրուհիները կապում էին նրանց ձիու թամբին:

Դ՛Արտանյանը չունևոր էր: Գավառացու անվճռականությունը, — այդ փխրուն ծաղիկը, դեղձի այդ նուրբ խավը, — արագորեն քշեց տարավ այն խրատների մորիկը, որ տալիս էին նրա հրացանակիր ընկերները: Ենթարկվելով իր ժամանակի տարօրինակ սովորություններին՝ դ՛Արտանյանը Փարիզում իրեն զգում էր ասես նվաճված քաղաքում, համարյա այնպես, ինչպես իրեն կզգար Ֆլանդրիայում. այնտեղ՝ իսպանացիք, այստեղ՝ կանայք: Այնտեղ էլ, այստեղ էլ կար թշնամի, որի դեմ պետք էր պայքարել, պետք էր ռազմատուգանք դնել:

Բայց և այնպես, պետք է ասենք, որ այժմ դ՛Արտանյանին դեկավարում էր ավելի ազնիվ ու անշահախնդիր մի զգացմունք: Ճիշտ է, արդուզարդի վաճառականն ասել էր նրան, որ ինքը հարուստ է, և դ՛Արտանյանի համար դժվար չէր հասկանալ, որ պարոն Բոնասիեի նման մի պարզամիտ ամուսնու քսակին ամենայն հավանականությամբ անօրինություն է անում նրա կինը, սակայն այս ամենը բոլորովին չէր ազդում այն զգացմունքների վրա, որոնք բռնկել էին նրա մեջ տիկին Բոնասիեին տեսնելիս, և նրա սրտում արթնացած սերը համարյա բոլորովին հեռու էր որևէ շահախնդրությունից: Մենք ասում ենք «համարյա», որովհետև այն միտքը, որ գեղեցիկ, հրապուրիչ ու սրամիտ դեռատի կինը միաժամանակ հարուստ է, չի խանգարում հրապուրանքին, այլ նույնիսկ, ընդհակառակն, ուժեղացնում է այն:

Ունևորության հետ կապված են բազմաթիվ արհատկրատական մանրութևեր, որոնք հաճելիորեն գուգակցվում են գեղեցկության հետ: Սպիտակափառ նուրբ գուլպան, ժանյակե օձիքը, հրաշագեղ մաշիկը, մազերի գեղեցիկ ժապավենը այլանդակ կնոջը չեն գեղեցկացնի, բայց սիրունիկին ավելի գեղեցկատես կդարձնեն: Էլ չենք խոսում ձեռքերի մասին, որոնք այդ ամենից շահում են. կնոջ ձեռքերը, որպեսզի գեղեցիկ մնան, չպետք է աշխատեն:

Բացի դրանից դ'Արտանյանը,— նրա դրամական միջոցների վիճակը մենք չենք թաքցրել ընթերցողից,— դ'Արտանյանն ամեննին էլ միլիոնատեր չէր: Ճիշտ է, նա հույս ուներ երբևիցե միլիոնատեր դառնալ, բայց այն ժամկետը, որն ինքը որոշել էր այդ բարենպաստ ժամանակի համար, բավական հեռու էր: Իսկ առայժմ՝ ի՛նչ սարսափելի բան է տեսնել, թե ինչպես սիրեցյալ կինը փափագում է հազար ու մի մանրութևեր, որոնք այդ թույլ էակի ամբողջ ուրախությունն են կազմում, և հնարավորություն չունենալ մատուցելու նրան այդ հազար ու մի մանրութևերը: Եթե կինը հարուստ է, իսկ նրա սիրեկանը՝ չունևոր, ապա գոնե ինքը կինը կարող է իր համար գնել այն, ինչ հնարավորություն չունի մատուցելու նրա սիրեկանը: Եվ թեպետ սովորաբար կինն այդ մանրութևը ձեռք է բերում իր ամուսնու փողով, այնուամենայնիվ հազվադեպ է երախտագետ մնում ամուսնու նկատմամբ:

Դ'Արտանյանը, պատրաստվելով դառնալ քնքշագույն սիրեկան, միաժամանակ մնում էր որպես նվիրված ընկեր: Ամբողջովին տարված լինելով տիկին Բո-նասիեի հմայքով՝ նա չէր մոռանում նաև իր ընկերներին: Բոնասիեն մի կին էր, որի հետ հաճելի էր զբոսնել Սեն Դենի դաշտում կամ Սեն Ժերմենի տոնավաճառում՝ Աթոսի, Պորտոսի և Արամիսի ուղեկցությամբ, որոնց առաջ դ'Արտանյանը կուգենար պարծենալ իր հաղթանակով: Ապա երկար զբոսնելուց հետո ախորժակ է բացվում: Որոշ ժամանակ էր, ինչ դ'Արտանյանը սկսել էր նկատել այդ: Կարելի կլինի երբեմն-երբեմն կազմակերպել այն սքանչելի ճաշկերույթներից, երբ ձեռքդ դիպչում է ընկերոջդ ձեռքին, իսկ ոտքդ՝ սիրուհուդ ոտքին: Եվ, վերջապես, առանձնապես դժվար բուպեներին, երբ դրությունն անելանելի է դառնում, դ'Արտանյանը հնարավորություն կունենա դժվարությունից դուրս բերելու իր ընկերներին:

Իսկ ի՞նչ եղավ պարոն Բոնասիեն, որին դ'Արտանյանը ուստիկանների ձեռքը հանձնեց, բարձրաձայն հրաժարվելով նրանից, իսկ շշուկով փրկություն ու օգնություն խոստանալով նրան: Մենք ստիպված ենք մեր ընթերցողին խոստովանել, որ դ'Արտանյանը նրան չէր հիշում, իսկ եթե հիշում էլ էր, այն էլ միայն նրա համար, որ

մտքում ցանկանում էր. նա մնա հենց այն-տեղ, որտեղ գտնվում է: Սերը բոլոր տեսակի կրքերից ամենաեսասիրականն է:

Սակայն մեր ընթերցողները թող չանհանգստանան, որ եթե դ'Արտանյանը մոռացել էր կամ ձևացնում էր, թե մոռացել է իր տանտիրոջը, պատճառաբանելով, թե չի իմանում ուր տարան նրան, ապա մենք չենք մոռանում և մեզ հայտնի է, թե որտեղ է գտնվում նա: Բայց ժամանակավորապես հետևենք սիրահարված գասկոնացու օրինակին: Իսկ ինչ վերաբերում է արդուզարդի մեծարգո վաճառականին՝ մենք մի քիչ ավելի ուշ կանդրադառնանք նրան:

Անձնատուր լինելով սիրային երազանքների, խոսելով գիշերային երկնքի հետ և աստղերին ժպտալով՝ դ'Արտանյանը բարձրանում էր Շերշ-Միգի փողոցն ի վեր, կամ Շաս Միգիով, ինչպես այն տարիներին անվանում էին այդ փողոցը: Հասնելով այն տան մոտերքը, որտեղ Արամիսն էր ապրում, դ'Արտանյանը որոշեց մտնել նրա տուն, որպեսզի բացատրի, թե ինչու էր Պլանշեին ուղարկել նրա մոտ՝ խնդրելով անմիջապես գալ «մկան թակարդը»: Եթե Պլանշեի եկած ժամանակ Արամիսը տանն է եղել, անկասկած նա շտապել է Գերեզմանափորների փողոցը և այնտեղ ոչ ոքի չգտնելով, թերևս բացի իր երկու ընկերներից, չէր կարող հասկանալ, թե այս ամենն ինչ է նշանակում: Անհրաժեշտ էր բացատրել, թե դ'Արտանյանն ինչու էր կանչել իր ընկերոջը: Ահա թե ինչ էր մտորում դ'Արտանյանը բարձրաձայն:

Հոգու խորքում նա զգում էր, որ դա մի հարմար առիթ է՝ խոսելու չքնաղ տիկին Բոնասիեի մասին, որն ամբողջովին լցրել էր նրա եթե ոչ սիրտը, ապա՝ բոլոր մտքերը: Ով առաջին անգամն է սիրահարվել, նրանից չի կարելի պահանջել, որ լռի: Առաջին սիրուն զուգորդում է այնպիսի մի բուռն ուրախություն, որին ելք է հարկավոր, հակառակ դեպքում սիրահարվածին կխեղդի:

Արդեն երկու ժամ էր, ինչ Փարիզը թաղվել էր խավարի մեջ, և նրա փողոցները սկսել էին դատարկվել: Սեն Ժերմենի արվարձանի բոլոր ժամացույցներն արդեն խփել էին տասնմեկը: Տաք էր և խաղաղ: Դ'Արտանյանը գնում էր մի նրբանցքով, որը գտնվում էր այնտեղ, որտեղով այժմ Ասսա փողոցն է անցնում: Օդը հագեցած էր անուշ բուրմունքով, որ քամին բերում էր Վոժիրար փողոցի այգիներից, որոնք թարմացել էին երեկոյան ցողից ու գիշերային գովից: Հեռվից, ինչ-որ պանդոկի հաստ խլափեղկերի հետևից, լսվում էին քեֆ անողների երգի խուլ ձայներ: Հասնելով

նրբանցքի ծայրին՝ դ'Արտանյանը թեքվեց դեպի ձախ: Այն տունը, որտեղ ապրում էր Արամիսը, գտնվում էր Կասեա և Սերվանդոնների փողոցների միջև:

Դ'Արտանյանը Կասեա փողոցն անցավ և հեռվից արդեն տեսավ իր ընկերոջ տունը, որի վրա թխկենու ճյուղերը վայրի վազի հետ միահյուսվելով թանձրականաչ ծածկ էին առաջացրել: Հանկարծ դ'Արտանյանին թվաց, թե ինչ-որ ստվեր շուռ եկավ Սերվանդոնի փողոցով: Այդ ստվերը փաթաթված էր թիկնոցի մեջ, և սկզբում դ'Արտանյանին թվաց, թե դա տղամարդ է: Սակայն ցածր հասակը, երկչոտ քայլվածքն ու շարժումները արագ համոզեցին նրան, որ իր առջև կին է: Կինը, ասես կասկածելով, թե դա իր որոնած տունն է, գլուխը բարձրացրեց, որպեսզի ավելի լավ որոշի, թե որտեղ է գտնվում ինքը, կանգ առավ, մի քանի քայլ ետ գնաց, ապա նորից առաջ գնաց: Դ'Արտանյանի հետաքրքրությունը շարժվեց:

«Չառաջարկե՞մ արդյոք սրան իմ ծառայությունը,— մտածեց նա:— Քայլվածքից դատելով ջահել կին է գուցե և լավիկը: Իհարկե: Սակայն այսպիսի ուշ ժամին փողոցներով վազվզող կինը կարող է դուրս եկած լինի միայն իր սիրելեանի հետ տեսակցություն ունենալու համար: Գրողը տանի: Տեսակցությունը խանգարելը ծանոթություն հաստատելու վատ ձև է»:

Մինչ այդ երիտասարդ կինը տներն ու լուսամուտները հաշվելով առաջ էր շարժվում: Ի դեպ, սա նրանից մեծ ջանք ու ժամանակ չէր պահանջում, որովհետև փողոցի այդ մասում միայն երեք տուն կար, և ընդամենը երկու լուսամուտ էին նայում այդ փողոցին: Դրանցից մեկը Արամիսի տանը զուգահեռ կողաշենքի լուսամուտն էր, երկրորդը՝ հենց Արամիսի լուսամուտը:

«Երդվում եմ աստծով,— մտածեց դ'Արտանյանը, որը հանկարծ հիշեց աստվածարանի ազգականուհուն,— երդվում եմ աստծով, հետաքրքիր կլինի, եթե այս ուշացած աղավնին մեր բարեկամի տունն է որոնում: Բայց ես պատրաստ եմ հոգովս գրագ գալու, որ հենց դրան է նման: Դե՛, սիրելիդ իմ Արամիս, այս անգամ արդեն ես ճշմարտությունը կիմանամ»:

Եվ դ'Արտանյանը, ջանալով որքան կարելի է քիչ տեղ գրավել, թաքնվեց մի ինչ-որ որմնախորշում գտնվող նստարանի մոտ, ամենամութ տեղում:

Ջահել կինը ավելի ու ավելի էր մոտենում: Այլևս կասկած չէր կարող լինել, որ նա ջահել է, բացի քայլվածքից, որ համարյա իսկույն մատնել էր նրան, այդ ցույց տվեց նաև նրա ձայնը, կինը թեթև հազաց, և այդ հազից դ'Արտանյանը հասկացավ, որ նա թարմ ու զրնգուն ձայն ունի: Եվ իսկույն էլ մտածեց, որ այդ հազը պայմանական նշան է:

Կամ այդ նշանին նույնպիսի մի նշանով պատասխան տրվեց, կամ թե կինը, վերջապես առանց կողմնակի օգնության որոշեց, որ հասել է իր նպատակին, միայն թե նա հանկարծ վճռականորեն ուղղվեց դեպի Արամիսի լուսամուտը և ծալած մատով երեք անգամ, համաչափ դադարներով բախեց խլափեղկը:

— Դե, իհարկե, նա Արամիսի լուսամուտն է բախում,— շնչաց դ'Արտանյանը:— Ահա թե ինչ, պարոն կեղծավոր: Հիմա ես գիտեմ, թե դուք ինչպես եք աստվածաբանություն ուսումնասիրում:

Դեռ նոր էր կինը բախել, մեկ էլ ներքին շրջանակը բացվեց, և խլափեղկերի ճեղքով լույս թափանցեց:

— Ահա՛,— խոսեց դ'Արտանյանը,— ահա՛, սպասում էին այցելուին: Հիմա խլափեղկը կբացվի, և տիկինը ներս կմտնի լուսամուտով: Հիանալի՛ է:

Սակայն, ի մեծ զարմանս դ'Արտանյանի, խլափեղկը փակ էր մնում: Լույսը, որ առկայծել էր մի ակնթարթ, չքացավ, և նորից ամեն ինչ թաղվեց խավարի մեջ: Դ'Արտանյանը մտածեց, թե դա երկար չի տևի, և շարունակեց կանգնած մնալ ամբողջովին տեսողություն ու լսողություն դարձած:

Նա իրավացի էր: Մի քանի վայրկյան հետո ներսից երկու կարճ զարկ տրվեց խլափեղկին:

Փողոցում կանգնած ջահել կինը որպես պատասխան զարկեց մեկ անգամ, և խլափեղկը բացվեց:

Կարելի է պատկերացնել, թե դ'Արտանյանն ինչպիսի ազահությամբ էր նայում ու ականջ դնում:

Դժբախտաբար լույսի աղբյուրը փոխադրվեց մյուս սենյակը: Սակայն երիտասարդի աչքերն արդեն վարժվել էին խավարին: Բացի դրանից, ինչպես հավատացնում են, գասկոնացիների աչքերը կատվի աչքերի պես խավարում տեսնելու ընդունակություն ունեն:

Դ'Արտանյանը տեսավ, որ երիտասարդ կինը գրպանից հանեց մի ինչ-որ սպիտակ փաթեթ և շտապ բաց արեց այն: Դա մի թաշկինակ էր: Կինը թաշկինակը բաց անելով նրա մի անկյունը ցույց տվեց իր զրուցակցին:

Դ'Արտանյանը հիշեց այն թաշկինակը, որ գտել էր տիկին Բոնասիեի ոտքերի մոտ, և որը նրան ստիպել էր հիշել այն թաշկինակը, որ ընկել էր Արամիսի գրպանից:

— Գրողը տանի, ի՞նչ դեր է խաղում այս թաշկինակը:

Այն տեղից, որտեղ կանգնած էր երիտասարդ գասկոնացին, նա չէր կարող տեսնել Արամիսի դեմքը, բայց և ոչ մի բոլոր չէր կասկածում, որ հենց Արամիսն է զրուցում լուսամուտի տակ կանգնած կնոջ հետ: Հետաքրքրությունը հաղթեց զգուշությանը, և օգտվելով նրանից, որ այդ տեսարանի երկու գործող անձերի ուշադրությունն ամբողջովին կլանված է թաշկինակով, դ'Արտանյանը դուրս եկավ թաքստոցից ու կայծակի արագությամբ, սակայն առանց աղմուկի, փողոցի լայնքով վազեց ու սեղմվեց պատի այն տեղին, որտեղից նրա հայացքը կարող էր թափանցել Արամիսի սենյակի խորքը:

Նայելով լուսամուտին՝ դ'Արտանյանը քիչ մնաց ճիշտ արձակեր զարմանքից. գիշերային այցելուի հետ խոսում էր ոչ թե Արամիսը, այլ մի կին: Դժբախտաբար դ'Արտանյանը թեև խավարի մեջ կարողացավ նկատել նրա կերպարանքի ուրվագծերը, բայց երեսը տեսնել չկարողացավ:

Այդ պահին սենյակում գտնվող կինը գրպանից հանեց մի ուրիշ թաշկինակ և տվեց դուրսը կանգնածին՝ իրեն հանձնած թաշկինակի փոխարեն: Դրանից հետո երկու կանայք էլի մի քանի խոսք փոխանակեցին: Վերջապես խլափեղկը փակվեց: Փողոցում կանգնած կինը շրջվեց և անցավ դ'Արտանյանից երեք-չորս քայլ հեռավորությամբ, երեսին քաշելով իր թիկնոցի կնգուղը: Սակայն այս նախազգուշությունն ուշացած էր դ'Արտանյանը կարողացավ ճանաչել տիկին Բոնասիեին:

Տիկին Բոնասիէ՛: Կասկածը, որ դա հենց նա է, դ՛Արտանյանի գլխում ծագել էր այն պահին, երբ նա գրպանից հանել էր թաշկինակը: Բայց որքա՛ն քիչ հավանական բան էր, որ տիկին Բոնասիէն, որը մարդ էր ուղարկել պարոն դը Լա Պոտտին կանչելու, որպեսզի իրեն առաջնորդի Լուվր, հանկարծ գիշերվա տասնմեկն անց կեսին վազվզում է փողոցներում, նորից հափշտակվելու վտանգին ենթարկելով իրեն: Նշանակում էք այդ արվում է հանուն ինչ-որ խիստ կարևոր բանի: Իսկ ի՞նչը կարող է կարևոր լինել քսանհինգ տարեկան մի կնոջ համար, եթե ոչ սերը:

Բայց արդյոք ի՞ր, թե մի երրորդ անձի համար է նա այդպիսի վտանգի ենթարկել իրեն: Ահա մի հարց, որ տալիս էր դ՛Արտանյանն ինքն իրեն: Խանդի դևը բզկտում էր նրա սիրտը, ասես ինքն արդեն ընդունված սիրեկան լիներ:

Ի դեպ, կար մի հասարակ միջոց, որով կարելի էր իմանալ, թե ուր է շտապում տիկին Բոնասիէն: Հարկավոր էր միայն հետևել նրան: Դա այնքան հասարակ միջոց էր, որ դ՛Արտանյանն իսկույն դիմեց դրան:

Սակայն տեսնելով երիտասարդին, որն ասես արձանի նման դուրս եկավ որմնախորշից, և լսելով նրա ոտ-նաձայները, տիկին Բոնասիէն մի ճիչ արձակեց ու սկ-սեց վազել:

Դ՛Արտանյանը ընկավ նրա հետևից: Նրա համար դժվար բան չէր հասնել կնոջ հետևից, որը խճճվում էր իր թիկնոցի ծալքերի մեջ: Ուստի և դ՛Արտանյանը հասավ նրան ավելի շուտ, քան նա վազած կլիներ մեկ երրորդը այն փողոցի, դեպի ուր թեքվել էր: Խեղճ կինը բոլորովին ուժասպառ էր եղել ոչ այնքան հոգնությունից, որքան վախից, և երբ դ՛Արտանյանը ձեռքը դրեց նրա ուսին, կինը ընկավ մեկ ծնկի վրա և ճնշված ձայնով գոչեց.

— Սպանե՛ք ինձ, եթե ուզում եք, միևնույն է, ես ոչինչ չեմ ասի:

Դ՛Արտանյանը բարձրացրեց կնոջը՝ գրկելով նրա իրանը: Սակայն զգալով, թե նա ինչպես ծանրացավ իր ձեռքին, և հասկանալով, որ կինը ուշաթափվելուն մոտ է, շտապեց հանգստացնել, վստահեցնելով, որ ինքը նվիրված է նրան: Այդ վստահեցումները ոչ մի նշանակություն չունեին տիկին Բոնասիէի համար. այդպիսի վստահումներ կարելի էր շռայլել նաև ամենավատ մտադրությունների դեպքում: Բայց

ձայնը, որն արտասանեց այդ վստահեցումները, ամեն ինչ էր: Դեռատի կնոջը թվաց, որ ինքը ճանաչում է այդ ձայնը: Նա աչքերը բաց արեց, նայեց մարդուն, որն այդպես խիստ վախեցրել էր իրեն, և դ՛Արտանյանին ճանաչելով՝ ուրախությունից ճիչ արձակեց:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք,— կրկնեց նա:— Տե՛ր աստված, շնորհակալ եմ քեզանից:

— Այո՛, ես եմ,— ասաց դ՛Արտանյանը:— Ես, որին Աստված ուղարկել է ձեզ հովանավորելու:

— Եվ հենց դրա համար էլ դուք հետևո՞ւմ էիք ինձ,— խորամանկ ժպիտով հարցրեց դեռատի կինը, որի ուրախ բնավորությունն արդեն սկսել էր հաղթել: Նրա վախը չբացել էր, հենց որ տեսել էր, որ թշնամու տեղ դրած մարդն իր բարեկամն է:

— Ոչ,— պատասխանեց դ՛Արտանյանը,— ոչ, խոստովանում եմ, պատահաբար եմ ընկել ձեր ճանապարհը: Ես տեսա, թե ինչպես մի կին բախում է իմ ընկերներից մեկի լուսամուտը...

— Ձեր ընկերներից մեկի՞,— ընդհատեց նրան տիկին Բոնասին:

— Բհարկե: Արամիսն իմ ամենամոտիկ ընկերներից մեկն է:

— Արամի՞ս: Ո՞վ է դա:

— Դե լա՛վ: Ուզում եք ինձ հավատացնել, թե Արամիսին չե՞ք ճանաչում:

— Ես առաջին անգամն եմ լսում այդ անունը:

— Նշանակում է դուք առաջին անգա՞մն եք եկել այդ տունը:

— Բհարկե:

— Եվ դուք չգիտեի՞ք, որ այդտեղ ապրում է մի երիտասարդ:

— Ոչ:

— Հրացանակիր:

— Ոչ, ոչ:

— Նշանակում է դուք նրա՞ն չէիք որոնում:

— Բհարկե ոչ: Բայց դուք ինքներդ էլ կարող էիք տեսնել, որ ես կնոջ հետ էի խոսում:

— Այդ ճշմարիտ է: Բայց այդ կինը Արամիսի բարեկամուհի՞ն է:

— Չգիտեմ:

— Դե քանի որ ապրում է նրա մո՞տ:

— Դա ինձ չի վերաբերում:

— Բայց ո՞վ է նա:

— Օ՛, այդ գաղտնիքը իմը չէ:

— Թանկագին տիկին Բոնասիե, դուք հմայիչ կին եք, բայց միաժամանակ՝ խորհրդավոր...

— Մի՞թե դա ինձ նսեմացնում է:

— Ոչ, ընդհակառակն, դուք չքնաղ եք:

— Եթե այդպես է, թույլ տվեք հենվեմ ձեր թևին:

— Հաճույքով: Իսկ ա՞յժմ...

— Իսկ այժմ ուղեկցեք ինձ:

- Ո՞ւր:
- Այնտեղ, ուր ես գնում եմ:
- Բայց ո՞ւր եք գնում դուք:
- Կտեսնեք, երբ կտանեք ինձ մինչև դուռը:
- Եվ պետք է սպասե՞մ ձեզ:
- Այդ իգուր կլինի:
- Նշանակում է դուք մենակ եք վերադառնալու:
- Գուցե այո, գուցե՝ ոչ:
- Բայց այն անձը, որն ուղեկցելու է ձեզ, տղամա՞րդ է լինելու, թե՞ կին:
- Դեռ չգիտեմ:
- Իսկ ես կհմանամ:
- Ինչպե՞ս:
- Կսպասեմ և կտեսնեմ, թե ում հետ եք դուրս գալու:
- Այդ դեպքում՝ մնաք բարով:
- Ինչպե՞ս:
- Դուք այլևս ինձ հարկավոր չեք:
- Բայց դուք ինքներդ խնդրեցիք...
- Ազնվականի օգնություն և ոչ թե լրտեսի հսկողություն:

— Դա չափից դուրս դաժան խոսք է:

— Ինչպե՞ս են կոչում նրան, ով մարդուն հետևում է հակառակ նրա կամքին:

— Անհամեստ:

— Դա չափազանց մեղմ է:

— Ճար չկա, տիկին, տեսնում եմ, որ ստիպված եմ կատարել ձեր բոլոր ցանկությունները:

— Ինչո՞ւ դուք ձեզ գրկեցիք այդ ցանկությունն իսկույն կատարելու պատվից :

— Իսկ զղջումը մի՞ թե պատիվ չի բերում:

— Դուք իսկապե՞ս զղջում եք:

— Ինքս էլ չգիտեմ: Միայն մի բան գիտեմ. ես պատրաստ եմ կատարելու ամեն բան, ինչ դուք կցանկանաք: Եթե դուք թույլ կտաք ինձ ուղեկցել ձեզ մինչև այնտեղ, ուր գնում եք:

— Եվ հետո դուք կթողնե՞ք ինձ:

— Այո:

— Եվ էլ չե՞ք հետևի ինձ:

— Ոչ:

— Ազնի՞վ խոսք:

— Ազնվականի խոսք:

— Այդ դեպքում տվեք ձեր թևը և գնանք:

Դ՛Արտանյանը թևն առաջարկեց տիկին Բոնասիեին, և դեռատի կինը հենվեց նրան, դեռևս դողալով, սակայն արդեն պատրաստ ծիծաղելու: Այդպես նրանք գնացին մինչև Լահարպ փողոցի ծայրը: Այստեղ երիտասարդ կինն ասես տատանվեց, ինչպես առաջ Վոժիրար փողոցում, բայց հետո ըստ երևույթին մի քանի նշաններով ճանաչեց իրեն հարկավոր դուռը:

— Իսկ հիմա,— ասաց նա մոտենալով այդ դռանը,— ես այստեղ պիտի մտնեմ: Հազար շնորհակալություն ձեր ազնիվ օգնության համար: Դուք պաշտպանեցիք ինձ բոլոր վտանգներից, որոնց ես կենթարկվեի, եթե մենակ լինեի: Բայց հասել է ձեր խոստումը կատարելու ժամանակը: Ես հասել եմ այնտեղ, որտեղ ինձ հարկավոր էր:

— Իսկ վերադառնալիս դուք չե՞ք վախենա...

— Գուցե թե միայն գողերից:

— Իսկ դա քի՞չ բան է:

— Ի՞նչ կարող են խլել նրանք ինձնից: Ես մոտս ոչ մի դենիե[64] չունեմ:

— Դուք մոռանում եք զինանիշով հիանալի ասեղնագործ թաշկինակի մասին:
— Ի՞նչ թաշկինակ:

— Այն, որ ես վերցրի ձեր ոտքերի մոտից և դրի ձեր գրպանը:

— Լռե՛ք, լռե՛ք, թշվառական,— գոչեց դեռատի կինը:— Դուք ինձ կործանե՞լ եք ուզում:

— Ինքներդ տեսնում եք, որ ձեզ դեռևս վտանգ է սպառնում, քանի որ մեկ բառը բավական է, որպեսզի դուք դողդողաք, և ինքներդ խոստովանում եք, որ եթե այդ բառը ինչ-որ մեկի ականջին հասնի, դուք կորած եք: Լսեցեք, տիկին,— ասաց դ՛Արտանյանը նրա ձեռքը բռնելով և այրող հայացքը հառելով վրան,— լսեցեք, ավելի համարձակ եղեք, վստահեցեք ինձ: Մի թե դուք իմ աչքերում չկարդացիք, որ սիրտս լի է ձեզ նվիրվածությամբ:

— Ես այդ զգում եմ: Դրա համար էլ դուք կարող եք հարցուփորձ անել ինձ իմ բոլոր գաղտնիքների մասին, բայց ուրիշի գաղտնիքը՝ այլ բան է:

— Լավ,— ասաց դ'Արտանյանը:— Բայց ես կբացեմ այդ գաղտնիքները: Քանի որ դրանք կարող են ազդել ձեր բախտի վրա, պետք է նաև իմը դառնան...

— Աստված փրկի ձեզ դրանից,— գոչեց դեռատի կինը, և նրա ձայնում այնպիսի անհանգստություն հնչեց, որ դ'Արտանյանը ակամա ցնցվեց:— Աղաչում եմ ձեզ, մի՛ խառնվեք ոչ մի բանի, որն ինձ է վերաբերում, մի փորձեք օգնել ինձ կատարելու այն, ինչ դրված է ինձ վրա: Ես աղաչում եմ ձեզ ի սեր այն զգացմունքի, որ տաճում եք իմ նկատմամբ, հանուն այն ծառայության, որ դուք մատուցեցիք ինձ, և որը ես երբեք չեմ մոռանա իմ կյանքում: Հավատացեք ինձ: Այլևս մի՛ մտածեք իմ մասին: Ես այլևս գոյություն չունեմ ձեզ համար, որպես թե երբեք չեք տեսել ինձ:

— Արդյոք Արամի՞ սն էլ այնպես պիտի վարվի, ինչպես ես,— հարցրեց դ'Արտանյանը՝ նրա խոսքերից վիրավորված:

— Ահա արդեն երկու թե երեք անգամ դուք արտասա-նում եք այդ անունը, պարոն: Մինչդեռ ես ձեզ ասացի, որ դա ինձ անձանոթ անուն է:

— Դուք չեք ճանաչում այն մարդուն, որի լուսամուտը բախտ՞ում էիք: Ի՛նչ եք ասում, տիկին: Դուք ինձ չափից դուրս դյուրահավատ մարդու տեղ եք դնում:

— Խոստովանեցեք, որ դուք հորինել եք այդ ամբողջ պատմությունը և հնարել եք այդ Արամիսին, որպեսզի ինձ անկեղծության մղեք:

— Ես ոչինչ չեմ հորինում, տիկին, ես ոչինչ չեմ հնարում: Ես կատարյալ ճշմարտություն եմ ասում:

— Եվ դուք ասում եք, որ ձեր ընկերներից մեկն այդ տա՞նն է ապրում:

— Ես այդ ասում եմ և կրկնում եմ երրորդ անգամ. այդ այն տունն է, որտեղ ապրում է իմ ընկերը, և այդ ընկերը Արամիսն է:

— Այդ ամենը ժամանակի ընթացքում կպարզվի,— շնչաց դեռատի կինը,— իսկ առայժմ, պարոն, լռեցեք:

— Եթե դուք կարողանայիք կարդալ իմ սիրտը, որ բաց է ձեր առաջ,— ասաց դ'Արտանյանը,— դուք այնտեղ կտեսնեիք այնպիսի ջերմ հետաքրքրություն, որ կխղճայիք ինձ, և այնպիսի սեր, որ նույն բռպեին կբավա-բարեիք այդ հետաքրքրությունը: Չպետք է վախենալ նրանից, ով սիրում է ձեզ:

— Դուք շատ շուտ խոսեցիք սիրո մասին,— ասաց դեռատի կինը գլուխն օրորելով:

— Սերն իմ մեջ արթնացավ արագ և առաջին անգամ: Չէ՞ որ ես քսան տարեկան էլ չկամ:

Տիկին Բոնասինն աչքի տակով նայեց նրան:

— Լսեցեք, ես արդեն հետքը բռնել եմ,— ասաց դ'Արտանյանը:— Երեք ամիս սրանից առաջ ես քիչ մնաց պի-տի մենամարտեի Արամիսի հետ ճիշտ և ճիշտ այնպիսի մի թաշկինակի պատճառով, ինչպիսին այն թաշկինակը, որը դուք ցույց տվիք նրա մոտ գտնվող կնոջը, այնպի-սի մի թաշկինակի, որը ճիշտ և ճիշտ նույնպիսի զինանիշ ուներ:

— Երդվում եմ ձեզ, պարոն,— ասաց դեռատի կինը,— դուք սուսկալի հոգնեցնում եք ինձ ձեր այդ հարցուփորձով:

— Բայց դուք, տիկին, դուք, որ այդքան զգույշեք, եթե ձերբակալելու դեպքում ձեզ մոտ գտնեին այդպիսի մի թաշկինակ, արդյոք այդ ձեզ չէ՞ր անվանարկի:

— Ինչո՞ւ: Միթե սկզբնատառերն իմը չեն՝ «Կ. Բ.», Կոնստանցիա Բոնասին:

— Թե՞ Կամիլլա դը Բուա-Տրասի:

— Լռեցեք, պարոն, լռեցեք: Եթե ինձ սպառնացող վտանգը չի կարող ետ պահել ձեզ, ապա մտածեցեք ձեզ սպառնացող վտանգների մասին:

— Ի՞նչ:

— Այո, ձեզ: Ինչ հետ ծանոթ լինելու համար դուք կարող եք բանտ նստել կամ ձեր կյանքը տալ:

— Այդ դեպքում ես այլևս չեմ հեռանա ձեզնից:

— Պարոն,— խոսեց դեռատի կինը՝ աղերսագին կոտրատելով ձեռքերը,— պարոն, ես դիմում եմ զինվորականի պատվին, ազնվականի ազնվությանը՝ հեռացեք: Լսո՞ւմ եք. կեսգիշերվա ժամն է խփում, հիմա ինչ սպասում են:

— Տիկին,— ասաց դ'Արտանյանը գլուխ տալով,— ես չեմ համարձակվի մերժել նրան, ով այդպես խնդրում է ինձ: Հանգստացեք, ես գնում եմ:

— Դուք չե՞ք գա իմ հետևից, չե՞ք հետևի ինձ:

— Ես իսկույն կվերադառնամ իմ տունը:

— Ախ, ես գիտեի, որ դուք ազնիվ պատանի եք,— գոչեց տիկին Բոնասիեն՝ մի ձեռքը մեկնելով նրան, մյուսով բռնելով քարե պատի մեջ բացված դռնակի մուրճիկը: Դ'Արտանյանը արագ բռնեց իրեն մեկնած ձեռքը և շրթունքները խանդաղատագին հպեց նրան:

— Ավելի լավ կլիներ ես երբեք հանդիպած չլինեի ձեզ,— գոչեց նա այնպիսի կոպտությամբ, որը հաճախ կանայք գերադասում են ամենաքնքուշ սիրալիրությունից, որովհետև այն հնարավորություն է տալիս տեսնելու մտքերի խորքը և ապացուցում է, որ զգացմունքը հաղթում է բանականությանը:

— Ոչ...— խոսեց տիկին Բոնասիեն՝ գրեթե սիրալիր սեղմելով դ'Արտանյանի ձեռքը, որը դեռ բաց չէր թողնում դեռատի կնոջ ձեռքը,— ո՛չ, ես այդ ասել չեմ կարող. այն, ինչ այսօր չհաջողվեց, թերևս կհաջողվի ապագայում: Ո՞վ գիտե, գուցե թե երբևիցե, երբ ես ազատ կլինեմ, կբավարարեմ ձեր հետաքրքրությունը...

— Իսկ իմ սերը, կարո՞ղ է արդյոք իմ սերն էլ այդ-պիսի հույս ունենալ,— ցնծագին բացականչեց պատանին:

— Օ՛, դրանով ես չեմ ուզում ինձ կապել: Դա կախ-ված կլինի այն զգացմունքներից, որ դուք կկարողանաք ներշնչել ինձ:

— Նշանակում է, առայժմ, տիկին...

— Առայժմ, պարոն, ես միայն շնորհակալության զգացմունք ունեմ ձեր նկատմամբ:

— Դուք չափից դուրս սիրալիր եք,— տխուր խոսեց դ'Արտանյանը:— Եվ դուք չարաշահում եք իմ սերը:

— Ոչ, ես միայն օգտվում եմ ձեր ազնվությունից, պարոն: Բայց, հավատացեք, կան մարդիկ, որոնք կարողանում են չմոռանալ իրենց խոստումները:

— Օ՛, դուք ինձ ամենաերջանիկն եք դարձնում մահկանացուների մեջ: Չմոռանաք այս երեկոն, չմոռանաք այդ խոստումը:

— Հանգիստ եղեք: Երբ ժամանակը գա, ես ամեն ինչ կհիշեմ: Իսկ հիմա գնացեք, ի սեր բոլոր սրբությունների՝ գնացեք: Ինձ սպասում էին ուղիղ տասներկուսին, և արդեն ուշացել եմ:

— Հինգ րոպեով:

— Որոշ հանգամանքներում հինգ րոպեն հինգ դար է:

— Երբ սիրում ես:

— Իսկ ձեզ ո՞վ ասաց, որ խնդիրը սիրահարվածին չի վերաբերում:

— Ձեզ տղամա՞րդ է սպասում,— գոչեց դ'Արտանյանը:— Տղամա՞րդ:

— Դե, ահա, նորից սկսվում է մեր վեճը,— ասաց տիկին Բոնասիեն թեթև ժպիտով, որի մեջ անհամբերության ստվեր էր խաղում:

— Ո՛հ, ո՛հ, ես գնում եմ: Ես հավատում եմ ձեզ, ուզում եմ, որ դուք էլ հավատաք իմ նվիրվածությանը, եթե նույնիսկ այդ նվիրվածությունը ցնորամտու-թյան է հասնում: Մնաք բարով, տիկին, մնաք բարով:

Եվ ասես զգալով, որ միայն մեծ ջանքերով պիտի կարողանա բաց թողնել կնոջ ձեռքը, նա հանկարծակի սկսեց հեռու վազել: Մինչ այդ տիկին Բոնասիեն մուրճիկով դուռը բախեց ճիշտ այնպես, ինչպես լուսամուտն էր բախել երեք դանդաղ հարված՝ հավասար ընդհատումներով: Դ՛Արտանյանը մինչև անկյունը վազելով ետ նայեց: Գուռն արդեն բացվել էր ու փակվել: Արդուզարդի վաճառականի սիրունիկ կինն այլևս չէր երևում:

Դ՛Արտանյանը շարունակեց իր ճանապարհը: Նա խոսք էր տվել գաղտուկ չնայել տիկին Բոնասիեի հետևից, և եթե նույնիսկ իր կյանքը կախված լիներ նրանից, թե ուր է գնում տիկին Բոնասիեն, կամ ով է ուղեկցելու նրան, միննույն է, նա տուն կգնար, քանի որ խոսք էր տվել այդպես անել: Հինգ բոպե չանցած՝ նա արդեն Գերեզմանափորների փողոցումն էր:

«Խե՛ղճ Աթոս,— մտածում էր դ՛Արտանյանը:— Նա չի հասկանա, թե այս ամենն ինչ է նշանակում: Երևի ինձ սպասելով քունը տարել է, և քուն է մտել կամ գնացել է տուն և այնտեղ իմացել, որ իր մոտ մի կին է եղել: Աթոսի մոտ կի՛ն: Ասենք,— շարունակեց դ՛Արտանյանը,— Արամիսի մոտ հո կար մի կին: Այս ամենը շատ տարօրինակ է, և ես շատ կուզենայի իմանալ, թե ինչով կվերջանա այս բոլորը»:

— Վատ, տեր իմ, վատ կվերջանա,— լսվեց մի ձայն, և դ՛Արտանյանը ճանաչեց Պլանշեի ձայնը: Բանն այն է, որ ինքն իրեն բարձրաձայն խոսելով, ինչպես պատահում է որևէ բանով խիստ մտահոգված մարդկանց հետ, նա իր համար էլ աննկատելի հասել էր իր տան մուտքին, որի խորքում բարձրանում էր բնակարան տանող սանդուղքը:

— Ինչպե՞ս թե վատ: Ի՞նչ ես ուզում ասել դրանով, հիմա՛ր,— հարցրեց դ՛Արտանյանը:— Ի՞նչ է պատահել այստեղ:

— Տեսակ-տեսակ դժբախտություններ:

— Ի՞նչ դժբախտություններ:

— Ամենից առաջ՝ պարոն Աթոսին ձերբակալել են:

— Ձերբակալե՞լ: Աթոսը ձերբակալվա՞ծ է: Ինչի՞ համար:

— Նրան գտան ձեր տանը: Նրան ձեր տեղը դրին:

— Բայց ո՞վ ձերբակալեց նրան:

— Ոստիկանները: Նրանց օգնության էին կանչել այն սևազգեստ մարդիկ, որոնց դուք վնդեցիք:

— Բայց ինչո՞ւ նա իր անունը չասաց: Ինչո՞ւ չբա-ցատրեց, որ այս գործի հետ ինքը ոչ մի կապ չունի:

Նա ոչ մի պայմանով այդ չէր անի, տեր իմ: Դրա փոխարեն մոտեցավ ինձ ու շշնջաց. «Այժմ անհրաժեշտ է, որ քո պարոնն ազատ լինի, ոչ թե ես: Նրան ամեն բան հայտնի է, իսկ ինձ՝ ոչինչ: Թող կարծեն, թե նա ձերբա-կալված է, և այդ նրան գործելու ժամանակ կտա:

Մի երեք օր հետո ես նրանը, կասեմ, թե ով եմ, և ստիպված կլինեն ինձ բաց թողնել:

— Կեցցես, Աթոս,— շշնջաց դ'Արտանյանը:— Ազնիվ հոգի է: Ճանաչվում է հենց այս արարքով: Իսկ ի՞նչ արին ոստիկանները:

— Նրանցից չորսը պարոն Աթոսին տարան, չգիտեմ ուր, Բաստիլ կամ Ֆոր-Լևեկ: Երկուսը մնացին սևազգեստ մարդկանց հետ, որոնք ամեն ինչ փորփրեցին ու բոլոր թղթերը տարան: Մյուս երկուսն այդ ժամանակ դռան մոտ կանգնած հսկում էին: Հետո, իրենց գործը վերջացնելով գնացին՝ տունը դատարկելով և դուռը բաց թողնելով:

— Իսկ Պորտոսն ու Արամի՞սը:

— Ես նրանց տանը չգտա, և նրանք չեն եկել:

— Բայց ամեն բոպե կարող են գալ: Դու հո խնդրե՞լ ես հայտնել նրանց, որ ես իրենց եմ սպասում:

— Այո՛, տեր իմ:

— Լավ: Այդ դեպքում մնա այստեղ: Եթե նրանք գան, պատմիր նրանց ինչ որ եղել է: Թող ինձ սպասեն «Մոսե-նու Կոնգոմ» պանդոկում: Այստեղ մնալը նրանց համար անվտանգ չէ: Հարկավոր է, որ այս տունը հսկողության տակ լինի: Ես վազում եմ պարոն դը Տրևիլի մոտ, որպեսզի նրան տեղյակ դարձնեմ այս ամենին, այն տեղից կգնամ պանդոկ, նրանց մոտ:

— Լսում եմ, տեր իմ,— ասաց Պլանշեն:

— Բայց դու կմնա՞ս այստեղ: Չե՞ս վախենում,— հարցրեց դ'Արտանյանը՝ ետ դառնալով և աշխատելով սիրտ տալ իր ծառային:

— Հանգիստ եղեք, տեր իմ,— պատասխանեց Պլանշեն:— Դուք դեռ չեք ճանաչում ինձ: Ես կարող եմ քաջ լինել, երբ աշխատում եմ քաջ լինել, հավատացեք ինձ: Ամբողջ խնդիրն այն է, որ մարդ ուզենա քաջ լինել: Բացի դրանից՝ ես պիկարդացի եմ:

— Ուրեմն՝ վճռված է,— ասաց դ'Արտանյանը:— Դու ավելի շուտ քեզ մահու կտաս, քան քո պահակակետը կթողնե՞ս:

— Այո՛, տեր իմ: Չկա մի բան, որ ես չանեմ, որպեսզի ապացուցեմ իմ տիրոջը, թե որքան նվիրված եմ իրեն:

— «Հիանալի է,— մտածեց դ'Արտանյանը:— Երևում է՝ այն միջոցը, որ ես գործադրեցի այս տղայի նկատմամբ, հաջող է եղել: Առիթ եղած դեպքում պետք է օգտվել նրանից»:

Եվ ամենայն արագությամբ, որին ընդունակ էին ամբողջ օրվա վազվզոցից արդեն կարգին հոգնած ոտքերը, նա ուղղվեց դեպի Հին Աղավնատուն փողոցը:

Պարոն դը Տրևիլը տանը չէր: Նրա վաշտը Լուվրում պահակություն էր անում: Դը Տրևիլն իր վաշտի հետ Լուվրումն էր գտնվում:

Անհրաժեշտ էր տեսնել պարոն դը Տրևիլին: Հարկավոր էր նրան տեղեկացնել պատահած դեպքի մասին:

Դ'Արտանյանը որոշեց փորձ անել, կհաջողվի՞ արդյոք իրեն Լուվր մտնել ներս մտնելու իրավունք պիտի տար նրան պարոն Դեգեսարի գվարդիական վաշտի համազգեստը:

Նա գնաց Փոքր Ավգուստինանների փողոցով, ապա գետափով, մտածելով անցնել Նոր կամրջով: Նրա մեջ միտք ծագեց օգտվել լաստանավից, բայց երբ իջել էր գետափ, մեքենաբար ձեռքը գրպանը տարավ և համոզվեց, որ փոխադրավարձ վճարելու փող չունի:

Հասնելով Դենեգո փողոցը՝ նա հանկարծ նկատեց, որ Դոֆինի փողոցի անկյունից մարդիկ դուրս եկան: Դրանք երկու հոգի էին, մի տղամարդ և մի կին: Նրանց տեսքը զարմացրեց դ'Արտանյանին:

Կինը իր կազմվածքով հիշեցնում էր տիկին Բոնա-սիեին, իսկ տղամարդը զարմանալիորեն նման էր Արամիսին:

Բացի դրանից կինը փաթաթված էր մի սև թիկնոցի մեջ, որը դ'Արտանյանի մտքում տպավորվեց այնպես, ինչպես տեսել էր Վոժիրար փողոցում լուսամուտի ֆոնի վրա և Լահարայ փողոցում՝ դռան մեջ: Իսկ տղամարդը հրացանակրի համազգեստով էր:

Թիկնոցի կնգուղն իջեցրած էր կնոջ երեսին, իսկ տղամարդը իր երեսը ծածկել էր թաշկինակով: Այս նախազգուշությունը ցույց էր տալիս, որ նրանք երկուսն էլ աշխատում էին անձանաչելի մնալ:

Նրանք գնում էին կամրջով: Դ'Արտանյանի ճանա-պարհը նույնպես կամրջով էր անցնում, քանի որ նա ուզում էր Լուվր գնալ: Դ'Արտանյանը հետևեց նրանց:

Դեռ մի տասը քայլ էլ չէր արել, երբ արդեն հաստատ համոզվեց, որ կինը տիկին Բոնասիեն է, իսկ տղամար-դը՝ Արամիսը:

Եվ հանկարծ խանդից ծնված բոլոր կասկածները նորից արթնացան նրա հոգում:

Նա խաբված էր, խաբված էր իր ընկերոջից և խաբված էր այն կնոջից, որին արդեն սիրում էր որպես սիրու-հու: Տիկին Բոնասիեն երդվում էր բոլոր սրբություններով, թե Արամիսին չի ճանաչում, և քառորդ ժամ էլ չանցած՝ դ'Արտանյանը նրան հանդիպում է Արամիսի հետ թևանցուկ արած:

Դ'Արտանյան նույնիսկ չմտածեց էլ, որ ինքը ար-դուզարդի վաճառականի սիրունիկ կնոջ հետ ծանոթա-ցել է ընդամենը մի երեք ժամ առաջ, որ նա ոչ մի բանով կապված չէ իր հետ, բացի միայն շնորհակալության զգացումից՝ ուստիկանների ձեռքից ազատելու համար, որոնք ուզում էին փախցնել նրան, և որ նա ոչ մի բան չի խոստացել դ'Արտանյանին: Նա իրեն զգում էր խաբված, վիրավորված, ծաղրի ենթարկված սիրեկան: Կատաղությունը համակեց նրան, արյունը երեսին խփեց: Նա որոշեց ճշմարտությունն իմանալ:

Երիտասարդ կինը և նրա ուղեկիցը նկատեցինք որ իրենց հետևող կա, և քայլերն արագացրին: Դ'Արտանյանը համարյա վազելով գնաց անցավ նրանցից և ետ դառ-նալով դեմ առավ նրանց հենց այն բռալեին, երբ նրանք անցնում էին Սամարուհու[65] արձանի կողքով, որը լուսավորված էր մի լապտերով, որի լույսը փռվում էր նաև կամրջի այդ ամբողջ մասի վրա:

Դ'Արտանյանը կանգ առավ նրանց առաջ, և նրանք նույնպես ստիպված եղան կանգ առնել:

— Ի՞նչ է հարկավոր ձեզ, պարո՛ն,— մի քայլ ետ քաշվելով հարցրեց հրացանակիրը, որի օտար առոզանությունը դ'Արտանյանին ստիպեց հասկանալ, որ համենայնդեպս իր ենթադրության մի մասում սխալված է:

— Սա Արամիսը չէ՛,— գոչեց նա:

— Ո՛չ, պարոն, Արամիսը չեմ: Դատելով ձեր բացա-կանչությունից՝ դուք ինձ ուրիշի տեղ եք դրել, ուստի և ես ներում եմ ձեզ:

— Դուք ներում եք ի՞նձ,— գոչեց դ՛Արտանյանը:

— Այո՛,— ասաց անձանոթը:— Թույլ տվեք ինձ անցնել, քանի որ դուք ոչ մի գործ չունեք ինձ հետ:

— Դուք իրավացի եք, պարոն,— ասաց դ՛Արտանյանը:— Ես ձեզ հետ ոչ մի գործ չունեմ: Բայց ես գործ ունեմ ձեր ուղեկցուհու հետ:

— Իմ ուղեկցուհու հե՞տ: Բայց դուք նրան չեք ճանաչում,— զարմանքով ասաց անձանոթը:

— Դուք սխալվում եք, պարոն: Ես նրան ճանաչում եմ:

— Ա՛խ,— կշտամբանքով գոչեց տիկին Բոնասիեն:— Դուք ինձ ազնվականի և զինվորականի խոսք տվիք: Ես կարծում էի, թե կարող եմ հույս դնել ձեր ազնվու-թյան վրա:

— Իսկ դուք, տիկին, դուք...— շփոթված կմկմաց դ՛Ար-տանյանը դուք ինձ խոստացաք...

— Հենվեցեք իմ թևին, տիկին,— ասաց օտարերկրացին,— և առաջ գնանք:

Դ՛Արտանյանը շճմած ու շփոթված, ձեռքերը կրծքին խաշած՝ շարունակում էր կանգնած մնալ տիկին Բոնասիեի և նրա ուղեկցի առջև:

Հրացանակիրը մի քայլ առաջ գնաց և ձեռքով ետ հրեց դ՛Արտանյանին:

Արտանյանը ետ ցատկելով դուրս քաշեց սուսերը: Օտարերկրացին էլ կայծակի արագությամբ դուրս քաշեց իր սուսերը:

— Ի սեր բոլոր սրբերի, միլորդ,— աղաղակեց տիկին Բոնասիեն, նրանց միջև նետվելով և ձեռքերով բռնելով սուսերները:

— Միլո՛րդ,— գոչեց դ'Արտանյանը: Նրա գլխում հանկարծակի մի միտք ծագեց— Միլորդ... Ներեցեք ինձ, տեր իմ... Բայց մի՞ թե դուք...

— Միլորդը դուքս Բեկինգհեմն է,— շշուկով ասաց տիկին Բոնասիեն:— Եվ այժմ դուք կարող եք մեզ բուրբիս կործանել:

— Միլորդ, և դուք, տիկին, խնդրում եմ ձեզ՝ ներեցեք ինձ: Բայց չե՞ որ ես սիրում եմ սրան, միլորդ, և խանդում էի: Դուք հո գիտե՞ք, միլորդ, ինչ բան է սերը: Ներեցեք ինձ և ասացեք. չե՞ մ կարող արդյոք ես իմ կյանքը տալ ձերդ ողորմածության համար:

— Դուք ազնիվ պատանի եք,— խոսեց դուքսը դ'Արտանյանին մեկնելով իր ձեռքը, որը նա սեղմեց հարգալից:— Դուք ինձ ձեր ծառայությունն եք առաջարկում, ես ընդունում եմ: Ուղեկցեք մեզ մինչև Լուվր և եթե նկատեք, որ որևէ մեկը հետևում է մեզ, սպանեցեք այդ մարդուն:

Դ'Արտանյանը մերկ սուսերը ձեռքին բռնած ճանապարհ տվեց տիկին Բոնասիեին ու դքսին և մի քսան քայլ ետ մնալով՝ հետևեց նրանց, պատրաստ լինելով ճշտորեն կատարելու Կառլոս I-ի[66] ազնիվ ու վեհաշուք մինիստրի հրամանը:

Սակայն, բարեբախտաբար, այդ երեկո երիտասարդ հերոսը առիթ չունեցավ գործով ապացուցելու իր նվիրվածությունը, և դեռատի կինը վայելչատես հրացանակրի հետ առանց որևէ անհանգստության՝ Լուվր հասան ու ներս ընդունվեցին Էշել փողոցի դիմաց գտնվող դռնակով: Ինչ վերաբերում է դ'Արտանյանին, նա շտապեց «Մոսենու Կոնգոմ» պանդոկը, որտեղ նրան սպասում էին Պորտոսն ու Արամիսը:

Առանց բացատրելու, թե ինչ առիթով էր անհանգստացրել նրանց՝ դ'Արտանյանը միայն հաղորդեց, թե ինքը մենակ գլուխ բերեց այն գործը, որի համար, իրեն թվում էր, թե պետք կլինե՞ր նրանց օգնությունը:

Իսկ այժմ, մեր պատմությունով տարված՝ այս երեք ընկերներին թողնենք, որ վերադառնան յուրաքանչյուրն իր տունը, և Լուվրի ոլորապտույտներով հետևենք դուքս Բեկինգհեմին և նրա ուղեկցուհուն:

XII. Ջորջ Վիլիերս, Բեկինգհեմի դուքս

Տիկին Բոնասիեն և դուքսը առանց դժվարությունների մտան Լուվր: Տիկին Բոնասիեն ճանաչում էին, գիտեին, որ նա թագուհու սպասուհիներից մեկն է, իսկ դուքսը պ-րն դը Տրևիլի հրացանակիրների համագգեստով էր, իսկ հրացանակիրների մի վաշտը, ինչպես արդեն ասել ենք, այդ երեկո պալատում հերթապահություն էր անում: Ի դեպ, Ժերմենը կուրորեն նվիրված էր թագուհուն, և եթե մի որևէ բան պատահեր, տիկին Բոնասիեն կմեղադրեին միայն նրա համար, որ նա իր սիրեկանին Լուվր է բերել: Դրանով էլ ամեն ինչ կվերջանար: Նա մեղքն իր վրա կվերցնե, իր անբիծ անունը, ճիշտ է, կարատավորեր, բայց աշխարհի ուժեղների համար ի՞նչ նշանակություն ունի մի ինչ-որ արդուզարդի վաճառականի կնոջ անբիծ անունը:

Մտնելով բակ, դուքսը և տիկին Բոնասիեն մի քսանհինգ քայլ գնացին քարե ցանկապատի երկարությամբ: Այա տիկին Բոնասիեն սեղմեց սպասավորների փոքրիկ դռան բռնակը: Այդ դուռը, որ ցերեկը բաց էր լինում, իսկ գիշերը սովորաբար փակվում էր, հեշտությամբ բացվեց: Նրանք ներս մտան: Շուրջը խավար էր, սակայն տիկին Բոնասիեն լավ ծանոթ էին Լուվրի այդ մասի բոլոր մուտքերն ու անցուղիները, որովհետև այդ մասը հատկացված էր պալատի սպասավորներին: Դուռը իր հետևից փակելով՝ տիկին Բոնասիեն դքսին թևանցուկ արեց, խարխափելով մի քանի քայլ առաջ գնաց, սանդուղքի բազրիքը բռնեց, ոտքի շոշափումով աստիճանը գտավ և սկսեց բարձրանալ: Դուքսը հետևում էր նրան: Նրանք հասան երրորդ հարկ: Այստեղ տիկին Բոնասիեն թեքվեց դեպի աջ, իր ուղեկցին տարավ մի երկար միջանցքով, մի հարկ ցած իջավ էլի մի քանի քայլ առաջ գնաց, բանալին մտցրեց մի փականքի մեջ, դուռը բաց արեց և դքսին հրեց մի սենյակ, որը լուսավորված էր միայն գիշերային լամպով:

— Մնացեք այստեղ, միլորդ,— շշնջաց նա:— Հիմա կգան:

Այս ասելով, նա նույն դռնով դուրս եկավ և այն փակեց բանալիով, այնպես որ դուքսը մնաց որպես գերի, բառիս բուն իմաստով:

Չի կարելի չնշել, որ դուքս Բեկինգհեմը, չնայած բոլորովին մենակ էր: Բայց վախ չէր զգում: Նրա բնավորության ամենահատկանշական գծերից մեկը՝ ծարավն էր արկածների և սերը ամեն տեսակ ռոմանտիկ բնի նկատմամբ: Համարձակ, քաջարի ու ձեռներեց այդ մարդը շատ անգամ էր այսպիսի հանգամանքներում վտանգի

ենթարկել իր կյանքը: Նրան արդեն հայտնի էր, որ Աննա Ավստրիացու նամակը, որն իրեն ստիպել էր սլանալ Փարիզ, կեղծ է եղել և պետք է իրեն ծուղակի մեջ գցեր: Սակայն, փոխանակ Լոնդոն վերադառնալու, օգտվելով դիպվածից, նա խնդրել էր թագուհուն հաղորդել, որ առանց նրա հետ տեսնվելու չի գնա: Թագուհին սկզբում վճռականապես մերժել էր, հետո երկյուղելով, թե իր մերժումից հուսահատության հասած դուքսը կարող է որևէ անմտություն թույլ տալ, որոշել էր ընդունել նրան, որպեսզի խնդրի անմիջապես վերադառնալ: Բայց այդ նույն երեկոյան, երբ նա այս որոշումն էր ընդունել, փախցրին տիկին Բոնասիեին, որին հանձնարարված էր գնալ դքսի մոտ և նրան բերել Լուվր: Երկու օր ոչ ոք չգիտեր, թե ինչ է պատահել տիկին Բոնասիեին և ամեն ինչ կանգ էր առել: Բայց հենց որ տիկին Բոնասիեն դուրս պրծավ նրանց ձեռքից և Լա Պորտի հետ տեսնվեց, նորից ամեն ինչ շարժման մեջ մտավ, և նա մինչև վերջ հասցրեց վտանգավոր նախաձեռնությունը, որ, եթե նրան Հափշտակած չլինեին, երեք օր շուտ գլուխ կգար:

Մենակ մնալով՝ դուքսը մոտեցավ հայելուն: Հրացանակրի հագուստը շատ էր սազում նրան:

Նա կլիներ երեսունհինգ տարեկան, և իզուր չէր, որ ամենագեղեցիկ ազնվականի ու ամենանրբին ասպետի համբավ ուներ ինչպես ամբողջ Ֆրանսիայում, այնպես էլ Անգլիայում:

Լինելով երկու թագավորների սիրելին, բազում միլիոնների տեր, չտեսնված իշխանություն ունենալով երկրում, որը նա իր քմահաճույքով մերթ վրդովում էր, մերթ խաղաղեցնում, ենթարկվելով միայն իր հաճույքներին, Ջորջ Վիլիերսը՝ դուքս Բեկինգհեմը, վարում էր հեքիաթային կյանք, որը նույնիսկ դարեր անցնելուց հետո կարող էր իր սերունդներին զարմանք պատճառել:

Լինելով ինքնավստահ, համոզված, որ ուրիշ մարդկանց կառավարող օրենքները ամեննին չեն վերաբերում իրեն, հույս դնելով իր հզորության վրա՝ նա գնում էր ուղիղ դեպի իր նպատակը, թեկուզև այդ նպատակը այնքան կուրացուցիչ ու բարձր լիներ, որ ուրիշ ամեն մի մարդու ցնորամտություն թվար նույնիսկ նրա մասին մտածելը: Այս ամենը միասին նրան վճռականություն էր տալիս՝ հանդիպումներ որոնելու չքնաղ ու անմատչելի Աննա Ավստրիացու հետ և շլացնելով նրան՝ սեր արթնացնելու նրա սրտում:

Եվ այսպես, ինչպես արդեն ասացինք, Ջորջ Վիլիերսը կանգ առավ հայելու առաջ: Ուղղելով իր գեղեցիկ ոսկեփայլ մազերը, որ փոքր-ինչ ճմրթվել էին հրացանակրի գլխարկից, բեղերը ոլորելով, հրճվանքով լեցուն, հպարտ ու երջանիկ, որ մոտ է փափագած բռպեն, նա ժպտաց իր արտացոլմանը՝ հույսով ու հպարտությամբ տոգորված ժպիտով:

Այդ նույն բռպենին բացվեց պատի մեջ վարագուրված մի դուռ, և սենյակ մտավ մի կին: Դուքսը նրան տեսավ հայելու մեջ և թեթև ճիչ արձակեց. ներս մտնողը թագուհին էր:

Աննա Ավստրիացին այդ ժամանակ քսանվեց կամ քսանյոթ տարեկան էր և գտնվում էր իր գեղեցկության լիակատար ծաղկուն հասակում: Նա թագուհու կամ թե աստվածուհու քայլվածք ուներ: Չմրուխտափայլ աչքերը գեղեցկության կատարելություն էին թվում և լի էին քնքշությամբ ու միաժամանակ վեհությամբ:

Փոքրիկ ալ կարմիր բերանը չէր փչացնում նույնիսկ ստորին շրթունքը, որ փոքր-ինչ դուրս էր ցցված, ինչպես ավստրիական թագավորական տան բոլոր շառավիղներինն էր, նա չքնաղ էր իր ժպիտով, բայց կարողանում էր արտահայտել նաև խոր արհամարհանք:

Նրա մաշկը հայտնի էր իր քնքուշ ու թավշանման նրբությամբ, ձեռքերը և ուսերը զարմացնում էին իրենց գծագրության գեղեցկությամբ, և իր ժամանակի բոլոր բանաստեղծները գովերգում էին նրան իրենց ոտանավորներում: Վերջապես նրա մազերը, որ մատաղ հասակում խարտյաշ էին, բայց աստիճանաբար դարչնագույն երանգ էին ստացել, այժմ հյուսված ու փոքր-ինչ փոշեպատված՝ չքնաղորեն շրջանակում էին նրա երեսը, որին ամենախիստ քննադատն էլ գուցե թե կցանկանար միայն մի քիչ ավելի պակաս վառ գույներ, իսկ ամենապահանջկոտ քանդակագործը՝ քթի ավելի շատ նրբություն:

Դուքս Բեկինգհեմը մի պահ ապշահար քար կտրեց. պարահանդեսների, տոնախմբությունների ու խնջույքների ժամանակ Աննա Ավստրիացին երբեք նրան այնքան չքնաղ չէր թվացել, ինչպես այժմ, երբ նա է ճերմակ մետաքսե պարզ շորով սենյակ մտավ՝ ուղեկցությամբ դոննա Էստեֆանիայի, որ միակն էր նրա իսպանացի սպասուհիներից, որը դեռևս գոհ չէր գնացել թագավորի խանդին ու կարդինալ Ռիշելիեի որոգայթներին:

Աննա Ավստրիացին մի քայլ արեց դեպի դուքսը: Բեկինգհեմը ընկավ նրա ոտքերը, և նախքան թագուհին կկարողանար արգելել, նրա հագուստի փեշը հպեց իր շրթունքներին:

— Դուքս, դուք արդեն գիտեք, որ այն նամակը ես չեմ թելադրել:

— Օ՛, այո՛, տիրուհի՛, այո՛, ձերդ մեծություն,— բացականչեց դուքսը:— Գիտեմ, որ ես հիմար ու անմիտ եմ եղել, հավատալով, թե ձյունը կարող է կենդանանալ, մարմարը՝ ջերմություն ճառագել: Բայց ի՛նչ արած, երբ սիրում ես, շատ հեշտ է հավատալ փոխադարձ սիրուն: Բացի այդ, ես իզուր չեմ կատարել այս ճանապարհորդությունը, քանի որ, այնուամենայնիվ, ահա տեսնում եմ ձեզ:

— Այո՛,— պատասխանեց Աննա Ավստրիացին,— բայց ձեզ հայտնի է, թե ես ինչու եմ համաձայնել տեսակցել ձեզ հետ: Անողոք լինելով իմ բոլոր վշտերի նկատմամբ՝ դուք համառորեն հրաժարվում էիք հեռանալ այս քաղաքից, թեև այստեղ մնալով՝ դուք վտանգի եք ենթարկում ձեր կյանքը և ինձ էլ ստիպում եք վտանգի ենթարկել իմ պատիվը: Ես համաձայնեցի տեսակցել ձեզ հետ, որպեսզի ձեզ ասեմ՝ մեզ բաժանում է ամեն ինչ խորունկ ծովը, մեր թագավորությունների թշնամանքը, Տրված երդումների սրբությունը: Սրբապղծություն է այդ ամենի դեմ պայքարել, միլո՛րդ: Ես, վերջապես, համաձայնեցի տեսակցել ձեզ հետ նրա համար, որպեսզի ձեզ ասեմ, որ մենք այլևս չպետք է տեսնվենք:

— Շարունակեցե՛ք, տիրուհի, շարունակեցե՛ք, թագուհի,— խոսեց Բեկինգհեմը: — Ձեր ձայնի քնքշությունը մեղմացնում է ձեր խոսքերի դաժանությունը: Դուք խոսում եք սրբապղծության մասին: Սակայն սրբապղծություն է այն սրտերի անջատումը, որոնք աստված ստեղծել է միմյանց համար:

— Միլո՛րդ,— գոչեց թագուհին:— Դուք մոռանում եք՝ ես երբեք չեմ ասել, որ սիրում եմ ձեզ:

— Բայց դուք երբեք չեք է՛լ ասել, որ չեք սիրում ինձ: Եվ հիրավի, այդպիսի խոսքեր արտասանելը խիստ ապերախտություն կլիներ ձերդ մեծության կողմից: Որովհետև, ասացեք ինձ, որտե՞ղ կգտնեք դուք այնպիսի սեր, ինչպիսին իմ սերն է, այնպիսի սեր, որը մարել չկարողացան ոչ անջատումը, ոչ ժամանակը, ոչ

անհուսալիությունը: Մի սեր, որ պատրաստ է գոհանալու պատահամաբ գցած մի ժապավենով, վայրկենական հայացքով, պատահաբար դուրս թռած մի բառով: Ահա արդեն երեք տարի է, տիրուհի, ինչ առաջին անգամ տեսա ձեզ, և ահա արդեն երեք տարի է, ինչ ես այդպես սիրում եմ ձեզ: Ուզո՞ւմ եք, պատմեմ, թե ինչպես էիք հագնված, երբ առաջին անգամ տեսա ձեզ: Ուզո՞ւմ եք, նույնիսկ մանրամասն նկարագրեմ ձեր հագուստի զարդերը... Ես տեսնում եմ ձեզ, ինչպես այժմ. դուք նստած էիք բարձերի վրա ըստ իսպանական սովորության, ձեր հագին կանաչ ասլասե շոր էր՝ արծաթակար ու ոսկեկար, լայն կախ ընկած թևքերը բարձրացրած էին արմունկներից վեր, ազատ թողնելով ձեր սքանչելի ձեռքերը, ահա այդ չքնաղ ձեռքերը, և հավաքված, ամրացված էին խոշոր ադամանդե կոճակներով: Ձեր պարանոցը ծածկում էր մի ժանեկազարդ խորշան: Ձեր գլխին մի փոքրիկ գլխարկ էր՝ նույն գույնի, ինչ ձեր հագուստն էր, իսկ գլխարկի վրա կար ձկնկուլի մի փետուր... Օ՛, այո՛, այո՛, ես փակում եմ աչքերս և ձեզ տեսնում եմ այնպես, ինչպես այն ժամանակ էիք, բացում եմ աչքերս և ձեզ տեսնում եմ այնպես, ինչպես այժմ եք, այ-սինքն՝ հարյուրապատիկ չքնաղ:

— Ի՛նչ ցնորամտություն,— շնջաց Աննա Ավստրիացին, որը քաջություն չուներ բարկանալու դքսի վրա՝ իր պատկերն այդպես խնամքով սրտում պահելու համար:— Ի՞նչ անմտություն՝ նման հիշողություններով անօգուտ կիրք տածել:

— Էլ ուրիշ ինչո՞վ ապրեմ ես: Չէ՞ որ հիշողու-թյուններից բացի ուրիշ ոչինչ չունեմ: Նրանք են իմ երջանկությունը, իմ գանձը, իմ հույսը: Ձեզ հետ ունեցած ամեն մի հանդիպում մի ադամանդ է, որ ես պահում եմ իմ հոգու գանձարանում: Այս օրվա հանդիպումը չորրորդ գանձն է, որ գցել եք դուք և վերցրել եմ ես: Չէ՞ որ երեք տարվա ընթացքում, տիրուհի, ես ձեզ տեսել եմ ընդամենը չորս անգամ, առաջին հանդիպման մասին ես հենց նոր պատմեցի, երկրորդ անգամ ես ձեզ տեսել եմ տիկին դը Շերյոզի մոտ, երրորդ անգամ՝ Ամիենի այգիներում:

— Դուքս,— շառագունելով շնջաց թագուհին,— մի՛ հիշեք այդ հանդիպումը:

— Օ՛, ո՛չ, ընդհակառակն. հիշենք այդ հանդիպումը, տիրուհի: Այդ իմ կյանքի ամենաերջանիկ, ամենաուրախ երեկոն էր: Հիշո՞ւմ եք ինչպիսի երեկո էր: Օդը մեղմ էր ու անուշ բուրմունքով հագեցած: Կապույտ երկնքում շողշողում էին աստղերը: Օ՛, այն երեկո, տիրուհի, ինձ հաջողվեց մի կարճ ակնթարթ ձեզ հետ մենակ մնալ: Այն երեկո դուք պատրաստ էիք պատմելու ինձ ամեն ինչի մասին՝ ձեր մենության և ձեր հոգու

տառապանքների մասին: Դուք հենվում էիք իմ թևին: Ահա հենց այս թևին: Կռանալիս ես զգում էի, թե ինչպես ձեր հրաշալի մազերը դիպչում են իմ երեսին և ամեն մի շփում ինձ դող էր պատճառում ոտքից մինչև գլուխ: Թագուհի՛, օ՛, իմ թագուհի: Դուք չգիտեք, թե ինչ երկնային երջանկություն, ինչ դրախտային երանություն է պարունակում այդպիսի վայրկյանը, իմ բոլոր տիրապետությունները, հարստությունը, փառքը, իմ բոլոր օրերը, որ դեռ մնացել է ինձ ապրելու, ես պատրաստ եմ տալու այդպիսի մի վայրկյանի համար, այդպիսի մի գիշերվա համար: Որովհետև այն գիշեր, տիրուհի, այն գիշեր դուք սիրում էիք ինձ, երդվում եմ...

— Միլո՛րդ, հնարավոր է, այո , այգու թովչանքը, այդ չքնաղ երեկոյի հրապույրը, ձեր հայացքի ներգործությունը, բոլոր անհամար հանգամանքները, որոնք երբեմն միաձուլվում են կնոջը կործանելու համար, այդ ճակատագրական երեկոյին միավորվել էին իմ շուրջը: Բայց դուք տեսաք, միլորդ, որ թագուհին օգնության հասավ թուլացող կնոջը, առաջին իսկ խոսքին, որ դուք սիրտ արիք արտասանել, առաջին իսկ ազատությանը, որին ես պետք է պատասխանեի, ես կանչեցի իմ սպասուհուն:

— Օ՛, այո՛, ճշմարիտ է: Եվ որևէ ուրիշ սեր, բացի իմ սիրուց, չէր կարող դիմանալ նման փորձության: Մակայն իմ սերը այդ փորձությունը հաղթահարելով ավելի ուժեղ բորբոքվեց, հավիտյանս տիրապետեց իմ սրտին: Դուք կարծում էիք, թե Փարիզ վերադառնալով ազատվեցիք ինձնից, դուք մտածում էիք, թե ես չեմ համարձակվի թողնել այն գանձը, որ իմ տերը հանձնարարել էր ինձ պաշտպանել: Բայց ի՞նչ գործ ունեի աշխարհի բոլոր գանձերի, բոլոր թագավորների հետո մի շաբաթ էլ չանցած ես վերադարձա, տիրուհի: Այս անգամ դուք ինձ կշտամբելու բան չունեիք: Ես վտանգի ենթարկեցի իմ թագավորի ողորմածությունը, վտանգի ենթարկեցի իմ կյանքը, որպեսզի գեթ մի ակնթարթ տեսնեմ ձեզ, ես նույնիսկ չդիպա ձեր ձեռքին, և դուք ներեցիք ինձ, տեսնելով իմ գոջումն ու հնազանդությունը:

— Այո, սակայն զրպարտությունն օգտվեց այդ բոլոր ցնորամտություններից, որոնց մեջ, միլորդ, դուք ինքներդ գիտեք, ես ոչ մի մեղք չունեի: Թագավորը, որին զրգում էր կարդինալը, խիստ զայրացավ: Տիկին դը Վերնեն հեռացվեց, Պյուտանժը արտաքսվեց Ֆրանսիայից, տիկին դը Շերյոզը շնորհագուրկ եղավ: Իսկ երբ դուք ցանկացաք որպես դեսպան վերադառնալ Ֆրանսիա, թագավորն անձամբ, հիշեցեք այս, միլորդ, թագավորն անձամբ դեմ եղավ դրան:

— Այո, և Ֆրանսիան պատերազմով հատուցեց իր թագավորի մերժումը: Ես գրկված եմ ձեզ տեսնելու հնարավորությունից, տիրուհի: Ինչ արած, ես ուզում եմ, որ դուք ամեն օր լսեք իմ մասին: Ի՞նչ եք կարծում ի՞նչ նպատակ ունեք հեռարշավախումբը դեպի Ռե կղզին և դաշինքը Լա-Ռոշելի բողոքականների հետ, որ ես մտածում եմ կնքել: Ձեզ տեսնելու բավականությունը: Ես չեմ կարող հուսալ, թե զենքը ձեռքիս կտիրեմ Փարիզին, այդ ես գիտեմ: Բայց այս պատերազմին կհետևի հաշտություն կնքելը, հաշտություն կնքելը բանակցություններ կպահանջի, բանակցություններ վարելը կհանձնարարվի ինձ: Այն ժամանակ արդեն չեն համարձակվի ինձ չընդունել, և ես կվերադառնամ Փարիզ ու գեթ մի ակնթարթ կտեսնեմ ձեզ և ես երջանիկ կլինեմ: Ճիշտ է, հազարավոր մարդիկ այդ երջանկության համար իրենց կյանքը կտան: Բայց այդ իմ գործը չէ, միայն թե տեսնեմ ձեզ: Այս ամենը գուցե և ցնորամտություն է, զառանցանք, բայց ասացեք, ո՞ր կինն է ունեցել մեկը, որն ավելի ուժեղ կրթով է աստվածացրել իրեն: Ո՞ր թագուհին ավելի նվիրված ծառա է ունեցել:

— Միլո՛րդ, միլո՛րդ, ձեզ արդարացնելու համար դուք բերում եք ձեզ արատավորող պատճառաբանություններ: Միլո՛րդ, ձեր սիրո ապացույցները, որոնց մասին դուք խոսում եք, չե՞ որ համարյա հանցագործություններ են:

— Միայն նրա համար, որ դուք չեք սիրում ինձ, տի-րուհի: Եթե դուք ինձ սիրեիք, այս ամենը այլ կերպ կերևար ձեզ: Բայց եթե դուք սիրեիք ինձ... եթե դուք սիրեիք ինձ, դա չափից ավելի մեծ երջանկություն կլիներ և ես կխելագարվեի: Այո, տիկին դը Շերյոզը, որի մասին հենց նոր դուք հիշատակեցիք, տիկին դը Շերյոզը շատ ավելի քիչ անողոր էր. Հոլանդը[67] սիրում էր նրան, և նա սիրով էր պատասխանում:

— Տիկին դը Շերյոզը թագուհի չէ,— շնջաց Աննա Ավստրիացին՝ չկարողանալով դիմադրել զգացմունքների այդպիսի խոր դրսևորմանը:

— Նշանակում է՝ դուք կսիրե՞իք ինձ, տիրուհի, եթե թագուհի չլինեիք: Ասացեք, կսիրեի՞ք ինձ: Ես կարո՞ղ եմ հավատալ, որ միայն ձեր աստիճանն է ձեզ ստիպում այդքան անդրդվելի լինել: Կարո՞ղ եմ հավատալ, որ եթե դուք լինեիք տիկին դը Շերյոզը, խեղճ Բեկինգհեմը կարող էր հույս փայփայել... Շնորհակալ եմ այդպիսի անուշ խոսքերի համար, օ՛, իմ չքնաղ թագուհի, հազար անգամ շնորհակալ եմ:

— Միլո՛րդ, միլո՛րդ, դուք ճիշտ չհասկացաք, ճիշտ չհասկացաք իմ խոսքերը. ես չե՛ի ուզում ասել...

— Լռեցե՛ք, լռեցե՛ք,— խոսեց դուքսը:— Եթե բախտը ինձ սխալ է պարզևել, այնքան անողոք մի՛ եղեք, որ ուղղեք այն: Դուք ինքներդ ասացիք. ինձ ծուղակի մեջ եք քաշել: Հնարավոր է, որ դրա համար ես կյանքովս հատուցեմ: Այնքա՛ն տարօրինակ է. վերջին ժամանակներս ես մահվան մոտիկություն եմ նախազգում...— և դքսի շուրթերով սահեց մի տխուր, բայց միաժամանակ թովիչ ժպիտ:

— Օ՛, տեր իմ Աստված,— գոչեց Աննան, և նրա ձայնի մեջ հնչող սոսկումը ամեն մի խոսքից ավելի պերճախոս ցույց տվեց, թե որքան ավելի ուժեղ էր նրա մեջ զգացմունքը դքսի նկատմամբ, քան նա ցանկանում էր ցույց տալ:

— Ես, տիրուհի, այս ասացի ամեննին ո՛չ նրա համար, որ վախեցնեմ ձեզ: Օ՛, ո՛չ: Այն, ինչ ես ասացի, պարզապես ծիծաղելի է, և հավատացեք, ինձ ամեննին չի անհանգստացնում երևակայության այդպիսի խաղը: Բայց այն խոսքերը, որ հենց նոր արտասանեցիք դուք, այն հույսը, որ համարյա տրվեց ինձ, նախապես քավեց ամեն ինչ, նույնիսկ իմ կործանումը:

— Հիմա ես էլ եմ խոստովանում ձեզ, դուքս,— խոսեց Աննան:— Ինձ էլ հալածում է մի նախազգացում, հալածում են երագները: Երագում ես իբր թե տեսնում էի ձեզ. դուք պառկած էիք գետնին արյունաշաղախ, վիրավոր:

— Վիրավորված ձա՞խ կողից, դանակո՞վ,— ընդհատեց նրան դուքսը:

— Այո, ճիշտ այդպես, միլորդ, ձախ կողից, դանակով: Ո՞վ կարող էր ձեզ պատմել, որ ես այդպիսի երագ եմ տե-սել: Ես այն միայն աստծուն եմ պատմել, այն էլ աղոթքի ժամանակ:

— Այդքանը բավական է, տիրուհի: Դուք սիրում եք ինձ: Եվ այդ բավական է:

— Ես սիրում եմ ձե՞զ: Ե՞ս:

— Այո, դուք: Մի՞ թե աստված ձեզ նույն երագները կուղարկեր, ինչ որ ինձ, եթե դուք ինձ սիրելիս չլինեիք: Մի՞ թե մենք միևնույն նախազգացումը կունենայինք, եթե

սիրտը չկապեր մեր կյանքերը: Դուք սիրում եք ինձ, իմ թագուհի: Մո՞ւզ կանեք դուք, եթե ես մեռնեմ:

— Օ՛, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,— գոչեց Աննա Ավստ-րիացին: — Այդ շատ ավելի է, քան ես կարող եմ տանել: Դու՛քս, աղաչում եմ ձեզ, ի սեր բոլոր սրբությունների, թողեք ինձ, գնացեք: Ես չգիտեմ, սիրո՞ւմ եմ ձեզ, թե՞ ոչ, բայց հաստատ գիտեմ, որ ես չեմ խախտի իմ երդումը: Խղճացեք ինձ, գնացե՛ք, եթե ձեզ վիրավորեն Ֆրանսիայում, եթե դուք մեռնեք Ֆրանսիայում, եթե ես թեկուզ մտածեմ, որ ինձ սիրելը ձեր կործանման պատճառը դարձավ, ես դրան դիմանալ չեմ կարող, կլիելագարվեմ: Գնացե՛ք ուրեմն, գնացե՛ք, աղաչում եմ ձեզ:

— Օ՛, ի՛նչ չքնաղ եք դուք հիմա, ինչպես եմ սիրում ես ձեզ,— խոսեց Բեկինգհեմը:

— Գնացե՛ք, գնացե՛ք, աղաչում եմ ձեզ: Հետո կվերադառնաք: Վերադարձեք որպես դեսպան, որպես մի-նիստր, վերադարձեք թիկնապահների ուղեկցությամբ, որոնք պատրաստ լինեն պաշտպանելու ձեզ, ծառաների ուղեկցությամբ, որոնք պարտավոր են պաշտպանել ձեզ: Այն ժամանակ ես չեմ դողա ձեր կյանքի համար և երջանիկ կլինեմ ձեզ տեսնելու:

— Մի՞ թե ճշմարիտ է այն, ինչ ասում եք ինձ:

— Այո՛...

— Այդ դեպքում, այդ դեպքում ի նշան այն բանի, որ ներում եք ինձ, մի որևէ բան տվեք ինձ, ձեզ պատկանող մի որևէ իր, որ ապացույց լինի, թե այս ամենը ես երագում չեմ տեսել: Մի որևէ իր, որ դուք կրել եք և ես կարող եմ կրել. մատանի, մանյակ, շղթայիկ...

— Եվ դուք կգնա՞ք, կգնա՞ք, եթե ես կատարեմ ձեր խնդիրքը:

— Այո:

— Անհապա՞ղ:

— Այո:

— Դուք կհեռանա՞ք Ֆրանսիայից: Կվերադառնա՞ք Անգլիա:

— Այո՛, երդվում եմ:

— Այդ դեպքում սպասեցեք, սպասեցեք:

Աննա Ավստրիացին անցավ իր սենյակը և համարյա նույն րոպեին վերադարձավ, ձեռքին բռնած վարդագույն փայտից շինված մի տուփիկ՝ ոսկե զարդերով, որոնք վերարտադրում էին նրա մոնոգրամը[68]:

— Վերցրե՛ք այս, միլո՛րդ,— ասաց նա,— վերցրեք և հիշատակ պահեցեք ինձնից:

Դուքս Բեկինգհեմը տուփիկը վերցրեց և նորից ծունկ չոքեց նրա առաջ:

— Դուք ինձ խոստացաք մեկնել,— ասաց թագուհին:

— Եվ ես խոսքս կկատարեմ: Ձեր ձեռքը, տիրուհի, տվեք ձեր ձեռքը, և ես հեռանում եմ:

Աննա թագուհին աչքերը փակելով ձեռքը մեկնեց, մյուս ձեռքով հենվեց Էստեֆանիային, որովհետև զգում էր, որ ուժերը պատրաստ են լքելու իրեն:

Բեկինգհեմը բուռն կրքով շուրթերը հպեց այդ չքնաղ ձեռքին:

— Ոչ ուշ, քան կես տարուց հետո, տիրուհի,— խոսեց նա վերկենալով,— ես նորից կտեսնեմ ձեզ, թեկուզ դրա համար ստիպված լինեմ շուռ տալ երկինքն ու երկիրը:

Եվ խոստումին հավատարիմ՝ դուրս վազեց սենյակից:

Միջանցքում նա գտավ տիկին Բոնասիեին, որը նույնպիսի զգուշությամբ և նույնպիսի հաջողությամբ նրան դուրս տարավ Լուվրի սահմաններից:

XIII. Պարոն Բոնասիեն

Այս ամբողջ պատմության մեջ, ինչպես ընթերցողը կարող էր նկատել, կար մի մարդ, որով, չնայած նրա ծանր դրությանը, ոչ ոք չէր հետաքրքրվում: Այդ մարդը պարոն Բոնասիեն էր, հարգարժան զոհը քաղաքական ու սիրային ինտրիգների, որոնք այնքան սերտորեն միահյուսվում էին այն ժամանակաշրջանում, որն այնքան հարուստ էր ասպետական սիրագործություններով և միաժամանակ սիրային արկածներով:

Բարեբախտաբար,— հիշո՞ւմ է արդյոք ընթերցողը, թե չի հիշում,— մենք խոստացանք աչքաթող չանել նրան:

Պարոն Բոնասիենին ձերբակալող ոստիկանները նրան տարան ուղիղ Բաստիլ և անցկացրին մի խումբ զինվորների կողքով, որոնք լցնում էին իրենց հրա-ցանները, ինչից պարոն Բոնասիենի մարմինը դող ընկավ:

Հետո, ընկնելով կիսանկուղային մի երկար միջանցք, նա ամենադաժան վերաբերմունքի ենթարկվեց իրեն ուղեկցողների կողմից, որոնք ամենակոպիտ հայիոյանքներ տեղացին նրա վրա: Ոստիկանները տեսնելով, որ իրենց առաջ ո՛չ ազնվական ծագումով մի մարդ է, նրա հետ վարվում էին ինչպես ամենավերջին մուրացկանի հետ:

Կես ժամ անց՝ երևաց գրագիրը, որը վերջ դրեց նրա տանջանքներին, բայց ո՛չ անհանգստությանը, որովհետև կարգադրեց տանել նրան հարցաքննության սենյակը: Սովորաբար ձերբակալվածներին հարցաքննում էին իրենց խցիկում, բայց պարոն Բոնասիենից հարկ չհամարեցին քաշվել: Երկու ոստիկան տարաբախտ վաճառականի օձիքից բռնելով ստիպեցին նրան բակի միջով անցնել, տարան մի միջանցք, որտեղ կանգնած էին երեք ժամապահ, մի ինչ-որ դուռ բաց արին և նրան ներս հրեցին կամարակապ առաստաղով մի սենյակ, որտեղ միայն մի սեղան ու մի աթոռ կար և որտեղ գտնվում էր կոմիսարը: Կոմիսարը սեղանի մոտ աթոռին նստած ինչ-որ բան էր գրում:

Ոստիկանները կալանավորին մոտեցրին սեղանին և կոմիսարի նշանով այնքան հեռացան, որ նրա ձայնը իրենց չհասնի:

Կոմիսարը, որ մինչ այդ գլուխը հակել էր իր թղթերի վրա, հանկարծ հայացքը բարձրացրեց՝ ցանկանալով ստուգել, թե ով է կանգնած իր առաջ: Նա անբարեհամբույր տեսք ուներ՝ սուր քիթ, դեղին, դուրս ցցված այտոսկրեր, մանր, բայց շարժուն ու խորաթափանց աչքեր: Դեմքին կար մի բան, որը միաժամանակ հիշեցնում էր ն՛ կզաքիսի, ն՛ աղվեսի: Դատավորական սև պատմուճանի օձիքից դուրս ցցված շարժուն վզին նս-տած գլուխն օրորվում էր, ինչպես կրիայի գլուխ, որ դուրս էր ցցվել իր պատյանից:

Կոմիսարը նախևառաջ հարցրեց պարոն Բոնասիեի անուն-ազգանունը, զբաղմունքը և բնակավայրը:

Հարցաքննվողը պատասխանեց, որ իրեն կոչում են Ժակ-Միշել Բոնասիե, որ ինքը հիսունմեկ տարեկան է, անցյալում արդուզարդի խանութ է ունեցել, այժմ թողել է առևտուրը և ապրում է Գերեզմանափորների փողոցում, N11 տանը:

Դրանից հետո կոմիսարը հարցաքննությունը շարունակելու փոխարեն մի երկար ճառ ասաց այն վտանգի մասին, որ սպառնում է այդ փոքրիկ մարդուն, որը համարձակվել է քաղաքականության մեջ մտնել: Բացի դրանից նա սկսեց երկար ու բարակ պատմել պարոն կարդինալի ուժի ու հզորության մասին, այդ չգերազանցված մինիստրի, բոլոր անցած մինիստրների հաղթողի մասին, որը փայլուն օրինակ է հանդիսանում գալիք մինիստրների համար, որի գործողություններին ու իշխանությանը ոչ ոք չի կարող հակառակել և անպատիժ մնալ:

Իր ճառի այս մասն ավարտելով և բազեի հայացքը գամելով թշվառ Բոնասիեի վրա՝ կոմիսարը նրան առաջարկեց խորհել իր դրության մասին: Արդուզարդի վաճառականի խոհերը բարդ չէին, նա նզովում էր այն օրն ու ժամը, երբ պարոն դը Լա Պորտը մտածեց իրեն ամուսնացնել իր ազգականուհու հետ, և մանավանդ այն ժամը, երբ այդ ազգականուհին նշանակվեց թագուհու հանդերձապահ:

Պարոն Բոնասիեի բնավորության հիմքն էր ամենախոր էգոիզմը՝ միացած ծայրահեղ ժլատության հետ, համեմված մեծագույն վախկոտությամբ: Դեռատի կնոջ նկատմամբ տաճած սերը երկրորդական զգացմունք էր և չէր կարող պայքարել այն թշնամական հատկությունների դեմ, որ հենց նոր թվեցինք մենք:

Բոնասիեն լրջորեն խորհեց նրա մասին, ինչ ասացին իրեն:

— Բայց, պարոն կոմիսար,— ասաց նա միանգամայն պաղարյուն,— հավատացեք, որ ես, ավելի քան որևէ մի ուրիշը, գիտեմ և գնահատում եմ նորին սրբազնության բոլոր արժանիքները, և զգում եմ, որ նա մեծ պատիվ է անում մեզ կառավարելով:

— Մի՞ թե,— թերահավատությամբ հարցրեց կոմիսարը:— Եթե իրոք այդպես է, հապա ինչպե՞ս եք դուք ընկել Բաստիլ:

— Ինչպես, կամ ավելի ճիշտ՝ ինչի համար եմ ես այստեղ գտնվում, ահա այդ ես ոչ մի կերպ ձեզ ասել չեմ կարող, որովհետև այդ ինձ էլ հայտնի չէ: Բայց, իհարկե, երևի ո՛չ այնպիսի արարքների համար, որոնք կարող են տհաճ լինել պարոն կարդինալին:

— Բայց դուք պետք է մի որևէ հանցանք գործած լինեիք, քանի որ ձեզ մեղադրում են պետական դավաճանության մեջ:

— Պետական դավաճանություն՞ ւն,— սուսկումով գոչեց Բոնասիեն:— Պետական դավաճանություն՞ ւն: Ինչպե՞ս կարող է արդուզարդի խեղճ վաճառականը, որը տանել չի կարող հուզենոտներին և ատում է իսպանացիներին, ինչպե՞ս կարող է մեղադրվել պետական դավաճանության մեջ: Դուք ինքներդ մտածեցեք, պարոն կոմիսար: Ախր դա բոլորովին անկարելի բան է:

— Պարոն Բոնասիե՛,— ասաց կոմիսարը մեղադրյալին նայելով այնպես, ասես նրա մանրիկ աչքերը մարդկանց սրտի խորքը կարդալու ընդունակություն ունեին:— Պարոն Բոնասիե՛, դուք կին ունե՞ք:

— Այո, պարոն,— դողալով պատասխանեց արդուզարդի վաճառականը, զգալով, որ հենց այժմ կսկսվեն բարդությունները:— Ես... ես ունեի կին:

— Ինչպե՞ս թե «ունեի»: Հապա ո՞ւր եք կորցրել նրան, եթե ունեցել եք:

— Նրան փախցրել են ինձնից, պարոն:

— Փախցրե՞լ են,— հարցրեց կոմիսարը:— Ա՛յ թե ինչ:

Բոնասիեն այդ «այ թե ինչ»-ից հասկացավ, որ իր գործն ավելի ու ավելի է խճճվում:

— Այդպես ուրեմն, նրան փախցրել են,— շարունակեց կոմիսարը:— Լավ, իսկ դուք գիտե՞ք, թե ով է փախցրել:

— Ինձ թվում է, թե գիտեմ:

— Իսկ ո՞վ է:

— Նկատեցեք, պարոն կոմիսար, որ ես ոչ մի բան չեմ պնդում: Ես միայն կասկածում եմ:

— Իսկ ո՞ւմ եք կասկածում, անկեղծ պատասխանեցեք:

Պարոն Բոնասիեն շփոթվեց. արժե՞ արդյոք ամեն ինչ ժխտել, թե՞ ամեն ինչ անկեղծորեն խոստովանել: Եթե սկսի ամեն ինչ ժխտել, կարող են ենթադրել, թե ինքը խիստ շատ բան գիտի և չի համարձակվում խոստովանել: Այնինչ խոստովանելով՝ նա կապացուցի իր բարի կամքը: Ուստի որոշեց ամեն ինչ ասել:

— Ես կասկածում եմ մի տղամարդու, որը բարձր հասակ ունի, սև մազեր, թուխ դեմք, պատկառելի տեսք և նման է անվանի ազնվականի: Նա, ինձ թվում է, մի քանի անգամ հետևում էր մեզ, երբ ես Լուվրի դռան մոտ կնոջս էի սպասում և տուն տանում նրան:

Կոմիսարը ասես մի փոքր անհանգստացավ:

— Իսկ նրա անո՞ւնը,— հարցրեց նա:

— Օ՛, ես նրա անունը չգիտեմ, բայց եթե պատահի, որ հանդիպեմ, հավատացնում եմ, կճանաչեմ նրան թեկուզ հազար մարդու մեջ:

Կոմիսարը հոնքերը կիտեց:

— Ասում եք՝ նրան կճանաչե՞ք հազար մարդու մեջ,— հարցրեց նա:

— Ես ուզում էի ասել...— մրմնջաց Բոնասիեն, նկատելով, որ հաջող չի պատասխանել:— Ես ուզում էի ասել...

— Դուք պատասխանեցիք, որ կճանաչեիք նրան,— ասաց կոմիսարը:— Լավ: Այսօր այսքանը բավական է: Այս խոսակցությունը շարունակելուց առաջ անհրաժեշտ է մեկին տեղեկացնել, որ ձեզ հայտնի է, թե ով է փախցրել ձեր կնոջը:

— Բայց ես ձեզ չասացի, թե նա հայտնի է ինձ,— հուսահատորեն գոչեց Բոնասիեն:— Ես ճիշտ և ճիշտ հակառակն ասացի...

— Տարե՛ք կալանավորին,— հրամայեց կոմիսարը՝ դառնալով երկու ոստիկաններին:

— Ո՞ւր կհրամայեք տանել նրան,— հարցրեց գրագիրը:

— Խուց:

— Ո՞ր խուցը:

— Աստվա՛ծ իմ: Որն էլ լինի: Միայն թե ամուր փակվի,— ասաց կոմիսարն անտարբեր տոնով, որ սարսափ ներշնչեց թշվառ Բոնասիեին:

«Օ՛, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,— մտածում էր նա:— Փորձանք է ծանրացել իմ գլխին: Երևի իմ կինը մի որևէ զարհուրելի հանցանք է գործել: Ինձ համարում են նրա մեղսակիցը և կպատժեն նրա հետ միասին: Երևի նա խոստովանել է, ասել է, որ ինձ տեղյակ է դարձրել ամեն ինչին: Ախր կանայք այնքան թույլ արարածներ են: Խո՛ւցը, առաջին իսկ պատահած խուցը: Դե իհարկե: Գիշերը կարճ է... իսկ վաղը՝ կախադան: Օ՛, աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ, ողորմա ինձ»:

Ոչ մի ուշադրություն չդարձնելով պարոն Բոնասիեի ողբազին գանգատներին, որոնց, ի դեպ, նրանք վաղուց պետք է վարժված լինեին, ոստիկանները կալանավորի երկու թևերից բռնեցին և տարան բանտախուց: Կոմիսարը սկսեց շտապ ինչ-որ նամակ գրել: Գրագիրը մի կողմ կանգնած նրան էր սպասում:

Այդ գիշեր Բոնասիեն աչք չփակեց: Ոչ թե նրա համար, որ խուցն առանձնապես անհարմար էր, այլ սոսկալի տագնապը չէր թողնում նրան քնել: Ամբողջ գիշեր նա նստել էր փոքրիկ նստարանին և ամենաչնչին ձայնից վեր էր թռչում: Եվ երբ արեգակի առաջին ճառագայթները լուսամուտի վանդակի միջով ներս սահեցին, նրան թվաց, թե հենց արևն էլ սգո երանգ է ստացել:

Հանկարծ նա լսեց, թե ինչպես է ետ քաշվում սողնա-կը և նույնիսկ սարսափից վեր թռավ: Նա մտածեց, թե եկել են իրեն տանելու կառափնարան: Դրա համար էլ, երբ դռան մեջ դահճի փոխարեն երևաց երեկվա կոմիսարը իր գրագրի հետ, Բոնասիեն պատրաստ էր նրա վզովը փայթաթվելու:

— Ձեր գործը, սիրելիս,— ասաց կոմիսարը,— խիստ խճճվել է երեկվանից հետո: Եվ ես ձեզ խորհուրդ եմ տալիս ճշմարտությունն ասել: Միայն ձեր անկեղծ գոջումը կարող է մեղմացնել կարդինալի զայրույթը:

— Բայց ես պատրաստ եմ ամեն ինչ ասելու,— գոչեց Բոնասիեն:— Համենայնդեպս այն ամենը, ինչ ես գիտեմ: Խնդրում եմ հարցեր տվեք ինձ:

— Ամենից առաջ. որտե՞ղ է գտնվում ձեր կինը:

— Բայց ես հո ասացի՞ ձեզ, որ նրան փախցրել են:

— Այո՛, բայց երեկ, ցերեկվա ժամը հինգից հետո նա ձեր օգնության շնորհիվ փախել է:

— Իմ կինը փախել է, — գոչեց Բոնասիեն:— Խեղճ կին: Բայց, պարոն, եթե նա փախել է, ապա այդ իմ մեղքով չէ, երդվում եմ ձեզ:

— Դուք ինչո՞ւ ցերեկը մտել էք ձեր հարևանի՝ պարոն դ'Արտանյանի մոտ, որի հետ երկար խորհրդակցել էք ինչ-որ բանի մասին:

— Այո, այդ ճշմարիտ է, պարոն կոմիսար, խոստովանում եմ այդ և ընդունում եմ, որ այդ սխալ է եղել: Ես իսկապես եղել եմ պարոն դ'Արտանյանի մոտ:

— Ի՞նչ նպատակով էիք գնացել նրա մոտ:

— Գնացել էի նրան խնդրելու, որ իմ կնոջը որոնի: Ես կարծում էի, որ իրավունք ունեմ ետ պահանջելու նրան: Երևում է՝ սխալվել եմ, և շատ եմ խնդրում ձեզ, ներեցեք ինձ:

— Իսկ ի՞նչ պատասխանեց ձեզ պարոն դ'Արտանյանը:

— Պարոն դ'Արտանյանը խոստացավ օգնել ինձ: Բայց շուտով համոզվեցի, որ նա դավաճանում է ինձ:

— Դուք աշխատում էք դատարանին մուրրության մե՞ջ գցել: Դ'Արտանյանը համաձայնության է եկել ձեզ հետ, և այդ համաձայնության պատճառով էլ նա վճռել է այն ոստիկաններին, որոնք ձերբակալել էին ձեր կնոջը, և նրան թաքցրել է հետապնդումից:

— Պարոն դ'Արտանյանը փախցրել է իմ կնոջը: Ինչե՞ր էք ասում:

— Բարեբախտաբար պարոն դ'Արտանյանը մեր ձեռքումն է, և դուք հիմա նրա հետ առերեսում կունենաք:

— Դե ի՞նչ կա որ, ես, ճիշտն ասած, ուրախ կլինեմ դրան,— գոչեց պարոն Բոնասիեն:— Շատ կուզենայի գոնե մի ծանոթ դեմք տեսնել:

— Ներս բերեք պարոն դ'Արտանյանին,— հրամայեց կոմիսարը՝ դառնալով պահակներին:

Պահակները ներս բերեցին Աթոսին:

— Պարոն դ'Արտանյան, — ասաց կոմիսարը դառնալով Աթոսին, — ասացե՛ք, ինչ է տեղի ունեցել ձեր և այս պարոնի միջև:

— Բայց սա ամենևին էլ պարոն դ'Արտանյանը չէ՛, — գոչեց Բոնասիեն:

— Ինչպե՞ս թե դ'Արտանյանը չէ, — իր հերթին գոչեց կոմիսարը:

— Դե իհարկե՛՛նչ,— ասաց Բոնասիեն:

— Հապա ինչպե՛՛ս են կոչում այս պարոնին,— հարցրեց կոմիսարը:

— Չեմ կարող ասել, ես նրա հետ ծանոթ չեմ:

— Դուք սրա հետ ծանոթ չե՞ք:

— Ոչ:

— Դուք սրան երբեք չե՞ք տեսել:

— Տեսել եմ, բայց չգիտեմ նրա անունը:

— Ձեր անո՞ւնը,— հարցրեց կոմիսարը:

— Աթոս,— պատասխանեց հրացանակիրը:

— Բայց դա մարդկային անուն չէ: Դա ինչ-որ սարի անուն է,— գոչեց խեղճ կոմիսարը, որն արդեն սկսել էր գլուխը կորցնել:

— Այդ իմ անունն է,— հանգիստ ասաց Աթոսը:

— Բայց դուք ասել եք, որ ձեզ կոչում են դ'Արտանյան:

— Ե՞ս եմ այդ ասել:

— Այո՛, դուք:

— Թույլ տվեք: Ինձ հարցրին, «Դո՞ւք եք պարոն դ'Արտանյանը», որին ես պատասխանեցի, «Դուք այդպե՞՛ս եք կարծում», ուսիկանները գոռացին, թե իրենք համոզված են դրանում: Ես էլ չվիճեցի նրանց հետ: Բացի այդ, չե՞՞ որ ես կարող էի սխալվել:

— Պարոն, դուք վիրավորում եք դատարանին:

— Ամենին,— հանգիստ ասաց Աթոսը:

— Դուք պարոն դ'Արտանյանն եք:

— Այ, տեսնո՞ւմ եք. դուք նորից պնդում եք այդ:

— Բայց, պարոն կոմիսար,— գոչեց Բոնասիեն,— հավատացնում եմ ձեզ, այստեղ ոչ մի կասկած լինել չի կարող: Պարոն դ'Արտանյանն իմ տնվորն է, հետևապես, թեպետև նա բնակարանի վարձը չի վճարում, կամ հենց թեկուզ այդ պատճառով, ես պետք է ճանաչեմ նրան: Պարոն դ'Արտանյանը երիտասարդ տղա է, տասնինը-քսան տարեկանից ո՛չ ավելի, իսկ այս պարոնն առնվազն երեսուն տարեկան կլինի: Պարոն դ'Արտանյանը պարոն Դեգեսարի գվարդիականներից է, իսկ այս պարոնը հրացանակիր է, պարոն դը Տրևիլի վաշտից: Նայեցեք սրա հագուստին, պարոն կոմիսար, նայեցեք սրա հագուստին:

— Ճիշտ որ,— մրթմրթաց կոմիսարը:— Գրողը տանի, այդ ճշմարիտ է:

Այգ ըռպելին դուռը բացվեց, և սուրհանդակը, որին ներս բերեց Բաստիլի քանտապաններից մեկը, ինչ-որ նամակ տվեց կոմիսարին:

— Ա՛խ, անպիտա՛ն կին,— գոչեց կոմիսարը:

— Ինչպե՞ս: Ինչ ասացի՞ք: Այդ ո՞ւմ մասին եք ասում դուք: Հուսով եմ՝ իմ կնոջ մասին չէ:

— Հենց իսկ և իսկ նրա մասին: Լա՛վ գործեր եք բռնում դուք, բան չունեմ ասելու:

— Բայց ի՞նչ գործ ախր,— գոչեց արդուզարդի վաճառականը բոլորովին հուսահատված:— Բարի եղեք, պարոն կոմիսար, բացատրեցեք ինձ, ինչպես կարող է իմ գործը վատանալ նրանից, ինչ որ անում է իմ կինը այն ժամանակ, երբ ես նստած եմ բանտում:

— Որովհետև այն ամենը, ինչ անում է ձեր կինը, միայն շարունակությունն է ձեր միասնաբար մտածած ծրագրի: Հրեշավոր ծրագրի:

— Երդվում եմ, պարոն կոմիսար, որ դուք խորապես սխալվում եք. ես պատկերացում էլ չունեմ, թե ինչ է մտածել անել իմ կինը, ես ամենաչնչին կապն անգամ չունեմ այն ամենի հետ, ինչ արել է նա, և եթե նա հիմարություններ է արել, ես հրաժարվում եմ նրանից, հրաժարվում եմ և նզովում նրան:

— Լսեք ինձ, պարոն կոմիսար,— հանկարծ ասաց Աթոսը:— Եթե ես ձեզ այլևս հարկավոր չեմ, հրամայեցեք տանել ինձ որևէ տեղ: Ձեր այս պարոն Բոնասիեն արդեն բավական ձանձրացրեց ինձ:

— Ձերբակալվածներին տարեք իրենց խցերը,— հրամայեց կոմիսարը միևնույն շարժումով ցույց տալով Աթոսին ու Բոնասիեին,— և թող որքան կարելի է խիստ հսկեն նրանց:

— Եթե դուք պահանջ ունեք պարոն դ'Արտանյանից,— իր սովորական հանգիստ տոնով ասաց Աթոսը,— ապա ես ամենին չեմ հասկանում, թե ո՞ր չափով կարող եմ փոխարինել նրան:

— Արեք ինչպես հրամայված է,— գոռաց կոմիսարը:— Եվ ո՞չ մի հարաբերություն արտաքին աշխարհի հետ: Լսո՞ւմ եք:

Աթոսը ուներ թոթվելով հետևեց պահակներին, իսկ Բոնասիեն ամբողջ ճանապարհին այնպես էր լալիս ու հառաչում, որ նույնիսկ վագրի գուրջը կարող էր շարժել:

Արդուզարդի վաճառականին տարան այն նույն խուցը, որտեղ նա անց էր կացրել գիշերը, և այնտեղ թողին նրան ամբողջ օրը: Եվ ամբողջ օրը Բոնասիեն լաց էր լինում ինչպես իսկական արդուզարդի վաճառական. չէ՞ որ հենց իր սեփական խոստովանությամբ՝ նրա մեջ մարտական ոգու ստվեր անգամ չկար:

Ի դեպ, ժամը իննին մոտ, երբ նա պատրաստվում էր քնելու, միջանցքում քայլեր լսվեցին: Քայլերը մոտեցան նրա խցին, դուռը բացվեց, և ներս մտան ժամապահները:

— Հետևեցե՛ք ինձ,— ասաց ոստիկանական պաշտոն-յան, որ ներս էր մտել զինվորների հետ:

— Հետևել ձե՞զ,— գոչեց Բոնասիեն:— Հետևել ձեզ այս ժամի՞ն: Այդ ո՞ւր ախր, ողորմած աստված:

— Այն տեղ, ուր մեզ հրամայված է տանել ձեզ:

— Բայց դա պատասխան չէ:

— Սա միակ բանն է, որ մենք կարող ենք ասել ձեզ:

— Օ՛, աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ,— շնջաց խեղճ Բոնասիեն: —Այս անգամ արդեն ես կորած եմ:

Եվ նա բոլորովին խորտակված, առանց որևէ դիմադրության հետևեց պահակներին:

Նրան տարան այն նույն միջանցքով, որով արդեն մի անգամ անցել էր, հետո բակը կտրեցին, անցան մի ուրիշ շենքի միջով և վերջապես հասան գլխավոր մուտքի դարպասին, որտեղ նրանց սպասում էր մի կառեր՝ շրջապատված չորս ձիավորներով: Բոնասիեին կառեր նստեցրին, ոստիկանական պաշտոնյան տեղավորվեց նրա կողքին, դռնակը բանալիով փակեցին, և երկուսն էլ մնացին ասես շարժական բանտի մեջ:

Կառերը շարժվեց՝ դանդաղ ինչպես սգո դիակառք: Լուսամուտի երկաթյա վանդակի միջով կալանավորը կարող էր տեսնել միայն տներն ու սալահատակը: Սակայն բնիկ փարիզեցին, ինչպիսին էր Բոնասիեն, յուրաքանչյուր փողոց ճանաչում էր անկյունաքարերով, ցուցանակներով ու լապտերներով: Մոտենալով Մուրբ Պողոսի եկեղեցուն, որի մոտ մահապատիժ էին տալիս Բաստիլի մահվան դատապարտված կալանավորներին, նա քիչ մնաց ուշաթափվեր և երկու անգամ խաչակնքեց երեսը: Նա կարծում էր, թե կառերը այստեղ կանգ կառնի, սակայն կառերն անցավ առաջ:

Մի փոքր առաջ գնալուց հետո նա նորից անսահման սարսափ ապրեց: Նրանք անցնում էին Մուրբ Հակոբի գերեզմանատան մոտով, որտեղ թաղում էին

պալատական հանցագործներին: Մի բան միայն փոքր-ինչ հանգստացնում էր նրան, այդ հանցագործներին թաղելուց առաջ սովորաբար նրանց գլուխը կտրում էին, այնինչ նրա սեփական գլուխը դեռ ամուր նստած էր ուսերին: Բայց երբ նա տեսավ, որ կառեթը շուտ է գալիս դեպի Գրևի հրապարակը, երբ տեսավ քաղաքային խորհրդարանի սրագագաթ տանիքը, և երբ կառեթը անցավ կամարի տակով, նա մտածեց, որ ամեն ինչ վերջացած է, փորձեց խոստովանանք անել ոստիկանական պաշտոնյայի առաջ, և երբ նա մերժեց, Բոնասիեն սկսեց այնպես աղիողորմ գոռալ, որ պաշտոնյան սպառնաց նրա բերանը խցոց կոխել, եթե շարունակի գոռալ:

Այս սպառնալիքը մի փոքր հանգստացրեց Բոնասիեին: Եթե մտադիր էին իրեն մահապատիժ տալ Գրևի հրապարակում, ապա հարկ չկար իր բերանը փակելու, չէ՞ որ արդեն համարյա հասել էին մահապատժի վայրը: Եվ իրոք, կառեթն առանց կանգ առնելու անցավ այդ ճակատագրական հրապարակով: Պետք էր երկյուղ կրել մեկ էլ Տրահուար-Խաչից: Եվ հենց այն կողմն էլ շուտ եկավ կառեթը:

Այս անգամ տարակույս լինել չէր կարող: Տրահուար-Խաչ հրապարակում մահապատիժ էին տալիս ստորին ծագում ունեցող մահապարտներին: Բոնասիեն իզուր էր ինքն իրեն մխիթարում, մտածելով, թե ինքն արժանի է Սուրբ Պողոսի կամ Գրևի հրապարակներին: Նրա ուղևորությունը և նրա կյանքը կվերջանա Տրահուար-Խաչ հրապարակում: Նա դեռ չէր տեսնում չարաբաստիկ խաչը, բայց համարյա զգում էր, թե ինչպես է այդ խաչը շարժվում իրեն ընդառաջ: Այդ չարաբաստիկ վայրից մի քսան քայլ հեռավորության վրա ամբոխի դժժոց լսվեց, և կառեթը կանգ առավ: Թշվառ Բոնասիեն, որն արդեն ընկճվել էր այդ ապրումներից, արդեն ի վիճակի չէր դիմանալու: Նա մի թույլ ճիչ արձակեց, որը կարելի էր համարել մեռնողի վերջին հառաչանք, և ուշաթափվեց:

XIV. Մենզի անձանոթը

Հրապարակում ամբոխը հավաքվել էր ոչ թե սպասելու այն մարդուն, որին պիտի կախեին, այլ հավաքվել էր կախված մարդուն նայելու:

Դրա համար էլ կառեթը, մի պահ կանգ առնելուց հետո, առաջ շարժվեց, ճեղքեց ամբոխը, անցավ Մենտ Օնորեի փողոցը, շուտ եկավ դեպի Բարի Մանուկներ փողոցը և կանգ առավ մի ցածր մուտքի առաջ:

Ռուտը բացվեց, և երկու գվարդիական իրենց գիրկն առան Բոնասիէին, որին պահում էր ոստիկանական պաշտոնյան: Նրան հրեցին մի երկար նախասարահ, ինչ-որ սանդուղքով վերև տարան և թողին նախասենյակում:

Բոնասիէն բոլորովին մեքենաբար էր կատարում այն բոլոր գործողությունները, որ պահանջում էին իրենից:

Նա քայլում էր, ինչպես քայլում են երագում, շրջապատը տեսնում էր ասես մշուշի միջով, լսողությունն ինչ-որ ձայներ էր որսում, Բայց նա չէր գիտակցում, թե ի՞նչ ձայներ են դրանք: Եթե այդ թույլներին նրան մահապատիժ տային, նա պաշտպանվելու ոչ մի շարժում չէր անի, գթություն աղերսելու ոչ մի ճիչ չէր արձակի:

Նա այնպես էլ պատին հենված, ձեռքերը կախ գցած նստած մնաց նստարանին, հենց այնտեղ, որտեղ նստեցրել էին ոստիկանները:

Բայց աստիճանաբար շուրջը նայելով և չտեսնելով այնպիսի մի առարկա, որը սպառնար իր կյանքին, որը վտանգ ներկայացներ, տեսնելով, որ պատերը ծածկված են փափուկ կաշիով, մետաքսե ծանր, կարմիր վարագույրները հավաքված են ոսկեգօծ քուղերով, իսկ նստարանը, որի վրա ինքը նստած է, բավական փափուկ է և հարմար, հասկացավ, որ երկյուղն իզուր է եղել, և սկսեց գլուխը դարձնել մերթ աջ, մերթ ձախ, մերթ վերև, մերթ ներքև:

Այս շարժումները, որոնք ոչ ոք չէր արգելում, որոշ քաջություն չտվին նրան, և նա սիրտ արավ ծալել նախ մի ոտքը, ապա մյուսը: Վերջիվերջո, ձեռքերով բազմոցին հենվելով՝ նա փոքր-ինչ վեր բարձրացավ և կարողացավ ոտքի կանգնել:

Այդ պահին պատկառատես մի սպա վարագույրը ետ տարավ՝ շարունակելով խոսել հարևան սենյակում գտնվող ինչ-որ մեկի հետ: Ապա նա շուտ եկավ դեպի կալանավորը:

— Այդ դու՞ք եք Բոնասիէն,— հարցրեց նա:

— Այո, պարոն սպա,— մրմնջաց արդուգարդի վաճառականը, որի սիրտը սարսափից քիչ էր մնում ճաքի:— Ես եմ, պատրաստ եմ ծառայելու ձեզ:

— Նե՛րս մտեք,— ասաց սպան:

Նա ետ քաշվեց և ճանապարհ տվեց կալանավորին: Բռնասիեն անտրտունջ հնազանդվեց և մտավ մի սենյակ, որտեղ, ըստ երևույթին, նրան էին սպասում:

Դա մի ընդարձակ կաբինետ էր, որի պատերին կախված էին զանազան տեսակի զենքեր: Դրսից ոչ մի ձայն չէր հասնում այստեղ: Թեև սեպտեմբերի վերջերն էր, բայց բուխարիում արդեն կրակ էր վառվում: Սենյակի կենտրոնը գրավում էր մի քառակուսի սեղան, վրան գրքեր ու թղթեր, որոնց վրա փռված էր Լա-Ռոշել քաղաքի վիթխարի քարտեզը:

Բուխարու մոտ կանգնած էր միջին հասակի մի մարդ հպարտ ու ամբարտավան, խորաթափանց հայացքով, լայն ճակատով: Նրա նիհարավուն երեսն ավելի էր երկարում սրածայր մորուքից, որի վրա ոլորված էին բեղերը: Այդ մարդը հազիվ թե երեսունվեց-երեսունյոթ տարեկանից ավելի լիներ, սակայն մորուքի ու մազերի մեջ արդեն ճերմակ էր երևում: Թեև վրան սուսեր չկար, բայց և այնպես նման էր զինվորականի, իսկ կո-շիկների վրայի թեթև փոշին ցույց էր տալիս, որ այդ օրը նա ձիով ճամփորդություն է կատարել:

Այդ մարդը Արման-Ժան դյու Պլեսին էր, կարդինալ դը Ռիշելիեն, ոչ այնպես, ինչպես ընդունված է մեզ մոտ պատկերացնել նրան, այսինքն՝ ո՛չ կորաքամակ մի ծերունի, որ տառապում է ծանր հիվանդությունով, որ ուժասպառ է, նվազ ձայնով, թաղված խոր բազկաթոռի մեջ, որ ասես վաղաժամ գերեզման լիմի նրա համար, ո՛չ այնպիսի մեկը, որն ապրում է միայն իր խելքի ուժով և Եվրոպայի դեմ պայքար է մղում միայն իր մտքի լարումով, այլ այնպես, ինչպես իրականում եղեք է նա այն տարիներին. ճարպիկ ու սիրալիր ասպետ, որ դեռ այն ժամանակ մարմնով տկար էր, բայց հոգու անընկճելի ուժի զորությամբ դարձել էր իր ժամանակի ամենանշանավոր մարդկանցից մեկը: Աջակցություն ցույց տալով Նևերի դքսին իր Մանտուանի տիրապետություններում, գրավելով Նիմը, Կաստրը ու Յուզեսը, նա պատրաստվում էր Ռե կղզուց արտաքսել անգլիացիներին և պաշարել Լա-Ռոշելը:

Այսպիսով, առաջին հայացքից ոչ մի բանով չէր երևում, որ նա կարդինալ է, և անձամբ նրան չճանաչող մարդը չէր կարող գլխի ընկնել, թե ով է կանգնած իր առաջ:

Տարաբախտ Բոնասիեն կանգ առավ դռան մեջ, իսկ հենց նոր մեր նկարագրած մարդու հայացքը գամվեց նրա վրա, ասես ցանկանալով թափանցել նրա անցյալի խորքերը:

— Մա՞ է այն Բոնասիեն,— հարցրեց նա մի պահ լռությունից հետո:

— Այո, ձերդ պայծառափայլություն,— պատասխանեց սպան:

— Լավ, տվեք ինձ նրա թղթերը և մենակ թողեք մեզ:

Սպան սեղանից վերցրեց պահանջված թղթերը, տվեց նրան ու խոնարհ գլուխ տալով դուրս գնաց:

Բոնասիեն թղթերին նայելով ճանաչեց, որ դրանք Բաստիլում կատարված հարցաքննության արձանագրություններն են: Բուխարու մոտ կանգնած մարդը մերթընդմերթ աչքերը բարձրացնում էր թղթերից և ուղղում կալանավորի վրա, և այդ ժամանակ թշվառ Բոնասիեին թվում էր, թե երկու դաշույն ուղիղ իր սիրտն են խրում:

Մի տասը բռպե ընթերցումից և մի տասը վայրկյան գննելուց հետո կարդինալի համար ամեն ինչ պարզ էր:

— Այս արարածի երբեք դավադրությանը չի մասնակցել,— շնջաց նա:— Բայց և այնպես տեսնենք:

— Դուք մեղադրվում եք պետական դավաճանության մեջ,— դանդաղ խոսեց կարդինալը:

— Այդ ինձ արդեն ասել են, ձերդ պայծառափայլություն,— ասաց Բոնասիեն՝ իր խոսակցին հորջորջելով նույն տիտղոսով, ինչպես սպան:— Բայց երդվում եմ, որ ես ոչինչ չգիտեմ:

Կարդինալը խեղդեց իր ժպիտը:

— Դուք մասնակից եք եղել ձեր կնոջ, տիկին դը Շերյոզի և դուքս Բեկինգհեմի կազմակերպած դավադրությանը:

— Իրոք, ձերդ պայծառափայլություն,— ասաց Բոնասիեն,— իմ կինը ինձ մոտ տվել է այդ անունները:

— Ի՞նչ առիթով:

— Նա ասում էր, թե կարդինալ դը Ռիշելիեն դուքս Բեկինգհեմին խաբեությամբ Փարիզ է բերել, որպեսզի կործանի նրան, նրա հետ էլ թագուհուն:

— Նա այդպես էլ ասա՞ց,— զայրույթով գոչեց կարդինալը:

— Այո, ձերդ պայծառափայլություն, Բայց ես նրան համոզում էի, որ այդպիսի բաներ ասել չի կարելի, և որ նորին սրբազնությունն ընդունակ չէ...

— Լռեցեք, դուք անմիտ մարդ եք,— ասաց կարդինալը:

— Այ, հենց այդ նույն բանն էլ իմ կինն էր ասում, ձերդ պայծառափայլություն:

— Հայտնի՞ է ձեզ, թե ով է փախցրել ձեր կնոջը:

— Ոչ, ձերդ պայծառափայլություն:

— Բայց դուք մեկին կասկածո՞ւմ էիք:

— Այո, ձերդ պայծառափայլություն: Բայց այդ կասկածները կարծես անբավականություն պատկառեցին կոմիսարին, և ես արդեն հրաժարվել եմ դրանից:

— Ձեր կինը փախել է, դուք այդ գիտեի՞ք:

— Ոչ, ձերդ պայծառափայլություն: Այդ ես իմացա միայն բանտում, պարոն կոմիսարի միջոցով: Նա շատ սիրալիր մարդ է:

Կարդինալը երկրորդ անգամ խեղդեց ժպիտը:

— Նշանակում է՝ ձեզ հայտնի չէ, թե փախուստից հետո ուր է գնացել ձեր կինը:

— Ամենին, ձերդ պայծառափայլություն: Պետք է ենթադրել, որ նա վերադարձել է Լուվր:

— Գիշերվա ժամը մեկին դեռ այնտեղ չի եղել:

— Տե՛ր իմ աստված: Ուրեմն ի՞նչ է պատահել նրան:

— Այդ կպարզվի, մի՛ անհանգստացեք: Կարդինալից ոչ մի բան ծածուկ չի մնա: Կարդինալն ամեն ինչ գիտե:

— Այդ դեպքում, ձերդ պայծառափայլություն, ինչ եք կարծում դուք, կարդինալը չի՞ համաձայնի ինձ ասել, թե ուր է կորել իմ կինը:

— Թերևս: Բայց դուք պետք է նախապես պատմեք ամեն բան, ինչ որ ձեզ հայտնի է ձեր կնոջ և տիկին ղը Շերյոզի հարաբերությունների մասին:

— Բայց, ձերդ պայծառափայլություն, ես պարզապես ոչինչ չգիտեմ: Ես երբեք չեմ տեսել այդ կնոջը:

— Երբ դուք գնում էիք Լուվր՝ ձեր կնոջը բերելու, նա ուղիղ տո՞ւն էր վերադառնում:

— Համարյա երբեք: Նա գործեր էր ունենում ինչ-որ քաթանավաճառների հետ, ուր և ուղեկցում էի նրան:

— Իսկ քանի՞ այդպիսի քաթանավաճառներ կային:

— Երկու, ձերդ պայծառափայլություն:

— Որտե՞ղ էին ապրում նրանք:

— Մեկը՝ Վոժիրար փողոցում, մյուսը՝ Լահարպ փողոցում:

— Դուք ձեր կնոջ հետ նե՞րս էիք մտնում:

— Երբեք: Ես կնոջս սպասում էի մուտքի մոտ:

— Իսկ նա ինչո՞վ էր բացատրում մենակ ներս մտնելու իր ցանկությունը:

— Ոչ մի բանով չէր բացատրում: Ասում էր, որ ես սպասեմ, ես էլ սպասում էի:

— Դուք շատ մեղմաբարո ամուսին եք, սիրելի պարոն Բոնասիե ասաց կարդիինալը:

«Նա ինձ «սիրելի պարոն Բոնասիե» է կոչում,— մտածեց արդուզարդի վաճառականը:— Գործերը, գրողը տանի, լավ են ընթանում»:

— Դուք կարո՞ղ եք ճանաչել այն դռները, որոնցով նա ներս էր մտնում:

— Այո:

— Հիշո՞ւմ եք համարները:

— Այո:

— Ասացեք:

— Քսանհինգ համարը Վոժիրար փողոցում և յոթա-նասունհինգ համարը Լահարպ փողոցում:

— Լավ,— ասաց կարդիինալը: Եվ սեղանից արծաթե զան-գակը վերցնելով՝ զանգահարեց: Ներս մտավ միևնույն սպան:

— Գնացե՛ք Ռոշֆորի ետևից,— կիսաձայն հրամայեց Ռիշելիեն,— թող իսկույն այստեղ գա, եթե միայն վերադարձել է:

— Կոմսն այստեղ է,— ասաց սպան:— Նա համառորեն խնդրում է, որ ձերդ սրբազնությունն ընդունի իրեն:

— Թող ներս մտնի,— գոչեց կարդինալը:— Թող ներս մտնի:

Սպան սենյակից դուրս վազեց այնպիսի արագությամբ, ինչպես կարդինալի սպասավորները սովորա-բար աշխատում էին կատարել նրա հրամանները:

— Ա՛խ, «ձերդ սրբազնություն»,— շշնջաց Բոնա-սիեն՝ սարսափից աչքերը չռելով:

Սպայի գնալուց հինգ վայրկյան էլ չանցած՝ դուռը բացվեց և ներս մտավ նոր այցելուն:

— Սա նա՛ է,— գոչեց Բոնասիեն:

— Ո՞վ,— հարցրեց կարդինալը:

— Նա, իմ կնոջը փախցնողը:

Կարդինալը նորից զանգահարեց: Սպան ներս մտավ:

— Տարեք այս մարդուն և հանձնեցեք այն զինվորներին, որոնք բերել են սրան: Թող սպասի, մինչև ես նորից կկանչեմ:

— Ո՛չ, ձերդ պայծառափայլություն, ո՛չ, սա նա չէ՛,— աղաղակեց Բոնասիեն:— Ես սխալվել եմ: Նրան փախցրել է ուրիշ մարդ, որ բոլորովին նման չէ սրան: Այս պարոնը ազնիվ մարդ է:

— Տարեք այս ապուշին,— ասաց կարդինալը:

Սպան բռնեց Բոնասիեի դաստակից և դուրս տարավ միջանցք, որտեղ նրան սպասում էին ոստիկանները:

Այն մարդը, որ հենց նոր մտել էր կարդինալի մոտ, անհամբեր հայացքով ճանապարհ դրեց Բոնասիեին, և հենց որ դուռը նրա հետևից ծածկվեց, արագ մոտեցավ Ռիշելիեին:

— Նրանք տեսակցել են,— ասաց նա:

— Ո՞վ,— հարցրեց կարդինալը:

— Երկուսը:

— Թագուհին և դո՞կտորը,— գոչեց Ռիշելիեն:

— Այո՛:

— Որտե՞ղ:

— Լուվրում:

— Դուք համոզվա՞ծ եք:

— Միանգամայն համոզված:

— Ո՞վ ասաց ձեզ:

— Տիկին դը Լանուան, որը, ինչպես գիտեք, ամբողջովին նվիրված է ձերդ սրբազնությանը:

— Ինչո՞ւ նա շուտ չի հայտնել դրա մասին:

— Պատահաբար արդյոք, թե չվստահելու պատճառով, բայց թագուհին տիկին դը Ֆարժիին հրամայել է գիշերել իր ննջարանում և հետո ամբողջ օրը բաց չի թողել նրան:

— Այդպե՛ս... Մենք պարտություն կրեցինք: Կաշխատենք ետ շահել տանուլ տվածը:

— Ես բոլոր ուժերս կգործադրեմ, որպեսզի օգնեմ ձեզ, ձերդ սրբազնություն: Համոզված եղեք:

— Ինչպե՞ս է կատարվել այդ ամենը:

— Գիշերվա ժամը տասներկուսն անց կեսին թագուհին նստած է եղել պալատական տիկիհների հետ...

— Բայց որտե՞ղ...

— Իր ննջարանում...

— Հետո՞ ...

— ... հանկարծ նրան են հանձնել մի թաշկինակ, որն ուղարկած է եղել հանդերձապահուհին:

— Հետո՞ :

— Թագուհին իսկույն խիստ հուզվել է և, չնայած կարմրաներկով շպարված է եղել, նկատելիորեն գունատվել է:

— Հետո՞ ... Հետո՞ ...

— Վեր է կացել և փոխված ձայնով ասել. «Մի տասը բոպե սպասեցեք ինձ. ես շուտով կվերադառնամ»: Նա դուռը բաց է արել և դուրս գնացել:

— Ինչո՞ւ տիկին դը Լանուան այդ ամենն անհապաղ չի հայտնել ձեզ:

— Նա դեռ լիովին համոզված չի եղել: Բացի այդ, չե՞ որ թագուհին ասել է՝ «Սպասեցեք ինձ», և նա սիրտ չի արել չենթարկվել:

— Որքա՞ն ժամանակ է բացակայել թագուհին:

— Երեք քառորդ ժամ:

— Պալատական տիկիհներից ոչ ոք նրան չի՞ ուղեկցել:

— Միայն դոննա Էստեֆանիան:

— Հետո թագուհին վերադարձե՞լ է:

— Այո, քայց միայն նրա համար, որ վերցնի վարդագույն փայտե արկղիկը՝
զարդարված մոնոդրամով, որը և վերցրել ու տարել է:

— Իսկ երբ ետ է եկել, արկղիկը իր ձեռքի՞ն էր:

— Ոչ:

— Տիկին դը Լանուան գիտե՞ արդյոք, թե ինչ կար արկղիկում:

— Այո: Այն ադամանդե զարդը, որը նորին մեծությունն ընծայել էր թագուհուն:

— Եվ թագուհին վերադարձել է առանց այդ արկղիկի՞:

— Այո:

— Հետևապես, տիկին Լանուան ենթադրում է, որ թագուհին արկղիկը տվել է
դուքս Բեկինգհեմի՞ն:

— Նա դրանում համոզված է:

— Ինչո՞ւ:

— Ցերեկը տիկին դը Լանուան, որպես թագուհու սե-նեկապանուհի,
ամենուրեք որոնել է արկղիկը, ձևացրել է, թե խիստ անհանգստացած է նրա
անհայտացումով և, վերջապես, հարցրել է թագուհուն, թե չգիտե՞ արդյոք ուր է չքացել
արկղիկը:

— Եվ ի՞նչ է ասել թագուհին:

— Թագուհին սաստիկ կարմրել է և ասել, թե երեկ ինքը վզնոցի զարդերից մեկը
կոտրել է, ուստի ուղարկել է ակնագործին՝ նորոգելու:

— Հարկավոր է գնալ թագավորական ակնագործի մոտ և իմանալ ճիշտ է արդյոք այդ, թե ոչ:

— Ես արդեն եղել եմ այնտեղ:

— Եվ ի՞նչ: Ի՞նչ ասաց ակնագործը:

— Ակնագործը դրա մասին ոչինչ չի լսել:

— Հիանալի է Ռոշֆոր: Դեռ ամեն ինչ կորած չէ, և ով գիտե, ով գիտե... կարող է ամեն ինչ դեպի լավը գնալ...

— Ես ոչ մի վայրկյան չեմ տարակուսում, որ ձերդ սրբազնության հանճարը...

—... կուղղի իր լրտեսի սխալները, այդպես չէ՞:

— Ես հենց այդ էլ ուզում էի ասել, եթե ձերդ սրբազնությունը թույլ տար ինձ խոսքս վերջացնել:

— Իսկ հիմա... հայտնի՞ է ձեզ արդյոք, թե որտեղ են թաքնվել դքսուհի դը Շերյոզը և դուքս Բեկինգհեմը:

— Ոչ, ձերդ սրբազնություն: Իմ լրտեսները դրա մասին ինձ ոչ մի ստույգ տեղեկություն հաղորդել չկարողացան:

— Իսկ ես գիտեմ:

— Դո՞ւք, ձերդ սրբազնություն:

— Այո, համենայնդեպս գլխի եմ ընկնում:

— Ուզո՞ւմ է արդյոք ձերդ սրբազնությունը, որ ես հրամայեմ երկուսին էլ ձերբակալել:

— Ուշ է: Նրանք երևի արդեն մեկնել են:

— Կարելի է, համենայնդեպս, ստուգել...

— Վերցրեք իմ գվարդիականներից տասը մարդ և երկու տունն էլ խուզարկեցեք:

— Լսում եմ, ձերդ սրբազնություն:

Ռոշֆորն շտապ դուրս եկավ:

Մենակ մնալով՝ կարդինալը մի րոպե խորհելուց հետո երրորդ անգամ զանգահարեց:

Դռան մեջ երևաց միննույն սպան:

— Ներս բերեք կալանավորին, — ասաց կարդինալը:

Պարոն Բոնասիեն նորից բերին կաբինետ: Սպան կարդինալի նշանով հեռացավ:

— Դուք ինձ խաբել էք, — խստությամբ ասաց կարդինալը:

— Ե՛ս, — գոչեց Բոնասիեն: — Ես ձերդ սրբազնությանը խաբե՞մ:

— Ձեր կինը Վոժիրար փողոցում և Լահարպ փողոցում ամենևին էլ քաթանավաճառների մոտ չէր գնում:

— Հապա ո՞ւմ մոտ էր գնում նա, Աստվա՛ծ իմ:

— Նա գնալիս է եղել դքսուհի դը Շերյոզի և դուքս Բեկինգհեմի մոտ:

— Այո՛, — ծոր տվեց Բոնասիեն հիշողությունների մեջ խորանալով, — այո՛, ճշմարիտ է, ձերդ սրբազնությունն իրավացի է: Ես ինքս մի քանի անգամ կնոջս ասել եմ. զարմանալի է, որ քաթանավաճառներն ապրում են այսպիսի տներում, առանց

ցուցանակների: Եվ ամեն անգամ իմ կինը սկսում էր քրքջալ. Ա՛խ, ձերդ պայծառափայլություն,— շարունակեց Բոնասիեն նորին սրբազնության ոտքերն ընկնելով:— Դուք իսկապես որ կարդինալն եք, մեծ կարդինալը, այն հանճարը, որի առաջ խոնարհվում են բոլորը:

Որքան էլ չնչին բան էր Բոնասիեի պես ողորմելի արարածի նկատմամբ հաղթանակ տանելը, այնուամենայնիվ կարդինալը մի վայրկյան հիանում էր դրանով:

Ապա, ասես ինչ-որ միտք առկայծեց, շուրթերի վրայով մի թեթև ժպիտ սահեց, և նա ձեռքը մեկնեց արդուզարդի վաճառականին:

— Վե՛ր կացեք, բարեկամս,— ասաց նա:— Դուք կարգին մարդ եք:

— Կարդինալը դիպա՛վ իմ ձեռքին, ես դիպա՛մ մեծ մարդու ձեռքին,— ճչաց Բոնասիեն:— Մեծ մարդը ինձ իր բարեկամն անվանեց...

— Այո, բարեկամս, այո,— ասաց կարդինալը հայրական տոնով, որով նա երբեմն կարողանում էր խոսել, այնպիսի տոնով, որը կարող էր խաբել միայն Ռիշելիեին քիչ ճանաչող մարդկանց:— Ձեզ իզուր են մեղադրել, ուստի և հարկավոր է ձեզ պարզաստրել: Ահա, վերցրեք այս քսակը, սրա մեջ հարյուր պիստոլ կա, և ներեցեք ինձ:

— Ես ձեզ ներե՞մ, ձերդ պայծառափայլություն,— ասաց Բոնասիեն, սիրտ չանելով ձեռք տալ փողի քսակին, հավանորեն երկյուղ կրելով, թե այդ ամենը կատակ է:— Դուք ազատ էիք ինձ ձերբակալելու, ազատ էիք խոշտանգելու, կախաղան հանելու, դուք մեր տիրակալն եք, ես չէի համարձակվի նույնիսկ ծպտուն հանել: Ներել ձե՛զ, ձերդ պայծառափայլություն: Մտածելն անգամ սոսկալի է:

— Ա՛խ, սիրելի պարոն Բոնասիե, դուք զարմանալի մեծահոգի մարդ եք: Տեսնում եմ այդ և շնորհակալություն եմ հայտնում: Այդպես ուրեմն, դուք կվերցնեք այս քսակը և այստեղից այնքան էլ դժգոհ չեք գնա:

— Ես գնում եմ լիակատար հիացմունքով:

— Դե, ուրեմն, գնաք բարով, կամ, ավելի լավ է՝ ցտեսություն, որովհետև, ես հույս ունեմ, մենք էլի կտեսնվենք:

— Երբ կամենա ձերդ սրբազնությունը, ես ամբողջ էությամբ պատրաստ եմ ծառայելու ձերդ սրբազնությանը:

— Մենք հաճախ կտեսնվենք, հանգիստ մնացեք: Ձեզ հետ ունեցած զրույցս արտակարգ բավականություն պատճառեց ինձ:

— Օ՛, ձերդ սրբազնություն...

— Ցտեսություն, պարոն Բոնասիե, ցտեսություն:

Եվ կարդինալը ձեռքով նշան արեց, որին ի պատասխան Բոնասիեն խոնարհիվեց մինչև գետին: Ապա ետ-ետ գնալով դուրս եկավ սենյակից, և կարդինալը լսեց, թե ինչպես նախասենյակում նա ամբողջ ուժով գոռաց, «Կեցցե՛ նորին պայծառափայլությունը: Կեցցե՛ նորին սրբազնությունը: Կեցցե՛ մեծ կարդինալը»:

Կարդինալը ժպիտը դեմքին ականջ էր դնում Բոնասիեի ցնձագին զգացմունքների այդ աղմկահույզ ար-տահայտությանը:

— Ահա մի մարդ, որն այսուհետև պատրաստ կլինի մեռնելու ինձ համար,— ասաց նա ինքն իրեն, երբ Բոնասիեի աղաղակը լռեց հեռվում:

Եվ կարդինալը մեծագույն ուշադրությամբ կռացավ Լա-Ռոշելի քարտեզի վրա, որը, ինչպես արդեն ասել ենք, փոված էր նրա սեղանին, և սկսեց նրա վրա մատիտով գծել այն նշանավոր ամբարտակը, որը մեկ ու կես տարի անց փակեց պաշարված քաղաքի նավահանգստի մուտքը: Նա ամբողջովին կլանված էր իր ստրատեգիական պլաններով, երբ հանկարծ նորից դուռը բացվեց և ներս մտավ Ռոշֆորը:

— Է՛, ինչպե՞ս եղավ,— աշխույժ հարցրեց կարդինալը, և նրա վեր կենալու արագությունից երևում էր, թե նա ինչպիսի կարևոր նշանակություն էր տալիս այն հանձնարարությանը, որ տվել էր կոմսին:

— Ահա թե ինչպես է դրությունը,— պատասխանեց կոմսը:— Ձերդ սրբազնության նշած տներում իսկապես ապրել են քսանվեց-քսանյոթ տարեկան մի ջահել կին և երեսունհինգ-քառասուն տարեկան մի տղամարդ: Տղամարդն այնտեղ ապրել է չորս օր, կինը՝ հինգ: Կինը մեկնել է այսօր գիշերը, իսկ տղամարդը՝ առավոտյան:

— Այդ նրանք են եղել,— գոչեց կարդինալը և պատի ժամացույցին նայելով ավելացրեց,— այժմ արդեն ուշ է նրանց հետևից մարդ ուղարկել. դքսուհին արդեն Տուրում կլինի, իսկ դուքս Բեկինգհեմը Բուլոնում: Անհրաժեշտ կլինի նրա հետևից հասնել Լոնդոնում:

— Ի՞նչ հրաման ունի ձերդ սրբազնությունը:

— Կատարվածի մասին՝ ոչ մի խոսք: Թող թագուհին ոչինչ չկասկածի: Թող չիմանա, որ մենք թափանցել ենք նրա գաղտնիքի մեջ: Թող ենթադրի, թե մենք զբաղված ենք ինչ-որ դավադրություն բացելով: Ինձ մոտ կանչեցեք կանցլեր Սեզիեին:

— Իսկ ի՞նչ արեց ձերդ սրբազնությունն այն մարդուն:

— Ի՞նչ մարդ,— հարցրեց կարդինալը:

— Այն Բոնասպիեին:

— Արի այն ամենը, ինչ կարելի էր անել: Ես նրան դարձրի իմ լրտեսը, այժմ նա կլրտեսի իր սեփական կնոջը:

Կոմս Ռոշֆորը գլուխ խոնարհեց այն մարդու տեսքով, որն ընդունում է իր տիրակալի անհասանելի գերազանցությունը, և հեռացավ: Մենակ մնալով՝ կարդինալը նորից նստեց բազկաթոռին, մի նամակ դրեց, կնքեց իր անձնական կնիքով և զանգահարեց: Չորրորդ անգամ ներս մտավ միևնույն հերթապահ սպան:

— Ինձ մոտ կանչեցեք Վիտրեին,— ասաց կարդինալը,— և ասացեք, որ պատրաստ լինի հեռավոր ճամփորդության:

Մի քանի բույե հետո արդեն նրա առաջ կանգնած էր իր կանչած մարդը՝ երկարաճիտ խթանավոր կոշիկներով, պատրաստ ճանապարհ ընկնելու:

— Վիտրե՛,— ասաց Ռիշելիեն:— Դուք անհապաղ պիտի սլանաք Լոնդոն: Ճանապարհին ոչ մի տեղ, ոչ մի վայրկյան կանգ չառնեք: Այո նամակը կհանձնեք միլեդիի ձեռքը: Ահա երկու հարյուր պիստոլ վճարելու հրամանը: Նույնքան էլ կստանաք, եթե վերադառնաք վեց օրից և լավ կատարեք իմ հանձնարարությունը:

Սուրհանդակն առանց պատասխան տալու գլուխ խոնարհեց, վերցրեց նամակն ու երկու հարյուր պիստոլի չեկը և դուրս եկավ: Ահա թե ինչ էր գրված նամակում.

«Միլեդի, եղեք առաջին իսկ պարահանդեսին, որտեղ ներկա կլինի դուքս Բեկինգհեմը: Նրա կամգոլի վրա դուք կտեսնեք տասներկու ադամանդե զարդերից պատրաստված վզնոց: Մոտեցեք նրան և այդ ադամանդներից երկուսը կտրեցեք:

Հենց որ զարդերը ձեր ձեռքում կլինեն, իսկույն հաղորդեք ինձ»:

XV. Քղամիդավորներն ու զենքի մարդիկ

Այս բոլոր դեպքերը տեղի ունենալու հաջորդ օրը դ'Արտանյանը և Պորտոսը, տեսնելով, որ Աթոսը չի երևում, նրա անհայտացման մասին հաղորդեցին պարոն դը Տրեիլին:

Ինչ վերաբերում է Արամիսին, նա, ինչպես ասել ենք, հինգ օրով արձակուրդ վերցնելով՝ ընտանեկան գործերով գնացել էր Ռուան: Պարոն դը Տրեիլն իր զինվորների հայրն էր: Ամենաանձան ու անհայտ զինվորն էլ, հենց որ հրացանակրի համազգեստ հագավ, կարող էր հաստատ հույս դնել նրա օգնության վրա այնպես, ինչպես հարազատ եղբոր:

Դրա համար էլ դը Տրեիլն անհապաղ գնաց քրեական գործերի գլխավոր դատավորի մոտ: Կանչեց Ալ Խաչի պահակակետի հրամանատար սպային և իր ստացած տեղեկությունները համադրելով կարողացավ պարզել, որ Աթոսը բանտարկված է Ֆոր-Լևեկում:

Աթոսը ենթարկվեց այն բոլոր փորձություններին, որոնց, ինչպես մենք տեսանք, ենթարկվեց Բոնասիեն:

Մենք ներկա եղանք այն առերեսումին, որ սարքել էին երկու կալանավորների համար: Աթոսը, որ մինչ այդ բուսակն ոչինչ չէր ասում, երկյուղ կրելով, թե կսկսեն անհանգստացնել դ'Արտանյանին և կգրկեն նրան գործողությունների ազատությունից, այժմ պնդում էր, որ իր անունն Աթոս է և ոչ թե դ'Արտանյան:

Բացի դրանից՝ նա հայտարարեց, որ չի ճանաչում ո՛չ պարոն Բոնասիեին, ո՛չ տիկին Բոնասիեին, որ դրանցից ոչ մեկի հետ երբեք ինքը չի խոսել: Երեկո-յան ժամը տասին մոտ գնացել է իր ընկեր պարոն դ'Արտանյանին այցելության, իսկ մինչ այդ եղել է պարոն դը Տրեիլի տանը, որտեղ և ինքը ճաշել է: Առնվազն քսան վկա կարող են հաստատել այս հանգամանքը: Եվ նա տվեց մի քանի բարձրաստիճան մարդկանց անուններ, որոնց մեջ՝ նաև դուքս դը Լա Տրեմուլի անունը:

Երկրորդ կոմիսարն էլ առաջինի նման շփոթվել էր այդ հրացանակրի պարզ ու հաստատուն ցուցմունքներից, մինչդեռ նա փափագում էր հաղթանակ տանել նրա նկատմամբ, որ միշտ էլ հրապուրիչ բան է դատական աստիճանավորի համար, երբ նա չափվում է զինվորական մարդու հետ: Սակայն պ-րն դը Տրեիլի և դուքս դը Լա Տրեմուլի անունները շփոթության մեջ գցեցին նրան:

Աթոսին նույնպես տարան կարդինալի մոտ, սակայն, դժբախտաբար, կարդինալը գտնվում էր Լուվրում, թագավորի մոտ:

Այդ ճիշտ այն ժամանակ էր, երբ պ-րն դը Տրեիլը քրեական գործերի գլխավոր դատավորի և Ֆոր-Լևեկի պարետի մոտից դուրս գալով և Աթոսին տեսնելու իրավունք չստանալով՝ գնաց թագավորի մոտ:

Որպես հրացանակիրների կապիտան՝ պ-րն դը Տրեիլն ամեն ժամի կարող էր թագավորին տեսնել:

Մենք գիտենք, թե որքան մեծ էր թագավորի անվստահությունը թագուհու նկատմամբ, անվստահություն, որ հմտորեն բորբոքում էր կարդինալը, որը խարդավանքների կողմից ավելի շատ կանանցից էր երկյուղ կրում, քան տղամարդկանցից: Աննա Ավստրիացու դեմ նրա ունեցած կանխակալ կարծիքի գլխավոր պատճառներից մեկը թագուհու մտերմությունն էր տիկին դը Շերյոզի հետ: Այդ երկու կանայք նրան ավելի շատ էին անհանգստացնում, քան պատերազմն

Իսպանիայի հետ, թյուրիմացություններն Անգլիայի հետ և ֆինանսների խճճված վիճակը: Նրա կարծիքով և խորին համոզմունքով՝ տիկին դը Շերյոզը թագուհուն օգնում էր ոչ միայն քաղաքական խարդավանքներում, այլև,— որ ավելի էր անհանգստացնում թագավորին,— սիրային ինտրիգներում:

Երբ կարդինալը հաղորդեց, թե տիկին Շերյոզը, որն աքսորվել էր Տուր և, ինչպես ենթադրվում էր, գտնվում էր այդ քաղաքում, գաղտնաբար եկել է Փարիզ և հինգ օր այս քաղաքում մնալով ուստիկանությանը մոլորության մեջ է գցել, թագավորը անասելի կատաղության մեջ ընկավ: Քմահաճ և անհավատ այդ թագավորը ցանկանում էր, որ իրեն կոչեն «Լյուդովիկոս Արդարադատ» և «Լյուդովիկոս Առաքինի»: Սերունդները դժվարությամբ կհասկանան այդ բնավորությունը, որ պատմությունը փորձում է բացատրել բազմաթիվ փաստեր բերելով, սակայն չդիմելով դատողություններին:

Իսկ երբ կարդինալն ավելացրեց, որ ոչ միայն տիկին դը Շերյոզը Փարիզ է եկել, այլև թագուհին իր կապերը վերսկսել է նրա հետ ծածկագրի օգնությամբ, որ այն ժամանակներում կոչվում էր կաբալիստական, երբ նա սկսեց պնդել, թե ինքը՝ կարդինալը, արդեն պատրաստ էր քանդելու այդ խարդավանքի ամենանուրբ թելերը՝ ամեն տեսակ ապացույցներով զինված, մտադիր էր հանցանքի տեղում ձերբակալել տարագրվածի և թագուհու միջնորդին, մի ինչ-որ հրացանակիր համարձակվել է բռնությամբ ընդհատել դատական հետաքննության ընթացքը և սուսերը մերկացնելով հարձակվել է ազնիվ պաշտոնյաների վրա, որոնց հանձնարարված էր անաչառ հետաքննել այդ գործը, որպեսզի ամեն ինչ զեկուցվի թագավորին,— Լյուդովիկոս XIII-ը բոլորովին կորցրեց ինքնատիրապետումը: Համակված լուռ կատաղությամբ, որը, երբ այն պոռթկում էր, այդ միապետին ներշնչում էր ամենադաժան արարքներ կատարելու ընդունակություն, նա գունատվելով մի քայլ արեց դեպի այն դուռը, որ տանում էր թագուհու շքասենյակը: Մինչդեռ կարդինալը դեռ չէր արտասանել Բեկինգհեմի անունը:

Հենց այդ պահին էր, որ ներս մտավ դը Տրևիլը՝ պառ, նրբակիրթ, անբասիր տեսքով: Տեսնելով այստեղ կարդինալին, նայելով թագավորի այլայլված դեմքին՝ դը Տրևիլը հասկացավ ամեն բան, ինչ տեղի էր ունեցել այստեղ, և իրեն զգաց ուժեղ, ինչպես Սամսոնը[69] փղշտացիների առաջ:

Լյուդովիկոս XIII-ն արդեն ձեռքը գցել էր դռան բռնակին: Դը Տրևիլի քայլերի ձայնը նրան ստիպեց ետ նայել:

— Դուք ճիշտ և ճիշտ ժամանակին եկաք,— ասաց թագավորը, որն իր կրքերին ազատություն տալով՝ կորցրել էր որևէ բան թաքցնելու ընդունակությունը:— Լա՛վ բաներ են պատմում ինձ ձեր հրացանակիրների մասին:

— Իսկ ես,— սառը պատասխանեց դը Տրևիլը,— քիչ լավ բաներ չեմ ունենա պատմելու ձերդ մեծությանը՝ նրա դատարանական աշխատողների մասին:

— Ես ձեզ չեմ հասկանում,— գոռոզաբար պատասխանեց թագավորը:

— Պատիվ ունեմ զեկուցելու ձերդ մեծությանը,— նույնպիսի հանգստությամբ շարունակեց դը Տրևիլը,— որ աստիճանավորների, կոմիսարների ու ոստիկանների մի խումբ, շատ հարգելի, բայց ըստ երևույթին, զինվորականների նկատմամբ խիստ թշնամաբար տրամադրված մարդկանց մի խումբ իրեն թույլ է տվել մի տան մեջ ձերբակալել, փողոցներով բացարձակ տանել և Ֆոր-Լևեկում ձերբակալել իմ, կամ ավելի ճիշտ՝ ձեր հրացանակիրներից մեկին, ձերդ մեծություն, անբասիր վարքի տեր մի մարդու, որը հռչակված մարդ է և, եթե համարձակվեմ այսպես արտահայտվել, ձերդ մեծությանը հայտնի է ամենալավ բարեմասնություններով, այն է՝ պարոն Աթոսին, և սա՛ հիմնվելով մի հրամանի վրա, որն ինձ ցույց տալ չհամաձայնեցին:

— Աթոսի՞ն,— համարյա ակամա արտասանեց թագավորը,— այո՛, կարծեմ այդ անունը ծանոթ է ինձ...

— Թող ձերդ մեծությունը նեղություն քաշի մտա-բերել,— ասաց դը Տրևիլը: — Պարոն Աթոսը այն նույն հրացանակիրն է, որը ձեզ հայտնի չարաբաստիկ մենամարտի ժամանակ դժբախտություն է ունեցել ծանր վիրավորելու պարոն դը Կայուզակին: Եվ, ի դեպ, ձերդ սրբազնություն, շարունակեց դը Տրևիլը դառնալով կարդինալին,— պարոն Կայուզակը լիովին ապաքինվել է, չէ՞:

— Այո, շնորհակալ եմ,— ասաց կարդինալը զայրույթից շրթունքը կծելով:

— Այսպես ուրեմն,— շարունակեց դը Տրևիլը,— պարոն Աթոսը այցելության է գնացել իր ընկերոջը՝ մի երիտասարդ բեարնացու, որ ձերդ մեծության գվար-դիայի

կաղետ է Դեզեսարի վաշտում: Երիտասարդը տանը չի եղել: Հազիվ պարոն Աթոսը նստել է աթոռին և ձեռքն առել մի գիրք, մտածելով սպասել իր ընկերոջը, մեկ էլ ոստիկանների ու զինվորների մի բազմություն իրար խառնված շրջապատել է տունը, մի քանի դուռ կոտրել...

Կարդինալը նշանացի թագավորին բացատրեց, թե՛ «դա հենց այն գործի առթիվ է եղել, որի մասին ես ձեզ ասացի...»:

— Այդ ամենը մեզ հայտնի է,— ասաց թագավորը:— Որովհետև, այդ ամենն արվել է մեր օգուտի համար:

— Այսպես ուրեմն,— շարունակեց դը Տրևիլը,— ձեր օգուտի համար բռնվել է իմ հրացանակիրներից մեկը, որը ոչ մի մեղք չունի, ձեր օգուտի համար նա երկու զինվորների հսկողությամբ չարագործի պես տարվել է քաղաքի փողոցներով, ամբոխի միջով, և ամբոխը վիրավորանքներ է տեղացել այն ազնիվ մարդու վրա, որը մի տասն անգամ թափել է իր արյունը ձերդ մեծության համար և պատրաստ է ամեն բռնակն ուրից թափելու իր արյունը:

— Ի՞նչ եք ասում,— խոսեց թագավորը վարանմունքով:— Մի՞ թե հենց այդպես է եղել բանը:

— Պարոն դը Տրևիլը,— խոսեց կարդինալը՝ կատա-րյալ սառնարյունություն պահպանելով,— մոռացավ ասել ձեզ, որ այդ ոչ մի մեղք չունեցող հրացանակիրը, այդ ազնիվ մարդը դրանից մի ժամ առաջ սուսերը մերկացրած հարձակվել է չորս կոմիսարների վրա, որոնց ես ուղարկել էի հետաքննելու մի չափազանց կարևոր գործ:

— Թող ձերդ սրբազնությունն ապացուցի այդ,— գոչեց դը Տրևիլը գուտ գասկոնական անկեղծությամբ և գուտ զինվորական խստությամբ:— Բանն այն է, որ դրանից մի ժամ առաջ պարոն Աթոսը, որը, ինչպես համարձակվում եմ զեկուցել ձերդ մեծությանը, շատ բարձր ծագում ունեցող մարդ է, դրանից մի ժամ առաջ պատիվ էր արել ճաշելու ինձ մոտ և իմ հյուրասենյա-կում զրուցում էր դուքս դը Լա Տրեմուլի ու կոմս դը Շալյուի հետ: Թագավորը նայեց կարդինալին:

— Այն ամենը, ինչ ես ասացի,— թագավորի անձայն հարցին պատասխանելով խոսեց կարդինալը,— գրված է այն արձանագրության մեջ, որ կազմել են տուժողները: Պատիվ ունեմ ներկայացնելու այն ձերդ մեծությանը:

— Մի՞թե դատարանական աստիճանավորների արձանագրությունն արժե զինվորական մարդու ազնիվ խոսքին,— հպարտ հարցրեց դը Տրևիլը:

— Լա՛՛վ, լա՛՛վ, դը Տրևիլ,— ասաց թագավորը:— Լռեցեք:

— Եթե նորին սրբազնությունը կասկածում է իմ հրացանակիրներից որևէ մեկին,— պատասխանեց դը Տրևիլը,— ապա պարոն կարդինալի արդարամիտ լինելը բավական հայտնի է բոլորին, և ես ինքս եմ խնդրում հետաքննել:

— Այն տանը, որտեղ կատարվել է խուզարկությունը,— խոսեց կարդինալը նույն պաղարյունությամբ,— եթե չեմ սխալվում, ապրում է մի ոմն Բեարնացի՞, այդ հրացանակրի ընկերը:

— Ձերդ սրբազնությունը նկատի ունի դ'Արտանյանի՞ն:

— Ես նկատի ունեմ մի երիտասարդի, որին դուք, պարոն դը Տրևիլ, հովանավորում եք:

— Այո, ձերդ սրբազնություն, միանգամայն ճշմարիտ է:

— Հնարավոր չե՞ք համարում դուք, որ այդ երիտասարդը վատ ազդեցություն է ունեցել...

— Պարոն Աթոսի՞ վրա, որ նրանից երկու անգամ ավելի հասակով մարդ է,— ընդհատեց դը Տրևիլը:— Ո՛չ ձերդ սրբազնություն, հնարավոր չեմ համարում: Բացի դրանից, պարոն դ'Արտանյանը նույնպես այդ երեկոն ինձ մոտ է անցկացրել:

— Ա՛յ քեզ պատմություն,— գոչեց կարդինալը:— Եր-ևում է՝ բացարձակապես բոլորը երեկոն ձեզ մոտ են անցկացրել...

— Գուցե ձերդ սրբազնությունը կասկածո՞ւմ է իմ խոսքերին,— հարցրեց դը Տրևիլը, որի երեսը կարմրել էր ցասումից:

— Ո՛չ, տերը փրկե ինձ,— ասաց կարդինալը:— Բայց դ'Արտանյանը ժամը քանիսի՞ն է եղել ձեզ մոտ:

— Օ՛, այդ ես կարող եմ ամենայն ճշտությամբ հաղորդել ձերդ սրբազնությանը, երբ նա ներս մտավ, ես հենց այդ ժամանակ տեսա, որ ժամացույցը ցույց է տալիս ինն անց կես, թեև ինձ թվում էր, թե արդեն ուշ է:

— Իսկ ո՞ր ժամին նա գնաց ձեր տնից:

— Տասն անց կեսին: Այդ դեպքերից մեկ ժամ հետո:

— Բայց վերջիվերջո,— ասաց կարդինալը, որը ոչ մի բույե չէր կասկածում դը Տրևիլի ասածի ճշմարտությանը և զգում էր, որ հաղթանակը իր ձեռքից դուրս է պրծնում,— վերջիվերջո Աթոսին ձերբակալել են Գերեզմանափորների փողոցի այն նույն տանը:

— Մի՞ թե ընկերոջը արգելվում է այցելության գնալ իր ընկերոջը, մի՞ թե իմ վաշտի հրացանակրին արգելվում է եղբայրական բարեկամություն ունենալ պարոն Դեզսարի վաշտի գվարդիականի հետ:

— Այո, եթե այն տունը, որտեղ նա հանդիպում է իր ընկերոջ հետ, կասկածի տակ է:

— Բանն այն է, Տրևիլ, որ այդ տունը կասկածի տակ է եղել,— վրա բերեց թագավորը:— Դուք գուցե այդ չէք իմացել:

— Այո, ձերդ մեծություն, ես իսկապես այդ չեմ իմացել: Բայց համոզված եմ, որ դա չի վերաբերում տան այն մասին, որը զբաղեցնում է պարոն դ'Արտանյանը, որովհետև կարող եմ վստահեցնել, որ չկա մեկը, որ նրանից ավելի նվիրված ծառայի ձերդ մեծությանը և ավելի խորապես հարգի պարոն կարդինալին:

— Այդ նույն դ՛Արտանյանը չէ՞ք որ մի ժամանակ դը ժյուսակին վիրավորեց կարմելիտուհիների վանքի մոտ տեղի ունեցած չարաբաստիկ մենամարտում,— հարցրեց թագավորը նայելով կարդինալին, որը կարմրատակել էր սրտնեղությունից:

— Իսկ մյուս օրը հաղթեց Բերնաժուին: Այո, ձերդ մեծություն, նա ինքն է: Ձերդ մեծությունը հիանալի հիշողություն ունի:

— Ուրեմն ի՞նչ ենք որոշում,— հարցրեց թագավորը:

— Այդ ավելի շուտ ձերդ մեծության գործն է, քան իմ,— ասաց կարդինալը:— Ես պնդում եմ, որ Աթոսը մեղավոր է:

— Իսկ ես ժխտում եմ այդ,— գոչեց Տրևիլը:— Բայց նորին մեծությունը դատավորներ ունի, և դատավորները կքննեն այդ գործը:

— Միանգամայն ճիշտ է,— ասաց թագավորը:— Այդ ամբողջ գործը թողնենք դատավորներին: Նրանց գործը դատելն է, թող դատեն:

— Տխուր բան է, համենայնդեպս,— նորից խոսեց դը Տրևիլը,— որ այսպիսի մի չարաբաստիկ ժամանակ, ինչպիսին մեր ժամանակն է, ամենաանաղարտ կյանքը, ամենաանհերքելի բարերարությունը չեն կարողանում մարդուն պաշտպանել խայտառակությունից ու հալածանքներից: Եվ բանակը— համարձակվում եմ ասել ձեզ— շատ էլ գոհ չի լինի, որ դաժան հալածանքների առարկա է դառնում ինչ-որ ոստիկանական պատմությունների առթիվ:

Սրանք անզգույշ խոսքեր էին: Բայց Տրևիլը դրանք ասաց՝ իմանալով այդ խոսքերի արժեքը: Նա ուզում էր բռնկում առաջացնել, իսկ բռնկումին զուգորդում է բոցը, որը լուսավորում է շրջակայքը:

— Ոստիկանական պատմություննե՛ր,— գոչեց թագավորը կառչելով դը Տրևիլի այդ խոսքերից:— Ոստիկանական պատմություննե՛ր. Ի՞նչ էք հասկանում դուք այդ ամենից, պարոն: Զբաղվեցեք ձեր հրացանակիրներով և մի՛ շեղեք ինձ ճամփից: Ձեր ասածից կարելի է կարծել, թե բավական է մի հրացանակրի ձերբակալել, և Ֆրանսիան արդեն վտանգի մեջ է: Ի՞նչ աղմուկ, ինչ-որ մի հրացանակրի համար: Ես

կիրամայեմ ամբողջ մի տասնյակ ձերբակալել նրանցից, գրողը տանի: Հարյուրը, ամբողջ վաշտը: Եվ ոչ ոքի թույլ չեմ տա ծպ-տուն հանել:

— Եթե հրացանակիրները կասկածելի են ձերդ մեծության համար, նշանակում է նրանք մեղավոր են,— ասաց դը Տրևիլը:— Ուստի ես, ձերդ մեծություն, պատրաստ եմ ձեզ հանձնելու իմ սուսերը: Որովհետև, մեղադրելով իմ զինվորներին, չեմ կասկածում, որ պարոն կարդինալը վերջիվերջո մեղադրանք կհարուցի նաև իմ դեմ: Դրա համար էլ ավելի լավ կլինի, եթե ես ինձ ձերբակալված համարեմ պարոն Աթոսի հետ, որի հետ այդ արդեն տեղի է ունեցել, և պարոն դ'Արտանյանի հետ, որի հետ այդ նույնը, հավանաբար, տեղի կունենա մոտ ապագայում:

— Համառ գասկոնացի, լռեցեք վերջապես,— ասաց թագավորը:

— Ձերդ մեծություն,— պատասխանեց դը Տրևիլը՝ ամենևին ձայնը չիջեցնելով,— թող վերադարձնեն ինձ իմ հրացանակրին կամ թող դատեն նրան:

— Նրան կդատեն,— ասաց կարդինալը:

— Եթե այդպես է, ավելի լավ: Այդ դեպքում ձերդ մեծությունից թույլտվություն եմ խնդրում նրան պաշտպանելու:

Թագավորը բռնկումից էր վախենում:

— Եթե նորին սրբազնությունը,— ասաց նա,— անձնական կարգի պատճառներ չունենար...

Կարդինալը հասկացավ, թե ինչ է ակնարկում թագա-վորը, և նրան նախազգուշացրեց:

— Ներողություն եմ խնդրում,— ասաց նա,— բայց եթե ձերդ մեծությունը ինձ աչառու է համարում, ես հրա-ժարվում եմ դատին մասնակցելուց:

— Այ թե ինչ,— ասաց թագավորը:— Երդվեցեք իմ հոր անունով, որ երբ այս դեպքերը տեղի են ունեցել, Աթոսը եղել է ձեզ մոտ և ոչ մի մասնակցություն չի ունեցել դրանց:

— Երդվում եմ ձեր պանծալի հոր անունով և ձեզնով, որին ես սիրում եմ և հարգում աշխարհում ամեն բանից ավելի:

— Մտածեցեք, ձերդ մեծություն,— ասաց կարդինալը:— Եթե մենք կալանավորին ազատենք, ապա երբեք ճշմարտությունը չենք իմանա:

— Պարոն Աթոսը միշտ ներկա կլինի և պատրաստ կլինի պատասխան տալու, հենց որ դատարանականները հարկ համարեն հարցաքննել նրան,— ասաց դը Տրևիլը:— Նա ոչ մի տեղ չի թաքնվի, պարոն կարդինալ, հանգիստ եղեք: Նրա համար ես ինքս եմ պատասխանատվություն վերցնում:

— Իսկապես, նա հո չի փախչելու,— համաձայնեց թա-գավորը:— Նրան միշտ էլ կարելի է գտնել, ինչպես ասաց պարոն դը Տրևիլը: Բացի դրանից,— ավելացրեց նա ձայնն իջեցնելով և աղերսագին նայելով կարդինալին,— դժգոհություն չառաջացնենք նրանց մեջ, սա լավագույն քաղաքականությունն է:

Լյուդովիկոս XIII-ի այս քաղաքականությունը Ռիշելիեին ստիպեց ժպտալ:

— Հրամայեցեք, ձերդ մեծություն: Դուք իրավունք ունեք ներում շնորհելու:

— Ներում շնորհել կարելի է միայն մեղավորին,— ասաց դը Տրևիլը, որը ցանկանում էր, որ վերջին խոսքն իրեն մնա:— Իսկ իմ հրացանակիրը մեղավոր չէ: Ուստի ձերդ մեծությունը նրան ոչ թե ողորմածություն ցույց կտա, այլ արդարություն:

— Նա Ֆոր-Լևեկո^ոմն է,— հարցրեց թագավորը:

— Այո, ձերդ մեծություն, և այն էլ մենախցում, արտաքին աշխարհի հետ հարաբերություն պահելու իրավունքից զուրկ, որպես ամենաստոր ոճրագործ:

— Գրողը տանի,— մրմնջաց թագավորը,— ի^ոնչ պետք է անել ուրեմն:

— Հրաման ստորագրել ազատելու մասին, և ամեն ինչ վերջացած կլինի,— ասաց կարդինալը:— Ես նույն կարծիքին եմ, ինչ ձերդ մեծությունը, և պարոն դը Տրևիլի երաշխավորությունն ավելի քան բավարար եմ համարում:

Տրևիլը գլուխը խոնարհեց, համակված ուրախությամբ, որին, այնուամենայնիվ, խառնվում էր մի անհանգստություն: Կարդինալի համառ դիմադրությունը նա կգերադասեր այդ անսպասելի զիջողականությունից:

Թագավորը ազատման հրաման ստորագրեց, և դը Տրևիլն շտապեց հեռանալ տանելով հրամանը:

Այն պահին, երբ նա արդեն դուրս էր գնում, կարդի-նալը սիրալիր ժպտաց նրան և դարձավ թագավորին:

— Բնչպիսի՛ միաբանություն է տիրում ձեր հրացանակիրների պետի ու զինվորների միջև, ձերդ մեծություն: Դա շատ օգտակար է ծառայության համար և պատիվ է բերում ամբողջ վաշտին:

«Կարելի է չտարակուսել, որ սա ամենամոտ ժամանակներում մի որևէ վատ խաղ կխաղա իմ զլխին,— մտածեց դը Տրևիլը:— Այսպիսի մարդու միտքը երբեք հասկանալ չի լինի: Բայց պետք է շտապել: Թագավորն ամեն բոպե կարող է փոխել իր որոշումը, իսկ Բաստիլից կամ Ֆոր-Լևեկից հենց նոր ազատված մարդուն կրկին այնտեղ տանելը, վերջիվերջո, շատ ավելի բարդ բան է, քան արդեն իսկ այնտեղ նստած մարդուն կալանքի տակ թողնելը»:

Պ-րն դը Տրևիլը հաղթանակով մտավ Ֆոր-Լևեկ և ազատեց Աթոսին, որն անփոփոխ պահպանել էր իր հանգիստ անտարբերությունը:

Դ'Արտանյանի հետ առաջին իսկ հանդիպմանը դը Տրևիլն ասաց.

— Այս անգամ ձեր բախտը բերեց: Ձեզ հետ հաշիվ մաքրեցին դը Ժյուսակին վիրավորելու համար: Դեռևս չհատուցված է մնում Բերնաժուի պարտությունը: Զգույշ եղեք:

Դը Տրևիլն իրավացի էր, որ չէր վստահում կարդինալին և գտնում էր, որ դեռ ամեն ինչ վերջացած չէ: Դեռ նոր էր հրացանակիրների կապիտանը դուռը ծածկել իր հետևից, երբ նորին սրբազնությունը դարձավ թագավորին:

— Այժմ, երբ մենք մենակ մնացինք,— ասաց նա,— եթե հաճելի է ձերդ մեծությանը, խոսենք կարևոր բաների մասին: Ձերդ մեծություն, դուքս Բեկինգհեմը հինգ օր եղել է Փարիզում և մեկնել է միայն այսօր առավոտյան:

XVI. Այն մասին, թե ինչպես կանցլեր Սեզին չկարողացավ զանգը գտնել, որպեսզի զանգը խփի, ինչպես սովորաբար անում էր

Դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչպիսի տպավորություն թողեցին այս խոսքերը Լյուդովիկոս XIII-ի վրա: Նա բռնկվեց, բայց և իսկույն գույնը թռավ երեսից: Եվ կարդինալն անմիջապես հասկացավ, որ մի հարվածով ետ նվաճեց իր կորցրած դիրքերը:

— Դուքս Բեկինգհեմը Փարիզում,— գոչեց թագավորը:— Իսկ ինչո՞ւ էր նա եկել այստեղ:

— Պետք է ենթադրել, որ եկած է եղել դավ նյութելու ձեր թշնամիների՝ իսպանացիների և հուգենոտների հետ:

— Ո՛չ, երդվում եմ՝ ո՛չ: Եկել է, որպեսզի տիկին դը Շերյոզի, տիկին դը Լոնգվիլի և բոլոր այդ Կոնգենների հետ դավադրաբար իմ պատիվն արատավորի:

— Ձերդ մեծություն, ինչպե՞ս էք կարողանում դուք այդպիսի բան մտածել: Թագուհին այնքան խելամիտ կին է և, գլխավորը, այնքան է սիրում ձերդ մեծությանը:

— Կինը թույլ արարած է, պարոն կարդինալ: Իսկ ինչ վերաբերում է շատ սիրելուն, ապա ես դրա մասին իմ կարծիքն ունեմ:

— Այնուամենայնիվ,— ասաց կարդինալը,— ես պնդում եմ, որ դուքսը Փարիզ է եկել զուտ քաղաքական նպատակներով:

— Իսկ ես հավատացած եմ, որ բոլորովին այլ նպատակներով: Բայց եթե թագուհին մեղավոր է, վա՛յ նրան:

— Իսկապես,— ասաց կարդինալը,— որքան էլ ծանր է ինձ համար նույնիսկ մտածել այդպիսի հնարավորության մասին... Ձերդ մեծությունն ինձ մի բան հիշեցրեց. տիկին դը Լանուան, որին ես, հետևելով ձերդ մեծության հրամանին, մի քանի անգամ

հարցուփորձ եմ արել, այսօր առավոտյան ինձ հաղորդեց, որ երեկ չէ առաջին գիշերը նորին մեծություն թագուհին շատ ուշ է պառկել քնելու, որ այսօր առավոտյան թագուհին շատ է լաց եղել և որ ամբողջ գիշերը նա գրելիս է եղել:

— Ամեն ինչ հասկանալի է,— գոչեց թագավորը:— Հասկանալի է, որ նրան է գրելիս եղել: Կարդինալ, ինձ հասցրեք թագուհու թղթերը:

— Բայց ինչպե՞ս ձեռք բերեմ ես նրանց, ձերդ մեծություն: Ինձ թվում է, որ ո՛չ ես, ո՛չ էլ ձերդ մեծությունը չե՛նք կարող այդ բանը մեզ վրա վերցնել:

— Իսկ ինչպե՞ս վարվեցիք մարշալ դ'Անկրայի կնոջ հետ,— անգուսպ ցասումի պոթովումով գոչեց թագավորը:— Խուզարկեցեք նրա պահարանները և վերջիվերջո նաև հենց իրեն:

— Մարշալ դ'Անկրայի կինը սուկ մարշալ դ'Անկրայի կինն է ֆլորենտացի մի ինչ-որ արկածախնդիր, մինչդեռ ձերդ մեծության օգոստափառ ամուսինը Աննա Ավստրիացին է, Ֆրանսիայի թագուհին, այսինքն՝ աշխարհի մեծագույն տիրակալներից մեկը:

— Այդ ավելի ևս սուկալի է դարձնում նրա հանցանքը, կարդինալ: Որքան ավելի հեշտությամբ է մոռացել նա իր աստիճանի բարձրությունը, այնքան ավելի խոր է ընկել նա: Եվ, բացի այդ, ես վաղուց արդեն որոշել եմ վերջ դնել այս բոլոր քաղաքական ու սիրային խարդավանքներին... Նրա մոտ, եթե չեմ սխալվում, ծառայում է ոմն Լա Պո՞րտ:

— Որին ես, պետք է խոստովանեմ, գլխավոր զսպանակն եմ համարում այս գործում,— վրա բերեց կարդինալը:

— Նշանակում է՝ դո՞ւք ևս, ինչպես և ես, կարծում եք, որ նա խաբում է ինձ:

— Ես կարծում եմ և կրկնում եմ, ձերդ մեծություն, որ թագուհին դավ է նյութում թագավորի իշխանության դեմ, բայց ես չասացի՝ նրա պատվի դեմ:

— Իսկ ես ձեզ ասում եմ, դավ է նյութում և՛ մեկի, և՛ մյուսի դեմ: Ես ձեզ ասում եմ, որ թագուհին ինձ չի սիրում, որ նա ուրիշին է սիրում: Ես ձեզ ասում եմ, որ նա

սիրում է այդ ստոր Բեկինգհեմին: Ինչո՞ւ դուք նրան չձերբակալեցիք, երբ Փարիզումն էր:

— Ձերբակալել դքսի՞ն: Ձերբակալել Կառլոս Առաջին թագավորի առաջին մինիստրի՞ն: Ի՛նչ էք ասում, ձերդ մեծություն: Ինչպիսի՛ աղմուկ: Իսկ եթե,— որին ես դարձյալ կասկածում եմ,— իսկ եթե ձերդ մեծության կասկածները գեթ որևէ չափով արդարա-նայի՞ն, ինչպիսի սոսկալի պայթյուն կլիներ, ի՛նչ չլսված խայտառակություն:

— Բայց քանի որ նա ինքն իրեն վտանգի է ենթարկել ինչպես մի շրջմուլիկ, մի գող, հարկավոր էր...

Լյուդովիկոս XIII-ը լռեց՝ ինքն էլ վախենալով նրանից, ինչ պատրաստ էր դուրս թռչելու շուրթերից, և Ռիշելիեն իզուր էր պարանոցը ձգած սպասում այդ խոսքերին, որոնք պաղեցին թագավորի շուրթերին:

— Հարկավո՞ր էր...

— Ոչինչ,— ասաց թագավորը,— ոչինչ... Բայց այն ամբողջ ժամանակամիջոցում, երբ նա եղել է Փարիզում, դուք նրան աչքից բաց չե՞ք թողել:

— Ոչ, ձերդ մեծություն:

— Որտե՞ղ էր ապրում նա:

— Լահարպ փողոցում, № 75 տանը:

— Որտե՞ղ է այդ:

— Լյուքսեմբուրգյան պալատից ոչ հեռու:

— Եվ դուք հավատացա՞՞ծ էք, որ նա թագուհու հետ չի տեսակցել:

— Ես գտնում եմ, որ թագուհին շատ նվիրված է իր պարտքին:

— Բայց նրանք նամակագրություն ունեն: Այդ նրան է գրելիս եղել թագուհին ամբողջ օրը: Դո՛ւքս, ես պետք է ստանամ այդ նամակները:

— Ձերդ մեծություն, մի՞ թե...

— Դո՛ւքս, ինչ էլ որ լինի, ես ուզում եմ ստանալ այդ նամակները:

— Բայց ես պետք է ասեմ, ձերդ մեծությանը...

— Մի՞ թե դուք էլ եք դավաճանում ինձ, պարոն կարդինալ, որ շարունակ հակառակում եք իմ ցանկություններին: Մի՞ թե դուք էլ դավակից եք իսպանացիներին ու անգլիացիներին, տիկին դը Շերյոզին ու թագուհուն:

— Ձերդ մեծություն,— հառաչելով ասաց կարդինալը,— ինձ թվում էր, թե ես զերծ եմ այդպիսի կասկածանքներից:

— Պարոն կարդինալ, դուք ինձ լսեցիք, ես ուզում եմ իմ ձեռքում ունենալ այդ նամակները:

— Կա միայն մեկ միջոց...

— Ի՞նչ միջոց:

— Այդ միսիան հանձնարարել կանցլերին, պարոն Սեզիեին[70]: Դա ամբողջովին նրան վերաբերող գործ է:

— Թող իսկույն մարդ ուղարկեն նրան կանչելու:

— Նա պետք է որ ինձ մոտ լինի: Ես հենց նրան ինձ մոտ էի կանչել և երբ Լուվր էի գալիս, կարգադրեցի, որ երբ գա, սպասի ինձ:

— Թող անհապաղ մարդ ուղարկեն նրան կանչելու:

— Ձերդ մեծության կամքը կատարված կլինի, բայց...

— Ի՞նչ «Բայց»:

— Բայց թագուհին, հնարավոր է, որ կհրաժարվի ենթարկվել:

— Ենթարկվել իմ հրամանների՞ն:

— Այո, եթե համոզված չլինի, որ այդ հրամանը թագավորինն է:

— Դե, ուրեմն, որպեսզի նա չկասկածի, ես ինքս կնախագգուշացնեմ նրան:

— Հուսով եմ՝ ձերդ մեծությունը չի մոռանա, որ ես ամեն հնարավոր բան արի պատակտումը կանխելու համար:

— Այո՛, դուքս, ես գիտեմ, որ դուք շատ զիջողամիտ եք թագուհու նկատմամբ, գուցեև չափից ավելի զիջողամիտ: Մենք դեռ հետո կանդրադառնանք դրան, նախագգուշացնում եմ ձեզ:

— Երբ հաճելի կլինի ձերդ մեծությանը: Բայց ես միշտ հպարտ ու երջանիկ կլինեմ ինձ գոհաբերելու, որպեսզի ձեր և Ֆրանսիայի թագուհու միջև հաշտություն ու համաձայնություն լինի:

— Հիանալի է, կարդինալ, հիանալի: Բայց հիմա մարդ ուղարկեցեք պարոն կանցլերին կանչելու: Ես գնամ թագուհու մոտ:

Եվ Լյուդովիկոս XIII-ը դուռը բացելով դուրս եկավ այն միջանցքը, որ պալատի այդ մասը միացնում էր Աննա Ավստրիացու շքասենյակի հետ: Թագուհին նստած էր՝ շրջապատված պալատական տիկիներով, այդտեղ էին տիկին դը Գիտոն, տիկին դը Սաբլեն, տիկին դը Մոնբագուն և տիկին դը Գեմենեն: Մի անկյունում էլ տեղավորվել էր սենեկապանուհի Էստեֆանիան, որ թագուհու հետ միասին եկել էր Մադրիդից: Տիկին դը Գեմենեն բարձրաձայն կարդում էր, և բոլորն ուշադրությամբ լսում էին նրան, բացառությամբ թագուհու, որն այս ընթերցանությունը սարքել էր միայն նրա համար, որ հնարավորություն ունենա իր մտքերի ընթացքին ենթարկվելու, ձևացնելով, թե ինքն էլ ունկնդրում է:

Այդ մտքերը թեպետ և ոսկեգօծվել էին սիրո վերջին շողերով, բայց և այնպես լի էին տրտմությամբ: Ջրկված լինելով ամուսնու վստահությունից, հալածվելով կարդինալի ատելությունից, որը թագուհուն չէր կարողանում ներել իր քնքուշ զգացմունքներն անպատասխան թողնելը, Աննա Ավստրիացին իր աչքի առաջ ուներ մայր-թագուհու օրինակը, որին այդ նույն ատելությունը բզկտել էր իր ամբողջ կյանքի ընթացքում, թեև, եթե հավատալու լինեինք այն ժամանակների հուշագրություններին, Մարիա Մեդիչին[71] սկզբում ընծայել էր կարդինալին այն երջանկությունը, որն այնպես համառորեն մերժում էր նրան Աննա թագուհին: Աննա Ավստրիացին տեսնում էր, թե ինչպես են ընկնում իր ամենահավատարիմ ծառաները, ամենանվիրված բարեկամները, իր ամենասրտակից մարդիկ: Ինչպես այն դժբախտ մարդիկ, որոնք դժնդակ ճակատագիր ունեն, նա էլ դժբախտություն էր գցում բոլորի վրա, ում որ ձեռք էր տալիս: Նրա մտերմությունը ճակատագրական բան էր և հալածանքների առիթ էր դառնում: Տիկին դը Շերյոզը և տիկին դը Վերնեն արտրվել էին, և նույնիսկ Լա Պորտը չէր թաքցնում իր տիրուհուց, որ բռպե առ բռպե ձերբակալման է սպասում:

Թագուհին ամբողջովին ընկղմված էր այս մռայլ մտքերի մեջ, երբ հանկարծ դուռը բացվեց և սենյակ մտավ թագավորը:

Ընթերցողն իսկույն լռեց, բոլոր տիկիները վեր կացան իրենց տեղից, և քար լռություն տիրեց:

Նույնիսկ հարկ չհամարելով ողջունել՝ թագավորը մի քանի քայլ առաջ եկավ և կանգ առավ թագուհու դիմաց:

— Տիրուհի՛,— ասաց նա փոխված ձայնով,— հիմա ձեզ մոտ կգա պարոն կանցլերը: Նա ձեզ կհաղորդի մի բան, որի մասին ես եմ նրան հանձնարարել տեղյակ դարձնել ձեզ:

Թշվառ թագուհին, որին շարունակ սպառնում էր ամուսնալուծություն, արտր և նույնիսկ դատ, գունատվեց, չնայած իր կարմիր շպարին:

— Բայց ո՞րն է այդ այցելության առիթը, ձերդ մեծություն,— չկարողանալով իրեն զսպել հարցրեց թա-գուհին:— Ի՞նչ է ասելու ինձ պարոն կանցլերը, որ չէիք կարող ինքներդ ասել:

Թագավորն առանց պատասխանելու կտրուկ շուռ եկավ կրունկների վրա, և համարյա նույն բոպեին հերթապահ գվարդիական կապիտան Գիտոն գեկուցեց կանց-լերի գալու մասին:

Երբ կանցլերը ներս մտավ, թագավորն արդեն սենյակում չէր, նա դուրս էր գնացել մյուս դռնով:

Կանցլերը ներս մտավ շփոթմունքից կարմրատակած, բայց ժպիտը շուրթերին: Նկատի ունենալով, որ մեր այս պատմության ընթացքում հավանորեն էլի ենք հանդիպելու նրան, ավելորդ չէր լինի հենց այժմ մեր ընթերցողներին ծանոթացնել նրան:

Կանցլերը բավական հետաքրքիր դեմք էր: Տիրամոր տաճարի կանոնիկոս[72] դը Ռոշ Լե Մալը, որը մի ժամանակ եղել էր կարդինալի սենեկապետը, պարոն դը Սեգիեի համար երաշխավորել էր նորին սրբազնությանը որպես միանգամայն նվիրված մարդու: Կարդինալը հավատացել էր այդ երաշխավորությանը և չէր զղջացել:

Պ-րն դը Սեգիեի մասին ամենաբազմապիսի լուրեր էին շրջում: Իմիջիայնոց պատմում էին հետևյալը:

Փոթորկահույզ երիտասարդությունից հետո նա քաշվել էր վանք, որպեսզի այնտեղ գոնե մի որոշ ժամանակ քավի իր երիտասարդության մեղքերը:

Սակայն այդ սուրբ օթևանը մտնելով՝ ինեղձ մեղապարտը չէր կարողացել իր հետևից բավական արագ փակել դուռը, որպեսզի թույլ չտա ներխուժել այն կրքերին, որոնցից ինքը փախչում էր: Նա շարունակ ենթարկվում էր գայթակղությունների, և վանահայրը, որին նա խոստովանեց իր այդ վիշտը, նրան խորհուրդ տվեց՝ գայթակղիչ դեր վանելու համար նման պահերին ձեռքը զցել զանգի պարանին և որքան ուժ ունի՝ զանգահարել: Այդ զանգը լսելով՝ վանականները կհասկանան, որ գայթակղությունը փոթորկում է իրենց եղբայրակիցներից մեկին, և ամբողջ միաբանությունը աղոթքի կկանգնի:

Այս խորհուրդը ապագա կանցլերին դուր եկավ: Նա չար ոգուն նգովում էր աղոթքների մի ամբողջ հեղեղով, որ տեղում էին մյուս վանականները: Բայց սատանան մի անգամ գրաված դիրքերն այնքան էլ հեշտությամբ չի զիջում: Որքան ավելի էին ուժեղանում նգովքները, այնքան ավելի էր ուժեղացնում սատանան իր գայթակղությունները, այնպես որ գիշեր-ցերեկ զանգը հնչում էր խլացուցիչ, ազդարարելով, որ ապաշխարող մարդը խիստ ցանկանում է մահացնել իր մարմինը:

Վանականները ոչ մի բույե հանգիստ չունեին: Ցերեկը նրանք մի գլուխ վեր ու վար էին անում սան-դուղքով, որ տանում էր աղոթարան, գիշերը բացի սովորական աղոթքից՝ նրանք ստիպված էին լինում մի քսան անգամ դուրս ցատկել մահճակալներից և երեսի վրա փովել իրենց խցերի հատակին:

Հայտնի չէ՝ սատանա՞ն նահանջեց, թե՞ այդ գործը վանականներին ձանձրացրեց: Բայց մի երեք ամիս անց՝ ապաշխարողը նորից երևաց աշխարհում, որտեղ նա այնպիսի զարհուրելի դիվահարի համբավ ուներ, որպիսին երբևիցե չի տեսնված աշխարհում:

Վանքից դուրս գալուց հետո դատավորական կոչում ընդունեց, գրավեց իր հորեղբոր տեղը, դառնալով պառլամենտի պրեզիդենտ՝ անցավ կարդինալի կողմը,— որն ապացուցում է նրա հազվագյուտ խորաթափանցությունը,— նշանակվեց կանցլեր, նորին սրբազնության ձեռքում ծառայում էր որպես հավատարիմ գործիք մայր-թագուհու նկատմամբ տաժած ատելության և Աննա Ավստրիացու դեմ սարքած որոգայթների գործում: Նա դատավորներին գրգռում էր Շալեի ամբողջ գործի ընթացքում, պաշտպանում էր «մեծ դահիճ» Լաֆեմային[73] ու նրա բոլոր նախաձեռնությունները, վերջիվերջո, լիովին նվաճելով կարդինալի վստահությունը, որը վայելում էր նա ըստ արժանվույն, իր վրա վերցրեց մի արտասովոր հանձնարարություն, որը կատարելու համար էլ այժմ ներկայացել էր թագուհուն:

Երբ նա ներս մտավ, թագուհին դեռ ոտքի էր կանգնած, բայց նրան տեսնելով՝ իսկույն ընկղմվեց բազկաթոռի մեջ, մյուս տիկիներին էլ նշանացի հրամայելով իրենց տեղերը գրավել բարձերի վրա: Ապա նա հպարտորեն դարձավ ներս մտնողին:

— Ի՞նչ եք ուզում, պարոն,— հարցրեց Աննա Ավստրիացին,— և ի՞նչ նպատակով եք եկել այստեղ:

— Թագավորի հանձնարարությամբ և, չնայած այն խոր հարգանքին, որ ես տածում եմ ձերդ մեծության նկատմամբ, ստիպված եմ մանրամասն խուզարկություն կատարել ձեր թղթերի մեջ:

— Ինչպե՛ս, պարո՛ն,— գոչեց թագուհին:— Խուզարկություն ինձ մո՞տ... ինձ մո՞տ: Ինչպիսի՛ չլսված ստորություն:

— Խնդրում եմ ներեք ինձ, ձերդ մեծություն: Սակայն հիմա ես միայն մի գործիք եմ թագավորի ձեռքում: Մի՞ թե նորին մեծությունը հենց նոր այստեղ չի եղել և ձեզ չի խնդրել պատրաստ լինել այս ատելությանը:

— Դեհ, որոնեցե՛ք, պարո՛ն: Պետք է ենթադրել, որ ես ոճրագործ եմ: Էստեֆանիա, տվե՛ք իմ բոլոր սեղանների ու դարակների բանալիները:

Կանցլերը ձևի համար պտրտեց արկղերը, թեև հավատացած էր, որ թագուհին այնտեղ չէր պահի ցերեկը գրած կարևոր նամակը:

Մի քսան անգամ սեղանի դարակները հանելուց ու ետ հրելուց հետո կանցլերը, այնուամենայնիվ, ստիպված եղավ մի որոշ անվճռականություն հաղթահարելով վերջին քայլն անել այդ գործում, այսինքն՝ խուզարկել թագուհուն:

Կանցլերը դարձավ Աննա Ավստրիացուն:

— Այժմ,— ասաց նա այնպիսի ձայնով, որի մեջ զգացվում էր շփոթմունք ու հուզմունք,— ինձ մնում է սկսել խուզարկության գլխավոր մասը:

— Ի՞նչ մաս,— հարցրեց թագուհին, որը չէր հասկանում կամ չէր ուզում հասկանալ կանցլերի մտադրությունը:

— Նորին մեծությունը համոզված է, որ այսօր ցերեկը թագուհին մի նամակ է գրել: Նորին մեծությանը հայտնի է, որ այդ նամակը դեռ հասցեատիրոջը չի ուղարկված: Այդ նամակը չկա ո՛չ ձեր սեղանի դարակներում, ո՛չ պահարաններում: Մինչդեռ նա պետք է որևէ տեղ պահված լինի:

— Բայց կհամարձակվե՞ք արդյոք դիպչել ձեր թագուհուն,— ասաց Աննա Ավստրիացին ամբողջ հասակով ուղղվելով և կանցլերի վրա հառելով մի հայացք, որի մեջ սպառնալիք բռնկվեց:

— Ես թագավորի հավատարիմ ծառան եմ և կատարում եմ այն ամենը, ինչ հրամայել է նորին մեծությունը:

— Է՛, այդ ճշմարիտ է,— ասաց Աննա Ավստրիացին:— Եվ պարոն կարդինալի լրտեսներն էլ հավատարիմ են ծառայել նրան: Ես իրոք այսօր մի նամակ եմ գրել և այդ նամակը ուղարկված չէ: Նամակն այստեղ է:

Եվ թագուհին իր չքնաղ ձեռքը դրեց կրծքին:

— Այդ դեպքում, ձերդ մեծություն, տվեք ինձ այդ նամակը,— ասաց կանցլերը:

— Ես այն կտամ միայն թագավորին, պարո՛ն,— պատասխանեց Աննան:

— Եթե թագավորը ցանկանար ձերդ մեծությունից անձամբ ստանալ այդ նամակը, նա ինքը կխնդրեր այն ձեզնից: Բայց, կրկնում եմ, նա ինձ հանձնարարել է պահանջել ձեզնից այդ նամակը, ասելով, որ եթե դուք մերժեք...

— Շարունակեցե՛ք:

— ...նա ինձ հանձնարարել է վերցնել այն ձեզնից:

— Ինչպե՞ս: Ի՞նչ եք ուզում ասել:

— Որ իմ լիազորությունները հեռու են գնում և ինձ, որպեսզի այդ թղթերը գտնեմ, թույլատրված է նույնիսկ ձերդ մեծությանն անձնական խուզարկություն կատարել:

— Ի՛նչ զարհուրելի բան,— գոչեց թագուհին:

— Ուստի, խնդրում եմ ձեզ, տիրուհի, զիջողամտություն հանդես բերել:

— Ձեր վարմունքը չտեսնված կոպիտ է, հասկանում եք, պարոն:

— Թագավորն է հրամայում, ձերդ մեծություն: Խնդրում եմ ներեք ինձ:

— Ես չե՛մ հանդուրժի այդ: Ո՛չ, ո՛չ, մահն ավելի լավ է,— գոչեց թագուհին, որի մեջ եռաց Իսպանիայի ու Ավստրիայի տիրակալների հպարտ արյունը:

Կանցլերը խոնարհ գլուխ տվեց, ապա իրեն տրված խնդրի կատարումից ոչ մի քայլ չնահանջելու ակնհայտ մտադրությամբ, ճիշտ այնպես, ինչպես կաներ բանտի դահիճը, նա մոտեցավ Աննա Ավստրիացուն, որի աչքերից իսկույն ցասումի արցունքներ ցայտեցին:

Թագուհին, ինչպես արդեն ասել ենք, շատ հմայիչ կին էր:

Ուստիև վտանգավոր բան էր որևէ մեկին այդպիսի հանձնարարություն անել, սակայն թագավորը դուքս Բեկինգհեմի նկատմամբ իր խանդից կուրացած՝ այլևս ուրիշ ոչ ոքի չէր խանդում:

Պետք է կարծել, որ կանցլեր Սեգիեն այդ թուպեին աչքերով տիրահոչակ զանգի պարանն էր որոնում, բայց այն չգտնելով՝ նա ձեռքը մեկնեց այնտեղ, որտեղ, թագուհու սեփական խոստովանությամբ, պահված էր նամակը:

Աննա Ավստրիացին մի քայլ ետ գնաց և այնպես գունատվեց, ասես պատրաստ էր մեռնելու: Որպեսզի չընկնի, նա ձախ ձեռքով հենվեց իր ետևում գտնվող սեղանին, իսկ աջով՝ հանեց իրանակալի տակից նամակն ու մեկնեց կանցլերին:

— Վերցրե՛ք այս նամակը, պարոն,— գոչեց թագուհին հուզմունքից բեկբեկվող ձայնով:— Վերցրեք այն և ազատեցեք ինձ ձեր գարշելի ներկայությունից:

Կանցլերը մի անգամ այն հասկանալի հուզմունքից դողալով վերցրեց նամակը և մինչև գետին գլուխ խոնարհելով դուրս գնաց:

Դեռ նոր էր դուռը ծածկվել նրա հետևից, երբ թագուհին համարյա անշնչացած ընկավ պալատական տիկիների ձեռքերին:

Կանցլերը, առանց նամակին նայելու, տարավ այն թագավորին: Թագավորի ձեռքը դողում էր՝ նամակը վերցնելիս: Նա սկսեց որոնել հասցեն, ինչը չկար, խիստ գունատվեց, դանդաղորեն նամակը բացեց և առաջին իսկ բառից տեսնելով, որ այն ուղղված է իսպանական թագավորին, արագորեն աչքի անցկացրեց սկզբից մինչև վերջ:

Դա կարդինալի վրա հարձակվելու մի լիակատար ծրագիր էր: Թագուհին իր եղբորը և ավստրիական թագավորին, որոնք իրենց վիրավորված էին զգում Ռիշելիեի քաղաքականությունից, քանի որ նա շարունակ ձգտում էր ստորացնել ավստրիական թագավորական տունը, առաջարկում էր Ֆրանսիային սպառնալ պատերազմով և խաղաղություն պահպանելու պայման դնել կարդինալի հրաժարականով: Միտոմասին այդ նամակում ոչ մի խոսք չկար:

Թագավորն իսկույն ուրախանալով, մարդ ուղարկեց իմանալու դեռ պալատում է արդյոք կարդինալը: Նրան պատասխանեցին, որ նորին սրբազանությունը կաբինետում է և սպասում է նորին մեծության կարգադրություններին:

Թագավորն անհապաղ գնաց նրա մոտ:

— Երևակայեցեք, դուքս,— ասաց թագավորը:— Իրավացի դուրս եկաք դո՛ւք և ո՛չ ես: Ամբողջ ինտրիգն իսկապես քաղաքական բնույթ է կրում, և սիրո մասին այս նամակում ոչ մի խոսք չկա: Բայց սրա մեջ շատ է խոսվում ձեր մասին:

Կարդինալը նամակը վերցրեց և կարդաց մեծագույն ուշադրությամբ: Մեկ անգամ վերջացնելուց հետո՝ կրկին կարդաց այն:

— Դեհ, ի՛նչ արած, ձերդ մեծություն,— ասաց նա,— ինքներդ տեսնում եք, թե մինչև ուր են հասնում իմ թշնամիները. ձեզ սպառնում են երկու պատերազմով, եթե ինձ չհեռացնեք: Արդարև, ձերդ մեծություն, ձեր տեղը լինեի, ես կզիջեի այդքան գորեղ պնդումներին: Իսկ ես իմ կողմից անչափ երջանիկ կլինեի, եթե հեռու քաշվեի գործերից:

Այդ ի՞նչ եք ասում, դուքս:

— Ասում եմ, ձերդ մեծություն, որ իմ առողջությունը քայքայվում է այս ծայրահեղ լարված պայքարի և անվերջ ջանքերի մեջ: Ասում եմ, որ ամենայն հավանականությամբ Լա-Ռոշելի պաշարման ժամանակ ես չեմ դիմանա հոգնածությանը, և ավելի լավ կլինի, եթե դուք այնտեղ նշանակեք պարոն դը Կոնդեին, որի համար պատերազմ մղելն իր անմիջական գործն է, և ոչ թե իմ՝ եկեղեցու սպասավորի, որին թույլ չեն տալիս նվիրվել իր կոչմանը, այլ ստիպում են զբաղվել այնպիսի գործերով, որոնց ոչ մի հակում չունի: Այդ կա-պահովի ձեր երջանկությունը ընտանեկան կյանքում և, չեմ կասկածում, կամրապնդի ձեր փառքը արտասահմանում:

— Հանգիստ եղեք, դուքս,— պատասխանեց թագավորը:— Ես ամեն ինչ հասկանում եմ: Այս նամակում հիշատակված բոլոր անձինք իրենց արժանի պատիժը կկրեն, դրանից չի խուսափի նաև թագուհին:

— Ա՛խ, այդ ի՛նչ եք ասում, ձերդ մեծություն: Աստ-ված մի՛ արասցե, որ թագուհին իմ պատճառով գեթ ամենաչնչին անախորժություն կրի: Թագուհին միշտ էլ ինձ համարել է իր թշնամին, թեև ձերդ մեծությունը կարող է վկայել, որ ես միշտ ջերմորեն պաշտպան եմ կանգնել նրան, նույնիսկ ձերդ մեծության առաջ: Օ՛, եթե նա դավաճանությամբ վիրավորեր ձերդ մեծության պատիվը, այն ժամանակ ուրիշ բան, ես ինքս առաջինը կասեի՝ «Ո՛չ մի գթություն մեղավորին»: Բարեբախտաբար դրա մասին խոսք անգամ չկա, և ձերդ մեծությունը նորից կարող է համոզվել դրանում:

— Այդ ճշմարիտ է, պարոն կարդինալ,— ասաց թագավորը:— Եվ դուք, ինչպես միշտ, իրավացի եք: Բայց և այնպես թագուհին արժանի է իմ գայրույթին:

— Դուք ինքներդ եք մեղավոր նրա առաջ, ձերդ մեծություն: Եվ միանգամայն հասկանալի կլիներ, եթե նա գայրանար ձեզ վրա: Ձերդ մեծությունը նրա հետ չափազանց դաժան վարվեց:

— Ահա հենց միշտ էլ այսպես եմ վարվելու ես իմ թշնամիների, ինչպես և ձեր թշնամիների հետ, ինչպիսի բարձր դիրք էլ գրավելիս լինեն նրանք, և ինչպիսի վտանգի էլ ենթարկվելու լինեմ ես այդպիսի խստության համար:

— Թագուհին ի՛նձ է թշնամի և ո՛չ ձեզ, ձերդ մեծություն: Ընդհակառակն, նա ձեզ նվիրված ամուսին է, խոնարհ ու անբասիր: Թույլ տվեք, ուրեմն, պաշտպանել նրան ձերդ մեծության առջև:

— Դե թող նա զիջողության ճամփան բռնի, թող նա ինքն, անի առաջին քայլը:

— Ընդհակառակն, ձերդ մեծություն, դու՛ք տվեք բարի օրինակը: Չէ՞ որ դուք եք մեղավոր եղել թագուհուն կասկածելով:

— Ե՛ս անեմ առաջին քայլը,— գոչեց թագավորը:— Ո՛չ մի պայմանով:

— Ձերդ մեծություն, աղաչում եմ ձեզ:

— Եվ, բացի այդ, ինչպե՞ս գտնել մի հարմար առիթ:

— Անելով այնպիսի մի բան, որը կարող է բավականություն պատճառել նրան:

— Բայց ի՞նչ:

— Պարահանդես տվեք: Դուք գիտեք, թե թագուհին որքան է պար սիրում: Երաշխավորում եմ, որ ուշադրության այդպիսի դրսևորման առաջ նրա զայրույթը չի դիմանա:

— Պարոն կարդինալ, ձեզ հո հայտնի է, որ ես այդպիսի աշխարհիկ զվարճությունների սիրահար չեմ:

— Քանի որ նա գիտե, թե դուք ինչպիսի զգվանք եք տաժում այդպիսի զվարճություններին, առավել ևս շնորհակալ կլինի ձեզնից: Եվ, բացի այդ, նա առիթ կունենա կրելու այն սքանչելի ադամանդե զարդը, որ դուք ընծայեցիք նրան իր ծննդյան օրը և որով նա դեռ ոչ մի տեղ չի երևացել:

— Տեսնենք, պարոն կարդինալ, տեսնենք,— ասաց թագավորը գոյացած այն գիտակցությունից, որ թագուհին մեղավոր է դուրս եկել իրեն քիչ անհանգստացնող հանցանքում, և անմեղ է այն բանում, ինչից ամենից շատ էր երկյուղ կրում ինքը,

ուստի և պատրաստ էր հաշտվելու նրա հետ:— Տեսնենք: Բայց, երդվում եմ պատվովս, դուք շատ զիջողամիտ մարդ եք:

— Ձերդ մեծություն,— պատասխանեց կարդինալը:— Խստասրտությունը թողեք մինիստրներին: Զիջողամ-տությունը թագավորների առաքինությունն է. դիմեցեք դրան և դուք կտեսնեք, որ այն օգուտ կբերի:

Այս ասելուց հետո, լսելով, որ ժամացույցը խփեց տասնմեկը, կարդինալը խոնարհ գլուխ տալով գնալու թույլտվություն խնդրեց և թագավորին հրաժեշտ տվեց, աղաչելով նրան հաշտվել թագուհու հետ:

Աննա Ավստրիացին, որ նամակն իրենից վերցնելուց հետո նախատինքների էր սպասում, խիստ զարմացավ, երբ հետևյալ օրը նկատեց, որ թագավորը հաշտվելու փորձեր է անում: Սկզբում նա պատրաստ էր մերժելու այդ փորձերը, կնոջ հպարտությունը և թագուհու արժանապատվությունը այնքան խորն էին խոցված, որ նա չէր կարողանում միանգամից մոռանալ վիրավորանքը: Մակայն, ենթարկվելով իր պալատական տիկիների հորդորանքներին, նա վերջիվերջո աշխատեց ձևացնել, թե սկսում է մոռանալ պատահածը: Թագավորն այդ փոփոխությունից օգտվելով՝ հաղորդեց նրան, որ մտադիր է ամենամոտիկ ապագայում մեծ պարահանդես տալ:

Պարահանդեսը թշվառ Աննա Ավստրիացու համար այնպիսի մի հազվագյուտ բան էր, որ, ինչպես և ենթադրում էր կարդինալը, այդ լուրը ստանալուն պես՝ վիրավորանքի վերջին հետքն էլ ջնջվեց թագուհու եթե ոչ սրտից, ապա գոնե դեմքից: Նա հարցրեց, թե երբ է նշանակված պարահանդեսը, բայց թագավորը պատասխանեց, թե դրա մասին դեռ պետք է խոսել կարդինալի հետ:

Եվ իրոք, ամեն օր թագավորը հարցնում էր կարդինալին, թե երբ է լինելու այդ տոնակատարությունը, և ամեն օր կարդինալը մի որևէ պատրվակով հրաժարվում էր ճշտորեն ասել:

Այդպես անցավ մի շաբաթ:

Մեր նկարագրած դեպքերից հետո՝ ութերորդ օրը, կարդինալը մի նամակ ստացավ, որն ուղարկված էր Լոնդոնից և պարունակում էր միայն հետևյալ տողերը.

«Ես ձեռք բերի դրանք: Լոնդոնից մեկնել չեմ կարող, որովհետև դրամս քիչ է: Ուղարկեցեք ինձ հինգ հարյուր պիստոլ, և հենց որ ստանամ, չորս կամ հինգ օրից կլինեմ Փարիզում»:

Այդ նույն օրը, երբ կարդինալն այս նամակը ստացավ, թագավորը դիմեց նրան սովորական հարցով:

Ռիշելիեն մատների վրա հաշվեց և մտքում ինքն իրեն ասաց.

«Նա գրում է, որ կգա փողն ստանալուց հետո չորս կամ հինգ օրվա ընթացքում: Հինգ օր կանցնի, մինչև դրամը Լոնդոն հասնի և հինգ օր՝ մինչև նա կգա այս տեղ: Նշանակում է՝ ընդամենը տասն օր: Հարկավոր է նկատի ունենալ նաև հակառակ քամին, ամեն տեսակ անհաճո պատահականություններ, տկարություն: Ենթադրենք՝ տասներկու օր...»:

— Դեհ, ինչպե՞ս, դուքս, հաշվեցի՞ք,— հարցրեց թագավորը:

— Այո, ձերդ մեծություն: Այսօր սեպտեմբերի քսանն է: Հոկտեմբերի երեքին քաղաքի ավազները տոնակատարություն են սարքում: Ամեն ինչ հիանալի է դասավորվում: Ոչ ոք չի էլ մտածի, թե դուք զիջողություն եք անում թագուհուն:

Ապա մի պահ լռելուց հետո կարդինալն ավելացրեց.

— Ի դեպ, չմոռանաք տոնի նախօրյակին ասել թագուհուն, որ դուք կուզենայիք տեսնել սագո՞ւմ է արդյոք նրան այն ադամանդե զարդը:

XVII. Բոնասիեի ամուսինները

Արդեն երկրորդ անգամն էր, որ կարդինալը թագավորի հետ խոսելիս հիշատակում էր ադամանդե զարդը: Լյուդովիկոս XIII-ին զարմացրեց նրա այս հետևողականությունը, և նա մտածեց, որ այս խորհուրդի տակ մի գաղտնիք կա թաքնված:

Շատ անգամ էր թագավորն իրեն վիրավորված զգացել այն պատճառով, որ կարդինալը, ունենալով հիանալի ուստիկանություն, թեպետև այդ ուստիկանությունը մեր այժմյան ուստիկանության կատարելությանը չէր հասնում, ավելի լավատեղյակ էր

թագավորի ընտանեկան գործերին, քան հենց ինքը՝ թագավորը: Այս անգամ թագավորը մտածեց, որ Աննա Ավստրիացու հետ ունեցած զրույցը լույս կսփռի իրեն անհասկանալի ինչ-որ հանգամանքների վրա: Նա հույս ուներ, որ այնուհետև կվերադառնա կարդինալի մոտ, տեղյակ լինելով ինչ-որ գաղտնիքների, որոնք հայտնի կլինեն նորին սրբազնությանը կամ անհայտ: Երկու դեպքում էլ այդ հանգամանքը իրեն պետք է շատ բարձրացներ իր մինիստրի աչքում:

Լյուդովիկոս XIII-ը գնաց թագուհու մոտ և, ըստ իր սովորության, խոսակցությունը սկսեց սպառնալիքներով, որոնք վերաբերում էին թագուհու մերձավորներին: Աննա Ավստրիացին լսում էր գլխահակ, թողնելով, որ ցասումի հեղեղը տեղա՝ հուսալով, թե վերջիվերջո վախճան կունենա այդ: Սակայն թագավորի ցանկացածն այդ չէր: Թագավորը կռիվ էր ուզում, որի բորբոքված պահին կարող էր լույս սփռվել, միևնույն է, թե ինչպիսի: Նա համոզված էր, որ կարդինալը մի ինչ-որ գաղտնի միտք ունի և որ նա իր համար պատրաստում է այն սուկայի անակնկալներից մեկը, որոնց չգերազանցված վարպետն էր նա: Թագավորի համառ մեղադրանքները նրան հասցրին ցանկացած նպատակին:

— Ձերդ մեծություն,— բացականչեց Աննա Ավստրիացին, որին համբերությունից հանել էին աղոտ ակնարկները:— Ինչո՞ւ դուք ուղղակի չեք ասում այն, ինչ որ կա ձեր հոգում: Ի՞նչ եմ արել ես: Ի՞նչ հանցանք եմ գործել: Չի կարող պատահել, որ ձերդ մեծությունն այս ամբողջ աղմուկը բարձրացնելիս լինի այն նամակի համար, որ ես գրել եմ եղբորս:

Թագավորը միանգամից չիմացավ, թե ինչ պատասխանի այսպիսի ուղղակի հարցին: Նա մտածեց, որ հիմա հենց իսկ և իսկ ժամանակն է ասելու այն խոսքերը, որ պետք է ասեր միայն տոնակատարության նախորդ օրը:

— Տիրուհի,— խոսեց նա հանդիսավոր կերպով:— Մոտ օրերս քաղաքային խորհրդարանում պարահանդես է սարքվելու: Ես անհրաժեշտ եմ համարում, որ դուք, ի հարգանք մեր պանծալի ավագների, այդ պարահանդեսին ներկայանաք տոնական շքեղ հագուստով և անպայման այն ադամանդե զարդով, որ ես ընծայեցի ձեզ ձեր ծննդյան օրը: Ահա իմ պատասխանը:

Այդ պատասխանը զարհուրելի էր: Աննա Ավստրիացին մտածեց, թե թագավորին ամեն ինչ հայտնի է, և նա միայն կարդինալի պնդումով այս ամբողջ

շաբաթ ծածկամիտ է եղել: Ի դեպ, այդպիսի ծածկամտություն թագավորի բնավորության մեջ կար: Թագուհին սուկալի գունատվեց և իր չքնաղ ձեռքով, որն այժմ ասես մոմից լինե՞ր կերտված, հենվեց փոքրիկ սեղանին: Մարսավով լի աչքերով թագավորին նայելով՝ նա ոչ մի խոսք չասաց:

— Դուք լսո՞ւմ եք, տիրուհի,— հարցրեց թագավորը՝ հրճվելով նրա շփոթությունից, թեպետև չէր հասկանում դրա պատճառը:— Լսո՞ւմ եք:

— Լսում եմ, տեր իմ,— թոթովեց թագուհին:

— Դուք կլինե՞ք այդ պարահանդեսին:

— Այո:

— Եվ ձեզ վրա կլինի՞ ադամանդե զարդը:

— Այո:

Թագուհին ավելի ևս գունատվեց: Թագավորն այդ նկատեց և նրա տագնապից արբենալով այն պաղ դաժա-նությամբ, որ կազմում էր նրա բնավորության ամենաանդուրեկան կողմերից մեկը, ասաց.

— Այդպես ուրեմն, վճռված է: Ահա այն ամենը, ինչ ես ուզում էի ասել ձեզ:

— Բայց ե՞րբ է նշանակված պարահանդեսը,— հարց-րեց Աննա Ավստրիացին:

Լյուդովիկոս XIII-ը զգաց, որ ինքը չպետք է պատասխանի այդ հարցին. թագուհու ձայնը նման էր մեռնողի ձայնի:

— Շատ շուտով, տիրուհի,— պատասխանեց թագավորը:— Բայց ես ստույգ օրը չեմ հիշում, հարկավոր կլինի կարդինալին հարցնել:

— Նշանակում է՝ նորին սրբազնությո՞ւնն է ձեզ խորհուրդ տվել պարահանդես տալ,— բացականչեց թագուհին:

— Այո, տիրուհի: Բայց ինչի՞ համար է այդ հարցը,— զարմանքով հարցրեց թագավորը:

— Եվ նա էլ ձեզ խորհուրդ է տվել հիշեցնե՞լ ինձ աղամանդե զարդի մասին:

— Ի՛նչ ասեմ ձեզ...

— Այդ նա է, ձերդ մեծություն, նա է:

— Միևնույն չէ՞, նա է, թե՛ ես: Չլինի՞ հանցավոր բան եք համարում դուք այդ խնդիրքը:

— Ո՛չ, տեր իմ:

— Նշանակում է՝ դուք կլինե՞ք:

— Այո:

— Հիանալի է,— ասաց թագավորը դիմելով դեպի դուռը:— Հուսով եմ՝ դուք կկատարեք ձեր խոստումը:

Թագուհին ուներանս[74] արեց ո՛չ այնքան հետևելով ընդունված կարգին, որքան այն պատճառով, որ ծնկները ծալվում էին:

Թագավորը դուրս գնաց շատ գոհ:

— Ես կորա՛ծ եմ,— շնջաց թագուհին:— Կորա՛ծ եմ: Կարդինալն ամեն ինչ գիտե: Այդ նա է իմ դեմ լարում թագավորին, որը դեռևս ոչինչ չգիտե, բայց շուտով ամեն ինչ կիմանա: Ես կորած եմ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ...

Նա ծնկները ծալեց բարձի վրա և դողդոջուն ձեռքերով երեսը ծածկելով՝ սուզվեց աղոթքի մեջ:

Դրությունն իսկապես զարհուրելի էր: Դուքս Բեկինգհեմը վերադարձել էր Լոնդոն, տիկինն զր Շերյոզը գտնվում էր Տուրում: Գիտենալով, որ իրեն հետևում են

շատ ավելի համառ, քան երբևիցե, թագուհին աղոտ կերպով հասկանում էր, որ պալատական տիկիհններից մեկը մատնում է իրեն, բայց չէր իմանում, թե հատկապես որը: Լա Պորտը Լուվրի սահմաններից դուրս գալու հնարավորություն չուներ: Թագուհին աշխարհում չէր կարող ոչ ոքի վստահել:

Պարզ պատկերացնելով, թե որքան մեծ է այն դժբախտությունը, որ սպառնում է իրեն, և թե որքան մենակ է ինքը, թագուհին չդիմացավ և սկսեց հեկեկալ:

— Արդյոք չե՞մ կարող որևէ բանով օգնել ձերդ մեծությանը,— հանկարծ արտասանեց կարեկցությամբ լի մի քնքուշ ձայն:

Թագուհին թափով շուռ եկավ. այդ ձայնն անհնար էր շփոթել. այդպես խոսել կարող էր միայն բարեկամը:

Եվ իրոք, թագուհու սենյակը տանող դռներից մեկում կանգնած էր սիրունիկ տիկին Բոնասին: Նա հարևան փոքրիկ սենյակում զբաղված էր թագուհու հագուստն ու սպիտակեղենը հավաքելով և դեռ նոր էր ներս մտել, երբ եկել էր թագավորը: Այսպիսով՝ նա ամեն ինչ լսել էր: Թագուհին տեսնելով, որ ինքը մենակ չէ, մի բարձր մի ճիչ արձակեց: Շփոթմունքի մեջ նա միանգամից չճանաչեց այդ փոքրիկ կնոջը, որին իր մոտ ծառայության էր նշանակել Լա Պորտը:

— Օ՛, մի՛ վախեցեք, ձերդ մեծություն,— ասաց դեռ-ռատի կինը՝ մատները կոտրտելով և լաց լինելով, երբ տեսավ իր տիրուհու հուսահատ վիճակը:— Ես հոգով ու մարմնով նվիրված եմ ձերդ մեծությանը, և որքան էլ հեռու եմ ձեզնից, որքան էլ չնչին է իմ կոչումը, ինձ թվում է, թե ես ձերդ մեծությանը փորձանքից դուրս բերելու հնարը գտել եմ:

— Դո՞ւք: Օ՛, երկինք: Դո՞ւք,— գոչեց թագուհին:— Բայց նայեցեք իմ աչքերին: Ինձ դավաճաններ են շրջապատում: Կարո՞ղ եմ արդյոք վստահել ձեզ:

— Ձերդ մեծություն,— բացականչեց դեռ-ռատի կինը ծնկելով:— Հոգովս եմ երդվում, որ ես պատրաստ եմ մեռնելու ձերդ մեծության համար:

Այս բացականչությունը դուրս թռավ նրա սրտի խորքից, և անկեղծության ոչ մի կասկած չէր թողնում:

— Այո,— շարունակեց տիկին Բոնասիեն,— այո, այստեղ կան դավաճաններ: Բայց սուրբ կույսի անունով երդվում եմ, որ չկա ձերդ մեծությանն ավելի նվիր-ված մարդ, քան ես եմ: Այն զարդը, որի մասին հարց-նում էր թագավորը, դուք տվել եք դուքս Բեկինգհեմին, ճիշտ չէ՞: Այդ զարդը գտնվում էր այն վարդա-գույն փայտե տուփիկի մեջ, որը դուքսը տարավ իր հետ: Թե՞ ես սխալվում եմ, ճիշտ չէ՞մ ասում:

— Օ՛, Աստված իմ,— շնչաց թագուհին, որի աստամները վախից կփկփում էին:

— Դե ուրեմն,— շարունակեց տիկին Բոնասիեն,— այդ զարդը հարկավոր է վերադարձնել:

— Այո, իհարկե հարկավոր է: Բայց ինչպե՞ս, ինչ-պե՞ս անել այդ,— գոչեց թագուհին:

— Հարկավոր է մարդ ուղարկել դքսի մոտ:

— Բայց ո՞ւմ: Ո՞ւմ կարելի է վստահել:

— Վստահեցեք ինձ, ձերդ մեծություն: Արեք ինձ այդպիսի պատիվ, իմ թագուհի, և ես սուրհանդակ կգտնեմ:

— Բայց հարկ կլինի գրել...

— Այդ անհրաժեշտ է: Թեկուզ երկու խոսք ձերդ մեծության ձեռքով գրված և ձեր անձնական կնիքը:

— Բայց այդ երկու խոսքը իմ դատավճիռը կդառնան՝ ամուսնալուծություն, արքայ:

— Այո, եթե ընկնեն մի սրիկայի ձեռքը: Բայց ես երաշխավորում եմ, որ այդ տողերը կհանձնվեն հասցեատիրոջը:

— Օ՛, Աստվա՛ծ իմ: Ես ստիպված եմ ձեզ վստահել իմ կյանքը, պատիվը, իմ բարի անունը:

— Այո, տիրուհի, ստիպված եք: Եվ ես կփրկեմ ձեզ:

— Բայց ինչպե՞ս: Գոնե բացատրեցեք ինձ:

— Իմ ամուսնուն երկու թե երեք օր առաջ ազատել են: Ես դեռ չեմ տեսել նրան: Դա մի հասարակ, բարեսիրտ մարդ է, որին հավասարապես խորթ են և՛ ատելությունը, և՛ սերը: Նա կանի ամեն բան, ինչ ես ուզենամ, նա ճանապարհ կընկնի առանց իմանալու, թե ինչ է տա-նում և ձերդ մեծության նամակը նշված հասցեատիրոջը կհանձնի, չիմանալով, որ այն ձերդ մեծության նամակն է:

Թագուհին ջերմագին սեղմեց դեռատի կնոջ երկու ձեռքը, նայելով նրան այնպես, ասես ուզում էր կարդալ այն ամենը, ինչ թաքնված էր նրա սրտի խորքում: Սակայն չքնաղ աչքերի մեջ տեսնելով միայն անկեղծություն՝ նա քնքշորեն համբուրեց նրան:

— Արա այդ,— բացականչեց նա,— և դու կփրկես իմ կյանքը, կփրկես իմ պատիվը:

— Օ՛, մի՛ չափազանցեք այն ծառայությունը, որ ես բախտ ունեմ մատուցելու ձեզ: Ես ոչինչ չունեմ փր-կելու, չե՞ որ ձերդ մեծությունը պարզապես նողկալի բանասարկությունների զոհ է:

— Այդ ճշմարիտ է, զավակս,— ասաց թագուհին:— Եվ դու միանգամայն իրավացի ես:

— Դե ուրեմն տվեք ինձ նամակը, ձերդ մեծություն: Ժամանակը չի սպասում:

Թագուհին մոտեցավ փոքրիկ սեղանին, որի վրա կային թանաք, թուղթ և գրիչներ: Նա մի երկու տող գրեց, նամակը կնքեց իր կնիքով և մեկնեց տիկին Բոնասիեին:

— Լավ,— ասաց թագուհին,— բայց մենք մոռացել ենք մի շատ կարևոր բան:

— Ի՞նչ բան:

— Դրամի մասին:

Տիկին Բոնասին շիկնեց:

— Այո, ճիշտ որ,— ասաց նա:— Եվ ես պետք է խոստովանեմ, որ իմ ամուսինը...

— Քո ամուսինը փող չունի: Դու ա՞յդ էիր ուզում ասել:

— Ոչ, փող նա ունի, բայց շատ ժլատ է. դա նրա գլխավոր արատն է: Բայց թող ձեր դ մեծությունը չանհանգստանա, մենք մի միջոց կհնարենք...

— Բանն այն է, որ ես էլ փող չունեմ...— ասաց թագուհին: (Ովքեր տիկին Մոտվիլի հուշերը կարդան, նրանց այս պատասխանը չի զարմացնի):— Բայց սպասիր...

Աննա Ավստրիացին մոտեցավ իր արկղիկին:

— Վերցրու այս մատանին,— ասաց նա: — Ասում են սա շատ թանկ արժե: Սա ընծայել է ինձ իմ եղբայրը, Իսպանիայի թագավորը: Այն անձամբ ինձ է պատկանում, և կարող եմ ազատ տնօրինել: Վերցրու այս մատանին, փող դարձրու, և թող քո ամուսինը գնա:

— Մի ժամից ձեր ցանկությունը կատարված կլինի:

— Դու տեսնում ես հասցեն,— շնջաց թագուհին այնպես կամաց, որ դժվար էր բառերը հասկանալ.— «Միլորդ դուքս Բեկինգհեմին, Լոնդոն»:

— Նամակը կհանձնվի անձամբ նրա ձեռքը:

— Մեծահոգի՜ զավակս,— բացականչեց թագուհին:

Տիկին Բոնասին թագուհու ձեռքը համբուրեց, նամակը թաքցրեք կորսածի մեջ և թեթև թռչունի պես դուրս թռավ:

Տասը թույլ անց նա արդեն տանն էր: Իսկապես որ, ինչպես թագուհուն ասաց, նա ամուսնու ազատվելուց հետո նրան չէր տեսել: Չգիտեր նաև այն փոփոխությունը, որ տեղի էր ունեցել կարդինալի նկատմամբ նրա վերաբերմունքի մեջ. այդ փոփոխությանն առանձնապես նպաստել էր կոմս Ռոշֆորի երկու թե երեք այցելությունը, քանի որ հիմա Ռոշֆորը դարձել էր Բոնասիեի ամենամոտիկ բարեկամը:

Կոմսն առանց դժվարության Բոնասիեին ստիպեց հավատալ, որ նրա կնոջ հափշտակումը կատարվել է առանց որևէ վատ մտքի, և այն հանդիսանում է բացառապես քաղաքական նախազգուշություն:

Տիկին Բոնասիեն ամուսնուն գտավ մենակ, խեղճը դժվարությամբ էր տունը կարգի բերել: Կահույքը համարյա ամբողջովին կոտրտված էր, պահարանները՝ համարյա դատարկ, ըստ երևույթին, արդարադատությունը չի դասվում այն երեք բաների թվին, որոնց մասին Սողոմոն արքան ասում է, որ նրանք իրենցից հետո հետք չեն թողնում: Ինչ վերաբերում է սպասուհուն՝ նա փախել էր իր տիրոջ ձեռքակալությունից անմիջապես հետո: Խեղճ աղջիկն այնպես էր վախեցել, որ Փարիզից մի շնչում հասել էր իր ծննդավայրը՝ Բուրգունդիա:

Արդուզարդի հարգարժան վաճառականը տուն գալուն պես իսկույն կնոջը տեղեկացրել էր իր բարեհաջող վերադարձի մասին, և կինը շնորհավորելով՝ հայտնել էր, որ կօգտվի առաջին իսկ հարմար թույլից, որը կկարողանա խլել իր պարտականություններից և կգա տեսնվելու ամուսնու հետ:

Այդ առաջին թույլին հարկ եղավ սպասել ամբողջ հինգ օր, որ ուրիշ հանգամանքներում պարոն Բոնասիեին խիստ երկար կթվար: Մակայն կարդինալի հետ ունեցած խոսակցությունը և կոմս Ռոշֆորի այցելությունները նրան խորհրդածությունների առատ սնունդ էին տվել, իսկ, ինչպես հայտնի է, ոչ մի բան այնպես չի կարճացնում ժամանակը, ինչպես խորհրդածությունները:

Դրան ավելացրեք, որ Բոնասիեի մտորումները շատ վարդագույն էին: Ռոշֆորը նրան անվանում էր իր բարեկամը, իր սիրելի Բոնասիեն և չէր դադարում հավատացնել, որ կարդինալը շատ լավ կարծիքի է նրա մասին: Եվ արդուզարդի վաճառականն արդեն իրեն տեսնում էր հարստության ու մեծարանքի ճանապարհին:

Տիկին Բոնասիեն նույնպես շատ էր խորհել այդ ժամանակամիջոցում, բայց պետք է խոստովանել, որ նրա մտքերը փառասիրությունից հեռու էին: Իր կամքին հակառակ՝ նրա մտքերը շարունակ վերադառնում է գեղեցիկ ու համարձակ պատանուն, որն, ըստ երևույթին, սիրահարվել էր բուռն կրքով: Տասնութ տարեկան հասակում ամուսնանալով պ-րն Բոնասիեի հետ, շարունակ ապրելով իր ամուսնու բարեկամների շրջապատում, որոնք ընդունակ չէին որևէ զգացմունք ներշնչելու դեռատի կնոջը, որն ավելի բարձր հոգի ուներ, քան կարելի էր սպասել նրա դրության մեջ եղած կնոջից, տիկին Բոնասիեն էժանազին հրապույրի չէր ենթարկվում: Սակայն այն տարիներին, ավելի քան երբևէ, ազնվական կոչումը սովորական քաղաքացիների վրա ուժեղ տպավորություն էր գործում, իսկ դ՛Արտանյանն ազնվական էր: Բացի դրանից, նա կրում էր գվարդրականի համազգեստ, որը հրացանակրի համազգեստից հետո ամենից ավելի բարձր էին դասում բոլոր կանայք: Դ՛Արտանյանը, կրկնում ենք, գեղեցիկ էր, երիտասարդ ու ձեռներեց: Միտ մասին նա խոսում էր ինչպես սիրահարված մարդ, որը ծարավի է սեր նվաճելու: Այսքանը բավական էր քսաներեքամյա մի գլուխ պտտեցնելու համար, իսկ տիկին Բոնասիեն հասել էր իր կյանքի իսկ և իսկ այդ երջանիկ տարիքին:

Դրա համար էլ երկու ամուսինները, թեպետ և մի ամբողջ շաբաթ չէին տեսնվել,— իսկ այդ ժամանակամիջոցում նրանց գլխով զգալի իրադարձություններ էին անցել,— այնուամենայնիվ իրար հանդիպեցին յուրաքանչյուրն իր մտքերի մեջ խորասուզված: Այսպես թե այնպես պարոն Բոնասիեն անկեղծ ուրախություն ապրեց և գրկաբաց ընդառաջ գնաց կնոջը:

Տիկին Բոնասիեն ճակատը դեմ արավ նրան՝ համբուրելու:

— Մենք խոսելու բան ունենք,— ասաց նա:

— Ինչի՞ մասին,— զարմանքով հարցրեց Բոնասիեն:

— Ես պետք է մի շատ կարևոր բան ասեմ ձեզ,— սկսեց տիկին Բոնասիեն:

— Հա՛, ի դեպ, ես ևս պետք է մի քանի բավական լուրջ հարցեր տամ ձեզ,— ընդհատեց նրան Բոնասիեն:— Բացատրեցեք ինձ խնդրեմ, ինչու էին փախցրել ձեզ:

— Հիմա խոսքը դրա մասին չէ,— պատասխանեց տիկին Բոնասիեն:

— Հապա ինչի՞ մասին: Իմ կալանավորմա՞ն:

— Այդ մասին ես իմացա միևնույն օրը: Բայց դուք ոչ մի հանցանք չունեիք, դուք որևէ ինտրիգի խառը չէիք, վերջապես, դուք ոչինչ չգիտեիք, որը կարողանար անվանարկել ձեզ կամ որևէ մեկ ուրիշին, և ես այդ դեպքին տվի միայն այն նշանակությունը, որին նա արժանի էր:

— Ձեր համար հե՛շտ է խոսել, տիկին,— ասաց Բոնասիեն՝ նեղանալով կնոջ անբավարար ուշադրությունից:— Բայց ձեզ հայտնի՞ է, թե ինչ քաշեցի ես Բաստիլում մի ամբողջ օր ու գիշեր:

— Օր ու գիշերն արագ է անցնում: Չխոսենք ձեր կալանքի մասին և վերադառնանք այն բանին, ինչը ինձ այստեղ է բերել:

— Ինչպե՞ս թե՛ «ինչը ինձ այստեղ է բերել»: Մի թե՛ ձեզ այստեղ բերողը ձեր ամուսնուն տեսնելու ցանկությունը չի եղել, քանի որ մի ամբողջ շաբաթ դուք ինձնից անջատված եք եղել,— հարցրեց արդուզարդի վաճառականը, որը կարգին նեղացել էր:

— Իհարկե՛ ամենից առաջ այդ: Բայց, դրանից գատ, մի ուրիշ բան էլ կա:

— Ասացե՛ք:

— Դա չափազանց կարևոր գործ է, որից գուցե կախված է մեր ամբողջ ապագա բախտը:

— Մեր դրությունը, տիկին Բոնասիե, շատ է փոխվել այն ժամանակվանից, ինչ ես ու դուք չենք տեսնվել, և ես չեմ զարմանա, եթե մի քանի ամսից մեր վիճակը շատ շատերի նախանձը շարժի:

— Այո, մանավանդ, եթե դուք ճշտորեն կատարեք այն, ինչ ես ձեզ կասեմ:

— Ի՞նձ:

— Այո, ձեզ: Հարկավոր է մի բարի, սուրբ գործ անել, և միաժամանակ կարելի կլիներ շատ փող վաստակել:

Տիկին Բոնասին գիտեր, որ փողի անունը տալով՝ ինքը դիպած կլինի իր ամուսնու ամենաթույլ լարին: Սակայն ինչ մարդ էլ լիներ, թեկուզ և արդուզարդի վաճառական, մի տասը բույե կարդինալ Ռիշելիեի հետ խոսելով, արդեն բոլորովին ուրիշ մարդ էր դառնում:

— Շա՞տ փող:

— Շատ:

— Ինչքա՞ն կլինի,

— Կարող է ամբողջ հազար պիստոլ լինել:

— Նշանակում է այն, ինչ ուզում եք խնդրել, շատ կարևոր բան է:

— Այո:

— Իսկ ի՞նչ պիտի անեմ ես:

— Դուք պետք է անհապաղ ճանապարհ ընկնեք: Ես ձեզ կտամ մի նամակ, որը դուք պետք է պահեք աչքի լույսի պես և հանձնեք անձամբ այն մարդուն, ում ուղարկվում է:

— Իսկ ո՞ւր եմ գնալու:

— Լոնդոն:

— Ե՞ս: Լոնդո՞ն: Կատա՞կ եք անում: Ես Լոնդոն-ում ոչ մի գործ չունեմ:

— Բայց ուրիշին հարկավոր է, որ դուք գնաք Լոնդոն:

— Ո՞վ է այդ ուրիշը: Նախագգուշացնում եմ ձեզ, որ ես այլևս ոչ մի բան չեմ անի կուրորեն և որ ես ոչ միայն ուզում եմ իմանալ, թե ինչ ռիսկի եմ դիմում, այլև՝ ում համար եմ ռիսկ անում:

— Մի նշանավոր անձ ուղարկում է ձեզ Լոնդոն, և մի նշանավոր անձ սպասում է ձեզ այնտեղ: Պարզևատրությունը ձեր բոլոր սպասումները կգերազանցի, ահա այն ամենը, ինչ ես կարող եմ խոստանալ ձեզ:

— Նորի՛ց ինտրիգ: Մշտակա՛ն ինտրիգներ: Շնորհակալությո՛ւն: Հիմա ինձ խաբել չես կարող, պարոն կարդինալը որոշ բան բացատրել է ինձ:

— Կարդինա՞լը,— գոչեց տիկին Բոնասիեն:— Դուք տեսնվե՞լ եք կարդինալի հետ:

— Այո, նա ինձ իր մոտ կանչեց,— հպարտ-հպարտ ասաց պարոն Բոնասիեն:

— Եվ դուք ընդունեցի՞ք այդ հրավերը, անգգույշ մարդ:

— Պետք է խոստովանեմ, որ ես չէի կարող ընտրություն անել՝ գնալ, թե չգնալ: Ինձ տարան երկու ուստիկան: Պետք է խոստովանեմ նաև, որ այն ժամանակ ես դեռ չէի ճանաչում նորին սրբազնությանը, ուստի, եթե կարողանայի ազատվել այդ այցելությունից, շատ ուրախ կլինեի:

— Նա կոպի՞տ վարվեց ձեզ հետ, սպառնո՞ւմ էր:

— Նա ձեռք տվեց ինձ և անվանեց իր բարեկամը, իր բարեկամը, լսու՞մ եք, տիկին: Ես մեծ կարդինալի բարեկամն եմ:

— Մեծ կարդինալի՞:

— Չլինի՞ ուզում եք ժխտել նրա այդ տիտղոսը:

— Ես ոչինչ չեմ ժխտում, բայց ասում եմ ձեզ, որ մինիստրի ողորմածությունը հաստատուն բան չէ, և որ միայն խելագար մարդը իր բախտը կկապի մինիստրի հետ: Կա մի իշխանություն, որ նրա ուժից էլ բարձր է կանգնած, իշխանությունը, որն

հաստատված է ո՛չ մարդու քմահաճույքի վրա կամ որևէ դեպքի վրա: Ահա հենց այդպիսի իշխանությանը պետք է ծառայել:

— Շատ եմ ավստում, տիկին, բայց ինձ համար չկա մի ուրիշ իշխանություն, բացի մեծ մարդու իշխանությունից, որին ես պատիվ ունեմ ծառայելու:

— Դուք ծառայում եք կարդինալի՞ն:

— Այո, տիկին, և որպես նրա ծառա՝ ես թույլ չեմ տա, որ դուք խառնվեք պետության անվտանգության դեմ ուղղված ինտրիգներին և որ դուք, դու՛ք օգնեք այն կնոջ ինտրիգներին, որը ֆրանսիացի չլինելու սրտով պատկանում է Իսպանիային: Բարեբախտաբար մենք ունենք մեծ կարդինալ, և նրա արթուն աչքը հսկում է ամեն ինչին և թափանցում է մարդկանց սրտի խորքը:

Բոնասիեն բառ առ բառ կրկնեց այն խոսքերը, որ լսել էր Ռոշֆորից: Նա մտքում պահել էր այդ խոսքերը և հենց առիթի էր սպասում նրանցով փայլելու: Բայց խեղճ դեռատի կինը, որ հույս էր դրել իր ամուսնու վրա և այդ հույսով էլ խոստում էր արել թագուհուն, այժմ դողում էր և այն վտանգի սարսափից, որ քիչ էր մնացել ինքն իր գլխին բերեր, և իր անօգնականության գիտակցությունից: Այնուամենայնիվ, իմանալով իր ամուսնու թույլ կողմերը, մանավանդ նրա ազահությունը, նա դեռ հույսը չէր կտրում, թե կկարողանա ստիպել նրան իր կամքը կատարել:

— Ա՛խ, նշանակում է դուք կարդինալի՞ստ եք, պարոն,— բացականչեց նա:— Ա՛խ, նշանակում է դուք ծա-ռայում եք նրանց, ովքեր տանջում են ձեր կնո՞ջը, վիրավորում ձեր թագուհո՞ւն:

— Մեկ մարդու շահերը ոչինչ են ընդհանուրի բարօ-րության հանդեպ: Ես նրանց կողմն եմ, ովքեր փրկում են պետությունը,— փքված-փքված արտասանեց Բոնասիեն:

Դրանք նույնպես կոմս Ռոշֆորի խոսքերն էին, որ նա պահել էր մտքում և այժմ ասելու առիթ էր գտել:

— Բայց դուք գաղափար ունե՞ք, թե ինչ բան է պետություն, որի մասին խոսում եք,— ուսերը թոթվելով հարցրեց տիկին Բոնասիեն: — Ավելի լավ է մնացեք հասարակ

քաղքենի, առանց ձեր խելքին զոռ տալու, և կանգնեք նրանց կողմը, ովքեր ձեզ ավելի մեծ շահ են խոստանում:

— Ի՛նչ իմանաս,— ծոր տվեց Բոնասիեն՝ ձեռքով խփելով իր կողքին ընկած լիքը քսակին, որը զրնգաց արծաթի զնգոցով:— Ի՞նչ կասեք սրան, մեծարգո քարոզիչ:

— Որտեղի՞ց են այդ փողերը:

— Գլխի չե՞ք ընկնում:

— Կարդինալի՞ց:

— Նրանից և իմ բարեկամ Ռոշֆորից:

— Կոմս Ռոշֆորի՞ց: Բայց հենց նա էր, որ փախցրել էր ինձ:

— Միանգամայն հնարավոր է:

— Եվ դուք փո՞ղ եք ընդունում այդ մարդուց:

— Դուք չասացի՞ք, որ այդ առևանգումը զուտ քաղաքական պատճառ ուներ:

— Բայց այդ առևանգման նպատակն էր՝ ստիպել ինձ, որ մատնեմ իմ տիրուհուն, տանջանքների միջոցով ինձնից կորզել այնպիսի խոստովանություններ, որոնք կարող էին սպառնալ իմ օգոստափառ տիրուհու պատվին, գուցե և կյանքին:

— Տիկի՛ն,— ասաց Բոնասիեն,— ձեր օգոստափառ տիրուհին ուխտադրուժ իսպանուհի է, և ամեն բան, ինչ անում է կարդինալը, իրավացի է անում:

— Պարո՛ն,— բացականչեց դեռատի կինը,— ես գիտեի, որ դուք վախկոտ եք, ազահ և հիմար: Բայց չգիտեի, որ դուք նաև սրիկա եք:

— Տիկի՛ն,— խոսեց Բոնասիեն, որն առաջին անգամն էր իր կնոջը տեսնում այդպիսի ցատումի մեջ և վախենում էր ընտանեկան փոթորկի:— Տիկի՛ն, ի՞նչ եք ասում դուք:

— Ասում եմ, որ դուք սրիկա՛ եք,— շարունակեց տիկին Բոնասին, նկատելով, որ ինքը նորից սկսում է ազդեցություն ձեռք բերել իր ամուսնու նկատմամբ:— Նշանակում է դուք սկսել եք քաղաքականությամբ զբաղվել, այն էլ դարձել եք կարդինալի՞ կողմնակիցը: Նշանակում է դուք հոգով ու մարմնով վաճառվել եք սատանային, այն էլ փողի՞ համար:

— Ոչ թե սատանային, այլ կարդինալին:

— Այդ միևնույն բանն է,— գոչեց դեռատի կինը:— Ով ասում է «Ռիշելիե», ասում է «սատանա»:

— Լռեցե՛ք, տիկին, լռեցե՛ք, ձեզ կարող են լսել:

— Այո, իրավացի եք, և ես կամաչեմ ձեր վախկոտության համար:

— Բայց, ախր ի՞նչ եք պահանջում ինձնից:

— Ես արդեն ասացի, պահանջում եմ, որ դուք հենց այս րոպեին ճանապարհ ընկնեք և ազնվորեն կատարեք այն հանձնարարությունը, որին ես արժանացնում եմ ձեզ: Այս պայմանով ես պատրաստ եմ ամեն ինչ մոռանալ և ներել ձեզ: Դեռ ավելին,— նա ամուսնուն մեկնեց իր ձեռքը,— ես ձեզ կվերադարձնեմ իմ բարեկամությունը:

Բոնասին վախկոտ էր ու ազահ, բայց իր կնոջը սիրում էր. նա հուզվեց: Հիսուն տարեկան ամուսնու համար դժվար է երկար ժամանակ բարկացած լինել իր քսաներեքամյա կնոջ վրա: Տիկին Բոնասին տեսավ, որ ամուսինը տատանվում է:

— Դե՛, ինչպե՞ս: Որոշեցի՞ք:

— Բայց, սիրելիս, մտածեցեք ախր. ի՞նչ եք պահանջում ինձնից: Լոնդոնը հեռու է, շա՛տ հեռու Փարիզից, բացի այդ, կարող է պատահել, որ ձեր հանձնարարությունը կապված է վտանգի հետ:

— Միևնույնը չե՞, քանի որ դուք խուսափում եք նրանցից:

— Գիտե՞ք ինչ, տիկին Բոնասիե,— ասաց արդուզարդի վաճառականը:—
Գիտե՞ք ինչ. ես կտրականապես հրաժարվում եմ: Ինտրիզները վախեցնում են ինձ:
Ախր ես տեսել եմ Բաստիլը: Բը՛n-n-n: Ջարհուրելի բան է Բաստիլը: Բավական է, որ
միտքս ընկնի, մարմինս փշաքաղվում է: Ինձ սպառնում էին կտտանքներով: Իսկ դուք
գիտե՞ք ինչ բան է կտտանքը: Ոտքիդ մատների արանքով փայտե բիզեր են խփում,
մինչև որ ոսկորներդ ճոճոան: Ո՛չ, կտրականապես ո՛չ: Չե՛մ գնում: Ինձ արդեն թվում
է, թե ընդհանրապես մինչև այժմ ես սխալ կարծիք եմ ունեցել ձեր մասին. ինձ թվում է,
թե դուք տղամարդ եք, այն էլ ամենակտրիճ տղամարդկանցից մեկը:

— Իսկ դուք, դուք կի՛ն եք, ողորմելի կին՝ հիմար ու բթամիտ: Ա՛խ, դուք
վախենո՞ւմ եք: Լա՛վ: Այդ դեպքում ես հենց այս բոլորին թագուհու անունից կստիպեմ
ձերբակալել ձեզ, և ձեզ կնստացնեն հենց նույն Բաստիլում, որից դուք այդպես
վախենում եք:

Բոնասիեն խորասուզվեց մտքերի մեջ: Նա հանգամանորեն ծանր ու թեթև արեց
մտքում, թե ում կողմից է ավելի մեծ վտանգ սպառնում՝ կարդինալի՞, թե՞ թագուհու:
Կարդինալի ցասումը որքա՛ն ավելի վտանգավոր էր:

— Կհրամայեք թագուհու անունով ձերբակալել ինձ,— ասաց նա վերջապես:—
Իսկ ես կտամ նորին սրբազնության անունը:

Այստեղ միայն տիկին Բոնասիեն հասկացավ, որ չափից ավելի առաջ է գնացել
և սարսափեց: Ահը սրտում նայեց ամուսնու բուրձ դեմքին, որի վրա դրոշմված էր
սարսափահար հիմարի անսասան վճռականությունը:

— Լավ,— ասաց տիկին Բոնասիեն:— Հնարավոր է վերջիվերջո, որ դուք եք
իրավացի: Տղամարդը քաղաքանությունից ավելի շատ է հասկանում, մանավանդ
դուք, պարոն Բոնասիե, քանի որ ձեզ վիճակվել է զրուցել կարդինալի հետ: Բայց և
այնպես,— ավելացրեց նա,— ինձ շատ ցավ է պատճառում, որ իմ ամուսինը, որի սիրո
վրա, ինձ թվում էր, թե կարող եմ հույս դնել, չի ցանկանում կատարել իմ
քմահաճույքները:

— Ձեր քմահաճույքները կարող են շատ հեռուն գնալ,— հովանավորական
տոնով ասաց Բոնասիեն:— Եվ ես մի քիչ վախենում եմ դրանցից:

— Ստիպված եմ հրաժարվել իմ մտքից,— հառաչելով ասաց դեռատի կինը:—
Թող այդպես լինի: Այլևս սրա մասին չխոսենք:

— Գոնե եթե մի կարգին ասեիք ինձ, թե ես ինչ պիտի անեի Լոնդոնում,— մի
պահ լռելուց հետո խոսեց Բոնասիեն, մի քիչ ուշ մտաբերելով, որ Ռոշֆորն իրեն
պատվիրել է իմանալ կնոջ գաղտնիքները:

— Կարիք չկա, որ դուք այդ իմանաք,— պատասխանեց դեռատի կինը, որին
այժմ զսպում էր անվստահությունը,— մի դատարկ բանի համար էր, մի անմիտ
զարդի, որ երբեմն կանայք այնքան փափագում են ունենալ, մի գնում պիտի արվեր,
որով կարելի էր լավ փող վաստակել:

Բայց որքան ավելի համառորեն էր երիտասարդ կինը աշխատում թաքցնել իր
մտքերը, այնքան ավելի էր Բոնասիեն համոզվում, որ այդ գաղտնիքը, որն իրենից
թաքցնում էր կինը, կարևոր նշանակություն ունի: Ուստի նա որոշեց անհապաղ վազել
կոմս Ռոշֆորի մոտ և նրան իմաց տալ, որ թագուհին մարդ է որոնում Լոնդոն
ուղարկելու համար:

— Ներեցեք, թանկագինս, բայց ես պետք է մենակ թողնեմ ձեզ, ասաց նա:—
Զիմանալով, որ դուք այսօր գալու եք, ես տեսակցություն եմ նշանակել իմ բարեկամի
հետ: Երկար չեմ մնա այնտեղ, և եթե դուք ինձ մի քանի բոպե սպասեք, ես իմ
բարեկամի հետ գործս կվերջացնեմ և իսկույն կվերադառնամ, և որովհետև արդեն
մթնում է, ձեզ կուղեկցեմ մինչև Լուվր:

— Շնորհակալ եմ ձեզնից, պարոն,— պատասխանեց տիկին Բոնասիեն:— Դուք
այնքան քաջ չեք, որ կարողանաք որևէ օգնություն ցույց տալ ինձ: Ես կարող եմ մենակ
վերադառնալ Լուվր:

— Ինչպես ձեզ հաճելի կլինի, տիկին Բոնասիե,— ասաց արդուզարդի նախկին
վաճառականը:— Արդյոք շուտով կտեսնեմ ես ձեզ:

— Երևի եկող շաբաթ հնարավորություն կունենամ մի փոքր ազատվելու
ծառայությունից և դրանից կօգտվեմ, որ կարգի բերեմ մեր իրերը, որոնք, պետք է
կարծել, մի քիչ վնասվել են:

— Լավ, կսպասեմ: Դուք ինձ վրա չե՞ք բարկանում:

— Ե՞ս: Ամեննին:

— Նշանակում է՝ ցտեսություն:

— Ցտեսություն:

Բռնասիեն համբուրեց կնոջ ձեռքը և շտապ հեռացավ:

— Հը՛մ,— խոսեց տիկին Բռնասիեն, երբ մուտքի դուռը ծածկվեց ամուսնու հետևից և ինքը մենակ մնաց,— այս հիմարին հենց կարդինալիստ դառնալն էր պակաս: Իսկ ես երաշխավորում էի թագուհուն, ես էլ խոստում էի անում իմ դժբախտ տիրուհուն... Օ՛, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ, նա ինձ կհամարի այն ստոր արարածներից մեկը, որոնք վխտում են պալատում, և որոնց տեղավորել են թագուհու շուրջը, որպեսզի լրտեսեն նրան: Ա՛խ, պարոն Բռնասիե, ես երբեք առանձնապես չեմ սիրել ձեզ, իսկ հիմա՝ ավելի վատ. ես ատում եմ ձեզ և խոսք եմ տալիս, որ հաշիվ կմաքրեմ ձեզ հետ:

Այս խոսքերն ասաց թե չէ, առաստաղում լսվեց մի թխկոց, որ նրան ստիպեց գլուխը բարձրացնել:

— Թանկագին տիկին Բռնասիե՛,— առաստաղից լսվեց ինչ-որ մեկի ձայնը,— բաց արեք սանդուղքի գլխի փոքրիկ դռնակը, և ես կիջնեմ ձեզ մոտ:

XVIII. Սիրեկանը և ամուսինը

— Այո, տիկին,— ասաց դ'Արտանյանը ներս մտնելով այն դռնից, որ նրա առաջ բաց էր արել դեռատի կինը:— Թույլ տվեք ինձ ասել, որ ձեր ամուսինը ողորմելի մարդ է:

— Նշանակում է դուք լսե՞լ եք մեր խոսակցությունը, արագ հարցրեց տիկին Բռնասիեն՝ անհանգիստ նայելով դ'Արտանյանին:

— Սկզբից մինչև վերջ:

— Բայց ինչպե՞ս, Աստվա՛ծ իմ:

— Ճիշտ այնպես, ինչպես ինձ հաջողվեց լսել մի քիչ ավելի աշխույժ խոսակցությունը ձեր և կարդինալի լրտեսների միջև:

— Եվ ի՞նչ հասկացաք մեր խոսակցությունից:

— Հազար ու մի բան: Նախ այն, որ ձեր ամուսինը, բարեբախտաբար, հիմարի ու բթամիտի մեկն է, հետո այն, որ դուք գտնվում եք դժվար կացության մեջ, որի համար ես անչափ ուրախ եմ, որովհետև դա ինձ հնարավորություն կտա ծառայություն մատուցելու ձեզ, իսկ ես, աստված էլ տեսնում է, պատրաստ եմ կրակի մեջ նետվելու ձեզ համար: Եվ, վերջապես, այն, որ թագուհուն հարկավոր է համարձակ, հնարագետ ու նվիրված մի մարդ, որը պատրաստ կլինի նրա հանձնարարությամբ Լոնդոն մեկնելու: Ես, համենայնդեպս, պահանջվող այդ հատկություններից մի քանիսն ունեմ, և ահա, սպասում եմ ձեր կարգադրություններին:

Տիկին Բոնասինն անմիջապես պատասխան չտվեց, բայց նրա սիրտը զարկում էր ուրախությունից և աչքերը վառվում էին հույսով:

— Իսկ ի՞նչը երաշխիք կլինի ինձ համար,— հարցրեց նա,— եթե ես սիրտ անեմ վստահել ձեզ այդ խնդիրը:

— Թող երաշխիք լինի իմ սերը ձեր նկատմամբ: Դե, խոսեցե՛ք, հրամայեցե՛ք: Ի՞նչ պիտի անեմ ես:

— Աստվա՛ծ իմ,— շնջաց դեռատի կինը,— Կարո՞ղ եմ վստահել ձեզ այսպիսի մի գաղտնիք: Ախր դուք համարյա դեռ երեխա եք:

— Տեսնում եմ՝ ձեզ հարկավոր է, որ որևէ մեկը երաշխավորի՞ ինձ համար:

— Խոստովանում եմ, այդ ինձ շատ կհանգստացնեք:

— Դուք ճանաչո՞ւմ եք Աթոսին:

— Ոչ:

— Պորտուսի՞ն:

— Ոչ:

— Արամիսի՞ն:

— Ոչ: Ովքե՞ր են այդ երեք պարոնները:

— Նորին մեծության հրացանակիրներ: Ճանաչո՞ւմ եք դուք նրանց կապիտան պարոն դը Տրևիլին:

— Օ՛, այո, նրան ես ճանաչում եմ, ո՛չ անձամբ, այլ լսելով: Թագուհին նրա մասին շատ անգամ է ասել, որ նա հավատարիմ ազնվական է:

— Հուսով եմ՝ դուք հնարավոր չեք համարում, որ նա ձեզ մատնի կարողինալին:

— Բհարկե՛ ոչ:

— Այդ դեպքում հայտնեք նրան ձեր գաղտնիքը և հարցրեք իրեն, կարո՞ղ եք վստահել ինձ, որքան էլ կարևոր, թանկագին ու սարսափելի լինի այդ գաղտնիքը:

— Բայց, ախր, այդ գաղտնիքը ինձ չի պատկանում, և ես իրավունք չունեմ բացելու այն...

— Բայց պատրաստվո՞ւմ էիք վստահելու այն պարոն Բոնասիեին,— նեղացած ասաց դ'Արտանյանը:

— Ինչպես նամակը վստահես ծառի փշակին, աղավնու թևին, շան վզնոցին:

— Բայց դուք հո տեսնում եք, թե ես ինչպես եմ սիրում ձեզ:

— Այո, դուք այդ ասում եք:

- Ես ազնիվ մարդ եմ:
- Կարծում եմ՝ այդպես է:
- Ես քաջ եմ:
- Օ՛, դրանում ես համոզված եմ:
- Այդ դեպքում փորձեցեք ինձ:

Տիկին Բոնասիեն վերջին կասկածների դեմ պայքարելով նայեց երիտասարդին: Բայց դ՛Արտանյանի աչքերում այնպիսի կրակ կար, նրա ձայնը հնչում էր այնքան համոզիչ, որ տիկին Բոնասիեն ցանկություն զգաց վստահելու նրան: Եվ, բացի դրանից, ուրիշ էլք էլ չկար: Ստիպված էր ռիսկի դիմել: Չափից ավելի զգուշությունը, ինչպես և չափից ավելի վստահու-թյունը հավասարապես վտանգավոր էին թագուհու համար: Այնուհետև,— մենք ստիպված ենք խոստովանել այս,— տիկին Բոնասիեն խոսել ստիպեց նաև ակամա մի զգացմունք, որ ուներ նա այդ պատանու նկատմամբ:

— Լսեցեք,— ասաց տիկին Բոնասիեն,— ես զիջում եմ ձեր պնդումներին և վստահում եմ ձեզ: Բայց երդվում եմ Աստծո առաջ, որը լսում է մեզ, որ եթե դուք դավաճանեք ինձ, ապա թեկուզ և իմ թշնամիներս ինձ ներում շնորհեն, միևնույն է, ես իմ կյանքին վերջ կտամ՝ իմ կործանման համար մեղադրելով ձեզ:

— Իսկ ես,— խոսեց դ՛Արտանյանը,— երդվում եմ Աստծո առաջ, որ եթե ես ձեր հանձնարարությունը կատարելիս բռնվեմ, ավելի շուտ կմեռնեմ, քան կասեմ կամ կանեմ այնպիսի մի բան, որը կարողանար որևէ մեկի վրա ստվեր գցել:

Եվ այն ժամանակ դեռատի կինը նրան հաղորդակից արեց այն գաղտնիքին, որի մի մասն արդեն դիպվածով բացվել էր նրա առաջ Սամարացի կնոջ կամրջի վրա:

Դա եղավ նրանց սիրո բացատրությունը:

Դ՛Արտանյանը հպարտությունից ու երջանկությունից շողշողում էր: Այդ գաղտնիքը, որն այժմ գի-տեր ինքը, այդ կինը, որին սիրում էր, հսկայի ուժ էին տալիս նրան:

— Ես գնում եմ,— ասաց նա:— Գնում եմ հենց այս բույսերին:

— Ինչպե՞ս թե գնում եք,— բացականչեց տիկին Բոնասին:— Իսկ գո՞ւնդը, իսկ հրամանատա՞րը:

— Երդվում եմ հոգովս, դուք ինձ ստիպեցիք ամեն ինչ մոռանալ, թանկագին Կոնստանցիա: Դուք իրավացի եք, ինձ արձակուրդ է հարկավոր:

— Նորից խոչընդոտ,— վշտացած շնջաց տիկին Բոնասին:

— Օ՛հ,— մի պահ լռելուց հետո խոսեց դ'Արտանյանը,— այդ խոչընդոտը ես հաշտությամբ կհաղթահարեմ, մի՛ անհանգստացեք:

— Ինչպե՞ս:

— Հենց այսօր երեկոյան ես կգնամ պարոն դը Տրևի-լի մոտ և կխնդրեմ նրան, որ ինձ համար արձակուրդ ստանա իր աներորդուց՝ պարոն Դեզեսարից:

— Բայց դա դեռ բոլորը չէ...

— Էլ ի՞նչ կա որ,— հարցրեց դ'Արտանյանը՝ տեսնելով, որ տիկին Բոնասին սիրտ չի անում շարունակել:

— Գուցե դուք փող չունե՞ք:

— «Գուցե»-ն այստեղ ավելորդ է,— ժպտալով պատասխանեց դ'Արտանյանը:

— Եթե այդպես է,— ասաց տիկին Բոնասին բաց անելով պահարանը և այնտեղից հանելով այն տոպրակը, որը մի կես ժամ առաջ այնպես գուրգուրանքով շոյում էր իր ամուսինը,— վերցրեք այս տոպրակը:

— Կարդինալի տոպրա՞կը,— քրքջալով ասաց դ'Արտանյանը, որը, ինչպես մենք հիշում ենք, հատակի տախտակները բացած լինելու շնորհիվ սկզբից մինչև վերջ լսել էր ամուսինների միջև տեղի ունեցած խոսակցությունը:

— Այո, կարդինալի տոպրակը,— հաստատեց տիկին Բոնասիեն:— Ինչպես տեսնում եք, սա բավական պատկառելի տեսք ունի:

— Գրողը տանի,— գոչեց դ'Արտանյանը:— Այդ հո կրկնակի չափով հետաքրքրական կլինի՝ թագուհուն փրկել նորին սրբազնության փողերի օգնությամբ:

— Դուք դուրեկան ու սիրալիր երիտասարդ եք,— ասաց տիկին Բոնասիեն:— Հավատացեք, որ նորին մեծություն թագուհին պարտք չի մնա ձեզ:

— Օ՛, ես արդեն լիովին վարձատրված եմ,— գոչեց դ'Արտանյանը:— Ես սիրում եմ ձեզ, դուք ինձ թույլ եք տալիս ասել այս: Կարո՞ղ էի ես այսպիսի երջանկության հույս ունենալ:

— Կամաց,— հանկարծ շնչաց տիկին Բոնասիեն դողալով:

— Ի՞նչ կա:

— Փողոցում մարդիկ են խոսում:

— Ձա՞յն է լսվում:

— Իմ ամուսնու ձայնը: Այո, ես ճանաչում եմ նրա ձայնը:

Դ'Արտանյանը վազեց դռան մոտ և սողնակը քաշեց:

— Նա ներս չի մտնի, մինչև ես չգնամ: Իսկ երբ ես կգնամ, դուք դուռը կբանաք նրա առաջ:

— Բայց ես ինքս էլ պետք է գնամ: Եվ մեկ էլ ինչպես բացատրեմ նրան փողի անհայտանալը, եթե ես այստեղ լինեմ:

— Դուք իրավացի եք, հարկավոր է հեռանալ այստեղից:

— Հեռանա՞լ: Բայց ինչպե՞ս: Եթե մենք դուրս գանք, նա մեզ կտեսնի:

— Այդ դեպքում հարկավոր է բարձրանալ իմ սենյակը:

— Ա՛խ,— բացականչեց տիկին Բոնասիեն,— դուք այդ ասում եք այնպիսի տոնով, որ ես սարսափում եմ:

Այս ասելիս տիկին Բոնասիեի աչքերում արցունք փայլեց: Դ՛Արտանյանը նկատեց այդ արցունքը և զգացված ու շփոթված նրա ոտքերն ընկավ:

— Ինձ մոտ,— ասաց նա,— դուք ապահով կլինեք ինչպես տաճարում, ազնվականի խոսք եմ տալիս ձեզ:

— Գնանք,— ասաց տիկինը:— Ինձ վստահում եմ ձեզ, բարեկամս:

Դ՛Արտանյանը զգուշությամբ սողնակը ետ քաշեց, և երկուսն էլ թեթև ստվերի պես ներքին դռնով դուրս եկան միջանցք, անաղմուկ բարձրացան սանդուղքով և մտան դ՛Արտանյանի սենյակը:

Երբ արդեն նրա սենյակում էին, ավելի ապահով լինելու համար երիտասարդը դուռը փակեց: Ապա լուսամուտին մոտենալով՝ նրանք տեսան պ-րն Բոնասիեին, որը խոսում էր թիկնոցի մեջ փաթաթված մի անձանոթի հետ:

Թիկնոցավոր մարդուն տեսնելուն պես դ՛Արտանյանը ցնցվեց և սուսերը կիսով չափ պատյանից դուրս քաշելով նետվեց դեպի դուռը:

Դա Մենգի անձանոթն էր:

— Ի՞նչ եք ուզում անել,— գոչեց տիկին Բոնասիեն:— Դուք կկործանեք մեզ:

— Բայց ես երդվել եմ սպանել այդ մարդուն,— բացականչեց դ՛Արտանյանը:

— Ձեր կյանքն այժմ նվիրված է ձեր խնդրին և ձեզ չի պատկանում: Թագուհու անունով արգելում եմ որ-և-է վտանգի ենթարկել ձեզ, բացի այն վտանգներից, որոնք սպասում են ձեզ ճանապարհորդության ժամանակ:

— Իսկ ձեր անունից դուք ինձ ոչինչ չե՞ք հրամայում:

— Իմ անունից,— խիստ հուզված ասաց տիկին Բոնասիեն,— իմ անունից ես ձեզ աղաչում եմ նույնն անել: Բայց ականջ դնենք. ինձ թվում է, թե նրանք խոսում են իմ մասին:

Դ՛Արտանյանը վերադարձավ լուսամուտի մոտ և ականջ դրեց:

Պարոն Բոնասիեն արդեն բացել էր իր տան դուռը և տեսնելով, որ բնակարանը դատարկ է, վերադարձել էր թիկնոցավոր մարդու մոտ, որին մի բուպեով մենակ էր թողել:

— Կինս գնացել է,— ասաց Բոնասիեն:— Երևի վերադարձել է:

— Դուք հավատացա՞՞ծ եք, որ նա չի հասկացել, թե դուք ինչի համար եք գնացել,— հարցրեց թիկնոցավոր մարդը:

— Ոչ, չի հասկացել,— ինքնավստահ պատասխանեց Բոնասիեն:— Նա խիստ թեթևամիտ կին է և այդպիսի բաներ չի հասկանա:

— Իսկ երիտասարդ գվարդիականը տա՞նն է:

— Չեմ կարծում: Ինչպես տեսնում եք, նրա լուսամուտների խլափեղկերը ծածկված են և ճեղքերի միջով լույսի ոչ մի ճառագայթ չի թափանցում: Բոնասիեն շքամուտքից ներս մտավ, անցավ նույն դռնով, որով հենց նոր անցել էին փախստականները, բարձրացավ մինչև դ՛Արտանյանի դուռը և բախեց:

Պատասխան չեղավ, Պորտոսն այդ երեկո իրեն ավելի մեծ շուք տալու համար խնդրել էր իրեն զիջել Պլանշեին: Իսկ ինչ վերաբերում է դ՛Արտանյանին, ապա նա չէր էլ մտածում կենդանության որևէ նշան ցույց տալ:

Երբ Բոնասիեն դուռը թմրկահարեց, երիտասարդները զգացին, թե ինչպես իրենց սիրտը թպրտաց կրծքի տակ:

— Այստեղ ոչ ոք չկա,— ասաց Բոնասիեն:

— Միննույն է, ավելի լավ է մտնենք ձեր բնակարանը: Այնտեղ ավելի հանգիստ կլինի, քան փողոցում:

— Ա՛խ,— բացականչեց տիկին Բոնասիեն,— հիմա մենք այլևս ոչինչ չենք լսի:

— Ընդհակառակը,— հանգստացրեց նրան դ'Արտանյանը,— հիմա մենք ավելի լավ կլսենք:

Դ'Արտանյանը մի քանի պարկետ հանեց, որից նրա սենյակի հատակը դարձավ Դիոնիսիոսի ականջի[75] նման մի բան, հատակին մի գորգ փռեց, չոքեց նրա վրա և ձեռքի նշանով տիկին Բոնասիեին էլ առաջարկեց հետևել իր օրինակին ու կռանալ հատակի բացվածքին:

— Դուք հավատացա՞՞ծ եք, որ տանը ոչ ոք չկա,— հարցրեց անձանոթը:

— Ես պատասխանատու եմ դրա համար,— պատասխանեց պարոն Բոնասիեն:

— Եվ դուք կարծում եք, որ ձեր կինը...

— Վերադարձել է պալատ:

— Առանց որևէ մեկի հետ նախապես խոսելո՞ւ:

— Հավատացած եմ:

— Դրա ճշգրիտ իմանալը շատ կարևոր է, հասկանո՞ւմ եք:

— Նշանակում է այն տեղեկությունները, որ ես հաղորդեցի ձեզ, կարելի է արժեքավո՞ր համարել:

— Շա՛տ արժեքավոր են, թանկագին Բոնասիե, չեմ թաքցնի ձեզնից:

— Այնպես որ կարդինալն ինձնից գոհ կլինի:

— Չեմ կասկածում:

— Մեծ կարդինա՛լը:

— Դուք լա՛վ եք հիշում, որ ձեր կինը ձեզ հետ զրուցելիս ոչ մի անուն չտվեց:

— Կարծեմ չտվեց...

— Նա չտվե՞ց տիկին դը Շերյոզի, կամ դուքս Բե-կինգհեմի, կամ թե տիկին դը Վերնեի անունները:

— Ոչ, նա միայն ասաց, որ ուզում է ինձ Լոնդոն ուղարկել, որպեսզի ծառայություն մատուցեմ մի շատ բարձրաստիճան անձի:

— Մատնի՛չ,— շնջաց տիկին Բոնասիեն:

— Կամա՛ց,— խոսեց դ'Արտանյանը բռնելով տիկնոջ ձեռքը, որը մտքերի մեջ խորասուզված լինելով՝ ետ չքաշեց:

— Եվ այնուամենայնիվ,— շարունակեց թիկնոցավոր մարդը,— դուք հիմար եք, որ չեք ձևացրել, թե իբր համաձայնում եք: Հիմա նամակը ձեր ձեռքում կլիներ, պետությունը, որին սպառնում են, փրկված կլիներ, իսկ ձեզ...

— Իսկ ի՞նձ...

— Իսկ ձեզ... ձեզ ազնվականի կոչում կշնորհվեր:

— Նա ձեզ ասել է...

— Այո, ես գիտեմ, որ նա ուզում է ձեզ ուրախացնել այդպիսի անակնկալով:

— Հանգստացեք,— ասաց Բոնասիեն:— Իմ կինը ինձ պաշտում է, և դեռ ուշ չէ:

— Հիմա՛ր,— շնջաց տիկին Բոնասիեն:

— Կամա՛ց,— հազիվ լսելի խոսեց դ'Արտանյանը, ավելի ուժեղ սեղմելով նրա ձեռքը:

— Ինչպե՞ս թե «ուշ չէ»,— հարցրեց թիկնոցավոր մարդը:

— Ես կգնամ Լուվր, կկանչեմ տիկին Բոնասիեն, կասեմ, որ միտքս փոխել եմ, որ ամեն ինչ կանեմ, նա-մակը կստանամ և կվազեմ կարդինալի մոտ:

— Լավ: Շտապեցեք: Ես շուտով կվերադառնամ, որ իմանամ, թե ինչ եք արել:

Անձանոթը դուրս գնաց:

— Սրիկա՛,— ասաց տիկին Բոնասիեն՝ այդ ածականով պարզևատրելով իր ամուսնուն:

— Կամա՛ց,— կրկնվեց դ'Արտանյանը՝ ավելի ամուր սեղմելով նրա ձեռքը:

Սակայն այդ բոլորին հնչեց մի վայրի ոռնոց, որն ընդհատեց դ'Արտանյանի և տիկին Բոնասիենի մտքերը: Դա պարոն Բոնասիեն էր, որը նկատելով քսակի անհայտացումը՝ օգնության էր կանչում:

— Օ՛, Աստվա՛ծ, իմ, Աստվա՛ծ իմ,— գոչեց տիկին Բոնասիեն:— Նա ամբողջ թաղը ոտքի կհանի:

Բոնասիեն երկար ժամանակ գոռում էր, բայց որովհետև այդպիսի աղաղակներ հաճախ էին լսվում Գերեզմանափորների փողոցում և ոչ ոքի չէին կարող ստիպել, որ փողոց նայի, մանավանդ որ Բոնասիենների տունն արդեն այդ օրերին վատ համբավ էր ստացել, ուստի Բոնասիեն, տեսնելով, որ ոչ ոք չի երևում, դուրս վազեց տնից՝ շարունակելով գոռալ: Դեռ երկար ժամանակ լսվում էր նրա ոռնոցը, որը հեռանում էր դեպի Դյուբակ փողոցը:

— Իսկ հիմա,— ասաց տիկին Բոնասիեն,— քանի որ նա այստեղ չէ, հերթը ձերն է. գնացեք: Քաջ եղեք, և մանավանդ զգույշ: Հիշեցեք, որ դուք պատկանում եք թագուհուն:

— Նրան և ձեզ,— գոչեց դ'Արտանյանը:— Մի՛ անհանգստացեք, չքնաղ Կոնստանցիա: Ես կվերադառնամ և կարժանանամ նրա շնորհակալությանը, բայց արդյոք ձեր սիրուն էլ կարժանանա՞մ:

Պատասխանը եղավ միայն այն վառ կարմիրը, որ ծածկեց դեռատի կնոջ այտերը: Մի քանի րոպեից դ'Արտանյանն էլ իր հերթին փողոց դուրս եկավ փաթաթված մի թիկնոցի մեջ, որի փեշերը մարտականորեն վեր էր բարձրացրել երկար սուսերի պատյանը:

Տիկին Բոնասիեն նրան ճանապարհի դրեց այն երկար ու քնքուշ հայացքով, որով կինը ճանապարհ է դնում իր մեջ սեր հարուցած մարդուն: Բայց երբ դ'Արտանյանը ծածկվեց փողոցի անկյունում, տիկին Բոնասիեն ծունկ չոքեց:

— Օ՛, Աստված իմ,— շշնջաց նա ձեռքերը կոտրատելով,— պաշտպանի՞ր թագուհուն, պաշտպանի՞ր ինձ:

XIX. Արշավի ծրագիրը

Դ'Արտանյանն ամենից առաջ գնաց պ-րն դը Տրևիլի մոտ: Նա գիտեր, որ դեռ մի քանի րոպե չանցած՝ կարդինալն ամեն ինչ կիմանա նզովյալ անձանոթից, որը, անտարակույս, նորին սրբազնության վստահությունը վայելող անձ էր: Եվ դ'Արտանյանը լիակատար հիմք ունենալով գտնում էր, որ ոչ մի րոպե կորցնել չի կարելի:

Երիտասարդի սիրտը լի էր ուրախությամբ: Նրան առիթ էր ներկայացել միաժամանակ ձեռք բերել և՛ փառք, և՛ դրամ, և որ ամենահիանալին էր, այդ առիթը իրեն մերձեցնում էր այն կնոջ հետ, որին նա պաշտում էր: Նախախնամությունը միանգամից ավելին էր տալիս նրան, քան ինքը երբևիցե համարձակվել էր երազել:

Պ-րն դը Տրևիլն իր հյուրասենյակումն էր, իր անվանի բարեկամների սովորական շրջանում: Դ'Արտանյանը, որին տանը բոլորը ճանաչում էին, գնաց ուղիղ կաբինետ և սպասավորին խնդրեց զեկուցել, որ կցանկանար կապիտանի հետ խոսել մի կարևոր գործի մասին:

Դեռ հինգ րոպե չանցած՝ ներս մտավ պարոն դը Տրևիլը:

Բավական եղավ մի հայացք գցել երիտասարդի ուրախությունից փայլող դեմքին, և հարգարժան կապիտանը հասկացավ, որ տեղի է ունեցել ինչ-որ նոր բան:

Ամբողջ ճանապարհին դ'Արտանյանն ինքն իրեն հարց էր տվել. վստահե՞լ գաղտնիքը պ-րն դը Տրևիլին, թե՞ միայն գործողությունների ազատություն խնդրել նրանից մի գաղտնի գործի համար: Բայց պ-րն դը Տրևիլը նրա նկատմամբ միշտ այնքան ազնիվ վերաբերմունք ուներ, այնքան խորն էր նրա նվիրվածությունը թագավորին ու թագուհուն և այնքան անկեղծորեն էր ատում կարդինալին, որ երիտասարդը որոշեց ամեն ինչ պատմել նրան:

— Դուք ինձ խնդրել էք ընդունե՞լ ձեզ, իմ երիտասարդ բարեկամ,— ասաց դը Տրևիլը:

— Այո, տեր իմ,— պատասխանեց դ'Արտանյանը,— և դուք, երբ կիմանաք, թե ինչպիսի կարևոր գործի մասին եմ խոսելու, կներեք ինձ, որ անհանգստացրի ձեզ:

— Այդ դեպքում խոսեցեք: Ես լսում եմ ձեզ:

— Խնդիրը վերաբերում է,— ձայնը ցածրացնելով ասաց դ'Արտանյանը,— ոչ ավել, ոչ պակաս, քան թագուհու պատվին, գուցե և կյանքին:

— Ի՛նչ էք ասում,— գոչեց դը Տրևիլը շուրջը նայելով, որպեսզի համոզվի, որևէ մեկը չի՞ լսում իրենց, և նորից հարցական հայացքը գամեց իր խոսակցի դեմքին:

— Ես, տե՛ր իմ,— պատասխանեց դ'Արտանյանը,— ասում եմ, որ պատահականությունը իմ առաջ բաց արեց մի գաղտնիք...

— Որը դուք, երիտասարդ, գաղտնի կպահեք, եթե նույնիսկ հարկ լինի կյանքը տալ դրա համար:

— Բայց ես պետք է հայտնեմ ձեզ այն, տեր իմ, որովհետև միայն դուք կարող եք օգնել ինձ կատարելու այն խնդիրը, որն ինձ վրա է դրել նորին մեծություն թագուհին:

— Այդ գաղտնիքը ձե՞րն է:

— Ոչ, տեր իմ: Դա թագուհու գաղտնիքն է:

— Թույլատրե՞լ է նորին մեծությունը ինձ տեղյակ դարձնել այդ գաղտնիքին:

— Ոչ, տեր իմ, նույնիսկ ընդհակառակը, ինձ հրամայված է խիստ գաղտնի պահել այն:

— Իսկ ինչո՞ւ եք ուզում հայտնել ինձ:

— Որովհետև, ինչպես արդեն ասացի, ես առանց ձեր օգնության ոչինչ չեմ կարող անել և վախենում եմ, որ դուք, եթե չիմանաք, թե ինչի համար եմ խնդրում, կմերժեք ինձ այն ողորմածությունը, որի մասին ես ուզում եմ խնդրել:

— Պահեցեք ձեզ վստահված գաղտնիքը, երիտասարդ, և ասացեք, ի՞նչ եք ուզում դուք:

— Ես կուզենայի, որ դուք պարոն Դեզեսարից երկու շաբաթով արձակուրդ հաջողացնեք ինձ համար:

— Ե՞րբ:

— Հենց այս գիշերվանից:

— Դուք Փարիզից մեկնելո՞ւ եք:

— Ես գնալու եմ, որպեսզի հանձնարարությունը կատարեմ:

— Կարո՞ղ եք հաղորդել ինձ, թե ուր եք գնալու:

— Լոնդոն:

— Որևէ մեկը շահագրգռվա՞ծ է, որ դուք չհասնեք ձեր նպատակին:

— Կարդինալը, ինձ թվում է, ամեն ինչ կտար, որպեսզի խանգարեր ինձ:

— Եվ դուք մենա՞կ եք մեկնում:

— Ես մենակ եմ մեկնելու:

— Այդ դեպքում դուք Բոնդիից հեռու չեք գնա, վստահեցնում եմ ձեզ դը Տրևիլի խոսքով:

— Ինչո՞ւ:

— Ձեր հետևից մարդասպան կուղարկեն:

— Ես կմեռնեմ իմ պարտքը կատարելիս:

— Բայց հանձնարարությունն անկատար կմնա:

— Այդ ճշմարիտ — ասաց դ'Արտանյանը:

— Հավատացեք ինձ,— շարունակեց դը Տրևիլը:— Այդպիսի ձեռնարկումների պետք է գնալ չորսով, որպեսզի գոնե մեկը նպատակին հասնի:

— Այո, դուք իրավացի եք, տեր իմ,— ասաց դ'Արտանյանը:— Բայց դուք ճանաչում եք Աթոսին, Պորտոսին ու Արամիսին և գիտեք նաև, որ ես կարող եմ հույս դնել նրանց վրա:

— Առանց հայտնելու նրանց գաղտնի՞ քը, որ ես ինքս էլ չուզեցի իմանալ:

— Մենք մի անգամ ընդմիջտ երդում ենք տվել իրար վստահել կուրորեն և մշտապես նվիրված լինել մի-մյանց: Բացի դրանից, դուք կարող եք նրանց ասել, որ ամբողջապես ինձ է վստահվում, և նրանք էլ ինձ վրա հույս կդնեն այնպես, ինչպես և դուք:

— Ես կարող եմ նրանցից յուրաքանչյուրին արձակուրդ տալ երկու շաբաթով. Աթոսին, որին դեռ անհանգստացնում է իր վերքը, Ֆորժի ջրերը մեկնելու համար, Պորտոսին և Արամիսին՝ ուղեկցելու համար իրենց ընկերոջը, որին նրանք այդպիսի

ծանր վիճակում մենակ թողնել չեն կարող: Արձակուրդային վկայականն ապացույց կլինի, որ ուղևորությունը կատարվում է իմ համաձայնությամբ:

— Շնորհակալ եմ ձեզնից, տեր իմ: Դուք անսահման բարի եք:

— Անհապաղ գնացեք նրանց մոտ: Մեկնելու եք հենց այս գիշեր... Այո, բայց հիմա մի դիմում գրեցեք պարոն Դեզեսարի անունով: Հնարավոր է, որ արդեն լրտեսը կրկնակոխ հետևում է ձեզ, և ձեր գալը ինձ մոտ, որ այդ դեպքում արդեն հայտնի կլինի կարդինալին, այդ դիմումով կարդարացվի:

Դ'Արտանյանը դիմումը գրեց, և դը Տրևիլը երիտասարդ գասկոնացու ձեռքից դիմումը վերցնելով ասաց, որ ոչ ուշ, քան երկու ժամից բոլոր չորս արձակուրդային վկայականները կլինեն ուղևորությանը մաս-նակցող չորս ընկերներից յուրաքանչյուրի տանը:

— Բարի եղեք իմ վկայականը ուղարկել Աթոսի մոտ,— խնդրեց դ'Արտանյանը:— Ես վախենում եմ, որ տուն վերադառնալով կարող եմ հանդիպել որևէ անախորժ անակնկալի:

— Մի անհանգստացեք: Ցտեսություն և բարի ճանապարհ... Հա՛, սպասեցեք...— գոչեց դը Տրևիլը՝ դ'Արտան-յանին կանգնեցնելով: Դ'Արտանյանը ետ դարձավ:

— Փող ունե՞ք դուք:

Դ'Արտանյանը ձեռքը խփեց գրպանի դրամի քսակին:

— Բավակա՞ն է,— հարցրեց դը Տրևիլը:

— Երեք հարյուր պիստոլ է:

— Հիանալի է: Այդքանով աշխարհի ծայրն էլ կարելի է գնալ: Դե ուրեմն գնացեք:

Դ'Արտանյանը գլուխ տվեց պ-րն դը Տրևիլին, որն իր ձեռքը մեկնեց նրան: Երիտասարդ գասկոնացին հարգալից շնորհակալությամբ սեղմեց նրա ձեռքը: Փարիզ

գալու օրվանից նա չէր հազենում գովաբանելու այդ հիանալի մարդուն, որը միշտ այնքան ազնիվ էր ու մեծահոգի:

Առաջինը, որի մոտ գնաց դ'Արտանյանը, Արամիսն էր: Դ'Արտանյանը իր ընկերոջ մոտ չէր եղել այն անմոռանալի երեկոյից հետո, երբ հետևում էր տիկին Բոնասիեին: Դեռ ավելին, վերջին ժամանակներս նա նույնիսկ հազվադեպ էր հանդիպում երիտասարդ հրացանակրին, և ամեն անգամ, երբ տեսնում էր նրան, թվում էր, թե իր ընկերոջ դեմքին ինչ-որ թախծի հետքեր է նկատում:

Այդ երեկո նույնպես Արամիսը դեռ քնելու չէր պառկել և մռայլ էր ու մտախոհ: Դ'Արտանյանը փորձեց հարցուփորձ անել նրան տխրության պատճառների մասին: Արամիսը պատճառ բերեց Ավգուստին Երանելու տասնութերորդ գլխի մեկնաբանությունները, որը նա եկող շաբաթվա համար պետք է գրեր լատիներեն և որը որպես թե խիստ անհանգստացնում էր իրեն:

Երկու ընկերներն արդեն մի քանի րոպե զրուցում էին, երբ հանկարծ ներս մտավ պ-րն դը Տրեիլի սպասավորներից մեկը և Արամիսին հանձնեց մի կնքված ծրար:

— Այս ի՞նչ է,— հարցրեց հրացանակիրը:

— Արձակուրդի թույլտվություն, որի մասին դուք, տեր իմ, բարեհաճել էիք խնդրել,— սպասախանեց սպասավորը:

— Բայց ես ամենևին արձակուրդ չեմ խնդրել,— բացականչեց Արամիսը:

— Լռեցեք և վերցրեք,— շշնջաց նրան դ'Արտանյանը:— Եվ ահա ձեզ, բարեկամս, կես պիստոլ ձեր աշխատանքի համար,— ավելացրեց նա դառնալով սպասավորին:— Հաղորդեցեք պարոն դը Տրեիլին, որ պարոն Արամիսը սրտանց շնորհակալ է նրանից:

Սպասավորը մինչև գետին գլուխ խոնարհելով դուրս գնաց:

— Այս ի՞նչ է նշանակում,— հարցրեց Արամիսը:

— Հավաքեցեք ամեն բան, ինչ կարող է ձեզ պետք գալ երկու շաբաթվա ճանապարհորդության համար և հետևեցեք ինձ:

— Բայց ես հիմա չեմ կարող Փարիզը թողնել, առանց իմանալու...

Արամիսը լռեց:

— ...Թե ինչ է պատահել նրան, այնպես չէ՞,— նրա փոխարեն շարունակեց դ'Արտանյանը:

— Ո՞ւմ,— հարցրեց Արամիսը:

— Այն կնոջը, որն այստեղ էր: Այն կնոջը, որը ասեղնագործված թաշկինակ ունի:

— Ձեզ ո՞վ ասաց, որ այստեղ կին է եղել,— գոչեց Արամիսը մահվան պես սփրթնելով:

— Ես տեսա նրան:

— Եվ գիտե՞ք ով է նա:

— Գլխի եմ ընկնում համենայն դեպս:

— Լսեցեք,— ասաց Արամիսը:— Քանի որ դուք այդքան շատ բան գիտեք, չե՞ք կարող ասել, թե ինչ եղավ այդ կինը:

— Ենթադրում եմ, որ նա վերադարձել է Տուր:

— Տո՞ւր: Այո, հնարավոր է: Դուք ճանաչում եք նրան: Բայց նա ինչպե՞ս վերադարձավ Տուր՝ առանց մի խոսք ասելու ինձ:

— Նա վախեցել է ձերբակալությունից:

— Բայց ինչո՞ւ ինձ նամակ չգրեց:

— Վախեցել է ձեզ փորձանքի մեջ գցել:

— Դ՛Արտանյան, դուք կյանք եք վերադարձնում ինձ,— գոչեց Արամիսը:— Ես կարծում էի, թե ինձ արհամարհում, խաբում են: Ես այնքա՛ն երջանիկ էի, որ նորից տեսնում եմ նրան: Ես չէի կարող ենթադրել, որ նա իմ պատճառով վտանգի է ենթարկում իր ազատությունը, բայց մյուս կողմից, ի՞նչ պատճառ կարող էր նրան ստիպել Փարիզ վերադառնալ:

— Այն նույն պատճառը, որով մենք այսօր մեկնում ենք Անգլիա:

— Իսկ ի՞նչ պատճառ է այդ,— հարցրեց Արամիսը:

— Երբևիցե, Արամիս, ձեզ այն հայտնի կդառնա: Բայց առայժմ ես ավելորդ խոսքեր չեմ ասի՝ հիշելով աստվածաբանի ազգականուհուն:

Արամիսը ժպտաց, հիշելով այն հեքիաթը, որ մի ժա-մանակ ինքը պատմել էր ընկերներին:

— Լավ, ի՞նչ կա որ: Քանի որ նա գնացել է Փարիզից, և դուք դրանում համոզված եք, այլևս ոչ մի բան ինձ այստեղ չի պահում, և ես պատրաստ եմ ճանապարհ ընկնելու ձեզ հետ: Դուք ասացիք, որ մենք գնում ենք...

— Ամենից առաջ Աթոսի մոտ, և եթե դուք պատրաստվում եք ինձ հետ գալու, ապա խորհուրդ եմ տալիս շտապել, որովհետև մենք շատ ժամանակ կորցրինք: Հա՛, ի դեպ, նախազգուշացրեք Բազենին:

— Բազենը գալո՞ւ է մեզ հետ:

— Հնարավոր է: Համենայն դեպս օգտակար կլինի, եթե նա ևս գա Աթոսի մոտ:

Արամիսը Բազենին կանչեց և հրամայեց իրենց հետևից գալ Աթոսի մոտ:

— Դե՛հ, գնացինք,— ասաց նա վերցնելով իր թիկնոցը, սուսերը, գոտին խրելով իր երեք ատրճանակները և պատահաբար կորած որևէ դրամ որոնելով՝ դարակները

մի քանի անգամ ետ ու առաջ քաշեց: Համոզվելով, որ իր որոնումներն իզուր են, նա դ'Արտանյանի հետևից ուղղվեց դեպի դուռը, մտքում ինքն իրեն հարց տալով. երիտասարդ գվարդիականը որտեղից կարող էր իր պես լավ իմանալ, թե ով է եղել այն կինը, որ վայելել է իր հյուրասիրությունը, և իրենից էլ լավ իմանալ, թե որտեղ է թաքնվել այդ կինը:

Երբ արդեն հասել էին շենքին, Արամիսը ձեռքը դրեց դ'Արտանյանի ուսին:

— Դուք ոչ ոքի բան չե՞ք ասել այդ կնոջ մասին,— հարցրեց նա:

— Ոչ ոքի՝ ամբողջ աշխարհում:

— Նույնիսկ Աթոսին ու Պորտոսի՞ն էլ:

— Ոչ մի խոսք:

— Փառք Աստծու:

Եվ այս բանից հանգստանալով Արամիսը դ'Արտանյանի հետ շարունակեց իր ճանապարհը: Շուտով նրանք երկուսն էլ հասան այն տունը, որտեղ ապրում էր Աթոսը:

Երբ ներս մտան՝ Աթոսը մի ձեռքում բռնած ուներ արձակուրդի թույլտվությունը, մյուսում՝ պ-րն դը Տրնիլի նամակը:

— Արդյոք չե՞ք կարող բացատրել ինձ, թե ինչ են նշանակում այս արձակուրդը և այս նամակը, որ հենց նոր ստացա ես,— հարցրեց նա զարմացած:

«Սիրելիդ իմ Աթոս, ես համաձայն եմ երկու շաբաթով հանգիստ տալու ձեզ, քանի որ ձեր առողջությունն այդպես է պահանջում: Կարող եք մեկնել Ֆորժի ջրերը, կամ որևէ այլ տեղ ըստ ձեր հայեցողության: Շուտ կազդուրվեցեք:

.....Ձեր նկատմամբ բարեհաճ՝ Տրնիլ»:

Այդ նամակը և արձակուրդը, Աթոս, նշանակում է, որ դուք պետք է հետևեք ինձ:

— Ֆորժի ջրե՞րը:

— Այնտեղ կամ մի այլ տեղ:

— Թագավորին ծառայելն՞ ւ համար:

— Թագավորին ու թագուհուն: Մի՞ թե մենք նորին մեծություն թագավորի և թագուհու ծառաները չենք:

Ճիշտ այդ պահին երևաց Պորտոսը:

— Գրո՛ղը տանի,— գոչեց նա ներս մտնելով:— Այդ որ ժամանակից է հրացանակիրներին արձակուրդ տրվում առանց նրանց խնդրանքի:

— Այն ժամանակից, երբ նրանք ունեն բարեկամներ, որոնք խնդրում են նրանց փոխարեն:

— Ա-ա՛,— ծոր տվեց Պորտոսը,— երևում է՝ այստեղ ինչ-որ նորություններ կան:

— Այո, մենք մեկնում ենք,— պատասխանեց Արամիսը:

— Դեպի ո՞ւր,— հարցրեց Պորտոսը:

— Ճիշտն ասած՝ լավ չգիտեմ,— պատասխանեց Աթոսը:— հարցրու դ'Արտանյան:

— Մենք, պարոննե՛ր, մեկնում ենք Լոնդոն,— ասաց դ'Արտանյանը:

— Լոնդոն՞,— գոչեց Պորտոսը:— Ի՞նչ ենք անելու մենք Լոնդոնում:

— Ահա այդ է, որ ես իրավունք չունեմ ձեզ ասելու, պարոննե՛ր: Դուք ստիպված եք վստահելու ինձ:

— Բայց Լոնդոն գնալու համար փող է հարկավոր,— ասաց Պորտոսը,— իսկ ես փող չունեմ:

— Ես ևս:

— Ես էլ:

— Ես փող ունեմ,— ասաց դ'Արտանյանը գրպանից հանելով իր գանձը և սեղանի վրա գցելով այն:— Այս քսակում երեք հարյուր պիստոլ կա: Յուրաքանչյուրս կվերցնենք յոթանասունհինգ պիստոլ, դա բավական կլինի Լոնդոն գնալու և վերադառնալու համար: Ի դեպ, հանգիստ եղեք, մենք բոլորս Լոնդոն չենք հասնի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև, ամենայն հավանականությամբ, մեզնից որևէ մեկը ճանապարհին կմնա:

— Ուրեմն այդ ինչ է, մենք արշավի՞ ենք դուրս գալիս:

— Եվ այն էլ շատ վտանգավոր արշավի, պետք է նախազգուշացնեմ ձեզ:

— Գրողը տանի,— գոչեց Պորտոսը,— դեհ, քանի որ մենք սպանվելու վտանգի ենք ենթարկում մեզ, ես գոնե կուզենայի իմանալ, թե հանուն ինչի ենք անում այդ:

— Դա քեզ թեթևությո՞ւն կբերի,— հարցրեց Աթոսը:

— Պետք է խոստովանեմ,— ասաց Արամիսը,— որ ես համաձայն եմ Պորտոսի հետ:

— Բայց մի թե թագավորը սովորություն ունի հաշիվ տալու ձեզ: Ո՛չ: Նա պարզապես ասում է ձեզ, պարոննե՛ր Գասկոնում կամ Ֆլանդրիայում կռիվ է, գնացեք կռվելու, և դուք գնում եք: Հանուն ինչի՞: Դուք նույնիսկ չեք էլ մտածում դրա մասին:

— Դ'Արտանյանն իրավացի է,— ասաց Աթոսը:— Ահա մեր երեքիս արձակուրդային վկայականները, որ ուղարկել է պարոն դը Տրևիլը, և ահա երեք

հարյուր պիստոլ, որ հայտնի չէ ով է տվել: Գնանք մեռնելու, որտեղ ուղարկում են մեզ: Կյանքն ի՞նչ բան է, որ նրա համար այդքան հարցուփորձ անես: Դ՛Արտանյան, ես պատրաստ եմ հետևելու քեզ:

— Ես էլ,— ասաց Պորտոսը:

— Ես էլ,— ասաց Արամիսը:— Ի դեպ, հիմա ես դեմ չեմ Փարիզից մեկնելու: Ինձ հարկավոր է զվարճանալ:

— Զվարճություններ շատ կունենաք, պարոններ՝ ը, հանգիստ եղեք,— ասաց դ՛Արտանյանը:

— Հիանալի է: Իսկ ե՞րբ ենք ճանապարհ ընկնում,— հարցրեց Աթոսը:

— Հենց հիմա,— պատասխանեց դ՛Արտանյանը:— Ոչ մի բուպե կորցնել չի կարելի:

— Է՛յ, Գրիմո՛, Պլանշե՛, Մուշկետո՛ն, Բազե՛ն,— ձայն տվին չորսն էլ իրենց սպասավորներին:— Փայլեցրեք մեր բոտֆորտները[76] և բերեք մեր ձիերին:

Այն տարիներին ընդունված կարգ էր, որ ամեն մի հրացանակիր իր ձին և իր սպասավորի ձին պահի ընդհանուր ախոռում, ինչպես զորանոցում: Պլանշեն, Գրիմոն, Մուշկետոնը և Բազենը վազեցին իրենց տերերի հրամանը կատարելու:

— Իսկ այժմ,— ասաց Պորտոսը,— արշավի ծրագիր կազմենք: Ամենից առաջ ո՞ւր ենք գնում մենք:

— Կալե,— ասաց դ՛Արտանյանը:— Դա Լոնդոն տանող ամենակարճ ճանապարհն է:

— Այդ դեպքում, ահա իմ կարծիքը,— սկսեց Պորտոսը:

— Ասա:

— Չորս հոգով միասին գնալը կարող է կասկած հարուցել: Դ՛Արտանյանը մեզնից յուրաքանչյուրին համապատասխան ցուցում կտա: Ես առաջ կգնամ դեպի Բուլոն, որպեսզի ճանապարհը հետախուզեմ: Աթոսը երկու ժամ հետո ճանապարհ կընկնի դեպի Ամիեն: Արամիսը նրանից հետո կգնա դեպի Նուայոն: Ինչ վերաբերում է դ՛Արտանյանին, նա կարող է գնալ որ ճանապարհով կուզենա, բայց Պլանշեի հագուստով, իսկ Պլանշեն դուրս կգա նրանից հետո, գվարդիականի համազգեստով, որպես թե դ՛Արտանյանն է:

— Պարոննե՛ր,— ասաց Աթոսը,— իմ կարծիքն այն է, որ սպասավորներին այդպիսի գործի մասնակից չպետք է անել: Ազնվականը պատահաբար կարող է գաղտնիքը մատնել, բայց սպասավորը համարյա միշտ կծախի այն:

— Պորտոսի ծրագիրը ինձ անհաջող է թվում,— ասաց դ՛Արտանյանը:— Նախևառաջ ես ինքս էլ չգիտեմ, թե ինչպիսի ցուցումներ պիտի տամ ձեզ: Ես մի նամակ եմ տանում: Ահա ամբողջը: Ես չեմ կարող երեք պատճեն հանել այդ նամակից, որովհետև այն կնքված է: Ուստի ինձ թվում է, մենք պետք է միասին գնանք: Նամակը, ահա, այստեղ է, այս գրպանում:— Եվ նա ցույց տվեց, թե որ գրպանումն է նամակը:— Եթե ես սպանվեմ, ձեզնից մեկը նամակը կվերցնի, և դուք կշարունակեք ձեր ճանապարհը: Եթե նրան էլ սպանեցին, կգա երրորդի հերթը և այսպես շարունակ... Միայն թե գոնե մեկը տեղ հասնի: Այդ էլ բավական կլինի:

— Կեցցե՛ս, դ՛Արտանյան, ես էլ այդ նույն կարծիքին եմ,— ասաց Աթոսը:— Եվ պետք է հետևողական լինել: Ես գնում եմ ջրերը, դուք ինձ ուղեկցում եք: Ֆորժի ջրերի փոխարեն ես գնում եմ ծովափ. չե՞ որ ազատ եմ ընտրություն անելու: Մեզ ուզում են բռնել: Ես ներկայացնում եմ պարոն դը Տրևիլի նամակը, իսկ դուք՝ ձեր վկայականները: Հարձակվում են մեզ վրա, մենք պաշտպանվում ենք: Մեզ դատում են, իսկ մենք ամենայն համառությամբ պնդում ենք, թե մտադիր էինք միայն մի քանի անգամ սուզվել ծովի մեջ: Զատ-զատ ճանապարհ գնացող չորս մարդկանց հետ հաշիվ տեսնելը մի դժվար բան չի, այնինչ չորսը միասին արդեն մի խումբ են կազմում: Եթե մեր դեմ բանակ էլ ուղարկեն, մենք մարտը կընդունենք, և նա, ով ողջ կմնա, ինչպես դ՛Արտանյանն ասաց, նամակը կտանի:

— Հիանալի է,— ասաց Արամիսը:— Դու հազվադեպ ես խոսում, Աթոս, բայց երբ խոսում ես, ապա Հովհան Ռսկեբերանից[77] վատ չես խոսում: Ես ընդունում եմ Աթոսի ծրագիրը: Իսկ դո՞ւ, Պորտոս:

— Ես նույնպես,— ասաց Պորտոսը,— եթե դ'Արտանյանը համաձայն է դրան: Դ'Արտանյանը, որին հանձնարարված է նամակը, բնականաբար, մեր արշավախմբի պետն է: Թող նա ինքը որոշի, իսկ մենք կկատարենք նրա հրամանները:

— Դե ուրեմն,— ասաց դ'Արտանյանը,— ես որոշեցի. մենք ընդունում ենք Աթոսի ծրագիրը և մեկնում ենք կես ժամից:

— Ընդունված է,— միաձայն ասացին բոլոր երեքն էլ:

Եվ նրանցից յուրաքանչյուրը ձեռքը մեկնելով քսակին իր համար վերցրեց յոթանասունհինգ պիստոլ և սկսեց պատրաստություններ տեսնել, որպեսզի կես ժամից հետո պատրաստ լինի մեկնմանը:

XX. Ճանապարհորդություն

Գիշերվա ժամը երկուսին մեր չորս արկածախնդիրները Փարիզից դուրս եկան Սեն Դենի դարպասով: Քանի դեռ շուրջը խավար էր տիրում, նրանք գնում էին լուռ. խավարը, հակառակ իրենց կամքի, ազդում էր նրանց վրա, ամենուրեք նրանց աչքին դարաններ էին երևում:

Արեգակի առաջին ճառագայթների հետ նրանց լեզուները բացվեցինք իսկ արևի հետ միասին վերադարձավ նաև սովորական զվարթությունը: Նրանց սիրտն ավելի արագ էր զարկում, աչքերը ժպտում էին, ինչպես ճակատամարտի նախօրյակին: Մի տեսակ զգացվում էր, որ կյանքը, որից գուցե և ստիպված կլինեն բաժանվել, ամեննին էլ վատ բան չէ:

Ի դեպ, գորասյունը բավական ազդու տեսք ուներ. հրացանակիրների սևաթույր նժույգները, նրանց հաստատուն քայլվածքը, մի սովորություն, որ ձեռք էին բերել հեծելավաշտում և զինվորի այդ ազնիվ ընկերներին ստիպում էր առաջ շարժվել համաչափ քայլքով, այս ամենը ինքնին արդեն կարող էր մերկացնել ամենախիստ ծպտվածությունը:

Չորս ընկերների հետևից գնում էին նրանց սպա-սավորները՝ մինչև ատամները զինված:

Ամեն ինչ բարեհաջող անցավ մինչև Շանտիլիա, ուր ընկերները հասան առավոտյան ժամը ութին: Հարկավոր էր նախաճաշել: Նրանք ձիերից ցած թռան մի պանդոկի առաջ, որի ցուցանակին պատկերված էր, թե ինչպես սուրբ Մարտինը աղքատին է տալիս իր թիկնոցի կեսը: Սպասավորներին հրամայեցին ձիերի թամբը չվերցնել և պատրաստ լինել անհապաղ ճանապարհը շարունակելու:

Ընկերները մտան ընդհանուր սենյակը և սեղան նստեցին:

Մի ինչ-որ ազնվական, որը հենց նոր էր եկել Դամարտենի ճանապարհով, նույն սեղանի մոտ նստած նախաճաշում էր: Նա խոսք բաց արեց եղանակի մասին: Մեր ճանապարհորդները պատասխանեցին: Նա խմեց սրանց կենացը: Սրանք էլ խմեցին նրա կենացը:

Բայց այն պահին, երբ Մուշկետոնը ներս մտնելով զեկուցեց, որ ձիերը պատրաստ են, և ընկերները վեր կացան սեղանից, անձանոթը Պորտոսին առաջարկեց խմել կարդինալի կենացը: Պորտոսն ասաց, որ պատրաստ է անելու այդ, եթե անձանոթն էլ իր հերթին խմի թագավորի կենացը: Անձանոթը գոչեց, թե չի ճանաչում ուրիշ թագավոր, բացի նորին սրբազնությունից: Պորտոսը նրան հարբեցող անվանեց: Անձանոթը սուսերը դուրս քաշեց:

— Դուք սխալ թույլ տվիք,— ասաց Աթոսը,— բայց ճար չկա, այժմ արդեն նահանջել չի լինի: Սպանեցեք այդ մարդուն և որքան կարելի է շուտ հասեք մեր հետևից:

Եվ երեք ընկերները թռան իրենց ձիերի վրա ու սլացան ամբողջ թափով, մինչդեռ Պորտոսը իր հակառակորդին երդվում էր ծակծկել նրան սուսերամարտի արվեստում հայտնի բոլոր եղանակներով:

— Այսպես ուրեմն, սա առաջին համարն է,— ասաց Աթոսը, երբ մի հինգ հարյուր քայլ հեռացել էին:

— Բայց ինչո՞ւ այդ մարդը հենց Պորտոսի օձիքից կպավ և ոչ թե մեզնից որևէ մեկի,— հարցրեց Արամիսը:

— Որովհետև Պորտոսը բոլորիցս բարձր էր խոսում, և այդ մարդը նրան պետի տեղ դրեց,— ասաց դ'Արտանյանը:

— Ես միշտ ասել եմ, որ այս երիտասարդ գասկոնաին խելքի ծով է,— մրմնջաց Աթոսը:

Եվ ճամփորդներն առաջ գնացին:

Բովուս նրանք երկու ժամով կանգ առան, որպեսզի ձիերին հանգիստ տան, մասամբ էլ հուսալով, թե Պորտոսը կհասնի իրենց հետևից: Երկու ժամն անցնելուց հետո տեսնելով, որ Պորտոսը չի երևում և նրա մասին ոչ մի տեղեկություն չկա, նրանք առաջ գնացին:

Բովից մի մղոնաչափ անցնելուց հետո, այնպիսի մի վայրում, որտեղ ճանապարհը սեղմվել էր երկու գառիվայրերի միջև, նրանց հանդիպեցին ութը թե տասը մարդ, որոնք օգտվելով նրանից, որ ճանապարհն այստեղ սալահատակած չէր, ձևացրին, թե իբր ճանապարհն են նորոգում: Իրականում նրանք փոսեր էին փորում և ջանասիրաբար խորացնում էին կավոտ ճանապարհի ակոսահետքերը:

Արամիսը, վախենալով, թե այդ արհեստական ցեխի մեջ իր բոտֆորտները կկեղտոտի, գայրացած գոռաց նրանց վրա: Աթոսը փորձ արեց լռեցնել նրան, բայց արդեն ուշ էր: Բանվորները սկսեցին ծաղրել ճանապարհորդներին և իրենց լկտիությամբ նույնիսկ հանդարտաբարո Աթոսին ստիպեցին գլուխը կորցնել և ձին քշել ուղիղ նրանցից մեկի վրա:

Այն ժամանակ այդ բոլոր մարդիկ քաշվեցին դեպի ուղեգրի առուն և զինվեցին այնտեղ թաքցրած հրացաններով: Մեր յոթ ուղևորները ստիպված եղան բառացիորեն անցնել նրանց խիտ շարքի միջով: Արամիսը ուսից վիրավորվեց գնդակով, իսկ մի ուրիշ գնդակ խրվեց Մուշկետոնի մարմնի փափուկ մասի մեջ գոտկատեղից մի քիչ ներքև: Մակայն միայն Մուշկետոնը ցած սահեց ձիուց, իր վերքը տեսնելու հնարավորություն չունենալով՝ նա, ըստ երևույթին, այդ վերքը շատ ավելի ծանր էր համարում, քան իրականում կար:

— Մա դարան է,— ասաց դ'Արտանյանը:— Մենք չենք կրակի, առաջ գնանք:— Արամիսը, թեպետև վիրավոր էր, բռնեց իր նժույզի բաշը, և ձին սլացավ մյուսների

հետևից: Մուշկետոնի ձին էլ հասավ նրանց և, առանց ձիավորի, շարքում իր տեղը գրավեց:

— Մենք պահեստի ձի կունենանք,— ասաց Աթոսը:

— Ես կգերադասեի պահեստի գլխարկ ունենալ,— պատասխանեց դ'Արտանյանը:— Իմ սեփական գլխարկը գն-դակը ցած գցեց: Դեռ լավ է, որ նամակը, որ տանում եմ ես, այդ գլխարկի մեջ չէր պահված:

— Այդ ամենը հասկանալի է,— նկատեց Արամիսը,— բայց նրանք կսպանեն ինեղճ Պորտոսին, երբ նա անցնելիս լինի սրանց մոտով:

— Եթե Պորտոսը ոտքի վրա լիներ,— ասաց Աթոսը,— ապա նա արդեն մեր հետևից հասած կլիներ. ես կարծում եմ, որ դիրք մտնելով՝ հարբեցողը ուշքի է եկել:

Նրանք սլացան էլի մի երկու ժամ, թեև ձիերն այնպես էին տանջվել, որ պետք էր երկյուղ կրել, թե շուտով դուրս կգան շարքից:

Ուղևորները թեքվեցին դեպի գյուղական ճանապարհը, հուսալով, թե այստեղ ավելի լավ կխուսափեն ընդհարումներից: Սակայն Կրեկերում Արամիսն ասաց, որ այլևս առաջ շարժվելու ուժ չունի: Եվ իրոք, այստեղ հասնելու համար հարկավոր էր ունենալ նրա արիությունը, որ նա թաքցնում էր արտաքին շքեղության ու նրբին շարժումների տակ: Բռպե առ բռպե նա գունատվում էր, և ստիպված էին նրան բռնած պահել թամբի վրա: Նրան ձիուց իջեցրին մի ինչ-որ պանդոկի դռան առաջ և մոտը թողին Բազենին, որը զինված ընդհարումների ժամանակ ավելի շուտ խանգարում էր, քան օգնում: Հետո նրանք նորից առաջ շարժվեցին, հուսալով, թե կգիշերեն Ամիենում:

— Գրողը տանի,— խոսեց Աթոսը, երբ փոքրիկ խումբը, որն այժմ արդեն բաղկացած էր միայն երկու տերերից ու երկու սպասավորներից, նորից ճանապարհ էր ընկել:— Հիմա արդեն այլևս ես ծուղակի մեջ չեմ ընկնի: Կարող եմ երաշխավորել, որ այստեղից մինչև Կալե հասնելը այլևս չեն կարող ինձ ստիպել նույնիսկ բերանս բաց անել: Երդվում եմ...

— Մի՛ երդվեք,— ընդհատեց նրան դ'Արտանյանը: — Ավելի լավ է մի քիչ ավելի արագ գնանք, եթե միայն ձիերը կդիմանան:

Եվ ճանապարհորդները խթանեցին իրենց ձիերին, որից ձիերն ասես նոր ուժ ու նոր կայտառություն ստացան:

Նրանք Ամիեն հասան կեսգիշերին և ձիերից իջան «Ոսկե Շուշան» հյուրանոցի առաջ:

Պանդոկապետը աշխարհիս ամենահարգևոր մարդը դուրս եկավ: Նա եկվորներին դիմավորեց մի ձեռքում մոմակալը բռնած, մյուսում՝ իր գիշերային թասակը: Նա ցանկություն հայտնեց իր երկու հյուրերից յուրաքանչյուրին հասկացնելու մի-մի առանձին հիանալի սենյակ: Դժբախտաբար այդ սենյակները գտնվում էին հյուրանոցի երկու հակադիր ծայրերում: Դ՛Ատանյանը և Աթոսը հրաժարվեցին: Հյուրանոցի տերը ասաց, որ ինքը նրանց արժանապատվությանը վայել ուրիշ սենյակներ չունի: Սակայն ճամփորդները պատասխանեցին, որ իրենք գիշերը անց կկացնեն ընդհա-նուր սենյակում, ներքնակների վրա, որոնք կարելի է փռել հատակին: Հյուրանոցի տերը փորձեց պնդել իր առաջարկությունը, ճամփորդները չզիջեցին: Եվ նա ստիպված եղավ հնազանդվել հյուրերի ցանկությանը:

Դեռ նոր էին անկողինները փռել և դուռը փակել, մեկ էլ բակից բախեցին լուսամուտների խլափեղկերը: Հարցրին, թե ո՛վ է, և ճանաչելով իրենց սպասավորների ձայները, լուսամուտը բաց արին:

Իսկապես՝ նրանք էին՝ Պլանշեն և Գրիմոն:

— Ձիերը մենակ Գրիմոն է կարող է պահել,— ասաց Պլանշեն: — Եթե պարոնները թույլ կտան, ես կպառկեմ այստեղ, դռան առաջ: Այսպիսով պարոնները կարող են վստահ լինել, որ ոչ ոք իրենց չի մոտենա:

— Իսկ ինչի՞ վրա կպառկես,— հարցրեց դ՛Արտանյանը:

— Ահա իմ անկողինը,— պատասխանեց Պլանշեն՝ ցույց տալով մի խտիտ ծղոտ:

— Դու իրավացի ես, եկ այստեղ,— ասաց դ՛Արտանյանը:— Հյուրանոցի տիրոջ սփաթը ինձ դուր չեկավ: Չափից դուրս քաղցրածոր էր:

— Ինձ ևս դուր չեկավ,— ավելացրեց Աթոսը:

Պլանշեն լուսամուտից ներս մտավ և դռան տակ պառկեց, իսկ Գրիմոն գնաց քնելու ախոռում, խոստանալով, որ վաղը առավոտյան ժամը հինգին բոլոր չորս ձիերն էլ պատրաստ կլինեն:

Գիշերը բավական հանգիստ անցավ: Ճիշտ է, ժամը երկուսին մոտ ինչ-որ մեկը փորձեց դուռը բաց անել, բայց Պլանշեն արթնանալով գոռաց՝ «Ո՞վ է»: Նրան պատասխանեցին, թե շփոթել են դուռը և հեռացան:

Առավոտյան ժամը չորսին ախոռից կատաղի աղմուկ լսվեց: Գրիմոն, ինչպես պարզվեց, փորձել էր ձիապան-ներին արթնացնել, և ձիապանները հարձակվել էին նրա վրա ու ծեծել: Ընկերները լուսամուտը բանալով տեսան, որ խեղճ Գրիմոն ուշաթափ փոված է բակում: Նրա գլուխը պատռված էր եղանի կոթով:

Պլանշեն իջավ բակ, որպեսզի ձիերը թամբի: Սա-կայն ձիերի ոտքերը ջարդված էին: Ճանապարհը շարունակել կարող էր միայն Մուշկետոնի ձին, որը նա-խորդ օրը հինգ թե վեց ժամ քայլել էր առանց ձիավորի, սակայն, ինչ-որ անհասկանալի թյուրիմացությամբ, հեքիմը, որին իբր թե ուղարկել էին հյուրանոցի տիրոջ ձիերից մեկից արյուն առնելու, սխալ-մամբ արյուն էր առել Մուշկետոնի ձիուց:

Դրությունը սկսում էր անհանգստություն առաջացնել. իրար հաջորդող այս բոլոր փորձանքները կարելի էր պատահականություն համարել, սակայն նույնպիսի հավանականությամբ կարելի էր համարել նաև դավադրության արդյունք: Աթոսը և դ'Արտանյանը փողոց դուրս եկան, իսկ Պլանշեն գնաց իմանալու, թե չի՞ կարելի արդյոք երեք ձի գնել: Պանդոկի դռան մոտ կանգնած էին երկու թամբած ու սանձված ձիեր՝ կայտառ և ուժեղ: Դրանք հենց այն էին, ինչ հարկավոր էր: Պլանշեն հարցրեց, թե որտեղ են այդ ձիերի տերերը: Նրան պատասխանեցին, որ տերերը գիշերը եղել են այստեղ, այս հյուրանոցում և այժմ պանդոկապետի հետ մաքրում են իրենց հաշիվը:

Աթոսը իջավ, որպեսզի գիշերելու փողը վճարի, իսկ դ'Արտանյանը և Պլանշեն կանգնած մնացին դռան մոտ:

Պանդոկապետը տեղավորված էր ցածր առաստաղով մի սենյակում, որ գտնվում էր շենքի խորքում: Աթոսին խնդրեցին գնալ այնտեղ:

Ներս մտնելով և ոչինչ չկասկածելով՝ Աթոսը հանեց երկու պիստոլ և մեկնեց պանդոկապետին: Պանդոկի տերը նստած էր վաճառասեղանի հետևը, որի դարակներից մեկը բաց էր: Նա դրամները վերցրեց և բռի մեջ շուռումուռ տալով հանկարծ գոռաց, թե դրանք կեղծ դրամներ են, և ինքը կհրամայի իսկույն ձերբակալել Աթոսին ու նրա ընկերներին որպես դրամանենգների:

— Սրիկա՛,— գոռաց Աթոսը մի քայլ անելով դեպի նա:— Ես քո ականջները կկտրեմ:

Բայց հենց նույն րոպեին չորս մարդ մինչև աստամները զինված դուրս թռան կողքի դռնից և հարձակվեցին Աթոսի վրա:

— Ես ծուղակի մեջ ընկա՛,— գոռաց Աթոսը իր թոքերի ամբողջ ուժով:— Դու սլացիր, դ՛Արտանյան: Խթանիր ձիուդ,— և երկու անգամ ատրճանակից կրակեց:

Դ՛Արտանյանը և Պլանշեն չհապաղեցին: Դռան մոտ կապված ձիերն արձակելով՝ նրանք թռան նրանց վրա և խթանելով սրարշավ ճանապարհ ընկան:

— Դու չտեսա՞ր, թե ինչ եղավ Աթոսի հետ,— հարցրեց դ՛Արտանյանը Պլանշեին՝ առանց դանդաղեցնելու ընթացքը:

— Ա՛խ, տե՛ր իմ,— պատասխանեց Պլանշեն,— ես տեսա, թե ինչպես նա երկու կրակոցով փռեց հարձակվողներից երկուսին, ապա դռան ապակու միջով այնպես երևաց, թե նա կովի է բռնվել մյուսների հետ:

— Կեցցե՛ս, Աթոս,— շնչաց դ՛Արտանյանը:— Եվ ինչ-պիսի՛ ցավ, որ ստիպված ենք նրան թողնել մենակ: Ասենք՝ հնարավոր բան է, որ մի քանի քայլ այն կողմ մեզ էլ նույն վիճակն է սպասում: Հառա՛ջ, Պլանշե՛, հառա՛ջ: Դու հիանալի տղա ես:

— Ախր ես ասում էի ձեզ, տեր իմ,— պատասխանեց Պլանշեն,— ասում էի, որ պիկարդացուն կարելի է ճանաչել աստիճանաբար: Մյուս կողմից էլ՝ ես այստեղ իմ հայրենի վայրերումն եմ, և այդ ինձ սիրտ է տալիս:

Եվ երկուսը՝ Է՛լ ավելի ուժեղ խթանելով ձիերին՝ առանց կանգ առնելու արշավեցին մինչև Սենտ Օմեր: Սենտ Օմերում նրանք ձիերին հանգիստ տվին առանց սանձերը ձեռքից բաց թողնելու, վախենալով, թե նոր անակնկալի կհանդիպեն, և հենց փողոցում, ոտքի վրա նախաճաշելով՝ առաջ սլացան:

Մինչև Կալեի դարպասը հարյուր քայլի վրա դ՛Արտանյանի ձին ընկավ և այլևս ոտքի կանգնել չէր կարող. արյունը հորդում էր նրա ռունգերից ու աչքերից: Մնում էր Պլանշեի ձին, բայց այն էլ կանգ էր առել և տեղից շարժել չէր հաջողվում:

Բարեբախտաբար, ինչպես արդեն ասացինք, նրանք քաղաքից ընդամենը մի հարյուր քայլ էին հեռու: Ձիերը ճանապարհին թողնելով վազեցին նավահանգիստ: Պլանշեն դ՛Արտանյանի ուշադրությունը դարձրեց ինչ-որ ազնվականի վրա, որն, ըստ երևույթին, հենց նոր էր այդտեղ հասել իր սպասավորի հետ և գնում էր նույն ուղղությամբ, ընդամենը մի հիսուն քայլ նրանցից առաջ:

Նրանք շտապեցին հասնել այդ մարդու հետևից, որը, երևում էր, ինչ-որ տեղ էր շտապում: Նրա բոտֆորտները ծածկված էին փոշու շերտով, և նա սրան-նրան հարցնում էր, թե չի՞ կարող արդյոք ինքը անհապաղ մեկնել Անգլիա:

— Դրանից ավելի հասարակ բան չկա,— պատասխանեց նրան մի նավատեր, որի նավը միանգամայն պատրաստ էր մեկնելու,— բայց այսօր առավոտյան հրաման է եկել՝ ոչ ոքի բաց չթողնել առանց կարդիանալի թույլտվության:

— Ես այդպիսի թույլտվություն ունեմ,— ասաց ազնվականը՝ գրպանից հանելով մի թուղթ:— Ահա այն:

— Թող նավահանգստի պետը նշում անի դրա վրա,— ասաց նավապետը:— Եվ հետո արդեն ուրիշ նավ մի որոնեք բացի իմ նավից:

— Իսկ որտե՞ղ գտնեմ ես նավահանգստի պետին:

— Նա գտնվում է քաղաքից դուրս, իր տանը:

— Եվ այդ տունը...

— Քաղաքից հեռու է մի քառորդ մղոն: Ահա, այստեղից երևում է, այն բլրի ստորոտի տունն է:

— Լավ,— ասաց եկվորը:

Եվ իր սպասավորի ուղեկցությամբ նա ճանապարհ ընկավ դեպի նավահանգստի պետի տուն:

Մի հիսուն քայլ այդ երկուսին առաջ թողնելով՝ դ'Արտանյանը և Պլանշեն հետևեցին նրանց:

Երբ քաղաքի սահմաններից դուրս եկան, դ'Արտանյանը քայլերն արագացրեց և մի փոքրիկ անտառի եզրին հասավ եկվոր ազնվականի հետևից:

— Տե՛ր իմ,— սկսեց դ'Արտանյանը:— Դուք, երևում է, շա՛տ եք շտապում:

— Շատ եմ շտապում, տե՛ր իմ:

— Ես չափազանց ափսոսում եմ,— շարունակեց դ'Արտանյանը:— Սակայն, նկատի ունենալով, որ ես ևս շատ եմ շտապում, ուզում էի խնդրել ձեզ՝ մի լավություն անել ինձ:

— Այսինքն՝ ի՞նչ:

— Ես ուզում էի խնդրել ձեզ, որ ինձ թույլ տաք առաջ անցնել:

— Անկարելի է, տե՛ր իմ,— պատասխանեց ազնվականը:— Ես վաթսուն մղոն ճանապարհն անցել եմ քառասունչորս ժամում, և անհրաժեշտ է, որ վաղը կեսօրին Լոնդոնում լինեմ:

— Ես նույն տարածությունն անցել եմ քառասուն ժամում, և ինձ հարկավոր է վաղը ժամը տասին Լոնդոնում լինել:

— Շատ եմ ափսոսում, տե՛ր իմ, բայց ես առաջինն եմ եկել և առաջինը կգնամ:

— Շատ եմ ավստսում, տե՛ր իմ, բայց ես երկրորդն եմ եկել և առաջինը կգնամ:

— Թագավորի հրամանո՛վ,— գոչեց ազնվականը.

— Իմ սեփական՝ ն ցանկությամբ,— ասաց դ'Արտանյանը:

— Դուք, երևում է, կռի՞վ եք փնտրում:

— Հապա էլ ուրիշ ի՞նչ:

— Ի՞նչ է հարկավոր ձեզ:

— Դուք ուզո՞ւմ եք իմանալ այդ:

— Հասկանալի է:

— Դե ուրեմն՝ ինձ հարկավոր է այն հրամանը, որ դուք ունեք և որը ես չունեմ, թեև այն չափազանց անհրաժեշտ է ինձ:

— Հուսով եմ, որ դուք կատա՞կ եք անում:

— Ես երբեք կատակ չեմ անում:

— Ճանապարհ տվեք ինձ:

— Դուք չե՛ք անցնի:

— Ա՛յ քաջ պատանի: Ես կփշրեմ ձեր գլուխը: Լյուբեն, տո՛ւր ատրճանակները:

— Պլանշե՛,— ասաց դ'Արտանյանը,— հաշիվ տես սպասավորի հետ, իսկ ես գործ կունենամ տիրոջ հետ:

Պլանշեն իր առաջին քաջագործություններից սիրտ առած՝ հարձակվեց
Լյուբենի վրա և ուժի ու ճարպկության շնորհիվ տապալեց նրան մեջքի վրա, ծունկը
դրեց կրծքին:

— Դուք ձեր գործն արեք, տե՛ր իմ,— ձայն տվեց Պլանշեն:— Ես իմ գործն արդեն
արի:

Այս ամենը տեսնելով՝ ազնվականը սուսերը դուրս քաշեց և հարձակվեց
դ՛Արտանյանի վրա: Սակայն նա գործ ուներ ուժեղ հակառակորդի հետ: Երեք
վայրկյանում դ՛Արտանյանը երեք վերք հասցրեց նրան՝ ամեն մի հարվածին ասելով.

— Ահա՛, սա Աթոսի համար: Ահա՛, սա Պորտոսի համար: Ահա՛, սա Արամիսի
համար:

Երրորդ հարվածին եկվոր ազնվականը գետին տապալվեց:

Ենթադրելով, որ նա մեռած է կամ ուշաթափ, դ՛Արտանյանը մոտեցավ,
որպեսզի հրամանը վերցնի նրա-նից: Սակայն երբ նա ձեռքը մեկնեց խուզարկելու,
վիրավորը, որը սուսերը ձեռքից բաց չէր թողել, հարվածեց նրա կրծքին:

— Սա էլ անձամբ ձեզ,— ասաց նա:

— Իսկ այս՝ իմ կողմից: Վերջին հարվածը՝ որպես նախաճաշ,— կատաղաբար
գոռաց դ՛Արտանյանը՝ չորրորդ հարվածով սուսերը նրա փորը խրելով ու գետնին
մեխելով նրան:

Այս անգամ ազնվականն աչքերը փակեց և գիտակցությունը կորցրեց:

Շոշափելով այն գրպանը, որտեղ եկվորը պահել էր մեկնելու թույլտվությունը,
դ՛Արտանյանը վերցրեց թուղթը: Թույլտվությունը գրված էր կոմս դը Վարդի անունով:

Մի վերջին հայացք գցելով գեղեցկատես երիտասարդի վրա, որը հազիվ թե
քսանհինգ տարեկանից ավելի լիներ և որին նա թողնում էր այստեղ ուշաթափ
վիճակում, գուցե և մեռած, դ՛Արտանյանը հառաչեց, մտածելով բախտի
տարօրինակությունների մասին, որը մարդկանց ստիպում է ոչնչացնել իրար՝ երրորդ

անձնավորության շահերի համար, անձնավորություններ, որոնք բռնորովին օտար են և հաճախ նույնիսկ պատկերացում էլ չունեն այն մարդկանց մասին, որոնք իրար սպանում են իրենց համար:

Սակայն շուտով նրան այս խոհերից հանեց Լյուբենը, որն ամբողջ կոկորդով օգնություն էր գոռում:

Պլանշեն նրա կոկորդից բռնած սեղմում էր ամբողջ ուժով:

— Տե՛ր իմ,— ասաց նա,— քանի ես նրան, ահա, այսպես բռնած եմ, նա կլռի, բայց բավական է, որ բաց թողի, նորից կսկսի գոռալ: Ես տեսնում եմ, որ սա նորմանդացի է, իսկ նորմանդացիք համառ մարդիկ են:

Եվ իրոք, որքան էլ Պլանշեն ամուր էր սեղմում նրա կոկորդը, Լյուբենն էլի փորձեր էր անում ինչ-որ ձայներ արձակելու:

— Սպասիր,— ասաց դ'Արտանյանը:

Եվ թաշկինակը հանելով խցկեց այդ համառ մարդու բերանը:

— Իսկ հիմա,— առաջարկեց Պլանշեն,— ծառից կապենք սրան:

Նրանք այդ արին ամենայն խնամքով: Հետո կոմս դը Վարդին էլ քարշ տվին իր սպասավորի մոտ: Երեկոն իջնում էր: Վիրավորը և նրա ծառան ոտք ու ձեռքերը կապած՝ գտնվում էին ճանապարհից դուրս, թփերի մեջ, և ակներև էր, որ մինչև առավոտ այդտեղ կմնան:

— Իսկ այժմ՝ նավահանգստի պետի մոտ,— ասաց դ'Արտանյանը:

— Բայց դուք կարծես վիրավորված եք,— նկատեց Պլանշեն:

— Դատարկ բան է: Ջբաղվենք ամենաշտապ գործով, իսկ հետո կվերադառնանք իմ վերքին, ի դեպ, իմ կարծիքով սա վտանգավոր վերք չէ: Եվ նրանք երկուսն էլ շտապ քայլեցին դեպի հարգարժան պաշտոնյայի տուն:

Նրան զեկուցեցին կոմս դը Վարդի գալու մասին:

Դ'Արտանյանին տարան կաբինետ:

— Դուք ունե՞ք կարդինալի ստորագրությամբ թույլտվություն,— հարցրեց նավահանգստի պետը:

— Այո, տեր իմ,— պատասխանեց դ'Արտանյանը:— Ահա այն:

— Դե, լավ. թույլտվությունը լիովին կարգին է: Նույնիսկ ցուցում կա՝ աջակցել ձեզ:

— Միանգամայն բնական է,— ասաց դ'Արտանյանը:— Ես նորին սրբազնության մերձավոր մարդկանցից մեկն եմ:

— Նորին սրբազնությունը, երևում է, ցանկանում է ինչ-որ մեկին արգելք հանդիսանալ Անգլիա անցնելու:

— Այո, ինչ-որ դ'Արտանյան անունով բեարնացի ազնվականի, որը եկել է Փարիզից իր երեք ընկերների ուղեկցությամբ, մտադիր լինելով անցնել Լոնդոն:

— Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Ո՞ւմ:

— Այդ դ'Արտանյանին:

— Շատ լավ եմ ճանաչում:

— Այդ դեպքում ասացե՞ք ինձ նրա նշանները:

— Դրանից հեշտ բան չկա:

Եվ դ'Արտանյանը ամենայն մանրամասնությամբ թվեց կոմս դը Վարդի նշանները:

— Ո՞վ է ուղեկցում նրան:

— Իր սպասավորը՝ Լյուբեն անունով:

— Կհսկենք, և եթե դրանք մեր ձեռքն ընկան, նորին սրբազնությունը կարող է հանգիստ լինել. մենք ուժեղ հսկողությամբ Փարիզ կուղարկենք նրանց:

— Եվ դրանով իսկ,— ասաց դ'Արտանյանը,— դուք կարժանանաք կարդինալի բարեհաճությանը:

— Երբ վերադառնաք, կոմս, դուք կտեսնե՞ք նորին սրբազնությանը:

— Անտարակոյս:

— Հաղորդեցեք նրան, խնդրում եմ, որ ես նրա հավատարիմ ծառան եմ:

— Անպայման կհաղորդեմ:

Այս խոստումից ուրախացած՝ նավահանգստի պետը թույլտվության վրա նշում արեց և այն վերադարձրեց դ'Արտանյանին:

Դ'Արտանյանն ավելորդ սիրալիրությունների վրա ժամանակ չկորցրեց. նա գլուխ տվեց նավահանգստի պետին, շնորհակալություն հայտնեց և հեռացավ:

Դուրս գալով ճանապարհ՝ նա և Պլանշեն քայլերն արագացրին և անտառը շրջանցելով՝ քաղաք մտան մյուս դարպասից:

Նավը առաջվա պես կանգնած էր՝ մեկնելու պատրաստ: Նավատերը ավին սպասում էր:

— Ինչպե՞ս եղավ,— հարցրեց նա տեսնելով դ'Արտանյանին:

— Ահա իմ թույլտվությունը նավահանգստի պետի ստորագրությամբ:

— Իսկ մյուս պարո՞նը:

— Նա այսօր չի մեկնում,— ասաց դ'Արտանյանը:— Բայց դուք հանգիստ եղեք, ես կվճարեմ երկուսիս համար:

— Այդ դեպքում ճանապարհ ընկնենք,— ասաց նավատերը:

— Ճանապարհ ընկնենք,— կրկնեց դ'Արտանյանը:

Նա և Պլանշեն ցատկեցին մակույկի մեջ: Հինգ րոպե անց նրանք արդեն նավի վրա էին:

Լավ ժամանակին էր: Նրանք ընդամենը մի կես մղոն էին հեռացել ափից, երբ դ'Արտանյանն ափին նկատեց բռնկում, ապա և նրանց հասավ կրակոցի որոտը:

Այդ թնդանոթի կրակոց էր, որ նավահանգստի փակումն էր նշանակում:

Այժմ ժամանակն էր, որ դ'Արտանյանն իր վերքով զբաղվի: Բարեբախտաբար, ինչպես և նա ենթադրում էր, վերքը շատ էլ վտանգավոր չէր. սուսերի ծայրը դեմ էր առել կողին և սահել ոսկորի երկարությամբ: Շապիկն անմիջապես կպել էր վերքին, և ընդամենը մի քանի կաթիլ արյուն էր հոսել:

Դ'Արտանյանը հոգնածությունից ուժասպառ էր եղել: Նրա համար մի ներքնակ փռեցին տախտակամածին, նա մեկնվեց այդ ներքնակի վրա և իսկույն քուն մտավ:

Հետևյալ օրը լուսաբացին նրանք երեք թե չորս մղոն հեռու էին Անգլիայի ափերից: Ամբողջ գիշերը թույլ քամի էր փչել, և նավը առաջ էր շարժվել բավա-կան դանդաղ:

Ժամը տասին նավը խարիսխի զցեց Դուվրի նավահանգստում:

Տասն անց կեսին դ'Արտանյանը ոտք դրեց անգլիական հողին և գոչեց.

— Վերջապե՛ս հասա նպատակին:

Բայց այդ դեռ բոլորը չէր. հարկավոր էր Լոնդոն հասնել: Անգլիայում փոստը կանոնավոր էր աշխատում: Դ'Արտանյանը և Պլանշեն մեկական ձի վերցրին: Առջևից սլանում էր փոստատարը: Չորս ժամ հետո նրանք հասան մայրաքաղաքի դարպասին:

Դ'Արտանյանը Լոնդոնը չէր տեսել. անգլերեն ոչ մի բառ չէր իմանում, բայց նա մի թղթի կտորի վրա գրել էր դուքս Բեկինգհեմի անունը, և իսկույն նրան ցույց տվին դքսի պալատը:

Դուքսը գտնվում էր Վինձորում, որտեղ թագավորի հետ միասին որս էր անում:

Դ'Արտանյանն իր մոտ կանչեց դքսի սենեկապետին, որը բոլոր ճանապարհորդությունների ժամանակ ուղեկցում էր իր տիրոջը և հիանալի խոսում էր ֆրանսերեն: Երիտասարդ գասկոնացին նրան բացատրեց, որ ինքը հենց նոր է եկել Փարիզից մի չափազանց կարևոր գործով և անհրաժեշտ է, որ խոսի դքսի հետ:

Այն վստահությունը, որով խոսում էր դ'Արտանյանը, համոզեց Պատրիկին. այդպես էին կոչում մինիստրի սպասավորին: Նա հրամայեց երկու ձի թամբել և ինքն անձամբ հանձն առավ առաջնորդել երիտասարդ գվարդիականին: Ինչ վերաբերում է Պլանշեին, խեղճը ձիուց ցած իջնելուց հետո ուղղակի փայտացել էր և հոգնածությունից կիսամեռ եղել: Դ'Արտանյանը երկաթե ամրություն ուներ:

Վինձորի ամրոց հասնելով՝ նրանք հարցրին, թե որտեղ է դուքսը: Թագավորը և դուքս Բեկինգհեմը այդտեղից երկու-երեք մղոն հեռու ճահիճներում որս էին անում բազեներով:

Քսան բռպե չանցած դ'Արտանյանը և իր ուղեկիցը հասան հիշյալ վայրը: Շուտով Պատրիկը լսեց դքսի ձայնը, որ բազեին էր կանչում:

— Ինչպե՞ս կհրամայեք զեկուցել միլորդ դքսին,— հարցրեց Պատրիկը:

— Ասացեք՝ այն երիտասարդն է, որը ձեզ հետ վեճի էր բռնվել Սամարացի կնոջ արձանի դիմաց, Նոր կամրջի վրա:

— Ներկայանալու տարօրինակ՝ կ' ձև:

— Եվ դուք կտեսնեք, որ դա ավելի լավը կլինի, քան որևէ այլ ձև:

Պատրիկը բաց թողեց իր ձին քառատրոփ: Հասնելով դքսին՝ նա հիշատակված ձևով զեկուցեց, որ մի սուր-հանդակ է սպասում նրան: Դուքսն իսկույն հասկացավ, որ խոսքը վերաբերում է դ'Արտանյանին և հասկանալով, որ Ֆրանսիայում այնպիսի մի բան է պատահել, որի մասին անհրաժեշտ են համարում հաղորդել իրեն, նա միայն հարցրեց, թե որտե՞ղ է գտնվում այդ նորությունները բերող մարդը: Հեռվից գվարդիական համազգեստը ճանաչելով՝ նա սրարշավ բաց թողեց իր ձին և հասավ դ'Արտանյանի մոտ:

— Չլինի՞ որևէ դժբախտություն է պատահել թագուհուն,— գոչեց դուքսը, և նրա այդ բացականչության մեջ զգացվում էր նրա ամբողջ սերն ու հոգատարությունը:

— Չեմ կարծում, բայց և այնպես ենթադրում եմ, որ նրան սպառնում է մի մեծ վտանգ, որից փրկել կարող է միայն ձերո՞ղ ողորմածությունը: — Ե՛ս,— գոչեց դուքսը:— Արդյոք ես երջանկություն կունենամ գեթ որևէ չափով օգտակար լինելու նրան: Խոսեցե՛ք: Շուտ ասացեք:

— Ահա ձեզ նամակ,— ասաց դ'Արտանյանը:

— Նամա՞կ: Ումի՞ց:

— Կարծում եմ՝ նորին մեծություն թագուհուց:

— Նորին մեծությունի՞ց,— հարցրեց դուքսը այնպես խիստ գունատվելով, որ դ'Արտանյանը մտածեց՝ չլինի՞ վատ է զգում իրեն:

Դուքսը ծրարը բացեց:

— Այս ի՞նչ է,— հարցրեց նա՝ դ'Արտանյանին մատնացույց անելով նամակի ծակված տեղը:

— Ա՛խ,— ասաց դ'Արտանյանը:— Ես այդ չէի էլ նկատել: Երևի կոմս դը Վարդի սուսերն է ծակել այդ, երբ այն իմ կուրծքը խրեց:

— Դուք վիրավորված եք,— հարցրեց դուքսը՝ նամակը բանալով:

— Դատարկ բան է,— ասաց դ'Արտանյանը,— մի չանգովածք:

— Օ՛, երկինք, այս ինչ եմ իմանում,— գոչեց դուքսը:— Պատրի՛կ, մնա այստեղ, կամ՝ ո՛չ, ավելի լավ է հասիր թագավորին, որտեղ էլ լինի նա, և հաղորդիր, որ ես նորին մեծությանն ամենախոնարհաբար խնդրում եմ ներել ինձ, բայց մի չափազանց կարևոր գործ ինձ Լոնդոն է կանչում: Գնա՛նք, պարոն, գնա՛նք:

Եվ երկուսն էլ ամբողջ թափով սլացան դեպի մայրաքաղաք:

XXI. Կոմսուհի Վինտեր

Ճանապարհին դուքսը հարցուփորձ արեց դ'Արտանյանին և իմացավ եթե ո՛չ ամեն բան, ինչ պատահել էր, գոնե այն, ինչ հայտնի էր երիտասարդին: Երիտասարդ գվարդիականից լսածները միացնելով իր սեփական հիշողություններին՝ դուքս Բեկինգհեմը կարողացավ շատ թե քիչ արագ գաղափար կազմել այն դրության մասին, որի լրջությունը նշված էր թագուհու նամակում, չնայած նրա հակիրճությանն ու անորոշությանը: Բայց դքսին առանձնապես զարմացնում էր այն, որ կարդինալին, որի համար այնքան կարևոր էր, որ այդ երիտասարդը ոտք չդնի անգլիական ափի վրա, չի հաջողվել խանգարել նրա ճանապարհը: Երբ դուքսն իր այդ զարմանքն արտահայտեց, դ'Արտանյանը պատմեց, թե ինչ նախազգուշական միջոցներ էր ձեռք առել ինքը, ինչպես իր երեք ընկերների շնորհիվ, որոնց նա վիրավոր ու արյունաշաղախ ստիպված է եղել թողնել ճանապարհին, իրեն հաջողվել է պրծնել միայն սուսերի մեկ հարվածով, որը և ծակել է թագուհու նամակը, բայց որի համար ինքն այդքան սոսկալի հաշիվ է տեսել կոմս դը Վարդի հետ: Լսելով դ'Արտանյանին, որն այս ամենը պատմում էր մեծագույն պարզությամբ, դուքսը մերթընդմերթ նայում էր երիտասարդին, ասես չհավատալով, որ այդպիսի հեռատեսությունը, այդպիսի քաջությունն ու նվիրվածությունը կարող են սազել մի պատանու, որի քսան տարին հազիվ թե լրացած լիներ:

Ձիերը սլանում էին մրրիկի պես, և մի քանի րոպեից նրանք հասան Լոնդոնի դարպասին: Դ'Արտանյանը կարծում էր, որ, քաղաք մտնելով, դուքսը կդանդաղեցնի ընթացքը, սակայն նա շարունակում էր սլանալ նույն արագությամբ, ամենևին չհոգալով, որ ձիու ոտքերի տակ է գցում իր ճանապարհին հանդիպած անզգույշ անցորդներին: Քաղաքի միջին մասով անցնելիս այդպիսի մի քանի դեպք եղավ, բայց

Բեկինգհեմը նույնիսկ երեսը շուռ չտվեց տեսնելու, թե ինչ եղան իր տապալած մարդիկ: Դ՛Արտանյանը հետևում էր նրան, թեև շուրջը հնչում էին աղաղակներ, որոնք շատ նման էին նզովքի:

Մտնելով իր պալատի բակը՝ դուքսը ցած թռավ ձիուց և այլևս նրա մասին չհոգալով, սանձը բաց թողնելով արագ վեր վազեց սանդուղքով: Դ՛Արտանյան հետևեց նրան, թեև անհանգստանում էր ազնիվ կենդանիների համար, որոնց արժանիքն արդեն գնահատել էր նա: Եվ շատ ուրախացավ, երբ նկատեց, որ երեք-չորս ծառա գոմից ու խոհանոցից դուրս վազելով նետվեցին դեպի ձիերը և տարան նրանց:

Դուքսն այնպես արագ էր գնում, որ դ՛Արտանյանը հազիվ էր հասնում հետևից: Նա անցավ մի քանի դահլիճներով, որոնք կահավորված էին այնպիսի շքեղությամբ, որի մասին մտածել անգամ չէին կարող Ֆրանսիայի անվանի ազնվականները, և վերջապես մտավ ննջարան, որը ճաշակի ու հարստության մի հրաշք էր: Անկողնախորշում երևում էր մի դուռ, որը կիսով չափ թաքցրած էր պատի վարագույրով: Դուքսը այդ դուռը բաց արեց ոսկե բանալիով, որ նա կրում էր վզին, ոսկե շղթայից կախված:

Դ՛Արտանյանը համեստորեն կանգ էր առել մի քիչ հեռու, սակայն դուքսը դեռ նվիրական սենյակի շեմքում շուռ գալով դեպի երիտասարդ գվարդիականը և նկատելով նրա անվճռականությունը՝ ասաց.

— Գնա՛նք: Իսկ եթե դուք պատիվ ունենաք տեսնելու նորին մեծություն թագուհուն, պատմեցեք նրան այն ամենը, ինչ կտեսնեք այստեղ:

Այս հրավերից սիրտ առած՝ դ՛Արտանյանը հետևեց դքսին, և դուռը ծածկվեց նրանց հետևից:

Նրանք մտել էին մի փոքրիկ մատուռ, որ ծածկված էր պարսկական ոսկեկար մետաքսով և պայծառորեն լուսավորված բազմաթիվ մոմերով:

Ջոհասեղանի նման մի տեղ, որը ծածկված էր երկ-նագույն թավիշն ամպիոլանիով և պսակազարդված կարմիր ու սպիտակ փետուրներով, կանգնած էր Աննա Ավստրիացու մարդահասակ պորտրեն, այնքան նման իսկականին, որ դ՛Արտանյանը անակնկալից մի ճիշտ արձակեց. թվում էր, թե թագուհին հիմա կխոսի:

Ջոհաստեղանին, ուղիղ նկարի տակ դրված էր մի տուփիկ, որի մեջ պահվում էր աղամանդե զարդը:

Դուքսը մոտեցավ սեղանին և ծունկ չոքեց, ինչպես քահանան՝ խաչելության առաջ: Ապա նա բաց արեց տուփիկը:

— Վերցրեք—, ասաց նա տուփիկից հանելով երկնա-գույն մի ժապավեն, որի վրա շողշողում էին աղամանդները:— Ահա այն, անգին զարդը: Ես երդվել էի, որ այս պիտի թաղվի ինձ հետ միասին: Թագուհին է տվել ինձ, թագուհին էլ ետ է վերցնում: Թող լինի նրա կամքը, ինչպես տեր աստծու կամքը՝ հար և հավիտյան:

Եվ նա սկսեց մեկը մյուսի հետևից համբուրել ժապավենին կարված զարդերը, որոնցից պետք է բաժանվեր: Ու հանկարծ նրա կրծքից մի սոսկալի ճիչ դուրս թռավ:

— Ի՞նչ պատահեց,— անհանգստացած հարցրեց դ'Արտանյանը:— Ի՞նչ եղավ ձեզ, միլորդ:

— Ամեն ինչ կորած է,— գոչեց դուքսը մահու պես գունատված:— Երկու զարդ պակասում է. մնացել է միայն տասը:

— Միլորդ, դուք կորցրե՞լ էք արդյոք, թե ենթադրում եք, որ գողացել են ձեզնից:

— Գողացել են ինձնից, և այդ գողությունը կարդինալի սարքածն է: Նայեցեք, ժապավենները, որոնցից կախված են եղել զարդերը, կտրված են մկրատով:

— Եթե միայն միլորդը կարողանար իմանալ, թե ով է կատարել այդ գողությունը... Գուցե թե զարդերը դեռևս այդ անձի մոտ են գտնվում:

— Սպասեցեք, սպասեցեք,— ասաց դուքսը:— Ես այս զարդը ինձ վրա կրել եմ միայն մեկ անգամ, Վինձորում, թագավորական պարահանդեսին: Կոմսուհի Վինտերը, որի հետ մինչ այդ ես գժտված էի, այդ պարահանդեսին ակնհայտորեն հաշտվել էր ուզում ինձ հետ: Այդ հաշտությունը սոսկ խանդոտ կնոջ վրեժ է եղել: Այդ օրվանից նա այլևս իմ աչքին չի երևացել: Կարդի-նալի լրտեսն է այդ կինը:

— Մի՞թե ամբողջ աշխարհում ցրված են նրա լրտեսները,— հարցրեց դ'Արտանյանը:

— Օ՛, այո, այո,— խոսեց դուքսը՝ կատաղությունից ատամները սեղմելով:— Այո, դա սուկալի հակառակորդ է: Բայց ո՞ր օրն է նշանակված պարահանդեսը:

— Եկող երկուշաբթի:

— Եկող երկուշաբթի՞: Դեռ հինգ օր ժամանակ կա, որ ավելի քան բավական է: Պատրի՛կ,— ձայն տվեց դուքսը մատուռի դուռը բանալով:

Դքսի սենեկապետը շեմքում երևաց:

— Կանչե՛լ իմ ակնագործին ու քարտուղարին:

Սենեկապետը հեռացավ լուռ և այնպիսի արագությամբ, որ ցույց էր տալիս նրա կույր ու անտրտունջ հնազանդության սովորությունը:

Սակայն, թեև ակնագործին առաջինն էին կանչել, քարտուղարն ավելի շուտ ներկայացավ: Եվ այդ միանգամայն բնական էր, որովհետև նա հենց այդ տանն էր ապրում, նա Բեկինգհեմին գտավ ննջարանում, սեղանի մոտ նստած: Դուքսն ինքն իր ձեռքով ինչ-որ հրաման-ներ էր գրում:

— Պարոն Ջեկսոն՛ն,— դարձավ նա ներս մտնողին,— դուք հենց այս բոպեին պետք է գնաք լորդ-կանցլերի մոտ և ասեք նրան, որ այս հրամանների կատարումը ես անձամբ նրա վրա եմ դնում: Ես ցանկանում եմ, որ սրանք անհապաղ հրապարակվեն:

— Բայց, ձերդ պայծառափայլություն,— նկատեց քարտուղարը՝ արագ աչքի անցկացնելով գրածը,— ի՞նչ պատասխանեմ ես, եթե լորդ-կանցլերը հարցնի ինձ, թե ի՞նչն է այսպիսի արտակարգ միջոցի պատճառը:

— Պատասխանեցեք, որ այդ է իմ ցանկությունը և որ ես պարտավոր չեմ որևէ մեկին հաշիվ տալու իմ գործողությունների մասին:

— Արդյոք լորդ-կանցլերը նույնպիսի՞ պատասխան պիտի տա նորին մեծությանը, եթե պատահաբար նորին մեծությունը ցանկանա իմանալ, թե ինչու այսուհետև ոչ մի նավ չպետք է դուրս գա Մեծ Բրիտանիայի նավահանգիստներից,— ժպիտը դեմքին հարցրեց քարտուղարը:

— Դուք իրավացի եք, պարոն,— պատասխանեց Բեկինգհեմը:— Թող այդ դեպքում լորդ-կանցլերը թագավորին ասի, որ ես որոշել եմ պատերազմ հայտարարել, և այդ միջոցառումը իմ առաջին թշնամական գործողությունն է Ֆրանսիայի դեմ:

Քարտուղարը գլուխ տվեց և դուրս գնաց:

— Այս կողմից մենք կարող ենք հանգիստ լինել,— ասաց դուքսը՝ դառնալով դ'Արտանյանին:— Եթե զարդերը դեռ Ֆրանսիա չեն ուղարկված, ուրեմն այնտեղ կհասնեն միայն ձեր վերադարձից հետո:

— Ինչպե՞ս:

— Ես հենց նոր արգելք դրի, հայտարարելով, որ այժմ նորին մեծության նավահանգիստներում գտնվող նավերից ոչ մեկը իրավունք չունի ծով դուրս գալու, և հիմա ոչ մի նավ առանց հատուկ թույլտվության չի համարձակվի խարիսխը քաշել:

Դ'Արտանյանը զարմանքով նայեց այդ մարդուն, որը թագավորի վստահությամբ իրեն շնորհված անսահմանափակ իշխանությունը ծառայեցնում է իր սիրուն, Դուքսը երիտասարդ գասկոնացու դեմքի արտահայտությունից հասկացավ, թե ինչ է կատարվում նրա հոգում և ժպտաց:

— Այո,— ասաց նա,— ճշմարիտ է: Աննա Ավստրիացին իմ իսկական թագուհին է: Բավական է նրա մի խոսքը, և ես պատրաստ եմ դավաճանելու իմ երկրին, դավաճանելու իմ թագավորին, դավաճանելու աստծուն: Նա ինձ խնդրեց Լա-Ռոշելի բողոքականներին ցույց չտալ օգնություն, որը ես խոստացել էի նրանց, և ես հնազանդվեցի: Ես չկատարեցի նրանց տված իմ խոստումը, բայց միևնույն չէ՞, ես կատարեցի Աննա Ավստրիացու ցանկությունը: Եվ ահա, ինքներդ դատեցեք, մի՞ թե ես լիովին չվարձատրվեցի իմ այդ հնազանդության համար, չէ՞ որ ես այդ հնազանդությանն եմ պարտական այն, որ ստացա նրա դիմանկարը:

Դ՛Արտանյանը զարմացել էր. երբեմն ինչպիսի՛ անտեսանելի ու նուրբ թելերից է կախված լինում ժողովրդի բախտը և բազմաթիվ մարդկանց կյանքը:

Նա դեռևս խորասուզված էր իր մտքերի մեջ, երբ եր-ևաց ակնագործը: Դա մի իռլանդացի էր, իր գործի հմուտ վարպետ, որն ինքն էր խոստովանում, թե տարեկան հարյուր հազար ֆունտ է վաստակում հենց միայն դուքս Բեկինգհեմի պատվերներից:

— Պարոն Օ՛Ռեյլի ասաց դուքսը՝ նրան տանելով մատուռ:— Նայեցեք այս աղամանդե զարդերին և ասացեք, ի՞նչ կարժենա սրանցից յուրաքանչյուրը:

Ակնագործը մի հայացքով գնահատեց զարդի շքեղությունը, հաշվեց աղամանդների արժեքը և առանց տատանվելու պատասխանեց.

— Յուրաքանչյուրը մեկ ու կես հազար պիստոլ, միլորդ:

— Քանի՞ օրում կարելի է այսպիսի երկու զարդ պատրաստել: Դուք տեսնում եք, որ այստեղ երկուսը պակասում են:

— Մի շաբաթում, միլորդ:

— Ես յուրաքանչյուրին երեք հազար կվճարեմ: Դրանք ինձ հարկավոր են վաղը չէ մյուս օրը:

— Միլորդը կստանա:

— Դուք անգնահատելի մարդ եք, պարին Օ՛Ռեյլի, բայց այդ դեռ բոլորը չէ, այս զարդերը որևէ մեկին վստահել չի կարելի: Սրանք պետք է պատրաստվեն այստեղ, պալատում:

— Անհնարին է, միլորդ: Միմիայն ես կարող եմ այդ աշխատանքը կատարել այնպես, որ նոր ու հին զարդերի տարբերությունը բոլորովին աննկատելի լինի:

— Դե ուրեմն, պարոն Օ՛Ռեյլի, դուք իմ գերին եք: Եվ եթե հիմա ցանկանայիք դուրս գալ իմ պալատի սահմաններից, այդ ձեզ չէր հաջողվի: Հետևապես, հաշտվեցեք

դրա հետ: Տվեք ձեր օգնականների անունները, որոնք կարող են պետք գալ ձեզ, և ասացեք, թե ինչ գործիքներ պիտի բերեն նրանք:

Ակնագործը լավ էր ճանաչում դքսին, ուստի հասկանում էր, որ ամեն մի առարկություն անօգուտ բան է: Նա իսկույն հնազանդվեց անխուսափելի վիճակին: — Կթույլատրվի՞ ինձ տեղեկություն տալ իմ կնոջը, — հարցրեց նա:

— Օ՛, ձեզ նույնիսկ կթույլատրվի տեսակցել նրա հետ, իմ թանկագին պարոն Օ՛Ռեյլի: Ձեր կյանքն ամենևին էլ դաժան չի լինելու, մի հուզվեք: Սակայն ամեն մի անհանգստություն հատուցում է պահանջում: Ահա, բացի զարդերի համար պայմանավորված գումարից, ստացեք նաև հազար պիստոլի չեկ, որպեսզի մոռանաք ձեզ պատճառած անախորժությունները:

Դ՛Արտանյանը չէր կարողանում ուշքի գալ այն զարմանքից, որ առաջացրել էր այդ մինիստրը, որն այնպես ազատորեն տնօրինություններ էր անում մարդկանց ու միլիոնների նկատմամբ:

Մինչ այդ ակնագործը մի նամակ գրեց կնոջը, որին կցեց նաև հազար պիստոլի չեկը և խնդրեց ուղարկել իրեն իր օգնականներից ամենահմուտին, ադամանդների մի հավաքածու, որոնց ճշգրիտ քաշն ու հատկությունը նա իսկույն նշեց, ինչպես նաև իրեն անհրաժեշտ գործիքները:

Բեկինգհեմն ակնագործին տարավ նրա համար նախատեսված սենյակը, որը մի կես ժամում վերածվեց արհեստանոցի: Ապա նա յուրաքանչյուր դռան առաջ պահակ կանգնեցրեց, ամենախիստ հրաման տալով ոչ ոքի սենյակ չթողնել, բացի դքսի սենեկապետ Պատրիկից: Հարկ չկար ասելու, որ ակնագործ Օ՛Ռեյլին և նրա օգնականին արգելվեց որևէ պատճառաբանությամբ դուրս գնալ սենյակից:

Ամեն ինչ կարգադրելուց հետո դուքսը վերադարձավ դ՛Արտանյանի մոտ:

— Այժմ, իմ երիտասարդ բարեկամ, — ասաց նա, — Անգլիան պատկանում է մեզ երկուսիս: Ի՞նչ բան է հաճելի ձեզ և ի՞նչ եք կամենում:

— Անկողին, — պատասխանեց դ՛Արտանյանը: — Պետք է խոստովանեմ, որ այժմ ինձ ամենից ավելի անկողին է հարկավոր:

Դուքսը հրամայեց դ'Արտանյանին տանել իր ննջարանի կողքի սենյակը: Նա ուզում էր երիտասարդը շարունակ իր կողքին լինի, ո՛չ այն պատճառով, որ չէր վստահում նրան, այլ նրա համար, որ ունենա մի զրուցակից, որի հետ կարելի է անվերջ խոսել թագուհու մասին:

Մեկ ժամ անց՝ Լոնդոնում հրապարակվեց մի հրա-ման, որով նավերին արգելվում էր Օռվ դուրս գալ Ֆրանսիա մեկնելու համար: Բացառություն չէր արված նույնիսկ փոստատար նավի համար: Բոլորի կար-ծիքն այն էր, որ այդ նշանակում է պատերազմ հայտա-բարել երկու պետությունների միջև:

Երրորդ օրը առավոտյան ժամը տասնմեկին մոտ զարդերը պատրաստ էին և պատրաստված էին այնքան զարմանալիորեն նման, որ ինքը դուքսն էլ չէր կարողանում հները տարբերել նորերից և նույնիսկ այդպիսի բաներից ամենալավ հասկացողություն ունեցող մարդիկ անզոր կլինեին տարբերել դրանք:

Դուքսն իսկույն կանչեց դ'Արտանյանին:

— Ահա ադամանդե զարդերը, որոնց համար եկել էք դուք,— ասաց նա:— Եվ վկա եղեք, որ ես արի ամեն բան, ինչ մարդկային ուժը կպատեր:

— Հանգիստ եղեք, միլորդ: Ես կպատմեմ ամեն բան, ինչ տեսա այստեղ: Բայց ձերդ ողորմածությունն առանց տուփի է տալիս ինձ զարդերը:

— Տուփը ճանապարհին կխանգարի ձեզ: Բացի դրանից, այս տուփը շատ թանկ է ինձ համար, քանի որ միայն սա է մնում ինձ: Դուք կասեք, որ ես այն ինձ պահեցի:

— Ես բառ առ բառ կհաղորդեմ ձեր հանձնարարությունը, միլորդ:

— Իսկ հիմա,— ասաց դուքսը համառ նայելով երիտասարդին, ինչպե՞ս անեմ, որ գեթ երբևէ վարձահատույց լինեմ ձեզ:

Դ'Արտանյանը մինչև մազերի արմատները բռնկեց: Նա հասկացավ, որ դուքսը միջոց է որոնում ստիպելու իրեն մի որևէ ընձա ընդունելու, և այն միտքը, որ իր և իր

ընկերների արյան համար պիտի վճարվի անգլիական ոսկով, խոր զգվանք առաջացրեց:

— Խոսենք պարզ, միլո՛րդ.— պատասխանեց դ'Արտանյանը,— և կշռադատենք ամեն ինչ, որպեսզի թյուրիմացություններ չլինեն: Ես ծառայում եմ Ֆրանսիայի թագավորին ու թագուհուն և գտնվում եմ պարոն Դե-գեսարի գվարդիականների վաշտում, իսկ Դեգեսարը նույնպես, ինչպես և նրա փեսան՝ պարոն դը Տրեկլը, առանձնապես նվիրված է նորին մեծություն թագավորին ու նորին մեծություն թագուհուն: Դեռ ավելին. հնարավոր բան է, որ ես այս ամենը չանեի, եթե չլինեի մի անձ, որը ինձ համար թանկ է այնպես, ինչպես ձեզ համար, ձերդ պայծառափայլություն, թանկ է թագուհին:

— Այո,— ասաց դուքսը ժպտալով,— ես կարծեմ ճանաչում եմ այդ անձին: Դա...

— Միլորդ, ես նրա անունը չտվի,— շտապ ընդհատեց նրան երիտասարդը:

— Ճշմարիտ է,— ասաց դուքսը:— Հետևապես ձեր այս անձնվիրության համար պետք է այդ անձին շնորհակալ լինեմ:

— Այդպես էլ կա, ձերդ պայծառափայլություն: Ուրովհետև այժմ, երբ որտեղ որ է պատերազմը կսկսվի, ես պետք է ձեզ խոստովանեմ, որ ի դեմս ձերդ պայծառափայլության տեսնում եմ միմիայն անգլիացի, նշանակում է՝ թշնամու, որին ես ավելի մեծ սիրով կհանդիպեի պատերազմի դաշտում, քան Վինձորի պուրակում կամ Լուվրի միջանցքներում: Մակայն այս ամեննին չի խանգարի ինձ ճշտորեն կատարել հանձնարարությունը և, եթե հարկ լինի, կյանքս կտամ, միայն թե կատարեմ այն: Մակայն կրկնում եմ, ձերդ պայծառա-փայլությունը նույնքան քիչ է պարտական ինձ այն ամենի համար, ինչ անում եմ ես մեր երկրորդ տեսակցության ժամանակ, որքան այն ամենի համար, ինչ ես արի մեր առաջին հանդիպման ժամանակ:

— Մենք ասում ենք, «Հպարտ է ինչպես շոտլանդացի»,— կիսաձայն ասաց դուքսը:

— Իսկ մենք ասում ենք, «Հպարտ է ինչպես գասկոնացի»,— պատասխանեց դ'Արտանյանը:— Գասկոնացիք ֆրանսիական շոտլանդացիներն են:

Դ՛Արտանյանը գլուխ տվեց դքսին և պատրաստվում էր դուրս գնալու:

— Ինչպե՞ս, դուք արդեն ուզում եք գնա՞լ: Բայց ի՞նչ ճանապարհով կգնաք դուք: Ինչպե՞ս դուրս կգաք Անգլիայից:

— Հա, ճիշտ որ...

— Նզովված լինեմ, թե սխալվում եմ. այս ֆրանսիացիներին ոչ մի բան չի շփոթեցնում:

— Ես մոռացել էի, որ Անգլիան կղզի է և որ դուք նրա տիրակալն եք:

— Գնացեք նավահանգիստ, հարցրեք «Զունդ» առագաստանավը, այս նամակը հանձնեցեք նավապետին: Նա ձեզ կտանի մի փոքրիկ նավակայան, որտեղ սովորաբար միայն ձկնորսական նավերն են կանգ առնում:

— Ինչպե՞ս է կոչվում այդ նավակայանը:

— Սեն Վալերի: Բայց սպասեցեք... Երբ կհասնեք այնտեղ, կմտնեք մի խղճուկ, անանուն պանդոկ, որը ցուցանակ էլ չունի, իսկական ծովայինների որջ է: Սխալվել չեք կարող, այնտեղ այդպիսի պանդոկ միայն մեկը կա:

— Հետո՞:

— Կհարցնեք՝ ով է տերը և նրան կասեք՝ «Forward»:

— Ի՞նչ է նշան ակում այդ...

— «Առաջ», դա նշանաբանն է: Նա ձեզ կտրամադրի մի թամբած ձի և ցույց կտա ճանապարհը, որով պետք է գնաք: Ճանապարհին չորս տեղ ձեզ կսպասեն թամբած ձիեր: Եթե ցանկանաք, կարող եք ամեն մի կայանում թողնել Փարիզի ձեր հասցեն, և բոլոր չորս ձիերն էլ կուղարկվեն ձեր հետևից: Նրանցից երկուսն արդեն ձեզ հայտնի են, և դուք, որպես գիտակ մարդ, կարող էիք գնահատել նրանց. դրանք հենց այն ձիերն են, որոնցով ես և դուք Վինձորից սլացանք այստեղ: Մյուսներն էլ, կարող եք վստահել ինձ, նրանցից վատը չեն: Այս չորս ձիերը հանդերձավորված են ինչպես արշավանքի

համար: Որքան էլ հպարտ եք դուք, չեք մերժի դրանցից մեկն ընդունել ձեզ համար և ձեր ընկերներին էլ խնդրել, որ յուրաքանչյուրը մեկն ընդունի իր համար: Ի դեպ, չե՞ որ այդ ձիերը ձեզ պետք կգան մեր դեմ պատերազմելիս: Նպատակն արդարացնում է միջոցները, ինչպես ընդունված է ասել ձեզ մոտ:

— Լավ, միլորդ, ես համաձայն եմ,— ասաց դ’Արտանյա-նը:— Եվ տա աստված, որ մենք կարողանանք օգտագործել ձեր ընծաները:

— Իսկ այժմ՝ տվեք ձեր ձեռքը, երիտասարդ: Կարող է պատահել, որ մենք շուտով հանդիպենք կովի դաշտում: Իսկ առայժմ, կարծում եմ, մենք բաժանվում ենք որպես բարեկամներ:

— Այո, միլորդ, բայց հուսալով, որ շուտով թշնամի-ներ կդառնանք:

— Հանգիստ եղեք, ես այդ խոստանում եմ ձեզ:

— Հույս եմ դնում ձեր խոսքերի վրա, միլո՛րդ:

Դ’Արտանյանը գլուխ տվեց դքսին, արագ քայլերով ուղղվեց դեպի նավահանգիստ:

Լոնդոնի Թաուերի[78] դիմաց նա գտավ նշված նավը, նամակը հանձնեց նավապետին, որն այն տվեց նավա-հանգստի պետին նշում անելու, ապա իսկույն առագաստները բարձրացրեց:

Մեկնելու պատրաստ հիսուն նավ նավակայանում կանգնած սպասում էին:

«Ջունդ» առագաստանավը անցավ նրանցից մեկի կողքով, և դ’Արտանյանին հանկարծ թվաց, որ նրա առաջ երևաց Մենգի այն տիկինը, որին անձանոթ ազնվականն անվանեց «միլեդի», և որը դ’Արտանյանին այնքան գեղեցիկ երևաց: Սակայն հոսանքի ուժը և համընթաց քամին այնպես արագ քշեցին նավը, որ խարիսխ զգած մյուս նավերը համարյա մի անգամից չքացան աչքից:

Հաջորդ առավոտյան ժամը իննին մոտ «Ջունդը» խարիսխ զգեց Մեն Վալերիում:

Դ՛Արտանյանն իսկույն գնաց հիշյալ պանդոկը, որը ճանաչեց այնտեղից լսվող աղաղակներից: Անգլիայի ու Ֆրանսիայի պատերազմի մասին խոսում էին ինչպես մի անխուսափելի ու մոտալուտ բանի մասին, և նավաստիները աղմուկով քեֆ էին անում:

Արտանյանն ամբոխի միջով առաջ գնաց, մոտեցավ պանդոկի տիրոջը և արտասանեց «Forward» բառը: Պանդոկապետն իսկույն նրան նշան արեց, որ հետևի իրեն և դուրս եկավ ետնամուտքով, երիտասարդին տարավ ախոռ, որտեղ նրան մի թամբած ձի էր սպասում, և հարց-րեց, թե ուրիշ որևէ բան հարկավոր չէ՞ նրան:

— Ինձ հարկավոր է իմանալ, թե ո՞ր ճանապարհով գնամ,— ասաց դ՛Արտանյանը:

— Գնացեք այստեղից մինչև Բլանժի, իսկ Բլանժից մինչև Նեֆշատլ: Նեֆշատլում կմտնեք «Ոսկե Մանգադ» պանդոկը, նշանաբանը կհայտնեք տիրոջը, և ինչպես այստեղ, այնտեղ էլ կգտնեք մի թամբած ձի:

— Որքա՞ն եմ տալու ձեզ,— հարցրեց դ՛Արտանյանը:

— Ամեն ինչի համար վճարված է,— ասաց պանդոկապետը:— Եվ վճարված է առատորեն: Գնացեք, Աստված ձեզ պահապան:

— Ամմե՛ն,— պատասխանեց երիտասարդը՝ սրարշավ բաց թողնելով ձին:

Չորս ժամ անց՝ նա արդեն Նեֆշատլում էր:

Նա ճշտորեն կատարեց ստացած ցուցումը: Նեֆշատլում, ինչպես և Սեն Վալերիում, նրան սպասում էր մի թամբած ձի: Նա ուզում էր ատրճանակները նախկին թամբից նորի վրա փոխադրել, բայց պարզվեց, որ նոր թամբի վրա էլ ճիշտ նույնպիսի ատրճանակներ կան:

— Ձեր հասցեն Փարիզո՞ւմ:

— Գվարդիականների տուն, Դեզեսարի վաշտ:

— Լավ,— ասաց պանդոկապետը:

— Ո՞ր ճանապարհով գնամ:

— Ռուան տանող ճանապարհով: Բայց քաղաքը կշր-ջանցեք ձախ կողմից: Կանգ կառնեք Էկուի փոքրիկ գյուղի մոտ: Այնտեղ միայն մեկ պանդոկ կա՝ «Ֆրանսիայի Վահան»-ը: Արտաքին տեսքով չդատեք նրա մա-սին. ախոռում կգտնեք մի ձի, որը սրան չի զիջի:

— Նշանաբանը նո՞ւյնն է:

— Նույնը:

— Մնաք բարով:

— Բարի ճանապարհ, պարոն գվարդիական: Որևէ բան հարկավոր չէ՞ ձեզ:

Դ՛Արտանյանը գլուխը բացասաբար շարժեց և ձին թափով բաց թողեց: Էկուիում կրկնվեց նույնը,— նախագգուշացված պանդոկապետ, թարմ, հանգիստ, ձի: Նա, ինչպես և նախորդ, կայարաններում, թողեց իր հասցեն և նույն ընթացքով սլացավ Պոնտուագ: Պոնտուագում վերջին անգամ ձին փոխեց և ժամը իննին սրարշավ մտավ պ-րն դը Տրեիլի տան բակը.

Տասներկու ժամում նա վաթսուն մղոնից ավելի ճանապարհ էր անցել:

Պարոն դը Տրեիլը նրան դիմավորեց այնպես, ասես հենց այսօր առավոտյան էր բաժանվել նրանից: Միայն թե սովորականից մի քիչ ավելի ամուր սեղմելով ձեռքը, երիտասարդ գվարդիականին ասաց, որ պարոն Դեզեսարի վաշտը Լուվրում պահակություն է անում, և նա կարող է մեկնել իր պահակակետը:

XXII. Մերլեզոնյան բալետ

Հաջորդ օրն ամբողջ Փարիզը խոսում էր հենց միայն այն պարահանդեսի մասին, որը քաղաքի ավագները տալու էին ի պատիվ թագավորի ու թագուհու, և

որտեղ թագավորն ու թագուհին պետք է պարեհին նշանավոր Մերլեգոնի բալետը՝ թագավորի սիրելի բալետը:

Եվ իրոք, դեռ մի շաբաթ առաջ քաղաքի խորհրդարանում ամեն տեսակ պատրաստություններ էին սկսվել այդ հանդիսավոր երեկոյի համար: Քաղաքի ատաղձագործը տախտակամած էր պատրաստում, որի վրա պիտի տեղավորվեին հրավիրված տիկիները: Քաղաքի նպարավաճառը դահլիճը զարդարել էր սպիտակ մեղամումի երկու հարյուր մոմերով, որ այն ժամանակվա համար չտեսնված շքեղություն էր համարվում: Վերջապես հրավիրված էին քսան ջութակահար, այն էլ սովորականից կրկնակի անգամ բարձր վճարով, որովհետև, ինչպես ասված էր հաշվետվության մեջ, նրանք պիտի նվագեին ամբողջ գիշեր:

Առավոտյան ժամը տասին թագավորական գվարդիայի լեյտենանտ պ-րն դը Լա Կոստը ոստիկանական երկու սպայի և մի քանի հրաձիգի ուղեկցությամբ ներկայացավ քաղաքի քարտուղար Կլեմանին և պահանջեց նրանից քաղաքային խորհրդարանի բոլոր դարպասների բանալիները: Բանալիները անհապաղ հանձնվեցին: Նրանցից յուրաքանչյուրն ուներ մի պիտակ, որի օգնությամբ կարելի էր տարբերել մյուսներից, և այդ բոլոր պարոն դը Լա Կոստի վրա էր ընկնում դարպասների և դեպի խորհրդարան տանող բոլոր ծառուղիների պաշտպանությունը:

Ժամը տասնմեկին ներկայացավ գվարդիայի կապիտան Դյուալիեն, հիսուն հրաձիգների ուղեկցությամբ, որոնց անմիջապես դասավորեց խորհրդարանում, յուրաքանչյուրին նշանակելով մի դռան առաջ:

Ժամը երեքին եկան երկու գվարդիական վաշտեր, մեկը ֆրանսիական, մյուսը՝ շվեյցարական: Ֆրանսիական գվարդիականների վաշտի կեսը պ-րն Դյուալիեի զինվորներն էին, կեսը՝ պ-րն Դեզեսարի:

Երեկոյան ժամը վեցին ժամանել սկսեցին հրավիրվածները: Հենց որ ներս էին մտնում, նրանց տեղավորում էին նրանց համար պատրաստված տախտակամածի վրա:

Ժամը իննին եկավ Փարիզի պառլամենտի առաջին պրեզիդենտի կինը: Քանի որ տոնախմբության ժամանակ նա թագուհուց հետո ամենաբարձրաստիճան անձն

էր, քաղաքի պարոնայք ավագները դիմավորեցին նրան և առաջնորդեցին դեպի այն օթյակը, որը գտնվում էր թագուհու համար նախատեսված օթյակի դիմաց:

Ժամը տասին սուրբ Հովհաննու եկեղեցու կողմի փոքրիկ դահլիճում արծաթազարդ բուֆետի մոտ, որը պահպանում էին չորս նետաձիգ, թագավորի համար թեթև ուտելիքների սեղան բացվեց:

Կեսգիշերին լավեցին բարձր աղաղակներ և ողջույնների աղմուկ, այդ թագավորն էր գնում Լուվրից խորհրդարան տանող փողոցներով, որոնք պայծառ լուսավորված էին գույնզգույն լապտերներով:

Այն ժամանակ քաղաքի ավագները մահուդե մանտիա-ներով զգեստավորված և վեց սերժանտի առաջնորդությամբ, որոնք ձեռքներին ջահեր ունեին բռնած, դուրս եկան թագավորին դիմավորելու սանդուղքի վրա, որտեղ առևտրական դասի ավագը ողջույնի խոսք ասաց: Նորին մեծությունը ներողություն խնդրեց այդպես ուշ գալու համար և որպես արդարացում պատճառ բերեց կարդինալին, որը նրան մինչև ժամը տասնամեկը զբաղեցրել էր պետական գործերի մասին խոսելով:

Թագավորը տոնական զգեստով էր: Նրան ուղեկցում էին նորին արքայական մեծությունն Օռլեանի դուքսը, կոմս դը Սուասոնը, մեծ պրիոր դուքս դը Լոնգվիլը, դուքս դ'Էլբեֆը, կոմս դ'Արկուրը, կոմս դը Լա Ռոշ-Գյույոնը, պ-րն դը Լիանկույթը, պ-րն դը Բարադան, կոմս դը Կրամայը և ասպետ դը Սուվրեն: Բոլորը նկատեցին, որ թագավորը տրտում է և ինչ-որ բանով մտահոգված:

Մի սենյակ պատրաստված էր թագավորի համար, մեկը՝ նրա եղբոր՝ Օռլեանի դքսի համար: Ամեն, մի սենյակում դիմակահանդեսի հագուստ կար: Սույն բանն արված էր թագուհու և պրեզիդենտի կնոջ համար: Թագավորի և Օռլեանի դքսի շքախմբի ասպետներն ու տի-կիները պետք է հագնվեին այդ նպատակի համար նախապատրաստված երկու սենյակներում:

Նախքան սենյակ մտնելը թագավորը հրամայեց, որ երբ կարդինալը գա, անհապաղ իմաց տան իրեն:

Թագավորի գալուց հետո, կես ժամ անց, նորից հնչեցին ողջույնի ձայներ, որոնք ազդարարում էին թագուհու գալուստը: Ավագները վարվեցին այնպես, ինչպես քիչ

առաջ, սերժանտների առաջնորդությամբ նրանք շտապեցին դիմավորելու իրենց բարձրաստիճան հյուրին:

Թագուհին դահլիճ մտավ: Բոլորը նկատեցին, որ նա ևս, ինչպես և թագավորը, տրտում և, որ գլխավորն է, հոգնած տեսք ունի:

Հենց այն րոպեին, երբ թագուհին ներս էր մտնում, փոքրիկ օթյակի վարագույրը, որ մինչ այդ քաշված էր մնացել, կիսաբաց եղավ, և բացվածքից երևաց իսպանական գրանդի[79] պես հագնված կարդինալի գունատ դեմքը: Նրա աչքերը գամվեցին թագուհու աչքերին, և նրա շուրթերով սահեց մի դիվային ժպիտ, ադամանդե զարդը թագուհու վրա չէր:

Միառժամանակ թագուհին կանգնած ընդունում էր քաղաքի ավագների ողջույնները և պատասխանում տիկիհնների ողջույններին:

Հանկարծ դահլիճի դռներից մեկում երևաց թագավորը կարդինալի հետ միասին: Կարդինալը կամացուկ ինչ-որ բան էր ասում, թագավորը շատ գունատված էր: Թագավորը անցավ բազմության միջով առանց դիմակի, կամգոլի ժապավեններն անփութորեն կապած և մո-տեցավ թագուհուն:

— Տիրուհի,— ասաց նա հուզմունքից փոխված ձայնով,— այդ ինչն^օ, թույլ տվեք հարցնել, դուք չեք կրում ադամանդե զարդը: Չէ՞ որ գիտեիք, ինձ հաճելի կլիներ տեսնել այդ զարդը ձեզ վրա:

Թագուհին ոտ նայեց և տեսավ կարդինալին, որը մի կողմ կանգնած ժպտում էր չարախինդ:

— Ձերդ մեծություն,— պատասխանեց թագուհին հուզված ձայնով,— ես վախենում էի, թե ամբոխի մեջ որևէ բան կպատահի նրան:

— Եվ դուք սխալ եք գործել: Այդ զարդը ես ձեզ նվիրել եմ նրա համար, որ կրեք ձեզ վրա: Կրկնում եմ, տիրուհի, դուք սխալ եք գործել:

Թագավորի ձայնը դողում էր ցատումից: Բոլորը նայում ու լսում էին զարմացած, չհասկանալով, թե ինչ է կատարվում:

— Արքա,— ասաց թագուհին,— զարդը գտնվում է Լուվրում, ես կարող եմ մարդ ուղարկել բերելու, և ձերդ մեծության ցանկությունը կատարված կլինի:

— Ուղարկեցեք, տիրուհի, ուղարկեցեք, և որքան կարելի է՝ շուտ, որովհետև մի ժամ հետո բալետը սկսվելու է:

Թագուհին գլուխ տվեց ի նշան հնազանդության և հետևեց տիկիներին, որոնք նրան պիտի առաջնորդեին իր համար նախատեսված սենյակը:

Թագավորն էլ անցավ իր սենյակը:

Մի րոպե դահլիճում տազնապ ու անհանգստություն տիրեց:

Դժվար չէր նկատել, որ թագավորի ու թագուհու միջև ինչ-որ բան տեղի ունեցավ, բայց երկուսն էլ խոսում էին այնքան կամաց, որ ոչ ոք ոչ մի խոսք չլսեց, որովհետև բոլորն էլ հարգանքից դրդված՝ մի քանի քայլ ետ էին քաշվել: Ջութակահարները նվագում էին ամբողջ ուժով, բայց ոչ ոք ականջ չէր դնում:

Առաջինը թագավորը մտավ դահլիճ, նա որսորդական շքեղ հագուստով էր: Նորին բարձրություն Օռլեանի դուքսը և մյուս անվանի անձինք էլ հագնված էին նրա պես: Այդ հագուստը չափազանց շատ էր սազում թագավորին, և իսկապես, այդ գուգսով նա իր թագավորու-թյան ամենավսեմ ազնվականն էր թվում:

Կարդինալը մոտեցավ թագավորին և մեկնեց նրան մի ինչ-որ տուփիկ: Թագավորը բաց արեց և տեսավ նրա մեջ ադամանդե զարդերից երկուսը:

— Այս ի՞նչ է նշանակում,— հարցրեց նա կարդինալին:

— Ոչինչ,— պատասխանեց նա,— բայց եթե թագուհին իր վրա կապի զարդը, որին ես կասկածում եմ, դուք, արքա, հաշվեցեք ադամանդները, և եթե միայն տասը հատ լինի, հարցրեք նորին մեծությանը, թե ով կարող էր նրանից հափշտակել ահա այս երկուսը:

Թագավորը հարցական հայացքով նայեց կարդինալին, բայց ժամանակ չեղավ նրան հարց տալու. բոլորի շուրթերից հիացմունքի ճիշ դուրս թռավ: Եթե թագավորը իր թագավորության ամենավսեմ ազնվականն էր թվում, ապա թագուհին, անկասկած, Ֆրանսիայի ամենաչքնաղ կինն էր:

Իսկապես, որսորդական հագուստը զարմանալիորեն սազում էր նրան: Նրա գլխին ֆետրե գլխարկ էր՝ երկնագույն փետուրներով, թավշյա լիֆը զմրուխտի գույն ուներ և ադամանդե կոճակներ, իսկ երկնագույն ասլասե շրջագգեստն ամբողջովին արծաթազարդ էր: Չախ ուսին շողշողում էր ադամանդե զարդը՝ ամրացված շրջագգեստի ու փետուրների գույնի ժապավենի վրա:

Թագավորը դողաց ուրախությունից, իսկ կարդինալը՝ ցասումից: Բայց նրանք այնքան հեռու էին թագուհուց, որ զարդերը հաշվել չէին կարող: Թագուհին կրում էր զարդերը, բայց քանի՞ սն էին նրանք, տա՞ սը, թե՞ տասներկուսը:

Այդ պահին ջութակահարներն ազդարարեցին բալետի սկիզբը: Թագավորը մոտեցավ պրեզիդենտի տիկնոջը, որի հետ նա պետք է պարեր, իսկ նորին բարձրություն Օռլեանի դուքսը՝ թագուհուն: Բոլորն իրենց տեղերը գրավեցին, և բալետը սկսվեց:

Թագավորը պարում էր թագուհու դիմաց և ամեն անգամ նրա կողքով անցնելիս հայացքով կլանում էր այդ զարդերը, որոնք ոչ մի կերպ հաշվել չէր կարողանում: Կարդինալի ճակատը ծածկված էր քրտինքով:

Բալետը տևեց մեկ ժամ. այն տասնվեց պատկեր ուներ:

Երբ բալետը վերջացավ, պարընկերներից ամեն մեկը ամբողջ դահլիճի ծափահարության տակ իր պարընկերուհուն տարավ նշանակված տեղը, բայց թագավորը, օգտվելով իր արտոնությունից, թողեց իր դամային և շտապ մոտեցավ թագուհուն:

— Շնորհակալ եմ ձեզնից, տիրուհի,— ասաց նա,— որ այդպես ուշադիր եք դեպի իմ ցանկությունները, բայց, կարծեմ, ադամանդներից երկուսը պակասում է, և ահա ես դրանք վերադարձնում եմ ձեզ:

— Ինչպե՛ս, արքա,— զարմացած ձևանալով բացական-չեց դեռատի թագուհին,— դուք ինձ էլի՞ երկու ադամանդ եք ընծայում: Բայց այդ դեպքում ես կունենամ տասնչորս հատ:

Թագավորը հաշվեց, իրոք, բոլոր տասներկու ադամանդներն էլ նորին մեծության վրա էին:

Թագավորը մոտ կանչեց կարդինալին:

— Դե՛հ, պարոն կարդինալ, ի՞նչ է նշանակում այս,— հարցրեց թագավորը խիստ տոնով:

— Այդ նշանակում է, արքա,— պատասխանեց կարդինալը,— որ ես ցանկանում էի այդ երկու ադամանդն ընծայել նորին մեծությանը, բայց չէի համարձակվում անձամբ առաջարկել և ահա դիմեցի այս միջոցին:

— Ես առավել ևս շնորհապարտ եմ ձերդ սրբազնությանը,— պատասխանեց Աննա Ավստրիացին այնպիսի մի ժպիտով, որն ասում էր, թե կարդինալի հնարամիտ սիրալիրությունն ամեննին չի խաբել իրեն,— քանի որ այս երկու ադամանդը երևի ձեզ նույնքան են նստել, որքան մյուս տասներկուսը նստել են նորին մեծությանը:

Ապա թագավորին ու կարդինալին գլուխ տալով՝ թագուհին ուղղվեց դեպի այն սենյակը, որտեղ նա իր զգեստն էր հագնում և որտեղ պետք է շորերը փոխեր:

Այն հանգամանքը, որ մենք այս գլխի սկզբում ստիպված եղանք մեր ուշադրությունը հատկացնել մեր նկարագրած բարձրաստիճան անձնավորություններին, մեզ միառժամանակ հեռացրեց այն անձից, որին Աննա Ավստրիացին պարտական էր իր այդ չտեսնված հաղթանակով կարդինալի նկատմամբ և որը՝ շփոթության մեջ, բոլորին անհայտ, դռներից մեկի մոտ ամբոխին խառնված դիտում էր այս տեսարանը, որ հասկանալի էր միայն չորս մարդու թագավորին, թագուհուն, նորին սրբազանությանը և իրեն:

Թագուհին մտավ իր սենյակը:

Ղ'Արտանյանն արդեն պատրաստվում էր հեռանալու, երբ հանկարծ զգաց, որ մեկը կամացուկ դիպավ իր ուսին: Նա շուտ եկավ և տեսավ մի դեռատի կնոջ, որը նշանացի առաջարկեց հետևել իրեն: Կնոջ դեմքը ծածկված էր սև թավիշե կիսադիմակով, սակայն, չնայած այդ նախազգուշական միջոցին, որն, ի դեպ, ձեռք էր առնվել ավելի շուտ ուրիշների, քան նրա համար, ղ'Արտանյանը իսկույն ճանաչեց իր մշտական ուղեկ-ցորդին՝ աշխույժ ու սրամիտ տիկին Բոնասիեին:

Նախորդ օրը նրանք միայն շատ կարճ ժամանակով էին իրար տեսել բարապան Ժերմենի մոտ, որտեղ կանչել էր նրան ղ'Արտանյանը: Դեռատի կինը այնքան էր շտապում թագուհուն հաղորդել իր սուրհանդակի բարեհաջող վերադարձի ուրախ լուրը, որ սիրահարները հազիվ կարողացան մի երկու խոսք փոխանակել միայն: Ուստի և ղ'Արտանյանը հետևեց տիկին Բոնասիեին երկու զգացմունքի մղումով՝ սիրո և հետաքրքրու-թյան: Ճանապարհին, երբ միջանցքներում մարդիկ նստանում էին, ղ'Արտանյանը փորձում էր կանգնեցնել դեռատի կնոջը, բռնել նրա ձեռքը, հիացմունքով դիտել նրան գեթ մի ակնթարթ, սակայն թոչնակի պես ժիր կինը ամեն անգամ դուրս էր պրծնում նրա ձեռքից, և երբ ղ'Արտանյանն ուզում էր խոսել, կինը հրամայական ու թովիչ շարժումով մատը դնում էր իր շուրթերին, և այդ հիշեցնում էր ղ'Արտանյանին, որ իրեն տիրապետում է մի իշխանություն, որին ինքը պիտի հնազանդվի կուրորեն և որն արգելում է իրեն թեկուզ ամենափոքր տրտունջ: Վերջապես, անհամար անցքեր ու միջանցքներ անցնելուց հետո տիկին Բոնասիեն բաց արեց մի ինչ-որ դուռ և երիտասարդին տարավ կատարելապես խավար մի սենյակ: Այստեղ նա նորից ղ'Արտանյանին մի նշան արեց, որը պատվիրում էր լուռ մնալ, և բաց անելով վարագույրի տակ ծածկված մի ուրիշ դուռ, որից հանկարծ ներս հորդեց պայծառ լույսի մի խուրձ, ինքը անհայտացավ:

Մի րոպե ղ'Արտանյանը անշարժ կանգնած մնաց, ինքն իրեն հարց տալով, թե որտե՞ղ է գտնվում, բայց շուտով հարևան սենյակից ներս թափանցող լույսը, այնտեղից եկող ջերմ ու անուշաբույր օդը, երկու թե երեք կնոջ խոսքերը, որոնք հնչում էին մեծարանքով և միաժամանակ նրբագեղորեն, «ձերդ մեծություն» դիմումը, որ կրկնվեց մի քանի անգամ,— այս ամենը անսխալ կերպով հասկացրին նրան, որ ինքը գտնվում է թագուհու սենյակին կից կաբինետում:

Երիտասարդ ղ'Արտանյանը թաքնվեց ստվերում և սկսեց սպասել:

Թագուհին ուրախ ու երջանիկ էր թվում, որ, ըստ երևույթին, շատ էր զարմացնում նրան շրջապատող տիկիներին, որոնք, ընդհակառակը, սովոր էին համարյա միշտ տեսնել նրան տխուր ու մտահոգ: Թագուհին իր ուրախությունը բացատրում էր տոնակատարության շքեղությամբ, բալետի պատճառած բավականությամբ, և որովհետև թույլատրված չի հակաճառել թագուհուն ծիծաղելիս լինի նա, թե լալիս, ուստի բոլորը, գովաբանում էին Փարիզ քաղաքի ավագների սիրալիրությունը: Դ'Արտանյանը թագուհուն չէր ճանաչում, բայց շուտով նրա ձայնը տարբերեց մյուսների ձայնից սկզբում թեթևակի օտար առոգանությունից, ապա այն հրամայական տոնից, որ ակամա հնչում է բարձրաստիճան անձանց ամեն մի խոսքի մեջ: Նա լսում էր, թե ինչպես թագուհին մերթ մոտենում է բաց դռանը, մերթ հեռանում և նույնիսկ երկու-երեք անգամ տեսավ մի ինչ-որ ստվեր, որ փակում էր լույսը:

Եվ հանկարծ վարագույրի միջից դուրս եկավ հիասքանչ ճերմակ մի ձեռք: Դ'Արտանյանը հասկացավ, որ դա պարզև է, նա ծունկ չոքեց, բռնեց այդ ձեռքը և հարգանքով շրթունքները հպեց նրան: Հետո ձեռքն անհետացավ, դ'Արտանյանի բռան մեջ թողնելով մի մատանի:

Դուռը իսկույն ծածկվեց, և դ'Արտանյանը մնաց լիակատար խավարի մեջ:

Նա մատանին դրեց մատին և սկսեց սպասել. հասկանում էր, որ սա դեռ վերջը չէ:

Նվիրվածության պարզևից հետո պետք է գար սիրո պարզևը:

Բացի այդ, թեև բալետը վերջացել էր, երեկույթը նոր էր սկսվում, ընթրիքը նշանակված էր ժամը երեքին, իսկ սուրբ Հովհաննու աշտարակի ժամացույցը նոր էր խփել երկուսից երեք քառորդ անց:

Իսկապես, հարևան սենյակում ձայների աղմուկն աստիճանաբար նվազեց, հեռացավ, ապա նորից բացվեց այն կաբինետի դուռը, որտեղ գտնվում էր դ'Արտանյանը, և ներս վազեց տիկին Բոնասիեն:

— Դո՛ւք: Վերջապե՛ս,— գոչեց դ'Արտանյանը:

— Լռեցե՛ք,— ասաց դեռատի կինը ձեռքը սեղմելով նրա բերանին:— Լռեցեք և գնացեք նույն ճանապարհով, որով եկել եք:

— Բայց որտե՞ղ և ե՞րբ կտեսնեմ ես ձեզ,— գոչեց դ'Արտանյանը:

— Դուք այդ կիմանաք այն երկտողից, որ կգտնեք ձեր տանը: Դե, գնացե՛ք, գնացե՛ք:

Այս ասելով նա միջանցքի դուռը բաց արեց և դ'Արտանյանին դուրս բերեց սենյակից:

Դ'Արտանյանը հնազանդվեց ինչպես երեխա, առանց դիմադրության, առանց գեթ մի բառով առարկելու, և այդ ցույց էր տալիս, որ նա իսկապես սիրահարված էր:

XXIII. Տեսակցություն

Դ'Արտանյան տուն վերադարձավ վազեվազ և, չնայած առավոտյան ժամը երեքից անց էր, իսկ նա պետք է անցներ Փարիզի ամենավտանգավոր թաղերով, այնուամենայնիվ ոչ մի անախորժ հանդիպում չունեցավ: Բոլորին հայտնի է, որ հարբած մարդիկ և սիրահարները իրենց պահապան հրեշտակն ունեն:

Մուտքի դուռը կիսաբաց էր: Նա սանդուղքով բարձրացավ և կամացուկ դուռը բխեց պայմանավորված ձևով, որ հայտնի էր միայն իրեն և իր սպասավորին: Դուռը բաց արեց Պլանշեն, որին դ'Արտանյանը երկու ժամ առաջ ուղարկել էր խորհրդարանից, հրամայելով տանը սպասել:

— Նամակ բերե՞լ են ինձ,— աշխույժ հարցրեց դ'Արտանյանը:

— Ո՛չ, տեր իմ, ոչ ոք չի բերել,— պատասխանեց Պլանշեն,— բայց կա մի նամակ, որ ինքն իրեն է եկել:

— Այդ ի՞նչ է նշանակում, տխմա՛ր:

— Այդ նշանակում է, որ երբ ես տուն եկա, ձեր ննջարանում, սեղանի վրա գտա մի ինչ-որ նամակ, թեև բնակարանի բանալին իմ գրպանումն էր, և ոչ մի բռպե չեմ բաժանվել նրանից:

— Իսկ որտե՞ղ է այդ նամակը:

— Ես, տեր իմ, թողի այնտեղ, որտեղ գտնվում էր: Տեսնվա՞ծ բան է, որ նամակն այդ ձևով հասնի մարդուն: Եթե լուսամուտը բաց լիներ կամ գոնե կիսաբաց լիներ, էլի ոչինչ չէի ասի, բայց չէ, լուսամուտն էլ պինդ փակված էր: Զգուշացե՞ք, տեր իմ, այս գործի մեջ անպայման չար ոգու մատն է խառը:

Առանց նրան լրիվ լսելու երիտասարդը վազեց սենյակ և նամակը բաց արեց. այն տիկին Բոնասիեից էր և պարունակում էր հետևյալ տողերը.

«Մեկը ցանկանում է ձեզ ջերմագին շնորհակալություն հայտնել իր անունից, ինչպես և մի ուրիշ անձի անունից: Այսօր երեկոյան ժամը տասին եղեք Սեն Կլոուս, այն տաղավարի դիմաց, որ կից է պ-րն դ'Էստրեի տանը:

Կ. Բ.»

Այս նամակը կարդալիս դ'Արտանյանը զգում էր, թե ինչպես իր սիրտը մերթ լայնանում է, մերթ կծկվում այն դուրեկան դողով, որը ն' տանջում, և՛ փաղաքշում է սիրահարվածների սիրտը:

Այդ առաջին երկտողն էր, որ նա ստանում էր, այդ առաջին տեսակցությունն էր, որ նշանակում էին նրան: Հրճվանքի արբեցումով լի, նրա սիրտը պատրաստ էր կանգ առնելու երկնային դրախտի շեմքին, որ կոչվում է սեր:

— Է՛, ի՞նչ կա, տեր իմ,— ասաց Պլանշեն, նկատելով, որ իր տերը մերթ շիկնում է, մերթ գունատվում:— Ի՞նչ կա: Երևում է՝ ես ճի՞շտ եմ հասկացել, և այդ մի ինչ-որ վատ պատմությո՞ւն է:

— Մխավվում ես, Պլանշե՛,— պատասխանեց դ'Արտանյանը,— և որպես ապացույց՝ ահա քեզ մի էքյու, որպեսզի դու կարողանաս իմ կենացը խմել:

— Շնորհակալ եմ ձեզնից էքյուի համար, տեր իմ, և խոստանում եմ ճշտությամբ կատարել ձեր հանձնարարությունը, բայց և այնպես ճշմարիտ է և այն, որ այդ եղանակով փակ տներն ընկնող նամակներն էլ...

— Երկնքի՛ց են ընկնում, բարեկամս, երկնքի՛ց:

— Ուրեմն դուք, տեր իմ, գո՞հ եք,— հարցրեց Պլանշեն:

— Ի՛մ թանկագին Պլանշե, ես ամենաերջանիկ մարդն եմ մահկանացուների մեջ:

— Եվ ես կարո՞ղ եմ օգտվել ձեր երջանկությունից և պառկել քնելու:

— Այո՛, այո՛, պառկիր:

— Երկնային օրհնությունը իջնի ձեր վրա, տեր իմ, բայց և այնպես ճշմարիտ է և այն, որ այդ նամակը...

Եվ Պլանշեն դուրս եկավ գլուխն օրորելով, այնպիսի տեսքով, որն ասում էր, թե դ՛Արտանյանի առատաձեռնությունը չկարողացավ վերջնականապես ցրել նրա կասկածները:

Մենակ մնալով՝ դ՛Արտանյանը նորից ու նորից կարդաց իր երկտողը, ապա մի քսան անգամ համբուրեց այն տողերը, որ շարել էր նրա չքնաղ սիրուհու ձեռքը: Վերջապես պառկեց, քուն մտավ և անձնատուր եղավ ոսկեշող անուրջներին:

Առավոտյան ժամը յոթին նա վեր կացավ ու կանչեց Պլանշեին, որը երկրորդ կանչի վրա դուռը բաց արեց, ըստ որում, նրա դեմքին դեռ մնացել էին երեկվա անհանգստության հետքերը:

— Պլանշե,— ասաց դ՛Արտանյանը,— ես գնում եմ և գուցե թե ամբողջ օրով: Ուրեմն, մինչև երեկոյան ժամը յոթը դու ազատ ես, բայց ժամը յոթին պատրաստ եղիր երկու ձիերով:

— Ա՛յ թե ինչ,— ասաց Պլանշեն:— Երևում է՝ մենք նորից ճանապարհ ենք ընկնում մեր մաշկը ծակծկելու:

— Հետո վերցրու հրացանը և ատրճանակները:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, ի՞նչ էի ասում ես,— գոչեց Պլանշեն: Այդպես էլ գիտեի.
նզովյա՛լ նամակ:

— Դե հանգստացիր դու էլ, տխմա՛ր, խոսքը վերաբերում է մի հասարակ
գրոսանքի:

— Հա, իհարկե, այնպիսի ուրախ ճամփորդության, երբ գնդակների տարափ էր
տեղում, իսկ գետնի տակից որոգայթներ էին բուսնում:

— Ասենք, պարոն Պլանշե,— շարունակեց դ'Արտանյանը,— եթե դուք
վախենում եք, ես առանց ձեզ կգնամ: Լավ է մենակ գնալ, քան այնպիսի ուղեկցի հետ,
որը դողում է վախից:

— Դուք վիրավորում եք ինձ, տեր իմ,— առարկեց Պլանշեն:— Կարծեմ դուք
տեսել եք ինձ կովի մեջ:

— Այո, բայց ինձ թվաց, թե դուք մեկ անգամում ծախսել եք ձեր ամբողջ
քաջությունը:

— Դեպքը որ բերի, տեր իմ, կտեսնեք, որ դեռ էլի մի բան մնացել է, իսկ եթե դուք
ցանկանում եք, որ այդ քաջությունը երկար ժամանակ բավականացնի, ապա խնդրում
եմ ձեզ չափից ավելի առատությամբ մի ծախսեք:

— Լավ, իսկ դու ինչպե՞ս ես կարծում, քո քաջությունը այս երեկոյի համար էլ
կբավականացնի՞:

— Հույս ունեմ:

— Հիանալի է: Ուրեմն ես քեզ վրա հույս եմ դնում:

— Նշանակված ժամին պատրաստ կլինեմ: Բայց ես կարծում էի, տեր իմ, որ
գվարդիականների ախոռում դուք միայն մեկ ձի ունեք:

— Հնարավոր է, որ հիմա միայն մեկն է, բայց մինչև երեկո կլինի չորսը:

— Ուրեմն մենք, ինչպես երևում է, ձիեր գնելու էինք գնացել:

— Ճիշտ այդպես,— պատասխանեց դ'Արտանյանը:

Եվ Պլանշեին հրաժեշտի հրամայական մի շարժում ուղղելով՝ նա դուրս եկավ տնից:

Շեմքում կանգնած էր պ-րն Բոնասիեն: Դ'Արտանյանը ուզում էր անցնել առանց հարգարժան արդուզարդի վաճառականի հետ խոսելու, բայց վերջինս այնպես սիրալիր և այնպես բարեհոգի գլուխ տվեց, որ նրա կենվորը ստիպված եղավ ոչ միայն ողջունին պատասխանել, այլև զրույցի բռնվել նրա հետ:

Եվ ինչպե՞ս կարող էս մի փոքր զիջողամտություն չցուցաբերել այն մարդու նկատմամբ, որի կինը ձեզ տեսակցություն է նշանակել այդ նույն երեկոյան Մեն Կլուում, պ-րն դ'Էստրեի տաղավարի դիմաց: Դ'Արտանյանը մոտեցավ նրան ամենասիրալիր արտահայտությամբ, որքան որ կարող էր ցույց տալ այդ:

Բնական է, որ խոսակցությունը վերաբերում էր խեղճ Բոնասիեի բանտում գտնվելուն: Պարոն Բոնասիեն, չիմանալով, որ դ'Արտանյանը լսել է իր խոսակցությունը Մենգի անձանոթի հետ, իր երիտասարդ կենվորին պատմեց, թե ինչպիսի դաժանություններ էր գործում այն հրեշ Լաֆեման, որին նա իր ամբողջ պատմության ընթացքում անվանում էր ոչ այլ ինչ, քան կարդինալի դահիճ և երկար ու բարակ նկարագրում էր Բաստիլը, նրա փականքները, բանտային օդանցքները, վանդակները և խոշտանգման գործիքները:

Դ'Արտանյանն այս ամենը լսում էր գերազանց ուշադրությամբ:

— Ասացեք, դուք իմացա՞ք, թե այն ժամանակ ով էր փախցրել տիկին Բոնասիեին,— հարցրեց նա, երբ, վերջապես, պարոն Բոնասիեն վերջացրեց իր խոսքը:— Ախր էս չեմ մոռացել, որ հենց այդ ցավալի դեպքին եմ պարտական իմ ծանոթությունը ձեզ հետ:

— Ա՛խ,— հառաչեց պ-րն Բոնասիեն,— այդ, իհարկե, նրանք ինձ չասացին, և իմ կինն էլ հանդիսավոր կերպով երդվեց, որ չգիտե: Հա՛, իսկ դուք,— շարունակեց պ-

րն Բոնասիեն ամենապարզամիտ տեսքով,— այդ որտե՞ղ էիք կորել այս վերջին մի քանի օրը: Ես ոչ ձեզ էի տեսնում, ոչ ձեր ընկերներին, և պետք է ենթադրել, որ այն ամբողջ փոշին, որ երեկ Պլանշեն մաքրում էր ձեր կոշիկներից, Փարիզի սալահատակներից չէր հավաքվել:

— Դուք իրավացի եք, թանկագին պարոն Բոնասիե, ես ու ընկերներս մի փոքրիկ ճանապարհորդություն կատարեցինք:

— Շեռո՞ւ:

— Օ՛, ո՛չ, մի քառասուն լյո, պարոն Աթոսին էին ուղեկցում մինչև Ֆորժի հանքային ջրերը, որտեղ և մնացին իմ ընկերները:

— Լավ, իսկ դուք, դուք, իհարկե, վերադարձաք,— շարունակեց պ-րն Բոնասիեն՝ ամենախորամանկ արտահայտություն տալով իր դեմքին:— Ձեզ պես գեղեցիկ երիտասարդներին սիրուհիները երկարատև արձակուրդ չեն տալիս, և ձեզ անհամբեր սպասում էին Փարիզում, այնպես չէ՞:

— Իսկապես, սիրելի պարոն Բոնասիե,— ծիծաղելով ասաց երիտասարդը,— պետք է ձեզ խոստովանեմ, որ այդպես է, մանավանդ որ, ինչպես երևում է, ձեզնից բան թաքցնել չի լինի: Այո, ինձ սպասում էին, և կարող եմ հավատացնել մեծ անհամբերությամբ:

Բոնասիեի ճակատը մռայլեց մի թեթև ստվեր, այնքան թեթև, որ դ՛Արտանյանը ոչինչ չնկատեց:

— Եվ մենք կվարձատրվե՞նք մեր շտապողականության համար,— շարունակեց արդուզարդի վաճառականը փոքր-ինչ փոխված ձայնով, որ դ՛Արտանյանը նույնպես չնկատեց, ինչպես քիչ առաջ չէր նկատել հարգարժան մարդու դեմքը մթազնոդ վայրկենական ամպը:

— Օ՛, երանի թե ձեր գուշակությունը կատարվի,— ծիծաղելով ասաց դ՛Արտանյանը:

— Այս ամենը եւ միայն նրա համար եմ ասում,— պատասխանեց պ-րն Բոնասիեն,— որպէսզի իմանամ՝ ո՛րչ կվերադառնաք դուք:

— Ի՞նչ է նշանակում այդ հարցը, շատ սիրելի տան-տեր, հարցրեց դ'Արտանյանը:— Չլինի՞ ուզում եք սպասել իմ գալուն:

— Ոչ, բայց ինձ ձերբակալելու օրվանից և իմ տանը տեղի ունեցած գողութունից հետո ամեն անգամ, երբ դուռը բխում են, եւ վախենում եմ, մանավանդ զիշերը: Ի՞նչ կարող եմ անել, դե եւ հո զինվոր չեմ:

— Դե ուրեմն չվախենաք, եթե եւ վերադառնամ զիշերվա ժամը մեկին, երկուսին կամ երեքին, չվախենաք նույնիսկ այն դեպքում, եթե եւ բոլորովին չվերադառնամ:

Այս անգամ Բոնասիեն այնպէս խիստ գունատվեց, որ դ'Արտանյանը չէր կարող այդ չնկատել և հարցրեց, թե ինչ պատահեց նրան:

— Ոչինչ, ոչինչ,— պատասխանեց Բոնասիեն:— Ինձ հետ պատահած դժբախտութիւններից հետո եւ հանկարծակի թուլության նոպաներ եմ ունենում, և ահա հենց նոր մարմինս սարսռաց: Ուշադրություն մի՛ դարձրեք ինձ վրա, չէ՞ որ դուք ուրիշ զբաղմունք ունեք՝ անձնատուր լինել ձեր երջանկությանը:

— Այդ դեպքում եւ խիստ զբաղված եմ, որովհետև իսկապէս որ եւ երջանիկ եմ:

— Դեռ ոչ, սպասեցեք, չէ՞ որ դուք ասացիք, որ այդ երեկոյան է լինելու:

— Դե ինչ կա որ, փառք Աստծու, այդ երեկոն էլ կգա: Եվ գուցե թե դուք էլ նրան սպասում եք այնպէս անհամբեր, ինչպէս եւ: Գուցե թե տիկին Բոնասիեն այսօր երեկոյան կայցելի ամուսնու օթևանը:

— Այսօր երեկոյան տիկին Բոնասիեն զբաղված է,— հպարտորեն առարկեց ամուսինը:— Իր պարտականությունները նրան պահում են Լուվրում:

— Ավելի վատ ձեզ համար, սիրելի տանտեր, ավելի վատ ձեզ համար: Երբ ես երջանիկ եմ, ուզում եմ, որ շուրջս բոլորը երջանիկ լինեն, բայց, երևում է, այդ անհնարին է:

Եվ երիտասարդը հեռացավ, ամբողջ կոկորդով քրքջալով իր կատակի վրա, որն, իր կարծիքով, միայն իրեն էր հասկանալի:

— Ուրախ ժամանց եմ ցանկանում ձեզ,— ասաց Բոնասիեն անդրշիրիմյան ձայնով:

Բայց դ'Արտանյանն արդեն այնքան էր հեռու, որ չէր կարող լսել այդ խոսքերը, և եթե լսեր էլ, լինելով այդպիսի տրամադրության մեջ, երևի ուշադրություն չէր դարձնի դրանց վրա:

Նա ուղղվեց դեպի պ-րն դը Տրեիլի տուն: Երեկվա նրա այցելությունը, ինչպես հիշում ենք, չափազանց կարճատև էր, և նրանք չէին կարողացել որևէ բանի մասին խոսել ինչպես հարկն է:

Պ-րն դը Տրեիլին նա գտավ ուրախ տրամադրության մեջ: Պարահանդեսին թագավորը և թագուհին նրա հետ արտակարգ սիրալիր էին եղել: Բայց դրա փոխարեն կարդինալը չափազանց խոժոռ էր:

Գիշերվա ժամը մեկին նա տկարությունը պատճառ բռնելով հեռացել էր: Ինչ վերաբերում է նորին մեծություն թագավորին և նորին մեծություն թագուհուն, ապա նրանք Լուվր էին վերադարձել առավոտյան ժամը վեցին:

— Իսկ այժմ,— ասաց պ-րն դը Տրեիլը՝ ձայնը ցածրացնելով և ուշադիր նայելով սենյակի բոլոր անկյունները, որպեսզի համոզվի, որ իրենք իսկապես մենակ են,— այժմ, իմ երիտասարդ բարեկամ, խոսեցեք ձեր մասին, որովհետև միանգամայն ակներև է, որ ձեր երջանիկ վերադարձը ինչ-որ կապ ունի թագավորի ուրախության, թագուհու հաղթանակի և նորին սրբազնության ստորացման հետ: Այժմ ձեզ հարկավոր է զգույշ լինել:

— Ես ինչի՞ ց պիտի երկյուղ կրեմ, քանի դեռ բախտ ունեմ նորին մեծություն թագավորի ու թագուհու բարեհաճությունը վայելելու,— հարցրեց դ'Արտանյանը:

— Ամեն բանից, հավատացեք ինձ: Կարդինալն այնպիսի մարդ չէ, որ մոռանա չար կատակը, առանց հաշիվ մաքրելու կատակողի հետ, իսկ ես խիստ կասկածում եմ, որ կատակողը հենց այստեղ է, ինձ ծանոթ մի գասկոնացի:

— Մի՞ թե դուք կարծում եք, թե կարդինալն էլ ձեզ պես լավատեղյակ է, որ հենց ես եմ գնացել Լոնդոն:

— Գրողը տանի: Ուրեմն դուք Լոնդոնում եք եղել: Չլինի՞ Լոնդոնից եք բերել այդ սքանչելի ադամանդը, որ շողշողում է ձեր մատին: Ջգուշացեք, սիրելի դ'Արտանյան, թշնամու ընծան լավ բան չէ: Դրա մասին կա լատինական մի լավ ոտանավոր... Սպասեցեք...

— Այո, այո, իհարկե,— պատասխանեց դ'Արտանյանը, որ երբեք չէր կարողացել լատիներենի նույնիսկ նախահիմքերը մտցնել գլուխը և իր տգիտությամբ հուսահատության էր հասցնում ուսուցչին, այո,— այո, իհարկե, պետք է լինի այդպիսի մի ոտանավոր...

— Եվ, իհարկե, կա այդպիսի բան,— ասաց պ-րն դը Տրևիլը, որը գրականության նկատմամբ սեր ուներ,— վերջերս պ-րն դը Բենսերադը կարդաց ինձ համար... Սպասեք... հա, հիշեցի.

Timeo Danaos et dona ferentes[80].

Սա նշանակում է՝ զգուշացեք ձեզ ընծա բերող թշնամուց:

— Այս ադամանդը, տեր իմ, ինձ թշնամի չի նվիրել,— պատասխանեց դ'Արտանյանը,— սա ինձ ընծայել է թագուհին:

— Թագուհի՞ն, Օհո՛,— ասաց դը Տրևիլը:— Այո, իսկապես որ դա թագավորական ընծա է: Այդ մատանին առնվազն հազար պիստոլ արժե: Իսկ ո՞ւմ միջոցով թագուհին ձեզ հանձնեց դա:

— Նա ինքը տվեց ինձ:

— Այդ որսե՞ղ:

— Այն կաբինետում, որ կից էր թագուհու սենյակին, որտեղ նա փոխում էր իր զգեստը:

— Ի՞նչ ձևով:

— Ձեռքը մեկնելով ինձ՝ համբուրելու համար:

— Դուք համբուրել էք թագուհու ձե՞ռքը,— գոչեց պ-րն դը Տրևիլը՝ զարմացած նայելով դ'Արտանյանին:

— Նորին մեծությունն ինձ արժանացրեց այդ պատվին:

— Եվ դա՛ վկաների ներկայությամբ: Օ՛, անզգույշ կին, երիցս անզգույշ:

— Ո՛չ, տեր իմ, հանգստացե՛ք, այդ ոչ ոք չտեսավ,— պատասխանեց դ'Արտանյանը: Եվ նա պ-րն դը Տրևիլին պատմեց, թե ինչպես եղավ այդ ամենը:

— Օ՛, կանայք, կանայք,— գոչեց հին զինվորը:— Գիտեմ նրանց իրենց ռոմանտիկական երևակայությամբ: Նրանց հրապուրում է այն ամենը, ինչ զաղտնիքի մեջ է պարուրված: Այդպես ուրեմն, դուք տեսել էք ձեռքը, և ուրիշ ոչինչ: Դուք կհանդիպեք թագուհուն և չեք ճանաչի նրան, նա կհանդիպի ձեզ և չի իմանա ով էք դուք:

— Այո, բայց այս աղամանդով...— առարկեց երիտասարդը:

— Լսեցե՛ք,— ասաց պ-րն դը Տրևիլը,— մի խորհուրդ տա՞մ ձեզ, բարի խորհուրդ, բարեկամ մարդու խորհուրդ:

— Դրանով դուք ինձ մեծ պատիվ արած կլինե՛ք, տեր իմ,— պատասխանեց դ'Արտանյանը:

— Դե ուրեմն գնացե՛ք առաջին իսկ հանդիպած ակնա-գործ վարպետի մոտ և սովե՛ք նրան այդ աղամանդը ինչ գնով էլ լինի, որքան էլ նա առաջարկի ձեզ: Որքան էլ

գծուծ մարդ լինի նա, դուք մի ութ հարյուր պիստոլ կստանաք դրա համար:
Պիստոլները, երիտասարդ, անուն չունեն, իսկ այդ մատանին անուն ունի,
սարսափելի անուն, որը կարող է կործանել նրան, ով կրում է այն իր մատին:

— Ծախել այս մատանի՛ն, այս մատանին, որն ինձ նվիրել է թագուհի՞ն:
Երբեք,— գոչեց դ՛Արտանյանը:

— Այդ դեպքում ակը շուտ տվեք ներսի կողմը, թշվառական, որովհետև բոլորը
գիտեն, որ գասկոնացի խեղճ ազնվականը այդպիսի թանկարժեք բաներ իր մոր
տուփի մեջ չի գտնում:

— Ուրեմն դուք կարծում եք, որ ինձ որևէ վտա՞նգ է սպասում,— հարցրեց
դ՛Արտանյանը:

— Ասում եմ ձեզ, երիտասարդ, որ վառված պատրույգով ականի վրա քնած
մարդը իրեն կարող է շատ ավելի ապահով զգալ, քան դուք:

— Գրողը տանի,— ասաց դ՛Արտանյանը, որին արդեն սկսել էր
անհանգստացնել դը Տրևիլի համոզված տոնը:— Գրողը տանի, ուրեմն ի՞նչ անեմ ես:

— Զգույշ լինել ամեն տեղ և ամենուրեք: Կարդինա-լը հիանալի հիշողություն
ունի և երկար ձեռք. հավատացեք ինձ, նա դեռ մի խաղ կխաղա ձեր գլխին:

— Բայց ի՞նչ խաղ:

— Փա՛հ, ես ինչ իմանամ: Մի՞թե սատանայի բոլոր խորամանկությունները նրա
զինանոցում չեն: Նվազագույնը, որ կարող է պատահել, այն է, որ ձեզ կձերբակալեն:

— Ինչպե՛ս, մի՞թե որևէ մեկը կհամարձակվի ձերբակալել մի զինվորի, որը
ծառայության մեջ է նորին մեծության մոտ:

— Գրողը տանի: Նրանք չէի՞ն, որ ձերբակալեցին Աթոսին: Մի խոսքով, իմ
երիտասարդ բարեկամ, հավատացեք մի մարդու, որն արդեն երեսուն տարի գտնվում
է արքունիքում: Չափից ավելի հանգիստ մի՛ եղեք, թե չէ՝ կորած եք: Ընդհակառակն,—
և սա ես եմ ասում ձեզ,— դուք պետք է ամենուրեք թշնամիներ տեսնեք: Եթե որևէ մեկը

ձեզ հետ վեճ սկսի, աշխատեցեք խույս տալ նրանից, թեկուզ տասը տարեկան երեխա լինի սկսողը: Եթե անցնելու լինեք կամրջով, լավ տնտղեցեք տախտակները, որովհետև նրանցից մեկը կարող է կոտրվել ձեր ոտքի տակ: Եթե պատահի, որ դուք անցնելիս լինեք կառուցվող տան մոտով, վերև նայեցեք, որովհետև կարող է ձեր գլխին քար ընկնել: Եթե դուք ուշ ժամին տուն վերադառնալիս լինեք, թող ձեր սպասավորը քայլի հետևից, և թող նա զինված լինի, իհարկե, այն դեպքում, եթե դուք լիովին վստահում եք նրան: Զգուշացեք բոլորից՝ բարեկամից, եղբորից, սիրուհուց, մանավանդ սիրուհուց:

Դ՛Արտանյանը շիկնեց:

— Սիրուհո՛ւց,— մեքենաբար կրկնեց նա,— իսկ ինչո՞ւ պետք է սիրուհուց ավելի զգուշանամ, քան որևէ մեկ ուրիշից:

— Որովհետև սիրուհին կարդինալի ամենասիրած միջոցներից մեկն է, որը մյուս բոլորից ավելի արագ է գործում, կինը ձեզ տասը պիստոլով էլ կդավաճանի, հիշեցեք Դալիլային: Դուք գիտե՞ք սուրբ գիրքը:

Դ՛Արտանյանը հիշեց այն տեսակցությունը, որ հենց այդ երեկո նշանակել էր տիկին Բոնասիեն, սակայն, ի պատիվ մեր հերոսի, պետք է ասենք, որ պ-րն դը Տրևիլի վատ կարծիքն ընդհանրապես կանանց մասին դ՛Արտանյանին ամենաչնչին կասկած անգամ չներշնչեց իր սիրունիկ տանտիրուհու նկատմամբ:

— Ի դեպ,— շարունակեց պ-րն դը Տրևիլը,— ի՞նչ եղան ձեր երեք ուղեկիցները:

Ես հենց ինքս էի ուզում հարցնել ձեզ, որևէ տե-դեկություն չե՞ք ստացել նրանց մասին:

— Ոչ մի:

— Ես նրանց թողել եմ ճանապարհին: Պորտոսին՝ Շանտիլիայում՝ մենամարտը քթի առաջ, Արամիսին՝ Կրեկերում՝ գնդակը ուսի մեջ և Աթոսին՝ Ամիենում՝ կեղծ դրամ սաղացնելու մեղադրանքը գլխին կախված:

— Ա՛յ թե ինչ,— ասաց պ-րն դը Տրևիլը:— Լավ, իսկ դուք ինչպե՞ս դուրս պրծաք:

— Հրաշքով, պետք է խոստովանեմ, տեր իմ, որ հրաշքով դուրս պրծա, կրծքիս սուսերի հարված ստանալով և կոմս դը Վարդին մեխելով Կալե տանող ճանապարհին, ինչպես թիթեռին կարելի է մեխել պաստառին:

— Հենց այդ էր պակաս: Դը Վարդը կարդինալին նվիրված մարդ է և Ռոշֆորի ազգականը: Լսեցեք, բարեկամս, իմ գլուխը մի միտք եկավ:

— Ի՞նչ միտք, տեր իմ:

— Եթե ես ձեր տեղը լինեի, մի բան կանեի:

— Ի՞նչ բան:

— Քանի նորին սրբազնությունը չի սկսել ինձ որոնել Փարիզում, ես նորից կգնայի Պիկարդիա, գաղտուկ, առանց որևէ մեկին ասելու, և կիմանայի, թե ինչ է պատահել իմ երեք ուղեկիցներին: Ճիշտն ասած՝ նրանք արժանի են այդ փոքրիկ ուշադրությանը ձեր կողմից:

— Լավ խորհուրդ է, տեր իմ, և ես վաղը կգնամ:

— Վա՛ղը: Իսկ ինչո՞ւ ո՛չ հենց այս երեկո:

— Այսօր ինձ Փարիզում պահում է մի անհետաձգելի գործ:

— Ա՛խ, պատանի՛, պատանի՛: Մի ինչ-որ վաղանցուկ հրապուրա՞նք: Կրկնում եմ՝ զգուշացեք, կինը կործանել է մեզ բոլորիս անցյալում, կկործանի և ապագայում: Ինձ լսեցեք, գնացեք հենց այս երեկո:

— Անհնարին է, տեր իմ:

— Նշանակում է դուք խո՞սք եք տվել:

— Այո, տեր իմ:

— Դե, այդ ուրիշ բան է, բայց խոստացեք, որ եթե այս գիշեր ձեզ չսպանեն, վաղը կմեկնեք:

— Խոստանում եմ:

— Փող հարկավոր չէ՞ ձեզ:

— Ես դեռ հիսուն պիստոլ ունեմ: Կարծում եմ՝ բավական կլինի:

— Իսկ ձեր ուղեկիցնե՞րը:

— Կարծում եմ, որ նրանք փող կունենան: Երբ մենք Փարիզից դուրս եկանք, յուրաքանչյուրիս գրպանում յոթանասունհինգ պիստոլ կար:

— Կտեսնե՞մ ես ձեզ մինչև ձեր մեկնելը:

— Կարծում եմ՝ ոչ, տեր իմ, եթե որևէ նոր բան չլինի:

— Այդ դեպքում՝ բարի ճանապարհ:

— Շնորհակալ եմ, տեր իմ:

Եվ դ՛Արտանյանը հրաժեշտ տվեց պարոն դը Տրևիլին, ավելի քան երբևէ հուզված այն հայրական հոգատարությունից, որ ցուցաբերեց նա հրացանակիրների նկատմամբ:

Դ՛Արտանյանը հերթով եղավ Աթոսի, Պորտոսի ու Արամիսի բնակարաններում: Նրանցից ոչ մեկը չէր վերադարձել: Նրանց սպասավորները նույնպես բացակայում էին, և ոչ մեկի մասին ոչ մի տեղեկություն չկար:

Դ՛Արտանյանը կարող էր տեղեկություն ստանալու համար դիմել նրանց սիրուհիներին, բայց նա չէր ճա-նաչում ո՛չ Պորտոսի սիրուհուն, ո՛չ Արամիսի, իսկ ինչ վերաբերում է Աթոսին, նա սիրուհի չուներ:

Գվարդիականների գորանոցի մոտով անցնելիս նա մի բուպե մտավ ախոռ. չորս ձիերից երեքն արդեն բերել էին: Չարմանք կտրած Պլանշեն հենց այդ ժամանակ քերոցով մաքրում էր ձիերը, և նրանցից երկուսն արդեն պատրաստ էին:

— Ա՛խ, տեր իմ,— ասաց Պլանշեն դ'Արտանյանին տեսնելով,— որքա՛ն ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ:

— Իսկ ի՞նչ է պատահել, Պլանշե,— հարցրեց երիտասարդը:

— Վստահո՞ւմ եք դուք պարոն Բոնասիեին, մեր տան տիրոջը:

— Ե՞ս: Ամենևին:

— Այ, այդ լավ է, տեր իմ:

— Բայց ինչո՞ւ եք հարցնում այդ:

— Որովհետև, երբ դուք խոսում էիք նրա հետ, ես դիտում էի ձեզ, թեպետև չէի լսում ձեր խոսքերը, և գիտե՞ք ինչ, տեր իմ, նրա դեմքը երկու թե երեք անգամ փոխվեց:

— Դե լա՛վ...

— Դուք այդ չնկատեցիք, տեր իմ, որովհետև ձեր միտքն զբաղված էր ստացած նամակով: Բայց ես, ընդհակառակն, անհանգստացած էի թե այդ ի՞նչ տարօրինակ ձևով է այդ նամակը մեր տունն ընկել, դրա համար էլ աչքս որ մի բուպե չէի հեռացնում նրա դեմքից:

— Եվ ինչպե՞ս երևաց այն:

— Դավաճանի դեմք:

— Մի՞ թե:

— Բացի այդ, տեր իմ, հենց որ դուք հրաժեշտ տվիք նրան և ծածկվեցիք փողոցի անկյունում, Բոնասիեն իսկույն գլխարկը վերցրեց, դուռը փակեց և վազեց հակառակ կողմը:

— Իսկապես, Պլանշե, դու իրավացի ես. այդ ամենը ինձ խիստ կասկածելի է թվում և, հանգիստ եղիր, մենք չենք վճարի նրա բնակարանի վարձը, մինչև այդ ամենը ամենավճռական ձևով չլուսաբանվի:

— Դուք շարունակ կատակ եք անում, տեր իմ, բայց սպասեցեք և ինքներդ կտեսնեք:

— Ի՛նչ արած, Պլանշե, ինչ որ լինելու է, կլինի:

— Ուրեմն դուք չե՞ք հրաժարվում այսօրվա երեկոյան զբոսանքի մտքից, տեր իմ:

— Ընդհակառակն, Պլանշե, որքան ավելի շատ բարկանամ ես Բոնասիեի վրա, այնքան ավելի սիրով կգնամ այն տեսակցությանը, որ նշանակված է ինձ՝ քեզ այնպես անհանգստացնող նամակում:

— Դե, տեր իմ, եթե ձեր որոշումը...

— ...անսասան է, բարեկամս: Ուրեմն՝ ժամը իննին պատրաստ եղիր այստեղ, գորանոցում: Ես կգամ քեզ վերցնելու:

Տեսնելով, որ այլևս ոչ մի հույս չկա տիրոջը համոզելու հրաժարվել իր մտքից, Պլանշեն խոր ախ քաշեց և սկսեց մաքրել երրորդ ձին:

Ինչ վերաբերում է դ՛Արտանյանին, որը, ճիշտն ասած, շատ զգույշ երիտասարդ էր, ապա նա փոխանակ տուն վերադառնալու, ճաշելու գնաց հենց այն նույն գասկոնացի քահանայի մոտ, որը չորս ընկերներին դժվարին օրերին հյուրասիրել էր շոկոլադի նախաճաշով:

XXIV. Տաղավարը

Ժամը իննին ղ'Արտանյանը գվարդիականների գորանոցի մոտ էր և Պլանշեին գտավ կազմ ու պատրաստ: Չորրորդ ձին էլ արդեն տեղ էր հասել:

Պլանշեն զինված էր իր հրացանով և ատրճանակով:

Դ'Արտանյանը սուսեր ուներ և գոտին խրած երկու ատրճանակ: Նրանք ձի նստեցին և անաղմուկ դուրս եկան: Բոլորովին մութ էր և նրանց մեկնումն աննկատ մնաց: Պլանշեն գնում էր հետևից, իր տիրոջից տասը քայլ հեռավորությամբ:

Դ'Արտանյանն առափնյա փողոցներն անցավ, դուրս եկավ Կոնֆերանս դարպասով և բռնեց Սեն Կլու տանող ճանապարհը, որն այն ժամանակ շատ ավելի գեղեցիկ էր, քան այժմ:

Քանի դեռ նրանք քաղաքում էին, Պլանշեն հարզանքով պահպանում էր այն հեռավորությունը, որ ինքն էր սահմանել իր համար, բայց որքան ճանապարհն ավելի ամայի էր դառնում և մութը թանձրանում, նա աստիճանաբար մոտենում էր իր տիրոջը, այնպես որ, երբ մտնում էին Բուլոնյան անտառը, նա արդեն բնականորեն երիտասարդի կողքին էր: Մենք չենք թաքցնի, որ բարձր ծառերի ճոճվելը և լուսնի ցուլերը մութ թավուտի մեջ՝ Պլանշեին կարգին անհանգստացնում էին: Դ'Արտանյանը նկատեց, որ իր սպասավորն ինչ-որ իրեն լավ չի զգում:

— Է, պարոն Պլանշե, ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նա:

— Դուք չե՞ք գտնում, տեր իմ, որ անտառները նման են եկեղեցիների:

— Այդ ինչո՞վ, Պլանշե:

— Նրանով, որ այստեղ էլ, այնտեղ էլ մարդ սիրտ չի անում բարձր խոսել:

— Իսկ ինչո՞ւ սիրտ չես անում բարձր խոսել, Պլանշե: Որովհետև վախենո՞ւմ ես:

— Այո, տեր իմ, վախենում եմ, թե որևէ մեկը մեզ կլսի:

— Թե որևէ մեկը մեզ կլսի: Բայց մեր խոսակցության մեջ ոչ մի անատակ բան չկա, սիրելի Պլանշե, և ոչ ոք դրա մեջ դատապարտելի բան չի կարող գտնել:

— Ա՛խ, տեր իմ,— շարունակեց Պլանշեն՝ վերադառնալով իր գլխավոր մտքին,— գիտե՞ք, այդ Բոնասիեի հոնքերի մեջ ինչ-որ խորամանկ բան կա, և նա այնպե՛ս զգվելի ձևով է շարժում շրթունքները:

— Ո՞ր սատանան հիմա քո միտքը գցեց Բոնասիեին:

— Տեր իմ, մարդ միտքն է գցում այն, ինչ կարող է, և ոչ թե այն, ինչ ուզում է:

— Դա նրանից է, Պլանշե, որ դու վախկոտ ես:

— Չի կարելի զգուշությունը շփոթել վախկոտու-թյան հետ, տեր իմ: Զգուշությունը առաքինություն է:

— Դե դու էլ առաքինի ես, չե՞, Պլանշե:

— Այն ի՞նչ է փայլում այնտեղ, տեր իմ: Ասես հրացանի փող լինի: Չկոացնե՞նք մեր գլուխները, փորձանքից խույս տալու համար:

— Իսկապես,— մրմնջաց դ՛Արտանյանը, որը հիշեց դը Տրևիլի խրատները,— իսկապես այս անասունը վերջիվերջո իմ սիրտն էլ ահ է գցելու:

Եվ նա ձին բաց թողեց վարձով:

Պլանշեն իր տիրոջ շարժումը կրկնեց այնպիսի ճշտությամբ, որ ասես նրա ստվերը լիներ, և իսկույն-ներթ հասավ նրա հետևից:

— Ի՞նչ է, տեր իմ, ամբողջ գիշեր ճամփա ենք գնալու,— հարցրեց նա:

— Ո՛չ, Պլանշե, որովհետև դու արդեն տեղ հասար:

— Ինչպե՞ս թե՛ ես տեղ հասա: Իսկ դո՞ւք, տեր իմ:

— Ես էլի մի քանի քայլ առաջ կգնամ:

— Եվ ինձ այստեղ մենակ կթողնեք:

— Վախենո՞ւմ ես, Պլանշե:

— Ոչ, տեր իմ, միայն ուզում եմ ձեզ ասել, որ գիշերը խիստ ցուրտ է լինելու, որ ցուրտը հողացավ է առաջացնում և որ հողացավով հիվանդ սպասավորը վատ օգնական է մանավանդ այնպիսի կայտառ տիրոջ համար, ինչպիսին դուք եք:

— Լավ, Պլանշե, եթե մրսելիս լինես, մտիր ահա այնտեղ երևացող պանդոկներից մեկը և վաղը առավոտյան ժամը վեցին դռան մոտ սպասիր ինձ:

— Տեր իմ, ես ամենայն հարգանքով կերել ու խմել եմ այն էքյուն, որ այսօր առավոտյան տվիք ինձ, այնպես որ գրպանուս ոչ մի գրոշ չկա, որ մրսելու դեպքում պանդոկ մտնեմ:

— Ահա քեզ կես պիստոլ: Դեհ, մինչև վաղը:

Դ'Արտանյանը ցած իջավ ձիուց, սանձը նետեց Պլանշեին և թիկնոցի մեջ փաթաթվելով արագ հեռացավ:

— Տե՛ր աստված, ինչպե՛ս եմ մրսում,— գոչեց Պլանշեն, հենց որ տերը աչքից անհայտացավ: Եվ շտապելով տաքանալ նա անհապաղ բախեց տներից մեկի դուռը, որ զարդարված էր քաղաքամերձ պանդոկի բոլոր արտաքին նշաններով:

Մինչ այդ դ'Արտանյանը, որ թեքվել էր դեպի մի նեղ ճանապարհ, իր ուղին շարունակելով հասավ Սեն Կլու: Բայց այստեղ էլ նա գլխավոր փողոցով չանցավ, այլ ամբողջ շրջանցելով հասավ մի նեղ առանձնացած նրբանցքի և շուտով կանգնեց նամակում նշված տաղավարի առաջ: Նա կանգնած էր մի շատ խուլ տեղ: Նրբանցքի մի կողմում բարձր պատ էր, որի կողքին էլ գտնվում էր տաղավարը, իսկ մյուս կողմում ցանկապատը անցորդներից պաշտպանում էր մի փոքրիկ պարտեզ, որի խորքում երևում էր մի աղքատիկ խրճիթ:

Դ՛Արտանյանը հասել էր տեսակցության վայրը, և որովհետև նրան ասված չէր, որ որևէ նշանով իմաց տա իր ներկայությունը, սկսեց սպասել:

Կատարյալ լռություն էր թագավորում. կարելի էր կարծել, թե մայրաքաղաքից հարյուր լյո հեռու էս գտնվում: Դ՛Արտանյանը շուրջը նայելով՝ հենվեց ցանկապատին: Այդ ցանկապատի, այդ պարտեզի, այդ խրճիթի այն կողմը թանձր խավարը իր ծալքերով պարուրել էր մի անձայրածիր տարածություն, որտեղ քնած էր Փարիզը. դատարկ, սևին տվող Փարիզը, մի անդունդ, որի մեջ փայլվիլում էին մի քանի Լուսավոր կետեր, այդ դժոխքի մռայլ աստղերը:

Բայց դ՛Արտանյանի համար ամեն ինչ հրապուրիչ էր դառնում, բոլոր մտքերը ժպտում էին, խավարը թափանցիկ էր թվում նրան: Շուտով պիտի սկսվեր իր տեսակցության ժամը:

Եվ իրոք, մի քանի վայրկյան հետո Սեն Կլու աշտարակի զանգը իր լայն, ոռնացող երախից տասը դանդաղ հարվածներ ձգեց: Մակայն այդ հարվածներից յուրաքանչյուրը— չէ՞ որ նրանցից ամեն մեկը մի մասնիկն էր փափագած ժամի— ներդաշնակորեն էր հնչում երիտասարդի սրտում:

Նրա աչքերը սևեռվել էին պատի մոտի փոքրիկ տաղավարին, որի բոլոր լուսամուտները փակված էին խլափեղկերով, բացի մեկից, որ գտնվում էր երկրորդ հարկում:

Այդ լուսամուտից մեղմ լույս էր ծորում, որն արծաթագոծում էր ցանկապատի այն կողմը խմբովին աճած մի քանի լորենիների դողդողուն տերևները: Պարզ էր, որ այդքան դուրեկան լուսավորված այդ փոքրիկ լուսամուտի այն կողմում նրան էր սպասում սիրունիկ տիկին Բոնասին: Այս քաղցր մտքով տարված՝ դ՛Արտանյանը մի կես ժամ սպասեց առանց ամենափոքր անհամբերության, հայացքը հառած այդ փոքրիկ, չքնաղ բնակարանին: Դրսից երևում էր ոսկեգոծ քիվով առաստաղի մի մասը, որը ցույց էր տալիս տաղավարի նաև մյուս մասերի շքեղությունը, Սեն-Կլուի աշտարակի զանգը խփեց ժամը տասն անց կեսը: Այս անգամ դ՛Արտանյանը զգաց, որ իր ջղերով ինչ-որ դող անցավ, որ ինքն էլ բացատրել չէր կարող: Ասենք՝ գուցե նա սկսել էր մրսել և զուտ ֆիզիկական զգացողությունը հոգեկանի տեղ էր դրել:

Հետո նրա մտքով անցավ, թե ինքը նամակը կարդալիս սխալվել է, տեսակցությունը նշանակված է միայն ժամը տասնմեկին:

Նա մոտեցավ լուսամուտին, կանգնեց լույսի շերտի մեջ, գրպանից հանեց նամակը և նորից կարդաց: Ո՛չ, չի սխալվել, տեսակցությունը, իսկապես, նշանակված էր ժամը տասին:

Նա վերադարձավ իր նախկին տեղը: Լռությունն ու մենությունը սկսում էին որոշ անհանգստություն ներշնչել նրան:

Ժամը տասնմեկը խփեց:

Դ՛Արտանյանը սկսեց անհանգստանալ. իսկապես, չլինի՞ որն է վատ բան է պատահել տիկին Բոնասիեին:

Նա երեք անգամ ծափ զարկեց՝ սիրահարների սովորական նշանը, սակայն ոչ ոք չպատասխանեց նրանք նույնիսկ արձագանք չեղավ: Այն ժամանակ փոքր-ինչ սրտնեղած՝ նա մտածեց, թե գուցե իրեն սպասելիս դեռատի կինը քուն է մտել:

Նա մոտեցավ պատին ու փորձեց վերև բարձրանալ, բայց պատը նոր էր սվաղած և դ՛Արտանյանն իզուր եղունգները կոտրտեց:

Այդ բոլորին նա նորից ուշադրությունը դարձրեց ծառերի վրա, որոնց տերևները առաջվա պես արծաթագոծված էին լույսից, և որովհետև ծառերից մեկի ճյուղը կախված էր ճանապարհի վրա, դ՛Արտանյանը մտածեց, որ այդ ճյուղին բարձրանալով՝ կարող է տեսնել տաղավարի ներսը:

Ծառը բարձրանալը դժվար բան չէր: Դե, դ՛Արտան-յանը հազիվ քսան տարեկան էր, հետևապես, դեռ չէր մոռացել իր պատանեկան վարժությունները: Մի ակնթարթում նա ծառը բարձրացավ, և թափանցիկ ապակու միջով նրա հայացքը խրվեց տաղավարի խորքը:

Մի սարսափելի տեսարան բացվեց դ՛Արտանյանի առաջ, և նրա մարմնով դող անցավ: Այդ մեղմ լույսը, այդ գեղեցիկ լամպը լուսավորում էր սոսկալի ջարդի մի տեսարան. լուսամուտի ապակիներից մեկը փշրված էր, սենյակի դուռը կոտրված, և

նրա փեղկերը կախված էին ծխնիններից, հատակին շուռ էր տված սեղանը, որի վրա, ըստ երևույթին, պատրաստված էր եղել նրբաճաշակ ընթրիք. հատակին թափված էին շշերի կտորտանք, տրորված մրգեր: Ամեն ինչ այդ սենյակում վկայում էր, որ տեղի էր ունեցել դաժան և հուսահատական պայքար:

Դ'Արտանյանին նույնիսկ թվաց, թե այդ արտակարգ խառնափնթորության մեջ ինքը տեսնում է հագուստի ծվեններ և սփռոցի ու վարագույրների վրա՝ արյան մի քանի հետքեր:

Սրտի արագ թայրտոցով նա շտապ ցած իջավ ծառից: Ուզում էր տեսնել, փողոցում էլ չկա՞ն արդյոք բռնության հետքեր:

Գիշերային լռության մեջ առաջվա պես հաճելի լույս էր առկայծում: Եվ այդ ժամանակ դ'Արտանյանը նկատեց այնպիսի մի բան, որ առաջ միանգամից չէր նկատել, որովհետև մինչև այդ ոչ մի բան նրան չէր դրդել այդքան ուշի-ուշով զննել, տեղ-տեղ տրորված, տեղ-տեղ փորփրված գետնին կային մարդկային ոտքերի և ձիերի սմբակների հետքեր: Բացի դրանից, ըստ երևույթին, Փարիզից եկած կառքի անիվները փափուկ հողի մեջ թողել էին խորը հետք, որը հասնում է մինչև տաղավար, ապա նորից շուռ գալիս Փարիզի կողմը:

Վերջապես դ'Արտանյանը, որը շարունակում էր իր հետազոտությունը, պատի մոտ գտավ կանացի մի պատահողոված ձեռնոց: Այդ ձեռնոցի այն մասերը, որոնք կեղտոտ գետնին չէին դիպել, աչքի էին ընկնում անբասիր մաքրությամբ: Դա մեկն էր այն բուրացողված ձեռնոցներից, որ սիրահարները այնքան հաճույքով պոկում են սիրունիկ ձեռքից:

Որքան դ'Արտանյանն ավելի էր շարունակում իր զննումը, այնքան ավելի առատ քրտինք էր պատում նրա ճակատը, սիրտը կծկվում էր սոսկալի տագնապից, շնչառությունը արագանում: Սակայն ինքն իրեն հանգստացնելու համար նա մտածում էր, թե գուցե այդ տաղավարը ոչ մի առնչություն էլ չունի տիկին Բոնասիեի հետ, որ երիտասարդ կինը իրեն տեսակցություն է նշանակել այդ տաղավարի մոտ, ոչ թե նրա ներսում, որ նրան կարող էին Փարիզում պահած լինել իր պարտականությունները կամ գուցե և ամուսնու խանդը:

Բայց այդ բոլոր մտքերը փշրում, տապալում ու ոչնչացնում էր ներքին ցավի այն զգացմունքը, որը երբեմն տիրում է մեր ամբողջ էությանը և գոռում, Բարձր աղաղակում, որ մեր գլխին զարհուրելի դժբախտություն է կախվել:

Եվ դ՛Արտանյանն ասես ինչքը կորցրած նետվեց մեծ ճանապարհը, գնաց այն ուղիով, որով եկել էր այդտեղ, վազեց մինչև լաստանավը և սկսեց հարցուփորձ անել լաստավարին:

Երեկոյան ժամը յոթին մոտ լաստավարը գետն անց էր կացրել սև ծածկոցի մեջ փաթաթված մի կնոջ, որ, ըստ երևոյթին, չէր ուզում, որ իրեն ճանաչեն: Բայց հենց այդ նախազգուշական միջոցներն էլ լաստավարին ստիպել էին ուշադրություն դարձնել նրա վրա, և նա նկատել էր, որ այդ կինը երիտասարդ էր ու գեղեցիկ:

Այն ժամանակ, ինչպես և այժմ, բազմաթիվ երիտասարդ ու գեղեցիկ կանայք էին գնում Սեն Կլու, չցանկանալով սակայն, որ իրենք ճանաչվեն, բայց և այնպես դ՛Արտանյանը ոչ մի բոլոր չէր կասկածում, որ լաստավարը հենց տիկին Բոնասիեին է տեսել:

Օգտվելով լաստավարի խրճիթում վառվող լամպի լույսից՝ երիտասարդը մի քանի անգամ էլ կարդաց տիկին Բոնասիեի նամակը և համոզվեց, որ ինքը չի սխալվել, որ տեսակցությունը նշանակված է եղել Սեն Կլուում և ոչ մի որևէ այլ տեղ, այն էլ պ-րն դ՛Էստրեի տաղավարի մոտ և ո՛չ թե մի այլ փողոցում:

Ամեն ինչ միանալով համոզում էին դ՛Արտանյանին, որ նրա նախազգացումը չի խաբել իրեն և որ տեղի է ունեցել մի մեծ դժբախտություն:

Նա ետ վազեց: Մտածում էր, թե գուցե իր բացակայության ժամանակ տաղավարում որևէ բան է պատահել և հիմա այնտեղ իրեն տեղեկություններ են սպասում:

Նրբանցքը առաջվա պես ամայի էր, և նույն խաղաղ. մեղմ լույսը դուրս էր հորդում լուսամուտից:

Եվ հանկարծ դ՛Արտանյանը հիշեց այն համր ու կույր հյուղակը, որը, անտարակույս, որևէ բան տեսել է, իսկ գուցե և կարող է խոսել:

Դռնակը փակ էր, բայց նա ցատկեց ցանկապատի վրայով և, ուշադրություն չդարձնելով շղթայակապ շան հաչոցի վրա՝ մոտեցավ խրճիթին:

Նա դուռը բախեց: Սկզբում ոչ մի պատասխան չեղավ: Խրճիթում էլ տիրում էր նույնպիսի համր լռություն, ինչպես տաղավարում: Բայց այդ խրճիթը նրա վերջին հույսն էր, և նա շարունակեց բախել:

Շուտով ներսում լսվեց թեթև աղմուկ, այնպիսի վեհերոտ աղմուկ, որ ասես ինքն էլ վախենում էր, թե իրեն կլսեն:

Այն ժամանակ դ'Արտանյանը դադարեց բախել և սկսեց խնդրել, ըստ որում նրա ձայնի մեջ լսվում էր այնքան անհանգստություն ու խոստումներ, այնքան վախ ու գուրգուրանք, որ այդ ձայնը ամենավախկոտ մարդուն էլ կարող էր հանգստացնել: Վերջապես հին, կիսափտած խլափեղկը բացվեց, ավելի ճիշտ՝ կիսաբաց եղավ, և հենց որ անկյունում վառվող փոքրիկ լամպի գունատ լույսը լուսավորեց դ'Արտանյանի ուսափոկերը, սուսերի պատյանն ու ատրճանակների կոթերը, խլափեղկը իսկույն նորից փակվեց: Սակայն, որքան էլ արագ կատարվեց այս ամենը, դ'Արտանյանը կարողացավ նկատել մի ծերունու գլուխ:

— Աստծու սիրուն, լսեցեք ինձ,— ասաց նա:— Ես այստեղ սպասում էի մի մարդու, բայց նա չկա: Ես մեռնում եմ անհանգստությունից: Ասացեք, այս մոտերքում որևէ դժբախտություն չի՞ պատահել:

Լուսամուտը նորից դանդաղորեն բացվեց և նույն դեմքը կրկին երևաց այնտեղ, միայն թե հիմա նա ավելի գունատ էր, քան առաջ:

Դ'Արտանյանը անկեղծորեն պատմեց ծերունուն ամեն ինչ, չտալով միայն անունը: Նա պատմեց, որ ինքը տեսակցություն էր նշանակել մի կնոջ հետ այս տաղավարի մոտ, որ նրան չգտնելով բարձրացավ ծառը, լամպի լույսով տեսավ սենյակում տիրող ավերածությունը:

Ծերունին լսում էր նրան ուշադիր, գլխով դրական նշան անելով, հետո, երբ դ'Արտանյանը վերջացրեց, նա գլուխը օրորեց այնպիսի մի ձևով, որը ոչ մի լավ բան չէր գուշակում:

— Ի՞նչ եք ուզում ասել,— գոչեց դ՛Արտանյանը:— Ի սեր Աստծո, բացատրեցեք, ի՞նչ է նշանակում այս ամենը:

— Ա՛խ, տե՛ր իմ,— պատասխանեց ծերունին,— ոչ մի բան մի հարցնեք ինձ, որովհետև, եթե ես պատմեմ ձեզ այն, ինչ տեսել եմ, փորձանքից ազատվել չեմ կարող:

— Նշանակում է՝ դուք որևէ բան տեսե՞լ եք,— հարցրեց դ՛Արտանյանը:— Եթե այդպես է,— շարունակեց նա մի պիստոլ նետելով ծերունուն,— պատմեցեք, ի սեր աստծո, պատմեցեք ինչ որ տեսել եք, ազնվականի ազնիվ խոսք եմ տալիս, ես գաղտնի կպահեմ ձեր ամեն խոսքը:

Ծերունին դ՛Արտանյանի դեմքին կարդաց այնքան անկեղծություն և այնքան թախիծ, որ նրան լսելու նշան արեց և ցածր ձայնով սկսեց պատմությունը:

— Ժամը իննին մոտ ես փողոցում ինչ-որ աղմուկ լսեցի: Ցանկանալով իմանալ, թե ինչ է պատահել, մո-տեցա դռանը ու մեկ էլ հանկարծ նկատեցի. որ մեկը ուզում է մտնել իմ այգին: Ես աղքատ եմ և չեմ վախենում, թե կարող են ինձ կողոպտել, դրա համար էլ դուռը բաց արի և մի քանի քայլ հեռավորության վրա տեսա երեք մարդ: Խավարի մեջ կանգնած էին մի լծված կառեթ և երեք հեծնելու ձի: Ձիերը, ըստ երևույթին, պատկանում էին այն մարդկանց, որոնք հազնված էին ազնվականի պես:

«Ի՞նչ եք ուզում ինձնից, բարի պարոններ»,— հարցրի ես:

«Դու պետք է որ սանդուղք ունենաս»,— ասաց մեկը, որն իմ կարծիքով նրանց պետն էր:

«Այո, պարոն, մի սանդուղք, որի օգնությամբ ես ծառերից պտուղ եմ քաղում»:

«Տուր մեզ այդ սանդուղքը և գնա տուն: Ահա քեզ մի էքյու անհանգստացնելու համար: Միայն թե հիշիր, եթե դու մեկ խոսք էլ դուրս թոցնես բերանիցդ այն ամենի մասին, ինչ կտեսնես ու կլսես,— ախր ես համոզված եմ, ինչքան էլ քեզ սպառնանք, միևնույն է, դու նայելու և լսելու ես,— վերջդ հասել է»:

Այս ասելով, նա ինձ նետեց մեկ էքյու, որը ես վերցրի, և սանդուղքը տարավ:

Դռնակը նրա հետևից փակելով, ես ձևացրի, թե տուն եմ գնում, բայց, իսկապես, իսկույն դուրս եկա հետևի դռնից և խավարի մեջ կուզեկուզ հասա, ահա, այն շամբուկի թփին, որտեղից կարող էի ամեն ինչ տեսնել և աննկատ մնալ:

Երեք մարդ կառեթն անադմուկ մոտ քշեցին, նրա միջից դուրս բերին մի մարդու, որը կարճահասակ էր, հաստիկ, արդեն ճերմակած մազերով, հագին մուգ գույնի աղքատիկ հագուստ: Սա վախվխելով վեր բարձրացավ սանդուղքով, զգուշությամբ նայեց սենյակի ներսը, կամացուկ ցած իջավ և շշուկով ասաց. «Նա է»:

Այն մարդը, որ խոսել էր ինձ հետ, իսկույն մոտեցավ տաղավարի դռանը, բաց արեց այն գրպանից հանած բանալիով, դուռն իր հետևից ծածկեց և անհայտացավ: Մինչ այդ մյուս երկու մարդիկ սանդուղքով վեր բարձրացան: Ծերունին մնաց կառեթի դռնակի մոտ, կառապանը լծված ձիերն էր պահում, իսկ ծառան՝ հեծնելու ձիերը:

Հանկարծ տաղավարի ներսից բարձր ճիչեր լսվեցին, մի ինչ-որ կին վազեց լուսամուտի մոտ, բաց արեց այն, ասես ուզում էր ցած թռչել: Բայց մյուս երկու մարդուն տեսնելով՝ նա ետ ցատկեց, իսկ այն մարդիկ ոստնեցին սենյակի մեջ:

Այլևս ոչինչ չտեսա, բայց լսում էի կոտրատվող կահույքի ճռճոց: Կինը գոռում էր և օգնություն կանչում, բայց շուտով նրա ճիչերը լռեցին: Երեք մարդ մոտեցան լուսամուտին: Նրանցից երկուսը սանդուղքով ցած իջան, իրենց ձեռքերին բռնած ունենալով կնոջը, և նրան կառեթ նստեցրին: Նրա հետևից էլ փոքրիկ ծերունին մտավ կառեթը: Նա, որ մնացել էր տաղավարում, լուսամուտը փակեց և մի րոպե անց՝ դուրս եկավ դռնով: Նրա երկու ուղեկիցները արդեն ձի նստած՝ նրան էին սպասում: Ստուգելով, որ կինը կառեթի մեջ է, նա ևս թռավ թամբի վրա, ծառան տեղ գրավեց կառապանի կողքին, երեք ձիավորների ուղեկցությամբ կառեթն իսկույն հեռացավ և սրանով էլ ամեն ինչ վերջացավ: Սրանից ավելի ես ոչինչ չեմ տեսել և ոչինչ չեմ լսել:

Այս զարհուրելի տեղեկությունից ցնցված՝ դ'Արտանյանը լուռ ու անշարժ մնաց, ցասումի ու խանդի բոլոր դևերը փոթորկում էին նրա սրտում:

— Պարոն,— ասաց ծերունին, որի վրա այդ համր հուսահատությունն ավելի մեծ տպավորություն էր թողել, քան կարող էին ունենալ աղաղակներն ու

արցունքները,— դե, ինչ կարիք կա այդպես հուսահատվելու: Նրանք հո չեն սպանել ձեր սիրուհուն, և այդ է գլխավորը:

— Գեթ մոտավոր չափով գիտե՞ք դուք,— հարցրեց դ'Արտանյանը,— թե ով էր ղեկավարում այդ դժոխային արշավը:

— Ոչ, չեմ ճանաչում նրան:

— Բայց քանի որ դուք նրա հետ խոսել եք, նշանակում է, կարող էիք տեսնել նրան:

— Այո, դուք նրա նշաններն եք հարցնում:

— Բարձրահասակ, նիհար, թխադեմ, սև բեղեր, սև աչքեր, արտաքինից դատելով՝ ազնվական:

— Այդպե՛ս,— գոչեց դ'Արտանյանը,— նա է: Դարձյալ նա: Երևի դա իմ չար ոգին է: Իսկ մյո՞ւսը:

— Ո՞րը:

— Կարճահասակը:

— Օ՛, նա նշանավոր մարդ չէր, երաշխավորում եմ: Նա սուսեր չուներ, մյուսներն էլ նրա հետ վարվում էին առանց որևէ հարգանքի:

— Երևի մի որևէ սպասավոր,— մրմնջաց դ'Արտանյանը:— Ա՛յս ինե՛ղճ կին, ինե՛ղճ կին, տեսնես ի՞նչ են արել նրան:

— Դուք խոստացաք չմատնել ինձ,— ասաց ծերունին:

— Եվ կրկնում եմ իմ խոստումը: Հանգիստ եղեք, ես ազնվական եմ: Ազնվականը միայն մեկ խոսք ունի, և ես արդեն տվել եմ ձեզ այդ խոսքը:

Դ՛Արտանյանը կոտրված սրտով նորից ուղղվեց դեպի լաստանավը: Լինում էր ընդհանուր, երբ նա չէր հավատում, թե այն կինը, որի մասին պատմում էր ծերունին, տիկին Բոնասին է եղել, և հույս էր դնում, թե վաղը նրան կտեսնի Լուվրում: Լինում էր ընդհանուր, երբ նրա մտքով անցնում էր, թե գուցե տիկին Բոնասին ինտրիգ է ունեցել որևէ մեկ ուրիշի հետ և խանդոտ սիրեկանը նրան բռնել է ու փախցրել: Նա կորչում էր ենթադրությունների մեջ, մորմոքվում, հուսահատության հասնում:

— Օ՛, եթե իմ բարեկամները հետս լինեին,— գոչեց նա:— Գոնե նրան գտնելու մի հույս կունենայի: Բայց ո՞վ գիտե, ինչ է պատահել նրանց: Կեսգիշերվան մոտ էր: Այժմ հարկավոր էր Պլանշեին գտնել: Դ՛Արտանյանը բախում էր բոլոր պանդոկների դռները, որոնցից գեթ մի թույլ լույս էր երևում: Բայց նրանցից ոչ մեկում Պլանշեն չկար:

Արդեն վեցերորդ պանդոկում դ՛Արտանյանը մտածեց, որ իր որոնումները համարյա անհուսալի են: Նա իր սպասավորին պատվիրել էր իրեն սպասել միայն առավոտյան ժամը վեցին, և հիմա որտեղ էլ լիներ նա, այդ իր իրավունքն էր:

Մյուս կողմից երիտասարդը մտածեց, որ դեպքի վայրի մոտերքը մնալով՝ ինքն ավելի շուտ կարող է որևէ տեղեկություն ստանալ այդ խորհրդավոր պատմության մասին: Եվ ահա վեցերորդ պանդոկում, ինչպես ասացինք, դ՛Արտանյանը կանգ առավ, պահանջեց մի շիշ գինի, տեղավորվեց ամենամթին անկյունում և որոշեց այդտեղ սպասել մինչև առավոտ: Սակայն այս անգամ էլ նա հուսախար եղավ. թեև շատ ուշադիր ականջ էր դնում, սակայն երդումների, կատակների ու հայհոյանքների մեջ, որ փոխանակում էին իրար հետ այդ պանդոկի հարգարժան հասարակությունը կազմող արհեստավորները, սպասավորներն ու կառապանները, դ՛Արտանյանը ոչ մի այնպիսի բան չլսեց, որը կարողանար նրան փախցրած խեղճ կնոջ հետքը գտնելու հույս ներշնչել: Եվ ահա պարապ մնալով և ցանկանալով կասկած չառաջացնել, ստիպված էր խմել իր մի շիշ գինին, տեղավորվել իր անկյունում և մի կերպ քնել: Դ՛Արտանյանը, ինչպես հիշում ենք, քսան տարեկան էր, իսկ այդ հասակում քունն ունի անհերքելի իրավունքներ, որոնց մասին նա հրամայական պահանջ է ներկայացնում նույնիսկ ամենաանմխիթար սրտերին: Առավոտյան ժամը վեցին մոտ դ՛Արտանյանն արթնացավ այն անհաճո զգացումով, որ սովորաբար մարդ ունենում է գիշերը վատ անցկացնելուց հետո: Պատրաստվելու շատ բան չունեց. նա շոշափեց իրեն, որպեսզի համոզվի, որ քնած ժամանակ չեն կողոպտել, և տեսնելով, որ մատանին մատին է, քսակը գրպանում և ատրճանակները գոտում, վեր կացավ, գինու

փողը վճարեց, հուսալով, որ առավոտյան իր սպասավորի որոնումներն ավելի հաջող կլինեն, քան գիշերն էր: Իսկապես, առաջին բանը, որ նա տեսավ խոնավ մշուշի մեջ, ազնիվ Պլանշեն էր, որ երկու ձիերի սանձերը բռնած՝ նրան էր սպասում մի փոքրիկ, աղքատիկ պանդոկի առաջ, որի մոտով դ'Արտանյանը գիշերն անցել էր, նույնիսկ չնկատելով նրա գոյությունը:

XXV. Պորտուզ

Փոխանակ ուղիղ տուն գնալու դ'Արտանյանը ձիուց իջավ պ-րն դը Տրևիլի դռան առաջ և սանդուղքով շտապ վեր վազեց: Այս անգամ նա որոշել էր դը Տրևիլին պատմել ամեն բան, ինչ տեղի էր ունեցել: Անկասկած պ-րն դը Տրևիլը կարող էր իրեն մի բարի խորհուրդ տալ այս ամբողջ պատմության առթիվ: Բացի դրանից, պ-րն դը Տրևիլն ամեն օր տեսնում էր թագուհուն և գուցե թե նրան կհաջողվեր նորին մեծությունից որևէ տեղեկություն ստանալ այն խեղճ կնոջ մասին, որը, ինչպես երևում է, այժմ տուժում էր իր տիրուհուն նվիրված լինելու համար:

Պ-րն դը Տրևիլը երիտասարդի պատմությունը լսեց այնպիսի լրջությամբ, որը ցույց էր տալիս, որ նա այդ արկածների մեջ ավելի մեծ բան է տեսնում, քան սիրային ինտրիգն է:

— Հը՛մ,— ասաց նա, երբ դ'Արտանյանը վերջացրեց:— Միանգամայն ակներև է, որ այստեղ խառն է նորին սրբազնության մատը:

— Բայց ի՞նչ անել,— հարցրեց դ'Արտանյանը:

— Ոչինչ, առայժմ վճռականապես ոչինչ, բացի մի բանից. հնարավորին չափ շուտ հեռանալ Փարիզից, որի մասին ես արդեն ձեզ ասել եմ: Ես թագուհուն կտեսնեմ, կպատմեմ նրան խեղճ կնոջ անհայտացման մանրամասնությունները, որի մասին նա, իհարկե, չգիտե: Այդ մանրամասնությունները նրա ձեռքը մի որևէ թել կտան, և գուցե թե, երբ դուք վերադառնաք, ես կկարողանամ բարի լուրեր հաղորդել ձեզ: Ձեր հույսը դրեք ինձ վրա:

Դ'Արտանյանը գիտեր, որ պ-րն դը Տրևիլը, թեպետև գասկոնացի էր, սովորություն չուներ խոստում տալու, բայց եթե պատահում էր, որևէ բան էր խոստանում, ապա անում էր ավելին, քան խոստացել էր: Եվ ահա, երիտասարդը գլուխ խոնարհեց նրան, շնորհակալությամբ համակված և անցյալի, և ապագայի

համար, իսկ հարգարժան կապիտանը, որն իր կողմից աշխույժ մասնակցություն էր ունենում այդ քաջ ու վճռական պատանու կյանքին, բարեկամաբար սեղմեց նրա ձեռքը և բարի ճանապարհ մաղթեց:

Վճռելով անհապաղ կատարել պ-րն դը Տրևիլի խորհուրդները՝ դը Տրևիլը գնաց Գերեզմանափորների փողոցը, որպեսզի հետևի ճամպրուկը դասավորելուն: Տանը մոտենալով նա տեսավ պ-րն Բոնասիեին, որ խալաթը հագին կանգնած էր շեմքում: Այն ամենը, որ զգույշ Պլանշեն նախորդ օրը ասել էր իրեն տանտիրոջ նենգ հատկությունների մասին, այժմ դը Տրևիլի միտքը եկան, և նա Բոնասիեին նայեց շատ ավելի մեծ ուշադրությամբ, քան առաջ: Իսկապես, բացի դեղնավուն և հիվանդագին գունատությունից, որը ցույց էր տալիս մաղձոտություն և հնարավոր է, պատահական պատճառ ուներ, դը Տրևիլը նրա դեմքի ծալքերի մեջ նկատեց ինչ-որ դավաճանական ու խորամանկ բան: Խարդախ մարդը այնպես չի ծիծաղում, ինչպես ազնիվ մարդը, կեղծավորը լալիս է ո՛չ այն արցունքներով, որով լալիս է անկեղծ մարդը: Ամեն մի կեղծիք դիմակ է, իսկ դիմակը, որքան էլ լավ պատրաստված լինի այն, միշտ կարելի է տարբերել իսկական դեմքից, եթե ավելի մեծ ուշադրությամբ նայես նրան: Եվ ահա դ'Արտանյանին թվաց՝ Բոնասիեն դիմակ է կրում, այն էլ՝ ամենազգվելի դիմակ:

Դրա համար էլ, ենթարկվելով այդ մարդու նկատմամբ տաժած իր զգվանքին, նա ուզում էր կողքով անցնել, առանց նրա հետ խոսելու, սակայն, ինչպես և նախորդ օրը, պարոն Բոնասիեն ինքը ձայն տվեց նրան:

— Է՛ ինչպե՞ս եղավ, երիտասա՛րդ,— ասաց նա,— կարծեմ վատ չեք անցկացրել գիշերը: Արդեն առավոտյան ժամը յոթն է, գրողը տանի, երևում է, դուք մի քիչ փոխել եք սովորությունը և տուն եք վերադառնում այն ժամանակ, երբ ուրիշները նոր են միայն դուրս գալիս տնից:

— Այ, ձեզ այդպիսի կշտամբանք անել չի լինի, պարոն Բոնասիե,— ասաց երիտասարդը:— Դուք ուղղակի ողջախոհ մարդու օրինակ եք: Ճշմարիտ է, երբ ջահել ու գեղեցիկ կին ունես, բախտի հետևից վազելու կարիք չկա, բախտն ինքն է գալիս քո տուն, ճիշտ չե՞մ ասում, պարոն Բոնասիե: Բոնասիեն սփրթնեց քաթանի պես և խեթ ժպտաց:

— Հա՛, հա,— ծիծաղեց նա,— դուք շատ կատակաբան մարդ եք: Բայց, գրողը տանի, այդ որտե՞ղ էք թափառել դուք այս գիշեր, իմ պատանի բարեկամ: Երևում է՝ սայլուղիներն այնքան էլ հարմար չեն զբոսանքի համար:

Դ՛Արտանյանը նայեց իր կոշիկներին, որոնք մինչև ճտքերի վերևը ցեխոտված էին, բայց այդ ժամանակ պատահաբար նրա հայացքն ընկավ Բոնասիեի կոշիկներին ու գուլպաների վրա: Թվում էր, որ նրանք էլ եղել էին հենց միևնույն ցեխի մեջ, երկուսի ոտքերն էլ ցեխոտված էին միևնույն ձևով:

Եվ հանկարծ դ՛Արտանյանի գլխում մի միտք ծագեց: Այն հաստիկ, ցածրահասակ, ճերմակած մարդը, մուգ շորերով այն մարդը, որ նման է եղել սպասավորի և որի հետ կառեթին ուղեկցող զինված ձիավորները արհամարհանքով են վերաբերվելիս եղել, ինքը՝ Բոնասիեն է եղել: Ամուսինը ղեկավարել է իր կնոջ առևանգումը:

Դ՛Արտանյանի մեջ բուռն ցանկություն առաջացավ բռնել Բոնասիեի կոկորդից ու խեղդել նրան, բայց ինչպես արդեն ասել ենք, նա շատ զգույշ երիտասարդ էր և կարողացավ զսպել իրեն: Սակայն նրա դեմքն այնպես նկատելի փոխվեց, որ Բոնասիեն վախեցավ ու ետ-ետ քաշվեց, բայց նա կանգնած էր դռան փակ փեղկերի դիմաց, ուստի այդ խոչընդոտը նրան ստիպեց մնալ իր տեղում:

— Դուք բարեհաճում եք կատակ անել, բարեկամս,— ասաց դ՛Արտանյանը,— բայց ինձ թվում է, որ եթե իմ կոշիկները մաքրման կարիք են զգում, ապա ձեր գուլպաներն ու կոշիկներն էլ խոզանակ են պահանջում: Մի՞ թե դուք էլ, պարոն Բոնասիե, արկածներ որոնելով զբոսնել եք ինչ-որ մի տեղ: Գիտե՞ք ինչ, դա շատ աններելի բան կլիներ ձեր հասակի մարդու համար, որը, մանավանդ, այնպիսի ջահել ու գեղեցիկ կին ունի, ինչպիսին ձեր կինն է:

— Օ՛, ոչ, տերը մի՛ արասցե,— պատասխանեց Բոնասիեն,— երեկ ես գնացել էի Սեն Մանդե, որպեսզի տեղեկություններ իմանամ մի սպասուհու մասին,— ախր ինձ խիստ անհրաժեշտ է սպասուհի ունենալ, և որովհետև հիմա ճանապարհները լավը չեն, ես այնտեղից բերել եմ այս ցեխը, որը դեռ մաքրելու ժամանակ չեմ ունեցել:

Այնտեղը, որ Բոնասիեն նշեց որպես իր թափառումների կետ, մի նոր ապացույց էր, որը հաստատում էր դ՛Արտանյանի կասկածները: Բոնասիեն Սեն

Մանդեի անունը տվեց, որովհետև Սեն Մանդեն և Սեն Կլուն միանգամայն հակառակ ծայրերումն էին գտնվում:

Այս ենթադրությունը դ'Արտանյանի առաջին մխիթարությունը եղավ: Եթե Բոնասիեն գիտե, թե որտեղ է իր կինը, ուրեմն կարելի է որոշ միջոցներ գործադրելով ստիպել նրան՝ լեզուն բաց անել և իր գաղտնիքն ասել: Կարևոր էր միայն այդ ենթադրությունը հաստատել:

— Ներեցեք ինձ իմ անքաղաքավարության համար, ամենահարգելի պարոն Բոնասիե,— ասաց դ'Արտանյանը,— բայց գիտե՞ք, ոչ մի բան այնպես չի ծարավեցնում մարդուն, ինչպես անքուն գեշերը, և ես գժվելու չափ ծարավ եմ զգում: Թույլ տվեք ինձ մի բաժակ ջուր խմել ձեր մոտ, դե հո հարևանին չեք մերժի մի այդպիսի հասարակ բան:

Առանց տանտիրոջ թույլտվությանը սպասելով դ'Արտանյանը արագ տուն մտավ և մի թուղիկ հայացք ձգեց անկողնու վրա: Անկողինը ճմրթված չէր: Բոնասիեն չէր պառկել, նշանակում է՝ նա հենց նոր է տուն վերադարձել, մեկ կամ երկու ժամ առաջ: Նշանակում է՝ նա իր կնոջն ուղեկցել է մինչև այնտեղ, ուր տարել են նրան, կամ, համենայն դեպս, մինչև առաջին փոստակայանը:

— Շնորհակալ եմ ձեզնից, պարոն Բոնասիե,— ասաց երիտասարդը՝ բաժակը ցամաքեցնելով,— այս էր ամենը, ինչ ինձ հարկավոր էր: Այժմ ես կգնամ իմ սենյակը և Պլանշեին կհրամայեմ իմ կոշիկները մաքրել, իսկ երբ կվերջացնի, եթե ցանկանում եք, կուղարկեմ, որպեսզի ձեր կոշիկներն էլ մաքրի:

Եվ նա մենակ թողեց արդուզարդի վաճառականին, որը բոլորովին շշմել էր այդ տարօրինակ հրաժեշտից և ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք չխճճվե՞ց իր սեփական ստի մեջ:

Սանդուղքի վերին հարթակում դ'Արտանյանը հանդիպեց վախեցած Պլանշեին: — Ա՛խ, տեր իմ,— գոչեց նա իր պարոնին տեսնելուն պես:— Դարձյալ նորություն: Ես անհամբեր ձեզ եմ սպասում: Ի՞նչ է եղել,— հարցրեց դ'Արտանյանը:

— Պատրաստ եմ գրագ գալու, որ դուք չեք կարող իմանալ, թե ով է եկել մեզ մոտ, երբ դուք այստեղ չեիք:

- Այդ ե՞րբ:
- Կես ժամ առաջ, երբ դուք պարոն դը Տրևիլի մոտ էիք:
- Ո՞վ է եկել, շուտ ասա տեսնենք:
- Պարոն դը Կավուան:
- Պարոն դը Կավուա՞ն:
- Նա ինքն անձամբ:
- Նա եկել էր ինձ ձերբակալելո՞ւ:
- Ինձ թվաց, որ դրա համար, չնայած նրա քաղցր տեսքին:
- Ուրեմն նա քա՞ղցր տեսք ուներ:
- Ինչպես ասեմ, տեր իմ, ուղղակի ինչպես մեղր:
- Մի՞թե:
- Նա ասաց, որ նորին սրբազնությունը ձեզ բարիք է ցանկանում և ձեզ խնդրում է բարեհաճեք Պալե-Ռոյալ գնալ:
- Իսկ ի՞նչ պատասխանեցիր դու նրան:
- Որ այդ անհնարին է, քանի որ դուք տանը չեք, ինչում նա ինքն էլ կարող էր համոզվել:
- Իսկ ի՞նչ պատասխանեց նա:

— Որ դուք անպայման օրվա ընթացքում գնաք նրա մոտ: Հետո նա շշուկով ավելացրեց. «Ահա քո պարոնին, որ նորին սրբազնությունը շատ լավ է տրամադրված իր նկատմամբ և գուցե թե այդ տեսակցությունից է կախված իր բախտը»:

— Կարդինալը բավական անշնորհք է հնարել այդ ծուղակը,— քմծիծաղով ասաց երիտասարդը:

— Հենց դրա համար էլ ես այն նկատեցի և պատասխանեցի, թե դուք, երբ վերադառնաք, շատ կափսոսաք: «Ու՞ր է գնացել»,— հարցրեց պարոն դը Կավուան: «Տուր, Շամպայն»,— պատասխանեցի ես. «Իսկ ե՞րբ»: «Ե-րեկ երեկոյան...»,— ասացի ես:

— Պլանշե, բարեկամս,— ընդհատեց նրան դ'Արտանյանը,— իսկապես դու անգին մարդ ես:

— Հասկանում եք, տեր իմ, ես մտածեցի, որ եթե դուք ուզենաք տեսնել պարոն դը Կավուային, ապա միշտ էլ կարող եք ժխտել ինձ, որ դուք ամենևին էլ չեք գնացել: Այդ դեպքում սուտ խոսած կլինեի ես, իսկ ես չե՞մ որ ազնվական չեմ, այնպես որ ինձ թույլատրված է սուտ ասել:

— Հանգստացիր, Պլանշե, դու ճշմարտախոս մարդու անունը չես կորցնի, կես ժամից մենք մեկնում ենք:

— Ես հենց նոր, տեր իմ, ուզո՞ւմ էի այդ նույնը խորհուրդ տալ ձեզ: Բայց ո՞ւր ենք գնում, եթե գաղտնիք չէ:

— Հասկանալի է՝ ո՛չ այն կողմը, որ դու ասել ես պարոն դը Կավուային: Ի դեպ, երևի դու ևս շտապում ես որևէ բան իմանալ Գրիմոյի, Մուշկետոնի ու Բազենի մասին, ինչպես ես եմ ուզում իմանալ, թե ինչ պատահեց Աթոսին, Պորտոսին և Արամիսին:

— Իհարկե, տեր իմ,— ասաց Պլանշեն,— և ես պատրաստ եմ մեկնելու թեկուզ հենց հիմա: Իմ կարծիքով այս բոպեին գավառի օդը ինձ և ձեզ համար ավելի օգտակար է, քան Փարիզի օդը, դրա համար էլ...

— Դրա համար էլ պատրաստվիր, Պլանշե, և գնանք: Որևէ կասկածից խուսափելու համար ես առաջ կգնամ ոտքով, դատարկաձեռն: Ես ու դու կհանդիպենք գվարդիականների զորանոցում: Ի դեպ, Պլանշե, կարծես դու իրավացի ես մեր տանտիրոջ նկատմամբ, դա իսկապես մեծ սրիկա է: — Ահա՛: Դե ուրեմն հավատացեք ինձ, տեր իմ, երբ ես մի բան եմ ասում: Մարդուն ես դեմքից կարող եմ ճանաչել:

Ինչպես պայմանավորվել էին, դ'Արտանյանը առաջինը ցած իջավ: Հետո, որպեսզի ինքն իրեն կշտամբելու բան չունենա, վերջին անգամ մտավ իր երեք ընկերների բնակարանները: Նրանցից ոչ մի տեղեկություն չկար: Միայն Արամիսի անունով ստացվել էր բուրավետած մի նամակ, որ գրված էր մանր, գեղեցիկ ձեռագրով: Դ'Արտանյանը հանձն առավ տանել այն հասցեատիրոջը: Տասը ընկերացիները Պլանշեն հասավ նրան գվարդիականների զորանոցի ախոռում: Դ'Արտանյանը իզուր ժամանակ չկորցնելով ինքն արդեն թամբել էր իր ձին:

— Դուք կարծում եք, որ եթե մեզնից յուրաքան-չյուրը երկու ձի ունենա, ավելի արագ կգնանք,— զարմացած հարցրեց Պլանշեն:

— Ոչ, պարոն կատակախոս,— առարկեց դ'Արտանյանը,— բայց չորս ձիերով մենք կարող ենք ետ բերել երեք ընկերներին, եթե միայն ողջ-առողջ գտնենք նրանց:

— Որը մեծ հաջողություն կլիներ,— պատասխանեց Պլանշեն:— Ի դեպ, երբեք չպետք է հուսահատվել, պետք է հույս դնել աստծո ողորմածության վրա:

— Ամմեն՛ն,— ասաց դ'Արտանյանը ձի նստելով:

Գվարդիականների զորանոցից դուրս գալով՝ նրանք բաժանվեցին տարբեր կողմեր, մեկը պետք է Փարիզից դուրս գար Լավիլիետի ուղեկալով, մյուսը՝ Մոնմարտրի, որպեսզի հետո միանան Սեն Դենիից այն կողմ: Երկուսն էլ այս ստրատեգիական մանևրը միանգամայն ճշտությամբ կատարելով՝ հաջողությամբ պսակեցին, դ'Արտանյանը և Պլանշեն միասին հասան Պիերֆիտ:

Պետք է ասել, որ Պլանշեն ցերեկն ավելի քաջ էր լինում, քան գիշերը:

Սակայն բնածին զգուշությունը ոչ մի ընկերացի չէր հեռանում նրանից: Նա առաջին ճանապարհորդության չար արկածներից ոչ մեկը չէր մոռացել և հանդիպող ամեն մի

մարդու թշնամու տեղ էր դնում: Դրա հետևանքով նա շուտ-շուտ վերցնում էր գլխարկը, որի համար խիստ նկատողություն ստացավ դ'Արտանյանից, որը վախենում էր, թե Պլանշեի այդ չափից դուրս քաղաքավարության պատճառով կարող են նրան մի ինչ-որ աննշան անձի ծառա համարել:

Սակայն, արդյոք այն պատճառով, որ բոլոր անցորդները զգացվել էին Պլանշեի պարկեշտությունից, թե՛ այս անգամ ոչ ոք չէր ուղարկվել դ'Արտանյանի ճանապարհը փակելու, համենայնդեպս, այսպես թե այնպես, մեր երկու ճանապարհորդները առանց որևէ արկածի հասան Շանտիլիե և մոտեցան Գրան-Սեն Մարտեն հյուրանոցին, այն նույն հյուրանոցին, որտեղ նրանք կանգ էին առել առաջին ճանապարհորդության ժամանակ:

Հյուրանոցի տերը տեսնելով երիտասարդին, որին հետևում էր սպասավորը երկու պահեստի ձիերով, հարգալից դիմավորեց նրան շեմքում: Դ'Արտանյանը, որն արդեն տասնմեկ լյո ճանապարհ էր անցել, հարմար համարեց կանգ առնել այստեղ, անկախ նրանից, Պորտոսը հյուրանոցումն է, թե ոչ: Բացի դրանից, թերևս անզգուշություն կլիներ անմիջապես տեղեկություններ հարցնել հրացանակրի մասին: Այսպես մտածելով՝ դ'Արտանյանը առանց որևէ բան հարցնելու ձիուց իջավ, ձիերը թողեց սպասավորի խնամքին, մտավ այն փոքրիկ սենյակը, որ նախատեսված էր ընդհանուր դահլիճում մնալ չցանկացող այցելուների համար և հյուրանոցի տիրոջից պահանջեց մի շիշ լավ գինի ու հնարավորին չափ լավ նախաճաշ: Այս հանգամանքն ավելի ամրապնդեց այն հարգանքը, որ առաջին իսկ հայացքից հյուրանոցի տերն զգաց իր հյուրի նկատմամբ:

Եվ այսպես դ'Արտանյանի պատվերները կատարվեցին հեքիաթային արագությամբ:

Գվարդիական գունդը հավաքագրվում էր թագավորության լավագույն ազնվականներից, և դ'Արտանյանը, որ ճանապարհորդում էր ծառայի ուղեկցությամբ և չորս հիանալի ձիերով, չնայած իր զգեստի հասարակ լինելուն, անխուսափելիորեն պետք է ուժեղ տպավորություն թողներ: Հյուրանոցի տերը ցանկացավ անձամբ սպասարկել նրան: Այդ բանը տեսնելով՝ դ'Արտանյանը պատվիրեց երկու բաժակ բերել և խոսակցություն սկսեց:

— Է՛, սիրելի պանդոկապետ,— սկսեց նա երկու բաժակներն էլ լցնելով,— ես ձեզնից խնդրեցի ամենալավ գինին, և եթե դուք ինձ խաբել եք, ապա, ազնիվ խոսք, դրանով իսկ ձեզ պատժած կլինեք, որովհետև ես մենակ խմել չեմ սիրում, և դուք էլ ինձ հետ միասին պիտի խմեք այն: Դե՛հ, վերցրեք բաժակը և խմենք: Ի՞նչ կենաց խմենք, որպեսզի մեզնից ոչ մեկը չնեղանա: Եկեք խմենք ձեր հյուրանոցի բարգավաճման կենացը:

— Մեծ պատիվ է, ձերդ ողորմածություն,— ասաց հյուրանոցի տերը,— խոնարհաբար շնորհակալ եմ բարի ցանկության համար:

— Միայն թե այս բանում մոլորության մեջ չընկնեք,— առարկեց դ'Արտանյանը,— այս կենացով ես թերևս ավելի շատ իմ շահը նկատի ունեմ, քան դուք կարծում եք: Մարդուն լավ են ընդունում միայն այն հյուրանոցներում, որոնք բարգավաճում են, իսկ որոնք վատ վիճակում են, այնտեղ լիակատար անկարգություն է տիրում, և ճանապարհորդը իր հյուրանոցատիրոջ սուղ պայմանների զոհն է դառնում: Ախր ես շատ եմ ճանապարհորդում, այն էլ մեծ մասամբ այս ճանապարհով, դրա համար էլ ուզում եմ, որ բոլոր հյուրանոցատերերը հաջողության մեջ լինեն:

— Ա՛յ թե ինչու, տեր իմ, ինձ թվում է, որ ես առաջին անգամը չէ, ինչ պատիվ եմ ունենում տեսնելու ձեզ,— ասաց հյուրանոցի տերը:

— Բա՛ն ասացիր: Ես մի տասն անգամ անցել եմ Շան-տիլիեով և այդ տասն անգամից առնվազն երեք թե չորս անգամ կանգ եմ առել ձեզ մոտ: Սպասեք... հա, ախր ես մի տասը-տասներկու օր առաջ էլ այստեղ էի: Ես ուղեկցում էի իմ հրացանակիր ընկերներին, և եթե ուզում եք, կարող եմ ձեզ հիշեցնել, որ նրանցից մեկը վեճի բռնվեց մի ինչ-որ անձանոթ մարդու հետ, որն առաջինն էր նեղացրել նրան:

— Այո, այո, ճշմարիտ է,— ասաց հյուրանոցի տերը,— ես էլ լավ եմ հիշում այդ պատմությունը: Ձերդ ողորմածությունը խոսում է պարոն Պորտոսի մասին, չէ՞:

— Այո, հենց այդպես է իմ ուղեկցի անունը: Ողորմա՛ծ Աստված, չլինի՞ որևէ դժբախտություն է պատահել նրան, սիրելի պանդոկապետ:

— Բայց դուք, ձերդ ողորմածություն, ինքներդ էլ պետք է նկատեիք, որ նա ճանապարհը շարունակել չկարողացավ:

— Այդ ճշմարիտ է, նա խոստացավ հասնել մեր հետևից, բայց այդպես էլ մենք նրան չտեսանք:

— Նա մեզ պատիվ արեց այստեղ մնալու:

— Ինչպե՞ս, այստե՞ղ է մնացել:

— Այո, տեր իմ, այս հյուրանոցում, և ճիշտն ասած, մենք շատ ենք անհանգստացած:

— Ինչո՞վ:

— Նրա որոշ ծախսերով:

— Ի՞նչ կա անհանգստանալու: Նա իր բոլոր պարտքերը կվճարի:

— Օ՛, տեր իմ, դուք իսկապես սպեղանի եք դնում իմ վերքին: Մենք նրան շատ ենք պարտք տվել, և դեռ այսօր առավոտյան բժիշկը մեզ հայտարարեց, որ եթե պարոն Պորտոսը իր վարձը չվճարի, նա իմ օձիքից կբռնի, որովհետև ես եմ բժշկին կանչել:

— Բայց մի՞ թե Պորտոսը վիրավորված է:

— Չեմ կարող ձեզ ասել այդ, տեր իմ:

— Ինչպե՞ս թե չեք կարող: Չե՞ որ դուք նրա մասին ավելի լավ տեղեկություն պիտի ունենաք, քան որևէ մեկ ուրիշը:

— Այդ ճշմարիտ է, տեր իմ, բայց մեր պայմանները մեզ թույլ չեն տալիս ասել այն ամենը, ինչ որ գիտենք, մանավանդ, եթե մեզ նախազգուշացրել են, որ լեզվի պատճառով մենք կարող ենք ականջներս վճարել:

— Լավ, իսկ ես կարո՞ղ եմ Պորտոսին տեսնել:

— Իհարկէ, տեր իմ: Մանդուղքով բարձրացեք երկրորդ հարկ և բախեցեք առաջին համարի դուռը: Միայն թե նախազգուշացրեք, որ այդ դուռ էք:

— Նախազգուշացնել, որ ե՞ս եմ:

— Այո, այո, թե չէ՝ ձեզ կարող է դժբախտություն պատահել:

— Ձեր կարծիքով ի՞նչ դժբախտություն կարող է պատահել ինձ:

— Պարոն Պորտոսը կարող է ձեզ իմ ծառաներից որևէ մեկի տեղը դնել և ցասումի մոլուցքով բռնված՝ սուսերը ձեր կուրծքը խրել կամ կրակել ձեր գլխին:

— Այդ ի՞նչ էք արել դուք նրան:

— Մենք նրանից փող ենք խնդրել:

— Ա՛խ, գրողը տանի, հիմա հասկանում եմ: Դա այնպիսի մի խնդիրք է, որին Պորտոսը շատ վատ է վերաբերվում, երբ փող չի ունենում, բայց, որքան ինձ հայտնի է, նա փող ունի:

— Հենց մենք էլ այդպես ենք կարծում, տեր իմ: Որովհետև մեր ձեռնարկությունը կարգ ու կանոն ունի, և մենք ամեն շաբաթ հաշիվներն ամփոփում ենք, շաբաթվա վերջին մենք հաշիվ ներկայացրինք նրան, բայց երևում է անհաջող բռնաբեկի հանդիպեցինք, որովհետև հենց որ փողի մասին ծպտուն հանեցինք, նա մեզ գրողի ծոցն ուղարկեց: Ճշմարիտ է, նախորդ օրը նա թուղթ էր խաղացել...

— Ա՛խ, նա խաղացե՛լ էր: Այդ ո՞ւմ հետ:

— Տե՛ր իմ աստված, ո՞վ է իմանում: Մի ինչ-որ անցորդ պարոն էր, որին նա առաջարկեց մի պարտիա լանդսկնեխտ խաղալ:

— Հենց բանն էլ այդ է: Երևի խեղճը բոլոր փողերը տանուլ է տվել:

— Մինչև իսկ իր ձին, տեր իմ, որովհետև երբ անձանոթը պատրաստվում էր գնալու, մենք նկատեցինք, որ նրա ծառան թամբում է պարոն Պորտոսի ձին: Մենք

դիտողությունն արինք դրա համար, բայց նա ասաց, որ մենք քթներս խցկում ենք ոչ մեր գործի մեջ և որ ձին իրեն է պատկանում: Մենք իսկույն տեղեկացրինք պարոն Պորտոսին, բայց նա ասաց, որ մենք ստոր մարդիկ ենք, եթե կասկածում ենք ազնվականի խոսքին, և որ, եթե նա ասում է ձին իրեն է պատկանում, նշանակում է այդպես էլ կա:

— Այդպիսին է Պորտոսը,— մրմնջաց դ'Արտանյանը:

— Այն ժամանակ,— շարունակեց հյուրանոցի տերը,— ես նրան պատասխանեցի, թե, քանի որ, ինչպես երևում է, մեզ վիճակված չէ ընդհարվել վճարի հարցով, ես հույս ունեմ, որ նա գոնե բարի կլինի և կփոխադրվի իմ եղբայրակցի մոտ, այն է՝ «Ոսկե Արծիվ» հյուրանոցի տիրոջ մոտ: Բայց պարոն Պորտոսը հայտարարեց, թե իմ հյուրանոցը ավելի լավն է, և ինքն ուզում է այստեղ մնալ: Դա այնքան շոյող պատասխան էր, որ ես այլևս պնդել չէի կարող: Ուստի ես սահմանափակվեցի նրանով, որ խնդրեցի ազատել իր զբաղեցրած սենյակը, որ ամենավաճակ է հյուրանոցում, և բավարարվեք չորրորդ հարկի մի լավ, փոքրիկ սենյակով: Բայց սրան պարոն Պորտոսը պատասխանեց, թե ինքը բոլոր առ բոլոր սպասում է իր սիրուհուն, որ արքունիքի ամենաբարձրաստիճան տիկիններից մեկն է, հետևապես ես պետք է հասկանամ, որ այն սենյակը, որին նա պատվի է արժանացնում իր ներկայությամբ, դեռ էլի շատ աղքատիկ է այդպիսի մի անձի համար: Սակայն լիովին ընդունելով նրա խոսքերի իրավացիությունը, ես, այնուամենայնիվ, գտա, որ ստիպված եմ պնդել իմ առաջարկը: Այն ժամանակ նա, նույնիսկ նեղություն չքաշելով վեճի բռնվել ինձ հետ, ատրճանակը հանեց, դրեց սեղանի վրա և հայտարարեց, որ մի այլ սենյակ կամ մի այլ հյուրանոց փոխադրվելու մասին առաջին իսկ խոսքը լսելուն պես՝ ինքը կփշրի այն մարդու գանգը, ով անզգուշություն կունենա իր գործերին խառնվելու: Դրա համար էլ, տեր իմ, այդ ժամանակվա-նից ոչ ոք նրա մոտ չի գնում, բացի իր սպասավորից:

— Ուրեմն Մուշկետոնն այստե՞ղ է:

— Այո, տեր իմ, մեկնելուց հինգ օր հետո նա վերադարձավ և նույնպես վատ տրամադրության մեջ էր: Երևում է՝ ճանապարհին նա էլ անախորժությունների էր հանդիպել: Դժբախտաբար նա ավելի ճարպիկ է, քան իր պարոնը, և նրա համար ամեն ինչ տակն ու վրա է անում. մտածելով, որ իր խնդրածը կարող են մերժել, նա ամեն բան, ինչ հարկավոր է, վերցնում է առանց հարցնելու:

— Այո,— ասաց դ'Արտանյանը,— ես միշտ նկատել եմ, որ Մուշկետոնը հազվագյուտ չափով նվիրված սպասավոր է և հազվագյուտ չափով հասկացող:

— Միանգամայն հնարավոր է, տեր իմ, բայց ենթադրեցեք, որ ես տարեկան գեթ չորս անգամ հանդիպեմ այդպիսի նվիրվածության և այդպիսի հասկացողության, այդ դեպքում ես բոլորովին կսնանկանամ:

— Ոչ, այդ այդպես չէ, որովհետև Պորտոսը ձեզ կվճարի:

— Հը՛մ...— թերահավատորեն ծոր տվեց պանդոկապետը:

— Նա վայելում է մի շատ անվանի տիկնոջ բարեհաճությունը, և այդ տիկինը նրան դժվարին դրության մեջ չի թողնի այնպիսի մի չնչին բանի համար, ինչպիսին նրա պարտքն է:

— Եթե ես համարձակվեի ասել, թե ինչ եմ մտածում դրա մասին...

— Ի՞նչ եք մտածում:

— Կասեմ ավելին. ինչ գիտեմ:

— Ի՞նչ գիտեք:

— Նույնիսկ ավելին, ինչին համոզված եմ...

— Ինչի՞ն եք համոզված դուք: Պատմեցեք:

— Ես ձեզ կասեի, որ գիտեմ, թե ով է այդ անվանի տիկինը:

— Դո՞ւք:

— Այո, ես:

— Ին՞չ միջոցով իմացաք դուք:

— Օ՛, տեր իմ, եթե ես կարողանայի հույս դնել ձեր համեստության վրա...

— Խոսեցեք, ազնվականի ազնիվ խոսք եմ տալիս ձեզ, որ չեք գոջա վստահելու համար:

— Դե ուրեմն, տեր իմ, ինչպես ինքներդ էլ հասկա-նում եք, անհանգստությունը ստիպում է շատ բան անել:

— Եվ ի՞նչ եք արել դուք:

— Օ՛, այնպիսի մի բան չենք արել, որ պարտատիրոջ իրավունքից ավելի լինի:

— Այսի՞նքն:

— Պարոն Պորտոսը մեզ մի նամակ տվեց այդ դքսու-հու անունով և հրամայեց փոստով ուղարկել: Այն ժամանակ նրա սպասավորը դեռ չէր եկել: Նկատի ունենալով, որ նա սենյակից դուրս գալ չէր կարող, ստիպված էր այդ հանձնարարությունը մեզ անել:

— Հետո՞:

— Փոխանակ նամակը փոստով ուղարկելու, որը երբեք լիովին հուսալի չի լինում, ես օգտվեցի նրանից, որ մեր մարդկանցից մեկը պիտի գնար Փարիզ, և նրան պատվիրեցի նամակն անձամբ հանձնել դքսուհուն: Չէ՞ որ այդ հենց նշանակում էր կատարել պարոն Պորտոսի ցանկությունը, որն այնքան շատ անհանգստանում էր այդ նամակի համար, այդպես չէ՞:

— Մոտավորապես այդպես է:

— Եվ ահա, տեր իմ, հայտնի՞ է ձեզ, թե ով է այդ անվանի տիկինը:

— Ո՛չ, ես նրա մասին լսել եմ Պորտոսից, ուրիշ ոչինչ:

— Հայտնի՞ է ձեզ, թե ով է այդ դքսուհի կոչեցյալը:

— Կրկնում եմ, որ նրան չեմ ճանաչում:

— Դա Շատլեի դատախազի պառավ կինն է, տեր իմ, տիկին Կոկնարը, որն ամենաքիչը հիսուն տարեկան կլինի և որը դեռ իրեն խանդոտ էլ է ձևացնում: Ախր ինձ էլ զարմանալի էր թվում, անվանի անձ է և ապրում է Արջի փողոցում:

— Որտեղի՞ց գիտեք դուք այդ ամենը:

— Նրանից, որ նամակը ստանալով՝ նա խիստ բարկացել է և ասել, թե պարոն Պորտոսը ցանցառ մարդ է և երևի սուսերի այդ հարվածը մի որևէ կնոջ պատճառով է ստացել:

— Ուրեմն նա սուսերի հարված է ստացել:

— Օ՛, տեր աստված, այս ի՞նչ ասացի ես:

— Դուք ասացիք, որ Պորտոսը սուսերի հարված է ստացել:

— Այո, իհարկե, այդպես է, բայց, ախր, նա ինձ խստիվ արգելել է դրա մասին պատմել:

— Ինչո՞ւ որ:

— Ինչո՞ւ: Նրա համար, տեր իմ, որ նա պարծենում էր, թե սուսերը կխրի այն անձանոթի կուրծքը, որի հետ կովի էր բռնվել, երբ դուք գնում էիք, բայց դուրս եկավ հակառակը, այդ անձանոթը պառկեցրեց պարոն Պորտոսին, չնայած նրա բոլոր պարծենկոտություններին: Եվ ահա, պարոն Պորտոսը, որ շատ հպարտ է բոլորի հետ, բացի այդ դքսուհուց, որի գույքը շարժել էր ցանկացել իր գլխին եկածը պատմելով, ուրիշ ոչ ոքի չի ուզում խոստովանել, որ սուսերի հարված է ստացել:

— Նշանակում է՝ սուսերի այդ հարվածն է պահում նրան անկողնում:

— Այո, և շատ լավ հարված, կարող եմ հավատացնել ձեզ: Երևում է՝ ձեր բարեկամի հոգին մեխերով է ամրացված մարմնին:

— Ուրեմն դուք ներկա՞ եք եղել:

— Ես հետաքրքրությունից դրդված գնացի նրանց հետևից և մենամարտը տեսա, բայց այնպես, որ կռվող-ներն ինձ չնկատեցին:

— Եվ ինչպե՞ս եղավ կռիվը:

— Օ՛, կռիվը երկար չքաշեց, կարող եմ ձեզ հավատաց-նել: Նրանք գրավեցին իրենց տեղերը, անձանոթը մի հարձակում գործեց և այնպես արագ, որ երբ պարոն Պորտոսն ուզում էր ետ մղել հարվածը, սուսերն արդեն նրա կուրծքն էր խրվել երեք մատնաչափ խորությամբ: Նա ընկավ մեջքի վրա: Անձանոթն իսկույն սուսերի ծայրը դեմ արավ նրա կրծքին, և պարոն Պորտոսը, տեսնելով, որ ինքն ամբողջովին հակառակորդի ձեռքումն է, իրեն պարտված ճանաչեց: Դրանից հետո անձանոթը հարցրեց, թե ի՛նչ է նրա անունը, և իմանալով որ անունը Պորտոս է, ոչ թե դ'Արտանյան, առաջարկեց հենվել իր թևին, տարավ նրան մինչև հյուրանոց, ինքը թռավ ձիու վրա և անհետացավ:

— Նշանակում է այդ անձանոթը դ'Արտանյանի հե՞տ էր ուզում կռվի բռնվել:

— Կարծես թե՛ այո:

— Եվ դուք չգիտեք, թե հետո ինչ եղավ նրան:

— Ոչ, ես երբեք չեմ տեսել նրան, ոչ դրանից առաջ, ոչ հետո:

— Շատ լավ: Ես իմացա ամեն բան, ինչ ինձ հարկավոր էր: Ուրեմն դուք ասում եք, որ Պորտոսի սենյակը երկրորդ հարկում է, առաջին համարը:

— Այո, տեր իմ, հյուրանոցի ամենալավ սենյակը, այն սենյակը, որ ես հիմա արդեն մի տասն անգամ վարձով տված կլինեի:

— Լավ, հանգստացեք,— ծիծաղելով ասաց դ'Արտանյանը:— Պորտոսը ձեզ կվճարի դքսուհի Կոկնարի դրամով:

— Օ՛, տեր իմ, ինչ ուզում է թող լինի նա, դատախազի կին, թե դքսուհի, միայն թե քաց անի իր քսակի բերանը, քայց ո՛չ, նա ամենայն վճռականությամբ հայտարարել է, որ պարոն Պորտոսի պահանջները և նրա դավաճանու-թյունները ձանձրացրել են իրեն և ինքը ոչ մի սու չի ուղարկի նրան:

— Եվ դուք նրա պատասխանը հաղորդե՞լ էք ձեր տնվորին:

— Ոչ, ոչ մենք այդ չենք ասել, չե՞ որ եթե ասեինք, նա կհասկանար, թե ինչ ձևով ենք կատարել իր հանձնարարությունը:

— Նշանակում է մինչև հիմա էլ նա սպասում է փողի՞ն:

— Հենց քանն էլ այդ է, որ սպասում է: Հենց երեկ երկրորդ նամակը գրեց նրան, քայց այս անգամ նամակը փոստով ուղարկեց իր ծառան:

— Ուրեմն դուք ասում էք, որ դատախազի կինը պառավ է ու տգե՞ղ:

— Առնվազն հիսուն տարեկան կլինի, տեր իմ, և ինչպես Պորտոսն էր ասում, ամեննին էլ գեղեցիկ չէ:

— Այդ դեպքում հանգիստ եղեք, վերջիվերջո նա կփափկի: Բացի այդ, Պորտոսը չէր կարող այնքան էլ շատ պարտք մնալ ձեզ:

— Ինչպե՞ս թե չէր կարող: Քսան պիստոլ, չհաշված բժշկի վարձը: Օ՛, նա ոչ մի քանից չի գրկում իրեն, իսկույն երևում է, որ սովոր է լավ ապրելու:

— Լավ, եթե սիրուհին նրան լքի, բարեկամներ կգտնվեն, կարող եմ երաշխավորել: Այնպես որ, սիրելի պանդոկապետ, մի անհանգստացեք և շարունակեցեք վերաբերվել նրան այն ուշադրությամբ, որ պահանջում է նրա դիրքը:

— Տեր իմ, դուք խոստացաք չհիշատակել դատախազի կնոջ մասին և ոչ մի խոսք չասել նրա վերքի մասին:

— Կարող եք չհիշեցնեք ինձ այդ, ես ձեզ խոսք եմ տվել:

— Ախր նա կսպանի ինձ, եթե իմանա:

— Մի՛ վախենաք, իրականում նա այնքան սուկալի չէ, ինչպես թվում է:

Այս ասելով՝ դ'Արտանյանը սկսեց սանդուղքով վեր բարձրանալ հյուրանոցի տիրոջը թողնելով մի փոքր հանգստացած երկու բանի համար, որոնք նա, ըստ երևույթին, թանկ էր գնահատում, այն է՝ իր քսակի և կյանքի համար:

Վերևում, մի դռան վրա, որն ամբողջ միջանցքում ամենից ավելի նկատելին էր, սև թանաքով գրված էր մի ահագին թվանշան՝ 1: Դ'Արտանյանը այդ դուռը բախեց, և երբ ներսից առաջարկությունն եղավ՝ գնալ իր բանին, մտավ սենյակ:

Պորտոսը անկողնում պառկած՝ Մուշկետոնի հետ լանդսկնեխտ էր խաղում, որպեսզի ձեռքը վարժեցնի, մինչդեռ օջախի առաջ ուրախ պտտվում էր մի շամփուր, որին մի լոր էր խրված, իսկ ընդարձակ բուխարու երկու անկյուններում եռում էին երկու կաթսա, որոնցից գինու սոուսով եփվող ճագարի ու ձկան բուրմունք էր գալիս, որ դուրեկան շոյում էր մարդու հոտառությունը: Ամբողջ սեղանը և կամոդի երեսը ծածկված էին դատարկ շշերով:

Ընկերոջը տեսնելով՝ Պորտոսն ուրախության ճիչ արձակեց, իսկ Մուշկետոնը հարգալից վերկենալով՝ իր տեղը զիջեց դ'Արտանյանին և գնաց նայելու կաթսաները, որոնք, ըստ երևույթին, նրա հատուկ հսկողության տակ էին գտնվում:

— Ա՛խ, գրողը տանի, այդ դո՞ւք եք,— ասաց Պորտոսը դ'Արտանյանին:— Բարի գալուստ: Խնդրում եմ ներող լինեք, որ ես վեր չեմ կենում: Ի դեպ,— ավելացրեց նա թեթևակի անհանգստությամբ նայելով դ'Արտանյանին,— ձեզ հայտնի՞ է, թե ինչ է պատահել ինձ:

— Ոչ:

— Հյուրանոցի տերը ոչինչ չի՞ ասել ձեզ:

— Ես նրան հարցրի, թե որտեղ եք դուք և իսկույն վեր բարձրացա:

Պորտոսը, ըստ երևույթին, ազատ շունչ քաշեց:

— Իսկ ի՞նչ է պատահել ձեզ, սիրելի Պորտոս,— հարցրեց դ'Արտանյանը:

— Այն, որ հարձակվելով իմ հակառակորդի վրա, որին ես արդեն սուսերի երեք հարված էի տվել և պատ-րաստվելով չորրորդ հարվածով վերջ տալ նրա կյանքին՝ հանկարծ մի քարի դիպչելով սայթաքեցի և ծունկս դուրս ընկավ:

— Ի՛նչ եք ասում:

— Պատվովս եմ երդվում: Եվ դա այն անբանի բախտիցն էր, թե չէ, երդվում եմ, ես տեղն ու տեղը պիտի վերջ տայի նրան:

— Իսկ ո՞ւր գնաց նա:

— Ճիշտն ասած՝ չգիտեմ: Նա մի լավ բաժին ստացավ և գնաց՝ առանց մանր դրամը պահանջելու: Է՛, իսկ դո՞ւք, սիրելի դ'Արտանյան, ձե՞զ հետ ինչ պատահեց:

— Նշանակում է,— շարունակեց դ'Արտանյանը,— ձեր ոտքը դուրս ընկնելու պատճառով է, որ դուք մնացել եք անկողնում, սիրելի Պորտոս:

— Երևակայեցեք՝ այդպիսի մի դատարկ բան: Ասենք մի քանի օրից հետո ես ոտքի վրա կլինեմ:

— Բայց ինչո՞ւ դուք չհրամայեցիք ձեզ Փարիզ տանել: Ախր այստեղ երևի ձեզ համար շատ ձանձրալի կլինի:

— Հենց այդ էլ ուզում էի անել, բայց պետք է մի բան խոստովանեմ ձեզ, սիրելիս:

— Ի՞նչ:

— Այ թե ինչ. քանի որ ես այստեղ իսկապես շատ էի տխրում, ինչպես դուք ասացիք, և որովհետև գրպանումս էին ձեզնից ստացած յոթանասունհինգ պիստոլը, ես այստեղ իջևանած մի ազնվականի հենց այնպես, զվարճության համար խնդրեցի բարձրանալ ինձ մոտ և առաջարկեցի զառ խաղալ: Նա համաձայնեց, և ահա իմ յոթանասունհինգ պիստոլը իմ գրպանից անցավ նրա գրպանը, էլ չեմ խոսում ձիու

մասին, որ նույնպես նա տարավ իր հետ: Է՛, իսկ դուք ինչպե՞ս եք, սիրելի դ՛Արտանյան:

— Ի՛նչ արած, սիրելի Պորտոս, չի կարելի ամեն բա-նի մեջ հաջողություն ունենալ,— ասաց դ՛Արտանյանը:— Լսե՛լ եք առածը՝ «Ում չի հաջողվում խաղի մեջ, հաջողվում է սիրո մեջ»: Սիրո մեջ ձեզ խիստ շատ է հաջողվում, դրա համար էլ բախտը վրեժ է առնում խաղի մեջ: Բայց ձեզ համար ի՞նչ բան է բախտի հեղհեղուկությունը: Մի՞ թե դուք չունեք ձեր դքսուհին, որը, իհարկե, չի հապաղի օգնության հասնել ձեզ:

— Ա՛յ, հենց դրա համար էլ ես այդպես ձախորդ եմ խաղի մեջ,— ամենաանբռնազբոսիկ ձևով ասաց Պորտոսը,— ես գրել եմ նրան, որ մի հիսուն լուիդոր ուղարկի ինձ, որն իմ ներկա դրության մեջ խիստ անհրաժեշտ է ինձ:

— Եվ ի՞նչ:

— Ի՛նչ ասեմ: Երևի նա իր կալվածքներից որևէ մեկում է գտնվում. ոչ մի պատասխան չստացա:

— Ի՛նչ եք ասում:

— Այո, պատասխան չկա: Երեկ էլ մի նամակ եմ ուղարկել նրան. առաջինից ավելի խիստ: Բայց, ախր, դուք այստե՛ղ եք, սիրելի բարեկամս, խոսենք ձե՛ր մասին: Ճիշտն ասած՝ ես արդեն սկսել էի մի քիչ անհանգստանալ, թե ինչ պատահեց ձեզ:

— Բայց ամեն բանից երևում է, սիրելի Պորտոս, որ հյուրանոցի տերը վատ չի վարվում ձեզ հետ,— ասաց դ՛Արտանյանը՝ հիվանդին մատնացույց անելով լիքը կաթսաները և դատարկ շշերը:

— Դե թո՛ղ,— պատասխանեց Պորտոսը:— Երեք թե չորս օր առաջ այդ սրիկան հաշիվ էր բերել ինձ, և ես դուրս գցեցի նրան իր հաշվի հետ միասին: Այնպես որ հիմա ես այստեղ նստած եմ որպես հաղթող, ինչպես յուրատեսակ նվաճող, ուստիև հարձակումից ապահով լինելու համար զինված եմ մինչև ատամներս:

— Բայց երևում է, դուք երբեմն գրոհներ եք ունեւում,— ծիծաղելով ասաց դ'Արտանյանը: Եվ նա կրկին մատնացույց արավ շշերն ու կաթսաները:

— Դժբախտաբար՝ ո՛չ ես,— պատասխանեց Պորտոսը:— Անպիտան ոտքս ինձ անկողնումն է պահում: Այդ Մուշկետոնն է, որ մեկ-մեկ տեղագնւոյան է գնում և ուտելէդէն ճարում: Մուշկետոն, բարեկամս,— շարունակեց Պորտոսը,— ինչպէս տեսնում եք, մեզ օժանդակ ուժ է եկել, ուստի հարկավոր է լրացնել մեր պարենի պաշարը:

— Մուշկետո՛ն,— ասաց դ'Արտանյանը,— դուք պետք է մի ծառայություն մատուցեք ինձ:

— Ի՞նչ ծառայություն, տեր իմ:

— Տեր այդ եղանակը սովորեցրեք Պլանշէին: Կարող է պատահել, որ ես էլ պաշարողական դրոյթան մեջ ընկնեմ, և չէր խանգարի, եթէ նա կարողանար նույնպիսի հարմարություններ ստեղծել ինձ համար, ինչպիսին դուք եք ստեղծել ձեր տիրոջ համար:

— Աստվա՛ծ իմ,— համեստորեն ասաց Մուշկետոնը,— ախր սրանից ավելի հեշտ բան չկա, տեր իմ: Հարկավոր է ճարպիկ լինել, պրծավ գնաց: Ես գյուղում եմ մեծացել, և հայրս պարապ ժամանակ որսագողություն էր անում:

— Իսկ մնացած ժամանա՞կ ինչ էր անում:

— Զբաղվում էր մի արհեստով, որը ես միշտ էլ բավական շահավետ էի համարում:

— Բայց ի՞նչ արհեստ:

— Դա կաթոլիկների և հուգենոտների պատերազմի ժամանակ էր: Տեսնելով, որ կաթոլիկները հուգենոտներին են կոտորում, իսկ հուգենոտները՝ կաթոլիկներին և այդ ամենը հանուն հավատի, հայրս իր համար հնարել էր խառն հավատ, որը նրան թույլ էր տալիս լինել մերթ կաթոլիկ, մերթ հուգենոտ: Եվ ահա նա սովորաբար հրացանն ուսը գցած ման էր գալիս ճանապարհների եզրի թփերի հետևը և երբ

տեսնում էր, որ մի միայնակ կաթոլիկ է անցնում, բողոքականի հավատն իսկույն գերակշռում էր նրա հոգում: Նա հրացանը նշան էր բռնում անցորդի վրա, իսկ հետո, երբ այդ անցորդն արդեն իրենից մի տասը քայլ հեռավորության վրա էր լինում, զրույց էր սկսում նրա հետ, և այդ զրույցի հետևանքը լինում էր այն, որ համարյա միշտ ճանապարհորդը տալիս էր քսակը, որպեսզի իր կյանքը փրկի: Հասկանալի բան է, որ երբ հուզենոտ էր պատահում, հորս մեջ հանկարծ այնպիսի մի սեր էր բռնկում դեպի կաթոլիկական եկեղեցին, որ նա ուղղակի չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՛ս մի քառորդ ժամ առաջ իր մեջ կարող էին կասկածներ ծագել մեր սուրբ կրոնի գերազանցության մասին: Պետք է ձեզ ասեմ, տեր իմ, որ ես կաթոլիկ եմ, որովհետև հայրս, հավատարիմ մնալով իր կանոններին, իմ մեծ եղբորը հուզենոտ էր դարձրել:

— Իսկ ինչպե՞ս վերջացրեց իր կյանքը այդ պատվարժան մարդը,— հարցրեց դ'Արտանյանը:

— Օ՛, տեր իմ, ամենատղբալի ձևով: Մի անգամ մի նեղ շավղում ընկնում է մի հուզենոտի ու մի կաթոլիկի արանքը, որոնց հետ նա արդեն գործ էր ունեցել և որոնք ճանաչել էին նրան: Եվ ահա այդ երկուսը միանալով հենց այդտեղ էլ հորս կախել էին ծառից: Դրանից հետո նրանք եկել էին առաջին իսկ հանդիպած գյուղի պանդոկը և սկսել պարծենալ իրենց քաջագործություններով, իսկ ես ու եղբայրս հենց այդ ժամանակ, այդ նույն պանդոկում նստած խմում էինք:

— Եվ ի՞նչ արիք դուք,— հարցրեց դ'Արտանյանը:

— Մենք լուռ լսեցինք նրանց,— պատասխանեց Մուշկետոնը, իսկ հետո, երբ պանդոկից դուրս գալով նրանք տարբեր կողմեր գնացին, եղբայրս բռնեց այն ճանապարհը, որով կաթոլիկը գնաց, իսկ ես այն ճանապարհը, որով հուզենոտը գնաց: Երկու ժամից հետո ամեն ինչ վերջացած էր, մեզնից յուրաքանչյուրն արեց իր գործը, միաժամանակ հիանալով մեր հոր հեռատեսու-թյամբ, որը զգուշության համար մեզ դաստիարակել էր տարբեր հավատներով:

— Ճշմարիտ է, Մուշկետոն, երևում է, ձեր հայրը շատ խելամիտ մարդ է եղել: Ուրեմն ասում եք, որ պարապ ժամերին այդ ազնիվ մարդը որսագողության² մբ էր զբաղվում:

— Այո, տեր իմ, և նա է ինձ սովորեցրել թակարդներ դնել ու կարթ գցել: Դրա համար էր, երբ մեր անպիտան հյուրանոցատերը սկսեց մեզ կերակրել առատ, բայց կոպիտ սնունդով, որը պիտանի է միայն ռամիկ մարդու համար, բայց հարմար չի այնպիսի նուրբ ստամոքսներին, ինչպիսին մերն է, ես կամաց-կամաց անցա իմ նախկին արհեստին: Իշխանի անտառներում զբոսնելով. ես սկսեցի թակարդներ դնել շավիղներում կամ պառկելով նորին բարձրության լճերի ափին՝ կարթեր էի գցում ջրի մեջ և հիմա, փառք Աստծու, ինչպես տեսնում եք, մենք պակասություն չունենք ո՛չ կաքավի, ո՛չ ճագարի, ո՛չ տեսակ-տեսակ ձկների, որոնք թեթև ու առողջարար ուտելիքներ են հիվանդ մարդու համար:

— Լավ, իսկ գինի՞ն,— հարցրեց դ'Արտանյանը:— Ո՞վ է գինի մատակարարում ձեզ: Հյուրանոցի տե՞րը:

— Ինչպե՞ս ասեմ ձեզ: Ե՞վ այո, և՛ ոչ:

— Ինչպե՞ս թե՛ և՛ այո, և՛ ոչ:

— Նա, ճիշտ է, մեզ գինի է մատակարարում, բայց ինքն էլ չգիտե, որ պատիվ ունի այդ անելու:

— Պարզ բացատրեցեք, Մուշկետոն, ձեզ հետ զրուցելը շատ խրատական բան է:

— Դե լսեցեք, տեր իմ: Իմ ճանապարհորդությունների ժամանակ եղավ, որ ես հանդիպեցի մի իսպանացու, որը շատ աշխարհներ էր տեսել, եղել էր նաև Նոր Աշխարհում[81]:

— Ի՞նչ կապ ունի Նոր Աշխարհը այն շշերի հետ, որ կան այս սեղանին շարված ու այն կամոդում:

— Համբերություն, տեր իմ, ամեն բան իր ժամանակն ունի:

— Ճշմարիտ է, Մուշկետոն, վստահում եմ ձեզ և լսում:

— Այդ իսպանացին ուներ մի ծառա, որ ուղեկցել էր նրան Մեքսիկայում ճանապարհորդելու ժամանակ: Այդ ծառան իմ հայրենակիցն էր, և մենք շուտով

մտերմացանք, մանավանդ, որ բնավորությամբ էլ շատ նման էինք իրար: Երկուսս էլ աշխարհում ամենից ավելի որսն էինք սիրում, և նա ինձ պատմում էր, թե պամպասներում տեղացիներն ինչպես են վագրեր ու վայրի ցուլեր որսում սովորական օղակի օգնությամբ, որը նրանք գցում են այդ զարհուրելի կենդանիների վիզը: Սկզբում ես չէի ուզում հավատալ, թե կարելի է հասնել ճարպկության այնպիսի աստիճանի, որ մարդ քսան-երեսուն քայլ հեռավորությունից պարանը նետի իր ուզած տեղը, բայց շուտով ստիպված եղա ընդունելու, որ այդ ճիշտ է: Իմ այդ ընկերը շիշը դնում էր երեսուն քայլ հեռավորության վրա և ամեն անգամ կարողանում էր պարանի օղակը գցել նրա վիզը: Ես էլ սկսեցի վարժություններ անել, և որովհետև բնությունն ինձ որոշ ընդունակություններ է տվել, հիմա ես պարանը ուզածդ մեքսիկացուց վատ չեմ նե-տում: Դե ուրեմն, պա՞րզ է: Մեր հյուրանոցի տերը գինու մի հարուստ մառան ունի, բայց բանալին միշտ իր մոտ է պահում: Մառանը մի օղանցք ունի: Ահա հենց այդ օղանցքից էլ ես նետում եմ պարանը: Հիմա ես գիտեմ, թե որտեղ է լավ գինին և հանում եմ այնտեղից իմ պաշարը: Այ թե, տեր իմ, ինչ կապ ունի նոր Աշխարհը այն շշերի հետ, որ կան մեր սեղանին ու կամոդում: Իսկ հիմա չե՞ք ցանկանա փորձել մեր գինին և ասել ձեր կարծիքը նրա մասին:

— Շնորհակալ եմ, բարեկամս, շնորհակալ եմ, դժբախտաբար ես հենց նոր եմ նախաճաշել:

— Դե, ի՛նչ արած, Մուշկետոն,— ասաց Պորտոսը,— սեղան բաց արա և մինչ ես ու դու նախաճաշ կանենք, դ՛Արտանյանը կպատմի մեզ, թե ինչեր են պատահել իրեն այս տասն օրվա ընթացքում:

— Սիրով,— պատասխանեց դ՛Արտանյանը:

Մինչ Պորտոսն ու Մուշկետոնը նախաճաշում էին առողջացող մարդու ախորժակով և եղբայրական սրտակցությամբ, որ մարդկանց մերձեցնում է դժբախտության պահին, դ՛Արտանյանը նրանց պատմեց, թե ինչպես Արամիսը վիրավորված լինելով ստիպված եղավ մնալ Կրևկերում, ինչպես Աթոսը մնաց Ամիենում, պաշտպանվելով այն մարդկանցից, որոնք նրան մեղադրում էին կեղծ դրամ ծախսելու մեջ, և ինչպես ինքը՝ դ՛Արտանյանը ստիպված եղավ կոմս դը Վարդի փորը պատռել, որպեսզի կարողանա Անգլիա ընկնել:

Սակայն այսքանով էլ վերջացավ դ՛Արտանյանի ան-կեղծությունը: Նա միայն պատմեց, որ Մեծ Բրիտանիայից բերել է չորս հիանալի ձի, մեկը՝ իր համար, իսկ մյուսները՝ ընկերների, և, վերջապես, Պորտոսին հայտնեց, որ նրա ձին արդեն կանգնած է հյուրանոցի ախոռում:

Այդ պահին ներս մտավ Պլանշեն և իր տիրոջը հայտնեց, որ ձիերը հանգստացել են, և կարելի կլինի գիշերել Կլերմոնում:

Քանի որ դ՛Արտանյանն արդեն Պորտոսի կողմից համարյա հանգիստ էր և շտապում էր շուտ իմանալ, թե ինչ է պատահել մյուս ընկերներին, նա սեղմեց հիվանդի ձեռքը և ասաց, որ գնում է իր որոնումները շարունակելու: Ի դեպ, նա մտածում էր վերադառնալ այդ նույն ճանապարհով և մի շաբաթից Պորտոսին վերցնել իր հետ, եթե մինչ այդ հրացանակիրը գնացած չլինի Գրան-Մեն Մարտեն հյուրանոցից:

Պորտոսը պատասխանեց, որ ամենայն հավանականությամբ ոտքի դուրս ընկածը իրեն թույլ չի տա ավելի շուտ մեկնել: Բացի այդ, ինքը պետք է մնա Շանտիլիեում, որպեսզի պատասխան ստանա իր դքսուհուց:

Դ՛Արտանյանը շուտափույթ ու բարեհաջող պատասխան ցանկացավ նրան, ապա մի անգամ ևս Մուշկետոնին պատվիրելով լավ խնամել Պորտոսին, հյուրանոցի տիրոջ հետ հաշիվը փակեց և ճանապարհ ընկավ Պլանշեի հետ, որն արդեն ազատվել էր ձիերից մեկի հոգսից:

XXVI. Արամիսի դիսերտացիան

Դ՛Արտանյանը Պորտոսին ոչինչ չասաց՝ ո՛չ նրա վերքի, ո՛չ էլ դատախազի կնոջ մասին: Չնայած իր երիտասարդությանը՝ մեր գասկոնացին շատ զգույշ տղա էր: Նա ձևացնում էր, թե իբր հավատում է պարծենկոտ հրացանակրի բոլոր պատմածներին, որովհետև համոզված էր, որ ոչ մի բարեկամություն չի դիմանա գաղտնիքը մերկացնելուն, մանավանդ, եթե այդ գաղտնիքը մարդու ինքնասիրությունն է շոյում: Մյուս կողմից մենք միշտ էլ բարոյական որոշ գերազանցություն ենք ունենում նրանց նկատմամբ, ում կյանքը մեզ հայտնի է: Դրա համար էլ դ՛Արտանյանը իր ապագա ինտրիգների ծրագիրը կազմելով և որոշելով Աթոսին, Պորտոսին և Արամիսին դարձնել իր հաջողության զենքը՝ ամեննին դեմ չէր իր ձեռքում հավաքելու

անտեսանելի թեյերը, որոնց օգնությամբ նա մտածում էր կառավարել իր երեք ընկերներին:

Սակայն ամբողջ ճանապարհին մի խոր վիշտ ճմլում էր նրա սիրտը. նա շարունակ մտածում էր դեռատի տիկին Բոնասիեի մասին, որը պատրաստ էր վարձատրելու երիտասարդին իր նվիրվածության համար: Ի դեպ, շտապենք վերապահություն անել, որ այդ վիշտը երիտասարդի մեջ ծագել էր ոչ այնքան կորցրած երջանկության ավստասանքից, որքան այն երկյուղից, թե ջահել կնոջը կարող է որևէ դժբախտություն պատահել: Դ'Արտանյանը տարակույս չունեի, որ տիկին Բոնասիեն կարդինալի վրեժխնդրության գոհն է դարձել, իսկ նորին սրբազնության վրեժխնդրությունը, ինչպես հայտնի է, սուկայի էր լինում: Թե ինչ ձևով էր ինքը մինիստրի բարեհաճությանն արժանացել այդ նա չգիտեր, և գվարդիայի կապիտան դը Կավուան, ամենայն հավանականությամբ, այդ կբացատրեր նրան, եթե տանը գտած լիներ:

Ոչ մի բան այնպես չի մաշում ժամանակը և այնպես չի կարճացնում ճանապարհը, ինչպես ամենակուլ համառ միտքը: Այդ ժամանակ մարդու արտաքին գոյությունը նման է նիրհի, իսկ այդ միտքը ասես երազ լինի: Նրա ազդեցության տակ ժամանակը իր հաշիվն է կորցնում, իսկ տարածությունը՝ իր հեռավորությունը: Դուք դուրս եք գալիս մի տեղից և հասնում եք մի ուրիշ տեղ, ուրիշ ոչինչ: Ձեր անցած ճանապարհից հիշողության մեջ ոչինչ չի մնում, բացի անորոշ մշուշից, որի մեջ ճախրում են հազարավոր խառնակ պատկերներ՝ ծառեր, լեռներ, դաշտեր: Ահա հենց այդպիսի պատրանքի մեջ ընկած, հնազանդվելով իր ձիու ցանկացած ընթացքին, դ'Արտանյանն անցավ այն վեց թե յոթ լյու, որ Շանտիլիեն բաժանում է Կրևկերից, և հասնելով այդ գյուղը, միանգամից մոռացավ այն ամենը, ինչ տեսել էր ճանապարհին:

Միայն այստեղ նա ուշքի եկավ, թափ տվեց գլուխը, տեսավ այն պանդոկը, որտեղ թողել էր Արամիսին և ձիուն խթանելով՝ արագ քշեց ու կանգ առավ պանդոկի դռան առաջ: Այս անգամ նրան դիմավորեց ոչ թե պանդոկապետը, այլ տիրուհին: Դ'Արտանյանը մարդու դեմքին նայել՝ կհասկանար, թե նա ինչ մարդ է: Նա մի հայացք գցեց պանդոկապանուհու լիքը, գոհունակ դեմքին և հասկացավ, որ դրա մոտ ձևանալու կարիք չկա. այդպիսի բարեհոգի տեսք ունեցող կնոջից ոչ մի վատ բան սպասել չէր կարելի:

— Ամենապատվելի տիրուհի,— ասաց դ'Արտանյանը,— չե՞ք կարող ասել ինձ, թե որտեղ է գտնվում իմ ընկերներից մեկը, որին մենք մի տասն օր առաջ ստիպված եղանք թողնել այստեղ:

— Մի գեղեցիկ երիտասա՞րդ, որ կլինի քսաներեքսանչորս տարեկան, հեզաբարո, սիրալիր, բարեկազմ:

— Եվ բացի այդ ամենից՝ ուսից վիրավորված:

— Այո, այո:

— Ուրե՞մն...

— Նա դեռ այստեղ է, տեր իմ:

— Ա՛յ, այդ լավ է,— գոչեց դ'Արտանյանը ձիուց իջնելով և սանձը նետելով Պլանշեին:— Տիրուհի, դուք հարություն տվիք ինձ: Որտեղ է նա, իմ սրտին այնքան թանկ այդ Արամիսը: Ես ուզում եմ գրկել նրան: Խոստովանում եմ, որ չեմ համբերում, ուզում եմ շուտ տեսնել նրան:

— Ներեցեք ինձ, տեր իմ, բայց ես կասկածում եմ, թե նա կարող է հենց այս բոպեին ընդունել ձեզ:

— Այդ ինչո՞ւ: Մի՞թե նրա մոտ կին կա:

— Տե՛ր Հիսուս Քրիստոս: Այդ ինչե՞ր էք ասում: Խեղճ տղա: Ո՛չ, տեր իմ, նրա մոտինը կին չէ:

— Հապա ո՞վ է:

— Մոնդիգլիեի քահանան և Ամիենի վանքի ճիզվիտների վանահայրը:

— Ողորմա՛ծ աստված,— գոչեց դ'Արտանյանը:— Չլինի՞ խեղճ երիտասարդի դրությունը ծանրացել է:

— Ո՛չ, տեր իմ, ընդհակառակն: Բայց հիվանդությունից հետո աստծո օրհնությունն իջավ նրա վրա, և նա որոշեց հոգևոր կոչում ընդունել:

— Ա՛խ, այո,— ասաց դ՛Արտանյանը,— ախր ես մոռացել էի, որ նա միայն ժամանակավորապես է հրացանակիր դարձել:

— Բայց դուք, տեր իմ, անպայմա՞ն ուզում եք տեսնել նրան:

— Ավելի, քան երբևիցե:

— Այդ դեպքում անցեք բակը, թեքվեք դեպի աջ, սանդուղքով բարձրացեք երրորդ հարկ, մտեք համար հինգ սենյակը:

Դ՛Արտանյանը նետվեց նշված ուղղությամբ և գտավ սանդուղքը, մեկը այն արտասանողներին, որոնք դեռ հանդիպում են հին պանդոկների բակերում: Սակայն պարզվեց, որ ապագա աբբատի սենյակը մտնելն այնքան էլ հեշտ բան չէր, Արամիսի սենյակի մուտքը պահպանվում էր ավելի խիստ, քան Արամիայի[82] այգիները: Բազենը պահակ էր կանգնել միջանցքում և անվեհերաբար փակեց նրա ճամփան, քանի որ երկար տարիների փորձություններից հետո խեղճը, վերջապես, մոտ էր իր փափագած նպատակին:

Իսկապես, Բազենը միշտ երագում էր հոգևոր անձի սպասավոր լինել և անհամբեր սպասում էր իր երևակայության մեջ շարունակ պատկերվող այն պահին, երբ, վերջապես, Արամիսը ցած կնետի թիկնոցը և կապա[83] կհագնի: Հրացանակրի մոտ նրան պահում էին միմիայն երիտասարդի ամենօրյա խոստումները, թե՛ մոտ է այդ պահը: Թե չէ՝ Բազենի ասելով, այդ ծառայությունը նրա հոգին անխուսափելիորեն դեպի կորուստ էր տանում:

Եվ այսպես, այժմ Բազենը երանության գագաթնակետին էր հասել: Ամեն բանից երևում էր, որ այս անգամ տերը չէր հրաժարվելու իր խոսքից: Ֆիզիկական և հոգեկան ցավերի միացումը վաղուց փափագած ներգործությունն էր ունեցել. Արամիսը, որ միաժամանակ տառապում էր և՛ հոգով, և՛ մարմնով, վերջապես իր հայացքն ու միտքը դարձրել էր կրոնի վրա, երկնային նախազգուշացում համարելով իրեն պատահած երկու դժբախտությունները՝ սիրած կնոջ հանկարծակի անհայտացումը և ուսից ստացած վերքը:

Հասկանալի է, որ այսպիսի հոգեվիճակում Բազենի համար չէր կարող ավելի անհաճո քան լինել, քան դ'Արտանյանի լույս ընկնելը, որը կարող էր նորից իր տիրոջը քաշել աշխարհիկ կյանքի ջրապտույտի մեջ, որն այնքան երկար ժամանակ հրապուրել էր նրան: Բազենը որոշեց արիաբար պաշտպանել դուռը, բայց որովհետև պանդոկապանուհին արդեն մատնել էր նրան, և այլևս չէր կարող ասել, թե Արամիսը տանը չի, ուստի փորձեց նորեկին ապացուցել, թե ծայրահեղ անպարկեշտություն կլինի խանգարել իր տիրոջը բարեպաշտական գրույցի պահին, որ սկսվել է դեռ առավոտյան և, Բազենի ասելով, երեկոյից շուտ վերջանալ չէր կարող:

Սակայն դ'Արտանյանը ամենափոքր ուշադրություն անգամ չդարձրեց Բազենի ճառաբանության վրա և, առանց վեճի բռնվելու իր ընկերոջ ծառայի հետ, ուղղակի մի ձեռքով մի կողմ հրեց նրան, իսկ մյուսով դարձրեց №5 սենյակի դռան բռնակը:

Դուռը բացվեց, և դ'Արտանյանը ներս մտավ:

Արամիսը երկար ու սև հագուստով, կլոր տափակ գլխարկը գլխին, որ խիստ նման էր փեղույրի, նստած էր երկարավուն սեղանի մոտ, որի վրա թափված էին թղթի փաթեթներ և ահագին ֆոլիանտներ[84]: Նրա աջ կողմում նստած էր ճիզվիտական վանքի վանահայրը, ձախ կողմում՝ Մոնդիդիեի քահանան: Վարագույրները կիսով չափ քաշված էին և ներս էին թողնում խորհրդավոր լույս, որը նպաստում էր բարեպաշտական խոհերին: Աշխարհիկ բոլոր առարկաները, որոնք կարող էին աչքի ընկնել մի երիտասարդի սենյակում, մանավանդ, եթե այդ երիտասարդը հրացանակիր է, չքացել էին ասես կախարդական ուժով, և Բազենը, երևի վախենալով, թե այդպիսի առարկաների տեսքը կարող է իր տիրոջ միտքը շեղել դեպի աշխարհիկ կյանքը, հավաքել էր սուսերը, ատրճանակները, փետրագարդ գլխարկը, բոլոր տեսակի հագուստներն ու ժանյակները:

Այդ բոլորի փոխարեն մի մութ անկյունում պատին խփված մեխից կախված էր մի ինչոր քան, որը դ'Արտանյանին թվաց ինքնաձաղկման խարազան:

Բացվող դռան աղմուկի վրա Արամիսը գլուխը բարձրացրեց և ճանաչեց իր ընկերոջը, սակայն ի մեծ զարմանս դ'Արտանյանի, նրա գալը, ըստ երևույթին, հրացանակրի վրա մի առանձին տպավորություն չգործեց, այնքա՛ն հեռու էին նրա մտքերը աշխարհիկ բաներից:

— Բարի օր, սիրելի դ'Արտանյան,— ասաց Արամիսը,— հավատացեք, ես շատ ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ:

— Ես ևս,— ասաց դ'Արտանյանը,— թեև ես դեռ լիովին վստահ չեմ, թե խոսում եմ Արամիսի հետ:

— Իսկ և իսկ իր հետ, բարեկամս, իսկ և իսկ իր հետ: Բայց ի՞նչը կարող էր ձեզ այդպիսի կասկած ներշնչել:

— Ես վախեցա, թե սենյակները խառնել եմ և մտածեցի, թե ընկել եմ մի ինչոր հոգևոր անձի սենյակ, իսկ հետո տեսնելով ձեզ այս պարոնների հետ, ընկա մի այլ թյուրիմացության մեջ, ինձ թվաց, թե դուք ծանր հիվանդ եք:

Երկու սևազգեստ մարդիկ էլ հասկացան դ'Արտանյանի ակնարկը և սպառնազին հայացքներ գցեցին նրա վրա, սակայն դ'Արտանյանը չշփոթվեց:

— Գուցե ես խանգարո՞ւմ եմ ձեզ, սիրելի Արամիս,— շարունակեց դ'Արտանյանը:— Ինչպես երևում է՝ դուք խոստովանություն եք անում այս պարոններին:

— Խանգարում եք ի՞նձ: Օ՛, ո՛չ, ընդհակառակն, սիրելի բարեկամս, երդվում եմ՝ ոչ: Եվ որպես իմ խոսքերի ապացույց՝ թույլ տվեք իմ ուրախությունն արտահայտել, որ ձեզ տեսնում եմ ողջ ու անվնաս...

«Վերջապես գլխի ընկավ,— մտածեց դ'Արտանյանը:— Ի՛նչ կա որ, կարող էր ավելի վատ լինել»:

— Քանզի իմ բարեկամը վերջերս մի մեծ վտանգից փրկվեց,— գորովագին շարունակեց Արամիսը՝ դառնալով երկու հոգևորականներին և ցույց տալով դ'Արտանյանին:

— Գոհունակություն հայտնեք աստծուն, տե՛ր,— պատասխանեցին երկու հոգևորականները գլուխ տալով դ'Արտանյանին:

— Ես չհապաղեցի անել այդ, արժանապատիվ հայրեր,— պատասխանեց երիտասարդը՝ ինքն էլ գլուխ տալով նրանց:

— Դուք լավ ժամանակին եկաք, սիրելի դ'Արտանյան,— ասաց Արամիսը,— և մասնակցելով մեր վեճին, դուք մեզ կօգնեք ձեր գիտելիքներով: Ամիենի վանքի պարոն վանահայրը, Մոնդիդիեի պարոն Կյուրեն և ես քննում ենք մի քանի աստվածաբանական հարցեր, որոնք վաղուց են զբաղեցնում մեր ուշադրությունը, և ես երջանիկ կլինեի լսելու ձեր կարծիքը:

— Զինվորական մարդու կարծիքը ոչ մի կշիռ չունի,— պատասխանեց դ'Արտանյանը փոքրինչ անհանգստացած խոսակցության այդպիսի ընթացքից,— և, հավատացեք ինձ, դուք լիովին կարող եք վստահել այս պարոնների գիտնականությանը:

Երկու սևազգեստ մարդիկ կրկին գլուխ տվին նրան:

— Ընդհակառակն,— առարկեց Արամիսը,— ձեր կարծիքը շատ թանկ կլինի մեզ համար: Խոսքն ահա թե ինչի մասին է. պարոն վանահայրը գտնում է, որ իմ դիսերտացիան պետք է լինի առավելապես դոգմատիկ և դիդակտիկ:

— Ձեր դիսերտացիա՞ն: Ուրեմն դուք դիսերտացիա՞ եք գրում:

— Իհարկե,— պատասխանեց ճիզվիտը,— առաջիկա ձեռնադրության համար դիսերտացիան պարտադիր է:

— Ձեռնադրությո՞ւն,— գոչեց դ'Արտանյանը, որը չէր հավատացել այն ամենին, ինչ ասել էին սկզբում պանդոկապանուհին, ապա՛ Բազենը,— ձեռնադրությո՞ւն:

Եվ զարմանքից քար կտրած նա մի հայացք գցեց իր առջև նստած մարդկանց վրա:

— Այդպես ուրեմն...— շարունակեց Արամիսը՝ բազկաթռոխի մեջ ընդունելով այնպիսի մի գեղեցիկ կեցվածք, ասես գտնվում էր մի անվանի տիկնոջ ննջարանում՝ առավոտյան ընդունելությանը, հիանալով իր ճերմակ, կնոջ ձեռքերի պես փափուկ ձեռքով, որ նա վեր էր բարձրացրել, որպեսզի արյունը ցած հոսի,— այդպես ուրեմն,

դ'Արտանյան, ինչպես արդեն դուք լսեցիք, պարոն վանահայրը կցանկանար, որ իմ դիսերտացիան դոգմատիկ լինի, մինչդեռ ես կգերադասեի, որ այն լինի մտահայեցական: Ահա թե ինչու պարոն վանահայրը ինձ առաջարկել է մի թեմա, որը դեռ ոչ ոք չի քննել և որը,— ես լիովին ընդունում եմ այդ,— մեկնաբանությունների ամենալայն ասպարեզ է ներկայացնում: «*Utraque manus in benedicendo clericis inferioribus necessaria esi*»...

Դ'Արտանյանը, որի խորագիտակությունը հայտնի է մեզ, այդ մեջբերումը լսեց նույն անխռով տեսքով, ինչպես լսում էր պրն դը Տրևիլին, երբ նա խոսում էր ընծայի մասին, կարծելով, թե այն դ'Արտանյանը ստացել է Բեկինգհեմից:

— Իսկ այդ նշանակում է,— շարունակեց Արամիսը, ցանկանալով դյուրացնել նրա խնդիրը,— «Ստորին աստիճանի հոգևորականներին օրհնության համար անհրաժեշտ են երկու ձեռքերն էլ»:

— Սքանչելի՛ թեմա է,— գոչեց ճիզվիտը:

— Սքանչելի և դոգմատիկ,— հաստատեց քահանան, որը լատիներենում մոտավորապես այնքան էր ուժեղ, որքան դ'Արտանյանը և ուշի ուշով հետևում էր ճիզվիտին, որպեսզի կարողանա քայլել նրա հետքերով և արձագանքի պես կրկնել նրա խոսքերը:

Ինչ վերաբերում է դ'Արտանյանին, ապա երկու սևագգեստների հիացմունքը նրան կատարյալ տարակուսանքի մեջ էր գցել:

— Այո, սքանչելի, *prorsus admirabile*[85],— շարունակեց Արամիսը,— սակայն դա պահանջում է եկեղեցու հայրերի և սուրբ գրքի խորը ուսումնասիրություն: Այնինչ,— ես հեզաբար խոստովանում եմ այս գիտական կրոնավորների առաջ,— գիշերային հերթապահությունները և թագավորական ծառայությունն ինձ ստիպել են մի փոքր աչքաթող անել պարապմունքները: Ուստիս ինձ համար, *facilius natans*[86] համար ավելի դյուրին կլինի թեման վերցնել իմ ընտրությամբ, որը աստվածաբանական այդ դժվարին հարցերի համար կլինի այն, ինչ բարոյականությունն է մետաֆիզիկայի և փիլիսոփայության համար:

Դ'Արտանյանը խիստ ձանձրանում էր, նույնպես և կյուրեն:

— Երևակայեցեք, ինչպիսի՜ ներածություն,— գոչեց ճիզվիտը:

— Ներածություն,— կրկնեց կյուրեն, որպեսզի մի բան ասած լինի:

— Quemadmodum inter coelorum immensitaten[87].

Արամիսը մի հայացք գցեց դ՛Արտանյանի կողմը և տեսավ, որ իր ընկերը հորանջում է՝ մինչև իսկ ծնոտը դուրս գցելու վտանգի հասած:

— Եկեք ֆրանսերեն խոսենք, հայր իմ,— ասաց նա ճիզվիտին,— այդ դեպքում պարոն դ՛Արտանյանը կկարողանա ավելի լավ գնահատել մեր զրույցը:

— Այո,— հաստատեց դ՛Արտանյանը,— ես հոգնել եմ ճանապարհին և այդ լատիներենը դուրս է թռչում իմ ըմբռնողությունից:

— Լավ,— ասաց ճիզվիտը մի փոքր վարանելով, մինչդեռ կյուրեն ուրախությունից իրեն կորցրած՝ շնորհակալության հայացքներ էր գցում դ՛Արտանյանի վրա:— Այդպես ուրեմն, տեսնենք ինչ կարելի է դուրս բերել այս գլոսսայից[88]: Մովսեսը Աստծու ծառան է... նա միմիայն ծառան է, հասկացեք այս: Մովսեսն օրհնում է երկու ձեռքով: Երբ հրեաները հաղթում են իրենց թշնամիներին, նա պատվիրում է բռնել իր երկու ձեռքերը, հետևապես նա օրհնում է երկու ձեռքով: Բացի դրանից, ավետարանում էլ ասված է. «imponite manus» և ոչ թե՛ «մանւմ»՝ «դրեք ձեռքերը» և ոչ թե՛ «ձեռքը»:

— Դրեք ձեռքերը,— կրկնեց կյուրեն՝ մի համապատասխան շարժում անելով:

— Իսկ սուրբ Պետրոսին,— շարունակեց ճիզվիտը,— որի փոխանորդներն են պապերը, ասված է հակառակը. «porrige digitos» — «դրեք մատները»: Այժմ հասկանո՞ւմ եք:

— Իհարկե,— պատասխանեց Արամիսը, որը հիացած էր զրույցից,— բայց դա շատ նուրբ բան է:

— Մատնե՛րը,— կրկնեց ճիզվիտը:— Սուրբ Պետրոսը մատներով է օրհնում: Հետևապես պապն էլ օրհնում է մատներով: Բայց քանի՞ մատով է օրհնվում նա: Երեք. հանուն Հոր և Որդվո և Հոգվոյն սրբո:

Բոլորը խաչակնքեցին, Դ'Արտանյանն էլ հարկ համարեց հետևել ընդհանուրի օրինակին,

— Պապը սուրբ Պետրոսի փոխանորդն է և իր մեջ մարմնացնում է աստվածային երեք ընդունակություն: Մնացածը, հոգևորականության ordines inferiores[89], օրհնում են սուրբ հրեշտակների և հրեշտակապետների անունով: Իսկ հոգևորականության ամենացածր աստիճանի մարդիկ, ինչպես օրինակ՝ մեր սարկավազներն ու տիրացուները, օրհնում են ցողիչներով, որոնք արտահայտում են անթիվանհամար օրհնող մատները: Պարզեցրած ձևով այսպիսին է թեման, Argumentum omni denudatum ornamento[90]: Ես սրանից կկազմեի երկու այնպիսի հատորներ, ինչպիսին այս է,— ավելացրեց ճիզվիտը:

Եվ ոգևորության մեջ նա ձեռքը խփեց սուրբ Հովհան Ոսկեբերանի հատորին, որի ծանրության տակ ձկում էր սեղանը:

Դ'Արտանյանը ցնցվեց:

— Իհարկե,— սկսեց Արամիսը,— ես գնահատում եմ այդպիսի թեմայի գեղեցկությունը, բայց միաժամանակ խոստովանում եմ, որ իմ ուժից վեր եմ համարում: Ես ընտրել եմ մի ուրիշ տեքստ: Ասացեք ինձ, սիրելի դ'Արտանյան, դուր կգա՞ ձեզ. «Non inutile est desiderium in oblatione», այսինքն՝ «Որոշ ողորմածություն է իջնում նրա վրա, ով զոհ է մատուցանում աստծուն»:

— Սպասեցեք,— գոչեց ճիզվիտը,— սպասեցեք: Այդ տեքստը մոտենում է հերետիկոսության: Համարյա նույնպիսի դրույթ կա «Allgumtinus»ում, հերետիկոս Յանսենի[91] գրքում, որը վաղ թե ուշ կայրվի դահճի ձեռքով: Զգուշացե՛ք, իմ երիտասարդ բարեկամ, դուք մոտ եք կեղծ գիտությանը: Դուք կկործանեք ձեզ, իմ երիտասարդ բարեկամ:

— Դուք կկործանեք ձեզ,— կրկնեց կյուրեն՝ վշտահար օրորելով գլուխը:

— Դուք շոշափեցիք այն տխրահոշակ հարցը՝ կամքի ազատության մասին, որը կործարանար գայթակղություն է հանդիսանում: Դուք բոլորովին մոտեցաք պելագիացիների և կիսապելագիացիների[92] հերետիկոսությանը:

— Բայց, արժանապատիվ հայր...— ուզեց սկսել Արամիսը, որ մի փոքր շշմել էր իր վրա տեղացող փաստարկներից:

— Ինչպե՞ս կարող եք ապացուցել,— ընդհատեց նրան ճիզվիտը, որ պետք է ափսոսալ աշխարհը, երբ քեզ գոհաբերում ես աստծուն: Լսեցեք այսպիսի մի դիլեմա. աստվածն աստված է, իսկ աշխարհը՝ ստանա: Ափսոսալ աշխարհը՝ նշանակում է ափսոսալ աստանային: Այս է իմ եզրակացությունը:

— Ինչպե՞ս և իմ,— ասաց կյուրեն:

— Ներեցեք, բայց...— նորից խոսեց Արամիսը:

— *Desideras diabolum*[93], թշվառակա՛ն,— գոչեց ճիզվիտը:

— Նա ափսոսում է աստանայի՛ն: Օ՛, իմ երիտասարդ բարեկամ, մի՛ ափսոսացեք աստանային, աղաչո՛ւմ եմ ձեզ,— ողբաց կյուրեն:

Դ՛Արտանյանը զգում էր, որ բթանում է: Նրան թվում էր, թե ինքը գտնվում է գծանոցում և հիմա ինքն էլ կխելագարվի, ինչպես արդեն խելագարվել են իր առջև նստած այդ մարդիկ: Սակայն նա ստիպված էր լռել, որովհետև չէր հասկանում այն լեզուն, որով խոսում էին:

— Բայց մի ինձ էլ լսեցեք,— ասաց Արամիսը քաղաքավարությամբ, բայց արդեն մի փոքր զրգռված տոնով,— ես չեմ ասում, թե ափսոսում եմ: Ո՛չ, ես երբեք չեմ արտասանի այդ խոսքերը, որովհետև դրանք չեն համապատասխանում ճշմարիտ հավատի ոգուն...

Ճիզվիտը ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք, և կյուրեն էլ նույնն արեց:

— Բայց, համենայն դեպս, համաձայնեցեք, որ վայել չէ զոհաբերել աստծուն այն, ինչից դուք վերջնականապես կշտացել եք: Ասացե՛ք, դ՛Արտանյան, ճիշտ չե՞մ ասում:

— Հասկանալի է, որ իրավացի եք, գրողը տանի,— գոչեց դ՛Արտանյանը:

Կյուրեն և Ճիզվիտը վեր թռան աթոռներից:

— Ահա իմ ելակետը սիլլոգիզմն[94] է. աշխարհը գուրկ չէ հրապույրներից, ես հեռանում եմ աշխարհից, հետևապես զոհաբերություն եմ անում: Իսկ սուրբ գրքում ուղղակի ասված է. «Զոհ մատուցեցեք աստծուն»:

— Այդ ճշմարիտ է,— ասացին հակառակորդները:

— Եվ հետո,— շարունակեց Արամիսը՝ ականջը տրորելով, որպեսզի այն կարմրի, ինչպես առաջ ձեռքերն էր բարձրացնում, որպեսզի ճերմակեն,— և հետո, ես ռոնդո[95] եմ դրել այդ թեմայով: Անցյալ տարի ես այն ցույց տվի պարոն Վուատյուրին[96], և այդ մեծ մարդը շատ զովեստներ տվեց ինձ:

— Ռոնդո՛,— արհամարհանքով ասաց Ճիզվիտը:

— Ռոնդո՛,— մեքենաբար կրկնեց կյուրեն:

— Կարդացեք, կարդացեք այն մեզ համար,— գոչեց դ՛Արտանյանը,— դա մի փոքր կզվարճացնի մեզ:

— Ո՛չ, ախր նա կրոնական բովանդակություն ունի,— պատասխանեց Արամիսը,— դա չափածո աստվածաբանություն է:

— Ի՛նչ սատանայական բան,— ասաց դ՛Արտանյանը:

— Ահա նա,— ասաց Արամիսը համեստորեն, որը սակայն զերծ չէր կեղծավորության թեթև երանգից.

Դու, որ թախծում ես սզալով անուրջները քո,

Եվ քարշ ես տալիս կյանքդ անուրախ,
Քո վշտին վերջ ու սահման կդրվի,
Երբ արարչին կտաս արցունքները քո,
Դու, որ թախծում ես:

Դ՛Արտանյանը և կյուրեն հիացած էին: Ճիզվիտը պնդում էր իր կարծիքը:

— Աստվածաբանական խոսքի մեջ զգույշ եղեք աշխարհիկ ոգուց: Ինչ է ասում սուրբ Ավգուստինուսը. *Severus sit clericorum sermo*[97]:

— Այո՛, որպեսզի քարոզը հասկանալի լինի,— ասաց կյուրեն:

— Այսպես,— շտապեց միջամտել ճիզվիտը, տեսնելով, որ իր արբանյակը մոլորվել է,— այսպես, ձեր դիսերտացիան դուր կգա տիկիններին, ուրիշ ոչինչ: Նա կունենա նույնպիսի հաջողություն, ինչպես պարոն Պատրյուի[98] մի որևէ պաշտպանական ճառ:

— Աստված տա, որ այդպես լինի,— հափշտակությամբ գոչեց Արամիսը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք,— ասաց ճիզվիտը,— աշխարհը դեռ բարձր է խոսում ձեր մեջ, խոսում է *altissima voce*[99]: Դուք դեռ աշխարհական եք, իմ երիտասարդ բարեկամ, և ես վախենում եմ, որ աստծո շնորհը իր ներգործությունը չանի:

— Հանգիստ եղեք, հայր սուրբ, ես պատասխանատու եմ ինձ համար:

— Աշխարհի՛կ ամբարտավանություն:

— Ես ճանաչում եմ ինձ, հայր սուրբ, իմ վճիռն անսասան է:

— Ուրեմն դուք համառորեն ուզում եք շարունակե՞լ ձեր աշխատանքն այդ թեմայով:

— Ես իմ կոչումն եմ համարում քննության առնել հենց այս թեման և ո՛չ որևէ մեկ ուրիշը: Ուստիև շարունակում եմ իմ աշխատանքը և հուսով եմ, որ վաղը դուք բավարարված կլինեք այն ուղղումներով, որ ես կմտցնեմ համաձայն ձեր ցուցումների:

— Աշխատեցեք առանց շտապելու,— ասաց կյուրեն,— մենք ձեզ թողնում ենք հիանալի տրամադրության մեջ:

— Այո,— ասաց ճիզվիտը,— արտը ցանված է, և հարկ չկա երկյուղ կրելու, որ սերմերի մի մասն ընկել է քարերի վրա կամ թափվել է ճանապարհին և որ երկնային թռչունները կարող են կտցահարել մնացած մասը:

«Այ գրողը տանի քեզ քո լատիներենի հետ»,— մտածեց դ'Արտանյանը, զգալով, որ այլևս դիմանալ չի կարողանում:

— Մնաս բարով, զավակս,— ասաց կյուրեն,— մինչև վաղը:

— Մինչև վաղը, քաջ տղա,— ասաց ճիզվիտը,— դուք խոստանում եք դառնալ եկեղեցու լուսատու աստղերից մեկը: Աստված չանի՛, որ այդ աստղը կլանող բոց դառնա:

Դ'Արտանյանը, որն արդեն մի ամբողջ ժամ անհամբերությունից եղունգներն էր կրծոտում, այժմ սկսեց մատները կրծել:

Սև կապայավոր երկու մարդիկ վեր կացան, գլուխ տվին Արամիսին ու դ'Արտանյանին և ուղղվեցին դեպի դուռը: Բազենը, որն ամբողջ ժամանակ կանգնած էր այնտեղ և բարեպաշտ ցնծությամբ լսում էր այդ գիտական վեճը, շտապեց նրանց ընդառաջ, վերցրեց քահանայի ժամագիրքը, ճիզվիտի աղոթագիրքը և հարգալից առաջ քայլեց՝ ճանապարհ բանալով նրանց համար:

Արամիսը ճանապարհ դնելով նրանց հետ միասին իջավ սանդուղքով, բայց և իսկույն բարձրացավ դ'Արտանյանի մոտ, որը դեռևս մի տեսակ շշմած էր:

Մենակ մնալով՝ ընկերները մի պահ անհարմար լռություն պահեցին, բայց որևէ մեկը պետք է ընդհատեր այդ լռությունը, և որովհետև դ'Արտանյանը, ըստ երևույթին, որոշել էր այդ պատիվը վերապահել իր ընկերոջը, Արամիսը առաջինը խոսեց:

— Ինչպես տեսնում եք,— ասաց նա,— ես վերադարձել եմ իմ նվիրական մտքերին:

— Այո, աստծու շնորհին իր ազդեցությունն է ունեցել ձեզ վրա, ինչպես հենց նոր ասաց այն պարոնը:

— Օ՛, աշխարհից հեռանալու միտքը իմ մեջ վաղուց է ծագել, և դուք շատ անգամ եք այդ լսել ինձնից, չէ՞, բարեկամս:

— Իհարկե, բայց, խոստովանում եմ, ես կարծում էի, թե դուք կատակ եք անում:

— Այդպիսի կատակներ անե՛լ: Ի՛նչ եք ասում, դ՛Արտանյան:

— Է՛հ, գրողը տանի, բայց մենք մահվան հետ էլ կատակ ենք անում:

— Եվ իզուր, դ՛Արտանյան, որովհետև մահը այն դուռն է, որ տանում է դեպի կործանում կամ դեպի փրկություն:

— Համաձայն եմ, բայց ի սեր աստծո, Արամիս, աստվածաբանական վեճեր չսկսենք: Կարծում եմ այն բաժինը, որ դուք ստացաք, ձեզ լիովին բավական է այսօր: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես համարյա մոռացել եմ այն սակավ լատիներենը, որն, ի դեպ, երբեք էլ չեմ իմացել և բացի դրանից, խոստովանում եմ, որ առավոտյան ժամը տասից ես ոչինչ չեմ կերել և գայլի պես քաղցած եմ:

— Մենք իսկույն կճաշենք, սիրելի բարեկամս: Միայն չմոռանաք, որ այսօր ուրբաթ է, իսկ այդպիսի օրերին ես ոչ միայն միս չեմ ուտում, այլև չեմ համարձակվում նայել նրա վրա: Եթե դուք համաձայն եք գոհանալու իմ ճաշով, ապա այն բաղկացած է խաշած կանաչեղենից և պտուղներից:

— Ինչ եք հասկանում դուք կանաչեղեն ասելով,— անհանգիստ հարցրեց դ՛Արտանյանը:

— Կանաչեղեն ասելով հասկանում եմ սպանախ,— պատասխանեց Արամիսը,— բայց ձեզ համար ես ճաշին կավելացնեմ ձու, որ կանոնի մեջ խախտում է հանդիսանում, որովհետև ձվից ճուտ է դուրս գալիս, հետևապես այն էլ կարող է միս համարվել:

— Այնքան էլ շքեղ ճաշկերույթ չի լինի, բայց ցանկանալով ձեզ հետ լինել ես կհամաձայնեմ դրան:

— Շնորհակալ եմ այդ գոհաբերության համար,— ասաց Արամիսը,— բայց եթե այն օգուտ չբերի ձեր մարմնին, անտարակույս օգուտ կբերի ձեր հոգուն:

— Ուրեմն, Արամիս, դուք հաստա՞տ հոգևոր կոչում եք ընդունում: Ի՞նչ կասեն մեր ընկերները, ի՞նչ կասի պարոն դը Տրևիլը: Նրանք ձեզ դասալիք կհամարեն, նախագգուշացնում եմ:

— Ես հոգևոր կոչում չեմ ընդունում, այլ վերադառնում եմ նրան: Եթե ես դասալիք եմ, ապա հենց դասալիք եմ եկեղեցուց, որին լքեցի հանուն աշխարհի: Դուք հո գիտեք, որ ես ինձ վրա բռնություն եմ գործադրել, երբ հագել եմ հրացանակրի թիկնոցը:

— Ոչ դրա մասին ես ոչինչ չգիտեմ:

— Ձեզ հայտնի չէ՞, թե ինչ պատճառով եմ ես հեռացել սեմինարիայից:

— Ամենևին:

— Դե ուրեմն, ահա իմ պատմությունը: Նույնիսկ սուրբ գրքում ասված է, «Խոստովանեցեք միմյանց», և ահա, դ'Արտանյան, ես խոստովանություն եմ անում:

— Իսկ ես նախօրոք թողություն եմ տալիս ձեր մեղքերին: Տեսնո՞ւմ եք ինչ բարի սիրտ ունեմ ես:

— Սուրբ բաների մասին կատակ մի՛ արեք, բարեկամս:

— Լավ, լավ, պատմեցեք, լսում եմ ձեզ:

— Ես սեմինարիայում դաստիարակվում էի ինը տարեկան հասակից: Երեք օր էր մնում, որ իմ քսան տարին լրանա, և ես պիտի դառնայի աբբատ ու դրանով ամեն ինչ վերջանար: Բայց ահա, մի անգամ, երեկոյան, երբ ես իմ սովորության համաձայն գտնվում էի մի տան մեջ, որտեղ սիրով ժամանակ էի անց կացնում,— ի՞նչ կարող ես

անել, ես երիտասարդ էի և թուլությունների ենթակա,— ինչոր մի սպա, որը միշտ ուշադիր դիտում էր, թե ինչպես եմ ես Վարք սրբոց կարդում տանտիրուհու համար, անակնկալ ու առանց գեկուցման մտավ սենյակ: Հենց այդ երեկո ես Հուդիթի պատմությունից մի օրինակ էի բերել և ոտանավոր էի կարդում իմ տիկնոջ համար, որը գովասանքներ չէր խնայում և գլուխն իմ ուսին հակած՝ ինձ հետ միասին կարդում էր ոտանավորը: Այդ դիրքը որ, խոստովանում եմ, մի քիչ ավելի ազատ էր, դուր չեկավ սպային: Նա ոչինչ չասաց, բայց երբ ես դուրս եկա, նա էլ դուրս եկավ իմ հետևից:

«Պարոն արբա՛տ,— ասաց նա՝ ինձ հասնելով,— ձեզ դո՞ւր է գալիս, երբ ձեզ խփում են մահակով»:

«Չեմ կարող պատասխանել ձեր այդ հարցին, պարոն,— ասացի ես,— որովհետև մինչև այժմ ոչ ոք և երբեք չի համարձակվել խփել ինձ»:

«Դե ուրեմն, լսեցեք ինձ, պարոն արբատ. եթե դուք նորից մտնեք այս տունը, որտեղ ես այսօր հանդիպեցի ձեզ, ես կհամարձակվեմ անել այդ»:

Կարծում եմ՝ ես վախեցա: Խիստ գունատվեցի, ոտքերս ծավվում էին, պատասխան էի որոնում, բայց չգտա և լուռ մնացի:

Սպան պատասխանի էր սպասում, և տեսնելով, որ ես լռում եմ, քրքջաց, շուտ եկավ և նորից մտավ այն տունը: Ես վերադարձա սեմինարիա:

Ես իսկական ազնվական եմ և, ինչպես դուք նկատած կլինեք, սիրելի դ'Արտանյան, տաքարյուն եմ: Վիրավորանքը սուկալի ծանր էր և չնայած ոչ ոք դրա մասին չգիտեր, ես զգում էի, որ այն ապրում է իմ սրտի խորքում և այրում է ինձ: Սուրբ հայրերին ասացի, թե հոգևոր աստիճան ստանալու համար ինձ լրիվ պատրաստ չեմ համարում, և իմ խնդրանքով ձեռնադրությունը մեկ տարով հետաձգվեց:

Գնացի Փարիզ, սուսերամարտի ամենալավ ուսուցչի մոտ, պայմանավորվեցի ամեն օր դասեր առնել նրանից և ամբողջ տարին դասեր էի առնում: Մի տարի անց, ուղիղ այն օրը, երբ ինձ հասցվել էր այդ վիրավորանքը, ես մեխին կախեցի իմ կապան, հազնվեցի ինչպես վայել է ազնվականին և գնացի ինձ ծանոթ մի տիկնոջ

պարահանդեսին, որտեղ պետք է լիներ նաև իմ հակառակորդը: Դա Ֆրանսուրժուա փողոցում էր. Ֆորս բանտից ոչ հեռու:

Սպան, իրոք, այնտեղ էր: Ես նրան մոտեցա այն պահին, երբ նա քնքշանքով նայելով մի կնոջ սիրային երգ էր երգում նրա համար: Երգի երկրորդ տան կեսին ընդհատեցի նրան:

«Պարո՛ն,— ասացի ես,— դուք դեռ էլի՞ դեմ կլինեք, եթե ես գնամ Պայեն փողոցի ձեզ հայտնի տունը: Դուք դեռ մտադիր եք մահակի հարվածներո՞վ հյուրասիրել ինձ, եթե իմ մտքովն անցնի չլսել ձեր պահանջը»:

Սպան զարմացած նայեց ինձ, ապա ասաց.

«Ի՞նչ եք ուզում ինձնից, պարոն, ես ձեզ չեմ ճանաչում»:

«Ես այն երիտասարդ արքատն եմ,— պատասխանեցի ես, որը Վարք սրբոց էր կարդում և թարգմանում «Հուդիթը» հանգով»:

«Ա՛յ, հա՛: Հիշում եմ,— հեզնաբար ժպտալով ասաց սպան:— Բայց ի՞նչ եք ցանկանում դուք»:

«Ես ցանկանում եմ, որ դուք բարեհաճեք դուրս գալ ինձ հետ մի փոքրիկ զբոսանքի»:

«Վաղը առավոտյան, եթե դուք անպայման ցանկանում եք այդ, և այն էլ մեծ բավականությամբ»:

«Ո՛չ, ոչ թե վաղը առավոտյան, այլ հենց հիմա»:

«Եթե դուք անպայման պահանջում եք...»:

«Այո, պահանջում եմ»:

«Այդ դեպքում գնանք: Տիկիննե՛ր,— դարձավ նա կանանց,— չանհանգստանաք, ես իսկույն կսպանեմ այս պարոնին, կվերադառնամ և կավարտեմ ձեզ համար երգի

վերջին տունը»: Մենք դուրս գնացինք: Ես նրան տարա Պայեն փողոցը, ճիշտ այնտեղ, որտեղ ուղիղ մի տարի առաջ այդ նույն ժամին նա ինձ արել էր այն հաճոյախոսությունը, որի մասին ես պատմեցի ձեզ: Սքանչելի լուսնյակ գիշեր էր: Մենք սուսերներս մերկացրինք և առաջին իսկ հարձակումին ես նրան տեղն ու տեղը սպանեցի...

— Գրողը տանի,— ասաց դ'Արտանյանը:

— Որովհետև տիկիները չտեսան իրենց երգչի վերադարձը,— շարունակեց Արամիսը,— և որովհետև նրան գտան Պայեն փողոցում սուսերի հարվածով սպանված, բոլորը հասկացան, որ այդ իմ ձեռքի գործն է, և դեպքը մեծ աղմուկ բարձրացրեց: Դրա հետևանքով ես ստիպված էի միառժամանակ հրաժարվել կապայից: Աթոսը, որի հետ ես ծանոթացա այդ ժամանակ, և Պորտոսը, որն ինձ, ի լրումն սուսերամարտի դասերի, էլի մի շարք հիանալի ձևեր սովորեցրեց, ինձ համոզեցին հրացանակրի թիկնոց խնդրել: Թագավորը շատ էր սիրում իմ հորը, որը սպանվել էր Արրասի[100] պաշարման ժամանակ, և ինձ շնորհեց այդ թիկնոցը: Դուք արդեն հասկանում եք, որ այժմ ինձ համար հասել է եկեղեցու գիրկը վերադառնալու ժամանակը:

— Իսկ ինչո՞ւ հենց հիմա, ոչ մի քիչ առաջ կամ հետո: Ի՞նչ է պատահել ձեզ, և ի՞նչն է ձեզ այդպիսի չար մտքեր ներշնչում:

— Այս վերքը, սիրելի դ'Արտանյան, ի վերուստ նախազգուշացում է ինձ համար:

— Այդ վե՞րքը: Դատարկ բան: Վերքն արդեն ապաքինվել է, և ես համոզված եմ, որ այժմ դուք ավելի շատ ցավ եք զգում ո՛չ այդ վերքից:

— Հապա ո՞ր վերքից,— շառագունելով հարցրեց Արամիսը:

— Դուք սրտի վերք ունեք, Արամիս, ավելի տանջալից, ավելի արյունոտ վերք, որ հասցրել է ձեզ մի կին:

— Դե լա՛վ,— ասաց նա իր շփոթությունը թաքցնելով անփութության քողով,— արժե՞ խոսել այդպիսի բաների մասին: Սիրային վիշտը տանջի ի՞նձ: Vanitas vanitatum[101]: Ի՞նչ է, ձեր կարծիքով գժվե՞լ եմ ես, այն էլ ո՞ւմ համար: Մի ինչոր

թեթևամիտ աղջկա կամ սպասուհու համար, որի հետևից ես քարշ էի գալիս, երբ կայագորում էի... Գարշա՛նք:

— Ներեցեք, սիրելի Արամիս, բայց ինձ թվում է, որ դուք ավելի բարձր էիք նշան բռնում:

— Բա՛րձր: Իսկ ո՞վ եմ ես, որ այդպիսի փառասիրություն ունենամ: Մի խեղճ հրացանակիր, աղքատ ու աննկատ մի մարդ, որը ատում է կախում ունենալը և աշխարհում իրեն իր տեղում չի գգում:

— Արամի՛ս, Արամի՛ս,— գոչեց դ՛Արտանյանը թերահավատությամբ նայելով ընկերոջը:

— Հող էի և հող կդառնամ: Կյանքը լի է վշտով ու դառնությամբ,— շարունակեց Արամիսը մոայլվելով:— Երջանկության հետ նրան կապող բոլոր թելերը կտրվում են մարդու ձեռքում, և ամենից առաջ ոսկե թելերը: Օ՛, սիրելի դ՛Արտանյան,— ասաց Արամիսը թեթև դառնությամբ,— լսեցեք ինձ, թաքցրեք ձեր վերքերը, երբ վերք կունենաք դուք: Լռությունը թշվառների վերջին ուրախությունն է: Ոչ ոքի մի՛ ասեք ձեր վիշտը: Հետաքրքրասերները խմում են մեր արցունքները, ինչպես ճանճերն են խմում վիրավոր եղնիկի արյունը:

— Ավա՛ղ, սիրելի Արամիս,— ասաց դ՛Արտանյանը իր հերթին խոր հառաչանք արձակելով,— ախր դուք իմ սեփական պատմությունն եք անում ինձ:

— Ինչպե՛ս:

— Այո՛: Հենց նոր ինձնից հափշտակեցին մի կնոջ, որին ես սիրում էի, որին ես պաշտում էի: Չգիտեմ՝ որտեղ է նա, ուր են տարել, գուցե բանտումն է, գուցե՝ սպանված:

— Բայց դուք գոնե մի մխիթարություն ունեք, որ նա ձեզնից հեռացել է իր կամքին հակառակ, դուք գիտեք, որ եթե նրանից տեղեկություն չկա, ապա դա այն պատճառով, որ նրան արգելված է ձեզ հետ կապվել, մինչդեռ ես...

— Մինչդեռ ի՞նչ:

— Ոչինչ, ոչինչ,— ասաց Արամիսը:

— Ուրեմն դուք ընդմիջոտ հրաժարվում եք աշխարհից, այդ վերջնականապես ու հաստատ է վճռված:

— Ընդմիջոտ: Այսօր դեռ դուք իմ բարեկամն եք, վաղը դուք ինձ համար կլինեք միայն ուրվական կամ բոլորովին կդադարեք գոյություն ունենալ ինձ համար: Իսկ աշխարհը ինձ համար դամբարան է, ուրիշ ոչինչ:

— Գրողը տանի, ի՞նչ թախծալի բաներ եք ասում:

— Ի՞նչ արած: Իմ կոչումն է մղում ինձ, նա ինձ վեր է բարձրացնում:

Դ՛Արտանյանը ժպտաց և ոչինչ չպատասխանեց:

— Եվ այսուամենայնիվ,— շարունակեց Արամիսը,— քանի դեռ ես երկրի վրա եմ, կուզենայի խոսել ձեզ հետ ձեր մասին, մեր բարեկամների մասին:

— Իսկ ես,— պատասխանեց դ՛Արտանյանը,— կուզենայի խոսել ձեզ հետ հենց ձեր մասին, բայց դուք արդեն այնքա՛ն հեռու եք ամեն ինչից: Սերը արհամարհանք է հարուցում ձեր մեջ, ընկերները ձեզ համար ուրվական են, աշխարհը դամբարան:

— Ավա՛դ: Դրանում դուք ինքներդ էլ կհամոզվեք,— ասաց Արամիսը հառաչելով:

— Դե ուրեմն թողնենք այս խոսակցությունը և եկեք այրենք այն նամակը, որ ամենայն հավանականությամբ ձեզ հաղորդում է ձեր ասած թեթևտոլիկի կամ սպաստուհու մի նոր դավաճանության մասին:

— Ի՞նչ նամակ,— աշխույժ գոչեց Արամիսը:

— Մի նամակ, որ ձեր անունով եկել է, երբ դուք բացակա էիք և որը տվել են ինձ՝ ձեզ հանձնելու:

— Իսկ ումի՞ց է այն:

— Չգիտեմ: Երևի մի ինչոր լավկան սպասուհուց կամ անմխիթար թեթևամիտ կնոջից, գուցե և տիկին դը Շերյոզի սպասուհուց, որը ստիպված է եղել իր տիրուհու հետ գնալ Տուր և իր նամակին ավելի մեծ կարևորություն տալու համար օժանելիքով բուրավետած թուղթ է վերցրել և այն կնքել է դքսուհու թագակիր կնիքով:

— Այդ ի՞նչ էք ասում:

— Այս ի՞նչ բան է, կարծես թե կորցրել եմ այդ նամակը,— խորամանկորեն ասաց դ'Արտանյանը, ձևացնելով թե փնտրում է այն:— Դեռ լավ է, որ այս աշխարհը դամբարան է, որ մարդիկ, ուրեմն և կանայք, ուրվականներ են, և սերը՝ մի զգացմունք, որի մասին դուք ասում եք գարշանք:

— Ա՛խ, դ'Արտանյան, դ'Արտանյան,— գոչեց Արամիսը,— դու սպանում ես ինձ:

— Ահա, վերջապես գտա,— ասաց դ'Արտանյանը:

Եվ նա գրպանից հանեց նամակը:

Արամիսը վեր թռավ, նրա ձեռքից խլեց նամակը, կարդաց, ավելի ճիշտ կլանեց այն, և նրա դեմքը շողաց:

— Երևում է այդ սպասուհին հիանալի լեզու ունի,— ասաց դ'Արտանյանը:

— Շնորհակալ եմ, դ'Արտանյան,— գոչեց Արամիսը հափշտակությամբ:— Նա ստիպված է եղել վերադառնալ Տուր: Նա ինձ չի դավաճանել, նա առաջվա պես սիրում է ինձ: Մոտ արի, բարեկամս, մոտ արի, թող որ գրկեմ քեզ, ես շնչասպառ եմ լինում երջանկությունից:

Եվ երկու բարեկամներ մի կատաղի պար սկսեցին Հովհան Ոսկեբերանի շուրջը, տրորելով դիսերտացիայի թերթերը, որոնք թափվել էին հատակին:

Այդ բուպեին ներս մտավ Բազենը, որը ձվածեղ և սպանախ էր բերում:

— Վազի՛ր, թշվառակա՛ն,— գոռաց Արամիսը՝ նրա երեսին շարտելով իր կնգուղիկը,— գնա այնտեղ, որտեղից եկել ես, տար այդ գարշելի բանջարեղենն ու ձվածեղը: Պահանջիր կարմրացրած նապաստակ, գիրացրած աքլոր, սխտորով տապակած ոչխարի միս և չորս շիշ բուրգունդական:

Բազենը, որ նայում էր տիրոջը և չէր հասկանում, թե ինչ փոփոխություն է կատարվել, տխուրորտում՝ ձվածեղը թափեց սպանախի մեջ, իսկ սպանախը՝ հատակին:

— Ահա մի հարմար պահ՝ ձեր կյանքը արքայիցարքային նվիրաբերելու համար,— ասաց դ'Արտանյանը,— եթե ցանկանում եք հաճելի բան անել նրա համար. «Non unutile desiderium in oblatione»:

— Գրողի ծո՛ցը գնացեք դուք ձեր լատիներենով: Եկեք խմե՛նք, սիրելի դ'Արտանյան, եկեք խմե՛նք, գրողը տանի, եկեք խմե՛նք ու խմե՛նք և պատմեցեք ինձ ամեն բան, ինչ կատարվում է այնտեղ:

XXVII. Աթոսի կինը

— Այժմ մնում է միայն իմանալ, թե ինչ է պատահել Աթոսին,— ասաց դ'Արտանյանը զվարթացած Արամիսին, երբ արդեն նրան պատմել էր այն բուռն նորությունները, որ տեղի էին ունեցել մայրաքաղաքում իրենց մեկնելուց հետո, և երբ սքանչելի ճաշը նրանցից մեկին ստիպել էր մոռանալ իր դիսերտացիան, իսկ մյուսին՝ հոգնածությունը:

— Մի՞ թե դուք կարծում եք, որ նրան կարող էր դժբախտություն պատահել,— հարցրեց Արամիսը,— Աթոսն այնքան պաղարյուն է, այնքա՛ն քաջ և այնպե՛ս լավ է տիրապետում սուսերին:

— Այո, անտարակույս, և ես, ավելի քան որևէ մեկ ուրիշը, գնահատում եմ Աթոսի քաջությունն ու ճարակությունը, բայց իմ կարծիքով ավելի լավ է մարդ իր սուսերը խաչաձևի նիզակի հետ, քան մահակի, և ես վախենում եմ, որ խաժամուժը կարող է ծեծած լինել Աթոսին, դրանք այնպիսի մարդիկ են, որ շատ թունդ են կովում և կռիվը շուտ չեն դադարեցնում: Ահա թե ինչու, խոստովանում եմ, ես կուզենայի որքան կարելի է շուտ ճանապարհ ընկնել:

— Ես կփորձեմ գալ ձեզ հետ,— ասաց Արամիսը,— թեև զգում եմ, որ հազիվ թե կարողանամ ձի նստել: Երեկ փորձեցի գործի դնել այն մտրակը, պատից կախված, բայց ցավն արգելեց ինձ շարունակել այդ բարեպաշտական վարժությունը:

— Այդ նրանից է, սիրելի բարեկամս, որ դեռ ոչ ոք չի փորձել հրազենի պատճառած վերքը բուժել մտրակով, բայց դուք հիվանդ եք եղել, իսկ հիվանդությունը թուլացնում է մտավոր ունակությունները, ուստիև ես ներում եմ ձեզ:

— Այդ դեպքում մնաք բարով մինչև վաղը,— ասաց Արամիսը:— Թեպետ և դուք երկաթե կազմվածք ունեք, բայց չե՞ որ դուք էլ քնի կարիք եք զգում:

Առավոտյան, երբ դ'Արտանյանը գնաց Արամիսի մոտ, վերջինս կանգնած էր իր սենյակի լուսամուտի առաջ:

— Այդ ի՞նչ եք դիտում,— հարցրեց դ'Արտանյանը:

— Նայում եմ այն երեք չքնաղ ձիերին, որ բռնել է ձիապանը, նայում եմ ու հիանում: Էհ, միայն թագածառանգը կարող է այդպիսի ձիերով ճամփորդելու բավականությանն արժանանալ:

— Եթե այդպես է, սիրելի Արամիս, ապա դուք կստանաք այդ բավականությունը, որովհետև այդ ձիերից մեկը ձերն է:

— Չի՛ կարող պատահել: Ո՞րն է իմը:

— Որը ձեզ ավելի շատ դուր կգա, ես որն էլ լինի կվերցնեմ:

— Եվ վրայի այն շքեղ թա՞մբն էլ իմն է:

— Այո:

— Դուք ծիծաղում եք ինձ վրա, դ'Արտանյան:

— Այն պահից, երբ դուք սկսեցիք խոսել ֆրանսերեն, ես այլևս չեմ ծիծաղում:

— Այդ ոսկեկար թավշյա արդուզարդը, այդ արծաթազարդ թամբը, այդ ամենն ի՞մն է:

— Ձերն է, իսկ ահա, այն ձին, որ սմբակը գետնին է խփում, իմն է, իսկ այն մյուսը՝ Աթոսինը:

— Տե՛ր իմ աստված, երեքն էլ ուղղակի սքանչելի են:

— Ես շատ գոհ եմ, որ նրանք ձեզ դուր են գալիս:

— Երևի թագավորն է ընծայել ձեզ:

— Համենայնդեպս ո՛չ կարդինալը: Ի դեպ, մի՛ մտածեք, թե որտեղից լույս ընկան այդ ձիերը, հիշեցեք միայն, որ նրանցից մեկը ձերն է:

— Ես վերցնում եմ այն, որ բռնել է այն շեկ ծառան:

— Հիանալի է:

— Աստված վկա,— գոչեց Արամիսը,— ուրախությունից ասես ցավս անցավ: Այդպիսի ձի ես կնստեի, եթե նույնիսկ երեսուն գնդակ լիներ մարմնումս: Օ՛, ինչ սքանչելի ասպանդակներ են: Է՛յ, Բազեն, եկ այստեղ, արա՛գ:

Բազենը երևաց շեմքում՝ վհատ ու քնաթաթախ:

— Փայլեցրեք իմ սուսերը, կարգի բերեք գլխարկս, մաքրեցեք թիկնոցս և լցրեք ատրճանակներս,— ասաց Արամիսը:

— Վերջին հրամանն ավելորդ է,— ընդհատեց նրան դ'Արտանյանը,— ձեր ձիու թամբին կախված պատյաններում լցված ատրճանակներ կան:

Բազենը հառաչեց:

— Դե լավ, քեռի Բազեն, հանգստացեք,— ասաց դ'Արտանյանը,— երկնային արքայությանը մարդ կարող է արժանանալ բոլոր պայմաններում:

— Ախր իմ տերն արդեն այնպիսի լավ աստվածաբան էր,— լալագին ասաց Բազենը:— Նա կարող էր եպիսկոպոս դառնալ, գուցե կարդինալ:

— Լսիր ինձ, իմ սիրելի Բազեն, մի լավ մտածիր և ինքդ ասա. ի՛նչ օգուտ հոգևորական դառնալուց: Ախր այդ էլ չի ազատում պատերազմելու անհրաժեշտությունից: Ա՛յ, ինքդ կտեսնես, որ առաջին իսկ արշավանքին կարդինալը կմասնակցի սաղավարտը գլխին և գեղարդը ձեռքին, իսկ պարոն Նոգարե դը Լավալե՞ տը: Նա էլ կարդինալ է, քայց դու հարցրու նրա սպասավորին, քանի՛ անգամ է ծվատվել նա:

— Այո՛,— հոգոց հանեց Բազենը:— Ես գիտեմ, տեր իմ, որ աշխարհում ամեն ինչ շուռ է եկել:

— Բռնիր ասպանդակս, Բազեն,— ասաց Արամիսը:

Եվ նա թամբի վրա ցատկեց իրեն հատուկ ճարպկությամբ ու գեղեցկությամբ: Սակայն ազնվարյուն ձիու մի քանի պտույտներից ու ոստյուններից հետո հեծյալն այնպիսի անասելի ցավ զգաց, որ իսկույն սփրթնեց ու երերաց: Դ՛Արտանյանը, որն այդ նախատեսելով այք չէր հեռացնում նրանից, առաջ նետվեց, բռնեց նրան, ցած բերեց ձիուց և տարավ իր սենյակը:

— Գիտե՞ք ինչ, սիրելի Արամիս,— ասաց նա,— մնացեք այստեղ, բուժվեցեք, ես կգնամ Աթոսին որոնելու:

— Դուք ուղղակի բրոնզից եք ձուլված,— պատասխանեց Արամիսը:

— Չէ, պարզապես իմ բախտը բերում է, ուրիշ ոչինչ: Բայց ասացեք ինձ, դուք ինչպե՞ս եք ապրելու այստեղ առանց ինձ: Ոչ մի դատողություն մատների ու օրհնությունների մասին, հա՞:

Արամիսը ժպտաց:

— Ես ոտանավորներ կգրեմ,— ասաց նա:

— Այո, այո, ոտանավորներ, տոգորված այնպիսի ոգով, ինչպես տիկին ղը Շերյոզի սպասուհու նամակը՝ Բազենին էլ սովորեցրեք ոտանավոր գրելու կանոնները, այդ կմխիթարի նրան: Ինչ վերաբերում է ձիուն, օրական մի փոքր տարածություն կքշեք, այդ ձեզ նորից կվարժեցնի թամբին:

— Օ՛, դրա մասին մի անհանգստացեք,— ասաց Արամիսը,— երբ վերադառնաք, ես արդեն պատրաստ կլինեմ ուղեկցելու ձեզ:

Նրանք հրաժեշտ տվին իրար, և տասը բոպե անց՝ դ'Արտանյանն արդեն արշավում էր Ամիեն տանող ճանապարհով, նախապես Արամիսին հանձնելով Բազենի և հյուրանոցի տիրուհու խնամքին:

Ի՞նչ վիճակում կգտնի նա Աթոսին և ընդհանրապես կգտնի՞ արդյոք նրան:

Դ'Արտանյանը Աթոսին թողել էր կրիտիկական դրության մեջ, և շատ հնարավոր էր, որ նա զոհված լիներ: Այս միտքը տխրեցնում էր դ'Արտանյանին: Նա մի քանի անգամ հառաչեց և երդվեց վրեժ լուծել:

Դ'Արտանյանի ընկերների մեջ Աթոսն ամենաավագն էր, ուստիև իր ճաշակով ու հակումներով ամենից ավելի քիչ պիտի մոտիկ լիներ նրան:

Չնայած դրան, դ'Արտանյանը ակնհայտ գերադասություն էր տալիս նրան մյուսների համեմատությամբ: Աթոսի ազնիվ ու գեղեցիկ արտաքինը, հոգու վեհության բռնկումները, որոնք երբեմն լուսավորում էին այն ստվերը, որի մեջ նա սովորաբար մնում էր, հոգու մշտական հավասարակշռությունը, որը նրա ընկերությունն ամենահաճելին էր դարձնում աշխարհում, նրա խայթող ուրախությունը, նրա քաջությունը, որը կարելի էր կոչել կույր քաջություն, եթե այն հազվագյուտ պաղարյունության հետևանք չլիներ,— այս բոլոր հատկությունները դ'Արտանյանի մեջ առաջացնում էին ավելի մեծ զգացմունք, քան հարգանքն է, ավելի, քան ընկերական համակրանքն է. դրանք նրա մեջ առաջացնում էին հիացմունքի զգացում:

Եվ իրոք, նույնիսկ բարեկազմ ազնվական ղը Տրևիլի կողքին Աթոսը, երբ լավ տրամադրության մեջ էր լինում, հաջողությամբ կարող էր դիմանալ այդ համեմատությանը: Նա միջահասակ էր, բայց այնպիսի ամուր կազմվածքով, որ

հաճախ կոխի բռնվելով Պորտուսի հետ, հաղթում էր այդ հսկային, որի ուժը հրացանակիրների մեջ արդեն առած էր դարձել: Նրա դեմքը՝ խորաթափանց հայացքով, ուղղաձիգ քթով, Բրուտոսի[102] ծնոտի նման ծնոտով՝ տիրակալ ու սիրալիր մարդու կնիք էր կրում, իսկ ձեռքերը, որոնց վրա նա ինքը ոչ մի ուշադրություն չէր դարձնում, հուսահատության էին հասցնում Արամիսին, որը շարունակ խնամում էր իր ձեռքերը մեծ քանակությամբ նշի օճառի և անուշաբույր օճանելիքի օգնությամբ: Նրա ձայնը խորահնչուն էր և միաժամանակ մեղեդային: Բայց Աթոսի մեջ, որը միշտ աշխատում էր աննկատ մնալ ու աննշան, միանգամայն անհասկանալի էր թվում աշխարհի ճանաչողությունը և ամենափայլուն հասարակության սովորություններն իմանալը, լավ դաստիարակության այն հետքերը, որոնք ակամայից երևում էին նրա թեկուզ ամենաանկարևոր արարքների մեջ:

Թե որ խոսք լիներ ճաշկերույթի մասին, Աթոսը ամենաբարձրաստիճան մարդուց էլ լավ ճաշկերույթ էր սարքում, հյուրերից յուրաքանչյուրին նստեցնելով իր արժանի տեղը, համաձայն այն դիրքի, որ ստեղծել էին նրա համար իր նախնիները կամ հենց ինքն իր համար: Թե որ խոսք լիներ հերալդիկայի մասին, Աթոսը գիտեր թագավորության բոլոր ազնվական տոհմերը, նրանց ծննդաբանությունը, ընտանեկան կապերը, նրանց զինանիշները և դրանց ծագումը: Վարվելակարգի մեջ չկար մի մանրուք, որ անծանոթ լիներ Աթոսին: Նա գիտեր, թե ինչ իրավունքներ են վայելում խոշոր հողատերերը, շատ լավ գիտեր շներով ու բազեներով որս անել և մի անգամ այդ մեծ արվեստի մասին խոսելիս զարմացրեց նույնիսկ Լյուդովիկոս XIII թագավորին, որը հմուտ որսորդի համբավ ուներ:

Ինչպես այն ժամանակվա բոլոր անվանի ազնվականները՝ նա հիանալի սուսերամարտիկ էր և ձիավար: Դեռ ավելին. նույնիսկ սխալաստիկ գիտություններում, որ այն ժամանակներում այնքան քիչ էին ուսումնասիրում ազնվականները, նրա կրթությունը այնքան բազմակողմանի էր, որ նա միայն ժպտում էր, երբ լսում էր լատինական արտահայտությունները, որն այնքան շռայլում էր Արամիսը և որոնք, որպես թե, հասկանում էր Պորտոսը: Երկու թե երեք անգամ, երբ Արամիսը որևէ քերականական սխալ էր արել, նա, ի մեծ զարմանս իր ընկերների, ուղղել էր Արամիսին, բայց դնելով հարկավոր ժամանակով, իսկ ենթական հարկավոր հոլովով: Վերջապես նրա ազնվությունն անբասիր էր, և այդ այն դարում, երբ զինվորական մարդիկ այնքան հեշտությամբ գործարք էին կնքում հավատի և խղճի հետ, սիրահարները՝ մեր ժամանակին հատուկ դաժան նրբանկատության հետ, իսկ

չքավորները աստծու յոթերորդ պատվիրանի հետ: Մի խոսքով Աթոսը խիստ արտասովոր մարդ էր:

Եվ, չնայած դրան, կարելի էր նկատել, որ այդ նրբակիրթ բնավորությունը, այդ սքանչելի էակը, այդ բացառիկ միտքը իր համար էլ աննկատելի ընկնում է առօրյայի ազդեցության տակ, ինչպես ծերունիներն են աննկատելիորեն սկսում ֆիզիկապես ու մտքով: Աթոսի տխուր ժամերին,— իսկ այդպիսի ժամեր քիչ չէին լինում,— ամեն պայծառ բան, որ կար նրա մեջ, մարում էր, և նրա փայլուն գծերը թաքնվում էին ասես թանձր խավարի մեջ թաղվելով:

Կիսասովածը չքանում էր, հազիվ մնում էր մարդը: Գլուխը կախելով, դժվարությամբ արտասանելով առանձին բառեր, Աթոսը մարած հայացքով ժամեր շարունակ նայում էր մերթ շարժվող ու բաժակին, մերթ Գրիմոյին, որը սովոր էր ենթարկվելու նրա ամեն մի նշանին և իր տիրոջ անկենդան հայացքում կարդալով նրա ամենափոքր ցանկությունն անգամ, անմիջապես կատարում էր այն: Եթե չորս ընկերները հավաքվում էին այդպիսի բոպեներին, ապա ընդհանուր գրույցի մեջ Աթոսի բաժինը լինում էր մեծագույն ջանքերով արտասանած երկուերեք խոսքը: Դրա փոխարեն նա խմում էր չորսի չափ և այդ ամեննին չէր ազդում նրա վրա, միայն հոնքերն էր կիտում և սովորականից ավելի մռայլ էր դառնում:

Դ'Արտանյանին, որի խորաթափանց միտքը քաջ հայտնի է մեզ, չնայած բուռն ցանկության, առայժմ չէր հաջողվել բավարարել իր հետաքրքրությունը, գտնել այդ խոր հուսալքության պատճառը կամ նկատել նրան գուգորդող հանգամանքները: Աթոսը երբեք նամակ չէր ստանում, Աթոսը երբեք այնպիսի քայլեր չէր անում, որ հայտնի չլինեին նրա բոլոր ընկերներին:

Չէր կարելի ասել, թե այդ թախիծը նրա մեջ արթնացնում էր գինին, որովհետև, ընդհակառակն, նա խմում էր իր թախիծը հաղթահարելու համար, թեև, ինչպես արդեն ասացինք, այդ դեղը ավելի էր խորացնում այն: Թախիծի այդ նուրբ չէր կարելի վերադրել նաև խաղին, որովհետև, ի տարբերություն Պորտուսի, որը երգով կամ հայհոյանքով էր ճամփու դնում բախտի բոլոր անախորժությունները, Աթոսը տանելու դեպքում էլ նույնքան անտարբեր էր մնում, որքան տանուլ տալու դեպքում: Մի անգամ հրացանակիրների շրջանում նստած՝ նա մի երեկոյի ընթացքում տարավ հազար պիստոլ, այդ բոլորը տանուլ տվեց իր ոսկեկար տոնական ուսափոկի հետ միասին, նորից տարավ այդ ամենը և դեռ հարյուր լուփոր էլ ավելի, բայց նրա

գեղեցիկ թուխ հոնքերը ոչ մի անգամ չցնցվեցին, ձեռքերը չկորցրին իրենց սադափե փայլը, գրույցը, այդ դուրեկան երեկոն չդադարեց լինել հանգիստ ու դուրեկան:

Նրա դեմքին իջնող ստվերը չէր բացատրվում նաև մթնոլորտային տեղումների ազդեցությամբ, ինչպես այդ լինում է մեր հարևան անգլիացիների հետ, որովհետև նրա թախիծը սովորաբար ավելի ուժեղանում էր տարվա լավ եղանակին, հունիսը և հուլիսը Աթոսի համար ամենաձանր ամիսներն էին:

Այժմ նա դառնություններ չուներ և ուսերն էր թոթվում, երբ նրա հետ խոսում էին ապագայի մասին: Հետևապես նրա թախծի պատճառը թաքնված էր անցյալում, ինչպես ադոտ կերպով ակնարկել էին դ'Արտանյանին:

Խորհրդավորության ստվերը, որ պարուրում էր Աթոսին, ավելի ևս հետաքրքրական էր դարձնում այդ մարդուն, որին նույնիսկ կատարյալ հարբած պահին ամեննին չէին մատնում ո՛չ աչքերը, ո՛չ լեզուն, չնայած նրան տրվող հարցերի ամբողջ նրբությանը:

— Ավա՛ դ,— մտածում էր դ'Արտանյանը,— գուցե թե հիմա խեղճ Աթոսը մեռած է, և դրա մեղավորը ես եմ: Չէ՞ որ նա իմ պատճառով մտավ այս պատմության մեջ, չիմանալով նրա ո՛չ սկիզբը, ո՛չ վախճանը, և գեթ ամենափոքր շահ չակնկալելով նրանից:

— Էլ չեմ ասում այն, տեր իմ,— ավելացրեց Պլանշեն,— որ, ինչպես երևում է, մենք նրան ենք պարտական մեր կյանքը: Հիշում եք, ինչպես գոչեց նա, «Առա՛ջ, դ'Արտանյան, ինձ բռնեցին»: Եվ ապա, երկու ատրճանակները պարպելուց հետո ի՛նչ սոսկալի էր շրիկացնում նա իր սուսերը: Ասես քսան մարդ լինեին, կամ ավելի լավ է ասել քսան կատաղած սատանաներ:

Այս խոսքերը կրկնապատկեցին դ'Արտանյանի զգացմունքները, և նա խթանեց իր ձիուն, որն առանց այն էլ քառատրոփ էր տանում իր հեծյալին:

Առավոտվա ժամը տասնմեկին մոտ ուղևորները տեսան Ամիենը, իսկ տասնմեկն անց կեսին նրանք արդեն նգովյալ պանդոկի դռանն էին:

Դ՛Արտանյանը շատ էր մտածել ուխտադրուժ պանդոկապետի համար գտնել մի որևէ պատշաճ վրեժխնդրություն, այնպիսի վրեժխնդրություն, որը պատկերացնելն անգամ կհանգստացներ մեզ: Եվ ահա, նա պանդոկ մտավ գլխարկը ճակատին թեքած, ձեռքը սուսերի դաստակին, թափահարելով աջ ձեռքում բռնած մտրակը:

— Ճանաչո՞ւմ եք ինձ,— հարցրեց պանդոկապետին, որը գլուխ տալով ընդառաջ եկավ նրան:

— Պատիվ չունեմ ճանաչելու, ձերդ պայծառափայլություն,— պատասխանեց նա՝ դ՛Արտանյանի շողշողուն զգեստից շշմած:

— Ա՛խ, դուք ինձ չե՞ք ճանաչում:

— Ոչ, ձերդ պայծառափայլություն:

— Դե ուրեմն ես կհիշեցնեմ ձեզ երկու խոսքով: Ի՞նչ արիք դուք այն ազնվականին, որին մոտ երկու շաբաթ սրանից առաջ համարձակվեցիք մեղադրել կեղծ դրամ սաղացնելու մեջ:

Պանդոկապետը գունատվեց, որովհետև դ՛Արտանյանն ամենասպառնազին դիրքն էր ընդունել, իսկ Պլանշեն ընդօրինակում էր նրան ամենայն ճշտությամբ:

— Ա՛խ, ձերդ պայծառափայլություն, մի հարցրեք ինձ դրա մասին,— ողբաձայն գոչեց պանդոկապետը:— Օ՛, տե՛ր աստված, որքան թանկ վճարեցի ես այդ սխալի համար: Ա՛խ, ի՛նչ անբախտն եմ ես:

— Ես ձեզ հարցնում եմ, ի՞նչ եղավ այն ազնվականը:

— Շնորհ արեք լսել ինձ, ձերդ պայծառափայլություն, ողորմած եղեք: Եվ նստեցեք խնդրում եմ, շնորհ արեք:

Ցասումից ու անհանգստությունից պապանձված՝ դ՛Արտանյանը նստեց ինչպես ահեղ դատավոր: Պլանշեն հպարտ կանգնեց նրա բազկաթոռի հետևում:

— Այ թե ինչպես եղավ, ձերդ պայծառափայլություն,— շարունակեց պանդոկապետը երկյուղից դողալով,— հիմա ես ձեզ ճանաչեցի: Ախր դուք էիք, որ գնացիք, երբ սկսվեց վեճը այն ազնվականի հետ, որի մասին հարցնում եք:

— Այո՛, ես էի: Այժմ դուք լավ եք տեսնում, որ չեք կարող գիտություն սպասել, եթե ամբողջ ճշմարտությունը չասեք:

— Դե ուրեմն շնորհ արեք լսել ինձ, և ես կպատմեմ ձեզ ամեն ինչ, առանց թաքցնելու:

— Ես լսում եմ:

— Վերևից ինձ տեղեկացրել էին, որ իմ պանդոկում իջևանելու է մի նշանավոր դրամանենգ իր մի քանի ընկերների հետ, և դրանք բոլորն էլ գվարդիականի կամ հրացանակրի հագուստով են լինելու: Ձեր ձեռքը, ծառաները, ձեր պայծառափայլությունների արտաքինը— ամեն ինչ ճշգրիտ նկարագրված էր ինձ:

— Հետո՞, հետո՞,— ասաց դ'Արտանյանը՝ իսկույն հասկանալով, թե որտեղից են գալիս այդ ճշգրիտ նկարագրությունները:

— Այդ պատճառով էլ, հնազանդվելով մեծավորների հրամանին, որոնք վեց զինվոր էին ուղարկել ինձ օգնության, ես ձեռք առա հարկ եղած բոլոր միջոցները կարծեցյալ դրամանենգներին բռնելու համար:

— Դարձյա՛լ,— ասաց դ'Արտանյանը, որի ականջը անտանելի ծակում էր «դրամանենգ» բառը:

— Ներողություն եմ խնդրում, ձերդ պայծառափայլություն, որ այսպիսի բաներ եմ ասում, բայց իմ արդարացումն էլ հենց դրանց մեջ է: Մեծավորները վախեցրել էին ինձ, իսկ դուք հո գիտեք, որ պանդոկի տերը պետք է հաշտ ապրի մեծավորների հետ:

— Նորից հարցնում եմ ձեզ, որտե՞ղ է այն ազնվականը: Ի՞նչ պատահեց նրան: Մեռա՞ծ է, թե ողջ:

— Համբերություն, ձերդ պայծառափայլություն, հիմա մենք դրան էլ կհասնենք, ուրեմն կատարվեց այն, ինչ հայտնի է ձեզ... և ինձ կարծես արդարացնում էր ձեր շտապ մեկնումը,— ավելացրեց պանդոկապետը խորամանկ արտահայտությամբ, որը չվրիպեց դ'Արտանյանի աչքից:— Ձեր այն ազնվական ընկերը պաշտպանվում էր կատաղի: Նրա ծառան, որը դժբախտաբար անակնկալ վեճ էր սկսել ձիապանի հագուստ հագած զինվորների հետ...

— Ա՛խ դու, սրիկա՛,— գոռաց դ'Արտանյանը:— Ուրեմն դուք բոլորդ միաբա՞ն եք եղել, և ես չգիտեմ, թե ինչն է ինձ խանգարում բնաջնջել ձեզ:

— Ոչ, ձերդ պայծառափայլություն, դժբախտաբար մենք բոլորս միաբան չէինք, և դուք հիմա կհամոզվեք դրանում: Ձեր ընկերը— ներեցեք ինձ, որ ես չեմ տալիս նրա հարգելի անունը, որ նա անտարակույս ունի, սակայն մեզ հայտնի չէ այդ անունը,— ուրեմն՝ ձեր ընկերը ատրճանակի երկու կրակոցով երկու զինվոր պառկեցրեց, ապա նահանջեց, շարունակելով պաշտպանվել սուսերով, որով նա վիրավորեց իմ մարդկանցից մեկին էլ, իսկ ինձ շշմեցրեց սուսերի տափակ կողմի հարվածով...

— Վերջ կտա՞ս թե չե, դահի՛ճ,— գոչեց դ'Արտանյանը:— Որտե՞ղ է Աթոսը, ի՞նչ է պատահել Աթոսին:

— Այդպես նահանջելով, ձերդ պայծառափայլություն, ինչպես արդեն ասացի ձեզ, նա հասավ այն սանդուղքին, որ տանում է նկուղ, և որովհետեւ դուռը բաց էր, նա բանալին հանեց, ներս մտավ և ներսից փակեց: Բոլորը համոզված էին, որ այնտեղից նա դուրս գալ չի կարող, դրա համար էլ ոչ ոք նրան չարգելեց այդ անել:

— Դե իհարկե,— ասաց դ'Արտանյանը,— դուք նրան սպանել չէիք ուզում, ձեզ հարկավոր էր միայն փակի տակ առնել նրան:

— Փակի տակ առնե՛լ, տե՛ր իմ աստված, երդվում եմ, ձերդ պայծառափայլություն, նա հենց ինքն իրեն փակի տակ առավ: Եվ դրանից առաջ էլ քիչ բաներ չարավ. երկու զինվորի ծանր վիրավորեց, իսկ մեկին տեղն ու տեղը սպանեց: Սպանվածին և երկու վիրավորներին իրենց ընկերները տարան, և այլևս ոչ մի տեղեկություն չուներ նրանց մասին: Ինչ վերաբերում է ինձ, երբ ուշքի եկա, գնացի պարոն նահանգապետի մոտ, դեպքի մասին պատմեցի և հարցրի, թե ինչպես վարվեմ գերու հետ: Բայց պարոն նահանգապետն ասես երկնքից էր ցած իջել: Նա ասաց, որ

ամենին չի հասկանում, թե խոսքն ինչին է վերաբերում, որ ինձ հասած հրամանը իր կողմից չի եղել, և եթե ես դժբախտություն ունենամ որևէ մեկին ասելու, թե ինքը՝ նահանգապետը որևէ կապ է ունեցել այդ անմիտ ձեռնարկության հետ, ապա կհրամայի կախադան հանել ինձ: Ինչպես երևում է, տեր իմ, ես սխալված եմ եղել և մեկին բռնել եմ ուրիշի տեղ, իսկ նա, ում հարկավոր էր բռնել, թաքնվել է:

— Բայց որտե՞ղ է Աթոսը,— գոռաց դ'Արտանյանը, որի վրդովմունքն ավելի աճեց, երբ իմացավ, թե իշխանություններն ինչպես են վերաբերվել այդ գործին:— Ի՞նչ է պատահել Աթոսին:

— Ես շտապեցի շուտով հարթել իմ մեղքը,— շարունակեց պանդոկապետը,— մոտեցա նկուղին, որպեսզի նրան բաց թողնեմ այնտեղից: Ա՛խ, տեր իմ, դա մարդ չէր, դա իսկական դև էր: Երբ ես նրան ազատություն առաջարկեցի, նա հայտարարեց, թե դա ծուղակ է, և ինքը դուրս չի գա նկուղից՝ առանց իր պայմաններն առաջադրելու: Ես հնազանդորեն պատասխանեցի,— ախր հասկանում էի, թե ինչ դրության մեջ եմ ընկել ձեռք բարձրացնելով նորին մեծության հրացանակրի վրա,— պատասխանեցի, որ պատրաստ եմ ընդունելու նրա պայմանները: «Ամենից առաջ,— ասաց նա,— ես պահանջում եմ, որ ինձ վերադարձնեք իմ ծառային՝ լրիվ սպառազինված»: Այդ հրամանը շտապ կատարվեց: Դուք հո հասկանում եք, տեր իմ, որ մենք տրամադիր էինք անելու ամեն բան, ինչ ցանկանար ձեր բարեկամը: Եվ ուրեմն պարոն Գրիմոն,— նա մեզ ասել էր իր անունը, թեև շատ սակավախոս մարդ է,— պարոն Գրիմոն, չնայած իր վերքին, գնաց նկուղ: Նրա տերը ընդունեց նրան, դուռը փակեց, իսկ մեզ հրամայեց մնալ մեր տեղում:

— Բայց վերջապես որտե՞ղ է հիմա նա,— գոչեց դ'Արտանյանը:— Որտե՞ղ է Աթոսը:

— Նկուղում, տեր իմ:

— Ինչպե՞ս, սրիկա՛, դու դեռ նկուղո՞ւմ ես պահում նրան:

— Ոչ, տեր իմ, աստված մի՛ արասցե: Ի՞նչ շահ ունեմ ես նրան նկուղում պահելուց: Եթե իմանաք ինչե՛ր է անում նա այդ նկուղում: Ա՛խ, տեր իմ, եթե ձեզ հաջողվի ստիպել նրան, որ դուրս գա այնտեղից, ես մինչև կյանքիս վերջը

երախտապարտ կլինեմ ձեզ, ես կաղոթեմ ձեզ համար, որպես իմ պահապան հրեշտակի:

— Ուրեմն նա այնտե՞ղ է: Ես նրան այնտե՞ղ կգտնեմ:

— Հասկանալի է, տեր իմ: Նա համառում է և չի ուզում դուրս գալ: Մենք ամեն օր եղանի ծայրին հաց ենք ամրացնում և լուսամուտով տալիս նրան, իսկ երբեմն պահանջում է նաև միս: Բայց, ավա՛ղ, ոչ հացը, ոչ էլ միսն են նրա գլխավոր սնունդը: Մի անգամ ես երկու ջահել տղաների հետ փորձեցի նկուղ իջնել, բայց նա զարհուրելի կատաղեց: Ես լսեցի, թե ինչպես է նա ատրճանակների ոտքերը քաշում, իսկ ծառան՝ հրացանի: Եվ երբ մենք հարցրինք, թե ինչ են ուզում անել, ձեր բարեկամը պատասխանեց, թե իրենք քառասուն լիցք ունեն և այդ լիցքերը բոլորը կկրակեն, բայց չեն թողնի, որ մեզնից մեկնումեկը նկուղ իջնի: Այն ժամանակ, տեր իմ, ես գնացի նահանգապետին գանգատվելու, բայց նա պատասխանեց, թե դա իմ հախն է, դա ինձ կսովորեցնի, թե ինչ է նշանակում վիրավորել իմ պանդոկը մտնող ազնվաբարո մարդկանց:

— Այնպես որ, այն օրից մինչև հիմա...— խոսել սկսեց դ՛Արտանյանը՝ չկարողանալով զսպել ծիծաղը պանդոկապետի ողբալի դեմքին նայելով:

— Այնպես որ, այն օրից մինչև հիմա, տեր իմ,— շարունակեց պանդոկապետը,— մեր դրությունը շատ վատ է, որովհետև մեր բոլոր մթերքների պաշարը նկուղումն է: Շշերով գինին, տակառներով գինին, գարեջուրը, ձեթը, անուշեղենը, խոզի ճարպը, երջիկեղենը, ամեն ինչ այնտեղ է, և որովհետև մեզ արգելված է նկուղ իջնել, ստիպված ենք լինում մեզ մոտ իջևանող բոլոր ճամփորդներին մերժել ուտելիքը, այնպես որ մեր իջևանը օրեցօր դեպի սնանկացում է գնում: Եթե ձեր բարեկամը էլի մի շաբաթ նկուղում նստի, մենք վերջնականապես կսնանկանանք:

— Դա հենց քո հա՛խն է, սրիկա՛: Մեր արտաքինից չէ՞ր կարելի հասկանալ, որ մենք կարգին մարդիկ ենք, ոչ թե դրամանենգներ:

— Այո, տեր իմ, դուք իրավացի եք...— պատասխանեց պանդոկապետը,— բայց լսեցեք, ահա նա նորից գայրացել է:

— Երևի անհանգստացրել են նրան,— ասաց դ'Արտանյանը:

— Բայց ինչպե՞ս վարվենք,— գոչեց պանդոկապետը:— Ախր մեզ մոտ երկու նշանավոր անգլիացիներ են եկել:

— Հետո ի՞նչ, որ եկել են:

— Ինչպե՞ս թե՛ ինչ: Դուք ինքներդ գիտեք, տեր իմ, որ անգլիացիները սիրում են լավ գինի խմել, իսկ սրանք էլ ամենալավը պահանջեցին: Իմ կինը երևի պարոն Աթոսից խնդրել է թույլ տալ մտնել նկուղ, որպեսզի այդ պարոնների համար բերի նրանց պահանջածը, իսկ նա սովորականի պես մերժել է... Ողորմա՛ճ աստված, էլի սկսվեց սողոմզոմորը:

Իսկապես, նկուղի կողմից ուժեղ աղմուկ էր գալիս: Դ'Արտանյանը վեր կացավ պանդոկապետի ուղեկցությամբ, որը հուսահատորեն մատներն էր կոտրատում, մոտեցավ գործողության վայրին, Պլանշեի հետ, որը պատրաստ պահած ուներ իր հրացանը:

Անգլիացիները խիստ վրդովված էին: Նրանք երկար ճանապարհ էին անցել և քաղցից ու ծարավից մեռնում էին:

— Բայց սա բռնություն՝ ւն է,— գոչում էին նրանք հիանալի ֆրանսերենով, բայց օտարերկրացու առողջանությամբ:— Այդ խելագարը խեղճ մարդկանց թույլ չի տալիս տնօրինելու իրենց սեփական գինին: Մենք կկոտրենք դուռը, իսկ եթե նա բոլորովին խելագարվել է, ի՛նչ արած, կսպանենք նրան, պրծավ գնաց:

— Կամա՛ց, պարոննե՛ր,— ասաց դ'Արտանյանը գոտուց հանելով ատրճանակները:— Խնդրում եմ ներել ինձ, բայց դուք ոչ ոքի չեք սպանի:

— Ոչինչ, ոչինչ,— դռան հետևից լսվեց Աթոսի հանգիստ ձայնը,— ներս թողեք այդ պարծենկոտներին, այն ժամանակ կտեսնենք:

Անգլիացիները, երևում է, բավական քաջ մարդիկ էին, բայց և այնպես անվճռականորեն իրար նայեցին: Թվում էր, թե նկուղում նստել է մի ինչոր քաղցած

մարդակեր, մի ինչոր հեքիաթային հսկա հերոս, և ոչ ոք չի կարող անպատիժ մտնել այդ անձավը:

Մի պահ բոլորը լռեցին, բայց վերջում անգլիացիներն ամոթ համարեցին նահանջել և նրանցից մեկը, որն ամենից ավելի էր վրդովված, իջավ սանդուղքով, որը հինգ թե վեց աստիճան ուներ, և ոտքով այնպիսի հարված տվեց դռանը, որ թվում էր, թե քարե պատն էլ կարող էր ծակել:

— Պլանշե՛, — ասաց դ'Արտանյանը՝ ատրճանակների ոտքը քաշելով, — ես ինձ վրա եմ վերցնում վերևում եղածին, իսկ դու զբաղվիր ցածում եղածով: Ուրեմն դուք, պարոննե՛ր, կռվե՛լ էք ուզում: Հիանալի՛ է: Եկեք կռվենք:

— Աստվա՛ծ իմ արդարադատ, — ներսից խուլ հնչեց Աթոսի ձայնը, — ինձ թվում է, թե դ'Արտանյանի ձայնն եմ լսում ես:

— Դու չես սխալվել, — պատասխանեց դ'Արտանյանը՝ նույնպես աշխատելով բարձր խոսել: — Այդ հենց ես եմ իմ սեփական անձով, բարեկամս:

— Հիանալի՛ բան, — ասաց Աթոսը, — այդ դեպքում մենք լավ հաշիվ կտեսնենք այդ քաջերի հետ:

Անգլիացիները մերկացրին սուսերները, բայց ընկել էին երկու կրակի մեջ: Էլի մի վայրկյան տատանվեցին, սակայն, ինչպես և առաջին անգամ, ինքնասիրությունը հաղթեց, և երկրորդ հարվածով նկուղի դուռը ճեղքվեց ամբողջ երկարությամբ:

— Ե՛տ քաշվիր, դ'Արտանյան, ե՛տ քաշվիր, — գոչեց Աթոսը, — հիմա ես պիտի կրակեմ:

— Պարոնա՛յք, — ասաց դ'Արտանյանը, որը երբեք չէր կորցնում սառն դատելու ընդունակությունը: — Մտածեցեք ձեր դրության մասին... Մի բուպե համբերիր, Աթո՛ս... Պարոնա՛յք, դուք խճճվում եք մի վատ պատմության մեջ և գնդակների հարվածների տակ եք ընկնելու: Ես ու իմ ծառան ձեզ կհյուրասիրենք երեք կրակոցով, նույն քան էլ կստանաք նկուղից: Բացի դրանից, մենք սուսերներ ունենք, որոնց ես ու իմ բարեկամը վատ չենք տիրապետում, կարող եք հավատացած լինել: Մի՛ խանգարեք ինձ, և ես կարգի կբերեմ ձեր գործն էլ, ի՛մն էլ: Հիմա ձեզ խմելու բան կտան, ես խոսք եմ տալիս:

— Եթե միայն դեռ գինի մնացել է,— լսվեց Աթոսի ծաղրական ձայնը:

Պանդոկապետը զգաց, որ իր մեջքը ծածկվեց պառ թրտինքով:

— Այսինքն՝ ինչպե՞ս թե՛ եթե մնացել է,— շշնջաց նա:

— Մնացած կլինի, գրողը տանի,— ասաց դ'Արտանյանը:— Հանգստացեք, նրանք երկուսով հո չէի՞ն կարող ամբողջ նկուղը դատարկել: Ձեր սուսերները պատյանները դրեք, պարոնա՛յք:

— Լավ, բայց դուք էլ ասորճանակները խրեցեք ձեր գոտին:

— Սիրով:

Եվ դ'Արտանյանն առաջինը օրինակ տվեց: Ապա դառնալով դեպի Պլանշեն՝ նա ձեռքի նշանով հրամայեց հրացանի լիցքը դատարկել:

Համոզվելով, որ վտանգն անցավ, անզլիացիները մի փոքր փնթփնթացին, բայց և այնպես սուսերները պատյանները խրեցին: Դ'Արտանյանը նրանց պատմեց Աթոսի նկուղում փակվելու պատմությանը, և որովհետև անզլիացիներն իսկական ջենտլմեններ էին, ամբողջ մեղքը զցեցին պանդոկապետի վրա:

— Իսկ հիմա, պարոնայք,— ասաց դ'Արտանյանը,— բարձրացեք ձեր սենյակը, և երաշխավորում եմ, որ մի տասը ըռպեից ձեզ համար կբերեն ամեն բան, ինչ ուզենաք:

Անզլիացիները գլուխ տվին ու գնացին:

— Հիմա ես մենակ եմ, սիրելի Աթոս,— ասաց դ'Արտանյանը,— բաց արեք դուռը, խնդրում եմ:

— Այս ըռպեին,— պատասխանեց Աթոսը:

Լավեց թափվող ցախերի ճրթճրթոց և գերանների ճռռոց. այդ Աթոսն էր իր ձեռքով քանդում իր սարքած բարիկադները:

Քիչ հետո դուռը բացվեց, և ճեղքից երևաց Աթոսի գունատ դեմքը: Նա մի թռուցիկ հայացքով դիտեց շրջակայքը:

Դ'Արտանյանը նետվեց ընկերոջ մոտ և քնքշորեն գրկեց նրան: Ապա նրան դուրս բերեց այդ խոնավ ապաստարանից և միայն այդ ժամանակ նկատեց, որ Աթոսը երերում է:

— Դուք վիրավորվա՞ծ եք,— հարցրեց նա:

— Ե՞ս: Ամեննի՛ն: Ես մահու չափ հարբած եմ, ուրիշ ոչինչ: Եվ դեռ երբեք մարդ այնքան ջանասիրաբար չի աշխատել այս վիճակին հասնել: Երդվում եմ աստծով, պանդոկապետ, ինձ բաժին ընկած կլինի ամենաքիչը հարյուր հիսուն շիշ:

— Ողորմա՛ծ աստված,— գոչեց պանդոկի տերը,— եթե ծառան էլ թեկուզ իր տիրոջ կեսի չափ խմած լինի, ես կորած եմ:

— Գրիմոն լավ է դաստիարակված և նա իրեն թույլ չէր տա խմել նույն գինին, ինչ ես եմ խմում: Նա միայն տակառից էր խմում: Ի դեպ, կարծեմ նա մոռացել է խցանը տեղը խցկել: Լսո՞ւմ եք, ինչոր բան է թափվում:

Դ'Արտանյանին մի ծիծաղ բռնեց, որից պանդոկապետի մարմինը տաք ու հով արեց:

Այդ բոպեին Աթոսի թիկունքում երևաց Գրիմոն՝ հրացանը ուսին: Նրա գլուխը ցնցվում էր ինչպես Ռուբենսի[103] հարբած խեղկատակի գլուխը: Նա ամբողջովին թրջված էր մի ինչոր թանձր հեղուկով, և պանդոկի տերն իսկույն հասկացավ, որ դա իր ամենալավ ձիթապտղի ձեթն է:

Խումբն անցավ ընդարձակ դահլիճով և տեղավորվեց հյուրանոցի ամենալավ սենյակում, որ դ'Արտանյանը գրավել էր ինքնագլուխ:

Մինչդեռ պանդոկապետն ու նրա կինը լամպերը վերցրած վազեցին նկուղ, որի մուտքը այնքան երկար ժամանակ արգելված էր իրենց: Իսկ այնտեղ նրանց մի զարհուրելի տեսարան էր սպասում:

Ամբոթյունների հետևում, որոնց միջով Աթոսը դուրս գալիս անցք էր բացել և որոնք բաղկացած էին ստրատեգիական արվեստի բոլոր կանոններով դասավորված ցախերից, տախտակներից ու դատարկ տակառներից, այստեղայնտեղ ձեթի ու գինու լճակների մեջ լողում էին կերած ապուխտի ոսկորներ, իսկ նկուղի ամբողջ ձախ անկյունը լիքն էր կոտրտված շերտի կույտով: Տակառից, որի ծորակը բաց էր մնացել, քամվում էին արյան վերջին կաթիլները: Հին դարերի բանաստեղծի խոսքով ասած՝ այստեղ մահն ու ավերածությունն էին թագավորում, ինչպես պատերազմի դաշտում:

Առաստաղի գերաններից կախված հիսուն երշիկներից մնացել էր ամենաշատը տասը հատ:

Պանդոկի տիրոջ և տիրուհու ողբը տարածվեց նկուղի կամարների տակ, որից ինքը՝ դ'Արտանյանն էլ զգացվեց: Բայց Աթոսը նույնիսկ ետ չնայեց:

Սակայն շուտով պանդոկապետի վիշտը փոխվեց կատաղության: Հուսահատությունից ինքն իրեն կորցրած՝ նա զինվեց շամփուրներով և նետվեց այն սենյակը, որտեղ տեղավորվել էին երկու ընկերները:

— Գինի՛,— գոռաց Աթոսը նրան տեսնելուն պես:

— Գինի՞,— զարմացած գոռաց պանդոկապետը:— Գինի՞: Բայց դուք արդեն ավելի քան հարյուր պիստոլի գինի եք խմել: Ախր իմ տնտեսությունը քայքայվել է, ես կորած եմ բոլորովին:

— Լա՛վ, լա՛վ,— ասաց Աթոսը,— մենք նույնիսկ ինչպես հարկն է չենք հագեցրել մեր ծարավը:

— Եթե գոնե միայն խմած լինեիք, էլի ոչինչ, բայց դուք փշրել եք բոլոր շերտը:

— Դուք ինքներդ ինձ հրեցիք, զցեցիք շերտի կույտի վրա, և նրանք էլ փշրվեցին: Մեղավորը դուք եք:

— Իմ ամբողջ ձեթն է ոչնչացել:

— Ձերը վերքեր բուժելու հիանալի դեղ է: Դե հո խեղճ Գրիմոն պե՞տք է բուժեր այն վերքերը, որ դուք էիք հասցրել նրան:

— Բոլոր երշիկները կրծոտված են:

— Այդ նկուղում անասելի շատ մկներ կան:

— Դուք պետք է վճարեք բոլորի համար,— գոռաց պանդոկապետը համբերությունից դուրս գալով:

— Երի՛ցս նգովյալ,— պատասխանեց Աթոսը տեղից բարձրանալով, բայց և իսկույն ընկավ աթոռին, նրա ուժերը սպառվել էին: Դ՛Արտանյանը նրան օգնության հասավ և մտրակը բարձրացրեց:

Պանդոկապետը մի քայլ ետ քաշվեց և սկսեց նվալ:

— Դա,— ասաց դ՛Արտանյանը,— ձեզ կտվորեցնի ավելի քաղաքավարի վարվել այն հաճախորդների հետ, որ աստված ուղարկում է ձեզ մոտ:

— Աստվա՛ծ: Ավելի լավ է ասեք՝ սատանան:

— Այ թե ինչ, սիրելիս,— սպառնագին ասաց դ՛Արտանյանը,— եթե դու վերջ չտաս մեր ականջները սողոցելուն, մենք չորսս էլ կփակվենք քո նկուղում և կտեսնենք, իսկապե՞ս վնասն այնքան մեծ է, որքան ասում ես:

— Համաձայն եմ, պարոններ, համաձայն եմ,— վախեցավ պանդոկապետը,— խոստովանում եմ, որ ես մեղավոր եմ, բայց չե՞ որ չկա այնպիսի զանցանք, որ կարելի չլինի ներել: Դուք անվանի պարոններ եք, իսկ ես մի խեղճ պանդոկապետ, և դուք պետք է խղճաք ինձ:

— Ա՛, այդ արդեն ուրիշ բան է,— ասաց Աթոսը,— այդպես դու երևի իմ սիրտը կփափկացնես, և իմ աչքերից արցունք կհոսի, ինչպես գինին՝ քո տակառներից: Մենք այնքան զարհուրելի չենք, ինչպես թվում է քեզ: Մոտ արի կլիտսենք:

Պանդոկապետը վախվխելով մոտեցավ:

— Ասում եմ մոտեցի՛ր, մի՛ վախենա,— շարունակեց Աթոսը:— Այն պահին, երբ ես ուզում էի քեզ վճարել, իմ քսակը սեղանին դրիք:

— Միանգամայն ճշմարիտ է, ձերդ պայծառափայլություն:

— Այդ քսակում վաթսուն պիստոլ կար: Որտե՞ղ է քսակը:

— Հանձնված է դատարանի գրասենյակ, ձերդ պայծառափայլություն: Ախր ինձ ասել էին, թե դրանք կեղծ դրամներ են:

— Դե ուրեմն քսակը ետ պահանջիր և այն վաթսուն պիստոլը քեզ վերցրու:

— Բայց ձեզ լավ հայտնի է, ձերդ պայծառափայլություն, որ դատական աստիճանավորները, ինչ որ իրենց ձեռքն ընկավ, էլ չեն վերադարձնում: Թե որ կեղծ դրամներ լինեին, էլի կարելի էր հույս դնել, բայց դժբախտաբար, դրանք իսկական փողեր են եղել:

— Համաձայնության եկ դատարանի հետ ինչպես ուզում ես, բարեկամս, այդ իմ գործը չէ, մանավանդ որ ինձ մոտ ոչ մի լիվր չի մնացել:

— Լսիր ինձ,— միջամտեց դ՛Արտանյանը,— որտե՞ղ է հիմա Աթոսի ձին:

— Ախոռում:

— Ի՞նչ կարժենա այդ ձին:

— Վաթսուն պիստոլից ո՛չ ավելի:

— Բա՛ն ասացիր, հենց ուրիշն էլ կարժենա: Վերցրու այդ ձին, և դրանով էլ վերջացնենք:

— Ինչպե՛ս, դու վաճառո՞ւմ ես իմ ձին: Իմ Բայազետի՞ն,— զարմացավ Աթոսը:— Հապա ես ի՞նչ պիտի հեծնեմ արշավի գնալիս, Գրիմոյի՞ն:

— Ես քեզ համար ուրիշ ձի եմ բերել,— պատասխանեց դ'Արտանյանը:

— Ուրի՞շ:

— Եվ այն էլ ի՛նչ հիանալի ձի,— գոչեց պանդոկապետը:

— Լավ, եթե կա ուրիշը, որն ավելի լավն է ու ջահել, քեզ վերցրու առաջվանը և մեզ համար գինի բեր:

— Ո՞ր գինուց,— հարցրեց պանդոկապետը բոլորովին հանգստացած:

— Այն, որ նկուղի խորքումն է, վանդակի մոտ: Այնտեղ դեռ մի քսանհինգ շիշ կա, մնացածը փշրվեց, երբ ես ընկա: Բեր վեց շիշ:

— Սա ուղղակի անհատակ տակառ է, ոչ թե մարդ,— ինքն իրեն մրթմրթաց պանդոկապետը:— Եթե սա էլի մի երկու շաբաթ մնա այստեղ և ամբողջ խմածի համար վճարի, ես իմ գործերը կարգի կգցեմ:

— Եվ չմոռանաս՝ նույն գինուց չորս շիշ տալ անգլիացի պարոններին,— ավելացրեց դ'Արտանյանը:

— Իսկ հիմա,— շարունակեց Աթոսը,— քանի դեռ մենք գինու ենք սպասում, դ'Արտանյան, պատմիր տեսնենք, ի՞նչ դրության մեջ են մյուսները:

Դ'Արտանյանը պատմեց նրան, թե ինչպես Պորտոսին գտավ անկողնում պառկած, ոտքի հողը դուրս ընկած, իսկ Արամիսին՝ երկու աստվածաբանների հետ աստվածաբանական վեճի բռնված: Երբ նա վերջացնում էր իր պատմությունը, ներս մտավ պանդոկապետը, բերելով պատվիրած գինին և մի կտոր ապուխտ, որ բարեբախտաբար մնացել էր նկուղից դուրս:

— Շատ լավ,— ասաց Աթոսը լցնելով իր և դ'Արտանյանի բաժակները,— դա Պորտոսի ու Արամիսի մասին: Իսկ դուք, բարեկամս, դուք ինչպե՞ս եք և ինչ է պատահել ձեզ: Ինձ թվում է թե դուք շատ մռայլ տեսք ունեք:

— Դժբախտաբար՝ այո,— պատասխանեց դ'Արտանյանը,— և դրա պատճառն այն է, որ ես բոլորիդ մեջ ամենադժբախտ մարդն եմ:

— Դու դժբա՞խտ ես, դ'Արտանյան,— գոչեց Աթոսը:— Ի՞նչ է պատահել, պատմեցեք ինձ:

— Հետո, հետո,— ասաց դ'Արտանյանը:

— Հետո, իսկ ինչո՞ւ ո՛չ հիմա: Դու կարծում ես, թե ես հարբա՞ծ եմ: Լավ հիշիր, բարեկամս, ես երբեք այնքան պայծառ միտք չեմ ունենում, որքան մի շիշ գինու առաջ նստած ժամանակ: Դե, պատմիր, պատմիր, ես լսողություն եմ դարձել:

Դ'Արտանյանը նրան պատմեց տիկին Բոնասիեի հետ պատահած դեպքը:

Աթոսը հանգիստ լսեց նրան:

— Դրանք բոլորը դատարկ բաներ են,— ասաց նա, երբ դ'Արտանյանը խոսքը վերջացրեց,— միանգամայն դատարկ բաներ:

«Դատարկ բաներ»ը Աթոսի սիրած արտահայտությունն էր:

— Դուք ամեն ինչ դատարկ բան եք համարում, սիրելի Աթոս,— առարկեց դ'Արտանյանը:— Դա համոզիչ չէ, երբ այդ ամենը ասում է մի մարդ, որը երբեք չի սիրել:

Աթոսի մարած հայացքը հանկարծակի բորբոքվեց, սակայն դա միայն ընդհանուր բռնկում էր, և նրա աչքերը նորից դարձան այնպես աղոտ ու մշուշապատ, ինչպես առաջ:

— Դա ճշմարիտ է,— հանգիստ հաստատեց նա,— ես երբեք չեմ սիրել:

— Ուրեմն, ինքներդ եք տեսնում, կարծրասիրտ մարդ, որ իրավացի չեք, երբ մեղադրում եք մեզ զգայուն սիրտ ունեցողներին:

— Ջգայուն սիրտ՝ փշրված սիրտ,— ասաց Աթոսը:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով:

— Ուզում եմ ասել, որ սերը վիճակախաղ է, որի մեջ շահողը մահ է շահում: Հավատացեք ինձ, սիրելի դ'Արտանյան, ձեր բախտը բանել է, որ տանուլ եք տվել: Միշտ էլ տանուլ տվեք, այս է իմ խորհուրդը:

— Ինձ թվում է, թե նա այնպե՛ս էր սիրում ինձ:

— Այդ միայն թվում է ձեզ:

— Օ՛, ո՛չ, նա իսկապես սիրում էր ինձ:

— Երեխա՛: Չկա այնպիսի տղամարդ, որը ձեզ պես չհավատա, թե իր սիրած կինը սիրում է իրեն, և չկա այնպիսի մի տղամարդ, որին խաբած չլինի իր սիրածը:

— Բացի ձեզնից, Աթոս, չե՞ որ դուք երբեք սիրած կին չեք ունեցել:

— Դա ճշմարիտ է,— ասաց Աթոսը մի պահ լռելուց հետո,— ես երբեք ոչ մի կնոջ չեմ սիրել: Խմենք:

— Բայց եթե այդպես է, ա՛յ փիլիսոփա, սովորեցրեք ինձ, ես խորհուրդ և մխիթարություն եմ որոնում:

— Մխիթարությո՞ւն: Ի՞նչ բանում:

— Իմ դժբախտության մեջ:

— Ձեր դժբախտությունը պարզապես ծիծաղելի բան է,— ասաց Աթոսը ուսերը թոթովելով:— Կուզենայի իմանալ, ի՞նչ կասեիք դուք, եթե ես ձեզ մի սիրո պատմություն անեի:

— Ձեզ հե՞տ պատահած:

— Կամ՝ իմ մոտիկ ընկերներից մեկի հետ, միևնույն չե՞:

— Պատմեցեք, Աթոս, պատմեցեք:

— Խմենք, դա ավելի լավ կլինի:

— Խմեցեք և պատմեցեք:

— Իսկապես, կարելի է երկուսը միասին,— ասաց Աթոսը բաժակը դատարկելով և նորից լցնելով այն:

— Ես լսում եմ,— ասաց դ'Արտանյանը:

Աթոսը մտքերի մեջ ընկավ, և որքան նրա մտքերը խորանում էին, այնքան ավելի էր նա գունատվում դ'Արտանյանի աչքի առաջ: Աթոսը գտնվում էր գինովության այն աստիճանում, երբ սովորական հարբած մարդը փոխվում է ու քնում: Բայց նա ասես զառանցում էր արթմնի: Գինովության այդ պայծառատեսության մեջ մի ինչոր ահասարսուռ բան կար:

— Դուք անպայման ուզում եք, որ պատմե՞մ,— հարցրեց նա:

— Շատ եմ խնդրում,— պատասխանեց դ'Արտանյանը:

— Լավ, թող ձեր ասածը լինի: Իմ մոտիկ ընկերներից մեկը... մոտիկ ընկերներիցս մեկը, և ո՛չ թե ես, լավ հիշեցեք այս,— ասաց Աթոսը մռայլ ժպիտով,— մի կոմս, որ ծագումով նույն նահանգիցն էր, ինչ ես, այսինքն՝ Բերրիից, նշանավոր ինչպես Դանդոլոն[104] կամ Մոնմորանսին[105], քսանհինգ տարեկան հասակում սիրահարվել էր տասնվեց տարեկան մի աղջկա, որը չքնաղ էր ինչպես ինքը՝ սերը: Իր տարիքին հատուկ անմեղության միջից երևում էր նրա եռուն միտքը, որ կանացի

միտք չէր, այլ բանաստեղծի: Ոչ թե միայն դուրեկան էր այդ աղջիկը, այլ արբեցնելու չափ գեղեցիկ: Ապրում էր նա մի փոքրիկ ավանում՝ իր քահանա եղբոր հետ միասին: Եկվոր մարդիկ էին նրանք այդ կողմերում: Ոչ ոք չգիտեր, թե որտեղից են եկել, բայց աղջկա գեղեցկության և եղբոր բարեպաշտության պատճառով ոչ ոքի մտքով չէր անցնում հարցնել նրանց, թե որտեղացի են: Ի դեպ, ասում էին, թե նրանք բարձր ծագում ունեցող մարդիկ են: Բարեկամս, որ այդ վայրերի տիրակալն էր, կարող էր հեշտությամբ հրապուրել աղջկան կամ թե գոռով վերցնել, նա լիիրավ իշխան էր, ո՞վ կհամարձակվեր պաշտպան կանգնել օտարական, անհայտանձանոթ մարդկանց: Բայց, դժբախտաբար, հո ազնիվ մարդ էր և ամուսնացավ այդ աղջկա հետ: Հիմա՛ր էր, ապո՛ւշ, է՛շ:

— Բայց ինչո՞ւ, եթե սիրում էր նրան,— հարցրեց դ’Արտանյանը:

— Սպասեցեք,— ասաց Աթոսը:— Նա իր դոյակը տարավ այդ աղջկան և նրան առաջին տիկինը դարձրեց ամբողջ գավառում: Եվ, պետք է արդարամիտ լինել, կինը հիանալի էր կատարում իր դերը...

— Եվ հետո՞,— հարցրեց դ’Արտանյանը:

— Եվ հետո... մի անգամ, որսի ժամանակ, երբ այդ կինն էլ ամուսնու հետ էր,— շարունակեց Աթոսը ցածր ձայնով, բայց շատ արագ,— կինը ձիուց ընկավ և ուշաթափվեց: Կոմսը նետվեց նրան օգնության, և որովհետև հագուստը սեղմում էր կնոջ կուրծքը, կոմսը պատահոտեց այն դաշույնով, և հանկարծ բացվեց նրա ուսը: Գուշակեցեք, դ’Արտանյան, ի՞նչ կար ուսին,— հարցրեց Աթոսը նյարդային բարձր քրքիջով բռնված:

— Որտեղի՞ց կարող եմ իմանալ,— ասաց դ’Արտանյանը:

— Շուշան ծաղիկ,— ասաց Աթոսը,— նա խարանված էր:

Եվ Աթոսը մի շնչով դատարկեց գինու բաժակը, որ բռնել էր ձեռքում:

— Ի՛նչ սուկալի բան,— գոչեց դ’Արտանյանը,— չի կարող պատահել:

— Ճշմարտություն եմ ասում, սիրելիս: Հրեշտակը դև դուրս եկավ: Խեղճ ու անմեղ թվացող աղջիկը գող դուրս եկավ:

— Եվ ի՞նչ արեց կոմսը:

— Կոմսը լիիշխան տիրակալ էր իր հողում, իր հպատակներին մահապատիժ տալու և ներում շնորհելու իրավունք ուներ: Նա պատառոտեց կոմսուհու վրայի շորերը, ձեռքերը կապեց մեջքին և նրան կախեց ծառից:

— Աստվա՛ծ իմ: Բայց դա մարդասպանություն է, Աթո՛ւս,— գոչեց դ'Արտանյանը:

— Այո, միմիայն մարդասպանություն,— ասաց Աթոսը մահու պես գունատված:— Բայց այս ի՞նչ է: Կարծես իմ գինին վերջացե՞լ է:

Եվ վերջին շիշը վերցնելով՝ Աթոսը մոտեցրեց շուրթերին ու մի շնչով խմեց, ասես ձեռքին սովորական բաժակ լիներ:

Հետո նա գլուխն իջեցրեց ձեռքին: Դ'Արտանյանը սարսափած կանգնել էր նրա առաջ:

— Այս դեպքը բուժեց ինձ սիրուց՝ գեղեցիկ, երագուն, սիրահարված կանանց նկատմամբ,— ասաց Աթոսը ուղղվելով և, ըստ երևույթին, պատրաստվելով վերջացնել կոմսի պատմությունը:— Ցանկանում եմ, որ դուք էլ բուժվեք: Խմե՛նք:

— Եվ այդպես էլ նա մեռա՞վ,— մրմնջաց դ'Արտանյանը:

— Իհարկե,— ասաց Աթոսը:— Դե, տվեք ձեր բաժակը: Ապուխտ բեր, անբան,— ձայն տվեց Աթոսը:— Էլ չենք կարողանում խմել:

— Իսկ նրա եղբա՞յրը,— հարցրեց դ'Արտանյանը:

— Եղբա՛յրը,— կրկնեց Աթոսը:

— Այո, քահանան:

— Ախ, քահանա՛ն: Ես ուզում էի կարգադրել, որ նրան էլ կախեն, Բայց նա շուտ էր գլխի ընկել և կարողացել էր ծլկել:

— Եվ այդպես էլ չիմացա՞ք, թե ով էր այդ սրիկան:

— Հավանաբար գեղեցկուհու առաջին սիրեկանը և նրա գործակիցը, արժանապատիվ մի մարդ, որը երևի հենց նրա համար էր քահանա ձևացել, որպեսզի մարդու տա իր սիրուհուն և ապահովի նրա վիճակը: Հուսով եմ, որ նրան քառատած կլինեն:

— Օ՛, աստված իմ, աստվա՛ծ,— Բացականչեց դ'Արտանյանը՝ սուկալի պատմությունից զարհուրած:

— Այդ ինչո՞ւ դուք ապուխտ չեք ուտում, դ'Արտանյան, սքանչելի ապուխտ է,— ասաց Աթոսը մի կտոր կտրելով և երիտասարդի պնակում դնելով:— Ափսոս, որ նկուղում գոնե մի չորս հատ այսպիսի ապուխտ չկար: Ես մի հիսուն շիշ ավելի խմած կլինեի:

Դ'Արտանյանն այս խոսակցությունը շարունակելու ուժ չունեի. նա զգում էր, որ խելքը թոցնում է: Գլուխն իջեցրեց ձեռքի վրա և ձևացրեց, թե քնել է:

— Խմել չի կարողանում մեր երիտասարդությունը,— ասաց Աթոսը ցավակցաբար նայելով նրան,— սա դեռ լավերից է...

XXVIII. Վերադարձ

Աթոսի այս զարհուրելի պատմությունը ցնցել էր դ'Արտանյանին, սակայն շատ բան այս կիսախոստովանությունից դեռ լրիվ պարզ չէր: Ամենից առաջ այդ պատմությունն արել էր բոլորովին հարբած մի մարդ՝ կիսով չափ հարբած մի մարդու: Բայց և այնպես, չնայած այն մշուշին, որ լողում է մարդու գլխում երկուերեք շիշ բուրգունդականից հետո, դ'Արտանյանը, հետևյալ առավոտ արթնանալով, երեկվա խոստովանության յուրաքանչյուր խոսքը հիշում էր այնպես պարզ, որ ասես այդ բառերն իրար հետևից տպավորվել էին նրա ուղեղում: Անորոշությունը նրա մեջ միայն ավելի ջերմ ցանկություն էր առաջացրել լիովին պարզելու ամեն ինչ, և նա իր ընկերոջ մոտ գնաց երեկվա խոսակցությունը վերսկսելու հաստատ որոշումով:

Սակայն Աթոսն արդեն բոլորովին ուշքի էր եկել, այսինքն՝ դարձել էր աշխարհի ամենախորաթափանց և ամենաանթափանց մարդը:

Սեղմելով դ'Արտանյանի ձեռքը՝ հրացանակիրն ինքը կանխեց նրա մտադրությունը:

— Երեկ ես խիստ հարբած էի, սիրելիս,— ասաց նա:— Այդ բանը ես հասկացա այսօր, զգալով, որ լեզուս հազիվ է պտտվում բերանումս և զարկերակս խիստ արագ է խփում: Կարող եմ գրագ գալ, որ հազար ու մի անհավատալի բաներ եմ պատմել ձեզ:

Այս ասելով, նա ընկերոջը նայեց այնպիսի խորաթափանց հայացքով, որ դ'Արտանյանը շփոթվեց:

— Ամենին ոչ,— առարկեց նա:— Որքան ես հիշում եմ, դուք մի առանձին բան չեք ասել:

— Մի՞ թե: Զարմանալի՜ է: Իսկ ինձ թվում էր, թե մի շատ տխուր պատմություն եմ արել ձեզ:

Եվ նա երիտասարդին նայեց այնպես, ասես ուզում էր նրա սրտի խորքը թափանցել:

— Ո՛վ գիտե,— ասաց դ'Արտանյանը,— երևի ես ձեզնից էլ ավելի հարբած եմ եղել, ոչ մի բան չեմ հիշում:

Սակայն այս խոսքերն ամենին չգոհացրին Աթոսին, և նա շարունակեց.

— Դուք, իհարկե, նկատել եք, սիրելի բարեկամս, որ ամեն մի մարդ յուրահատուկ ձևով է հարբած լինում, մեկը թախիծի մեջ է ընկնում, մյուսը՝ ուրախ տրամադրության մեջ: Ես, օրինակ, երբ հարբում եմ, թախծոտ եմ դառնում և սիրում եմ զարհուրելի պատմություններ անել, որոնք մի ժամանակ լսել եմ իմ դայակից: Դա իմ թերությունն է և, խոստովանում եմ, լուրջ թերությունը, բայց եթե սա մի կողմ թողնենք, ես խմել կարողանում եմ:

Այս ամենը Աթոսն ասում էր այնպիսի բնական տոնով, որ դ'Արտանյանի վստահությունը խախտվեց:

— Ա՛խ, ճիշտ որ,— ասաց երիտասարդ գասկոնացին՝ փորձելով բռնել նորից իր ձեռքից փախչող ճշմարտությունը,— հիշում եմ ախր, ոնց որ երազիս մեջ, որ մենք խոսում էինք կախվածների մասին:

— Ահա տեսնո՞ւմ եք,— ասաց Աթոսը գունատվելով, բայց ջանալով ժպտալ:— Այդպես էլ գիտեի, կախադանը իմ մշտական մղձավանջն է:

— Այո, այո,— շարունակեց դ'Արտանյանը,— հիմա ես սկսում եմ մտաբերել, այո, խոսքը վերաբերում էր... սպասեք մի րոպե... խոսքը վերաբերում էր մի կնոջ:

— Հենց այդ է, որ կա,— պատասխանեց Աթոսը արդեն մահու չափ սփրթնելով— այդ իմ սիրած թեման է՝ պատմությունն անել շիկահեր կնոջ մասին, և եթե ես այդ պատմությունն անում եմ, նշանակում է հարբած եմ մահու չափ:

— Ճշմարիտ է,— հաստատեց դ'Արտանյանը,— պատմությունն մի շիկահեր կնոջ մասին, բարձրահասակ, գեղեցիկ, խորունկ աչքերով:

— Այո, այն էլ կախադան հանված:

— Իր իսկ ամուսնու ձեռքով, որը ձեր ծանոթ ազնվականներից մեկն է,— ավելացրեց դ'Արտանյանը՝ սևեռուն նայելով Աթոսի աչքերին:

— Այ, տեսնո՞ւմ եք, ինչպիսի հեշտությամբ կարելի է ստվեր գցել մարդու վրա, երբ ինքդ էլ չգիտես, թե ինչ ես ասում,— ասաց Աթոսը ուսերը թոթվելով և ասես ինքն իրեն խղճալով:— Վճռված բան է, դ'Արտանյան, այլևս ես երբեք չեմ խմի, խիստ վատ սովորություն է այդ:

Դ'Արտանյանը ոչինչ չպատասխանեց:

— Հա, իսկապես,— ասաց Աթոսը՝ հանկարծ անցնելով ուրիշ թեմայի,— շնորհակալ եմ այն ձիու համար, որ բերել էր ինձ:

— Դուր եկա՞վ ձեզ,— հարցրեց դ'Արտանյանը:

— Այո, բայց այնքան էլ դիմացկուն չէ:

— Միավում եք: Այդ ձիով ես տասը լյո ճանապարհին անցել եմ մեկ ու կես ժամից էլ պակաս ժամանակում, և դրանից հետո նա այնպիսի տեսք է ունեցել, ասես միայն Սեն Սյուլպիս հրապարակի շուրջն է մի պտույտ գործել:

— Իսկապե՞ս: Այդ դեպքում ես երևի պիտի գղջամ:

— Զղջա՞ք:

— Այո. ես այդ ձին ձեռքից բաց թողի:

— Ինչպե՞ս:

— Այսպես պատահեց*. այս առավոտ ես արթնացա ժամը վեցին: Դուք քնած էիք մեռածի պես, և ես չգիտեի ինչով զբաղվեմ: Երեկվա խնջույքից դեռ ուշքի չէի եկել: Իջա դահլիճ, տեսնեմ՝ այնտեղ մեր անգլիացիներից մեկը ուզում է ձի գնել մի ձիավաճառից, որովհետև իր ձին երեկ սատկել էր: Մոտեցա և լսեցի, որ մի մուգ շիկավուն ձիու համար հարյուր պիստոլ է առաջարկում: «Գիտե՞ք ինչ, պարոն,— ասացի ես,— ես էլ մի ձի ունեմ վաճառելու»:

«Եվ սքանչելի ձի է,— պատասխանեց նա,— եթե այն ձին է, որի սանձը երեկ բռնել էր ձեր բարեկամի ծառան»: «Ինչպե՞ս եք կարծում, հարյուր պիստոլ արժե՞ այդ ձին»: «Արժե: Իսկ դուք այդ գնով կտա՞ք»: «Ոչ, բայց ես կարող եմ մեր խաղի մեջ դնել այն»: «Մեր խաղի՞»: «Այո, զառ զցելու խաղի»: Ասելն ու անելը մեկ եղավ, և ես ձին տանուլ տվի: Բայց հետո թամբը ետ շահեցի:

Դ'Արտանյանի դեմքը մռայլվեց:

— Մա ձեզ վշտացնո՞ւմ է,— հարցրեց Աթոսը:

— Անկեղծ ասած՝ այո: Այդ ձիերով մեզ պետք է ճանաչեին ճակատամարտի օրը: Դրանք ես նվեր էի ստացել որպես ուշադրության նշան: Դուք իզուր եք արել այդ բանը, Աթոս:

— Դե լավ, սիրելի բարեկամս, երևակայեցեք, թե դուք եք իմ տեղը,— առարկեց հրացանակիրը,— ձանձրոյթից մեռնում էի, և հետո, ճիշտն ասած՝ անգլիական ձիեր ես չեմ սիրում: Եթե բանը միայն այն է, որ որևէ մեկը մեզ պետք է ճանաչեր, ապա դրա համար թամբն էլ բավական է. բավական աչքի ընկնող թամբ է: Ինչ վերաբերում է ձիուն, մենք կարող ենք արդարացնել նրա անհայտացումը: Վերջիվերջո ձիերը մահկանացու արարածներ են: Ասենք թե՛ իմ ձին սատկել է խլախտից կամ քոսից: Դ՛Արտանյանը շարունակում էր փքված մնալ:

— Ցավալի է,— շարունակեց Աթոսը,— դուք, ինչպես երևում է, շատ եք դողում այդ կենդանիների վրա, այնինչ ես դեռ իմ պատմությունը չեմ վերջացրել:

— Էլի ի՞նչ եք արել որ:

— Երբ ես իմ ձին տանուլ տվի,— ինը տասի դիմաց, բա՛,— մտքովս անցավ խաղալ ձեր ձիու վրա:

— Բայց հուսով եմ, որ դուք այդ միտքը չիրականացրիք:

— Ընդհակառակը, ես այն իսկույն իրականացրի:

— Եվ ի՞նչ,— գոչեց դ՛Արտանյանը:

— Խաղացի և տարվեցի:

— Իմ ձի՞ն:

— Ձեր ձին, յոթ՝ ութի դիմաց: Միայն մեկ կետով ավելի էր... Լսե՛լ եք առածը:

— Աթոս, դուք գժվել եք, երդվում եմ:

— Գիտե՞ք ինչ, սիրելի դ'Արտանյան, այդ բանը ինձ երեկ պիտի ասեիք, երբ ես ձեզ իմ հիմար պատմություններն էի անում, և ոչ թե այսօր: Ես ձին տանուլ տվի իր ամբողջ սարք ու կարգով, որ ունի նա:

— Բայց դա սուկալի՛ բան է:

— Սպասեցեք, դուք դեռ բոլորը չգիտեք: Ես հիանալի խաղացող կդառնայի, եթե կարողանայի չափը չանցնել: Բայց ես չափն անցնում եմ այնպես, ինչպես խմած ժամանակ, և ահա ես չափն անցա:

— Բայց էլի ինչի՞ վրա կարող էիք խաղալ: Չէ՞ որ ձեզ այլևս ոչինչ չէր մնացել:

— Մխալ ես, սիրելիս, սխալ ես: Մեզ մնում էր այդ ադամանդը, որ շողշողում է ձեր մատին, և որը ես դեռ երեկ նկատել էի:

— Այս ադամանդը,— գոչեց դ'Արտանյանը՝ շտապ շոշափելով մատանին:

— Եվ որովհետև մի ժամանակ ես էլ ադամանդներ ունեի և դրանց արժեքը հասկանում եմ, այդ ադամանդը գնահատեցի հազար պիստով:

— Հուսով եմ,— ասաց դ'Արտանյանը վախից կիսամեռ եղած,— որ դուք ոչ մի բանով չեք հիշատակել իմ ադամանդը:

— Ընդհակառակն, սիրելի բարեկամս: Հասկացեք, այդ ադամանդը մեր հույսի միակ աղբյուրն էր մնացել, ես կարող էի նրանով ետ շահել մեր թամբերը, ձիերը և դեռ վրան էլ փող տանել ճանապարհի համար:

— Աթոս, ես դողում եմ,— ասաց դ'Արտանյանը:

— Եվ ահա, ես անգլիացուն ասացի ձեր ադամանդի մասին: Պարզվեց, որ նա էլ ուշադրություն է դարձրել դրա վրա: Ախր, իսկապես, սիրելիս, այդ ի՛նչ բան է: Դուք ձեր մատին երկնքից ցած բերած աստղ եք կրում և ուզում եք, որ ոչ ոք չնկատի այն: Այդ անկարելի բան է:

— Վերջացրեք, սիրելի բարեկամս, վերջացրեք,— ասաց դ'Արտանյանը:— Անկեղծ եմ ասում, ձեր սառնասրտությունը սպանիչ է:

— Այսպես ուրեմն, մենք այդ ադամանդը տասը խաղաղրույքի բաժանեցինք, ամեն մի ձեռքը հարյուր պիստոլ:

— Ախ, հասկանում եմ, ուզում եք կատակ անել և փորձել ինձ,— ասաց դ'Արտանյանը, որին զայրույթը այնպես էր բռնել մազերից, ինչպես Միներվան[106] Աքիլլեսին՝ «Իլիական»ում:

— Չէ, ես կատակ չեմ անում, գրողը տանի, կուզենայի իմանալ, ի՛նչ կանեիք դուք, եթե իմ տեղը լինեիք: Երկու շաբաթ ես մարդու երես չէի տեսել և բոլորովին վայրենացել էի շշերի հետ զրուցելով:

— Դա դեռ պատճառ չէ, որ իմ ադամանդի վրա խաղայիք,— առարկեց դ'Արտանյանը ջղաձգաբար սեղմելով ձեռքը:

— Դե դուք վերջը լսեցեք: Տասը դրույք, յուրաքանչյուրը՝ հարյուր պիստոլ: Տասներեքերորդ քայլում ես տանուլ տվի ամեն ինչ, տասներեքերորդին, տասներեք թիվը ինձ համար միշտ ճակատագրական է եղել: Հենց հուլիսի տասներեքին է, որ...

— Գրողը տանի,— գոչեց դ'Արտանյանը տեղից վեր կենալով: Այսօրվա պատմությունը նրան ստիպել էր երեկվանը մոռանալ:

— Համբերություն,— ասաց Աթոսը:— Ես իմ պլանն ունեի: Անգլիացին թեթևամիտ մարդ է: Առավոտյան ես տեսել էի, թե ինչպես էր նա խոսում Գրիմոյի հետ, և Գրիմոն ինձ ասել էր, որ անգլիացին իրեն առաջարկում էր ծառայության մտնել իր մոտ: Եվ ահա ես նրա հետ խաղում եմ Գրիմոյի վրա, անխուսանմունչ Գրիմոյի, որ բաժանել էինք տասը դրույքի:

— Ա՛յ ճարպիկ բան,— ասաց դ'Արտանյանը ակամա ծիծաղով բռնվելով:

— Գրիմոյի վրա, Գրիմոյի, լսո՞ւմ եք: Եվ ահա Գրիմոյի տասը դրույքի շնորհիվ, որն ամբողջությամբ մի դուկատ էլ չարժե, ես ադամանդը ետ շահեցի: Դե դուք սրանից հետո ասացեք, թե համառությունը լավ բան չէ:

— Պատվովս եմ երդվում, շատ զվարճալի բան է,— թեթևացած գոչեց դ'Արտանյանը՝ ծիծաղից կողը բռնելով:

— Դուք, իհարկե, հասկացնում եք, որ խիստ տաքացած լինելով՝ ես նորից ադամանդի վրա խաղացի:

— Այս, ա՛յ թե ինչ,— ասաց դ'Արտանյանը, որի դեմքը նորից մռայլվեց:

— Ես ետ շահեցի ձեր թամբը, հետո՝ ձեր ձին, հետո՝ իմ թամբը, հետո՝ իմ ձին, հետո՝ նորից տանուլ տվի: Կարճ ասած՝ ես նորից բռնեցի ձեր թամբը, հետո՝ իմը: Այ թե ինչպես եղավ: Սա արդեն հիանալի քայլ էր, և ես դրա վրա կանգ առա:

Դ'Արտանյանը շունչ առավ այնպես, ասես ամբողջ պանդոկը ցած ընկավ նրա ուսերից:

— Նշանակում է՝ ադամանդը մնում է իմ տրամադրության տա՞կ,— վախվխելով հարցրեց նա:

— Ձեր լիակատար տրամադրության տակ, սիրելի բարեկամս, և դեռ ձեր Բուցեֆալի[107] և իմ ձիու թամբերն էլ վրան:

— Բայց մեր ինչի՞ն են պետք թամբերն առանց ձիերի:

— Այդ առթիվ իմ գլխում մի միտք է ծագել:

— Աթոս, դուք վախեցնում եք ինձ:

— Լսեցեք, դ'Արտանյան, դուք կարծեմ վաղուց չեք խաղացել:

— Եվ խաղալու ոչ մի ցանկություն էլ չունեմ:

— Երդում մի՛ տվեք: Ուրեմն, ասում եմ, դուք վաղուց չեք խաղացել, հետևապես, պետք է որ ձեր բախտը բերի:

— Ենթադրենք այդպես: Հետո՞:

— Հետո՞: Անգլիացին ու իր ընկերները դեռ այստեղ են: Ես նկատեցի, որ նա թամբերը շատ է ափսոսում: Իսկ դուք, երևում է, շատ եք ափսոսում ձեր ձին: Ձեր տեղը լինեի, ես թամբը խաղի մեջ կդնեի ձիու դիմաց:

— Բայց նա չի համաձայնի մի թամբի վրա խաղալ:

— Դրեք երկուսն էլ, գրողը տանի, ես ձեզ պես եսասեր չեմ:

— Դուք կանեի՞ք այդ,— անվճռականորեն ասաց դ'Արտանյանը՝ իր կամքին հակառակ վարակվելով նրա վստահությունից:

— Պատվովս եմ երդվում, դա միակ քայլն է:

— Բայց, գիտե՞ք ինչ, ձիերը կորցնելուց հետո ինձ համար խիստ կարևոր է գոնե թամբերը պահել:

— Այդ դեպքում ձեր ադամանդը դրեք խաղի մեջ:

— Օ՛, դա ուրիշ բան է, ո՛չ մի դեպքում:

— Գրողը տանի,— ասաց Աթոսը:— Ես ձեզ կառաջարկեի Պլանշեին դնել խաղի մեջ, բայց որովհետև այդպիսի մի բան արդեն տեղի է ունեցել, անգլիացին երևի չի համաձայնի:

— Գիտե՞ք ինչ, սիրելի Աթոս,— ասաց դ'Արտանյանը,— ես վճռականապես գերադասում եմ ոչ մի բան ռիսկի չդնել:

— Ափսո՛ս,— սառն ասաց Աթոսը,— անգլիացու գրպանները լիքն են պիստոլներով: Տե՛ր իմ աստված, սիրտ արեք գոնե մի քայլ: Մի քայլն ի՛նչ է որ, մի ըռպեի բան:

— Իսկ եթե տարվե՞մ:

— Կտանե՛ք:

— Լավ, իսկ եթե տարվե՞մ:

— Է՛հ, թամբերը կտաք:

— Դե՛հ, լավ, ինչ կլինի՝ կլինի, մի քայլ կանենք,— ասաց դ՛Արտանյանը:

Աթոսը գնաց անգլիացուն որոնելու և գտավ ախոռում, որտեղ նա հիացմունքով դիտում էր թամբերը: Հարմար առիթ էր: Աթոսը առաջարկեց իր պայմանները, երկու թամբը մեկ ձիու դիմաց կամ հարյուր պիստոլի,— որն ուզենա: Անգլիացին արագ հաշվեց, երկու թամբը միասին երեք հարյուր պիստոլ արժեն: Նա սիրով համաձայնեց:

Դ՛Արտանյանը սրտի դողով զառերը նետեց: Կանգնեց երեք: Դ՛Արտանյանը սփրթնեց, և Աթոսը դրանից վախենալով բավարարվեց նրանով, որ ասաց.

— Լավ քայլ չէր, բարեկամս: Դուք, պարոն, ձիերը կստանաք իրենց լրիվ սարքով:

Անգլիացին ցնծության մեջ էր և նույնիսկ չուզեց զառերը խառնել. նա իր հաղթանակին այնքան էր վստահ, որ զառերը սեղանին նետեց առանց նրանց նայելու: Դ՛Արտանյանը երեսը շուռ էր տվել, որպեսզի իր սրտնեղությունը ծածկի:

— Ա՛յ քեզ բան,— ինչպես միշտ՝ հանգիստ խոսեց Աթոսը,— ի՛նչ բացառիկ քայլ, այսպիսի բան ես իմ կյանքում միայն չորս անգամ եմ տեսել. կանգնեց երկու:

Անգլիացին շուռ եկավ և զարմանքից քար կտրեց: Դ՛Արտանյանը շուռ եկավ և ուրախությունից քար կտրեց:

— Այո,— շարունակեց Աթոսը,— ընդամենը չորս անգամ եմ տեսել, մի անգամ պարոն դը Կրեկի մոտ, մի ուրիշ անգամ ինձ մոտ, իմ դղյակում... մի խոսքով, երբ ես դղյակ ունեի: Երրորդ անգամ տեսել եմ պրն դը Տրևիլի մոտ, երբ նա մեզ բոլորիս հաղթեց, և վերջապես չորրորդ անգամ մի պանդոկում, որտեղ ինքս էի նետում և տանուլ տվի հարյուր լուիդոն և ընթրիք:

— Ուրեմն, պարոն դ'Արտանյան, դուք ձեր ձին ե՞տ եք վերցնում,— հարցրեց անգլիացին:

— Հասկանալի է,— պատասխանեց դ'Արտանյանը:

— Ուրեմն չե՞մ կարող ետ շահել:

— Մենք պայմանավորվեցինք ետ շահելու համար չխաղալ, ինքներդ հիշում եք:

— Այդ ճշմարիտ է, ձին կհանձնվի ձեր ծառային:

— Մի բուպե,— ասաց Աթոսը,— ձեր թույլտվությամբ, պարոն, ես ուզում եմ մի խոսք ասել իմ բարեկամին:

— Խնդրեմ:

Աթոսը դ'Արտանյանին մի կողմ տարավ:

— Հը, ի՞նչ կա էլի,— հարցրեց դ'Արտանյանը,— ուզում եք, որ խաղը շարունակե՞մ:

— Ոչ, ես ուզում եմ, որ մտածեք:

— Ինչի՞ մասին:

— Դուք ուզում եք ձին ետ վերցնել, չե՞:

— Իհարկե:

— Միսալ կանեք: Ես լինեի՝ հարյուր պիստոլը կվերցնեի: Դուք հո գիտեք, որ թամբերը գրել եք ձիու կամ հարյուր պիստոլի դիմաց, որը ցանկանաք:

— Այո:

— Ես կվերցնեի հարյուր պիստոլը:

— Իսկ ես ձին կվերցնեմ:

— Կրկնում եմ՝ դուք սխալ կանեք: Ի՞նչ ենք անելու մենք մի ձին երկու հոգով: Հո ես չեմ կարող նստել ձեր գավակին, այդ դեպքում մենք նման կլինենք Էյմոնի երկու գավակներին[108], որոնք կորցրել էին իրենց եղբորը: Եվ ոչ էլ դուք կարող եք վիրավորել ինձ, ձին նստած ճեմել իմ կողքին, երբ ես ոտքով լինեմ: Ես առանց տատանվելու կվերցնեի հարյուր պիստոլը: Փարիզ հասնելու համար մեզ փող է հարկավոր:

— Ես շատ բարձր եմ գնահատում այդ ձին, Աթոս:

— Եվ իզուր, բարեկամս: Այն կարող է սայթաքել ու ոտքը կոտրել, կարող են ոտքերը ցավել, նա կարող է գարի ուտել այնպիսի մսուրից, որից խլախտով հիվանդ ձի է կերել, և ահա կկորչի քո ձին, ավելի ճիշտ՝ կկորչեն քո հարյուր պիստոլները: Տերը պետք է ձիուն կերակրի, այնինչ պիստոլներն իրենք են կերակրում տիրոջը:

— Բայց մենք ինչո՞վ տուն կգնանք:

— Մեր ծառաների ձիերով, գրողը տանի: Մեր տեսքից այնպես էլ ամեն մարդ կհասկանա, որ մենք հասարակ մարդ չենք:

— Լա՛վ տեսք կունենանք մենք այդ անպետք ձիերի վրա, երբ գնալիս լինենք Արամիսի և Պորտոսի կողքով, որոնք կշորորան իրենց հիանալի ձիերի վրա:

— Արամիսի և Պորտոսի՞, — գոչեց Աթոսը ծիծաղելով:

— Ի՞նչ կա որ, — հարցրեց դ'Արտանյանը, չհասկանալով Աթոսի ծիծաղի պատճառը:

— Ոչինչ, ոչինչ, շարունակենք մեր խոսակցությունը, — ասաց Աթոսը:

— Ուրեմն, ձեր կարծիքով...

— Պետք է վերցնել հարյուր պիստոլը, դ'Արտանյան: Հարյուր պիստոլով մենք մինչև ամսի վերջը քեֆի մեջ կլինենք: Մենք բոլորս էլ շատ հոգնած ենք, և վատ չէր լինի մի քիչ հանգստանալինք:

— Հանգստանա՛լ: Օ՛, ո՛չ, Աթոս, Փարիզ վերադառնալուն պես ես իսկոյն կսկսեմ որոնել այն անբախտ կնոջը:

— Առավել ևս: Մի՞ թե դուք կարծում եք, թե այդ գործում ձին այնքան օգտակար կլինի ձեզ, որքան զրնգուն ոսկե դրամները: Վերցրեք հարյուր պիստոլը, բարեկամս, վերցրեք հարյուր պիստոլը:

Դ'Արտանյանին հենց միայն մեկ պատճառաբանություն էր պակասում, որպեսզի համաձայներ: Վերջին պատճառաբանությունը նրան համոզիչ թվաց: Բացի այդ, նա վախենում էր, որ եթե շարունակի համառել, Աթոսի աչքում եսասեր կերևա: Եվ նա զիջեց ու որոշեց վերցնել հարյուր պիստոլը, որն իսկոյն անզլիացին վճարեց նրան:

Այժմ արդեն երկու ընկերներին ոչ մի բան չէր խանգարում մեկնել: Պանդոկապետի հետ հաշիվը փակեցին՝ բացի Աթոսի ձիուց տալով նաև վեց պիստոլ: Դ'Արտանյանն ու Աթոսը նստեցին Պլանշեի և Գրիմոյի ձիերը, իսկ ծառաները ճանապարհ ընկան ոտքով, գլխներին դրած տանելով նաև թամբերը:

Որքան էլ վատն էին ձիերը, այնուամենայնիվ նրանք շուտով անցան իրենց ծառաներից և առաջինը հասան Կրկեր: Դեռ հեռվից նրանք տեսան Արամիսին, որը տխուրտրտում նստել էր լուսամուտի առաջ, ինչպես հեքիաթի «Աննա քույրիկը» և նայում էր հորիզոնը ծածկող փոշու քուլաներին:

— Է՛յ, Արամի՛ս, ի՛նչ ես տնկվել այդտեղ,— ձայն տվին երկու ընկերները:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք, դ'Արտանյան ... այդ դո՞ւք եք, Աթոս,— ասաց երիտասարդը:— Ես նստել ու մտածում եմ, ինչպե՞ս անցողական է լավ բանն այս աշխարհում, և իմ անզլիական ձին, որ հենց նոր անհայտացավ փոշու ամպերի մեջ, այս աշխարհի անհաստատության կենդանի օրինակը դարձավ: Մեր ամբողջ կյանքը կարելի է արտահայտել երեք բառով. *Erat, est, fuit*[109]:

— Այլ խոսքով ասա՞ծ,— հարցրեց դ'Արտանյանը, որն արդեն սկսել էր իսկութունը հասկանալ:

— Այլ խոսքով ասած՝ ինձ խաբեցին, վաթսուն լուիդոր մի ձիու համար, որը նրա քայքից դատելով, մի ժամում կարող է հինգ լյո ճանապարհ վազել:

Դ'Արտանյանը և Աթոսը ծիծաղից թուլացան:

— Խնդրում եմ չբարկանաք ինձ վրա, սիրելի դ'Արտանյան,— ասաց Արամիսը,— գիտե՞ք, կարիքը օրենք չի ճանաչում: Բացի այդ, ես ինքս ամենից ավելի եմ տուժել, որովհետև այն անխիղճ միջնորդը ինձնից առնվազն հիսուն լուիդոր գողացավ: Ա՛յ, դուք ավելի տնտեսող մարդիկ եք. ինքներդ նստել եք ծառաների ձիերը, իսկ ծառաներին պատվիրել եք ձեր սքանչելի նժույզները բերել սանձից քաշելով, հանդարտ, շուտշուտ դադար տալով:

Այդ պահին մի ինչոր ֆուրգոն, որ մի քանի վայրկյան առաջ երևացել էր Ամիենի ճանապարհին, կանգ առավ պանդոկի առաջ, և նրանից դուրս եկան Պլանշեն ու Գրիմոն՝ թամբերը գլխներին բռնած: Ֆուրգոնը դատարկ Փարիզ էր վերադառնում, և ծառաները խոստացել էին վարձի փոխարեն ամբողջ ճանապարհին խմեցնել ֆուրգոնը քշողներին:

— Ինչպե՞ս թե,— զարմացավ Արամիսը նրանց տեսնելով:— Միայն թամբե՞րն են մնացել:

— Հիմա հասկանո՞ւմ եք,— հարցրեց Աթոսը:

— Բարեկամներս, դուք վարվել եք ճիշտ այնպես, ինչպես ես եմ արել: Ես էլ թամբը պահել եմ, ինքս էլ չգիտեմ ինչու: Է՛յ, Բագե՛ն, վերցրեք իմ նոր թամբը և դրեք այս պարոնների թամբերի կողքին:

— Իսկ դուք ինչպե՞ս ազատվեցիք ձեր քահանաներից,— հարցրեց դ'Արտանյանը:

— Հետևյալ օրը ես նրանց ճաշի հրավիրեցի. ի դեպ, այստեղ հիանալի գինի կա: Եվ նրանց այնպես խմեցրի, որ կյուրեն ինձ արգելեց բաժանվել զինվորական մարդկանցից, իսկ ճիզվիտը խնդրեց միջնորդել, որ իրեն էլ հրացանակիր ընդունեն:

— Բայց միայն առանց դիսերտացիայի,— գոչեց դ'Արտանյանը:— Առանց դիսերտացիայի, ես պահանջում եմ դիսերտացիան վերացնել:

— Այն օրից,— շարունակեց Արամիսը,— իմ կյանքը շատ հաճելի է անցնում: Ես սկսել եմ միավանկ տողերով պոեմ գրել: Դա բավական դժվար բան է, բայց ամեն բանի գլխավոր արժանիքը հենց դժվարությունն է: Բայց բովանդակությունը սիրային է, ես ձեզ կկարդամ առաջին երգը, դա չորս հարյուր տողից է բաղկացած և կարդացվում է մեկ րոպեում:

— Գիտե՞ք ինչ, սիրելի Արամիս,— ասաց դ'Արտանյանը լատիներեն չէր սիրում,— դժվարության արժանիքին ավելացրեք հակիրճության արժանիքը, և դուք կարող եք համոզված լինել, որ ձեր պոեմը առնվազն երկու արժանիք կունենա:

— Բացի դրանից,— շարունակեց Արամիսը,— նա ազնիվ կրքերով է տոգորված, դուք ինքներդ կհամոզվեք դրանում: Այդպես ուրեմն, բարեկամներս, նշանակում է՝ մենք Փարիզ ենք վերադառնում: Բրա՛վո: Ես պատրաստ եմ: Մենք նորից կտեսնենք մեր պանծալի Պորտոսին, ես ուրախ եմ: Չեք կարող երևակայել, թե ինչպես էի կարոտում ես այդ պարզամիտ հսկային: Ա՛յ, նա չի ծախի իր ձին, թեկուզ մի ամբողջ թագավորություն առաջարկեն նրան: Կուզենայի շուտ տեսնել, թե որքան գեղեցիկ է նա իր նծույզի վրա, այն էլ նոր թամբով նծույզի: Հավատացած եմ, որ նա նման կլինի Մեծ Մոդոլին[110]:

Բարեկամները մի ժամ դադար առան, որպեսզի ձիերը հանգստանան: Արամիսը պանդոկապետի հետ հաշիվը փակեց, Բազենին ֆուրգոն նստեցրեց իր ընկերների հետ, և բոլորը ճանապարհ ընկան Պորտոսի մոտ:

Պորտոսն արդեն առողջացել էր, այնքան գունատ չէր, որքան դ'Արտանյանի առաջին այցելության ժամանակ և նստած էր մի սեղանի առաջ, որի վրա չորս հոգու ուտելիք կար, թեև ինքը մենակ էր: Ճաշը բաղկացած էր գերազանց պատրաստված մսեղենից, ընտիր գինիներից և սքանչելի մրգերից:

— Բարի գալուստ, պարոնայք,— ասաց Պորտոսը տեղից վեր կենալով,— լավ ժամանակին եկաք, ես հենց նոր եմ սեղան նստել, և դուք կճաշեք ինձ հետ:

— Օհո՛,— ասաց դ'Արտանյանը,— կարծես այս շշերը նրանցից չեն, որ Մուշկետոնը որսում էր իր պարանով: Ահա այս էլ հորթի միս, այս էլ ֆիլե...

— Ես կազդուրվում եմ...— ասաց Պորտոսը,— ես, գիտե՞ք, կազդուրվում եմ: Ախր ոչ մի բան այնքան չի մաշում մարդուն, որքան այդ անիծյալ հողախախտումը: Իսկի պատահե՞լ է, որ դուք ոտքի հողախախտում ստանաք, Աթոս:

— Բայց հիշում եմ, որ Ֆերու փողոցում տեղի ունեցած ընդհարման ժամանակ ես սուսերով վիրավորվեցի և այդ վերքից երկուս ու կես շաբաթ հետո ինձ զգում էի ճիշտ այնպես, ինչպես դուք հիմա:

— Բայց կարծեմ այս ճաշը միայն ձեզ համար չի՞ նախատեսվել, սիրելի Պորտոս,— հարցրեց Արամիսը:

— Ոչ,— ասաց Պորտոսը:— Ես սպասում էի մոտերքում ապրող մի քանի ազնվականի, բայց նրանք հենց նոր մարդ էին ուղարկել ասելու, որ չեն գալու: Դուք կփոխարինեք նրանց, և ես դրանից ոչինչ չեմ կորցնի: Է՛յ, Մուշկետո՛ն, աթոռներ բեր և շշերի թիվը կրկնապատկիր:

— Գիտե՞ք թե մենք ինչ ենք ուտում հիմա,— հարցրեց Աթոսը մի քանի բուլե հետո:

— Ինչպես չէ,— ասաց դ'Արտանյանը:— Ինչ վերաբերում է ինձ, ես ուտում եմ գիրացրած հորթի միս՝ կանկարով և ուղեղով համեմված:

— Իսկ ես՝ ոչխարի ֆիլե,— ասաց Պորտոսը:

— Իսկ ես՝ հավի կուրծք,— ասաց Արամիսը:

— Դուք բոլորդ էլ սխալվում եք, պարոնայք,— լրջորեն առարկեց Աթոսը:— Դուք ուտում եք ձիու միս:

— Դե լա՛վ,— ասաց դ'Արտանյանը:

— Ձիու մի՛ս,— կրկնեց Արամիսը՝ զզվանքով դեմքը ծռմռելով:

Միայն Պորտոսն էր, որ ոչինչ չպատասխանեց:

— Այո, ձիու միս: Ճիշտ չէ՞, Պորտոս, որ մենք ձիու միս ենք ուտում: Եվ այն էլ գուցե թե թամբն էլ հետը:

— Ոչ, պարոնայք, ես թամբը պահել եմ,— ասաց Պորտոսը:

— Իսկապես, մենք բոլորս էլ մի պտուղ ենք,— ասաց Արամիսը:— Ասես պայմանավորված լինենք:

— Ի՛նչ արած,— ասաց Պորտոսը,— այդ ձին անհարմարության զգացում էր առաջացնում իմ հյուրերի մեջ, և ես չէի ուզում ստորացնել նրանց:

— Մանավանդ ձեր դքսուհին դեռևս հանքային ջրերումն է, չէ՞,— հարցրեց դ'Արտանյանը:

— Դեռևս այո,— պատասխանեց Պորտոսը:— Եվ այն էլ, գիտե՞ք, իմ ձին այնպես էր դուր եկել նահանգապետին— դա մեկն է այն պարոններից, որոնց ես այսօր սպասում էի ճաշին— որ ես նրան տվի:

— Նրան տվի՞ր,— գոչեց դ'Արտանյանը:

— Օ՛, աստված իմ: Այո, հենց այդպես, տվի,— ասաց Պորտոսը,— որովհետև ձին անվիճելիորեն արժեր հարյուր հիսուն լուիդոր, իսկ այն գծուծ մարդը ութսունից ավելի վճարել չէր համաձայնում:

— Առանց թամբի՞,— հարցրեց Արամիսը:

— Այո, առանց թամբի:

— Նկատեցեք, պարոնայք,— ասաց Աթոսը,— որ Պորտոսը, ինչպես միշտ, մեզնից ավելի ձեռնտու գործ է բռնել:

Հնչեցին ծիծաղի բարձրագոյ պոռթկումներ, որոնք բոլորովին շփոթեցրին խեղճ Պորտոսին, բայց նրան բացատրեցին այդ ծիծաղի պատճառը, և նա էլ, ինչպես միշտ, միացավ նրան աղմուկով:

— Ուրեմն մենք բոլորս փող ունե՞նք,— հարցրեց դ'Արտանյանը:

— Բացի ինձնից,— առարկեց Աթոսը,— Արամիսի իսպանական գինին ինձ այնպես դուր եկավ, որ ես պատվիրեցի մեր ծառաների ֆուրգոնին բարձել մի վաթսուն շիշ, և այդ խիստ թեթևացրեց իմ քսակը:

— Իսկ ես,— ասաց Արամիսը,— երևակայեցեք, ես մինչև վերջին սուն տվի Մոնդիդիեի եկեղեցուն ու Ամիենի վանքին, և բացի մի քանի անհետաձգելի պարտքեր վճարելուց, նաև պատարագներ պատվիրեցի, պարոնայք, որ պետք է կատարեն ինձ և ձեզ համար և որոնք, ես հավատացած եմ, մեզ բոլորիս օգուտ կբերեն:

— Իսկ իմ հոգախախտո՞ւմը,— ասաց Պորտոսը:— Դուք կարծում եք այդ հոգախախտումն ինձ վրա ոչինչ չնստե՞ց: Էլ չեմ խոսում Մուշկետոնի վերքի մասին, որի համար ես ստիպված էի բժիշկ հրավիրել օրական երկու անգամ և այն էլ նա կրկնակի վարձ էր ստանում այն պատճառով, որ այդ անասուն Մուշկետոնը վերք էր ստացել այնպիսի տեղից, որը սովորաբար ցույց են տալիս միայն բժշկին: Ես նրան զգուշացրել եմ, որ այսուհետև այդպիսի վերք չստանա:

— Դե՛հ, ինչ արած,— ասաց Աթոսը՝ նշանակալից նայելով դ'Արտանյանին ու Արամիսին,— տեսնում եմ, որ դուք հիանալի եք վարվել խեղճ տղայի հետ: Բարեսիրտ տիրոջն այդպես էլ վայել է:

— Կարձ ասած,— շարունակեց Պորտոսը,— իմ բոլոր ծախսերը վճարելուց հետո ինձ մոտ էլի մոտ երեսուն էքյու կմնա:

— Իսկ ինձ մնացել է մոտ տասը պիստոլ,— ասաց Արամիսը:

— Ուրեմն, երևում է, մենք հարուստ մարդիկ ենք ձեր համեմատությամբ,—
ասաց Աթոսը:— Ինչքա՞ն է մնացել ձեր հարյուր պիստոլից, դ'Արտանյան:

— Հարյուր պիստոլի՞ց: Ամենից առաջ այդ հարյուր պիստոլից հիսունը տվել եմ
ձեզ:

— Մի՞ թե:

— Չե՞ք հիշում, գրողը տանի:

— Ա՛խ, այո, հիշեցի, միանգամայն ճիշտ է:

— Վեց պիստոլ վճարել եմ պանդոկապետին:

— Ի՛նչ անասունն է այդ պանդոկապետը: Ինչո՞ւ տվիք նրան վեց պիստոլ:

— Ախր դուք ինքներդ ասացիք, որ վեց պիստոլ տամ նրան:

— Ճշմարիտ ես ասում, ես չափից ավելի բարեսիրտ մարդ եմ: Կարճ ասած՝
որքա՞ն է մնացորդը:

— Քսանհինգ պիստոլ,— ասաց դ'Արտանյանը:

— Իսկ ինձ մոտ... — ասաց Աթոսը գրպանից ինչոր մանրուք հանելով,— ինձ
մոտ...

— Ձեզ մոտ ոչինչ չկա...

— Իսկապես այնքան քիչ է, որ նույնիսկ չարժե խառնել ընդհանուր գումարին:

— Հիմա եկեք հաշվենք, որքան ունենք բոլորս միասին: Պորտո՞ւ:

— Երեսուն էքյու:

— Արամի՞ս:

— Տասը պիստոլ:

— Դո՞ւք, դ՛Արտանյան:

— Քսանհինգ:

— Որքա՞ն է ընդամենը,— հարցրեց Աթոսը:

— Չորս հարյուր յոթանասունհինգ լիվր,— ասաց դ՛Արտանյանը, որը հաշվում էր Արքիմեդի պես:

— Փարիզ հասնելուց հետո մեզ էլի չորս հարյուր լիվրից ավելի գումար մնացած կլինի,— ասաց Պորտոսը,— չհաշված թամբերը:

— Իսկ ի՞նչ կանենք էսկադրոնային ձիերը,— հարցրեց Արամիսը:

— Ի՛նչ կա որ: Մեր ծառաների չորս ձիերը կդարձնենք երկու ձի տերերի համար և խաղի մեջ կդնենք դրանք: Չորս հարյուր լիվրը կես ձի կդառնա ոտքով գնացողներից մեկի համար, հետո մենք թափ կտանք մեր գրպանները և մնացորդները կտանք դ՛Արտանյան, նա թեթև ձեռք ունի, կգնա խաղալու առաջին իսկ խաղատանը, այ թե ինչ:

— Դեհ, եկեք ճաշենք,— ասաց Պորտոսը,— ճաշը պաղում է:

Եվ այսպես, ապագայի նկատմամբ հանգիստ լինելով, չորս ընկերները փառավորապես ճաշեցին, որի մնացորդները տվին պ.պ. Մուշկետոնին, Բագենին, Պլանշեին և Գրիմոյին...

Փարիզում դ՛Արտանյանին սպասում էր պարոն դը Տրևիլի նամակը, որը տեղեկացնում էր, թե նրա խնդիրը բավարարված է, և թագավորը ողորմաձաբար թույլատրում է նրան մտնելու հրացանակիրների շարքերը:

Քանի որ հենց այս էր այն ամենը, ինչ երազում էր դ՛Արտանյանը, չխուսելով, իհարկե, տիկին Բոնասիեին գտնելու ցանկության մասին, ապա նա ցնծությամբ

շտապեց իր ընկերների մոտ, որոնցից բաժանվել էր ընդամենը մի կես ժամ առաջ և նրանց գտավ խիստ տխուր ու մտախոհ վիճակում: Երեքն էլ խորհրդի էին հավաքվել Աթոսի մոտ, իսկ այդ նշան էր, որ դրությունը լուրջ է:

Պրն դը Տրևիլը հենց նոր նրանց հայտնել էր, որ նորին մեծությունը հաստատ որոշել է ռազմական գործողությունները սկսել մայիսի մեկին, ուստի նրանք պետք է անհապաղ ձեռք բերեն ամբողջ անհրաժեշտ հանդերձանքը:

Չորս փիլիսոփաները բոլորովին շփոթված իրար էին նայում, երբ խոսքը կարգապահությանն էր վերաբերում, պրն դը Տրևիլը կատակ անել չէր սիրում:

— Իսկ որքա՞ն կարժենա այդ հանդերձանքը,— հարցրեց դ'Արտանյանը:

— Օ՛, դրությունը շատ վատ է,— ասաց Արամիսը:— Մենք հենց նոր հաշիվ արինք, այն էլ շատ խնայողաբար, սպարտացու պես, բայց և այնպես պարզվեց, որ յուրաքանչյուրիս առնվազն հազար հինգ հարյուր լիվր է հարկավոր:

— Հազար հինգ հարյուրը բազմապատկած չորսով կանի վեց հազար լիվր,— ասաց Աթոսը:

— Ինձ թվում է,— ասաց դ'Արտանյանը,— որ եթե մեզնից յուրաքանչյուրը հազար լիվր ունենա... ճիշտ է, ես հաշվում եմ ո՛չ որպես սպարտացի, այլ որպես դատախազ[111]...

«Դատախազ» խոսքի վրա Պորտոսը նկատելիորեն աշխուժացավ:

— Գիտե՞ք ինչ,— ասաց նա,— ես մի ծրագիր ունեմ:

— Դա էլ մի բան է: Ես ծրագրի ստվեր էլ չունեմ,— ասաց Աթոսը:— Ինչ վերաբերում է դ'Արտանյանին, պարոնայք, ապա մեր շարքերը մտնելու երջանկությունը նրան զրկել է բանականությունից: Հազար լի՛վր: Հավատացնում եմ ձեզ, որ հենց միայն ինձ հարկավոր է երկու հազար:

— Չորս անգամ երկու՝ ութ,— վրա բերեց Արամիսը:— Ուրեմն մեր հանդերձավորման համար հարկավոր է ութ հազար լիվր: Թեև, ճիշտ է, թամբեր մենք արդեն ունենք:

— Եվ բացի դրանից,— ասաց Աթոսը մի պահ սպասելով, մինչև դ'Արտանյանը, որը գնում էր պրն դը Տրևիլին շնորհակալություն հայտնելու, դուռը ծածկի իր հետևից,— և բացի դրանից, այն սքանչելի աղամանդը, որ շողշողում է մեր ընկերոջ մատին: Գրողը տանի: Դ'Արտանյանն այնքան լավ ընկեր է, որ հազիվ թե իր ընկերներին դժվարին դրության մեջ թողնի, երբ իր մատին այդպիսի մի գանձ է կրում:

XXIX. Չանքեր հանդերձավորման համար

Ինքնին հասկանալի է, որ չորս ընկերներից ամենից ավելի մտահոգված էր դ'Արտանյանը, թեև որպես գվարդիական, նրա հանդերձավորումն ավելի դյուրին էր, քան պարոն հրացանակիրներինը, որոնք նշանավոր ծագում ունեցող մարդիկ էին: Բայց մեր երիտասարդ գասկոնացին, որը, ինչպես ընթերցողն էլ կարող է նկատած լինել, աչքի էր ընկնում իր հեռատեսությամբ և համարյա ժլատությամբ, միննույն ժամանակ (մարդ ինչպե՞ս բացատրի այսպիսի հակասությունը) համարյա ավելի շատ սնափառ էր, քան նույնիսկ Պորտոսը: Ճիշտ է, բացի իր սնափառությունը բավարարելու հոգուերից դ'Արտանյանը միաժամանակ ուրիշ անհանգստություն էլ ուներ, որ ավելի քիչ եսասիրական բնույթ ուներ: Չնայած տիկին Բոնասիեի մասին արված բոլոր հարցուփորձերին, նրան չհաջողվեց որևէ տեղեկություն իմանալ:

Պրն դը Տրևիլը տիկին Բոնասիեի մասին պատմել էր թագուհուն: Թագուհին չէր իմանում, թե որտեղ է արդուզարդի վաճառականի երիտասարդ կինը և խոստացել էր որոնումներ սկսել, սակայն այդ խոստումը շատ անորոշ բան էր և ամեննին չէր հանգստացնում դ'Արտանյանին:

Աթոսը իր սենյակից դուրս չէր գալիս: Նա որոշել էր ոչ մի քայլ չանել հանդերձանք ձեռք բերելու համար:

— Մենք դեռ երկու շաբաթ ժամանակ ունենք,— ասում էր նա իր ընկերներին,— եթե մինչև այդ երկու շաբաթվա վերջը ես ոչ մի բան չգտնեմ կամ, ավելի ճիշտ՝ ոչ մի բան ինձ չգտնի, ապա ես, որպես իսկական կաթոլիկ, որը չի ցանկանում գնդակը խփել իր ճակատին, կռիվ կսկսեմ նորին սրբազնության չորս գվարդիականի կամ ութ անգլիացու հետ և կկոպեմ այնքան, մինչև որ սրանցից մեկն ու մեկը կսպանի ինձ, մի

բան, որ նկատի ունենալով նրանց թիվը միանգամայն անխուսափելի է: Այն ժամանակ մարդիկ կասեն, որ ես թագավորի համար եմ մեռել, հետևապես ես իմ պարտքը կատարած կլինեմ առանց հանդերձանքի կարիք ունենալու:

Պորտոսը ձեռքերը մեջքին դրած քայլում էր սենյակում, գլուխն օրորում ու կրկնում.

— Ես իմ ծրագիրը կիրականացնեմ:

Արամիսը՝ մռայլ և մազերն անփույթ սանրած՝ ոչ սի խոսք չէր ասում:

Այս բոլոր չարագուշակ նշանները պարզ ցույց էին տալիս, որ ընկերների խմբում լիակատար վիատություն էր թագավորում:

Ծառաներն էլ իրենց հերթին Իպոլիտի[112] մարտական ձիերի նման բաժանում էին իրենց տերերի տխուր վիճակը: Մուշկետոնը պաքսիմատ էր չորացնում, Բազենը, որ միշտ աչքի էր ընկնում բարեպաշտական հակումներով, եկեղեցուց դուրս չէր գալիս: Պլանշեն ճանճերն էր հաշվում, իսկ Գրիմոն, որին նույնիսկ ընդհանուր վիատությունը չէր կարող ստիպել խախտել իր տիրոջ պատվիրած լռությունը, այնպես էր հառաչում, որ անգամ քարի գուրթը կարող էր շարժել:

Երեկ ընկերները— որովհետև, ինչպես մենք վերը ասացինք, Աթոսը երդվել էր ոչ մի քայլ չանել հանդերձավորման համար,— այսպես ուրեմն, երեք ընկերները տանից դուրս էին գալիս վաղ առավոտյան և վերադառնում էին շատ ուշ: Նրանք թափառում էին փողոցներում և դիտում սալահատակի ամեն մի քարը, ասես նայում էին, թե որևէ մի անցորդ չի՞ զցել իր քսակը:

Նրանք ամեն մի հանդիպած բանի այնպես ուշադիր էին նայում, թվում էր, թե ինչոր մարդ են որոնում: Իսկ երբ հանդիպում էին իրար, հուսահատական հայացքներ էին փոխանակում, ասես հարցնում էին. «Է՛, ոչինչ չե՞ս գտել»:

Սակայն Պորտոսը, որն առաջինն էր կազմել իր ծրագիրը և շարունակում էր համառորեն մտածել նրա մասին, առաջինն էլ սկսեց այդ ծրագրի կենսագործումը: Նա, մեր այդ պատվարժան Պորտոսը, եռանդուն մարդ էր: Մի անգամ դ՛Արտանյանը նկատելով, որ Պորտոսը գնում է դեպի Սեն Լե եկեղեցին, ասես մի ինչոր մղումով

հետևեց նրան: Մուրբ վանքը մտնելուց առաջ Պորտոսը բեղերը ոլորեց և սուր մորուքը շոյեց, մի բան, որ ցույց էր տալիս նրա ամենամարտաշունչ մտադրությունը: Դ'Արտանյանը գնաց նրա հետևից, աշխատելով աչքին չերևալ: Պորտոսը հենվեց մի սյան: Դ'Արտանյանը, աննկատ մնալով նրանից, հենվեց նույն սյունին, բայց հակառակ կողմից:

Այդ ժամանակ քահանան հենց քարոզ էր կարդում, և եկեղեցին լիքն էր մարդկանցով: Օգտվելով այդ հանգամանքից՝ Պորտոսն սկսեց գաղտագողի դիտել կանանց: Մուշկետոնի ջանքերի շնորհիվ հրացանակրի արտաքինն ամեննին չէր արտահայտում այն վիատությունը, որ տիրապետում էր նրա հոգուն: Ճիշտ է, գլխարկը մի քիչ մաշված էր, փետուրը մի փոքր խունացած, հագուստը մի քիչ գունաթափ և ժանյակները խիստ քրքրված, սակայն կիսախավարի մեջ այդ բոլոր մանրամասնությունները կորչում էին, և Պորտոսն էլի նույն գեղեցկատես Պորտոսն էր:

Դ'Արտանյանի և Պորտոսի հենված սյունից ամենից ավելի մոտիկ գտնվող նստարանին դ'Արտանյանը տեսավ մի չափահաս գեղեցկուհու, սև գլխարկով, ինքը մի փոքր դեղնած էր, ոսկրոտ, բայց գլուխը պահում էր բարձր՝ մեծամտորեն: Պորտոսի հայացքը գաղտնաբար կանգ առավ այդ տիկնոջ վրա, ապա սահեց առաջ, դեպի եկեղեցու խորքը:

Տիկինն էլ իր հերթին կարմրատակելով՝ շուտշուտ հայացքներ էր զգում Պորտոսի վրա, որի աչքերը սկսեցին թափառել եկեղեցում: Ակներն էր, որ նրա այդ վարմունքը կպչում էր սև գլխարկավոր տիկնոջ սրտին, նա արյունոտելու չափ կծում էր շրթունքները, քորում էր քթի ծայրը և հուսահատ շուռումուռ գալիս նստարանի վրա:

Այս բանը նկատելով՝ Պորտոսը նորից բեղերը ոլորեց, կրկին անգամ մորուքը շոյեց և սկսեց նշաններ անել բեմի մոտ նստած մի տիկնոջ, որը ոչ միայն գեղեցիկ էր, այլև, ըստ երևույթին, նշանավոր տոհմից էր, որովհետև նրա հետևում կանգնած էին մի նեգր, որը նրա ծնրադրության բարձն էր բերել, և մի սպասուհի, որը ձեռքին ուներ աղոթագրքի տոպրակը, որի վրա ասեղնագործված էր մի զինանիշ:

Սև գլխարկավոր տիկինը հետևեց Պորտոսի հայացքին և տեսավ, որ այդ հայացքը կանգ է առնում թավշակար բարձ ունեցող տիկնոջ վրա, որի հետևում կանգնած էին նեգրն ու սպասուհին:

Մինչդեռ Պորտոսը վարպետ խաղ էր խաղում. նա աչքով էր անում, մատները հպում էր շուրթերին, սպանիչ ժպիտներ էր ուղարկում, որոնք իրականում սպանում էին դեպի նա շուռ եկած գեղեցկուհուն:

Վերջապես իր կրծքին խփելով, ասես «*mea culpa*»[113] արտասանելով՝ տիկինը այնպիսի մի բարձրաձայն «հըմ» արձակեց, որ բոլորը, նույնիսկ կարմիր բարձավոր տիկինը, շուռ եկան նրա կողմը: Պորտոսը կարողացավ իրեն զսպել. նա ամեն ինչ հասկացավ, բայց խուլ ձևացավ:

Կարմիր բարձավոր տիկինը իսկապես շատ գեղեցիկ էր և ուժեղ տպավորություն գործեց սև գլխարկավոր տիկնոջ վրա, որը ի դեմս նրա իսկապես վտանգավոր ախոյան էր տեսնում, Պորտոսի վրա ևս, որը գտնում էր, որ նա շատ ավելի գեղեցիկ է սև գլխարկավոր տիկնոջից, դ'Արտանյանի վրա ևս, որը ճանաչեց, որ դա հենց այն տիկինն է, որին ինքը տեսել էր Մենգում, Կալեում ու Դուվրում և որին իրեն հալածող սպիավոր մարդն անվանում էր միլեդի:

Աչքը չհեռացնելով կարմիր բարձավոր տիկնոջից, դ'Արտանյանը շարունակում էր հետևել Պորտոսի շարժումներին, որը շատ էր հետաքրքրում նրան: Նա մտածեց, որ սև գլխարկավոր տիկինը հենց ինքը՝ Արջի փողոցում ապրող դատախազի կինն է, մանավանդ, որ Սեն Լե եկեղեցին առանձնապես հեռու չէր այնտեղից:

Հետագա հետևություններում՝ դ'Արտանյանը նաև մտածեց, որ Պորտոսը ուզում է դատախազի կնոջից վրեժ լուծել Շանտիլիեում կրած իր պարտության համար, երբ այդ կինն այնպիսի համառություն ցուցաբերեց իր քսակի նկատմամբ:

Սակայն դ'Արտանյանը նկատեց նաև, որ ոչ ոք, վճռականապես ոչ ոք չէր արձագանքում Պորտոսի սիրազեղ հայացքներին: Այդ բոլորը միայն ցնորք էին ու պատրանք, բայց մի թե իսկական սիրո, իսկական խանդի համար գոյություն ունի այլ իրականություն, քան պատրանքն ու ցնորքն է:

Քարոզը վերջացավ: Դատախազի կինը գնաց դեպի սուրբ մեռնի սկիհը: Պորտոսը նրա առաջն անցավ և փոխանակ մատը խրելու, ամբողջ ձեռքը խրեց սկիհի մեջ: Դատախազի կինը ժպտաց, կարծելով թե Պորտոսն իր համար է անում այդ, բայց նրան սպասում էր մի անակնկալ ու դաժան հիասթափություն, երբ տիկինը նրանից մի երեք քայլ էր հեռու, Պորտոսը շուտ եկավ և հայացքը հառեց կարմիր բարձավոր տիկնոջ վրա, որը տեղից վեր էր կացել և այժմ մոտենում էր նեզրի և սպասուհու ուղեկցությամբ:

Երբ կարմիր բարձավոր տիկինը արդեն Պորտոսի կողքին էր, վերջինս սկիհից հանեց իր մեռնաթաթախ ձեռքը: Չքնաղ տիկինը իր քնքուշ թաթիկը դիպրեց Պորտոսի ահագին ձեռքին, ժպտաց, երեսին խաշ հանեց և դուրս գնաց եկեղեցուց:

Այդ չափից դուրս էր. դատախազի կինն այլևս չէր կասկածում, որ այդ տիկնոջ և Պորտոսի միջև սիրային կապ կա: Եթե նա մի նշանավոր տիկին լիներ, կուշաթափվեր, բայց նա միայն դատախազի կին էր և բավարարվեց նրանով, որ իր ցասումը զսպելով՝ հրացանակրին ասաց.

— Ա՛խ, ա՛յ թե ինչ, պարոն Պորտոս, նշանակում է դուք այլևս ինձ մեռն չե՞ք առաջարկում:

Նրա ձայնի վրա Պորտոսը ցնցվեց, ինչպես մի մարդ, որն արթնանում է հարյուրամյա քնից:

— Տի... տիրուհի՛,— գոչեց նա:— Այդ դո՞ւք եք: Ինչպե՞ս է ձեր ամուսինը, ամենահարգելի պարոն Կոկնարը: Ի՛նչ է, էլի առաջվա պես ժլա՞տն է: Այդ որտե՞ղ են եղել իմ աչքերը: Ինչպե՞ս է եղել, որ երկու ժամ տևող քարոզի ընթացքում ես չեմ նկատել ձեզ:

— Ես նստած էի ձեզնից երկու քայլի վրա, պարոն,— պատասխանեց դատախազի կինը,— բայց դուք ինձ չնկատեցիք, որովհետև աչք չէիք կտրում այն գեղեցիկ տիկնոջից, որին հենց նոր մեռն մատուցեցիք:

Պորտոսը շփոթված ձևացավ:

— Ա՛խ, ա՛յ թե ինչ,— ասաց նա,— դուք այդ տեսա՞ք...

— Կույր պետք էր լինել չտեսնելու համար:

— Այո,— անփութորեն ասաց Պորտոսը,— դա մի դքսուհի է, իմ բարեկամուհին: Իր ամուսնու խանդոտության պատճառով մեզ համար շատ դժվար է հանդիպել իրար, և ահա ինձ իմաց է տվել, որ այսօր գալու է այս խղճուկ եկեղեցին, այսպիսի մի խուլ անկյուն, միայն նրա համար, որ կարողանա ինձ տեսնել:

— Պարոն Պորտոս,— ասաց դատախազի կինը,— արդյոք այնքան բարի չե՞ք լինի, որ մի հինգ րոպեով ձեր թևը տաք ինձ: Ես ուզում էի խոսել ձեզ հետ:

— Միրով, տիրուհիս,— պատասխանեց Պորտոսը աննկատելի աչքով անելով ինչպես մի խաղամուկ, որը պատրաստվում է մի ճարպիկ քայլ անելու:

Այդ րոպեին նրանց կողքով անցավ դ'Արտանյանը, որը հետևում էր միլեդիին: Նա նայեց Պորտոսին և նկատեց նրա հաղթական հայացքը:

«Էհե՛,— ինքն իրեն մտածեց նա՝ անելով մի հետևություն, որ լիովին համապատասխանում էր այդ թեթևամիտ դարաշրջանին հատուկ զարմանալի թեթև բարքերի ոգուն,— չգիտեմ ով ինչպես, բայց Պորտոսն անպայման նշանակված ժամանակին հանդերձավորված կլինի»:

Հնազանդվելով դատախազի կնոջ ձեռքսեղմումին, ինչպես մակույկն է հնազանդվում դեկին, Պորտոսը հասավ Մեն Մազլուար վանքի բակը, որը երկու կողմերից ցանկապատված մի առանձնացած վայր էր: Ցերեկն այնտեղ կարելի էր տեսնել միայն մուրացկանների, որոնք ինչոր բան էին ծամում, և մեկ էլ խաղացող երեխաների:

— Ա՛խ, պարոն Պորտոս,— գոչեց դատախազի կինը, համոզվելով, որ բացի այդ անկյան մշտական հաճախորդներից, ուրիշ ոչ ոք չի կարող տեսնել ու լսել նրանց,— ա՛խ, պարոն Պորտոս, դուք երևի սրտեր որսացող սոսկալի մարդ եք:

— Ե՛ս, տիրուհի,— հարցրեց Պորտոսը կուրծքը դուրս զցելով:— Ինչո՞ւ եք այդպես կարծում:

— Հապա այն նշանները, որ դուք հենց նոր անում էիք, հապա մեռնո՞ւր: Ո՞վ է այդ տիկինը, որի հետ նեգր և սպասուհի կային: Երևի առնվազն իշխանուհի է նա:

— Մխալվում եք,— պատասխանեց Պորտոսը,— նա ընդամենը դքսուհի է:

— Իսկ սուրհանդակը, որ սպասում էր նրան մուտքի մոտ, իսկ կառեթը, շքեղ հագուստով կառապանը, որը տեղում նստած նրան էր սպասում:

Պորտոսը չէր նկատել ո՛չ սուրհանդակին, ո՛չ կառեթը, բայց տիկին Կոկնարը կանացի խանդոտ հայացքով ամեն ինչ տեսել էր:

Պորտոսն ավստասց, որ կարմիր բարձավոր տիկնոջը միանգամից իշխանուհի չի անվանել:

— Ա՛խ, պարոն Պորտոս,— հառաչանքով շարունակեց դատախազի կինը,— ձեզ երես են տվել գեղեցիկ կանայք:

— Դուք ինքներդ էլ հասկանում եք,— պատասխանեց Պորտոսը,— որ այնպիսի արտաքինով, ինչպիսին շնորհել է ինձ բնությունը, ես սիրային արկածների պակասություն չեմ ունենա:

— Օ՛, աստված իմ, ի՛նչ մոռացկոտ են տղամարդիկ,— գոչեց դատախազի կինը աչքերը երկինք գցելով:

— Այնուամենայնիվ այնքան մոռացկոտ չեն, որքան կանայք,— պատասխանեց Պորտոսը:— Այ ես... համարձակորեն կարող եմ ասել, տիրուհի, որ ձեր գոհը դարձա, երբ վիրավոր, մեռնում էի բժիշկների կողմից լքված, երբ ես, նշանավոր տոհմի շառավիղս, հավատալով ձեր բարեկամությանը, քիչ մնաց պիտի մեռնեի նախ՝ վերքից, ապա՝ քաղցից, ընկած լինելով Շանտիլիեի աղքատիկ հյուրանոցում, մինչդեռ դուք պատասխանի էլ չարժանացրիք իմ բոցաշունչ նամակները, որ ես գրում էի ձեզ:

— Լսեցեք ինձ, պարոն Պորտոս...— մրմնջաց դատախազի կինը, զգալով, որ համեմատած այն ամենի հետ, ինչպես վարվում էին ամենաանվանի տիկիները, ինքն իրոք մեղավոր է եղել:

— Ես, որ ձեր պատճառով զոհաբերեցի բարոնուհի դր...

— Ես այդ գիտեմ:

— ...կոմսուհի դր...

— Օ՛, աստված իմ, Պորտոս, խնայեցեք ինձ:

— ...դքսուհի դր...

— Պարոն Պորտոս, մեծահոգի եղեք:

— Լավ, տիրուհի, ես լքում եմ:

— Բայց, ախր, իմ ամուսինը վարկի մասին լսել անգամ չի ուզում:

— Տիկին Կոկնար,— ասաց Պորտոսը,— հիշեցեք ձեր առաջին նամակը, որ դուք գրել էիք ինձ և որն ընդմիջտ տպավորվել է իմ հիշողության մեջ:

Դատախազի կինը խորը հառաչանք արձակեց:

— Բանն այն է, որ դուք իսկապես խիստ մեծ գումար էիք խնդրել:

— Տիկին Կոկնար, ես ձեզ նախապատվությունը տվեցի: Բավական էր, որ գրեի դքսուհի դր... բայց ես նրա անունը չեմ տա, որովհետև միշտ խնայում եմ կնոջ պատիվը: Մի խոսքով, բավական էր, որ ես նրան գրեի, և նա իսկույն կուղարկեր ինձ մեկ ու կես հազար:

Դատախազի կինը արցունք թափեց:

— Պարոն Պորտոս,— ասաց նա,— երդվում եմ ձեզնով, որ ես դաժանորեն պատժված եմ, և եթե ապագայում նույնպիսի դրության մեջ լինեք, բավական է միայն, որ ինձ դիմեք:

— Ինչպե՛ս չեք ամաչում դուք, տիկին,— ասաց Պորտուսը՝ զայրացած ձևանալով:— Խնդրում եմ ձեզ չխոսենք փողի մասին, դա ստորացուցիչ է:

— Ուրեմն դուք այլևս չե՞ք սիրում ինձ,— դանդաղ ու տխուր հարցրեց դատախազի կինը:

Պորտուսը վեհաշուք լռություն պահպանեց:

— Ավա՛ղ, ձեր այդ պատասխանը, ես հասկանում եմ:

— Հիշեցեք այն վիրավորանքը, որ դուք հասցրել եք ինձ, տիկին: Այդ վիրավորանքը թաղված է այստեղ,— ասաց Պորտուսը ձեռքը ամուր սեղմելով սրտին:

— Հավատացեք, ես կհարթեմ այն, սիրելի Պորտուս:

— Եվ ի՞նչ էի խնդրել ես ձեզնից,— շարունակեց Պորտուսը ամենամիամիտ ձևով ուսերը թոթվելով:— Պարտք տալ ինձ, միմիայն պարտք:

— Վերջիվերջո ես հո անխելք չեմ, ես գիտեմ, տիկին Կոկնար, որ դուք հարուստ չեք և որ ձեր ամուսինը իր մոտ եկած հայցատերերից վերջին խղճուկ էքյուններն է քամում: Ուրիշ բան է, եթե դուք կոմսուհի լինեիք, մարքիզուհի կամ դքսուհի, օ՛, այն ժամանակ ձեր վարմունքը բոլորովին աններելի կլիներ:

Դատախազի կինը նեղացավ:

— Գիտե՞ք արդյոք, պարոն Պորտուս,— ասաց նա,— որ իմ դրամատուփը, թեև այն ընդամենը մի դատախազի կնոջ դրամատուփ է, շատ ավելի տոուզ է լցրած դրամով, քան ձեր այդ բոլոր սնանկացած սեթևեթ կանանց դրամատուփերը:

— Այդ դեպքում, տիկին Կոկնար, դուք կրկնակի եք վիրավորել ինձ,— ասաց Պորտուսը՝ իր թևն ազատելով դատախազի կնոջ ձեռքից,— որովհետև, եթե դուք հարուստ եք, ապա ուրեմն ձեր մերժումը ոչ մի արդարացում չունի:

— Երբ ես ասում եմ «հարուստ եմ», չպետք է իմ ասածը տառացի հասկանալ,— ուշքի եկավ դատախազի կինը, տեսնելով, որ չափից ավելի հեռուն է գնացել:— Ես, չի կարելի ասել, թե հարուստ եմ, բայց միջոցներ ունեմ:

— Գիտե՞ք ինչ, տիկին,— ասաց Պորտոսը,— վերջ տանք այս խոսակցությանը, խնդրում եմ ձեզ: Դուք հրաժարվել եք ինձնից: Մեր միջև ամեն մի մտերմություն վերջացած է:

— Ապերա՛խս:

— Ախ, դուք դեռ դժգո՞հ եք,— ասաց Պորտոսը:

— Գնացեք ձեր չքնաղ դքսուհու մոտ: Ես այլևս չեմ պահում ձեզ:

— Ի՛նչ կա որ: Իմ կարծիքով նա այնքան էլ վատը չէ:

— Լսեցեք, պարոն Պորտոս, վերջին անգամ եմ հարցնում, դուք դեռ սիրո՞ւմ եք ինձ:

— Ավա՛ղ, տիկին,— ասաց Պորտոսը ամենաթախծոտ տոնով, որին միայն ընդունակ էր նա,— երբ մենք արշավի դուրս կգանք, որտեղ, եթե հավատալու լինեք իմ նախազգացումներին, ես կսպանվեմ...

— Օ՛, մի՛ ասեք այդպիսի բաներ,— գոչեց դատախազի կինը առատ հեկեկալով:

— Ինչոր այդպիսի նախազգացում ունեմ,— շարունակեց Պորտոսը՝ ավելի ու ավելի տխրամած տեսք ընդունելով:

— Ավելի լավ է ասացեք, որ դուք մի նոր սիրային արկած ունեք:

— Ո՛չ, ո՛չ, ես անկեղծ եմ խոսում, ինձ ոչ մի նոր բան չի հետաքրքրում և դեռ ավելին. ես զգում եմ, որ այստեղ, սրտիս խորքում ձեզ եմ ձգտում: Բայց, ինչպես ձեզ հայտնի է, կամ գուցե հայտնի չէ, երկու շաբաթից մենք դուրս ենք գալու այդ ճակատագրական արշավին, և ես խիստ զբաղված եմ լինելու իմ հանդերձավորումով: Ստիպված եմ գնալ Բրետանի խորքերը, իմ հարազատների մոտ, որպեսզի

անհրաժեշտ գումարը բերեմ...— Պորտոսը նկատեց սիրո և ժլատության վերջին մենամարտը:— Եվ որովհետև այն դքսուհու կալվածքը, որին հենց նոր դուք տեսաք եկեղեցում,— շարունակեց նա,— իմ կալվածքի կողքին է գտնվում, ապա մենք գնալու ենք միասին: Դուք ինքներդ էլ գիտեք, որ ճանապարհը միշտ ավելի կարճ է թվում, երբ երկու հոգով ես ճանապարհորդում:

— Նշանակում է՝ դուք Փարիզում մտերիմներ չունե՞ք, պարոն Պորտոս,— հարցրեց դատախազի կինը:

— Ես կարծում էի, թե ունեմ,— պատասխանեց Պորտոսը՝ նորից տխուր տեսք ընդունելով,— բայց հիմա հասկացա, որ սխալված եմ եղել:

— Դուք ունե՞ք, ունե՞ք բարեկամներ, պարոն Պորտոս,— գոչեց դատախազի կինը՝ ինքն էլ զարմանալով իր պողոթյունից:— Վաղը եկեք մեր տուն: Դուք իմ մորաքրոջ որդին կլինեք, հետևապես՝ իմ ազգականը: Դուք եկել եք Պիկարդիայից, Նուայոնից: Փարիզում դուք մի քանի դատավեճ ունեք և ծանոթ իրավաբան չունեք: Կարո՞ղ եք հիշել այս բոլորը:

— Հիանալի կհիշեմ, տիկին:

— Կգաք ճաշի ժամին:

— Շատ լավ:

Եվ տեսեք, ավելորդ բառ չթոցնեք, որովհետև իմ ամուսինը, չնայած յոթանասունվեց տարեկան է, շատ խորաթափանց միտք ունի:

— Յոթանասունվեց տարեկա՛ն: Գրողը տանի: Պատկառելի հասակ է,— ասաց Պորտոսը:

— Դուք ուզում եք ասել «ծերության հասակ»: Այո, պարոն Պորտոս, իմ խեղճ ամուսինը ամեն բոլոր կարող է ինձ այրիացնել,— շարունակեց դատախազի կինը՝ բազմանշանակ հայացք գցելով Պորտոսի վրա:— Բարեբախտաբար, մեր ամուսնական պայմանագրի համաձայն, ամբողջ գույքը մնում է մեզնից նրան, ով ողջ կմնա:

— Ամբողջովի՞ն,— հարցրեց Պորտոսը:

— Ամբողջովին:

— Դուք, ինչպես տեսնում եմ, հեռատես կլին եք, տիկին Կոկնար,— ասաց Պորտոսը, քնքշորեն սեղմելով նրա ձեռքը:

— Ուրեմն մենք հաշտվեցի՞նք, սիրելի պարոն Պորտոս,— հարցրեց դատախազի կինը կոտրատվելով:

— Ցմահ,— պատասխանեց Պորտոսը նույն տոնով:

— Դե, ուրեմն, ցտեսություն, իմ դավաճան:

— Ցտեսությո՛ւն, իմ թեթևամիտ:

— Մինչև վա՛ղը, իմ հրեշտակ:

— Մինչև վա՛ղը, իմ կյանքի լուսատու:

XXX. Միլեդին

Դ'Արտանյանն աննկատելիորեն հետևեց միլեդիին: Նա տեսավ, թե ինչպես միլեդին կառեթ նստեց և լսեց, թե ինչպես նա կառապանին հրամայեց քշել Սեն ժերմեն:

Անօգուտ բան կլիներ փորձ անել ոտքով հետևել կառեթին, որ քաշում էին մի գույգ ուժեղ ձիեր: Դրա համար էլ դ'Արտանյանն ուղղվեց դեպի Ֆերու փողոցը:

Սենի փողոցում նա հանդիպեց Պլանշեին, որը հրուշակեղենի խանութի առաջ հիացմունքով նայում էր ախորժահամ տեսք ունեցող բուլկիներին:

Դ'Արտանյանը նրան հրամայեց երկու ձի թամբել պրն դը Տրևիլի ախոռից, մեկը իր՝ դ'Արտանյանի համար, մյուսը՝ Պլանշեի, և հետևից գալ Աթոսի մոտ: Պրն դը Տրևիլը մի անգամ ընդմիջտ իր ախոռը տրամադրել էր դ'Արտանյանին:

Պլանշեն գնաց դեպի Աղավնաստուն փողոցը, իսկ դ'Արտանյանը՝ դեպի Տերու։ Աթոսը միայնակ ու տխուր նստած՝ խմում էր մի շիշ այն իսպանական գինուց, որ բերել էր իր հետ Պիկարդիայից։ Նա ձեռքի նշանով Գրիմոյին հրամայեց մի բաժակ բերել դ'Արտանյանի համար, և Գրիմոն, ինչպես միշտ, լուռ կատարեց հրամանը։

Դ'Արտանյանը Աթոսին պատմեց ամեն բան, ինչ եկեղեցում տեղի էր ունեցել Պորտոսի և դատախազի կնոջ միջև և ենթադրություն հայտնեց, որ իրենց ընկերն արդեն հանդերձանք ձեռք բերելու ճանապարհին է։

— Ինչ վերաբերում է ինձ,— ասաց Աթոսը,— ես բոլորովին հանգիստ եմ. դե հո կանայք իրենց վրա չեն վերցնելու իմ հանդերձավորման ծախսը։

— Բայց, սիրելի Աթոս, ձեր գեղեցկությունը, բարեկրթությունը, նշանավոր ծագումը Ամուրի[114] նետով կարող են վիրավորել ուզածդ իշխանուհուն կամ թագուհուն։

— Դեռ որքա՛ն ջահել է այս դ'Արտանյանը,— ասաց Աթոսը ուսերը թոթվելով։

Եվ նա Գրիմոյին նշանացի հրամայեց մի ուրիշ շիշ բերել։

Այդ պահին Պլանշեն համեստորեն գլուխը ներս մտցրեց կիսաբաց դռնից և տիրոջը հայտնեց, որ ձիերը պատրաստ են։

— Ի՞նչ ձիեր,— հարցրեց Աթոսը։

— Երկու ձի, որ պրն դը Տրևիլը զիջել է ինձ զբոսանք կատարելու համար և որոնցով ես ուզում եմ գնալ Սեն Ժերմեն։

— Իսկ ի՞նչ գործ ունեք դուք Սեն Ժերմենում,— նորից հարցրեց Աթոսը։

Այստեղ դ'Արտանյանը նրան պատմեց եկեղեցում ունեցած իր հանդիպումը, թե ինչպես ինքը նորից գտել է այն կնոջը, որը շարունակ զբաղեցրել է իր միտքը, ինչպես սև թիկնոցավոր և քունքին սպի ունեցող մարդը։

— Այլ խոսքով ասած՝ դուք սիրահարված եք այդ կնոջը, ինչպես առաջ սիրահարված էիք տիկին Բոնասիէին,— ասաց Աթոսը և արհամարհաբար ուսերը թոթվեց, ասես խղճալով մարդկային թուլությունները:

— Ե՞ս: Ամեննի՛ն,— գոչեց դ'Արտանյանը:— Պարզապես ինձ համար հետաքրքիր է բանալ այն գաղտնիքը, որ կապված է այդ կնոջ հետ: Չգիտեմ ինչու, բայց ինձ թվում է, որ այդ կինը, որին ես ամեննին չեմ ճանաչում, ճիշտ այդպես էլ նա ինձ չի ճանաչում, բայց և այնպես ինչոր ազդեցություն ունի իմ կյանքի վրա:

— Ըստ էության դուք իրավացի եք,— ասաց Աթոսը,— ես չեմ ճանաչում մի կնոջ, որն արժանի լիներ իրեն որոնելու, եթե նա անհայտացել է: Տիկին Բոնասիէն անհայտացել է, ավելի վատ իր համար, թող գտնվի:

— Ո՛չ, Աթո՛ս, սխալվում եք,— առարկեց դ'Արտանյանը:— Ես իմ խեղճ Կոնստանցիային սիրում եմ ավելի, քան երբևէ, և եթե իմանայի, թե որտեղ է նա, թեկուզ այդ աշխարհի ծայրը լիներ, կգնայի և նրան կազատեի թշնամիների ձեռքից, բայց ես այդ չգիտեմ, իմ բոլոր որոնումներն ապարդյուն եղան: Ինչ արած, ստիպված եմ մտքերս ցրել, զվարճությամբ զբաղվել:

— Դեհ, զվարճացեք միլեդիի հետ, սիրելի դ'Արտանյան, սրտանց ցանկանում եմ այդ ձեզ, եթե դա կարող է զվարճացնել ձեզ:

— Լսեցեք, Աթոս,— առաջարկեց դ'Արտանյանը,— փոխանակ կալանավորի պես տանը փակված նստելու, եկեք ձի նստեք, ինձ հետ միասին գնանք Սեն ժերմեն:

— Թանկագինս,— առարկեց Աթոսը,— ես ձիով ճամփա եմ գնում, երբ ձի ունեմ, իսկ երբ ձի չունեմ, ոտքով եմ քայլում:

— Է՛հ, իսկ ես,— պատասխանեց դ'Արտանյանը՝ ժպտալով Աթոսի անհամբերության վրա, որ եթե մի ուրիշինը լիներ, անպայման կվիրավորեր իրեն,— ես ձեզ պես հպարտ չեմ և ինչով պատահի՝ ճամփա եմ գնում: Ցտեսություն, սիրելի Աթոս:

— Ցտեսություն,— ասաց հրացանակիրը՝ Գրիմոյին նշան անելով, որ բաց անի նոր բերած շիշը:

Դ'Արտանյանը և Պլանշեն ձի նստեցին և ճանապարհ ընկան դեպի Սեն Ժերմեն:

Տիկին Բոնասիեի մասին Աթոսի ասած խոսքերն ամբողջ ճանապարհին դուրս չէին գալիս դ'Արտանյանի գլխից: Մեր երիտասարդն այնքան էլ զգայուն մարդ չէր, սակայն արդուզարդի վաճառականի սիրունիկ կինը խոր հետք էր թողել նրա սրտում, այդ կնոջը գտնելու համար նա իսկապես պատրաստ էր աշխարհի ծայրը գնալու, քայց աշխարհը գնդաձև է, շատ ծայրեր ունի, և նա չգիտեր, թե որ կողմը գնա:

Իսկ առայժմ նա ուզում էր իմանալ, թե ով է այդ միլեդին: Միլեդին խոսում էր սև թիկնոցավոր մարդու հետ, հետևապես նրան ճանաչում է: Իսկ դ'Արտանյանի մեջ ստեղծվել էր այն համոզմունքը, որ երկրորդ անգամն էլ այդ սև թիկնոցավոր մարդն է փախցրել տիկին Բոնասիեին, ինչպես առաջին անգամն էր փախցրել: Եվ այսպես, ինքն իրեն ասելով, որ միլեդիի որոնումները միաժամանակ Կոնստանցիայի որոնումներն են, դ'Արտանյանը միայն կիսով չափ էր սուտ ասում, իսկ կիսով չափ սուտը արդեն համարյա բոլորովին էլ սուտ չէ:

Այս ամենի մասին մտածելով և մերթընդմերթ ձիուն խթանելով դ'Արտանյանն աննկատելիորեն անհրաժեշտ ճանապարհն անցավ և հասավ Սեն Ժերմեն: Անցնելով տաղավարը, որի մեջ տասը տարի հետո աշխարհ էր գալու Լյուդովիկոս XIVը, նա աջ ու ձախ նայելով գնում էր ամայի փողոցով, հուսալով չքնաղ անգլուհուց որևէ հետք գտնել, մեկ էլ հանկարծ ծաղկազարդ մի տերասում, որը հարում էր մի գեղեցիկ տնակի ներքին հարկին, որն այն ժամանակվա սովորության համաձայն ոչ մի լուսամուտ չունեի դեպի փողոց, ահա այդ տերասում նա տեսավ մի ծանոթ կերպարանք, որը ետ ու առաջ էր քայլում: Պլանշեն առաջինը ճանաչեց նրան:

— Տե՛ր իմ,— ասաց նա,— ձեզ ծանոթ է այն մարդու կերպարանքը: Ահա այն, որ բերանը բացած մեզ է նայում:

— Ոչ,— ասաց դ'Արտանյանը,— քայց համոզված եմ, որ առաջին անգամը չեմ տեսնում նրան:

— Դե իհարկե,— ասաց Պլանշեն,— ախր դա խեղճ Լյուբենն է, կոմս դը Վարդի սպասավորը, հենց այն կոմսի, որին դուք մի ամիս առաջ այնքան փառավորապես գետին գլորեցիք Կալեում, նավահանգստի պետի տան ճանապարհին:

— Ա՛խ, ճիշտ որ,— ասաց դ'Արտանյանը,— հիմա ես էլ ճանաչեցի նրան: Իսկ դու ինչպե՞ս ես կարծում, նա քեզ կճանաչի՞:

— Ճիշտն ասած, տեր իմ, նա այնպես սարսափած էր, որ հազիվ թե կարողանար ինձ մի կարգին հիշել:

— Եթե այդպես է,— ասաց դ'Արտանյանը,— մոտեցիր այդ տղային, խոսիր հետը և խոսակցության մեջ մի կերպ իմացիր, մեռե՞լ է իր տերը, թե՞ ոչ:

Պլանշեն ձիուց ցած թռավ, ուղիղ մոտեցավ Լյուբենին, որն իսկապես չճանաչեց նրան, և երկու սպասավորները զրույց սկսեցին, շատ շուտ գտնելով շփման կետեր: Մինչ այդ դ'Արտանյանը ձիերը շուտ տվեց դեպի նրբանցքը, տան շուրջը պտտվեց և թաքնվեց կաղնու թփերի հետևում՝ ցանկանալով ներկա լինել նրանց զրույցին:

Մի րոպեի չափ ցանկապատի հետևից դիտելուց հետո նա անիվների աղմուկ լսեց, ապա նրա դիմաց կանգ առավ միլեդիին պատկանող կառերթը: Դ'Արտանյանը ցատկեց ձիու պարանոցի մոտ, որպեսզի ինքը չերևա և կարողանա ամեն ինչ տեսնել:

Միլեդիի չքնաղ շիկահեր գլուխը դուրս նայեց կառերթի լուսամուտից և երիտասարդ կինը ինչոր հրաման տվեց սպասուհուն:

Վերջինս, որ քսանքսաներկու տարեկան մի ժիր ու կայտառ գեղեցիկ աղջիկ էր, անվանի տիկնոջ իսկական սպասուհի, ցած թռավ կառերթի ոտնատեղից, որտեղ նա՝ ըստ այն ժամանակվա սովորության, նստած էր, և ուղղվեց դեպի այն տերասը, որտեղ դ'Արտանյանը նկատել էր Լյուբենին:

Դ'Արտանյանը հայացքով հետևեց սպասուհուն և տեսավ, որ նա գնում է դեպի տերաս: Բայց այնպես պատահեց, որ դրանից մի րոպե առաջ տան ներսից ինչոր մեկը կանչել էր Լյուբենին, և տերասում մնացել էր միայն Պլանշեն, որը շուրջը նայելով ուզում էր իմանալ, թե ո՞ր չքացավ իր տերը:

Սպասուհին մոտեցավ Պլանշեին և նրան Լյուբենի տեղը դնելով՝ մեկնեց նրան մի նամակ:

— Կտաք ձեր տիրոջը,— ասաց նա:

— Իմ տիրոջը,— զարմացած կրկնեց Պլանշեն:

— Այո, և շատ շտապ գործով: Դե շո՛ւտ, վերցրե՛ք:

Այս ասելով՝ նա վազեց դեպի կառեթը, որն արդեն շուռ էր եկել, ցատկեց ոտնաստեղի վրա, և կառեթը սլացավ գնաց:

Պլանշեն ձեռքի մեջ շուռումուռ տվեց նամակը, ապա առանց դատողություններ անելու, հնազանդվելու իր սովորությանը հավատարիմ տերասից ցատկեց, մտավ նրբանցք և մի քսան քայլ գնալով՝ դեմ առավ դ'Արտանյանին, որն ամեն ինչ տեսել էր և այժմ գնում էր նրան ընդառաջ:

— Ձեզ է ուղարկված, տեր իմ,— ասաց Պլանշեն՝ նամակը տալով երիտասարդին:

— Ի՞նչ,— հարցրեց դ'Արտանյանը:— Դու հավատացած ես:

— Գրողը տանի: Ի՛նչ իմանամ: Սպասուհին ասաց՝ «Կտաք ձեր տիրոջը»: Ես ուրիշ տեր չունեմ, բացի ձեզնից, նշանակում է... Բայց ի՛նչ լավիկն էր այդ սպասուհին:

Դ'Արտանյանը նամակը բաց արեց և կարդաց հետևյալը.

«Մի կին, որը ձեզնով հետաքրքրվում է ավելի, քան կարող էր արտահայտել, կցանկանար իմանալ, դուք ե՛րբ ի վիճակի կլինեք զբոսանքի գնալ անտառ: Վաղը «Ոսկե դաշտ» հյուրանոցում սև ու կարմիր լիվրե հագած մի սպասավոր ձեր պատասխանին կսպասի»:

— Օհո՛,— ինքն իրեն մտածեց դ'Արտանյանը:— Ինչպիսի՛ զուգադիպություն: Երևում է՝ ես էլ, միլեդին էլ հետաքրքրվում ենք միևնույն անձի առողջությամբ: Է՛յ, Պլանշե, ինչպե՞ս է պարոն դը Վարդը: Ամեն բանից երևում է, որ նա չի մեռել:

— Ոչ, տեր իմ, նա իրեն լավ է զգում, որքան այդ հնարավոր է չորս վերք ունեցող մարդու համար: Ախր դուք, կշտամբանք չհամարեք ասածս, այդ աղավնյակին սուսերի չորս վերք եք հասցրել, և նա դեռ շատ թույլ է, որովհետև համարյա ամբողջովին արնաքամ է եղել: Ինչպես որ ես կարծում էի, տեր իմ, Լյուբենն ինձ չճանաչեց և մեր այն արկածը պատմեց ինձ սկզբից մինչև վերջ:

— Հիանալի է: Պլանշե՛, դու սպասավորների թագավոր ես: Իսկ հիմա նստիր ձիդ և եկ հասնենք կառեթի հետևից:

Դա շատ ժամանակ չիլեց. հինգ բոպեից նրանք տեսան կառեթը, որը կանգ էր առել ճանապարհի եզրին: Շքեղ հագնված մի ձիավոր ձին խաղացնում էր դռնակի առաջ: Միլեդին և ձիավորն այնպես էին տարված խոսակցությունով, որ երբ դ'Արտանյանը կանգ առավ կառեթի մյուս կողմում, բացի սիրունիկ սպասուհուց ուրիշ ոչ ոք չնկատեց նրա ներկայությունը:

Խոսում էին անգլերեն, որ դ'Արտանյանը չգիտեր, սակայն խոսակցության տոնից երիտասարդը հասկացավ, որ չքնաղ անգլուհին խիստ զայրացած է: Նրա վերջին շարժումը ոչ մի տարակույս չէր թողնում խոսակցության բնույթի մասին: Միլեդին այնպիսի զայրույթով սեղմեց իր հովհարը, որ կանացի այդ փոքրիկ իրը հազար կտոր եղավ:

Ձիավորը սկսեց քրքջալ, որն ըստ երևույթին է՛լ ավելի բարկացրեց միլեդիին:

Դ'Արտանյանը որոշեց, որ միջամտելու ժամանակն է: Նա մոտեցավ կառեթի մյուս դռնակին և հարգանքով գլխարկը վերցրեց:

— Տիրուհի,— ասաց նա,— թույլ տվեք ինձ իմ ծառայությունը առաջարկել ձեզ: Ինձ թվում է, որ այս ձիավորը զայրացրեց ձեզ: Միայն մի խոսք ասացեք, և ես հանձն եմ առնում պատժել նրան իր ո՛չ հարգալից վերաբերմունքի համար:

Դ'Արտանյանի առաջին իսկ խոսքերի վրա միլեդին զարմացած շուռ եկավ նրա կողմը:

— Պարոն,— պատասխանեց նա հիանալի ֆրանսերենով, երբ երիտասարդը վերջացրեց իր խոսքը,— ես սիրով կհանձնվեի ձեր հովանավորությանը, եթե ինձ հետ վիճող մարդը իմ եղբայրը չլիներ:

— Օ՛, այդ դեպքում ներեցեք ինձ,— ասաց դ'Արտանյանը:— Դուք, իհարկե, հասկանում եք, տիրուհի, որ ես այդ չգիտեի:

— Ինչի՞ համար է այս թեթևսուլիկը խառնվում ուրիշի գործերին,— դեպի դռնակը կռանալով գոռաց ձիավորը, որին միլեդին իր ազգականն անվանեց:— Ինչո՞ւ սա իր ճամփով չի գնում:

— Դուք ինքներդ եք թե թեթևսուլիկ,— պատասխանեց դ'Արտանյանը՝ իր հերթին կռանալով դեպի ձիու պարանոցը և պատասխանելով այն դռնակի կողմից, որի մոտ կանգնած էր:— Ես իմ ճամփով չեմ գնում, որովհետև ուզեցի այստեղ կանգ առնել:

Ձիավորը իր քրոջը մի քանի խոսք ասաց անգլերեն լեզվով:

— Ես ձեզ հետ ֆրանսերեն եմ խոսում,— ասաց դ'Արտանյանը,— բարի եղեք, պատասխանեցեք ինձ նույն լեզվով: Դուք այս տիկնոջ եղբայրն եք, հիանալի է, թող այդպես լինի, բայց, բարեբախտաբար, դուք ինձ եղբայր չեք գալիս:

Կարելի էր ենթադրել, թե միլեդին իր սեռին հատուկ վախկոտությամբ կմիջամտի, որպեսզի կանխի ծայր առնող վեճը, և չի թողնի շատ հեռու գնալ, բայց նա, ընդհակառակն, խրվեց կառեթի խորքում և կառապանին հանգիստ հրամայեց.

— Տո՛ւն:

Միրունիկ սպասուհին մի անհանգիստ հայացք զցեց դ'Արտանյանի վրա, որի գեղեցիկ արտաքինը, ըստ երևույթին, տպավորություն էր թողել նրա սրտում:

Կառեթը հեռացավ և երկու տղամարդկանց թողեց դեմդիմաց: Այլևս ոչ մի առարկայական արգելք չէր բաժանում նրանց:

Ձիավորը մի շարժում արեց, ասես ցանկանալով հետևել կառերթին, բայց դ'Արտանյանը, որի զայրույթը բռնկել էր նոր ուժով, որովհետև ճանաչեց, որ դա հենց այն անգլիացին է, որը Ամիենում խաղում տարավ իր ձին և քիչ էր մնացել Աթոսից էլ ադամանդը տաներ, ձիգ տվեց իր ձիու սանձը և կանգնեցրեց անգլիացուն:

— Է՛յ, պարո՛ն,— ասաց նա,— կարծես թե դուք ավելի մեծ թերթևալիկ եք, քան ես: Հո չե՞ք մոռացել, որ մեր մինչև մի փոքրիկ վեճ է սկսվել:

— Ա՛յ, այդ դո՛ւք եք, պարոն,— ասաց անգլիացին:— Ինչպես երևում է, դուք շարունակ խաղ եք խաղում, եթե ո՛չ այս, ապա գոնե մի ուրիշ խաղ:

— Այո, և դուք ինձ հիշեցրիք, որ ես դեռ պետք է ետ շահեմ: Մի տեսնենք, սիրելիս, արդյոք դուք նույնքա՞ն հմտորեն տիրապետում եք սուսերին, որքան բաժակի մեջ գցած զառերին:

— Դուք շատ լավ տեսնում եք, որ ինձ մոտ սուսեր չկա,— ասաց անգլիացին:— Գուցե ձեզ հաճելի է ձեր քաջությունը ցուցաբերել անգն մարդո՞ւ առաջ:

— Հուսով եմ, որ տանը դուք սուսեր կունենաք,— առարկեց դ'Արտանյանը:— Այսպես թե այնպես, ես երկու սուսեր ունեմ, և եթե ուզում եք, մեկը տանուլ կտամ ձեզ:

— Այդ ավելորդ է,— ասաց անգլիացին,— ես էլ այդ բանից շատ ունեմ:

— Հիանալի է, պատվարժան ասպետ,— պատասխանեց դ'Արտանյանը:— Ուրեմն ընտրեցեք նրանցից ամենաերկարը և այս երեկո ցույց տվեք ինձ:

— Որտե՞ղ դուք կուզենայիք տեսնել այն:

— Լյուքսեմբուրգյան պալատի հետևում: Դա հիանալի տեղ է այդ կարգի զբոսանքների համար:

— Լավ, ես կլինեմ այնտեղ:

— Ե՞րբ:

— Ժամը վեցին:

— Ի դեպ, հավանորեն դուք կունենաք մեկերկու բարեկամ:

— Ես ունեմ երեք բարեկամ, և նրանք բոլորն էլ պատիվ կհամարեն ընկերակցել ինձ:

— Երե՞ք: Հիանալի բան: Ի՛նչ գուգադիպություն,— ասաց դ'Արտանյանը:— Ճիշտ այդքան էլ ես ունեմ:

— Այժմ ասացեք ինձ, ո՞վ էք դուք,— հարցրեց անզլիացին:

— Ես դ'Արտանյանն եմ, գասկոնացի ազնվական, պարոն Դեզսարի վաշտի գվարդիական: Իսկ դո՞ւք:

— Ես լորդ Վինտերն եմ, բարոն Շեֆիլդը:

— Հիանալի է: Ես ձեր խոնարհ ծառան եմ, պարոն բարոն,— ասաց դ'Արտանյանը,— թեև դուք շատ դժվար մտապահվող անուն ունեք:

Ապա ձիուն խթանելով՝ նա քշեց քառատրոփ և ետ գնաց Փարիզ:

Ինչպես միշտ այդպիսի դեպքերում, դ'Արտանյանը գնաց ուղիղ Աթոսի մոտ:

Աթոսը պառկել էր երկար թախտի վրա և, եթե իր սեփական խոսքով արտահայտվելու լինենք, սպասում էր, որ հանդերձանքն ինքնիրեն գա իր մոտ:

Դ'Արտանյանը պատմեց նրան ամեն ինչ, լռության մատնելով միայն դր Վարդին ուղղված նամակը:

Աթոսը ցնծության մեջ ընկավ, մանավանդ, երբ իմացավ, որ նա կովելու է անզլիացու հետ: Մենք արդեն ասել ենք, որ նա շարունակ դրա մասին էր երագում:

Ընկերները իսկույն իրենց սպասավորներին ուղարկեցին Պորտոսի և Արամիսի մոտ և նրանց էլ իմաց տվին պատահածը:

Պորտոսը սուսերը հանեց պատյանից և սկսեց հարվածներ հասցնել պատին, մերթընդմերթ ետ ցատկելով և պլիե անելով, ինչպես պարի ժամանակ: Արամիսը, որ դեռ իր պոեմի վրա էր աշխատում, փակվեց Աթոսի կաբինետում և խնդրեց մինչև մենամարտի ժամը չանհանգստացնել իրեն:

Աթոսը նշանացի Գրիմոյից մի շիշ գինի պահանջեց:

Իսկ ինչ վերաբերում է դ'Արտանյանին, նա իր համար մի փոքրիկ ծրագիր էր կազմել, որի իրականացումը մենք կտեսնենք հետագայում, և որն, ըստ երևույթին, ինչոր հաճելի արկած էր խոստանում նրան, եթե դատելու լինենք ըստ այն ժպիտի, որը մերթընդմերթ խաղում էր երիտասարդի շուրթերին և պայծառացնում նրա մտախոհ դեմքը: